# ՐԱՖՖԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՐԱՖՖԻ

## ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

### տասներկու հատորով

խմբագրական կազմ

Հակոբյան Պ. Հ., Ջրբաշյան Էդ. Մ., Սամվելյան Խ. Ե.,
Սարինյան Ս. Ն., Ցելեքյան Հ. Հ.

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1999

# ՐԱՖՖԻ

## ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

## հատոր տասներկուերորդ

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆ-ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ
ՀՈԴՎԱԾՆԵՐ, ՆԱՄԱԿՆԵՐ

A II / 86643

ՀԱՅԿ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ... ԳՐԱԴԱՐԱՆ

891.981

ԳՄԳ 8421—4
Ր—539

Բնագրերի հրատարակության
պատրաստեցին և ծանոթագրեցին
Լ. ՄՈՒՐԱԴՅԱՆԸ և Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

Հատորի խմբագիր՝ Ս. Ն. ՍԱՐԻՆՅԱՆ

*Երկերի ժողովածուն լույս է տեսնում 1983 թվականից։*

Րաֆֆի

Ր—539 *Երկերի ժողովածու. 12 հատորով։ / Խմբ. կոլեգիա՝ Հակոբյան Պ. Հ. և ուրիշ.։*
*Հ. 12. Հրապարակախոսական և գրական-քննադատական հոդվածներ, նամակներ/կազմ., բնագրերը պատրաստեցին և ծանոթագրեցին Լ. Մուրադյանը և Ա. Մանուկյանը, խմբ. Սարինյան Ս. Ն.։ Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999, 434 էջ։*
*Հատորն ընդգրկում է 1884—1888 թթ. Րաֆֆու գրած հոդվածները, նամակները։*

ԳՄԳ 8421—4

Ր 4702080101 (108) / 703 (02) 99

ISBN 5-550-00013-X (Հ. XII)

© *ՀՀ ԳԱԱ «Գիտություն» Հրատարակչություն, 1999*

ՀԱՅԿ.ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

# ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆ-ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ, ՆԱՄԱԿՆԵՐ

## ԶԱԽԵՐ-ՄԱԶՈԽԻ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

*Լեոպոլդ Զախեր-Մազոխի անունը համարյա անծանոթ է մեր ընթերցող հասարակությանը: Նա ծնվեցավ հունվարի 27-ին 1836 ամի Լվով (Լեմբերգ) քաղաքում, որը գալիցիական հին թագավորության մայրաքաղաքն էր:*

*Նրա բազմաթիվ բեմական և վիպական աշխատությունների մեջ նշանավոր տեղ են բռնում մի շարք գեղեցիկ վեպիկներ, որոնք բոլորը միասին ընդհանուր անունով կոչվում են «Կայենի կտակը»: Այդ վեպիկները պատկերացնում են գալիցիական կյանքի այն սարսափելի ժամանակները, երբ 1846 թվականի լեհական ապստամբությունը իր սոսկալի բորբոքման մեջն էր, երբ ավստրիական զորքերը պաշարման վիճակի մեջ էին պահում երկիրը, և երբ գյուղացիները, դարերով տանջված լինելով ազնվականների կեղեքումներից, փոխանակ այդ վերջինների հետ միանալու, անցնում էին կայսերական զորքերի կողմը և իրանց մանգաղներով կտորում էին կալվածատերերին: Ամեն տեղ կատարվում էին արյունահեղություններ և գազանային անգթություն:*

*Ես թարգմանեցի*[1] *«Կայենի կտակից» երեք վեպիկներ միայն՝ «Կալոմեայի Դոն Ժուանը», «Ֆրինկո Բալաբանը» և «Լուսնկա գիշեր»: Հիմնական գաղափարը այդ վեպիկների և առհասարակ «Կայենի կտակի», մեծ աղմուկ բարձրացրեց կրիտիկայի կողմից, և մանավանդ գերմանական կրիտիկոսները սաստիկ զայրացան հեղինակի դեմ:*

---

1 *Իմ թարգմանությունը արել եմ Ս. Ա. Կառինիկովայի ռուսական թարգմանությունից և նրա առաջաբանից եմ քաղում հեղինակի մասին տեղեկությունները:*

*Գալիցիական ժողովրդի սկզբնական համոզմունքները, նրա բոլոր կրավորական իմաստությունը, որը արտահայտվում է այն մշտական անձնուրացության և անսասան համբերության մեջ, որոնցով դրոշմված է այդ ժողովրդի և բարոյական կերպարանքը. վերջապես նրա բոլոր նախնական ավանդությունները՝ կազմում են «Կայենի կտակի» հյուսվածքը, որի մեջ, իբրև հիմնական գաղափար անց են կացրած և Շոպենհաուերի փիլիսոփայության սկզբունքները: Բնապաշտության այժմյան ուղղությունը և Դարվինի գիտական վարդապետությունը ավելի ևս օգնեցին հեղինակին հաստատել իր աշխատությունների հիմնական գաղափարը այն ճակատագրական գործողության վրա, որը աշխարհի սկզբից կառավարում է մարդկությանը և որը անցնում է սերունդից սերունդ, որպես մի դժբախտ ժառանգություն: Մարդկային սեռի վրա ծանրացած այդ ժառանգությունը, հեղինակի կարծիքով, կայանում է սիրո մեջ, այդ «հավիտենական և մահացու մաքառման մեջ, որ կատարվում է երկու սեռերի կողմից», կայանում է անհաշտ շահասիրության մեջ, որին դատապարտված է մարդը, և որը իբրև մի անհրաժեշտություն, ստիպում է մարդուն հարստահարություն ու խաբեություն կատարել, և վերջապես, կայանում է պատերազմի մեջ, այդ անհրաժեշտ, բայց սարսափելի սպանության մեջ, թեև արդարացնում են նրան ազգասիրական կամ պետական նկատումներով:*

*Ահա հիմնական գաղափարները «Կայենի կտակի»: Այդ գաղափարները հեղինակը կատարելապես զարգացնում է մի փոքրիկ վեպիկի մեջ, որ կոչվում է «Պանդուխտ», և որը, իբրև առաջաբան, միացրել է այն վեպիկների շարքի հետ, որոնք բոլորը միասին կազմում են «Կայենի կտակը»: Միայն «Պանդուխտի» հրատարակությունից հասկանալի եղավ «Կայենի կտակի» անունը, այդ պատճառով մենք հարկավոր ենք համարում ծանոթացնել ընթերցողներին նրա համառոտ բովանդակության հետ:*

*Հրացանը ուսի վրա դրած,—պատմում է հեղինակը,—թափառում էր ինքը կուսական անտառի խորին թավուտներում, և նրան առաջնորդում էր մի ծերունի որսորդ: Հանկարծ նրա ուղեկիցը կանգ առեց, ցույց տալով մի արծիվ, որ բարձրում սավառնում էր նրանց գլխի վրա. որսորդը նշան որեց, և սպանված թռչունը ընկավ նրանց ոտների առջև:—«Կայե՜ն, Կայե՜ն»,—հանկարծ լսելի եղավ մեկի*

զորեղ ձայնը, և թփերի միջից հայտնվեցավ մի ծերունու օտարոտի կերպարանքը, երկայն ալեխառն մորուքով և նույնպիսի երկայն ալեոր մազերով, որոնք ծածանվում էին քամուց։ Ընամաշ հագուստը և գդմաարմակը, որ քարշ էր ընկած նրա կշտից, ցույց էին տալիս, որ այդ անծանոթը այն տեսակ մարդկանցից մեկը պետք է լինի, որոնք հեռանում են մարդկային հասարակությունից, որոնք փախչում են կյանքի բոլոր հարմարություններից ու զվարճություններից։—«Ի՞նչ օգուտ ունեիր այդ անմեղ արարածի սպանության մեջ, Կայենի զավակնե՛ր»,—ասաց ծերունին, և նրա ու հեղինակի մեջ սկսվեցավ ջերմ խոսակցություն։ Ծերունին անապատական էր, այսինքն՝ պատկանում էր անապատականների աղանդին, որոնք բավական տարածված են Գալիցիայի ուղղափառ բնակիչների մեջ։ Անապատականների հիմնական սկզբունքները դրանք են. աշխարհը սատանայի թագավորությունն է, այդ պատճառով անապատականները փախչում են աշխարհից, փախչում են մարդկությունից, և այն ամենից, ինչ որ կազմում է մարդկային կյանքի և գործունեության շահերը, որովհետև այդ բոլորի վրա ծանրանում է անեծք։ Սերը, ձգտումը դեպի հարստություն և դեպի իշխանություն, և այն բոլորը, ինչ որ ուրախացնում է ու առաջ է մղում մարդուն նրա հասարակական և անհատական կյանքի մեջ, այդ բոլորը Կայենի կտակն է, որ թողել է իր ժառանգներին, այդ բոլորը այնպիսի բաներ են, որոնցից ծագում են բոլոր չարիքները, բոլոր դժբախտությունները և բոլոր կորուստը մարդկության։ Միայն մահը կարող է խլել մարդու ձեռքից այդ անիծյալ ժառանգությունը, որը թունավորում է նրան. միայն մահը կարող է կատարելապես վերականգնել մարդու մեջ այն խաղաղությունը, որը մի ժամանակ վայելում էր նա բնության գրկում, և միայն մահը կրկին կվերադարձնե նրան այդ գրկի մեջ։ Ուրեմն, մահն է այն ցանկալի սահմանը, դեպի որը մեծ հուսով ձգտում է անապատականը և նրան սպասելով, նա պետք է այնպիսի կենցաղավարություն ունենա, որը ավելի նմանեցնե կենդանի մարդուն մեռյալի. այստեղից առաջ է գալիս ինքնուրացությունը, ճգնությունը և համբերությունը։

Այդ պատմությունը, որը իբրև առաջաբան, դրած է «Կայենի կտակի» սկզբում, բացատրում է միևնույն ժամանակ այդ անվան տակ զետեղված վեպիկների ամբողջ ծրագիրը, որոնց յուրաքանչյուրը առանձին վեր առնելով, ամեն մեկը ներկայացնում է բոլո-

րովին լրացրած և ամբողջացրած պատկեր, իսկ բոլորը միասին զարգացնում են հեղինակի հիմնական գաղափարը, որի մասին հիշեցինք վերևում։

Մեր թարգմանած երեք վեպիկների մեջ Զախեր-Մազոխը առաջ է բերում Կայենի ժառանգություններից մեկը, որ կտակել է նա ապագա սերունդին, դա է՝ կնոջ և տղամարդի սերը։ Այդ զգացմունքը պատկերացնում է նա հիշյալ վեպիկների մեջ, բայց պատկերացնում է իբրև չարության տարր, իբրև պատճառ մարդկային բոլոր դժբախտությունների, և իբրև մի չարիք, որ սարսափելի կերպով ոչնչացնում է այն բոլորը, ինչ որ մարդիկ սովոր են համարել բարիք, մի խոսքով՝ իբրև Կայենի կտակը իր թշվառ ժառանգներին։

Եվ այդ էր պատճառը, որ «Կայենի կտակը» սաստիկ հարձակումների կրեց կղերիկալների կողմից, և առավելապես գերմանական կղերիկալները զինվեցան նրա դեմ։ «Պանդուխտը», որը իբրև առաջաբան զետեղված էր «Կայենի կտակը» կազմող վեպիկների սկզբում, համարեցին իբրև Profession de foi աթեիզմի։ Հեղինակին մեղադրում էին, որ նա հերքում է աստծո գոյությունը, որ նա ամեն երևույթների մեջ աստծո փոխարեն գտնում է բնության բնական զորությունը, և այսպիսով, ոչնչացնում է ամբողջ բարոյական աշխարհը։ Հեղինակի բոլոր աշխատությունները համարում էին պեսիմիզմի վերջին խոսքը, և Դարվինի ու Շոպենհաուերի վարդապետությունների ծայրահեղ արդյունք, միայն արևելյան անահավատության հատկանիշներով դրոշմված։ Այդ կարծիքները առիթ տվին սաստիկ բանակռվի՝ հեղինակի և գերմանական կղերիկալների մեջ։ Իսկ Զախեր-Մազոխը աշխատում էր պաշտպանել իրան։ Գերմանական գայրացած կղերիկալները հարձակումների մեջ այն ծայրահեղության հասան, որ սկսեց մինչև անգամ ուրանալ «Կայենի կտակի» գրականական արժանավորությունը։ Հեղինակին առավելապես չէին ներում այն անխնա արդարության համար և այն անաչառ ռեալիզմի համար, որով նա երևան էր հանում մարդկային կյանքի մթին կողմերը, նկարելով միշտ մռայլ պատկերներ, որոնց մեջ խիստ աչքի էր զարկում իդեալների բացակայությունը։ «Ես ավելի կսիրեմ անախորժ ճշմարտությունը, քան թե շողոքորթող ստությունը»,—պատասխանում էր հեղինակը։ Ռոմանի նպատակը, որպես ասում է Գյոթեն, է ծառայել իբրև մի

հայելի, որը միակերպ ցոլացնում է իր մեջ բոլոր երևույթները շըր-ջապատող կյանքի։ Այդ կետից նայելով, ինչ որ վերաբերում է այն մռայլ գույներին, որոնցով նկարված է Ջախեր-Մազոխի յուրա-քանչյուր պատկերը, դա նրա մեղքը չէ, եթե ժամանակակից կյանքը խղճալի այնպես է, որ չէ կարող ավելի պայծառ գույներով նը-կարվել ռոմանի մեջ։ Եվ այսպես, Ջախեր-Մազոխը շուտով հաշտ-վեցավ վիպասանի աննախանձելի վիճակի հետ, որը համարձակ-վում է բարձրացնել կյանքի մթին կողմերը ծածկող վարագույրը ինքնախաբեության մեջ ապրող հասարակության առջև։ Գերմանա-կան կրիտիկոսների վճռաբանության կոպիտ ձևը շուտով հար-կադրեց Ջախեր-Մազոխին հրաժարվել բանակռվից և պատասխա-նել իր հակառակորդներին միայն խորին արհամարհանքով։

Հրաժարվելով բանակռվից և կրկնելով Գյոթեի հայտնի խոս-քերը. «Ստեղծի՛ր, արհեստագետ, բայց մի խոսիր»,—հեղինակը սկսեց պատասխանել իր հակառակորդներին «Կայենի կտակի» շարունակությամբ, և մինը մյուսի ետևից ի լույս ածեց ավելի և ավելի հետաքրքիր պատկերներ։ Այդ պատկերների մեջ խիստ կեն-դանի կերպով նկարված է այն անխոնջ և մշտական մաքառումը, որ կատարվում է մարդկության աղքատ և հարուստ դասակարգե-րի մեջ, և ամեն քայլում հանդիպում են ամենասոսկալի կոտորած-ների և վրեժխնդրության տեսարաններ։ Կարծեմ, ոչ ոք չէ կարո-ղացել այնպես կենդանի և այնպես ազդու կերպով նկարագրել մարդկային բնավորության վայրենի բնազդումները, որպես այդ հաջողվել է Ջախեր-Մազոխին։ Այդ դեպքում նա շատ նման է ամե-րիկացի մատենագիր Բրետ-Գարտին, որին նա ինքը շատ բարձրաց-նում է, բայց որից նա շատ գերազանցում է իր տաղանդով։

Կրիտիկան թեև անարդար գտնվեցավ դեպի Հարգելի հեղինա-կը, բայց անցյալ տարի, երբ տոնվեցավ նրա հոբելյանը, համարյա ամբողջ լուսավոր աշխարհը ցույց տվեց նրան իր խորին համակրու-թյունը նրա արդար և անաչառ գրական գործունեության համար։

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

*Պարոն խմբագիր.*

*Խնդրեմ այս մի քանի տողին տեղ տաք Ձեր պատվական շաբաթաթերթի մեջ։*

*«Մեղուի» 90-րդ համարում տպված էր մի հոդված, որի մեջ ի միջի այլոց ասված էր, թե ես տարել եմ Առաքել վարդապետ Կոստանյանցից նորա երկու հատոր աշխատությունները և մինչև այսօր չեմ վերադարձրել։ Եվ նույն հոդվածի ներքև խմբագրի ծանոթության մեջ հիշված էր, որ ես հիշյալ աշխատությունները հանձնեմ «Մեղուի» խմբագրատանը, որպեսզի նա հասցնե բուն պատկանելույն։*

*Բոլորովին ճշմարիտ է, ես Տող բերդում գտնված ժամանակ Առաքել վարդապետը հանձնեց ինձ երկու տետրակների մեջ ամփոփված մի հավաքածու, և ես այդ մասին յուր ժամանակին հայտնել եմ «Խամսայի մելիքությունների» 382, 383, 384, 387 երեսներում։ Հիշյալ հավաքածուն մինչև այսօր էլ պահված է ինձ մոտ, և եթե չեմ վերադարձրել, պատճառն այն է եղել, որ արժանապատիվ հայր սուրբը երբեք չի գրել ինձ ու չի պահանջել յուր տետրակները։ Նա թողել էր այդ տետրակները ինձ մոտ բոլորովին այլ նպատակով, և այդ նպատակը իրան հայր սուրբին լավ հայտնի է...*

*Բայց ինձ զարմացնում է այն, թե ի՞նչն է ստիպել «Մեղուի» խմբագրին ուրիշների հարաբերությունների մեջ մտնել և մի այդպիսի ինքնակոչ սուդեբնի պրիստավի դեր հանձն առնել։ Եթե Առաքել վարդապետը ցանկանում է ինձ հանձնած ավանդը ետ ստանալ, իմ հասցեն նորան հայտնի է, նա թո՛ղ ինձ գրե, այն ժամանակ ես մեծ հաճությամբ հետ կուղարկեմ, և ավելի ապահով ձևով, քան թե «Մեղուի» խմբագրատան միջոցով։*

# ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

*Պ. խմբագիր.*

*Խնդրեմ այս նամակին տեղ տաք Ձեր պատվական շաբաթաթերթի համարներից մեկում, որով մենք նպատակ ունենք փարատել մի քանի տարակուսանքներ, որ խոսակցության նյութ են դարձել մեր հակառակորդների բերանում։*

*Մինչև «Խամսայի մելիքությունների» լույս տեսնելը, մեր նորագույն պատմության մի նշանավոր մասը բաց էր մնացած։ Ոչ ոքի մտքին անգամ չէր գալիս, որ ամենամոտ ժամանակներում Ղարաբաղում վերջացել էր մի հայկական իշխանություն, որ յուր անցյալը և յուր պատմությունն ուներ։ Թեև այս և այն հրատարակությունների մեջ տպված էին զանազան անկապ, հատուկտոր հոդվածներ, բայց դրանք այնքան աղքատ էին իրենց բովանդակության կողմից, որ մի պարզ գաղափար չէին կարող տալ վերջացած իշխանության մասին։ Զանազան խորշերում ընկած էին ծածկված, մոռացված ձեռագրեր, որոնք դեռ գրականության սեփականություն չէին դարձել։ Իսկ ժողովրդի բերանում մնացել էին կենդանի ավանդություններ, որոնք հավաքելու կարոտ էին։ Ահա այդ բոլորը անհայտությունից ի լույս ածել և, ի մի ամփոփելով, նրանցից մի ամբողջական պատմություն կազմել Ղարաբաղի մելիքությունների մասին,—շատ վաղուց ի վեր դարձել էր մեր աշխատության առարկան։ Մենք տարիներով միշտ հետամուտ ենք եղած. ամեն հնարք գործ ենք դրել, որ ամեն տեղ՝ ինչ բանավոր կամ գրավոր հիշատակարաններ կան, ազատենք խավարից և կորստից և, նյութերի մի հարուստ պաշար մեր ձեռքի տակ ունենալուց հետո, սկսենք գրել մեր պատմությունը։ Այդ իսկ նպատակով, դեռ 1881 թվականի հուլիս ամսում, «Մշակի» մեջ մենք տպեցինք մի հրավեր, որով դիմում էինք ձեռնհաս անձինքներին, խնդրելով օգնել մեզ մեր ձեռնարկության մեջ և, եթե գտնվում էին նրանց մոտ որևէ գրավոր կամ բանավոր տեղեկություններ, ուղարկեին մեզ, որպեսզի մեր աշխատությունն ավելի լրացած և ճոխ լիներ փաստերի կողմից։ Չբավականանալով հիշյալ պատվերով, նույն տարվա հուլիս ամսում մենք սկսեցինք ճանապարհորդություններ անել այն երկրներում, ուր դարերով գոյություն էր ունե-*

*ցեղ մելիքների իշխանության։ Անցանք Գանձակի, Ղարաբաղի, Զանգեզուրի, Ղափանի գավառները, անցանք Սյունյաց աշխարհը։ Մեր ճանապարհորդությունը տևեց երեք ամիս և ապարդյուն չանցավ։ Մեզ հաջողվեց ձեռք բերել բավականաչափ, բոլորովին անհայտ գրավոր նյութեր և, որ ամենագլխավորն է, ժողովրդի մոտ լինելով, մենք առիթ ունեցանք հավաքել նրա մեջ պահպանված ավանդությունները։ Վերադառնալով Թիֆլիս, սկսեցինք «Մշակի» մեջ մաս առ մաս տպել մեր պատմությունը, որը հետո առանձին գրքով լույս տեսավ 1882 թվին։*

*Եվ այդպես, մենք խավարից ի լույս ածեցինք մի ամբողջ պատմություն, մի կորած, մոռացված իշխանության պատմություն։ Մենք մեր նպատակի համար ծախսեցինք մեր ամենաչքավոր նյութական միջոցները, և ոչ ոքից շնորհակալություն չէինք սպասում, և շատ շնորհակալ կլինեինք, եթե մեր հակառակորդները փոքր-ինչ բարեխիղճ լինեին և չխանգարեին մեզ առաջ տանելու մեր սկսած գործը։*

*Եվ որպեսզի կասկածանքի տեղիք չմնար, թե «Խամսայի մելիքությունները» հեղինակի երևակայության ծնունդ է, և որպեսզի ցույց տայինք, թե այդ աշխատությունը հիմնված է պատմական ճիշտ փաստերի վրա, այդ նպատակով մենք մեր գրքի վերջաբանի մեջ (եր. 369—414) մի առ մի տպեցինք այն բոլոր աղբյուրների անունները, մինչև անգամ նրանց բովանդակությունը, որոնցից մենք օգուտ էինք քաղել մեր պատմությունը կազմելու ժամանակ։ Եվ այդ բավական չհամարելով՝ մենք մինչև անգամ խոստացանք առանձին հատորով տպել մեր ձեռքի տակ ունեցած բոլոր դոկումենտների իսկականները։ Ահա մեր խոսքերը.*

*«Եթե «Խամսայի մելիքությունների» առաջին հատորը ընդունելություն գտավ ընթերցող հասարակությունից և տպված գրքերը վաճառվեցան, այն ժամանակ կտպենք մի երկրորդ հատոր, որպես հավելված առաջին հատորի։ Այս վերջին հատորի մեջ զետեղված կլինեն այն բոլոր* նյութերը, *որոնք ծառայել են իբրև աղբյուր առաջին հատորը կազմելու համար։ Բովանդակությունը կլինի հետևյալ կարգով.—զանազան անձինքների զանազան ժամանակներում Ղարաբաղի կաթողիկոսների, մելիքների մասին գրած և անտիպ մնացած պատմական աշխատությունները.—մեր պարբե-*

րական հրատարակությունների կամ այլ և այլ գրքերի մեջ ցրված հոդվածները Ղարաբաղի մելիքների մասին.—ռուսաց ակտերի մեջ զանազան տեղեկություններ Ղարաբաղի մելիքների մասին.—ռուսաց պատմագիրների՝ Սոլովևի, Բուտկովի, Դուբրովինի, Յ. Արաբատսկի (Հայ) և այլոց գրքերի մեջ գտնված տեղեկությունները Ղարաբաղի մելիքների մասին, այլև պարսից պատմագրության մեջ Հայոց մելիքների մասին գտնված տեղեկություններ.—ռուսաց կայսրների, պարսից շահերի, վրաց իշխանների և զանազան խաների Ղարաբաղի կաթողիկոսներին ու մելիքներին շնորհած անվանական հրովարտակների, ֆիրմանների օրինակները.—մելիքների տոհմերի վերաբերությամբ գտնված անձնագրությունների օրինակները, եկեղեցիների, վանքերի, շիրիմների քարերի վրա և գըրքերի հիշատակարանների մեջ.—մելիքների տոհմային ճյուղագըրական աղյուսակը։ Այդ բոլորը տպված կլինեն իմ սեփական բացատրություններով և ծանոթություններով» (եր. 398, 399)։

Եթե մենք խոստացել ենք մի այդպիսի հավաքածու տալ, որպես հավելված «Խամսայի մելիքությունների», այստեղից շատ պարզ է, որ մեր խոստումները թե դեպի հասարակությունը և թե դեպի գրականությունը կատարելու համար, ոչ միայն հարկավոր է, այլև անհրաժեշտ է, որ մի անգամ մեզ հանձնված և մեր ձեռքի տակ գտնված նյութերը մեզ մոտ մնային, որպեսզի մենք միջոց ունենայինք կազմելու մեր հավաքածուն։

Եվ հենց այդ նպատակով մենք մինչև այսօր պահել ենք մեզ մոտ Առաքել վարդապետ Կոստանյանցի տետրակները, ինչպես շատ ուրիշների մեզ հանձնած նյութերը, որպեսզի նրանց մեջ եղած փոքրիշատե պատմական նշանակություն ունեցող տեղերը քաղվածորեն տպենք մեր հավաքածուի մեջ։ Մենք այդ միտքը, որպես վերևում ցույց տվինք, յուր ժամանակին հայտնել ենք մեր պատմության վերջաբանի մեջ, ուրեմն Առաքել վարդապետին պետք է հայտնի լիներ, թե ինչու համար ենք պահել նրա տետրակները։ Իսկ եթե արժանապատիվ հայր սուրբը կամենում է ետ ստանալ յուր տետրակները, մենք մեծ ուրախությամբ կվերադարձնենք **իրան՝ հայր սուրբին**, բայց ուրիշի ձեռքը չենք տա։ Միայն մեզ պետք է նախ բանակցություններ անել նրա հետ, եթե նա չի ցանկանում յուր տետրակների այն տեղերը, որ պատմական նշանակություն

ունեն, տպված տեսնել, այն ժամանակ էլ կուղարկենք։ Իսկ նրանք, որ ուրիշի գործը իրանց գործ են շինել և անպատկառ հանդգնությամբ սպառնում են մեզ սուրերով, թող դիմեն, ուր դիմելու միշտ սովորություն ունեն... Մենք մեր հաշիվը առանց դատի Հայր սուրբի հետ կվերջացնենք։

Այդ կլինի մեր վերջին պատասխանը։ Եթե մենք մեր մասին խոսված կամ տպված բոլոր վայրահաչություններին պատասխանելու լինեինք, դա մեզանից շատ ժամանակ կխլեր։

# „ԳԱՂՏՆԻՔ ՂԱՐԱԲԱՂԻ“

A 11/86643

Հեղինակություն Ալբերտի Բեկնազարյանց, թարգմանություն Մակար վարդապետի Բարխուդարյանց: Տպված է Առաքել աղա Տատուրյանցի ծախքով, Ս. Պետերբուրգում, ներկա ամի:

## Ա

*Վերջապես լույս տեսավ հոդվածիս վերնագիրը կրող գիրքը, որ դեռ չհրատարակված այնքան աղմուկ բարձրացրեց մեր լրագրության մեջ։ Այդ աղմուկը ծագեց առավելապես այն մթին, տարօրինակ երևույթից, որի մեջ պարածածկված, այդ գիրքը պիտի ներկայանար հայ հասարակությանը։ Այդ էր պատճառը, որ լրագիրներից ոմանք խոսեցին ի նպաստ և ոմանք աննպաստ։*

*Կանխահաս քննադատությունը թողեց հարցը անվճիռ։ Իսկ այժմ երկպառակության խնձորը դրած է հասարակաց սեղանի վրա, նրան կարելի է ամեն կողմից քննել։*

*«Գաղտնիք Ղարաբաղին», իրավ որ, թաքցրած ունի յուր մեջ մի մեծ գաղտնիք, բայց այդ գաղտնիքը ոչ թե Ղարաբաղի գաղտնիքն է, այլ այդ գրքի իբր թե թարգմանիչ Մակար վարդապետի գաղտնիքն է։ Իմ հոդվածի նպատակը կլինի՝ քննել գլխավորապես վերջին գաղտնիքը։*

*Ահա ինչ է ասում Մակար վարդապետը յուր առաջաբանի մեջ. (Ես քաղում եմ նրա համառոտ բովանդակությունը միայն)։*

*1881 թվի մայիսի 5-ին Մակար վարդապետը միայնակ նստած է լինում յուր սենյակում, (ծառան բացակա էր) հանկարծ դուռը բացվում է, ներս է մտնում մի գրեթե* «հարյուրամյա ծերունի»,

մուրացկանի հագուստով։ Նա փաթաթված թաշկինակների միջից հանում է մի ձեռագիր գիրք, հանձնում է Հայր սուրբին, ասելով, որ այդ գրքի մեջ կան «թե շատ վտանգավոր գաղտնիքներ և թե Ղարաբաղի պատմության համար անգին գանձեր»։ Եվ հասարակությանը ավելի հասկանալի դարձնելու համար, ծերունին խնդրում է, որ վարդապետը այդ աշխատությունը «թարգմանե», գրաբարից աշխարհաբարի վերածե, և «երկու տարի» սպասելուց հետո, տպագրել տա։

Վարդապետի բոլոր ջանքը, այդ խորհրդավոր ծերունու ով լինելու մասին՝ մնում է ապարդյուն, որովհետև նա, որպես հանկարծակի մտնում է Հայր սուրբի սենյակը, այնպես էլ հեռանում է, միայն հայտնելով, թե «իմ անունը և ազգանունը կիմանաք ձեռագրից»։

Այդ ծպտյալ ծերունին «Գաղտնիքի» հեղինակ Սարգիս Բեկնազարյանցն է եղել։ Թե հետո ո՞ւր գնաց նա, ի՞նչ եղավ, որտե՞ղ կորավ,—այդ մասին լռում է Հայր սուրբը։ Բայց նրա «կտակը» ճշտությամբ կատարում է. գիրքը թարգմանում է, իսկ գրաբար բնագիրը, դժբախտաբար, կորչում է…

Այդ դժբախտությունը պատահում է 1884 թվին, օգոստոսի 30-ին, կնշանակի՝ գիրքը ստանալուց ուղիղ երեք տարի, 3 ամիս և 25 օր հետո։

Դժբախտությունը պատահում է հետևյալ կերպով. վարդապետը, քարքարոտ Շուշի փողոցների դարուփոսերով, «երեկոյան մութի» ժամանակ իր բնակարանի իրեղենները տեղափոխում է մի այլ բնակարան։ Ճանապարհին բեռնակրի անզգուշությունից «ծրարի» միջից գրքի թանկագին բնագիրն ընկնում, կորչում է, իսկ թարգմանությունը բարեբախտաբար մնում է…

Եթե գրքի բնագիրն անհետացած չլիներ, դարձյալ կարելի էր փոքրիշատե հավատալ այդ բոլոր առեղծվածային հանելուկներին։ Բայց բնագրի կորուստն ինքնըստինքյան առաջ է բերում ամեն մի ուշադիր ընթերցողի մտքում մի խոշոր կասկած. արդյոք այդ գիրքը չէ՞ գրել ինքը Մակար վարդապետը, արդյոք այդ բոլորը չէ՞ հնարել նա՝ յուր աշխատությունն ավելի հետաքրքրական դարձնելու համար։

Փաստերը ավելի կասկածանքի կողմն են թեքվում։

Արդարև, եթե «Գաղտնիք Ղարաբաղին» լիներ մի հին, հարա-

ղատ գրվածք, նա այդ երկրի պատմության համար կարող էր մի հարստություն համարվել։ Բայց նոր գրվածքը, այն էլ պատմագրության մեջ, հին արձանագրության անունով տալ հասարակությանը, դա նույնն է, որպես մեկը կեղծ թղթադրամներ կամ կեղծ վկայականներ է խարդախում։

Ի՞նչ խրատվունքով Մակար վարդապետը թարգմանեց իրան հանձնված գիրքը։ Եթե այդ աշխատությունը ուներ մի արժանի նշանակություն, նա կարող էր ունենալ միայն յուր հին ձևի մեջ, յուր հին լեզվով։ Բավական չէ, որ Մակար վարդապետը յուր առաջաբանի մեջ ասում է, իբր թե հանձնող ծերունին խնդրեց թարգմանել գիրքը…

Ի՞նչ կասեին մեզանից ամեն մեկին, որ կամենալով հարստահարել Խորենացու անունը, գրեինք մի գիրք լի առասպելներով, և ասեինք. դա Խորենացու պատմության երկրորդ հատորն է։— Ո՞ւր է բնագիրը,— կհարցնեին մեզանից։— Բնագիրը կորցրինք, միայն աշխարհաբար թարգմանությունը մնաց մեր ձեռքում… Ո՞վ կհավատար մեզ։

Մակար վարդապետի վարմունքը շատ չէ զանազանվում այդ օրինակից։

1881 թվին ես ճանապարհորդում էի Ղարաբաղում տեղային մելիքների պատմության համար նյութեր հավաքելու։ Սեպտեմբեր ամսի 10-ին գնացի Շուշի, իջևանեցի առաջնորդարանում, թեմի հաջորդ. արժ. Կարապետ վարդապետ (այժմ եպիսկոպոս) Այվազյանի մոտ։ Իմ ճանապարհորդության նպատակը իմ բոլոր ծանոթներին հայտնի լինելով, յուրաքանչյուրը աշխատում էր օգնել ինձ։ Մեկը բերանացի ավանդություններ էր հաղորդում, մյուսը բերում էր մի որևէ ձեռագիր, որ պատմական նշանակություն ուներ։ Այնպես որ Շուշիում ինձ հաջողվեցավ հավաքել բավական պաշար։

Ես մնացի այդ քաղաքում ամբողջ երկու շաբաթ։ Այդ ժամանակ Մակար վարդապետը համարյա ամեն օր իմ մոտ էր լինում։ Երբեմն Կարապետ հայր սուրբի և իմ հետ ճաշում էր, երբեմն մեզ մոտ թեյ էր խմում։ Մեր խոսակցության առարկան ըստ մեծի մասին Ղարաբաղի մելիքները և նրանց գործերն էին։ Ինքը Մակար վարդապետը աշխատում էր ինձ նյութեր մատակարարել, երբեմն ամբողջ օրով այս կողմ և այն կողմ էր գնում՝ նյութեր որոնելու։

Այդ ժամանակ «Գաղտնիք Ղարաբաղի» բնագիրը պետք է Մա-

կար վարդապետի մոտ լիներ, որովհետև որպես ինքը հայտնում է յուր առաջաբանի մեջ, այդ գիրքը նա ստացել էր խորհրդավոր ծերունուց 1881 թվի մայիսի 5-ին, իսկ ես գտնվում էի Շուշիում նույն թվի սեպտեմբերի 10-ին։ Ուրեմն իմ այնտեղ լինելուց 4 ամիս 5 օր առաջ ստացած պետք է լիներ այդ գիրքը։

Ինչո՞ւ Մակար վարդապետը, որ ամեն ջանք գործ էր դնում ինձ նյութեր մատակարարելու, բայց յուր մոտ գտնված մի ամենահետաքրքիր հնություն, ինչպես էր «Գաղտնիք Ղարաբաղի» բնագիրը, ցույց չտվեց ոչ ինձ և ոչ Կարապետ հայր սուրբին։

Շատ հասկանալի է, եթե մի այդպիսի հնություն գոյություն ունենար, նա չէր թաքցնի ինձանից,—չէր թաքցնի և այն պարոններից, որ այդ ժամանակ Շուշումն էին, և որոնք հետաքրքրված էին Ղարաբաղի պատմությունով։ Այն ժամանակ Շուշումն էին պպ. Ղազարոս Աղայանցը, Տիգրան Նազարյանցը («Աղբյուրի» խմբագիր) և մի ամբողջ վարժապետական խումբ, որի մեջ էր Մակար վարդապետը, և խիստ հաճախ հանդիպում էինք միմյանց։

Մակար վարդապետը կարող է ասել. ես այն ժամանակ թաքցրի, որպեսզի ինքս օգուտ քաղեի։—Դարձյալ կարող էր օգուտ քաղել, ո՞վ ուժով կխլեր նրա ձեռքից։

Այդ ինքնըստինքյան խիստ ծանր կասկած է ձգում գրքի գոյության վրա, որ Մակար վարդապետը այդ աշխատությունը խորհրդավոր ծերունիից ստանալուց, մինչև նրա բնագրի կորցնելը, 3 տարի, 3 ամիս և 25 օր պահում է յուր մոտ, և յուր բարեկամներից ու ծանոթներից ոչ մեկին ցույց չէ տալիս, որ գոնե վկա լինեին, թե մի այդպիսի ձեռագիր տեսել են նրա մոտ։

Տարակույս չկա, երբ մի մարդ մի այսպիսի երևելի գյուտ է անում, և նրան հաջողվում է ձեռք բերել մի երկհատոր հին աշխատություն, որ բովանդակում է յուր մեջ մի երկրի պատմական գաղտնիքները.—նա ոչ միայն կթաքցնե այդ աշխատությունը (որ հետո կորցնե), այլ կհրատարակե լրագրներում ի գիտություն հասարակության։ Մակար վարդապետը այդ ևս չի արել, ամեն ինչ ծածկել է մթության մեջ։

Իսկ Մակար վարդապետը պարտավոր էր հրապարակ հանել յուր երևելի գյուտը։ Եթե ճշմարիտ են նրա այն խոսքերը, որ նա ասում է յուր առաջաբանի մեջ, թե խորհրդավոր ծերունին հանձնելով նրան այդ գիրքը, «կտակեց» տպագրել տալ,—ուրեմն նրա

*կտակը ճշտությամբ կատարելու համար նա հրապարակավ պետք է դիմեր հասարակությանը և օժանդակություն խնդրեր, որովհետև ինքը աղքատ մարդ էր։ Ծվ ես համոզված եմ, որ Թիֆլիսի տպագրական ընկերությունը կամ ամեն մի կարողություն ունեցող հայ չէր խնայի մի այդպիսի նշանավոր հնության տպագրության ծախքը յուր գրպանից վճարել, մանավանդ որ պատմական աշխատությունների համար հանգուցյալ Իզմիրյանցի թողած գումարից պրեմիաներ կան նշանակված։*

*Ուրեմն ինչո՞վ բացատրել Մակար վարդապետի 3 տարի, 3 ամիս և 25 օրվա լռությունը։*

*Ես այս ևս կվերաբերեի հայր սուրբի վերին աստիճանի ծածկամտությանը. եթե նա դրան-նրան նամակներով դիմած չլիներ, որ տպագրեն յուր աշխատությունը,—կրկնում եմ յո՛ւր* աշխատությունը *և ոչ թե երևակայական Աբրես Բեկնազարյանի։*

*Մի այդպիսի նամակ Մակար վարդապետը գրել է և ինձ, որով խնդրում էր, որ ես նրա աշխատությունը «Մշակի» մեջ տպել տամ։*

*Այդ նամակները կպատառեն «Գաղտնիքի» վարագույրը և Մակար վարդապետի վարմունքը կմերկացնեն հասարակության առջև*[1]*։*

*Ինչպես երևում է, Մակար վարդապետը սկզբում նպատակ չի ունեցել այսպիսի վարմունք թույլ տալ իրան, որի օրինակը մինչև այսօր ամենևին չէ տեսնվել մեր գրականության մեջ։ Նրան կամ խելքից հանել են ուրիշները, կամ մոլորության մեջ է ձգել յուր շահասիրությունը։ Թե այսպես, թե այնպես,—հանցանքը կատարված է։ Նա այժմ մի դատապարտյալ է գրական քննադատության ատյանի առջև։*

*Ես իմ հոդվածի շարունակության մեջ ցույց կտամ, թե նա ինչպես է կազմել «Գաղտնիք Ղարաբաղի»-ն։ Այդ գիրքը գրելուց*

---

1 *Որովհետև դրանով պետք է մերկանա գրականական մի մեծ խարդախություն, որ եթե անլուծելի մնա, կարող է ապագայում գայթակղության մի քար դառնալ մեր պատմագրության մեջ,—այդ ի նկատի ունենալով, ես վստահանում եմ հրապարակավ պարտք դնել այն բոլոր պարոնների վրա, որոնք Մակար վարդապետից նամակներ են ստացել, ամբողջապես հրատարակեն, իսկ եթե նամակները չեն պահել, գոնե հրատարակեն նրանց բովանդակությունը։ Իսկ ես յուր ժամանակին կհրատարակեմ իմ ձեռքում եղածները։*

Հետո, հեղինակի փառասիրությունը զրկել է նրան տպագրված տեսնել յուր աշխատությունը։ Դիմել է զանազան անձանց և ոչ մի տեղից օժանդակություն չի գտել։ Հետո մտածել է՝ յուր անունը մի կողմ դնելով, յուր աշխատությունը պսակել մի երևակայական հեղինակի անունով, իբրև մի գրվածք, որ մի քանի հարյուր տարվա հնություն ունի, և բովանդակում է յուր մեջ «ամենավտանգավոր գաղտնիքներ» և «ամենահարուստ պատմական գանձեր» և այլն։—Այդ հրապույրներով, մտածել է նա, մի բարեսիրտ մարդ գտնել, որ տպագրության ծախքը հոգա, բացի դրանից՝ գիրքը հետաքրքրական դարձնել, որ լավ ծախվի։

Բարեսիրտ մարդը գտնվեցավ,—Բաքուի մեծ. Առաքել աղա Ծատուրյանցը, որ իրեն հատուկ առատաձեռնությամբ 800 ռուբլի նվիրեց գրքի հրատարակության համար։

Կրկնում եմ, վերջին միտքը Մակար վարդապետի մեջ ծագել է շատ ուշ։ Այդ երևում է այն հանգամանքից, որ երբ հայր սուրբը յուր մեջ վճռել է՝ յուր աշխատությունը մի ավելի հրապուրիչ հեղինակի անունով ներկայացնել, այդ միջոցին ստիպված է եղել փոփոխել յուր առաջին առաջաբանը և գրել այն նոր առաջաբանը, որ այժմ դրած է «Գաղտնիքի» սկզբում, և որի մեջ նկարագրված է խորհրդավոր ծերունու ամբողջ առասպելը։ Առաջաբանի փոխելու մասին, յուր ծանոթության մեջ, այսպես է արդարացնում իրան հայր սուրբը. «Մենք մեր նախկին առաջաբանությունը չէինք փոխիլ, եթե կորուսված չլիներ «Գաղտնիք Ղարաբաղի» բնագիրը։ Բնագրի կորստից ցավոք սրտի ստիպյալ փոխեցինք մեր նախկին առաջաբանությունը»։

Մի այլ հետաքրքրական փաստ։

Հայր սուրբը «Գաղտնիք Ղարաբաղի»-ի բնագիրը, որպես ինքն ասում է, կորցրել է 1884 թվի օգոստոսի 30-ին։ Իսկ այդ գիրքը ցենզորից թույլտվություն է ստացել 1885 թվի դեկտեմբերի 31-ին։ Ուրեմն մինչև ցենզորից թույլտվություն ստանալը, արդեն 16 ամիս առաջ բնագիրը կորած էր։ Այլևս ի՞նչ հարկ կար, որ նա ստիպված լիներ՝ բնագիրը կորցնելու պատճառով առաջաբանը փոխել։ Եթե բնագրի կորուստը պատահած լիներ ցենզորից թույլտվություն ստանալուց հետո, այդ թերևս հասկանալի է, կարելի էր ընդունել, որ առաջաբանը փոխեց, որպեսզի բնագրի կորստյան մասին բացատրություններ տա։

. . . . . . . . . .

Հիշյալ երկու միմյանց հակառակ առաջաբանները շատ բան պիտի պարզեն, և այդ շատ հեշտ է ստուգել։ Տպագրական օրենքով թե առաջին և թե վերջին առաջաբանի օրինակները պետք է մնացած լինեն Ս. Պետերբուրգի Ի. Ն. Սկորոխոդովի տպարանում, որտեղ տպվել է «Գաղտնիք Ղարաբաղի»-ն։ Եվ ես կաշխատեմ նրանց պատճենները ձեռք բերել[1]։

Եթե «Գաղտնիք Ղարաբաղի»-ն լիներ մի վեպ կամ այլ աշխատություն, չարժեր նրա վրա ուշադրություն անգամ դարձնել։ Նա այն աստիճան անշնորհք կերպով կազմված է, որ ինքն իրան կմեռներ։ Բայց այդ գիրքը մի պատմական հիշատակարան է։ Պատմագրից, այն ևս հին պատմագրից, այնքան գրական մեծ արժանավորություններ չէ պահանջվում, որքան փաստերի ճշտություն։ Իսկ կեղծ փաստերը միշտ կարող են մոլորեցնել։ Այդ՝ի նկատի առնելով, եթե այժմվանից չմերկացվի «Գաղտնիք Ղարաբաղի»-ի խարդախությունը, կանցնեն տարիներ, գործը կմոռացվի, և այդ գիրքը կմնա մեր գրականության մեջ, որպես մի անհարազատ վկայական, որ շատերին կգայթակղեցնե։

Բ

Իմ նկատողությունները կարող են ոմանք լոկ ենթադրություններ համարել, եթե չդիմենք նույնիսկ «Գաղտնիք»-ին, քննելով նրան, արդյոք այդ գիրքը կրո՞ւմ է յուր վրա հնության դրոշմը, ցո՞ւյց է տալիս մի նշույլ անգամ հին գրվածքի, թե նա մի նոր աշխատություն է, միայն հին անվան տակ ծածկված, որպես դրամանենգը յուր նոր շինած դրամը անթիքայի անունով է վաճառում, որպեսզի ավելի շահ ստանա։

1 Մակար վարդապետը մի օրինակ ևս յուր աշխատության ուղարկած է եղել Մոսկվա հանգուցյալ Հակոբ քահանա Սուրենյանցին՝ յուր հրատարակելիք «Նոր Հանդեսի» մեջ տպելու համար։ Այդ ամսագրի նախապատրաստական ժողովներում, արժանապատիվ հոր տանը կարդացվում էր և Մակար վարդապետի աշխատությունը։ Մի քանի ուսանողներ, որ ներկա են եղել այդ ժողովներին, ինձ պատմեցին Մակար վարդապետի առաջին առաջաբանի բովանդակությունը, պատմեցին և այն, որ այդ աշխատությունը առաջ այն ծավալը չուներ, որ այժմ ունի, այլ բաղկացած էր մի քանի փոքրիկ տետրակներից միայն։ Այդպես էլ պետք է լիներ, որովհետև որպես ես պիտի ցույց տամ, Մակար վարդապետը հետո է ավարտացրել այդ գիրքը և նրան երկու հատոր դարձրել։ (Մեծ դոք. Սուրեն Սուրենյանցի ուշադրությունն եմ դարձնում այս և նախընթաց ծանոթության վրա)։

Իմ հետազոտության մեջ ես պետք է շոշափեմ գլխավորապես հետևյալ կետերը.

1) «Գաղտնիք»-ի հեղինակները՝ հայր և որդի Բեկնազարյանները, իրակա՞ն անձնավորություններ են, թե մտացածին։

2) «Գաղտնիք»-ի հյուսվածքը, լեզուն, գաղափարները, նկարտումները արտահայտո՞ւմ են արդյոք իրանց ժամանակի հատկանիշները։

3) Ի՞նչ աղբյուրներից է կազմվել այդ գիրքը։ Կարելի՞ է վավերական համարել այն անթիվ թղթակցությունները, որ զետեղված են այդ գրքի մեջ։ Արդյոք «Գաղտնիք»-ը տալի՞ս է մեզ յուր խոստացած «ամենավտանգավոր գաղտնիքները» և այն պատմական «անգին գանձերը», որ մինչև այսօր հայտնի չեն եղել մեր գրականության մեջ։

4) Պատմական սխալներ, որ չի պիտի աներ ժամանակակից գրողը։ «Գաղտնիք»-ի գործող անձինքը։

5) Հրեշավոր չափազանցություններ, որ զուրկ են պատմական ճշմարտությունից։

6) Ի՞նչ անստուգություններ կարող են առաջ գալ պատմության մեջ, եթե ընդունվի այդ գիրքը իբրև մի հարազատ գրվածք։

7) Մի քանի խոսք այն անձանց նկատմամբ, որոնք ոչ միայն ներելի են համարում Մակար վարդապետի վարմունքը, այլև մինչև անգամ ջատագովում են։

Սկսենք «Գաղտնիք»-ի հեղինակներից։

Դրանք երկու հոգի են. հայրը՝ Աբրահամ Բեկնազարյանը և որդին՝ Ակրես Բեկնազարյանը։

Թե հայրը և թե որդին, որ ամեն չնչին անցքերի մասին թվականներ են դնում, բայց իրանց ծննդյան թվականը չեն նշանակում, որպեսզի հայտնի լիներ, թե ո՞ր դարումն էին ապրում այդ մի զույգ մատենագիրները և որքա՞ն ապրեցին, որ ամեն ինչ գրում են իբրև ականատեսներ, իբրև ժամանակակիցներ, և մանավանդ, համարյա բոլոր անցքերի մեջ՝ իբրև անմիջական գործիչներ։

Թեև այդ տարօրինակ հեղինակների ծննդյան թվականները մնում են որպես գաղտնիք «Գաղտնիք»-ի մեջ, բայց անգիտակաբար բաց են թողնված գրքի մեջ այնպիսի հիշատակություններ, որոնցով շատ հեշտ է գտնել՝ նրանց ծննդյան եթե ոչ ճիշտ թվականները, գոնե ավելի հավանականը։ «Գաղտնիք»-ի հենց առա-

*չին գլխի սկզբում (եր. 17) որդի Բեկնազարյանը յուր հոր մասին ասում է.*

*«Հայրս՝ Բեկնազարյան Աբրահամն, Ներսես կաթողիկոսին մոտ յուր ուսումնքը ավարտած, նորա մոտ* երկար ժամանակ *մնացած և Ղարաբաղի հոգևոր և մարմնավոր կյանքի վերաբերյալ պատմությունների ընդօրինակած էր։ Այս այն Ներսեսն էր, որ նախ Երից-Մանկանց վանքի կաթողիկոսն էր և հետո եղած էր Գանձասարի կաթողիկոսը։ Գանձասարը Աղվանից մայր աթոռն էր, իսկ Երից-Մանկանց վանքն սորա հակաթոռն»։*

*Այդ յուր ակնումը ես ցույց կտամ, որ հիշյալ Ներսեսը երբեք Ղարաբաղի պատմությամբ չէ զբաղվել և Ղարաբաղի պատմություն չէ գրել, որ նրա աշակերտ Աբրահամ Բեկնազարյանը ընդօրինակած լիներ յուր «Գաղտնիք»-ը կազմելու համար,—այլ, ընդհակառակն, Ղարաբաղի պատմությունը գրել է և մեզ թողել է Գանձասարի Ջալալյան Եսայի կաթողիկոսը, որի հակառակորդն էր Ներսեսը։—Այժմ մեզ համար հետաքրքիր է գիտենալ այսքանը միայն, թե ո՞ր թվականներում էր ապրում այդ Ներսեսը, որպեսզի նրա համեմատ գտնենք նրա աշակերտ Աբրահամ Բեկնազարյանի ծննդյան տարեթիվը։*

*Ներսեսը Երից-Մանկանց վանքում*[1] *հակաթոռ կաթողիկոս ձեռնադրվեցավ ընդդեմ Գանձասարի Ջալալյան Եսայի կաթողիկոսի և նրա կենդանության ժամանակ, հայոց 1155 թվի, իսկ փրկչական 1705-ին*[2]*։*

---

*1 Երից-Մանկանց վանքը գտնվում է Թարթար գետի ձախ կողմում, մի անտառապատ ձորի մեջ, հինգ թե վեց վերստաչափ հեռավորության վրա Ջրաբերդ ամրոցից։ Իսկ Գանձասարի վանքը, որ Աղվանից կաթողիկոսների աթոռատեղին է, գտնվում է Ղարաբաղի Խաչեն գավառակում, Խաչեն գետի ձախ կողմում մի լեռան վրա։*

*2 Այդ Ներսեսը՝ նույնպես հակաթոռ, Սիմոն կաթողիկոսի ազգականն էր, որը հիմնեց Երից-Մանկանց վանքը, և նրա տոհմից մի քանի հակաթոռ կաթողիկոսներ նստեցին հիշյալ վանքում, որոնք ոչ սակավ խռովություններ հարուցին իրանց ժամանակում և Ղարաբաղի կործանման պատճառ դարձան։ Ներսեսի գործերի հետ ծանոթանալու համար խորհուրդ ենք տալիս կարդալ հետևյալ աշխատությունները. «Խամսայի մելիքությունները», եր. 34, 44, 51, 52, 111, 114, 116։ «Ջամբռ», եր. 81—86։ Ներսես կաթողիկոսի անունը գտնում ենք և Եկատերինա I կայսրուհու 1726 թվի 22 փետրվարի հրովարտակի մեջ, ի թիվս Եսայի կաթողիկոսի, Եգան իշխանի (Տիգակի մելիք Եգանի) և Ավան յուզբաշու անունների, որոնք այդ ժամանակ քաղաքական հարաբերություններ ունեին ռուսաց արքունիքի հետ։*

Ով որ գիտե այդ Ներսեսի պատմությունը, թե ո՛րքան զբաղված էր նա յուր անընդհատ կռիվներով մի կողմից, Գանձասարի Ջալալյան Եսայի կաթողիկոսի հետ, որի Ներհակ հակաթոռ կաթողիկոս էր դարձել, մյուս կողմից՝ Էջմիածնի Աղեքսանդր կաթողիկոսի և նրա հաջորդների հետ, մինչև Սիմոն կաթողիկոսը, որոնցից բանադրվեցավ նա իբրև ըմբոստ և ապստամբ[1], կրկնում եմ, ով որ գիտե այդ Ներսեսի պատմությունը, որ բացի հիշյալ կռիվներից, նա զբաղված էր և զանազան քաղաքական հարցերով,—ով որ գիտե այդ բոլորը, կարող է համոզված լինել, որ նա յուր կաթողիկոսության օրերում մի րոպե անգամ ժամանակ չէր ունենա պարապվելու Աբրահամ Բեկնազարյանի կրթությամբ։ Բացի դրանցից, իբրև կաթողիկոս նրա բարձր աստիճանը չէր ների, մի որևիցե խնածախցի հասարակ շինականի՝ Աբրահամ Բեկնազարյանի վարժապետությամբ պարապվել։

Եթե ընդունենք, որ Աբրահամ Բեկնազարյանը, ինչպես վերևում հիշված է, այդ Ներսեսի մոտ աշակերտություն է արել, ուսումը ավարտել է, և նրա մոտ «երկար ժամանակ» մնացել է,—այդ կարող էր լինել Ներսեսի թե կաթողիկոսությունից և թե եպիսկոպոսությունից առաջ, այսինքն՝ նրա աբեղայության ժամանակ։

Իսկ եթե ընդունենք և այն, որ Աբրահամ Բեկնազարյանը Ներսեսի մոտ յուր ուսումը ավարտելուց հետո այնքան զարգացած էր, որ պատմություններ էր ընդօրինակում յուր «Գաղտնիք»-ը կազմելու համար,—այդ ժամանակ նա անպատճառ պետք է գոնե 30 տարեկան լիներ։ Ուրեմն նա պետք է ծնված լիներ 1675 թվին, այսինքն՝ յուր վարժապետի կաթողիկոս ձեռնադրվելուց 30 տարի առաջ։ Այդ 30 տարին ես այդպես եմ բաժանում. մի որևէ վանք մտնելու համար՝ վանական կանոններով պատանու երեսի մազերը պետք է դուրս եկած լինեն. եթե Աբրահամ Բեկնազարյանը 18 կամ 20 տարեկան էր, երբ մտավ Երից-Մանկանց վանքը, մի 10 կամ 12 տարի էլ հարկավոր էր, որ նա այնքան ուսում առներ,

---

1 Աղվանից կաթողիկոսները, թե Գանձասարում և թե այլ տեղերում, որ հետո հայտնվեցան, ամենքը կախումն ունեին Էջմիածնից, այն ավանդական սովորության համեմատ, որ այդ երկրի առաջին կաթողիկոսը՝ Գրիգորիսը, Լուսավորչի թոռն էր։ Առանց Էջմիածնի, իբրև Մայր աթոռի, թույլտվության ձեռնադրվողները համարվում էին ապստամբ։

վարդապետ, որ պատմություն գրեր, մանավանդ այն ժամանակ, որ մարդիկ իրանց ամբողջ կյանքը նվիրում էին ուսման և ոչինչ չէին սովորում։

Այժմ Աբրահամ Բեկնազարյանի ծննդյան թվականը մեր ձեռքում ունենք։ Նա ծնվել է 1675 թվին։ Որոնենք, թե որ թվին մեռավ նա։

Հոր գրած պատմությունը շարունակող որդին—Ապրես Բեկնազարյանը, որ թվականների սիրահար է, յուր հոր մահվան տարեթիվը չէ դնում «Գաղտնիք»-ի մեջ, այլ դնում է միայն ամսաթիվը, հոկտեմբերի 10-ին (եր. 390)։ Այդ ևս մի գաղտնիք է...

Բայց նա մոռանում է, որ յուր հայրը 1828 ամի սեպտեմբերի 20-ին հիվանդության անկողնում, ստանում է մի նամակ Ղարաբաղի Բաղդասար միտրոպոլիտից և պատվիրում է որդուն պատասխանը գրել (եր. 387)։ Եթե նույն տարվա մեջ մեռած լինի նա, ուրեմն ապրել է ամբողջ 153 տարի (1675—1828)։ Ինչո՞ւ է տվել Մակար վարդապետը յուր երևակայական պատմագրին այդքան երկար կյանք,—այդ շատ հետաքրքիր է գիտենալ։ Որովհետև եթե Աբրահամ Բեկնազարյանը 153 տարի չապրեր, չէր կարող ականատես լինել այն բոլոր անցքերին, որ գրել է «Գաղտնիք»-ի մեջ։ Այդ 153 տարվա շրջանակի մեջ ամփոփվում է Ղարաբաղի մելիքների ամբողջ պատմությունը, սկսյալ Պետրոս Մեծի օրերից մինչև 1828 թվի վերջին ռուս-պարսկական պատերազմը, երբ Ղարաբաղի մելիքները դադարում են ռուսաց արշավանքներին մասնակցել և երբ Աբրահամ Բեկնազարյանը հարկավոր չէ համարում ավելի ապրել—մեռնում է... և պատմությունը գոցվում է...

Ոչ սակավ հետաքրքիր է որդու՝ Ապրես Բեկնազարյանի կյանքի երկարությունը։ Մակար վարդապետը պարգևել է նրան այնքան տարիներ, որ հասցրել է մինչև յուր ժամանակը, 1881 թվականը, որպեսզի նա միջոց ունենար «Գաղտնիք»-ը յուր ձեռքով հանձնել հայր սուրբին։ Այդ թվականից հետո անհետացրել է խեղճին...

Որդի Բեկնազարյանի ծննդյան տարեթիվը գտնելու համար դարձյալ պետք է այլ փաստերի դիմել. որոշ հիշատակություն չկա գրքի մեջ։

1795 թվին տեսնում ենք նրան՝ յուր ուսումը իրանց գյուղի քահանայի մոտ ավարտած, Եղիշեն և քերականությունը սովորած,

մի աշխույժ և անվախ պատանի, գտնվում է յուր հոր քաջերի թվում, որ կռվում էին Աղա Մամադ խանի զորքերի հետ, երբ նա պաշարել էր Շուշի բերդը (եր. 16—37)։

Եթե նա այդ ժամանակ 20 տարեկան լիներ, ուրեմն ծնվել է 1775 թվին։ Մինչև 1881 թիվը այդ մարդը դեռ կենդանի էր (գուցե այժմ ևս կենդանի է)։ Այդ թվականում հայտնվեցավ նա Մակար վարդապետի մոտ և յուր ձեռքով հանձնեց նրան «Գաղտնիք»-ը։ Ուրեմն ապրել է նա 106 տարի, դարձյալ մի պատկառելի հասակ։ Այդ հասակում 15 հազար ոսկի յուր հագուստի ծալքերի մեջ կարած և «Գաղտնիք»-ը նրանց թվում յուր ցնցոտիների մեջ թաքցրած, մուրացկանի կերպարանքով, ցուպը ձեռին, ոտով, 39 տարի ճանապարհորդել[1] է ամբողջ Տաճկական Հայաստանը, անցել է Պարսկաստանը, մինչև եկել է Ղարաբաղ և Մակար վարդապետին գտել է խորհրդավոր գիրքը նրան հանձնելու համար։ Զարմանալի է, որ ոչ մի թուրք կամ քուրդ նրան չի հանդիպել, եթե «Գաղտնիք»-ը չհափշտակեին, ոսկիներին կարծեմ չէին խնայի (եր. 394—398)։

Այժմ «Գաղտնիք»-ի երկու հեղինակների՝ հոր և որդու կյանքի տարիները մեր ձեռքում ունենք։

Հայրը ապրել է 153 տարի։

Որդին՝ 106 տարի։

Երկուսը միասին՝ 259 տարի։ Ուղիղ երկու և կես դարից 9 տարի ավել։ Լավ է հաշվել Մակար վարդապետը։ Եթե հիշյալ թվա-

---

1 Յուր ճանապարհորդական նկարագրությունների մեջ, մի տեղում (եր. 395) Ապրես Բեկնազարյանը ասում է. «Պետք չէ մոռանալ, որ շատ վանքերում, քաղաքներում և գյուղերում գիս Սալրի գեղացի խաչագող կարծելով՝ ցուրտ կերպով էին ընդունում և հյուրընկալում»... Զարմանալի նմանություն կա «Գաղտնիք»-ի հերոսների և «Խաչագողի հիշատակարանի» տիպերի մեջ։ Իմ հոդվածի շարունակության մեջ ես առիթ կունենամ այդ նմանությունը ցույց տալու։ Դա ինքնըստինքյան մի պարզ ապացույց է «Գաղտնիք»-ի շինծու և մտացածին լինելուն։ Ոչ Աբրահամ Բեկնազարյանը և ոչ դրա որդի Ապրես Բեկնազարյանը չէին կարող կարդացած լինել «Խաչագողի հիշատակարանը», որ հետևեին նրան։ Այդ Մակար վարդապետը միայն կարող էր կարդալ և, նրանից օգուտ քաղելով, պատմական անձնավորությունների փոխարեն, զանազան խաբեբա և խարդախ քավոր պետրոսներ ստեղծել։ 15.000 ոսկի յուր հետ ունենալուց հետո, ի՞նչ հարկ կար մուրացկանի կերպարանքի մեջ մտնել։ Այդ խաչագողներն են միայն անում։ 15.000 ոսկիով կարելի էր փառավոր կերպով ճանապարհորդություններ անել։

*նշանները երևակայական չլինեին, կարելի էր ընդունել, որ հայր և որդի Բեկնազարյանները հայոց մելիքների բոլոր գործողություններին վկա, ականատես և ժամանակակից են եղել, և ամեն ինչ տեսնելով են գրել, և այսպիսով կազմվել է այն հրաշալի գիրքը, որը բովանդակում է յուր մեջ հայոց պատմության համար «թանկագին գանձեր» և այլն։ Պետք չէ մոռանալ և այն, որ այդ մի զույգ պատմագրները ոչ միայն ականատես են եղել անցքերին, այլ իրանք անմիջական և գլխավոր դերն են կատարել բոլոր գործողությունների մեջ։ Մասնակցել են մելիքների պատերազմներին, մասնակցել են նրանց գաղտնի հարաբերություններին և դեսպանախոսություններին օտար պետությունների հետ, մի խոսքով, ոչինչ չէ կատարվել առանց նրանց մասնակցության և գիտության։*

*Թողնենք այդ հրեշավոր երկու և կես դարերը, որ մի պարզ ապացույց են «Գաղտնիք»-ի հեղինակների երևակայության ծընունդ լինելուն, և ընդունենք, թե իրավ եղել են մի զույգ հայր և որդի, որոնք 259 տարի ապրել են, ամեն ինչ տեսել են և հիշյալ գիրքը գրել են։ Այժմ դիմենք նույն իսկ «Գաղտնիք»-ին, արդյոք կարո՞ղ էր այդ գիրքը 1881 թվին հասած լինել Մակար վարդապետի ձեռքը։*

*«Գաղտնիք»-ը կազմելու ժամանակ ինչպես երևում է, Մակար վարդապետը յուր միտքը բավական հոգնեցրել է, որքան կարելի է, ծածկել յուր վարմունքը,—բայց նրա անզգուշությունը նրանումն է եղել, որ որտեղ հարկավոր էր թվականներ և թվանշաններ դնել, նա չէ դրել, իսկ որտեղ հարկավոր չէր, նա առատությամբ դրել է, առանց մտածելու, որ այդ թվականները և թվանշանները կարող էին մատնել իրան։*

*Յուր առաջաբանի մեջ Մակար վարդապետը ասում է, 1881 թվին, մայիսի 5-ին Ապրես Բեկնազարյանը մուրացկանի կերպարանքով հայտնվեցավ նրա մոտ և «Գաղտնիք»-ը հանձնեց նրան։ Տեսնենք Ապրես Բեկնազարյանը կարո՞ղ էր հիշյալ թվին Մակար վարդապետին տեսած լինել։*

*Ապրես Բեկնազարյանը «Գաղտնիք»-ի վերջաբանի մեջ (394—398) ասում է, որ գտնվելով պարսից ծառայության մեջ, երկար ժամանակ դիտավորություն ուներ թողնել Պարսկաստանը, վերջապես 1838 թվին հաջողվում է նրան ուխտավորի անունով դուրս գալ Թավրիզից և ուղևորվել դեպի Երուսաղեմ։ Այնտեղ*

մանում է սուրբ Հակոբյանց վանքի հայ միաբանության կարգը և ընդունում է նրանց հագուստի և մորուքի ձևը (°)։ Այդ վանքում մնում է նա ամբողջ 9 տարի։ Հետո ս. պատրիարքի օրհնությունը առնելով, 1846 թվին թողնում է այդ վանքը և հեռանում է Երուսաղեմից։ Այնուհետև, որպեսզի թեթև լինի, յուր փողերը ոսկիների փոխարկելով, 15.000 ոսկի կարում է հագուստի ցնցոտիների մեջ, և մուրացկանի կերպարանքով սկսում է զանազան երկրներում ճանապարհորդություններ անել։ Որտեղ ասեք լինում է նա։ Այդ վերջին ճանապարհորդությունները տևում են 39 տարի, մինչև գալիս հասնում է Ղարաբաղ, և յուր հայրենական Խնածախ գյուղում մնում է 10 օր միայն։

Այժմ հաշվենք։

1838 թվին նա թողել է Պարսկաստանը։

9 տարի մնացել է Երուսաղեմում։

39 տարի ճանապարհորդություններ է արել։

Եթե այդ բոլորը ի մի գումարենք, կստանանք ներկա 1886 թվականը, որի մեջ ապրում ենք։ Ուրեմն այս տարի Սարգիս Բեկնազարյանը պետք է հանձնած լիներ Մակար վարդապետին յուր «Գաղտնիք»-ը և ոչ թե 1881 թվին, երբ նա Ղարաբաղում չէր կարող գտնվել։

Այդ հաշվով պարզվում է այն ամբողջ առասպելը, որ Մակար վարդապետը հնարել է, թե 1881 թվին ստացավ «Գաղտնիք»-ը, թարգմանեց, հետո բնագիրը կորցրեց և այլն,—դրանցից և ոչ մեկը չէր կարող պատահել, որովհետև ներկա թվականից առաջ հիշյալ գիրքը նրա ձեռքը հասնել չէր կարող։

Այդ բոլորից այն եզրակացությանն ենք հասնում, որ «Գաղտնիք»-ի մի զույգ հեղինակները՝ հայր և որդի Բեկնազարյանները, երևակայական անձնավորություններ են, թե այդ գիրքը Մակար վարդապետի խարդախած աշխատությունն է, և թե Մակար վարդապետը այդ գրքի վերջաբանի մեջ, ի դեմս Սարգիս Բեկնազարյանի, նկարագրել է միայն յուր ստանդական կյանքը Տաճկական Հայաստանում և յուր 9 տարի մնալը Երուսաղեմի վանքի միաբանության մեջ և այլն։

Առհասարակ «Գաղտնիք»-ի մեջ նշանակված թվականների մեծ մասը, անցքերի և փաստերի հետ համեմատելով, ցույց են տալիս խիստ խոշոր հակասություններ, որոնք պարզ կերպով երևան են հանում այն անհերքելի ճշմարտությունը, որ եթե հե-

դինակը գոյություն ունենար և ժամանակակից անձն լիներ, այն տեսակ սխալներ չէր անի։

Ես դեռ չեմ վերջացրել «Գաղտնիք»-ի մի զույգ հեղինակների հետ՝ հայր և որդի Բեկնազարյանների հետ։ Դրանց պետք է ամեն կողմից քննել, որովհետև դրանց գոյության հետ սերտ կապ ունի «Գաղտնիք»-ի հարազատության կամ անհարազատության խնդիրը։ Հենց որ մի անգամ ապացուցվեցավ, որ Բեկնազարյանները երևակայական անձնավորություններ են, իսկույն ինքնըստինքյան փուլ կգա ամբողջ «Գաղտնիք»-ը և կապացուցվի, որ այդ գիրքը նույնպես մի երևակայական աշխատություն է, մի անհայտ հեղինակի գրած։

Ինչո՞ւ։

Նախքան այդ հարցին ուղղակի պատասխանելը, պետք է որոշել, թե ի՞նչ տեսակ աշխատություն է «Գաղտնիք»-ը։

«Գաղտնիք»-ը վեպ չէ, պատմություն ևս չէ։ «Գաղտնիք»-ը մի հիշատակարան է, որի մեջ խառն և անկապ կերպով պատմվում են զանազան պատմական անցքեր։ Անցքերի պատմողը՝ Բեկնազարյանները, կամ անմիջական կերպով ինքը գործում է անցքերի մեջ, կամ, եթե ինքը ներկա չէ, մյուս գործիչների հետ սերտ կապեր ունի և նրանցից ստանում է հարկավոր տեղեկությունները։ Եվ այսպիսով, հիշատակարանի մեջ գործող անձը դառնում է միևնույն ժամանակ նրա գրողը, նրա հեղինակը։

Պատահում են շատ վեպեր, և իմ վեպերից մի քանիսը այդ ձևով է գրված, որ ամբողջ վեպը սկզբից մինչև վերջը պատմում է գործող անձինքներից մեկը։ Բայց այստեղ հեղինակը հայտնի է։ Նա միայն յուր խոսքը յուր ստեղծած տիպի բերանն է դնում, և յուր վիպասանության վերաբերությամբ՝ բոլոր պատասխանատվությունը յուր վրա է առնում։

Բայց Մակար վարդապետը հրաժարվում է իրան «Գաղտնիք»-ի հեղինակ ճանաչել։ Մնում են Բեկնազարյանները, որոնք թե՛ անձամբ խառն են կատարված անցքերի մեջ, և թե՛ իրանց հիշատակարանի մեջ գրում են նույն անցքերը։ Եվ այդպես անցքերի ճշտության պատասխանատվությունը մնում է վերջինների վրա։ Ուրեմն, եթե հայտնվին փաստերի մեջ զեղծումներ և խոշոր զեղծումներ, պետք է ընդունել երկուսից մեկը. կամ Բեկնազարյանները ստախոսներ են և իրանց երևակայության ցնորքները

*տալիս են մեզ իբրև զուտ պատմական փաստեր, կա՛մ նրանք բանաստեղծական անձնավորություններ են, այլ մի անհայտ հեղինակ գրել է այդ հիշատակարանը և Բեկնազարյանների անունով նույն զեղծումներն է անում՝ աղավաղում է պատմությունը։*

*Վերջին դեպքում, «Գաղտնիք»-ը կկորցնի յուր հարազատությունը և կդառնա մի անհամի կեղծ աշխատություն։ Թո՛ղ լինի այդ անհատը Մակար վարդապետը, կամ մի ուրիշը,—միևնույն է։*

*Ահա ի՛նչու ասում էի ես, թե երբ մի անգամ ապացուցվեցավ, որ Բեկնազարյանները երևակայական անձնավորություններ են, իսկույն փուլ կգա և կփշրվի ամբողջ «Գաղտնիք»-ը։*

*Դիմենք փաստերին։*

*«Գաղտնիք»-ի մեջ գտնում ենք անթիվ գաղտնի թղթակցություններ կամ ամբողջապես, կամ նրանց բովանդակությունը։ Այս տեսակ գաղտնի թղթակցությունները թե՛ պետությունների և թե՛ մասնավոր բարձր պաշտոնակալների հարաբերությանց մեջ, ըսկըզբում խստիվ պահվում են դիվաններում, քանի դեռ գործողությունները չեն վերջացած։ Իսկ գործողությունները վերջանալուց հետո, նրանք դառնում են հնադարանների (արխիվների) սեփականություն։ Ապագայում, շատ հեռավոր ապագայում, նրանցից սակավներին է վիճակվում պատմության նյութ դառնալ։*

*Բայց «Գաղտնիք»-ի մեջ հակառակն ենք տեսնում։ Դեռ այդ գաղտնի թղթակցությունների մելանը չորացած՝ նրանք մտնում են «Գաղտնիք»-ի մեջ։ Ո՞րտեղից, ի՞նչպես, ո՞ր սատանան է բերում՝ մարդ դժվարանում է հասկանալ։ Այժմ տեսնենք՝ արդյոք հայր և որդի Բեկնազարյանները ի՞նչ պաշտոն էին կատարում պարսից թագավորների արքունիքում, որ նրանց մատչելի էին այն բոլոր դիվանական գաղտնիքները և այն բոլոր գաղտնի թղթակցությունները, որ նրանք անմիջապես ներմուծում էին իրանց հորինած գրքի մեջ։*

*Սկսենք որդուց՝ Ապրես Բեկնազարյանից։*

*1795 թվին, սեպտեմբեր ամսում, Աղա-Մամադ շահը ավերակ է դարձնում Թիֆլիսը և 12.000 գերիների բազմությամբ[1] սկսում է չվել դեպի Պարսկաստան։ Նա Ղարաբաղից յուր հետ է*

---

1 *«Խամսայի մելիքությունները», եր. 183—187։*

«История войны и владычества русских на Кавказе». Н. Дубровина, г. III, 38—49.

*տանում թե հայր և թե որդի Բեկնազարյաններին (եր. 172)։ Հենց բանակի մեջ, ճանապարհին գնալու ժամանակ, շահը վարժապետ է կարգում, որ պատանի Ասլանին պարսկերեն սովորեցնե։ Բավական մեծ հոգացություն պետք է համարել շահի կողմից...*

*«Պարսից վարժապետս Շուշու բանակատեղից սկսած՝ շահի ստիպմամբ աշխատում էր ինձ ուսուցանել պարսկերեն խոսել, գրել և կարդալ... Սկսա հաճախ կարդալ Կյուլստան դասագիրքս և ձանձրացած ժամանակներս ընդօրինակել։ Եվ ահա այսպիսի շարունակությամբ ունակությունս օր քան զօր զորացավ... և առաջադիմեցի իմ ձեռնարկության մեջ։ Որքա՜ն ուրախանում էր իմ բարերար Շահն, երբ իր հետ խոսակցում էի պարսկերեն և արտագրում էի գեղեցիկ. վասն որոյ շահն հրամայեց յուր դիվանապետին, որ հետզհետե ինձ օրինակել տա արքունիքի* ճռվարտակներ, չրչաբերականներ և գաղտնի նամակներ, *որպեսզի այս մասնաճյուղը մշակելով ապագայում ես լինեի յուր* գաղտնի նամակագիրը» *(եր. 221)*։

*Այդ բոլորը խիստ հետաքրքիր է։*

*Թողնենք այն, որ շահի* «գաղտնի նամակագիրը» *մասնագիտաբար չէ պատրաստվում, և նրանից այնքան խորին դպրություն չէ պահանջվում, որքան բարոյական հատկություններ, այն է՝ հավատարմություն և ծածկապահություն, իսկ այդ հատկությունները շահը պատանի Բեկնազարյանի մեջ նախագուշակել չէր կարող։ Թողնենք և այն, որ Աղա-Մամադ-շահը այնքան միամիտ մարդ չէր, որ յուր* ճռվարտակները, չրչաբերականները և գաղտնի նամակները *տար պատանի Բեկնազարյանի ձեռքը, որ նա իբրև վարժության կամ գեղագրության օրինակներ գործ ածեր։ Որովհետև եթե նա կարող էր հավատալ մի անփորձ պատանու, բայց երբեք չէր հավատա նրա վարժապետ մոլլային։ Թողնենք և այն, թե ի՞նչ էր գտել Աղա-Մամադ-շահը մի խնածախցի հասարակ գյուղացու որդու մեջ, որ նրա վրա առանձին ուշադրություն էր դարձնում։ քանի որ նա՝ Թիֆլիսից տարած 12.000 գերիների թվում կային շատ հայ և վրացի ազնվականների որդիներ։ Այդ բոլորը թողնում եմ ես, այլ կարևոր եմ համարում ընթերցողի ուշադրությունը դարձնել միայն ա՛յն կետի վրա, արդյոք կարո՞ղ էր պատանի Բեկնազարյանը Շուշիից մինչև Թեհրան գնալու ժամանակ, ճանապարհին այնքան պարսկերեն սովորել, որ շահին հիացներ յուր*

պարսկերենով և սկսիր հրովարտակներ, շրջաբերականներ և գաղտնի նամակներ ընդօրինակել։

Այդ կետը ես ուշադրության արժան եմ համարում,—ահա ի՛նչ պատճառով։

Դա է կազմում «Գաղտնիք»-ի հիմքը, այստեղից են բխում այն անթիվ պաշտոնական գաղտնի նամակները, շրջաբերականները և այլն, որ այդ գրքի մեջ բավական մեծ տեղ են բռնում։ Պատանի Բեկնազարյանն ընդօրինակում է նրանց իբրև աշակերտ, և միևնույն ժամանակ զետեղում է «Գաղտնիք»-ի մեջ իբրև պատմագիր...

Հաշվենք թե պատանի Բեկնազարյանը որքա՞ն ժամանակ մնաց շահի պալատում, մինչև այդ կատարելությանը հասավ։ (Ներքևում կտեսնենք, որ նա ապրում էր շահի պալատում)։

1795 թվի սեպտեմբեր ամսի վերջերում Աղա-Մամադ-շահը վերադարձավ Թիֆլիսի արշավանքից։ Յուր ծանր բանակի դանդաղ ընթացքով, մինչև հիշյալ թվականի վերջը նա հազիվ Թեհրան կհասներ։ Յուր աթոռանիստ քաղաքում երկար չմնաց նա. անմիջապես սկսեց մի նոր արշավանք դեպի Խորասան[1]։ (Այդ կտեսնենք հետևյալ գլխում)։ Իսկ Խորասանից 1797 թվի գարունքին ուղղակի արշավեց կրկին դեպի Անդրկովկաս, առանց պատերազմի գրավեց Շուշի բերդը և նույն բերդում սպանվեցավ յուր երկու սենեկապետներից[2]։

Այդ հաշվից երևում է, որ Աղա-Մամադ-շահն ամենևին ժամանակ չէր կարող ունենալ զբաղվելու պատանի Բեկնազարյանի կրթությունով։ Որովհետև Աղա-Մամադ-շահի՝ Թիֆլիսի արշավանքից Պարսկաստան վերադառնալը, Խորասանի արշավանքը կատարելը և այնտեղից կրկին Շուշի գնալը և սպանվելը տևեց ընդամենը մեկ և կես տարի (այսինքն՝ 1795 թվի սեպտեմբեր ամսից, մինչև 1797 թվի ամառը), և այդ մեկ ու կես տարվա ընթացքում նա զբաղված էր անընդհատ պատերազմներով, և Թեհրանում չմնաց նա, որ յուր հրովարտակները, շրջաբերականները և

---

1 «Պատմութիւն Պարսից» Մեսրովպայ Դ. Թաղիադեանց, հատ. Ա, տպ. ի Կալկաթա, 1846, եր. 214։

2 «Խամսայի մելիքությունները». եր. 204—209. «История войны и владычества русских на Кавказе». Н. Дубровина, т. III, 209: «Պատմութիւն Պարսից» Մեսրովպայ Դ. Թաղիադեանց, հատ. Ա, եր. 216։

պաշտոնական գաղտնի նամակները տար պատանի Բեկնազարյանին ընդօրինակելու և այլն[8]։

Եթե մինչև անգամ ընդունենք, որ շահի բացակայության ժամանակ պատանի Բեկնազարյանը բնակվում էր նրա պալատում, դարձյալ վերևում ցույց տված հաշվով (ի բացառյալ ճանապարհորդության վրա անցած ամիսները) մեկ տարուց ավել այնտեղ բնակվել չէր կարող։ Որովհետև Աղա-Մամադ-շահի սպանվելուց հետո, ոչ ոք նրան պալատում չէր պահի։ Այդ մեկ տարվա ընթացքում տեսեք որքա՜ն բաներ սովորեց նա։ Պարսկերենի մեջ այնքան կատարելագործվեցավ, որ մինչև անգամ հրովարտակներ ու շրջաբերականներ էր ընդօրինակում և նրանցից «Գաղտնիք»-ի համար օգուտներ էր քաղում, այլև սովորեց նա մի ուրիշ լեզու՝ ֆրանսերեն։

«Հաջողեցա գաղիերեն ևս ուսանել Յակովբ անուն մի հայ-կաթոլիկ վարդապետից, որը Ուրմի քաղաքի կառավարությունն շահին ղրկած էր պատժելու,—շարունակում է պատանի Բեկնազարյանը (եր. 229)։—Ամբաստագիրն սաստիկ բողոքում էր թե սույն վարդապետն դուն գործած էր մի քանի թուլահավատ հայեր կաթոլիկության դարձնել, յուր խռովահույզ գրգռիչ, հեղափոխական և գաղտնի քարոզներով տեղույն քրիստոնյա ժողովրդյան և տիրող կառավարության մեջ խռովություններ հարուցանել և ժողովուրդը պարսից դեմ ապստամբեցնել (ինչո՞ւ)։ Շահն ավելի զբաղված լինելով քաղաքական և պատերազմական գործերով՝ ժամանակ չունեցավ կա՛մ պատժել և կա՛մ քննությամբ արդարացնելով ազատել, վասն որոյ բանտարկյալ մնացած էր, որի մոտ հաճախում էի ուսանելու»։

---

8 Ով որ փոքրիշատե ծանոթ է պարսից լեզվի և մանավանդ նրա գրության ձևերի հետ, որը սովորելու համար տասնյակ տարիներ են վատնվում, կհասկանա վերոհիշյալ տողերի տարօրինակությունը։ Պարսից տառերի և գրության ձևը փոխելու խնդիրը այժմ մի մեծ մանկավարժական հարց է դարձել Պարսկաստանում։ Այդ հարցը առաջին անգամ բարձրացրեց հայազգի Միրզա-Մելքում խանը՝ պարսից Դռան Լոնդոնի լիազոր դեսպանը։ Այժմ նա պարսիկների համար մի նոր ձևով տառեր է հնարել և «Գյուլիստանը» նույն տառերով տպագրել է տվել Լոնդոնում։ Եթե ընդունելություն գտնի հարգելի պարսկագետի աշխատությանը, պարսից մանկավարժությունը մեծ դյուրություններ կգտնե։

Այդ ասացվածների մեջ որքան տողեր կան, այնքան էլ սխալներ կան։ Ուրմի քաղաքում երբեք հայ կաթոլիկ համայնություն կամ հայ կաթոլիկ վարդապետներ չեն եղել և այժմ նույնպես չկան։ Երբեք հայ կաթոլիկ վարդապետները քաղաքական ձգտումներով Պարսկաստան չեն մտել, որովհետև նրանք քաղաքական շահեր չունեին։ Ուրմիում եղել է, այժմ նույնպես կա ասորի-կաթոլիկ համայնություն, բայց նրանց կրոնավորները ոչ թե հայեր են, այլ եվրոպացիք լազարիստների կարգից։ Երևի «Գաղտնիք»-ի հեղինակը, ինքը Պարսկաստանում ապրելով, այնքան չէ ուսումնասիրել երկիրը, որ Ուրմի՛ն շփոթել է Սպահանի հետ, որտեղ իրավ կա հայ-կաթոլիկ համայնություն։—Թողնենք այդ, մեզ համար հետաքրքիր կետը պատանի Բեկնազարյանի ֆրանսերեն սովորելն էր բանտարկյալ վարդապետի մոտ, մի տարվա ընթացքում, այն էլ պարսկական զնդանային բանտում, որի դռները ոչ մի օտար մարդու առջև չեն բացվում։

Այժմ տեսնենք, թե ինչպես էր ապրում պատանի Բեկնազարյանը շահի պալատում։

> «Շահի պալատում ամենից սիրականն ես էի։ Շահի երկու քույրերն, վրացի և պարսիկ աղախիններն սիրում էին ինձ անհագ սիրով, փայփայում և գգվում։ Չեմ կարող չհիշել մի գլխավոր պարագա, այն է, միմյանցից թաքուն հայ կաթոլիկ վարժապետս (բանտում) քարոզում էր ինձ ընդունել Փափի գերիշխանությունը, պարսիկ վարժապետս՝ Մահմեդի լույս կրոնը և ս. Ալու իմամությունը, և վրացի աղախինները՝ հունադավանությունը և վրացիությունը։ Թեև հորից կանխավ խրատված էի մնալ այո՛ կամ ո՛չ չպատասխանելու՝ սակայն խոստովանում եմ մեղքս, ինչպես տղայական տաք արյան հատուկ է՝ վարդապետին պատասխանեցի.—«Ավելի լավ կլիներ դու հայ մեռնեիր, քան թե փափականության մեջ ապրեիր». պարսիկ վարժապետիս.—«Դու ինձ պարտավոր ես պարսկերեն ուսուցանել և ոչ կրոնափոխություն, իսկ վրացի Թամար և Էլիզա աղախիններին.—«Դուք ավելի լավ կանեիք, ձեր շահամոլ և դյուրափոփոխ ազգականներին մահմեդականությունից արգելել, քան ինձ վրացիություն ընդունել տալու ճգնիլ» (եր. 229—230)։

Այդ բոլոր միամիտ խոստովանությունները փոքրիշատե հավանական կարող էին լինել, եթե Աղա-Մամադ-շահը կանանց

ունենար։ Դժբախտաբար նա ներքինի էր և զուրկ պարսից շահերի՝ կանանոց ունենալու բավականությունից։ Դեռ տղայության հասակում Ադլ-շահի հրամանով ներքինացրին նրան և պահվում էր նույն շահի արքունիքում, որ գտնվում էր Թավրիզ քաղաքում։ Իսկ երբ Ջնդ-Քարիմ-խանի զորավարը, Շըխալի-խանը, սպանել տվեց նրա հորը՝ Մամադ-Հուսեին-խանին, և նրա որդիներից շատերին կոտորել տվեց Աստարապատում, այդ կոտորածից ազատվեցավ Աղա-Մամադ-խանը, որովհետև գտնվում էր Ադլ-շահի մոտ[1]։

Ադլ-շահի թագավորությունը տևեց 6 ամիս միայն։ Այնուհետև զորացավ Ջենդ-Քարիմ-խանը։ Դա Աղա-Մամադ-խանին բերել տվեց Շիրազ և պահում էր յուր կանանոցում, իբրև պատանդ։ Այդ կանանոցից փախավ նա և Ղաջարյան թագավորության սկիզբը դրեց[2]։

Աղա-Մամադ-շահը ինչպես կանանոց չուներ, նույնպես տանը մնացած երկու քույրեր չուներ, որ սիրեին Ապրես Բեկնազարյանին։ Նա միայն մի հորաքույր ուներ, որի վրա ամուսնացավ Ջենդ-Քարիմ-խանը, նրա հորը սպանել տալուց հետո[3]։

Այստեղ ծիծաղելի է այն կետը, որ Ապրես Բեկնազարյանը, ապրելով Աղա-Մամադ-շահի պալատում և ծանոթ լինելով նրա բոլոր գաղտնիքների հետ, այնուամենայնիվ չգիտե ամենահասարակ անցքերը նրա տոհմային պատմության։—Նա չգիտե, որ Աղա-Մամադ-շահի հայրը՝ Մամադ-Հուսեին-խանը, մոտ 40 տարի առաջ սպանված էր (1759 թ.[4]), իսկ նրա մայրը նույնպես վաղուց վախճանված էր։ Ուրեմն այդ երկու քույրերը ո՞վ պիտի ծներ Աղա-Մամադ-շահի համար, որ սիրեին Ապրես Բեկնազարյանին...

Եթե ընդունենք անգամ, որ պարսից այդ ներքինի թագավորը կանանոց ուներ, բայց դարձյալ խիստ տարապայման կլիներ ըն-

---

1 «Պատմութիւն Պարսից» Մ. Դ. Թաղիադեանցի, Ա հատ., եր. 216։ Պատմութիւն Նոր Ջուղայու «Յարութիւն Տեր Հովհաննեանցի», տպված ի Նոր Ջուղա 1881 ամի, Ա. հատ., եր. 291։

2 «Պատմութիւն Պարսից» Մ. Դ. Թաղիադեանցի, Ա հատ., եր. 206, «Պատմութիւն Նոր Ջուղայու», Ա հատ., եր. 279—280։ «Խամսայի մելիքությունները», եր. 176։

3 «Նամեյի խոսրովան» («Գիրք թագավորաց»), Աշխատություն Ջալալ-Միրզայի որդւոյ Ֆաթալի շահի, Գ հատ., եր. 492։ Տպված է Թեհրանում 1871 ամի։

4 Չամչյանի «Պատմութիւն հայոց», Գ հատ., եր. 859։

դունել, որ Սարգիս Բեկնազարյանը ապրում էր նրա պալատում և նրա կանանոցի հետ հարաբերություններ ուներ։ Սարգիս Բեկնազարյանը այդ ժամանակ անպատճառ 20 տարեկան կլիներ, իսկ այդ հասակում նրան կանանոցը ներս չէին թողնի. մանավանդ, որ նա քրիստոնյա էր և նրա ներկայությունը, ըստ պարսից կրոնի, կարող էր ամեն ինչ պղծել մահմեդական ընտանիքում, և ավելի, մոլեռանդ Աղա-Մամադ-շահի ընտանիքում։

Զարմանալին այն է, Աղա-Մամադ-շահը, որ Թիֆլիսից տարած 12.000 գերիների մեծ մասը զանազան հրապույրների կամ մտրակի ուժով մահմեդական դարձրեց, բայց Սարգիս Բեկնազարյանի կրոնին չդիպավ։ Եվ նրան ոչ միայն որպես քրիստոնյա սնուցանում էր յուր պալատում, այլ մինչև անգամ նպաստում էր նրա մեջ հայրենական կրոնի պահպանվելուն։

«Ինչպես իմ բարերար շահն կարգադրած էր,—գրում է Սարգիս Բեկնազարյանը,—ես ամեն շաբաթ երեկոյան և կյուրակե առավոտյան և կեսօրին, մեր եկեղեցին էի գնում, աղոթում և ուզած ժամանակս հաղորդվում և վերադառնում» (եր. 229)։

Նա մինչև անգամ շահի պալատում շարունակում էր հայերենով պարապել։

«Բարձիթողի արած չէի և հայերենս, այլ ինչպես կանխավ պատվիրած էր ինձ հայրս՝ գիշերներն առանձնացած ժամանակներս կարգաւ կարդում էի Ս. Ավետարանս իբրև կրոնագիրք, Եղիշեն՝ իբրև պատմագրություն ուսուցանող գիրք և Նարեկս՝ իբրև աղոթագիրք» (եր. 222)։

Այդ բոլորը գուցե լավ կլիներ մի վեպի մեջ, բայց ոչ թե պատմության մեջ։ Երևում է, որ միամիտ Սարգիս Բեկնազարյանը ոչ Աղա-Մամադ-շահին է տեսել, որ գիտենար, թե ինչե՛ր կատարվեցան այդ պալատում։ Եթե նա այնտեղ եղած լիներ, անպատճառ կտեսներ ուրիշ շատ հայ պատանիներ, որոնք Եղիշեն և Նարեկը ամեն գիշեր կարդում էին։ Նա կտեսներ Մանուչար խանին[1], Խոսրով խանին[2], Գիորգի խանին[3], և ուրիշ շատերին, որոնց ոչ միայն

---

1 Մանուչար խանը Թիֆլիսի Էնիկոլոփյանների տոհմիցն էր։

2 Խոսրով խանը Թիֆլիսի Տեր-Սամուելի որդին էր, Ղայթմազյան տոհմից։

3 Գիորգի խանը Մանուչար խանի ազգականն էր, նույնպես թիֆլիսեցի։

Այդ երեք անձանց մասին, որ բարձր պաշտոնների և աստիճանների հասան Պարսկաստանում, կխոսվի հետևյալ գլխում։

*մահմեդականացրել էին, այլև ներքինիացրել էին... Առանց ներքինի դարձնելու և առանց մահմեդական դարձնելու պարսից շահերը ոչ մի օտար մարդու թույլ չէին տալիս բնակվելու իրենց պալատում...*

*Ով որ փոքրիշատե ուսումնասիրել է Աղա-Մամադ-շահին, հարկավ ծանոթ կլինի նրա վերին աստիճանի կրոնական մոլեռանդության հետ։ Նա մինչև անգամ բուն Պարսկաստանի, որի թագավորն էր ինքը, մի նահանգից հայ գերիներ էր տանում դեպի մյուսը՝ մահմեդականացնելու նպատակով*[1]*։ Իսկ նրա՝ Թիֆլիսից տարած ահագին գերիվարության հետքերն անգամ չեն մնացել այժմ Պարսկաստանում։*

*Բայց ի՞նչ է ասում այս գերիների մասին Ապրես Բեկնազարյանը.*

> *«Պարսկաստան փոխադրած հայ և վրացի գերիներն բնակություն հաստատած էին Թավրիզում, սորա շրջականերում և փոքր մասամբ Թեհրանում։ Վրացիք զգալի կերպով պարսկանում էին մահմեդական կրոնը ընդունելով, իսկ հայք ընդհակառակը պահպանում էին յուրյանց կրոնը և լեզուն, եկեղեցիներ շինելով և երեխայքը քահանայից ձեռք ուսուցանելով» (եր. 229)։*

*Այդ խոսքերից խունկի հոտ է բուրում... Երևում է, որ գրողը*

---

1 *1785 թվի հուլիս ամսի 23-ին Աղա-Մամադ-շահը գերի վարեց Սպահանի նահանգի Փերիա կոչված գավառի հայ բնակիչներից շատերին, որոնք Շահ-Աբաս մեծի Պարսկաստան տարած գաղթականներից էին։ («Պատմութիւն Նոր-Ջուղայու», Ա հատ., եր. 342—343)։*

*Հետևյալ տարին (1786 թ.) Աղա-Մամադ-շահը մի նոր արշավանք կատարեց դեպի Սպահանի կողմերը։ Այս անգամ Փերիա գավառի հայ բնակիչները երկյուղից ամրացան լեռներում, իսկ շահը հրամայեց յուր զորքերին ավարի առնել նրանց անտեր մնացած գյուղերը։ («Պատմ. Նոր Ջուղայու», Ա հատ., եր. 347)։*

*1787 թվին դարձյալ արշավեց Աղա-Մամադ-շահը դեպի Սպահանի կողմերը և այս անգամ գերի վարեց հայոց Բուրվարի կոչված գավառի բնակիչներից շատերին, որոնք նույնպես Շահ-Աբաս մեծի տարած հայ գաղթականներից էին։ Այդ գերիներին Աղա-Մամադ-շահը բնակեցրեց Թեհրանի շրջակա գավառներում և գլխավորապես Սավայում։ Մեծ մասը բռնությամբ մահմեդականացրին։ («Պատմ. Նոր Ջուղայու», Ա հատ., եր. 348—349)։*

մի հոգևորական է... Չէ ցանկացել, որ հայերը կորչեին Պարսկաստանում։

Եթե Ապրես Բեկնազարյանը Պարսկաստանը տեսած լիներ և Աղա-Մամադ-շահի գերիների հետ այնտեղ գնացած լիներ, հենց այդ փոքրիկ հատվածի մեջ այնքան սխալներ չէր անի, որը ես այժմ պիտի ցույց տամ։

Ինչպես վերևում հիշեցի, Աղա-Մամադ-շահի տարած թե հայ և թե վրացի գերիների հետքերն չեն մնացել Պարսկաստանում։ Մահմեդականությունը բոլորին կլանեց։ (Իհարկե, իմ խոսքը մի քանի զերծ մնացած անհատների մասին չէ)։ Սխալ է այն, որ Աղա-Մամադ-շահը բնակեցրեց նրանց Թավրիզում, նրա շրջակա գյուղերում և մասամբ Թեհրանում։ 12.000 գերին փոքր բան չէ, եթե այդ քաղաքներում բնակեցրած լիներ, չէին կորչի, որովհետև հնուց հայ ազգաբնակություն կար։

Թավրիզի հայ ազգաբնակությունը բաղկացած է գլխավորապես երկու տարրերից՝ բնիկներից և Ղարադաղի գաղթականներից, որոնք մինչև այսօր պահպանել են իրենց բարբառը և, թե սովորություններով և թե պարապմունքներով՝ բոլորովին որոշվում են մյուսներից։ Եթե այդ քաղաքում բնակեցրած լինեին Թիֆլիսի գերիներին, այսօր կտեսնեինք նրանց, մանավանդ, որ խմբերով տարված գաղթականները միշտ առանձին թաղեր են կազմում և այդ թաղերը իրանց անունով են կոչում։ Ինչպես Շահ-Աբասի Սպահան տարած գերիները բաժանված են զանազան թաղերի, և երբեք չուղայեցին չխառնվեցավ երևանցու հետ, կամ երևանցին՝ գաշտեցու (Ներքին ագուլեցու) հետ։

Իսկ Թավրիզի շրջակայքում, որ ցույց է տալիս Բեկնազարյանը, ոչ միայն թիֆլիսեցոց գյուղեր չկան, այլ մինչև անգամ մահմեդականների՝ թուրքաց կամ պարսից գյուղեր չկան։ Թավրիզի շուրջը անապատ է, իսկ գյուղերը բավական հեռու են։ Հայոց երեք գյուղեր կան միայն, մի օրվա ճանապարհի հեռավորության վրա, որոնց բնակիչները ոչ թե թիֆլիսեցիներ են, այլ բնիկներ կամ ղարադաղցիք։ Թեհրանում նույնպես թիֆլիսեցի գաղթականներ չեն եղել և այժմ չկան։

Ուրեմն ի՞նչ եղան Աղա-Մամադ-շահի տարած գերիները։

Աղա-Մամադ-շահը նրանց մի մասը բնակեցրեց Մազանդա-

րանում, որ յուր հայրենական երկիրն էր, մի մասը բնակեցրեց Կասպից ծովի հարավային գավառներում, մնացածներին ցրիվ ավեց Պարսկաստանի զանազան խորքերում, հեռու քրիստոնյա ազգաբնակություններից, որպեսզի հեշտ լիներ նրանց մահմեդականացնելը։

Այդ գլխում հիշված բոլոր օրինակներից, որ ես քաղել եմ «Գաղտնիք»-ից, ինքնըստինքյան ծագում է մի հարց, մի՞թե Ապրես Բեկնազարյանը, որ այնքան մերձավոր էր Աղա-Մամադ-շահին, որ նրա պալատում էր ապրում, որ անձամբ ականատես և ներկա էր յուր ժամանակի անցքերին,—մի՞թե նա այսքան սխալներ կաներ, եթե իրոք մի այսպիսի անձնավորություն գոյություն ունենար։

Այդ սխալները Մակար վարդապետի սխալներն են։ Եթե նա փոքրիշատե ծանոթ լիներ պարսից կարգերի և սովորությունների հետ, եթե նա լավ ուսումնասիրած լիներ այդ ժամանակներում կատարված անցքերը, իհարկե իր ստեղծած պատմագրին մոլորությունների մեջ չէր ձգի։

Հետևյալ գլխում ես ցույց կտամ ավելի խոշոր սխալներ հայր Բեկնազարյանի գործունեության մասին Պարսկաստանում, իսկ այժմ չեմ կարող առանց նկատողության թողնել մի մեծ հակասություն, որ իսպառ ոչնչացնում է «Գաղտնիք»-ի մի զույգ հեղինակների գոյությունը և ցույց է տալիս, որ նրանց գրածները երևակայական առակաբանություն է, և ավելի ոչինչ։

Վերևում տեսանք, թե Բեկնազարյանները որտեղ բնակեցրին Աղա-Մամադ-շահի Պարսկաստան տարած հայ և վրացի գերիներին՝ Թավրիզ քաղաքում, նրա շրջակա գյուղերում և Թեհրանում։

Բայց երևում է, որ «Գաղտնիք»-ի մի զույգ հեղինակները սաստիկ մոռացկոտ են, գրքի մի տեղում գրածը մյուս երեսում մոռանում են և նրա հակառակն են գրում։ Նրանք «Գաղտնիք»-ի 169 երեսում Աղա-Մամադ-շահի վերառած հայ և վրացի գերիներին, հենց առաջին իջևանից՝ Սողանլուխից, Մելիք-Մեջլումի[1] միջնորդությամբ, վերադարձնում են կրկին իրանց տեղը—Թիֆլիս, իսկ հետո 229 երեսում, բնակեցնում են միևնույն գերիներին

---

1 Մելիք-Մեջլումը Ղարաբաղի Ջրաբերդ գավառակի մելիքն էր, որ վիրավորված լինելով վրաց Հերակլ թագավորից, առաջնորդեց Աղա-Մամադ-շահին Թիֆլիսի արշավանքի ժամանակ։

Պարսկաստանի Թավրիզ քաղաքում, նրա շրջակա գյուղերում, Թեհրանում և այլն։ Այլև ի՞նչ գերիներ կմնային այդ տեղերում բնակեցնելու համար, քանի որ բոլորին վերադարձրել էր շահը։

Ահա «Գաղտնիք»-ի խոսքերը.

> «Սողանլու կոչված տեղից, Մելիք-Մեջլումի միջնորդությամբ գերիներից Տփղիս վերադարձան տասն և երկու հազար վրացի և հայ գերվածներ՝ հանդերձ բոլոր եկեղեցական անոթներով և զարդերով» (եր. 169)։

Գերիների թիվը ընդամենը 12 հազար էր։ Այդ թիվը առնված է «Խամսայի մելիքություններից», որի մեջ նույնպես 12.000 է նշանակված (եր. 185)։ Իսկ Դուբրովինը նրանց թիվը ավելի պակաս է դնում՝ 10.000 («Ист. войны и владычества русских на Кавказе», т. III, стр. 42):

Այս տեսակ հակասություններ անում են այն հեղինակները, որոնցից մեկը, հայր Բեկնազարյանը, Աղա-Մամադ-շահի զորապետն է և անձամբ մասնակցել է նույն արշավանքին, իսկ մյուսը՝ որդի Բեկնազարյանը, ապրել է շահի պալատում և գրել է ժամանակի պատմությունը...

## Դ

Այժմ տեսնենք հայր Բեկնազարյանի՝ Աբրահամի գործունեությունը Պարսկաստանում։ Քննելով նրան՝ մենք քննած կլինենք «Գաղտնիք»-ը։

Պետք է չմոռանալ, որ Աղա-Մամադ-շահը, Թիֆլիսը ավերակ դարձնելուց հետո, երբ վերադառնում էր Պարսկաստան, հայր և որդի Բեկնազարյաններին տարավ յուր հետ։

> «Շահն հայտնեց մելիքին (Մելիք-Մեջլումին), որ ինքն ստիպված էր փութալ ի Պարսկաստան և յուր հետ տանել և հայրս և զիս»—այսինքն՝ հայր և որդի Բեկնազարյաններին (եր. 171)։

«Երբ Թավրիզ հասանք[1],—շարունակում է որդի Բեկնա-

---

[1] «Գաղտնիք»-ը լի է անթիվ աշխարհագրական սխալներով։ 172 և 173 երեսներում ասված է, որ թե իրանք՝ Բեկնազարյանները, և թե շահը անցան Երասխը Խուդափիրինի կամրջով։ Եթե այստեղից անցած լինեին, Թավրիզը չէին տեսնի։

զարյանցը,—Հայրս շահից զորավար կարգվեցավ և 10.000 սարվազ առնելով գնաց Հերաթի և Ղանդահարի ապստամբությունները զսպելու... Իսկ շահն հաղթական փառքով մտավ Թեհրան, ուր պարսից աթոռանիստ քաղաքն էր[1]» (եր. 221)։

«Հայրս վերադարձավ և պատմեց հետևյալը.

«Սիրելի Այրես, խայտառ նվաճեցինք Հերաթի և Ղանդահարի ապստամբությունները։ Տեղական ապստամբ խաներն սպանվեցան պատերազմում և հաջորդեցին շահի հրամանով նոցա որդիքն։ Շահն բավական մնաց իմ այս ծառայությամբ» և այլն (եր. 222)։

Նա կարծում է, որ Հերաթը և Ղանդահարը առանձին-առանձին երկրներ են, չգիտե, որ երկուսն էլ Աֆղանիստանի քաղաքներ են։ Այդ թողնենք։

Հետաքրքրականն այն է, թե ո՛րքան շուտ են կատարվում «Գաղտնիք»-ի մեջ գործերը։ Հայրը գնաց այն ես 10.000 սարվազով (հետևակ զինվոր), հզոր Աֆղանիստանի ապստամբությունները նվաճեց, տիրող խաներին սպանեց, նրանց որդիներին հաջորդ կարգեց, շահի շնորհակալությունն ստացավ և եկավ սիրելի Այրեսին պատմեց—և այդ բոլորը կատարվում է մի քանի րոպեում։

«Գաղտնիք»-ի համար, որպես շատ օրինակներ կտեսնենք, աշխարհագրական տարածությունների և ժամանակների տարբերություններ չկան։ Մարդիկ օդի մեջ են շրջում. մի վայրկյան կտեսնենք նրանց Թավրիզում, իսկ մի վայրկյանից հետո՝ Հնդկաստանում։ Մինչև Բեկնազարյանը կգնար Աֆղանիստանի ապստամբությունները կնվաճեր և կվերադառնար, շահին արդեն սպանված կգտներ, և այլևս նրա շնորհակալությունը չէր կարող ստանալ, որովհետև հիշյալ արշավանքից հետո շահը ապրեց մեկ և կես տարի միայն։ Այդ տեսանք նախորդ գլխում։

Բայց հարցը դրանում չէ։ Մեզ համար հետաքրքրականն այն է, արդյոք տեղի ունեցե՞լ է մի այդպիսի արշավանք։

---

1 Պարսից աթոռանիստ քաղաքը Թեհրանո՞ւմն էր, թե Թեհրա՞նն էր աթոռանիստ քաղաքը,—հայտնի չէ։ Բեկնազարյանը չգիտե, որ պարսից աթոռանիստ քաղաքը Սպահանն էր, իսկ Աղա-Մամադ-շահը և գլխավորապես նրա հաջորդները դարձրին Թեհրանը նոր մայրաքաղաք։

Այդ հարցը պարզելու համար ես հարկավոր եմ համարում բերել «Խամսայի մելիքություններից» մի քանի քաղվածքներ միևնույն արշավանքի մասին և զուգահեռաբար դնել «Գաղտնիք»-ի պատմածների հետ։

«Որովհետև Աղա-Մամադ-խանը իր հաղթությունով (Թիֆ. վերաբերությամբ) առավել պարտական էր Մելիք-Մեջլումին, ճանապարհին, հենց առաջին իջևանում (Սողանլուխում) հրամայեց իր զորապետներին, որ ավարից նրա մարդիկների համար բաժին հանեն, ասելով.— «Քրիստոնյային սպանածը՝ քրիստոնյային տվեք»։ Մելիք-Մեջլումի ձիավորները իրանց

«Սողանլու կոչված տեղից, Մելիք-Մեջլումի միջնորդությամբ գերիներից Տփխիս վերադարձան տասն և երկու հազար վրացի և հայ գերվածներ[1] ճանղերձ բոլոր եկեղեցական անոթներով և զարդերով» («Գաղտնիք», եր. 169)։

«Շահն նվիրեց Մելիք-Մեջլումին մի առյուծադրոշմ չքանշան[2], երկու ջորաբեռն չխտանոց[3] արծաթ և երկու քսակ ոս-

---

1 Պարզ երևում է, որ «Գաղտնիք»-ը քաղել է «Խամսայի մելիքություններից», միայն ավելացնելով, թե եկեղեցական իրեղենների հետ, Մելիք-Մեջլումի միջնորդությամբ Աղա-Մահմադ-շահը վերադարձրից նաև յուր վեր առած 12.000 հայ և վրացի գերիները։ Այդ հավելվածքը «Գաղտնիք»-ի ամենախոշոր հակասություններից մեկն է, որովհետև նույն գրքի եր. 229 ասված է, որ շահը նրանց տարավ յուր հետ և բնակեցրեց Թավրիզ քաղաքում, նրա շրջակա գյուղերում և Թեհրանում։ Այդ ես ցույց տվի նախորդ գլխում։

2 Ես առիթ կունենամ ուրիշ տեղերում ևս ցույց տալու, որ «Գաղտնիք»-ի պատմական մասը ամբողջապես առնված է «Խամսայի մելիքություններից»։ Եվ ինչպես այդ քաղվածքի մեջ երևում է, ինչ փոփոխություններ, որ արել է «Գաղտնիք»-ի հեղինակը, դրանք կամ խոշոր սխալներ են, կամ փաստերի աղավաղումներ։ Այդ և հետագա ծանոթության օրինակները բավական կլինեն իմ կարծիքը ապացուցանելու համար։ Աղա-Մամադ-խանի օրերում առյուծադրոշմ չքանշանը դեռ գործածական չէր և նա մինչև անգամ իրավունք չուներ տալու, որովհետև այդ միջոցին նա դեռ հասարակ խան էր, ճանաչված չէր իբրև թագավոր։ Առյուծադրոշմ շքանշանը գործածական դարձավ նրա հաջորդների՝ Ֆաթալի-շահի, Մամադ-շահի և մանավանդ պարսից ներկա շահի օրերում։

3 «Չխտանոցը» «Գաղտնիք»-ի ծանոթության մեջ բացատրված է «վրացոց թագավորների կտրած միաձույլ 40 կոպեկանոց դրամ։ Վրաց թագավորների և ոչ մեկի ժամանակ այդ դրամը չկար։ Երբ վրաց վերջին թագավորը՝ Գիորգին, մահվան անկողնի մեջն էր, այդ միջոցին նրա Ս. Պետերբուրգ ուղարկած պատգամավորները, ի թիվս այլ պայմանների, առաջարկում էին ռուսաց արքունիքին և դրամ հատանելու իրավունք ունենալ։ Այդ առաջարկությունը չիրագործվեցավ, որովհետև Գիորգին շուտով վախճանվեցավ և նրա հետ վրաց թագավորությունը

յափունջիները տարածեցին գետնի վրա, և պարսից զորքերը որքան խաչեր, եկեղեցական անոթներ և զգեստներ կողոպտել էին Թիֆլիսի եկեղեցիներից, բոլորը թափեցին նրանց յափունջիների վրա։ Մելիք-Մեջլումը այդ բոլորը ետ ուղարկեց Թիֆլիս»։ («Խամսայի մելիքությունները», եր. 186)։

«Շահը շնորհեց Մելիք-Մեջլումին այդ երեք արտոնությունները. 1. երբ և կամենա, կարող է անարգել կերպով ելմուտ գործել իր մոտ. 2. ինչ որ խնդրելու լինի, նրա կամքը կկատարվի, կի... նույն չափով և Ջավադ խանին» («Գաղտնիք», եր. 171)։

«Բայց առաջինն (Մելիք-Մեջլումն) չընդունեց (դրամները), բոլոր Ճըռերի[1], Շուշու Իբրահիմ խանի և նրա կուսակիցների ջնջումը գերադաս համարելով, քան թե այդ դրամը, միայն ընդունեց շքանշանը, պատճառելով, թե ինքն բավական կլիներ միայն Ճըռերի ջնջելովն և այն՝ Շահն ինքն անձամբ (այսինքն, որ շահն անձամբ մասնակցեր Ճըռերի ջնջման գործին)։ («Գաղտնիք», եր. 172)։

---

վերջացավ։ («История войны и владычества русских на Кавказе», Н. Дубровина, т. III, 335—351).

Հիշյալ դրամը թեև վրաց տառեր է կրում, բայց ռուսաց փող է և Թիֆլիսում հատանել սկսեցին 1805 թվին մինչև 1837 թվականը, այսինքն՝ սկսյալ այն ժամանակից, երբ վրաց թագավորությունը բոլորովին վերջացած էր և Վրաստանը միացած էր Ռուսաստանի հետ։ Իսկ Աղա-Մամադ-շահի արշավանքը և նրա՝ Թիֆլիսը ավերակ դարձնելը տեղի ունեցավ ոչ թե Գիորգիի օրերում, այլ նրա նախորդ Հերակլի օրերում, երբ այդ դրամները ամենևին գոյություն չունեին։ Ուրեմն, որտեղի՞ց լցրեց շահը յուր ջորիների բեռները հիշյալ դրամներով... Ավելորդ չեմ համարում հիշել և այն, որ վրաց վերջին թագավորների ժամանակ, Թիֆլիսում եղած, դրամահատության տունը, որ գտնվում էր իշխան Բեհբուդյանների ձեռքում,—դա պարսից հիմնարկություն էր և պարսից դրամներ էին կտրում, որովհետև Վրաստանը իբրև պարսկական մի ավատական նահանգ իրավունք չուներ յուր սեփական դրոշմով դրամ հատանելու։ Այդ պարսից դրամները և այսօր կարելի է տեսնել Թիֆլիսի հնավաճառների կամ սառաֆների մոտ։

1 «Ճըռ» բառը, որ խիստ հաճախ գործ է ածվում «Գաղտնիք»-ի մեջ և ամեն րոպե անտանելի կերպով ականջ է ծակում, Մակար վարդապետը յուր ծանոթության մեջ թարգմանում է՝ «վայրենի, անպատուաստ պտղատու ծառ», իսկ փոխաբերական մտքով «կեղծ, շինծու, անհարազատ»։ Բայց «ճըռ» կամ ավելի ճիշտ ուղղագրությամբ չըռ, թուրքերեն բառ է չըռմաք բայի արմատից կազմված և նշանակում է ճեղքված կամ ճերծված։ Այսպես կոչում էին Ղարաբաղի այն մելիքներին, որ բաժանված էին հարազատ մելիքների միաբանությունից և միացած էին նրանց թշնամի թուրք խաների հետ, որոնք բռնությամբ տիրապետել էին Շուշին և Ղարաբաղի մի մասը։

3. արքունի գանձարանը նրա տրամադրության ներքո կլինի» («Խամսայի մելիքությունները», եր. 186)։

«Բայց Մելիք-Մեջլումը այն աստիճանի հպարտ և անշահասեր մարդ էր, որ շահից ուրիշ ոչինչ չպահանջեց, միայն Թիֆլիսը ավերակ դարձնելուց հետո խնդրեց նրա օգնությունը Շուշի բերդը նույնպես կործանել, Իբրահիմ խանին ոչնչացնել և ավելի հաստատություն տալ Ղարաբաղի մելիքների իշխանությանը»։ («Խամսայի մելիքությունները», եր. 186)։

«Շահը հոժարեցավ ուղղակի գնալ Ղարաբաղ՝ Շուշին գրավելու և Մելիք-Մեջլումի ցանկությունները կատարելու համար։ Բայց դժբախտաբար այդ միջոցներում Ղանդահարի և Հերաթի կողմերում խռովություններ ծագեցան և նա ստիպվեցավ շտապել Պարսկաստան ապստամբությունները զսպելու համար» («Խամսայի մել.», եր. 187)։

«Նա (շահն) հայտնեց Ջավադ խանին և Մելիք-Մեջլումին ըսպասել, խոստանալով, որ շուտով կվերադառնա»։ (Խամս. մել.», եր. 187)։ «Ջավադ խանը Մելիք Մեջլումի հետ գնացին Գանձակ, իսկ շահը ուրիշ ճանապարհով դիմեց դեպի Պարսկաստան»։ («Խամս. մել.», եր. 187)։

«Եվ մինչդեռ հայ զորականաց սրտերը լցված ուրախությամբ և շահի տված խոստմամբ անձապարում էին Շուշի—համկարծ շահն մի նամակ ըստացավ Պարսկաստանից, որն հայտնում էր շահին, թե զորավոր ապստամբություններ երեվան ելած էին Ղանդահարի և Հերաթի կողմերում։ Հարկ էր փութալ ի Պարսկաստան»։ («Գաղտնիք», եր. 170)։

«Շահն հայտնեց Մելիքին (Մելիք-Մեջլումին), որ ինքն ստիպված էր փութալ ի Պարսկաստան... և խոստացավ առաջիկա գարնան կրկին գալ, գրավել Շուշին և կատարել յուր խոստումները»։ («Գաղտնիք», եր. 171)։

«Շահն շնորհակալությամբ հանդերձ հրաժարական ողջույն տալով Մելիքին (Մելիք-Մեջլումին) և Ջավադ խանին հեռացավ Գանձակից»։ («Գաղտնիք», եր. 172)։

Վերևում գրած մի շարք զուգահեռական համեմատություններից պարզ երևում է, որ կամ «Խամսայի մելիքությունների» հեղինակը—ես—գողացել է «Պաղտնիք»-ից կամ «Պաղտնիք»-ի հեղինակը՝ Աբրահամ Բեկնազարյանը, գողացել է «Խամսայի մելիքություններից»։

Ես «Պաղտնիք»-ից գողանալ չէի կարող, որովհետև երբ Աբրահամ Բեկնազարյանը գրում էր հիշյալ տողերը (1795 թ.), ոչ թե ես ծնված չէի, այլ իմ հայրն անգամ ծնված չէր։ Բացի դրանից, «Խամսայի մելիքությունները» լույս է տեսել 1882 թվին, իսկ «Պաղտնիք»-ը այս տարի—1886 թվին։ Առաջինը երկրորդից օգուտ քաղել չէր կարող։

Բայց պետք է խոստովանել, որ Աբրահամ Բեկնազարյանը նույնպես չէր կարող օգուտ քաղել «Խամսայի մելիքություններից», որովհետև նա մեռել է այդ գրքի լույս տեսնելուց 58 տարի առաջ—1828 թվին։

Ուրեմն ո՞վ է գողը...

Գողն ինքն իրան կգտնվի... բայց ես ավելորդ չեմ համարում հիշել մի զրույց։ Մի մարդից փողեր գողացան, նա ծիծաղելով ասաց.—Թո՛ղ տանե, շատ խեր չի տեսնի, նրանց միջում մեկը ղալբ (կեղծ) էր...

Նույնը կրկնում եմ և ես։ «Խամսայի մելիքություններից» առնված քաղվածքների մեջ մի խոշոր պատմական սխալ կա և այդ սխալը նույնությամբ մտել է «Պաղտնիք»-ի մեջ։ Այն կտորը, թե Աղա-Մամադ-շահը Թողեց Շուշի բերդը գրավելու մտադրությունը և շտապեց Պարսկաստան՝ Ղանդահարի և Հերաթի ապըստամբությունները զսպելու համար,—դա բոլորովին սխալ է։ Այսպիսի ապստամբություններ ոչ տեղի են ունեցել, և ոչ էլ Աղա-Մամադ-շահը գնացել է նրանց զսպելու։

Թե ի՞նչն է սխալեցրել ինձ, այդ ես գիտեմ, և իմ սխալը ինքս ուղղում եմ։

Բայց ինչ որ ներելի կարող է լինել ինձ, որ գրել եմ «Խամսայի մելիքությունները» հիշյալ անցքից 87 տարի հետո,—այն չէ կարող ներելի լինել Աբրահամ Բեկնազարյանին, որ ոչ միայն գրում է հիշյալ երևակայական արշավանքի պատմությունը, այլ ինքը, Աղա-Մամադ-շահից զորապետ կարգվելով, 10.000 սարվազով գնում է Ավղանիստան Ղանդահարի և Հերաթի ապստամբու-

թյունները նվաճում է, և տեղային խաներին կոտորում է, նրանց որդիներին հաջորդ է կարգում և այսպիսով, խաղաղացնում է մի ամբողջ երկիր (եր. 221—222)։

(Հիշյալ արշավանքի մասին «Գաղտնիք»-ից առած վկայությունները դրեցինք այս գլխի սկզբում, նորից կրկնել ավելորդ ենք համարում)։

Բայց ինչո՞վ բացատրել այդ հանելուկը։

Ահա ինչով. Մակար վարդապետը ցանկացել է յուր ստեղծած պատմագիրներին՝ հայր և որդի Բեկնազարյաններին, ուղարկել Պարսկաստան, որ նրանք աղբյուրի հենց մաքուր ակնից քաղեն բոլոր տեղեկությունները և արձանագրեն «Գաղտնիք»-ի մեջ։ Այդ նպատակով նա որդի Բեկնազարյանին մտցրել է Աղա-Մամադ-շահի պալատը։ Այնտեղ նա պարսկերեն է սովորում, շահի գաղտնի նամակները, հրովարտակները, շրջաբերականներն է ընդօրինակում և, միևնույն ժամանակ, նրանց օրինակները մտցնում է «Գաղտնիք»-ի մեջ։ (Այդ տեսանք Գ-րդ գլխում)։ Մնում է հայր Բեկնազարյանը։ Մակար վարդապետը մտածել է դրա համար ևս մի նպատակահարմար պաշտոն գտնել։ Եվ կարգել է նրան զորապետ Աղա-Մամադ-շահի մոտ, որպեսզի նրա բոլոր զինվորական գործողությունների գաղտնիքները իմանա և նույնպես մտցնե «Գաղտնիք»-ի մեջ։ Բայց նրան պետք է մի որևէ գործ տալ, որի մեջ հայտնվի, նշանակություն ստանա։ Մակար վարդապետը «Խամսայի մելիքությունների» մեջ կարդացել է, թե մի ինչ-որ Հերաթի և Ղանդահարի ապստամբություններ են եղել։ Եվ այդ դուստ ոսկու տեղ ընդունելով, իսկույն օգուտ է քաղել և Աբրահամ Բեկնազարյանին ուղարկել է Ավղանիստան, որ նույն ապստամբությունները զսպող հերոսը դառնա։

Այժմ, կարծեմ պարզ է, թե ո՞վ է գողը…

Եթե ուրիշ ոչինչ չլիներ, Ավղանիստանի երևակայական արշավանքն միայն բավական էր ցույց տալու «Գաղտնիք»-ի կեղծությունը։

Աղա-Մամադ-շահը այնքան զբաղված էր բուն Պարսկաստանի ներքին գործերով, և դեռևս այնքան շատ գործեր ուներ տեղային խաների հետ, մինչև կարողանար բոլորին նվաճել և ի մի ձուլել ամբողջ Պարսկաստանը, որ նա Պարսկաստանի սահմաններ-

րից դուրս աշխարհակալություններ անելու ոչ ժամանակ ուներ և ոչ ցանկություն։

Աղա-Մամադ-շահի օրերում Ավղանիստանը նույնքան և գուցե ավելի զորեղ մի իշխանություն էր, որքան Պարսկաստանը և ամենևին կախում չուներ վերջինից, որ Աղա-Մամադ-շահը ստիպված լիներ կամ ինքը գնալ, կամ Աբրահամ Բեկնազարյանին ուղարկել՝ տեղային ապստամբությունները զսպելու։

Դեռ շատ ժամանակ չէր անցել այն օրից (ընդամենը 68 տարի), որ սեֆևիների գահի վրա, Սպահանում, նստում էին ավղանները։ Նադիր-շահի հզոր ձեռքը միայն կարողացավ մաքրել Պարսկաստանը ավղաններից։ Այլևս ի՞նչ հարկ կար, որ Աղա-Մամադ-շահը իր զգույշ ձեռքը մխեր օձերի բույնի մեջ։

Բայց մի անցք շտապեցրեց Աղա-Մամադ-շահին Թիֆլիսի ավերումից հետո թողնել Շուշի բերդը և շտապել Պարսկաստան։

Այդ անցքը ոչ թե Ղանդահարի և Հերաթի ապստամբություններն էին, այլ Բուխարայի թաթարների հարձակումները Աղա-Մամադ-շահի նոր հիմնած պետության սահմանների վրա։ Եթե Մակար վարդապետը գիտենար այդ, տարակույս չկա, որ նա Աբրահամ Բեկնազարյանին այլևս Ավղանիստան չէր ուղարկի, այլ Բուխարա կուղարկեր թաթարներին զսպելու համար։

Թաթարներին պատժելու նպատակով սկսված արշավանքը՝ Աղա-Մամադ-շահը սկզբից Խորասանի ուխտագնացության պատրվակով։ Այդ պատրվակի ներքո թաքնված էր մի այլ նպատակ ևս, այն է՝ ձեռք բերել Նադիր-շահի գանձերը, որ դեռևս մնացել էին նրա ժառանգների մոտ։

Այդ էր պատճառը, որ Թիֆլիսից Պարսկաստան վերադառնալուց հետո, նա անմիջապես դիմեց դեպի Խորասան։

Դեռ կենդանի էր կուրացյալ Շահ-Ռուխը՝ Նադիր-շահի թոռը, երբ Աղա-Մամադ-շահը հասավ Խորասանի սրբազան քաղաքը, Մաշհադ, դժբախտ թագավորը դիմավորեց նրան և, նրա ձեռքից բռնելով, տարավ իմամի սրբավայրը։ Այստեղ Աղա-Մամադ-շահը յուր աղոթքը կատարելուց հետո, սկսեց Շահ-Ռուխից պահանջել Նադիր-շահի գանձերը։ Ծերունի թագավորի բոլոր աղաչանքներն ապարդյուն եղան՝ ամոքելու Աղա-Մամադ-շահի ագահությունը։ Նա սկսեց սարսափելի չարչարանքներով տանջել նրան։ Յուր անգթությունը այն աստիճանի հասցրեց, որ գլխից Շահ-Ռուխի գըլ-

խին մի պսակաձև շրջանակ և նրա մեջը հալած արճիճ լցնել տվեց։ Այսպիսով ստացավ նա այն խոշոր հակինթը[1], որ մի ժամանակ զարդարում էր Ովրանգզեբայի թագի ճակատը, և որը բերել էր Նադիր-շահը Հնդկաստանից։ Յուր կրած տանջանքներից մեռավ Շահ-Ռուխը և նրա հետ հանգավ ավշարների թագավորության վերջին շառավիղը[2]։

Խորասանից Աղա-Մամադ-շահը պատրաստվում էր գնալ Բուխարա թաթարներին պատժելու, երբ լսեց, որ ռուսները նոր զորքեր են ուղարկել Անդրկովկաս։ Այնտեղից ուղղակի դիմեց Շուշի, առանց պատերազմի գրավեց, և այնտեղ սպանվեցավ յուր երկու սպասավորներից (1797 թ.)։

Եվ այսպես Աբրահամ Բեկնազարյանի գործունեությունը Պարսկաստանում սկսվում է մի առասպելից, այն է՝ Ավղանիստանի արշավանքից, որ բնավ պատմական հիմք չունի։ Աղա-Մամադ-շահի օրերում մի այսպիսի արշավանք տեղի չի ունեցել։

Ավղանիստանի արշավանքը տեղի է ունեցել ոչ թե Աղա-Մամադ-շահի օրերում, որ նրա հերոսը երևակայական Աբրահամ Բեկնազարյանը լիներ, այլ նրա հաջորդ Ֆաթալի-շահի օրերում։ Այդ ժամանակ Ավղանիստանի թագավոր Զաման-շահը յուր ասպատակություններով սարսափի մեջ էր դրել ամբողջ Հնդկաստանը։ Հնդկական թագավորները, մինը մյուսից հետո, ընկնում էին նրա զորության առջև։ Եվ որովհետև Զաման-շահի տիրապետությունները սաստիկ վնասում էին անգլիացիների շահերին Հնդկաստանում, այդ պատճառով անգլիական քաղաքագիտությունը հաջողեցրեց Թեհրանում Ֆաթալի-շահին յուր զորքերով շարժել դեպի Ավղանիստանի սահմանները, որպեսզի Զաման-շահը ստիպված լինի թողնել Հնդկաստանը և վերադառնալ՝ յուր երկիրը պաշտպանելու պարսիկներից։ Այդ արշավանքը կատարելու համար, մի քանի տարի շարունակ, Ֆաթալի-շահը ստանում էր անգլիացիներից օրեկան 1000 թուման ոսկի[3]։

Ո՞ւր մնաց Աբրահամ Բեկնազարյանը, որ մինչև անգամ չգիտե, որ յուր 10.000 սարվազով նվաճած Ավղանիստանի տիրա-

1 Այդ նշանավոր հակինթը մինչև այսօր պահվում է պարսից արքունիքում և, որքան հիշում եմ կոչվում է «դուրրի-դարիա»—դոհարի ծով։

2 «Պատմություն Պարսից», Մ. Դ. Թաղիադեանցի, Ա. հատ., եր. 214—215։

3 Նույն տեղում, եր. 222։

սպանողները հասարակ խաներ չէին, այլ սարսափելի Ջաման-շահն էր։

Ֆաթալի-շահի օրերում Բեկնազարյանները դարձյալ շարունակում են մնալ պարսից ծառայության մեջ, բայց թե ինչ է նրանց պաշտոնը,— այդ մասին որոշ հիշատակություններ չկան «Գաղտնիք»-ի մեջ, միայն մի տեղում կարդում ենք հետևյալ մթին խոսքերը.

> «Ֆաթալի-շահը յուր նախորդի պես սիրեց և զիս (որդի Բեկնազարյանին) և հայրս (Հայր Բեկնազարյանին)։ Վերջինս (Հայր Բեկնազարյանը), թեև բազմիցս թախանձանոք ազատության (") հրաման խնդրեց առաջինից (Ֆաթալի-խանից) հայրենիք վերադառնալու, սակայն անկարելի եղավ զայն ստանալ, քանզի Աբաս Միրզան (թագաժառանգը) միշտ առարկում էր պատճառաբանելով. «Ես շատ հարկավորություններ ունեմ քո (Հայր Բեկնազարյանի) ներկայության իմ՝ Ղարաբաղում գործ դնելու նպատակներիս համար, իսկ շահական դիվանն՝ քո որդի Ալլահվերդու (Ապրես Բեկնազարյանի) ներկայության, գաղտնի նամակներ գրելու և խորհրդապահության համար» (եր. 245)։

«Գաղտնիք»-ի գլխավոր հեղինակը՝ Ապրես Բեկնազարյանը, արդեն սկսեց մահմեդական անունով Ալլահվերդի կոչվել։ Այդ անունը պետք է մտքում պահել, որովհետև դրա մասին կխոսվի հետո։

Իսկ վերևի մթին տողերը պարզելու համար, ավելորդ չէր լինի հիշեցնել ընթերցողին իմ հետազոտության Գ-րդ գլխի մի քանի տեղերը։

Մենք տեսանք, որ Բեկնազարյաններին բերեց Պարսկաստան Աղա-Մամադ-շահը։ Մենք տեսանք, որ որդի Բեկնազարյանի պարսկերեն սովորելը հիշյալ շահի պալատում տևեց մի տարի միայն։ Իսկ նրա ֆրանսերեն սովորելը բանտարկյալ հայ-կաթոլիկ վարդապետից՝ նույնքան ժամանակ։ Մենք ապացուցեցինք և այն, որ այդ բոլորը առակաբանություն է, որովհետև Ապրես Բեկնազարյանը ոչ շահի պալատումն է եղել և ոչ պարսկերեն կամ ֆրանսերեն է սովորել։

Սպանվում է Աղա-Մամադ-շահը և գահակալում է Ֆաթալի-շահը։

Այժմ Ֆաթալի-շահի դիվանը կարոտություն ունի՝ մի տարվա մեջ պարսկերեն և ֆրանսերեն սովորած մի քսանամյա պատանու—Ապրես Բեկնազարյանին... (Մակար վարդապետը միշտ մոռանում է նրա հասակը)։ Շահական դիվանը հարկավորություն ունի նրա ներկայությանը՝ «գաղտնի նամակներ գրելու և խորհրդապահության համար»... Եվ այդ խոսքերը ո՞վ է ասում,—Աբաս Միրզան՝ Պարսկաստանի երևելի թագաժառանգը, որ յուր խորին քաղաքագիտությամբ մատների վրա էր խաղացնում յուր ժամանակի թե ռուսաց և թե եվրոպացվոց ներկայացուցիչներին, և որի դռանը այդ ժամանակ վխտում էին ոչ միայն երկրի ամենատաղանդավոր պարսիկ դպիրները, այլ շատ նշանավոր հայ և եվրոպացի ծառայողներ։

Բայց ի՞նչն է ստիպել Մակար վարդապետին այս տեսակ երեխայական միամտությամբ՝ յուր քսանամյա Ապրես Բեկնազարյանին մտցնել «շահական դիվանի» մեջ և պարսից թագավորի բոլոր գաղտնիքները նրա ձեռքը տալ,—այդ հարցին կպատասխանի ինքը Ապրես Բեկնազարյանը։

Բերելով մի շարք նամակներ, որ Ֆաթալի-շահը ստացել է զանազան տեղերից, նա ավելացնում է.

> «Ցանկալի էր մեզ բոլոր նամակները նույնությամբ արտագրել այստեղ («Գաղտնիք»-ի մեջ), բայց այդ բոլորովին անկարելի էր, վասնզի հարկ էր հատորներ կազմել մեծաթիվ քանակությամբ։ Դիվանական թղթոց կարգադրությունն, գաղտնի նամակաց պատասխանները, ներքին շրջաբերականների գրությունները և արտաքին հարաբերական թղթակցությունները հափշտակում էին մեր ժամանակի ամենամեծ մասը։ Ահա պատճառները, յորոց ստիպյալ մենք համառոտում ենք հաճախ թղթակցությունները, բայց ոչ սակավ։ Թողնում ենք հիշեցնել այն կասկածելի երկյուղը, որ պաշարում էր զմեզ այդպիսի գաղտնի նամակները (որքա՞ն գործ է ածվում գաղտնի բառը «Գաղտնիք»-ի մեջ), մանավանդ պարսկերենը արտագրելու կամ համառոտագրելու ժամանակ («Գաղտնիք»-ի մեջ մտցնելու համար)։ Եթե հայտնվեր մեր այդ գաղտնի ձեռնարկությունն Պարսից կառավարության՝ մահվան վտանգն պատրաստ էր մեզ համար նույն րոպեին» (եր. 275)։

Կարդալով այս տողերը, մարդ չգիտե՝ ծիծաղե՞ թե զարմանա։ Մի՞թե Ֆաթալի-շահը վեզիրներ-վեքիլներ և այլ պաշտոնակատարներ չէ ունեցել, որ յուր կառավարության բոլոր թե ներքին և թե արտաքին գործերը հանձնել էր մի որևէ Ապրես Բեկնազարյանի ձեռքը։

Ֆաթալի-շահի օրերից շատ ժամանակ չէ անցել. եթե մի այսպիսի անձնավորություն գոյություն ունենար, հարկավ չէր մոռացվիլ ոչ ժողովրդի հիշողությունից և ոչ պատմությունից։ Բավական է կարդալ «Խամսայի մելիքությունների» 347—357 երեսները, այնտեղ կարելի է գտնել Ֆաթալի-շահի և նրա հաջորդների օրերում, Պարսկաստանում հայտնի եղած, բոլոր հայազգի պաշտոնականների անունները, որ երեսունից անցնում է։ Այդ անունների ցանկում ոչ Ապրես Բեկնազարյանի և ոչ նրա հոր անունը կա։

Եվ, վերջապես, ինչպե՞ս եղավ, որ այդ մի զույգ հայր և որդի Բեկնազարյանները, որոնք պարսից երեք թագավորների՝ Աղա-Մամադ-շահի, Ֆաթալի-շահի, Մամադ-շահի և մի թագաժառանգի՝ Աբաս-Միրզայի մոտ այնքան մեծամեծ պաշտոններ էին վարում, և այդ թագավորների ամենասիրելիներն էին, բայց ոչ մի աստիճան և ոչ մի տիտղոս չստացան։ Հայր Բեկնազարյանը ծառայում է 33 տարի (1795—1828), իսկ որդի Բեկնազարյանը 43 տարի (1795—1838), բայց երկուսից և ոչ մեկը որևէ աստիճան չէ ստանում։ Պարսից թագավորները տիտղոսներ և աստիճաններ շնորհելու մեջ ժլատ չեն, այլ ընդհակառակն, շատ առատաձեռն են։ Հիշյալ թագավորների օրերում հայերը ստացան խիստ փայլուն և խիստ փառավոր տիտղոսներ, ստացան և բարձր աստիճաններ։ Ես կհիշեմ մի քանիսի անունները միայն։

**Մանուչար-խանը** ստացավ **«մոհրամեդ դովլե»** տիտղոսը, որ նշանակում է նեցուկ կամ սյուն պետության։ Դա Աղա-Մամադ-շահի Թիֆլիսից տարած գերիներից էր, Ենիկոլոփյանների տոհմից։ Պարսկաստանում այն աստիճանի բարձրացավ, որ Ֆաթալի-շահի օրերում վարում էր Կասպից ծովի հարավային նահանգների՝ Գիլանի, Մազանդարանի փոխարքայության պաշտոնը։ Իսկ Մամադ-շահի օրերում Սպահանի և ամբողջ պարսկական Արաբիստանի փոխարքան դարձավ։ Ռուսաց թագավորը ուղարկեց նրան մի թանկագին, ականակուռ դաշույն։ Եվ մինչդեռ ռուսաց Պարս-

կաստանի լիազոր դեսպանը՝ կոմս Մեդդեմը, պատրաստվում էր այդ ընծան մատուցանել, նա արդեն մեռած էր (1847 թ.)[1]։

Խոսրով խանը ստացավ «վալի» տիտղոսը, որ նշանակում է տիրապետող, իշխան, յուր չափազանց ուժեղության պատճառով, նա կոչվում էր և «շիր», որ նշանակում է առյուծ։ Դա նույնպես Աղա-Մամադ-շահի Թիֆլիսից տարած գերիներիցն էր, տեր Սամուելի որդին, Ղայթմազյանց տոհմից։ 1838 թվին կարգվեցավ փոխարքա Ֆարսիստանի և խաղաղացրեց Սպահանի խռովությունները, որ տեղի ունեցան Ֆաթալի-շահի վախճանվելուց հետո[2]։

Սուլեյման-խանը, նույնպես էնիկոլոփյանների տոհմից, ստացավ «սամր-դովլե» տիտղոսը, որ նշանակում է սուր պետության։ Դա մի նշանավոր զորավար էր, երկար ժամանակ վարեց Շիրազի, Բախտիարիայի, Լուրիստանի, Շուշթերի և Դասֆուլի փոխարքայության պաշտոնները[3]։

Այլևս չեմ հիշում Յուսուֆ խան «ըսփանդիար»-ին (մարզպան), որ Արաբստանի կուսակալն էր և Ջոհրաբ խան «խազնադար-շանրիար»-ին, որ Ֆաթալի-շահի փեսան և նրա պետական գանձարանի կառավարիչն էր։ Չեմ հիշում և մի քանի տասնյակ այլ հայերի անուններ, որ մեծամեծ պաշտոններ էին վարում և զանազան տիտղոսներ էին կրում,— բայց կհիշեմ մեկին, որ Ամիր դիվանխանա տիտղոսն էր կրում, որ նշանակում է՝ պետական դիվանի գլխավորը կամ պետը։ Դա էր Աղա-Բահրամ Ներքինին, որ մահմեդականացած հայ էր։ Ահա դա էր «շահական դիվանի» գլխավորը[4] և ոչ թե երևակայական Սարհս Բեկնազարյանը, որին Մակար վարդապետը զոռով մտցրել է շահի դիվանի մեջ, որպեսզի այնտեղից «Գաղտնիք»-ի համար գաղտնիքներ ժողովե...

Թե հայր և թե որդի Բեկնազարյանները այն աստիճան տգետ են Պարսկաստանի վերաբերությամբ և այն աստիճանի անծանոթ

---

1 «Խամսայի մելիքությունները», եր. 351, «Պատմություն Պարսից», Մ. Դ. Թաղիադեանցի, հատ. Ա, եր. 213, 214, 261, 278։ «Պատմություն Նոր Ջուղայի», հատ. Ա., եր. 437—444։

2 «Խամսայի մելիքությունները», եր. 351։ «Պատմություն Պարսից», Մ. Դ. Թաղիադեանցի, հատ. Ա, եր. 213—214։ «Պատմություն Նոր Ջուղայի», հատ. Ա; եր. 432—437։

3 «Խամսայի մելիքությունները», եր. 353։ «Պատմություն Նոր Ջուղայի», հատ. Ա, եր. 446։

4 «Խամսայի մելիքությունները», եր. 349։

են իրենց ժամանակի անցքերի և անձինքների հետ, որ իրանք իրանց մոռանում են, որ այդ մարդիկը Պարսկաստանը բնավ չեն տեսել։

Բեկնազարյանները հիշեցնում են այն հայտնի ստախոսին, որ հիացած պատմում է յուր բարեկամին, թե որպիսի զարմանալի մժղուկներ, փոքրիկ պողոճներ և թիթեռներ տեսավ մուզեոնում։ Իսկ երբ բարեկամը նրանից հարցրեց, դու տեսա՞ր այնտեղ փղին։ Նա պատասխանեց—«մի՞թե նա այնտեղ էր»։

Բեկնազարյանները նույնպես մժղուկներին տեսնում են Պարսկաստանում, իսկ այն հսկա հայ փղերին, որ իրանց հզոր ուսերի վրա էին տանում Պարսկաստանի կառավարության ծանրությունները,—դրանց չեն տեսնում։

Նրանք գիտեն, որ Աղա-Մամադ-շահի կանանոցում երկու վրացի աղախիններ կային, մեկի անունը Էլիզա էր, մյուսինը՝ Թամարա (եր. 230)։ Նրանք գիտեն, որ Աբաս Միրզան մի վրացի լոտես ուներ, անունը Սուլի էր, գիտեն, որ այդ Սուլին կրոնը փոխել էր, «Քեապա ուխտի էր գնացած և Քեալպալայի Հայտար էր կոչված» (եր. 247)[1]։ Նրանք գիտեն և այն, որ Ղարաբաղից Պարսկաստան փոխադրված հայ գերյաց մեջ երևելի եղան հադրութեցի Հովսեփ Ներսեսյանցը և Փառուխ Ամիրխանյանցը, որոնք Աբաս Միրզայի հոգատարությամբ ստացան լավ կրթություն և պարսկերեն ուսում և մտան Շահական դիվանատունն գրագրության պաշտոնով։ Սոքա հետզհետե այնպես կատարելագործեցին այդ մասնաճյուղը(՞), մինչև անգամ ստացան «Միրզա» տիտղոսը[2], որոնք

1 Այս տեսակ երևակայական անունները հեշտ է ստեղծել։ Բայց Բեկնազարյանները մի քանի տասնյակ տարիներ Պարսկաստանում ապրելով և պարսկական կրթություն ստանալով, դարձյալ չգիտեն, որ Քեաբա գնացող ուխտավորները «Քալբալայի» չեն կոչվում, որովհետև Քեաբան Մեքքայի սրբավայրն է, այնտեղ գնացող ուխտավորները կոչվում են «հաջի», իսկ «Քալբալայի» կոչվում են Բաղդադի ուխտավորները, որտեղ դրված են նահատակված իմամների շիրիմները։

2 Ամենահասարակ տեղեկությունների մեջ անգամ Բեկնազարյանները ցույց են տալիս իրանց խորին տգիտությունը։ Պարսից լեզվում «միրզա» բառը տիտղոս չէ, երբ նա անվան սկզբումն է դրվում, ասելով Միրզա-Ֆարուխ, հասկացվում է դրագիր Ֆարուխ. այսպես կոչվում են և ամենահասարակ դրագիրները։ Բայց «միրզա» բառը տիտղոս է դառնում, երբ անվան վերջումն է դրվում, օրինակ Աբաս Միրզա, որ նշանակում է Աբաս իշխան։ Պարսից բոլոր արքայազնները այդ

կոչվեցան Միրզա Յուսուֆ և Միրզա Ֆարուխ (եր. 391)։ Այդ բոլորը գիտեն Բեկնազարյանները, որովհետև ամեն մի ղարաբաղցի գիտե, թե ո՞վ է Միրզա Ֆարուխը, կամ ո՞վ է Միրզա Յուսուֆը, գիտե մինչև անգամ Մակար վարդապետը, բայց այն անձինքը, որ իսկապես փառավոր տիտղոսներ ստացան, նրանց մասին տեղեկություն չունի Մակար վարդապետը, և այդ պատճառով նրանց անունները չեն մտնում «Գաղտնիք»-ի մեջ։ Ինչ որ Մակար վարդապետը չգիտե, այն չգիտեն և «Գաղտնիք»-ի մի զույգ հեղինակները...

Դիմենք փաստերին։

Վերևում արդեն հիշեցինք թե Բեկնազարյանների օրերում ինչ նշանավոր հայազգիներ կային Պարսկաստանում, և ինչ բարձր պաշտոններ էին վարում։ Եթե իսկապես Բեկնազարյանները նույնպիսի բարձր պաշտոններ էին վարում պարսից շահերի դռանը, որպիսին իրանք ցույց են տալիս «Գաղտնիք»-ի մեջ, այդ դեպքում շատ տարօրինակ պետք է համարել, որ նրանք մյուս հայազգի ծառայողների հետ հարաբերություններ չունենային և նրանց մասին մի որևէ հիշատակություն չանեին իրանց պատմության մեջ։ Առիթներ շատ կային և այդ առիթները ես ցույց կտամ։

Ասլան Բեկնազարյանը յուր մի քանի ամիսների մեջ սովորած պարսկերենով դառնում է Ֆաթալի-շահի դիվանի ոչ միայն ներքին գործերի ատենադպիրը կամ քարտուղարը, այլև նրա «արտաքին հարաբերական թղթակցությունների» խորհրդականն և թարգմանն է դառնում (եր. 275)։ Դրա համար պետք էր գիտենալ եվրոպական լեզուներ։ Եվ որովհետև պարսից արտաքին հարաբերությունների մեջ ընդունված լեզուն ֆրանսերենն է, նա այդ լեզուն դարձյալ մի քանի ամիսներում սովորում է բանտարկյալ հայ-կաթոլիկ վարդապետից, հենց բանտի մեջ... (եր. 229)։

Բայց Ֆաթալի-շահի արքունիքում այդ պաշտոնը կատարում էր ոչ թե Ասլան Բեկնազարյանը, այլ մի ուրիշ նշանավոր հայազգի, մի կատարյալ եվրոպական կրթություն ստացած դիվանագետ, որ Դռան առաջին թարգմանը և միևնույն ժամանակ, թագավորի արտաքին գործերի խորհրդականն էր։ Դա էր Դավիթ խան Մելիք Շահնազարյան դե-Շայուրը, որը Նապոլեոն առաջինի օրերում

---

տիտղոսով են կոչվում, օրինակ Ջալալ միրզա, Ֆերուզ միրզա, Մալիք-Ղասում միրզա և այլն։

Ֆաթալի-շահի կողմից ուղարկվեցավ Փարիզ, իբրև լիազոր դեսպան[1]։

Դրան չեն ճանաչում Բենիազարյանները։

Վախճանվում է Ֆաթալի-շահը և գահակալում է Մամադ-շահը։ Այդ մասին հինգ տող միայն նվիրված է երկհատոր «Գաղտնիք»-ի մեջ, այն ևս լի սխալներով։

> «1834 թվին վախճանվեցավ Ֆաթալի շահն և հանդիսով թաղվեցավ շահերի հատուկ դամբարանում[2]։ Գահակալության կարգն թեև Մահմադ-Միրզային չէր պատկանում (ինչո՞ւ), սակայն հաջողեցավ գահն բարձրանալ, որ և կոչվեցավ Մամադ շահ» (եր. 390)։

Օրինավոր ժառանգը հենց Մամադ-Միրզան էր, այսինքն՝ թագաժառանգ Աբաս-Միրզայի որդին, նախ՝ այն պատճառով, որ հանգուցյալ Ֆաթալի-շահը յուր կտակի մեջ նրան էր նշանակել գահակալ, երկրորդ, որ Պարսկաստանի թե ռուսաց և թե անգլիացոց ներկայացուցիչները նրան էին ճանաչում իբրև օրինավոր ժառանգ և ամեն կերպով աշխատում էին, որ հանգուցյալ թագավորի կտակը կատարված լինի։

Բայց «Գաղտնիք»-ի հեղինակը չգիտե, թե այդ ժամանակ գահակալության առիթով ինչ խռովություններ ծագեցան Պարսկաստանում։ Եթե իրավ, նա մի որևէ պաշտոն էր վարում Ֆաթալի-շահի դռանը, այդ խռովությունները պետք է հիշատակեր նրան, մանավանդ այն պատճառով, որ հայ պաշտոնականները այդ միջոցին մեծ դեր կատարեցին։

Ֆաթալի-շահը, բազմացնելով յուր կանանց թիվը, բազմացրեց

---

1 «Պատմութիւն Պարսից», Մ. Դ. Թաղիադեանցի, հատ. Ա, եր. 223։ «Խամսայի մելիքությունները», եր. 349։

2 Ֆաթալի-շահը յուր մայրաքաղաքում, այն է՝ Թեհրանում չվախճանվեցավ, այլ վախճանվեցավ Սպահանում, ուր գնացել էր տեղային խռովությունները խաղաղացնելու։ Նրա վախճանվելուց հետո Պարսկաստանում այնպիսի խռովություններ ծագեցան, որ ոչ որ ժամանակ չուներ հանդիսավոր թաղման վրա մտածելու։ Հանգուցյալի մարմինը մի քանի օր թաքցրին, հետո տարան թաղեցին Ղում կոչված փոքրիկ քաղաքում, Մասումայի մզկիթում։ Մեսրոպ Թաղիադյանցը, որ այդ ժամանակ Սպահանումն էր գտնվում, յուր «Պատմութիւն Պարսից», Ա հատոր, եր. 232, 233, 235, ասում է. «Այլ ես զարմանամ արդարև զի ի բազմութենե անտի թռչակավոր գենդիտաց և մոլլայից Ասպահանա չգտավ, որ կարդայր պֆաթա («հոգվոց»), կամ ղդամբարականն ի վերա սորին (Ֆաթալի շահի)»։

միևնույն ժամանակ յուր որդիների թիվը։ Դեռ իր կենդանության ժամանակ նրանց Պարսկաստանի զանազան նահանգների փոխարքաներ կարգեց։ Երբ վախճանվեց, որդիներից յուրաքանչյուրը աշխատում էր թափուր մնացած գահի ժառանգը ինքը լինել։ Մի քանիսը իրանց կառավարության ներքո գտնվող նահանգներում իրանց թագավոր հրատարակեցին։ Միաժամանակ զանազան թագավորների անկարգություններից երկիրը ընկավ կատարյալ անիշխանության մեջ։ Ներքին կռիվները, երկպառակությունը հուզման մեջ էին պահել ամբողջ Պարսկաստանը։ Ամեն կողմում տիրում էր արյունահեղություն և ապստամբություն։ Ամեն մի ժառանգ աշխատում էր կաշառքով և խոստումներով իրան թագավոր ճանաչել տալ։ Թեհրանում Ալի-շահ-Միրզան բաց արեց հոր հարուստ գանձերը և մի օրվա մեջ երկու միլիոն թուման բաժանեց զանազան ազդեցություն ունեցող անձինքների, որ իրան թագավոր ճանաչեն։ Պարսից ավագանին Ռամազանի տոնին հագցրեց նըրան արքայական ծիրանին, նստացրեց գահը և թագավոր հրատարակեց[1]։

Այդ անկարգությունների միջոցին օրինավոր թագաժառանգը, Մամադ-Միրզան գտնվում էր Թավրիզում, որտեղ վարում էր Ատրպատականի փոխարքայության պաշտոնը։ Ռուսաց և անգլիացոց քաղաքականությունը սաստիկ մաքառման մեջ էր, յուրաքանչյուրը աշխատում էր, որ յուր միջամտությամբ և ջանքերով թագաժառանգին գահ բարձրացնե, որ նրան պարտավորացնե։

Բայց Թեհրանում արդեն գահի վրա բազմած էր Ալի-շահ-Միրզան։

Թագաժառանգին Թեհրան տանելու և ինքնակոչ թագավորին այնտեղից վանելու համար, ոչ բավական զինվորական ուժ կար և ոչ նյութական կարողություն։ Արքունի գանձարանը գրավել էր Ալի-շահ-Միրզան և իր կեղծ գիրքը պահպանելու համար շռայլաբար վատնում էր։

Պարսկաստանի ռուսաց դեսպանը՝ կոմս Սիմոնովիչը և անգլիացոց դեսպանը՝ սըր Ջոն Կամբել, այդ միջոցին Թավրիզումն էին գտնվում, թագաժառանգի մոտ։ Ռուսաց դեսպանը կամեցավ Անդրկովկասից 7000 զինվոր բերել տալ թագաժառանգին Թեհրան

---

1 «Պատմություն Պարսից», Մ. Դ. Թաղիադեանցի, հատ. Ա, եր. 231—257։

տանելու համար։ Բայց անգլիական ներկայացուցիչը խափանեց այդ ձեռնարկությունը։ Ատրպատականի պարսկական զորքերը շարժելու համար միջոցներ չկային։ Այդ ծախքը յուր վրա առեց անգլիական դեսպանը, այն պայմանով, որ պարսից զորքերի ընդհանուր հրամանատարը լինի մի անգլիացի զինվորական։ Առաջարկությունն ընդունվեցավ։ Պասմորը հրամանատար կարգվեցավ, իսկ սըր Հենրի Արթուր և Շի նշանակվեցան զորապետներ։ Այդ պատրաստությամբ թագաժառանգը Թավրիզից ճանապարհ ընկավ դեպի Թեհրան։ Նրա հետ էին ռուսաց և անգլիական դեսպանները՝ Դեռ երեք օրվա ճանապարհ մնում էր, մինչև կհասնեին պարսից աթոռանիստ քաղաքը, առաջինը, որ Թեհրանից յուր զորքերով դուրս եկավ թագաժառանգի առջև և ընդունեց նրան,—էր Հայաստանի խոսրով խան—«Շիրը»՝ առյուծը։ Հետո Ռաշտից յուր հեծելազորքով վրա հասավ «Մոհթամեդ-դովլան»՝ պետության նեցուկը։ Դա էր Հայազգի Մանուչար խանը, որ յուր անբավ հարստությունից 80.000 թուման դրեց թագաժառանգի առջև, որովհետև նա յուր սկզբնական ծախքերի համար անգամ բավական փող չուներ։

Թեև Ալի-շահ-Միրզան 20.000 զինվորներից բաղկացած մի զորախումբ ուղարկեց ընդդիմադրելու յուր ախոյանին, բայց նրանք, տեսնելով թագաժառանգի աճարկու զորությունը, առանց պատերազմի անձնատուր եղան։ Նոր թագավորը խոստացավ ներել յուր հակառակորդներին։ Այդ ժամանակ անձնատուր եղավ և Ալի-շահ-Միրզան։ Նա ցած իջավ գահից և այն թագը, որ բռնությամբ հափշտակել էր ցանկանում, յուր ձեռքով տարավ դրեց արքունի գանձարանը, և խոնարհեցավ ճակատագրի առջև[1]...

Այդ բոլորը կատարվեցավ, բայց «Դաղտնիք»-ի հեղինակը, որ անձամբ նոր թագավորի մոտ էր, ոչինչ չտեսավ, ոչինչ չիմացավ... Նա չտեսավ և այն, որ հիշյալ խռովությունների միջոցում, Հայազգի գեներալ Դավիթ խան Սաղինյանի քաջությունը և թընդանոթները միայն կարողացան պահպանել Սպահանը մի սոսկալի ապստամբությունից, որին ոչ միայն պիտի զոհ գնային տեղային հայերը, այլ Պարսկաստանը պիտի ենթարկվեր մի այլ թագավորի

---

1 «Պատմություն Պարսից», Մ. Դ. Թաղիադիանցի, Ա հատ., եր. 246—257։

բռնապետությանը՝ հանգուցյալ Ֆաթալի-շահի որդիներից, որին շատ դժվար պիտի լիներ հեռացնել յուր գահից[1]։

Ահա ինչու վերևում ես ասեցի, թե առիթներ շատ կային, որ Բեկնազարյանները խոսեին իրանց ժամանակում Պարսկաստանում գտնված նշանավոր հայազգի պաշտոնակալների մասին, որոնք այնքան մեծամեծ գործեր կատարեցին, որոնք ոչ սակավ նպաստեցին ազատելու տատանվող պետությունը յուր անհեղ կործանումից։ Եվ եթե Բեկնազարյանները լռում են, այդ արդեն պարզ ապացույց է, որ նրանք ոչ Պարսկաստանում են եղել և ոչ պարսից թագավորների մոտ որևէ պաշտոն են կատարել։ Որովհետև նրանք բոլորովին մանր և չնչին բաների վրա ուշադրություն են դարձնում, իսկ պատմական խոշոր երևույթները չեն տեսնում։ Մուզեոն այցելող ստախոսի նման՝ մժղուկներին տեսնում են, իսկ փղերին չեն նկատում...

Մի այլ փաստ, որի մեջ երևում է Բեկնազարյանների կատարյալ տգիտությունը Պարսկաստանի վերաբերությամբ։

Հայր Բեկնազարյանը հիվանդանում է։—Ո՞րտեղ։—Թավրիզում։ Զմռանանք այդ։ Որդի Բեկնազարյանը այդպես է գրում յուր հոր հիվանդության մասին.

> «Հայրս երկու ամսից ի վեր հիվանդ էր ընկողմնած անկողնում։ Հիվանդությունն ջերմի ամենասաստիկ տեսակներն էր, այսուամենայնիվ շահի բժիշկներն հուսադրում էին, որ կառողջանա։ Թե որքան խնամք տարավ բարեխնամ Ֆաթալի-շահն հորս առողջության համար, անկարելի է մի ըստ միոջէ նկարագրել այստեղ» (եր. 383)։

Հիշյալ ասացվածների մեջ նկատողության արժանի երկու կետ կա, առաջինը. արդյո՞ք կարող էին շահի բժիշկները այցելել հիվանդին, երկրորդ. կարո՞ղ էր բարեխնամ Ֆաթալի-շահը հոգ տանել հիվանդին։ Ոչ առաջինը կարելի էր և ոչ երկրորդը։ Ինչո՞ւ, որովհետև հիվանդը դրված էր Թավրիզում, իսկ թե շահը և թե նրա բժիշկները կենում էին Թեհրանում։

«Գաղտնիք»-ի մեջ միշտ շփոթում են Թավրիզը Թեհրանի հետ և պարսից շահերի մոտ ապրող Բեկնազարյանները չգիտեն, որ Թավրիզը պարսից աթոռանիստ քաղաք չէր, որ Ֆաթալի-շահը

---

1 «Պատմութիւն Պարսից», Մ. Դ. Թաղիադեանցի, հատ. Ա, եր. 232, 242, 265։

այնտեղ լիներ և խնամք տաներ հիվանդին։ Գոնե Բեկնազարյանները գիտենային թե ո՞վ էր շահի բժիշկը։

Թե Ֆաթալի-շահի օրերում և թե նրա հաջորդ Մամադ-շահի օրերում պարսից Դռան արքունի բժիշկը հայազգի Դավիթ խան Մկրտչյան Կարպեցին էր, ապա և նշանավոր Արեգական և Առյուծի[1]։ Գոնե հիշեին այդ նշանավոր մարդու անունը, որ բացի բժշկությունից պարսից Դռան ազդեցություն ունեցող անձինքներից մեկն էր։

Վերջապես, հայր Բեկնազարյանը վախճանվում է (1828 թ.), և նրա մարմինը հանդիսավոր կերպով թաղվում է Թավրիզի հայոց եկեղեցու գավթում։ Որդին այդպես է նկարագրում հոր թաղման հանդեսը.

> «Ես չեմ կարող նկարագրել այստեղ այն դառն վշտերը և անփարատելի ցավերը, զորս պատճառեց ինձ հորս մահը։ Բայց այսուամենայնիվ սակավ մխիթարություն զգացի հուղարկավորության հանդեսի փառավորությամբն, որը կարգադրած էր բարեխնամ Աբաս Միրզան (պարսից թագաժառանգը)։ Հուղարկավորության հանդեսն կատարվեցավ զինվորական կարգաւ, ուր ներկա էին շատ բարձր զինվորականք, ինքը՝ Աբաս-Միրզան և բոլոր հայ ժողովուրդը (հայ հոգևորականներ չկան)։ Հորս մարմինը ամփոփվեցավ Թավրիզի հայոց եկեղեցվո գավթում, կից Մելիք-Աբովյան մելիք ժառանգ Աստամ բեկի գերեզմանին» (եր. 390)։

Թողնենք այն, որ պարսից կրոնի տրամադրությամբ թաղումը նկատվում է իբրև մի հոգևոր խորհուրդ և նրա վրա զինվորական հանդեսներ չեն կատարվում։ Թողնենք և այն, որ Աբաս-Միրզան, պարսից թագաժառանգը, որ ավելի մեծ ազդեցություն ուներ, քան թե թագավորը, որքան և հայասեր լիներ, բայց դարձյալ իրան թույլ չէր տա Աբրահամ Բեկնազարյանի թաղման հանդեսին ներկա լինել։ Նկատենք միայն այն, թե ինչ մի տարաբախտ ժամանակ էր 1828 թվականը Պարսկաստանի համար, արդյոք Աբաս-Միրզան ժամանակ ունե՞ր Աբրահամ Բեկնազարյանի թաղման հանդեսներով զբաղվելու, երբ նույնիսկ Պարսկաստանը

1 «Խամսայի մելիքությունները», եր. 384։ «Պատմութիւն Պարսից», Մ. Դ. Թաղիադեանցի, հատ. Ա, եր. 250։

մահվան տագնապի մեջ էր, երբ նույնիսկ Պարսկաստանը մոտ էր յուր գերեզմանին...

Այդ այն ժամանակն էր, որ Աբաս-Միրզայի սիրելի զորքերը խորտակվել էին Պասկևիչի առջև, իսկ ռուսաց հաղթական զորքերը գրավել էին Ատրպատականի հայաբնակ գավառները։ Այդ այն ժամանակն էր, որ Թավրիզը, Աբաս-Միրզայի աթոռանիստ քաղաքը, նույնպես գրավված էր ռուսաց զորքերով։ Այդ այն ժամանակն էր, որ դուխուրղանյան և ապա Թուրքմենչայի դաշնագրություններից հետո, Աբաս-Միրզայի և Պասկևիչի մեջ, Պարսկաստանը կորցնում էր յուր անդրկովկասյան գավառները, Երասխը դառնում էր սահմանագիծ, և Պարսկաստանը ենթարկվում էր քսան միլիոն ղրուան պատերազմական տուգանքի։ Եվ վերջապես, այդ այն ժամանակն էր, որ Պարսկաստանը, կորցնելով յուր ամենաբարեբեր երկրները, կորցնում էր միևնույն ժամանակ յուր ժողովրդի մի արդյունավոր մասը՝ հայերին։ Ղազարոս Լազարյանը ամենայն փութաջանությամբ Պարսկաստանի հայ գաղթականների ստվար խումբերը անց էր կացնում գետի Երասխի մյուս կողմը, ռուսաց հողի վրա, և հայերի գաղթականությունը ավելի հոգսեր էր պատճառում Աբաս-Միրզային, քան թե պարսկական երկրների կորուստը։ Այդ խառնաշփոթ տագնապալի ժամանակներում, որ տևեց երկու տարի (1827—1828), ծիծաղելի և ավելի քան ծիծաղելի կլիներ մտածել, թե Ֆաթալի-շահը զբաղված էր մի որևէ Աբրահամ Բեկնազարյանի հիվանդությունով, իսկ Աբաս-Միրզան՝ նրա թաղման հանդեսով... քանի որ նրանք շա՜տ և շա՜տ ուրիշ վերքեր ունեին դարմանելու...

Ես Թավրիզը շատ անգամ եմ տեսել, իսկ վերջին ժամանակներում, երկու տարի շարունակ, տեղային հայոց դպրոցում վարժապետության պաշտոն էի վարում։ Եկեղեցին կից է դպրոցին։ Շատ անգամ հետաքրքրվել եմ այդ եկեղեցու գավթում դրած գերեզմաններով, որոնց թվում գտնվում է և իմ հարազատը... Այնտեղ ես գտա Մեսրոպ Թաղիադյանցի կնոջ գերեզմանը՝ յուր մարմարիոնի շիրիմով և անբախտ բանաստեղծի սրտառուչ տապանագրով։ Այնտեղ դրած են և շատ եվրոպացիների գերեզմաններ, զանազան ազգություններից, որոնք առանձին գերեզմանատուն չունենալով, եկեղեցու գավթումն են թաղված։ Բայց Աբրահամ Բեկ-

նազարյանի գերեզման չկա այնտեղ, եթե լիներ՝ մի այնպիսի նշանավոր անձի գերեզման չէր մոռացվի։

Համարյա միևնույն ժամանակներում, երբ Հայր և որդի Բեկնազարյանները Պարսկաստանումն էին, այնտեղ էր և Մեսրոպ Թաղիադյանցը, նախ Թավրիզում, հետո գնաց Սպահան, իսկ այնտեղից՝ Հնդկաստան։ Յուր «Պատմություն Պարսից» կոչված գրքի մեջ Թաղիադյանցը խոսում է պարսից վերջին թագավորների ծառայության մեջ հայտնի եղած նշանավոր հայազգի պաշտոնակալների մասին։ Ինչպե՞ս զանցառություն կտար Թաղիադյանցը Բեկնազարյանների նման երևելիներին, որոնք, ինչպես ցույց է տալիս «Գաղտնիք»-ը, Աղա-Մամադ-շահի, Ֆաթալի-շահի, Աբաս-Միրզայի և Մամադ-շահի՝ այդ երեք թագավորների և մի թագաժառանգի ոչ միայն սիրելիներն էին, այլ նրանց կառավարության ամենազաղտնի թելերը իրանց ձեռքում ունեին։

Ես ինքս, իբրև պարսկաստանցի, հետամուտ եմ եղել հավաքելու Պարսկաստանում հայտնված հայազգի պաշտոնակալների կենսագրությունները, բայց Բեկնազարյանների անվանը երբեք չեմ հանդիպել։ Եթե այդ անձինքը գոյություն ունենային, իրանց բարձըր դիրքով, անկարելի է, որ բոլորովին անհետ լինեին և ոչ մի հիշատակ չթողնեին Պարսկաստանում։

Նույնիսկ «Գաղտնիք»-ի մեջ Բեկնազարյանները պատած են մի տեսակ անթափանցիկ մռայլով, և պարզ չէ երևում, թե այդ մարդիկը ի՞նչ պաշտոն էին վարում պարսից թագավորների Դռանը։ Հայրը զինվորական է։ Բայց զինվորականները, ինչպես ամեն պետության մեջ, նույնպես և Պարսկաստանում, զանազան աստիճաններ ունեին։ Արդյոք Հայր Բեկնազարյանը սուլթան էր, յավար էր, սարհանգ էր, սարթիփ էր, միրփանջ էր, սըփահ-սալար էր,— ի՞նչ էր. դրանք են պարսից զինվորական աստիճանները։ Նա մինչև անգամ խանության տիտղոս չունի։ Բայց հանկարծ տեսնում ենք նրան 10.000 զինվորների հրամանատար... Որդի Բեկնազարյանը պարսից շահերի «գաղտնի նամակագիր է»։ Ի՞նչ է նշանակում գաղտնի նամակագիր։ Այս տեսակ պաշտոն չկա պարսից թագավորների արքունիքում։ Ինչպես ամեն թագավոր, նույնպես և պարսից թագավորը ունի զանազան կոչումներով և զանազան բաժանմունքներով վեզիրներ (մինիստրություններ) և յուրաքանչյուրի պարապմունքը որոշված է։ Իսկ Ապրես Բեկնազարյանը միշտ

*մնում է Սայրես, ոչ մի տիտղոս չէ ստանում, բայց միևնույն ժամանակ, կառավարում է պարսից թագավորների ամբողջ պետական բարձր դիվանը...*

*Ինչո՞ւ Մակար վարդապետը չէ կամեցել յուր սարքած Բեկնազարյաններին մի որևէ տիտղոս տալ։*

*Շատ պարզ է, թե ինչու։ Եթե, օրինակ, Մակար վարդապետը կոչեր Աբրահամ Բեկնազարյանին՝ «Իբրահիմ-խան-սարթիփ»—գեներալ-Աբրահամ-խան,—իսկ նրա որդի Սայրես Բեկնազարյանին՝ պարսկական անունով՝ «Սֆրիս-խան-ամիր-դիվանխանայի-ադամ», այսինքն՝ Սայրես խան-պետ—բարձր-դիվանի (որպես և համարում է նրան Մակար վարդապետը),—այդ դեպքում Բեկնազարյանները շատ կխոշորանային և աչքի կընկնեին, այնուհետև դժվար կլիներ նրանց թաքցնել։ Իսկ Մակար վարդապետը կամեցել է երկու նպատակի միանգամից հասնել, մի կողմից աշխատել է, Բեկնազարյաններին այնպիսի երևակայական պաշտոնների մեջ մտցնել, որ կարողանան «Գաղտնիք»-ի համար նյութեր մատակարարել, իսկ մյուս կողմից՝ աշխատել է նրանց պահել փոքրության մեջ, որ հետո հեշտ լիներ կորցնել նրանց, որ հետքերը չերևան, որպեսզի անկարելի լինի ստուգել, արդյոք այդպիսի անձնավորություններ գոյություն ունեցե՞լ են, թե ոչ։*

*Ջնջելով Մակար վարդապետի բոլոր նախազգուշություններին, «Գաղտնիք»-ի մեջ անգիտակցաբար սպրդած են այնպիսի հիշատակություններ, որոնք ոչ միայն երևան են հանում Բեկնազարյանների ով կամ ինչ պաշտոնի տեր մարդիկ լինելը, այլ, միևնույն ժամանակ առաջ են բերում անթիվ հակասություններ այն բոլոր փաստերի նկատմամբ, որոնց վրա հիմնված է «Գաղտնիք»-ը և որոնք այդ գրքի բովանդակությունն են կազմում։*

*Ժամանակ է լուծելու «Գաղտնիք»-ի գաղտնիքը և ցույց տալու այդ գրքի մի զույգ երևակայական հեղինակների ով լինելը։*

*Մակար վարդապետը ցանկացել է, որ «Գաղտնիք»-ի մի զույգ հեղինակները ընիկ ղարաբաղցիներ լինեն։ Նա որոնել է «Խամսայի մելիքությունների» 347—357 երեսներում նշանակված Պարսկաստանի հայազգի պաշտոնակալների ցուցակը։ Նրանց թվում գտել է երկու ղարաբաղցիների անուններ։ Դրանցից մեկը մի ներքինի է Ֆաթալի-շահի կանանոցում, Աղա-Իբրահիմ անունով, իսկ մյուսը Մամադ-շահի կնքապահն է, Ալլահվերդի-բեկ անունով։*

Երկուսն էլ քրիստոնեությունն ուրացած և մահմեդականություն ընդունած հայեր են։

Բայց Մակար վարդապետը, յուր վրա վստահ լինելով, թե նրանց կրոնափոխությունը կարող է ծածկել և յուր նպատակներին ծառայեցնել,—մեկին՝ Աղա-Իբրահիմ-ներքինիին, անվան մոռացության համար դարձրել է Աբրահամ Բեկնազարյան, իսկ մյուսին՝ Ալլահվերդի-բեկին՝ դարձրել է նրա որդի Ապրես Բեկնազարյան։ Մեկը «Գաղտնիք»-ի սկսողն է, իսկ մյուսը նրա շարունակողը և վերջացնողը։

Բերենք «Գաղտնիք»-ի վկայությունը։

«Մի օր հայրս ներկայացավ շահին,—գրում է որդի Բեկնազարյանը,—և հրաժեշտ տվավ զինվորական ծառայությունից, պատճառաբանելով թե ինքն արդեն ծերացած էր և պետք ուներ հանգստանալու։ Ֆաթալի-շահն նախ շնորհակալություն հայտնեց հորս, սորա պարսից մատուցած ծառայությանց համար, ապա նշանակեց ցմահ բավարար թոշակ և ապա սույն խոսքերով ներքինապետությունը հանձնեց հորս. «Հաճախ անկարգություններ են ծագում մեր անպիտան ներքինեաց և կանանց մեջ, վասն որոյ մենք ցանկանում ենք քեզ նման մի ազդու մարդ ներքինապետ ունենալ, որով կդադարին ամեն անկարգություն և խռովություն։ Մեր օրինաց նկատմամբ ներքինապետությունն մեծ և պատվավոր պաշտոն է, քանզի շահական ներքին պատվո հսկողությունն է և հավատարմապահությունն։ Նույնպես մեր օրենքն արգիլում է վստահել այդ պաշտոնն չներքինացած մարդու, բայց որովհետև ժամանակն արդեն զձեզ ներքինացրած է, մենք այնպես կհաշվենք, որ մենք նախ զձեզ ներքինացնել տված և ապա զձեզ հանձնած ենք այս պաշտոնը» (եր. 309)։

Այդ քաղվածքի մեջ երկու նկատողության արժանի կետ կա. առաջինը, որ Մակար վարդապետը թաքցնում է Աբրահամ Բեկնազարյանի մահմեդականություն ընդունելը և դրա վրայով լռությամբ է անցնում, երկրորդ, որ թաքցնում է նրա ներքինիանալն, այսինքն՝ խզվիլն։ Առանց այդ երկու պայմանների, որ օրենքի նշանակություն ունին պարսից պալատում, անկարելի է ներքինի կամ ներքինապետ լինել և շահի պալատը մտնել, որքան և ծեր լինէր մի մարդ։

Բայց Մակար վարդապետը ստիպում է Ֆաթալի-շահին, հակառակ յուր կրոնի և պարսից արքունիքի ավանդական օրենքների, մի խոշոր սուտ հրատարակել. «Մենք այնպես կհռչակենք, որ մենք նախ զձեզ ներքինացնել տված և ապա ձեզ հանձնած ենք այս պաշտոնը...»: Որքան և ցանկանար Ֆաթալի-շահը, չէր կարող այդ սուտը հռչակել, որովհետև ներքինիացնելու ծեսը գաղտնի չէ կատարվում, այլ կատարվում է հանդիսավոր կերպով բժիշկների և վկաների ներկայությամբ: Բայց Մակար վարդապետի միամտության ծիծաղելի կողմը այն է, թե ի՞նչ կարոտություն ուներ հզոր Ֆաթալի-շահը, որ իրան թույլ տար այդ տեսակ աչքակապություններ անել մի որևիցե Աբրահամ Բեկնազարյանի վերաբերությամբ, այն Ֆաթալի-շահը, որի հարուստ կանանոցը լցված էր ուրիշ ավելի նշանավոր հայազգի ներքինիներով և ներքինապետներով, որոնց ոչ միայն խզել էին տված, այլև մահմեդականացրել էին: Բավական է միայն ցույց տալ նախորդ գլխում հիշած Մանուչար խանին, որ նույնպես մի ժամանակ ներքինապետ էր Ֆաթալի-շահի կանանոցում, Խոսրով խանին, որ նույնպես ներքինապետ էր Ֆաթալի-շահի կանանոցում[1]:

Ներքինիներ և ներքինապետներ էին նաև Աղա-Յաղուբը, մյուս Աղա-Յաղուբ երևանցին և Աղա-Բահրամը[2]: Այդ դժբախտները ամենքը մահմեդականացրած հայեր էին...

Ֆաթալի-շահը ուներ երեք հարյուրի չափ կանայք և հազարից ավելի պալատական նաժիշտներ և հարճեր: Այդ բազմությունը կառավարելու համար, իհարկե պետք էր ներքինիների և ներքի-

---

1 Թե Մանուչար-խանը և թե Խոսրով-խանը, թեև պետական խոշոր պաշտոնակալներ էին, և երկուսն էլ ունեին անչափ հարստություն, բայց հայության համար կորած մարդիկ էին: Մանուչար-խանի հարստությունը զանազան պարսիկների կողոպուտն անցավ, և մեռնելուց հետո նրա մարմինը տարվեցավ Ղում քաղաքը, թաղվեցավ Մասումայի հռչակավոր մզկիթում, որտեղ դրած էր և Ֆաթալի-շահի շիրիմը: Հանգուցյալի քեռորդի իշխան Միրզա-Դավիթ-խան Մելիքյանը մի փառավոր մատուռ կանգնեցրեց նրա գերեզմանի վրա, և մշտական թոշակով կարգեց այնտեղ աղոթող մոլլաներ, որ միշտ Ղորան կարդային. («Պատմություն Նոր Ջուղայի», հատ. Ա, եր. 437—444), իսկ մյուսը՝ Խոսրով խանը, որ վախճանվեցավ 1857 թվին, յուր բոլոր հարստությունը և Գիլանում գնած գյուղերն ու կալվածները կտակեց պարսից ներկա շահին («Պատ. Նոր Ջուղայի», եր. 432—437):

2 «Խամսայի մելիքություններ», եր. 348—349:

*նապետների մի ստվար պաշտոնեություն և նրանցից շատերը հայեր էին, կամ Աղա-Մամադ-շահի տարած գերիներից և կամ այն գերիներից, որ տարվեցան ռուս-պարսկական վերջին պատերազմներում, Ֆաթալի-շահի ժամանակ։ Գերին պարսկական օրենքով անհատ չէ, այլ իր է։ Տերը կարող է նրա հետ ամեն կերպ վարվել։ Այդ էր պատճառը, որ շատերին ներքինիացրին։*

*Ֆաթալի-շահի Աղա-Իբրահիմ ներքինին՝ «Գաղտնիք»-ի Աբրահամ Բեկնազարյանը, Աղա-Մամադ-շահի Ղարաբաղից տարած գերիներից էր։ Եվ նրան խզել էին ոչ թե ծերության հասակում, այլ մանկության հասակում։*

*Պարսկաստանում ներքինիացնելը կատարվում է երկու նպատակով. մեկը՝ քաղաքական նպատակով, որ նա ժառանգներ չթողնե, ինչպես օրինակ, Աղա-Մամադ-շահը ներքինիացրած էր, մյուսը՝ հարեմական նպատակով։ Թե առաջինը և թե երկրորդը կատարվում են մանկության հասակում, երբ մանուկը տակավին անչափահաս է։*

*Եվ այդ ընդունված սովորությունների համեմատ տարակույս չկա, որ Աբրահամ Բեկնազարյանը պետք է ներքինի դառնար նույն հասակում, որ փոքր առ փոքր վարժվելով, կանանոցի կարգերի հետ ծանոթանալով, այնքան մեծանար, որ վերջը մինչև ներքինապետի աստիճանը բարձրանար։*

*Այն հանգամանքը, այսինքն Աբրահամ Բեկնազարյանի մանկությունից Ֆաթալի-շահի կանանոցը մտնելը և այնտեղ ներքինի լինելը, միանգամայն ոչնչացնում է «Գաղտնիք»-ի ամբողջ շինվածքը և խտառ հերքում է այն բոլոր երևակայական սխրագործությունները, որ այդ գրքում կապված են Ա. Բեկնազարյանի անձնավորության հետ։*

*Ինչո՞ւ։*

*Նրա համար, որ Ֆաթալի-շահի կանանոցի Աղա-Իբրահիմը մի հայտնի անձնավորություն է։ Նա, ինչպես վերևում հիշեցի, Աղա-Մամադ-շահի Ղարաբաղից 1795 թվին տարած գերիներից էր։ Այդ թվականում նա դեռ 10—15 տարեկան մանուկ էր։ Հետո ներքինի դարձավ։ Այժմ «Գաղտնիք»-ից բերած վկայությունից հաստատվում է, որ Աբրահամ Բեկնազարյանը և հիշյալ Աղա-Իբրահիմ ներքինին միևնույն անձնավորություններն են։ Եթե այդպես է, ուրեմն ինչպե՞ս կարող էր նա 1680 թվականներում աշակերտած*

լինել Գանձասարի Ներսես կաթողիկոսի մոտ և «Գաղտնիք»-ի համար պատմական նյութեր ընդօրինակել։ Սխալ 1795 թվականի և 1680-ական թվականների մեջ 115 տարվա տարբերություն կա։ Եթե այդ 15 տարին տանք Աբրահամ Բեկնազարյանի հասակին, երբ նա Ղարաբաղից գերի տարվեցավ Պարսկաստան, 100 տարին բոլորովին բաց է մնում, և այդ 100 տարվա ընթացքում դեռ չծնված Բեկնազարյանի գործերը, որոնք ընդարձակ տեղ են բռնում «Գաղտնիք»-ի մեջ, ինքնըստինքյան ջնջվում են, ինքնըստինքյան ոչնչանում են, և դրանք մնում են միայն իբրև Մակար վարդապետի երևակայության ողորմելի արգասիք...

Կրկնում եմ, Աբրահամ Բեկնազարյանի և Ֆաթալի-շահի կանանոցի Աղա-Իբրահիմ ներքինիի միևնույն անձնավորությունները լինելը միանգամայն տակնուվրա է անում «Գաղտնիք»-ի ամբողջ շինվածքը և նրա ամբողջ բովանդակությունը դարձնում է բոլորովին կեղծ և առասպելական հորինվածք։ Ես զարմանում եմ, թե ինչպես Մակար վարդապետը չէ նկատել այդ, և իրան թույլ է տվել մի այսպիսի անհամեմատ խոշոր հակասություն։

Աղա-Իբրահիմ ներքինին, մանկությունից Պարսկաստան տարած, կրոնը փոխած, մի մոլեռանդ մահմեդական էր, թեև ծագումով հայ։ Նա իրան բոլորովին հեռու էր պահում հայերից և մեռավ մահմեդականության մեջ, մարմինը տարվեցավ Քարբալա։

Իսկ Աբրահամ Բեկնազարյանը «Գաղտնիք»-ի մեջ ներկայանում է իբրև մի քաջ հերոս, որ պատերազմում է յուր հայրենիքի փրկության համար, որ աշխատում է վերականգնել Ղարաբաղի ընկած մելիքությունները, որ գրում է ժամանակի պատմությունը, որպեսզի իբրև խրատ թողնե ապագա սերունդներին, և հանկարծ դուրս է գալիս, որ այդ երևելի ազգասերը ուրիշ ոչ ոք չէ, եթե ոչ մի թշվառ մահմեդականացած ներքինի Ֆաթալի-շահի կանանոցում, որի համար ոչ հայոց ազգ կա, ոչ հայոց հայրենիք...

Մակար վարդապետը այնքան մոռանում է իրան, որ այդ մահմեդական ներքինիի մարմինը տանում է թաղել է տալիս Թավրիզի հայոց եկեղեցու գավթում, և մինչև անգամ Աբաս-Միրզային՝ Պարսկաստանի թագաժառանգին հրավիրում է թաղման հանդեսին ներկա լինել... Ո՞վ թույլ կտար։ Մի հայ, որ կրոնը փոխել է. եթե տեսնելիս լինեն նրան մի այլ հայի հետ խոսելիս, կամ հայի տունը մտնելիս, իսկույն մահմեդականները կքարկոծեն, ուր մնաց,

որ նրա մարմինը թույլ տային հայոց եկեղեցու գավթում թաղելու։

Այդ բոլորը՝ թե Աբրահամ Բեկնազարյանին Ցաթալի-շահի կանանոցում իբրև քրիստոնյա պահելը և թե նրա մարմինը հայոց եկեղեցու գավթում թաղել տալը, ես վերագրում եմ Մակար վարդապետի, որպես կրոնավորի, քրիստոնեական ջերմեռանդությանը, բայց այս տեսակ ջերմեռանդություններ պատմության համար ոչինչ նշանակություն չունեն։

Նույն ջերմեռանդությունը Մակար վարդապետը գործ է դնում և Աբրահամ Բեկնազարյանի որդի Ապրեսի վերաբերությամբ և նրան Երուսաղեմ է ուղարկում... բայց իսկույն կտեսնենք, որ նրա մարմինը նույնպես յուր հոր նման թաղվեցավ Քալբալայում։

Ապրես Բեկնազարյանը՝ «Գաղտնիք»-ի շարունակող և վերջացնող հեղինակը և յուր աշխատությունը 1881 թվին Մակար վարդապետին հանձնող հեղինակը, հանկարծ միևնույն գրքում ներկայանում է Ալլահվերդի կամ Ալլահվերդի-բեկ անունով։

> «Չմոռանամ ասել, որ հայրս կոչվում էր Իբրահիմ-Աղա, իսկ ես կոչվում էի Միրզա-Ալլահվերդի, սակայն հաճախ գործածական էր և իմ նախկին «Ալլահվերդի-բեկ» անունը» (եր. 312)։

Ո՞րտեղից ստացավ նա այդ մահմեդական անունը և ինչո՞ւ։ Այդ հարցին կպատասխանե ինքը՝ Ապրես Բեկնազարյանը։

> «Իսկույն (Աղա-Մամադ-շահն) զիս ողջագրելով, ասաց. «Սիրուն և անմեղ փոքրիկ, դու այդ մանկական հասակում ցանկացած ես շահը տեսնել։ Աղա-Մամադ-խանն այնքան ապաշնորհ չլինիր, որ քո այդ ազնիվ փափագն ըստ արժանվոյն գնահատել չգիտենա։ Դու այսուհետև Աղա-Մամադ-խանի նազելիր որդին ես, բայց այն պայմանաւ, որ դու անխախտ պահես քո պապենական հավատը, լեզուն»: Հետո իմ Ապրես անունը «Ալլահվերդի» փոխեց, իբր թե ինքն ներքինի և անզավակ գոլով՝ աստված պարգևեց իրան մի որդի Աստվածատուր անվամբ»[1] (եր. 136)։

---

1 Ալլահվերդի թուրքերեն նշանակում է Աստվածատուր։ Աղա-Մամադ-շահը պարսկերեն էր խոսում, նա թուրքերեն չգիտեր, եթե ցանկանար Աստվածատուր անվան համանիշ մի անուն տալ Ապրես Բեկնազարյանին, նրան Խուդա-դատ կկոչեր և ոչ Ալլահվերդի։

*Մակար վարդապետը այնպես թեթև կերպով է վերաբերվում պատմական փաստերին, կարծելով, թե ինչպես ինքը ցանկանում է, այնպես ևս կարող էր լինել։*

*Աղա-Մամադ-շահը, պարսից ներկա Ղաջարյան տոհմի թագավորության հիմնադիրը, որովհետև ինքը զավակ չունի, որդեգրում է մի խնածախցի հայ տղայի, որ յուր գահի ժառանգը լինի, այն ևս այն պայմանով, որ նա* «անխախտ պահի յուր պապենական հավատը և լեզուն»... *Պարսից գահի վրա քրիստոնյա թագավոր... Այդ տեսակ երազների վրա մտածելն անգամ հիմարություն կլիներ։*

*Աղա-Մամադ-շահը, իրավ է, զավակ չուներ, բայց նա արդեն որդեգրել էր յուր եղբոր որդի Բաբա-խանին, որ նրանից հետո թագավոր դարձավ Ֆաթալի-շահ անունով։ Այլևս ի՞նչ պետք ուներ Ասրես Բեկնազարյանին...*

*Բայց ընդունելով Աղա-Մամադ-շահի ցանկությունը (կամենում եմ ասել Մակար վարդապետի ցանկությունը), փոքրիկ Ասրեսը անխախտ չպահեց յուր* «պապենական հավատը և լեզուն»: *Այն օրից, որ տրվեցավ նրան Ալլահվերդի անունը, հենց այն օրից թլպատություն ընդունեց...*

*Մակար վարդապետը յուր Ալլահվերդի-բեկին նույնացրել է «Խամսայի մելիքությունների» (350 եր.) Ալլահվերդի-բեկի հետ, օգուտ քաղելով միայն այն հանգամանքից, որ երկուսն էլ Ղարաբաղցի հայեր են։ Ինչո՞ւ։*

*Նրա համար, որ «Խամսայի մելիքությունների» Ալլահվերդի-բեկը Մամադ-շահի «մոհրդարն» է, այսինքն՝ կնքապահն է, շահի դիվանից որքան հրովարտակներ դուրս գալու լինեն, նա պետք է կարդա, արքայական կնիքով կնքե, հետո թագավորի ստորագրությանը ներկայացնե։ Իսկ մի այդպիսի մարդ Մակար վարդապետին պետք էր, որ նույն հրովարտակների «գաղտնիք»-ը մտցնե «Գաղտնիք»-ի մեջ...*

*Հարցնող լինի, թե ի՞նչ գաղտնիքներ դուրս բերեց Ալլահվերդի-բեկը շահի դիվանից, որոնք մեզ հայտնի չէին մինչև «Գաղտնիք»-ի լույս տեսնելը։ Այդ թողնենք։*

*Միայն կարևոր ենք համարում նկատել, որ այն բոլոր ջանքերով, որով Մակար վարդապետը աշխատել է յուր Ալլահվերդի-բեկին զանազան ոլոր-մոլոր ճանապարհներով մտցնել շահի դի-*

վանի մեջ, դրանից ոչ միայն որևէ իրական օգուտ չէ քաղել, այլ իրան դրել է անխուսափելի հակասությունների մեջ։

Ահա ինչու.

Մամադ-Ջահի կնքապահ Ալլահվերդի-բեկը մանկությունից Պարսկաստան տարած և մահմեդականություն ընդունած մի գերի էր։ Նա ուրացել էր որպես հայությունը, նույնպես և հայոց կրոնը։ Նա հայերեն գրել-կարդալ անգամ չգիտեր։ Ուրեմն, ի՞նչպես հեղինակեց «Գաղտնիք»-ը։

Եվ վերջապես, նա ապրեց որպես մի մոլեռանդ մահմեդական, հոգով և սրտով, և մեռավ որպես մահմեդական։ 1847 թվին նրա մարմինը տարվեցավ Քալբալա և թաղվեցավ իմամների սուրբ հողի մեջ։

Եվ ահա նոր հրաշք։

Նույն Ալլահվերդի-բեկն («Գաղտնիք»-ի հեղինակ Ասրեւ-բեկ) Քալբալայից հարություն է առնում, 43 տարի ճանապարհորդություններ է անում, այցելում է Հայաստանի բոլոր վանքերին (եր. 394—395), յուր մեղքերը քավում է և հետո, 1881 թվին գալիս է Շուշի, մուրացկանի կերպարանքով ներկայանում է Մակար վարդապետին, և «Գաղտնիք»-ը հանձնում է հայր սուրբին...

Ե

Այն բազմաթիվ փաստերը, որ առաջ բերվեցան նախընթաց գլուխներում, կարծեմ բավական պետք է համարվին ապացուցանելու համար, որ «Գաղտնիք»-ի մի զույգ հեղինակները՝ հայր և որդի Բեկնազարյանները, բոլորովին երևակայական անձնավորություններ են, և թե այդ գիրքը Մակար վարդապետի աշխատությունն է, որի վրա մի հին դրոշմ դնելու նպատակով, կնքել է Բեկնազարյանների անունով։

Այժմ պետք է նայել «Գաղտնիք»-ի վրա որպես Մակար վարդապետի հեղինակության վրա։

Որպես մի պատմական աշխատություն, հարկավոր է նախ որոշել, թե ի՞նչ մասներից է կազմված «Գաղտնիք»-ը։ Այդ հազիվ թե կարելի կլինի, որովհետև գրքի մեջ բաժանմունքներ չկան։ Հեղինակը ինչ որ գտել է, ինչ որ երևակայել է, ի տեղի և անտեղի կարկատել է միմյանց հետ, առանց դասավորության և առանց կարգի։ Այսպիսով, առաջ է եկել այն բարելական խառնաշփոթությունը, այն անցքերի և շատախոսությունների մթին քաոսը, որ

ընթերցողին մոլորության մեջ է գցում, թե ո՞րտեղից է սկսվում այդ գիրքը և ո՞րտեղ է վերջանում։ Այսուամենայնիվ, որպեսզի հնար լինի փոքրիշատե պարզ գաղափար տալ «Գաղտնիք»-ի բովանդակության մասին, կարելի է նրան մոտավորապես այսպես բաժանել.

1. Մի պատկեր, որ ներկայացնում է Շուշի բերդի պաշարումը Աղա-Մամադ-շահից։

2. Ժամանակագրական հիշատակարան վանական պատմական անցքերի։

3. Պաշտոնական թղթակցություններ, պայմանագրեր և այլն։

Սկսենք պատկերից։

Բայց նախ հարկավոր է ծանոթացնել մի քանի պարագաների հետ, որպեսզի հասկանալի լինին պատկերի մանրամասները։

Շուշի բերդից երկու ժամ հեռավորության վրա գտնվում է Խնածախ գյուղը։ Մելիք Վարդապետը այդ գյուղացի է։ Նա ցանկացել է անմահացնել յուր ծննդավայրը և նրան Ղարաբաղի մելիքների պատմության մեջ մի փայլուն դեր տալ։ Բայց, դժբախտաբար, Խնածախը թե յուր դիրքով և թե յուր սև անցյալով այն հարմարությունները չէ ունեցել, որ Մելիք Վարդապետի փափագներին լիակատար բավականություն տար։ Իսկ այդ բնավ չի հուսահատեցրել հայր սուրբին։ Նա գյուղի դիրքը կարողացել է ամրացնել. նրա շուրջը անմատչելի լեռներ է ստեղծել և այդ լեռները պատել է կաղնիների խիտ անտառով։ Նույն լեռների մեջ գտնվել է մի ընդարձակ այր, որ կոչվում է «Ծակ-քար» և որը վտանգի ժամանակ կարող է պատսպարել յուր մեջ մի քանի հարյուր հոգի[1]։ Գյուղը արդեն պատերազմական բոլոր հարմարությունները ստացավ, բայց ի՞նչ անել գյուղացիների անցյալի հետ։

Թե Խնածախը և թե նրա մերձակա Բալլուջա գյուղը երկուսն էլ Շուշի բերդի Իբրահիմ-խանի կալվածներն են, այն Իբրահիմ-խանի, որ Ղարաբաղի մելիքությունների կործանման պատճառը դարձավ, և որը դեռ շարունակում է պատերազմել մելիքների հետ. Իսկ այդ երկու գյուղերում գտնվում են այն բոլոր փախստականները, որոնք դավաճանել են հայոց մելիքներին և անցել են նրանց թշնամի Իբրահիմ-խանի կողմը։ Հիմա ի՞նչպես անել, որ

---

1 Այդ այրը ես տեսել եմ, նրա մեջ երեք թե չորս հոգուց ավելի մարդիկ չեն կարող պատսպարվել։

մի կողմից կարելի լինի ծածկել դավաճանության արատը, որ դրած է հիշյալ գյուղացիների վրա, իսկ մյուս կողմից՝ նրանցից հայրենիքի պաշտպանության համար հերոսներ ստեղծել։

Մակար վարդապետի հնարագիտության տաղանդը այդ դեպքում ևս անճար չէ մնացել. նա հորինել է մի դաշնագիր հիշյալ գյուղացիների և Իբրահիմ-խանի մեջ։ Ես կբերեմ այդ դաշնագրի հետաքրքիր հոդվածները, որովհետև դրա նման են «Գաղտնիք»-ի մեջ արձանագրված բոլոր դաշնագրերը.

Ա. «Ջրաբերդից խաչեն տեղափոխվող «Քաջերին» տան գլուխ վճարից Իբրահիմ-խանը երեք հարյուր թուման, իբրև նոր շինության ծախք և հնոց կարասիները նորերի մեջ փոխադրելու վարձ»։

Բ. Հոդվածը որոշում է երկու գյուղերի սահմանները, հողերի տարածությունը, որ տալիս է Իբրահիմ-խանը «Քաջերին» իբրև մշտական սեփականություն որդվոց որդի։

Գ. «Ոչ Իբրահիմ-խանը իրավունք ունի «Քաջերից» և սոցա հետագաներից պահանջել տուրք կամ գլխահարկ և կամ տասանորդ, ոչ այս խանի հետագաներն, եթե կլինեին...»։ (Ղարաբաղի տիրապետողը հույս չունի, որ ինքը հետագաներ կունենա և այդ գրում է պայմանի մեջ...)։

Դ. «Ոչ ոք իրավունք կունենա պահանջել այս «Քաջերից» ոչ զորք և ոչ զորագրամ»։

Ե. «Միայն թե այդ Քաջերն» ընավ չմասնակցեին մելիքների պատերազմներին և զինեին ընդդեմ խանին» (եր. 117—118)։

Այդ «Քաջերը» իբր թե Ջրաբերդի Մելիք-Աթամի զինվորներն են եղել և խանը, նրանց կաշառելով, գաղթեցրել է Ջրաբերդից[1]։ Իսկ Ջրաբերդի իշխող Մելիք-Աթամը հաճություն է տալիս նրանց

1 Գոնե Նոր Խնածախ անունը պետք է փոքրիշատե զսպեր Մակար վարդապետի վստահությունը՝ պատմությունը այդպես համարձակ կերպով զեղծելու մեջ։ Եթե այդ գյուղը Նոր Խնածախ է, ուրեմն եղել է և Հին Խնածախ։ Որպես ղարաբաղցի, անկարելի է, որ Մակար վարդապետին հայտնի չլիներ, որ Հին Խնածախը գտնվում է Զանգեզուրի գավառում, որ և կոչվում է Քշտաղի Խնածախ, և որը Մելիք-Հայկազյանների գյուղն էր։ Այստեղից գաղթեցին Մակար վարդապետի հայրենակիցները և հիմնեցին Նոր Խնածախը՝ պահպանելով իրենց գյուղի նախկին անունը։ Ուրեմն, ի՞նչպես կարող էին լինել նրանք Ջրաբերդի գավառից գաղթածներ, կամ այդ գավառի տիրապետող Մելիք-Աթամի զինվորներ։ Թե Ղարաբաղում, թե Ղափանում և թե Սիսիանում շատ կան նույնանուն գյուղեր, որ զանազան

տեղափոխությանը, հավատացած լինելով, որ «Քաչերը» դարձյալ յուր օգտին կծառայեն։ «Քաչերը» ևս իրանց կողմից հանձն են առնում այդ երկերեսանի դերը, մի կողմից խաբել միամիտ Իբրահիմ-խանին (շա՜տ միամիտ էր...) և վայելել նրա առատ բարիքները, իսկ մյուս կողմից, նպաստել հայոց մելիքների շահերին և այլն (եր. 118)։

Բանը շինվեցավ։

Ղարաբաղի մելիքությունները ոչնչացնող Իբրահիմ-խանը, որ գոռոզությամբ մի կողմից եղջյուր էր ածում ռուսաց զորության դեմ, մյուս կողմից՝ պարսից շահերի դեմ, այն աստիճան տկարանում է մի քանի գյուղացիների առջև, և այն աստիճան հիմարանում է, որ Մակար վարդապետի շնորհիվ մի այսպիսի պայման է կապում «Քաչերի» հետ։ Ի՞նչ կարողություն ունեիր նա մի քանի թափառական գյուղացիների մեջ, երբ այդ ժամանակ նա ամբողջ Ղարաբաղի տերն և իշխանն էր համարվում։ Եվ երբ Ղարաբաղի նախկին տիրապետող մելիքները, չկարողանալով տանել նրա բարբարոսությունները, արդեն իրանց ժողովրդով սկսել էին գաղթել դեպի օտար երկրներ (եր. 115—116)։

Հետաքրքիրն այն է, որ հիշյալ պայմանագիրը գրվում և վավերանում է միևնույն տարվա մեջ և միևնույն ժամանակ (1770 թ. մայիսի 10-ին), երբ այդ մի բուռն «Քաչերը» կոտորում են Իբրահիմ-խանի զորքերը և նրան յուր կուսակից հայ մելիքների հետ փախցնում են Շուշի բերդը... (համեմատեցեք 65 և 119 երեսները)։

Վերջապես, «Քաչերը» ստանում են Իբրահիմ-խանի խոստացած փողերը, հիմնում են Խնածախ և Բալլուջա գյուղերը։ Առաջինի մեջ բնակություն են հաստատում 50 ընտանիքներ, իսկ երկրորդի մեջ՝ 70 ընտանիքներ։ Ընդամենը՝ 120 ընտանիք։

Հաշվենք, թե որքան ծախսեց Իբրահիմ-խանը այդ 120 ընտանիքը գաղթեցնելու համար։

Յուրաքանչյուր ընտանիքին տվեց 300 թուման պարսից ոսկի։ Ուրեմն, 120 ընտանիք ստացավ 36.000 ոսկի։ Եթե այդ գումարը վերածենք ռուսաց ռուբլու (յուրաքանչյուր ոսկին 3½ ռուբլի հաշվելով), կստանանք 126.000 ռուբլի։ Այդ գումարով կարելի էր այն ժամանակ (1770 թվին) ամբողջ Ղարաբաղը գնել։

---

պատմական հանգամանքների պատճառով մեկ գավառից գաղթել են դեպի մյուսը, նոր գյուղ են հիմնել և իրանց հին գյուղի անունովն են կոչել։

Ցույց տալու համար Մակար վարդապետի թվանշանների փավստոսյան շռայլությունը, ավելորդ չէր լինի մեջ բերել մի փաստ, թե որքան սուղ էր փողը այդ ժամանակներում։

Հիշյալ երկու գյուղերի հիմնվելուց 58 տարի հետո (1828 թվին), երբ համեմատաբար դրամի ավելի առատություն պետք է լիներ, ռուսաց կառավարությունը Պարսկաստանից դեպի Անդրկովկաս գաղթեցրած 8249[1] հայ ընտանիքների վրա, Ղազարոս Լազարյանի ձեռքով ծախսեց ընդամենը 14.000 ոսկի և 400 ռուբլի միայն, և այդ գումարը կոմս Պասկևիչը չափազանց էր գտնում[2]։ Ռուսաց կառավարության այդ ժամանակվա դրամական միջոցները հայտնի էին։ Միայն 20 միլիոն կռան պատերազմական տուգանք դրեց Պարսկաստանի վրա, երբ տեղափոխում էր այդ գաղթականները։ Եվ այդ գումարի մի մասը արդեն ստացել էր։ Այնուամենայնիվ 14.000 ոսկին շատ էր գտնում 8249 ընտանիքի տեղափոխության համար, այն էլ Պարսկաստանից Անդրկովկաս։ Որքա՜ն հեռավորություն։ Իսկ Իբրահիմ-խանը յուր բոլոր չքավորությամբ, Ջրաբերդից մինչև Խաչեն (մի օրվա ճանապարհ է) 120 ընտանիք գաղթեցնելու համար ծախսում է 36.000 պարսկական ոսկի՝ 126.000 ռուբլի... Ստախոսությունը, եթե փոքր-ինչ չափավոր լիներ, այդքան զզվելի չէր լինի։

Երբ Իբրահիմ-խանը մտավ ռուսաց հպատակության ներքո, Քուրակ-չայի դաշնագրից հետո, իշ. Ցիցիանովի հետ (1805 թիվ), նա խոստացավ ամբողջ Ղարաբաղից իբրև հարկ վճարել ռուսներին 8000 ոսկի միայն։ Վերջը այդ գումարը վճարել չկարողացավ, խոստացավ ձիաներ տալ, այն էլ տալ չկարողացավ։ Իսկ 1770 թվին որտեղի՞ց ուներ Իբրահիմ-խանը այնքան ոսկիներ, որ տար Մակար վարդապետի հայրենակիցներին և ինչո՞ւ համար...

Թե այսպես, թե այնպես Խնածախը հիմնվում է։ Այդ գյուղը որպես վերևում հիշեցի, թե Մակար վարդապետի և թե «Գաղտնիք»-ի հեղինակ հայր և որդի Բեկնազարյանների ծննդավայրն է։

---

1 Մակար վարդապետը Պարսկաստանից տեղափոխված հայ գաղթականների թիվը դնում է 26.000 գերդաստան (եր. 382)։ Դարձյալ փավստոսյան չափազանցություն...

2 Տե՛ս Ղազարոս Լազարյանի 1829 ամի 24 դեկտեմբերի զեկուցումը, որ մատուցած է կոմս Պասկևիչին։ «Նկարագիր գաղթականության հայոց Պարսկաստանե ի Ռուսաստան», եր. 94։ Տպված է Մոսկվայում, 1832 ամի։

Խնածախի հիմնվելուց 25 տարի հետո (1795 թիվ) Աղա-Մա-
մադ-շահը պաշարում է Շուշի բերդը, որը հիշյալ գյուղից 2 ժամ-
վա հեռավորության վրա է։ Այդ միջոցին դուրս են գալիս մի խումբ
խնածախցի «Քաջեր» և հրաշքներ են գործում։ Հետաքրքիր են այդ
«Քաջերի» անունները։ Այդ պատճառով ես ավելորդ չեմ համարում
անունները մի առ մի հիշել, որովհետև հենց անունների մեջ է նը-
րանց քաջության նշանաբանը։

1. Խումբի գլխավորը, նույն ինքը «Գաղտնիք»-ի հեղինակ Աբ-
րահամ Բեկնազարյանն է։ Նա կոչվում է Ազրայել-Իբրահիմ[1], հե-
տո յուր անհամեմատ քաջագործությունների համար կոչվեցավ
Հրաշագործ Ազրայել (եր. 162)։ Ազրայել կոչվում է արաբացոց
հոգեառ հրեշտակը։ Դա անգութ, կոտորող ու ոչնչացնող մի ուժ է։
Գոնե յուր անվան վերաբերությամբ պետք էր, որ «Գաղտնիք»-ի
հեղինակը փոքր-ինչ համեստ լիներ։

2. «Գյուլ–Ոսման», նշանակում է Գայլ Օհան։ Դա այն հատ-
կություններն ունի, որ աչքերը գայլի նման գիշերվա մութի մեջ
տեսնում են, գայլի նման ոռնում է և յուր ընկերներին զանազան
ազդարարություններ է անում, իսկ կռիվների միջոցին գայլի նման
լափում է թշնամուն (եր. 63)։

3. Ասլան–Մանուչար, նշանակում է Առյուծ-Մանուչար։ «Սա
ունի առյուծի հատուկ վեհանձնություն, աներկյուղ սիրտ, լայնա-
լանջ կուրծք, աննահանջելի հարձակումն, անդիմադրելի ուժգնու-
թյուն, չափազանց ուժ» և այլն (եր. 66, 67։

4. «Շիր–Նասիր», նշանակում է առյուծ-Նասիր։

5. «Պեհլյուա–Մախմուր», «բաբր»—պարսկերեն նշանակում
է վագր, իսկ Մախմուր անուն է։

Ուշադրություն դարձրեք երկուսից մինչև 5-րդ մականունների

---

1 Բոլոր անունների և մականունների մեջ Մակար վարդապետը միայն 19 անուն է բացատրում, բայց ես չհետևեցի նրա բացատրություններին, որովհետև ինքն ևս չգիտեր յուր հնարած մականունների իսկական նշանակությունը։

Ես բոլոր անունների ուղղագրությունը թողեցի նույն ձևով, որպես գրել է Մակար վարդապետը։ Հայր սուրբը Տաճկաստանում ստացած լինելով յուր կրթությունը և երկար ժամանակ այնտեղ մնալով, գործ է ածում Տաճկաստանի հայերի ուղղագրությունը բ-ի տեղ պ, դ-ի տեղ տ, ջ-ի տեղ ճ, ևն։ Դա արդեն պարզ նշան է, որ «Գաղտնիք»-ը գրել է Մակար վարդապետը և ոչ Բեկնազարյանները, որոնք հարկավ տաճկահայոց սխալ հնչյուններին կամ ուղղագրությանը չէին հետևի։

վրա,—գայլ, առյուծ և վագր—գազաններից առնված են ամենակատաղիները։

6. «Օշափ–Բաղդասար», նշանակում է վիշապ Բաղդասար։ Վիշապների նման նա սարսափ է ձգում թշնամիների վրա և վիշապների նման կլանում է նրանց բազմությունը (եր. 66)։

7. «Աժդահա–Անտրի», նշանակում է Աժդահակ կամ Վիշապ-Անդրեաս։ «Այս բարձրահասակ, հաղթանդամ, ուժեղ և արիասիրտ տղամարդը» վիշապի կլանող հատկությունները ունի, թշնամու ամբողջ գունդերը վիշապի նման անհետացնում է (եր. 67)։

8. «Շահմար–Ղալալ»: Շահմար նշանակում է օձերի թագավոր. հեքիաթների մեջ այդ հրեշը յուր հայացքով անգամ թունավորել կարող է։ Իսկ «ղալալ» անուն է, թեև թմբուկ բառի նշանակությունն էլ ունի (եր. 70)։

Ուշադրություն դարձրեք 6-ից մինչև 8-րդ նույնանշան երեք մականունների վրա, որոնք հսկա օձեր կամ օձերի թագավորներ են ներկայացնում։

9. «Փիլ–Առուշան», նշանակում է փիղ-Ռուշան։—Ռուշան պարսկական անուն է։ «Փիղ» մականունը ստացել է այդ հսկան յուր փղային ուժի պատճառով (եր. 70)։

10. «Նեառ–Եղիազար»։—«Նառ» պարսկերեն արու է նշանակում։ «Նառ» կոչվում են և արու ուղտերը, իսկ ժողովրդի հասկացողությամբ այդ բառը չափազանց ուժեղության նշանակություն ունի։

Ուշադրություն դարձրեք 9-ից մինչև 10-րդ մականունների վրա, խոտաճարակներից ընտրված են հզորագույնները,—փիղը և ուղտը, միայն գոմեշը մոռացված է...

11. «Կեծակ–Վանի», նշանակում է Կայծակ Հովհաննես։ Դա կայծակի նման շանթահարում է թշնամու գունդերը և յուր ծանր թրի մի հարվածով թշնամիների գլուխները երկու հավասար մասերի է բաժանում, ոչ ավել, ոչ պակաս (եր. 63)։

12. «Կարկաուտ–Սմաւեն», նշանակում է Կարկուտ-Սիմոն։ Դա այն աստիճան արագաշարժ է, որ յուր հրացանի գնդակները կարկուտի նման թափում է թշնամու վրա (եր. 67)։

Ուշադրություն դարձրեք 11 և 12-րդ մականունների վրա, երկընքի երկու պատուհասներն էլ բաց չեն թողնված՝ կայծակը և կարկուտը։

13. «Տեռվ–Գեասպար», *նշանակում է Դև Կասպար։ Դևերը թե պարսից և թե հայոց առասպելների մեջ վիթխարի հսկաներ կամ քաջքեր են։ «Դաղտնիք»-ի* «Տեռվ–Գեասպարը» *ունի հաղթանդամ կազմվածք, սամսոնական ուժ, առյուծական սիրտ, պողպատյա բազուկներ, են (նր. 64)։*

14. «Նեառռատէռվ–Աբա», *նշանակում է Հայր-Նառադև։ Դա հեքիաթների մեջ պատմված դևերի կամ հրեշների յոթնագլխյան թագավորն է։ Իսկական անունը Սահակ է։ «Սա ունի պարթևական հասակ, արտաքո կարգի ուժ, աներկյուղ սիրտ» և այլն (նր. 68)։ Դա հետո կոչվեցավ* «Քաջահաղթ–Տրդատ» *(նր. 278)։*

15. «Ազնավուր–Ոհան». *«Ազնավուր» պարսից* այբաժար *բառի աղավաղվածը պետք է լինի, որ նշանակում է հրեշավոր, այլանդակ, ճիվաղ։ Իսկ «Ոհան» Հովհաննես անունն է։ Այդ անունը ստանում է նա Երասխ գետի ափերի մոտ կատարած զարմանալի հաղթությունների պատճառով (նր. 65, 66)։*

*Ուշադրություն դարձրեք 13-ից մինչև 15-րդ մականունների վրա, բոլոր նշանավոր առասպելաբանական հրեշները չեն մոռացված։*

16. «Քյալլակեոզ–Առստամ», «Ճալլագոզ» *նշանակում է գագաթի վրա մի հատիկ աչք ունեցող։ Դա թուրքերի առասպելների մեջ համապատասխանում է Հոմերոսի Պոլյուփեմեոս անուն կիկլոպին, որ ճակատի վրա մի հատիկ աչք ուներ և կերակրվում էր մարդկային մսով։ Իսկ Առստամ Ֆիրդուսու Ռոստոմ հերոսի աղավաղված անունն է։*

17. «Փեհլուան–Սագի», *նշանակում է հսկա Սարգիս։ Ուշադրություն դարձրեք 16-ից մինչև 17-րդ մականունների վրա, հսկաների և ճիվաղների անուններն ևս բաց չեն թողնված։*

18. «Քյարվանղռան–Բրուտ», *քարվանղռան, նշանակում է քարավան կոտորող, ավազակ, հուղկահար։ Դա արհեստով բրուտ է, իսկական անունը Թյունի (Հարություն) է։ «Սա ունի պարթևական հասակ, տրդատյան ուժ և ահարկու տեսք»։ Մի անգամ բոլորովին միայնակ կոտորեց նա Իբրահիմ-խանի 150 զինյալ թուրքերին, որ քարավանի պատրվակով ուղարկել էր խանը նրան սպանելու։ Եվ երևակայեցեք՝ Բրուտը առանց զենքի կատարեց այս մեծ կոտորածը, որովհետև այդ միջոցին գնացել էր նա Կուր գետից ձուկ որսալու (նր. 64)։*

19. «Թուլի-Արզուման», —«թուլի» նշ․ ավազակ, հուղկահար, ասպատակող։

20. «Բասար-կեչեր-Գյափի»—«Բասար-գեչար» թուրքերեն նըշանակում է կոխ տվող և անցնող, իսկ Գյափի՝ կրճատված Գաբրիել անունն է։

21. «Ձափար-Սարասար», նշանակում է կկոտրեմ գլխից ցդըլուխ, այսինքն՝ ծայրեիծայր։ Դա թշնամու որ կողմի վրա և հարձակվում է ծայրեիծայր կոտորում է։ Իսկ թշնամու հարձակումները սանձահարելու պատճառով կոչվում է նաև «Ջլով», որ նշանակում է սանձ (եր. 64, 65)։

*Ուշադրություն դարձրեք 18-ից մինչև 21-րդ մականունների վրա, բոլորը նույն իմաստն ունեցող ավազակների ու ասպատակների անուններ են։*

22. «Քյանդխուտա-Խաչատուր», նշանակում է տանուտեր Խաչատուր։

23. «Ղարսլաղան-Յուղուրլու», նշանակում է Բախտավոր-թնդանոթ։ Դա թնդանոթի նման ռմբակոծում է թշնամու գունդերը, յուր ամբողջ կյանքում միշտ հաղթել է և երբեք չի հաղթվել. այդ պատճառով և վայելում էր և «Քաջահաղթ» մականունը (եր. 67, 68)։

24. «Սենկիար-Ասրի», նշանակում է Պատնեշ-Իսրայել։ Ինչպես պատնեշը պատերազմի ժամանակ մի զորավոր թումբ կամ ամբարտակ է թշնամու առջև, նույնպես է և այդ Իսրայելը։

*Ուշադրություն դարձրեք 23 և 24-րդ մականունների վրա,— մեկը թնդանոթ է, մյուսը պատնեշ թնդանոթի դեմ...*

25. «Ուզուն-ղլիճ-սայի», Ուզուն ղլիճ թուրքերեն նշանակում է երկայնասուր, այսինքն՝ երկար սուր կրող։ Իսկ Սայի աղավաղված Եսայի անունն է։

26. «Պատման-ղլիճ-Մարտի», «Բաթման» թուրքերեն մի ծանրություն է, որ կարծեմ հավասար պետք է լինի ռուսաց 1/2 պուդին։ Իսկ Բաթման-ղլիճ նշանակում է մի բաթմանի ծանրությամբ սուր կրող։ «Մարտի» կրճատված Մարտիրոս անունն է։

27. «Պատման-բոփուզ-Թեոս», նշանակում է մի բաթմանի ծանրությամբ լախտ կրող Թադեոս։

28. «Թոփուզ-աշղ-Ղարա», «Թոփուզ» նշանակում է գլխին գնդաձև երկաթ ունեցող լախտ, որ հին ժամանակներում գործ էին ածում որպես զենք, իսկ «աշղ-ղարա», նշան. սև աշուղ։ Դա

մի երգիչ էր, որ յուր նվագարանը ցած է դրել, վեր է առել զենքեր, սկսել է հայրենիքը պաշտպանել (եր. 69)։

Ուշադրություն դարձրեք 25-ից մինչև 28-րդ մականունների վրա, որոնք արտահայտում են զենքերի և զինակիրների տարօրինակ վիթխարիությունը։

29. «Անհաղթ–Ղազար», հասկանալի է։

30. Անգուր–Խաչի», հասկանալի է, Խաչի Խաչատուր անվան կրճատվածն է։

31. «Քաշալ–Մոսի», նշ. քոսոտ Մովսես։

Երբ որ քաշալ կա, անպատճառ քոսակն էլ պետք է լինի...

32. «Քոսակ–Գյուգի», նշ. քոսակ Գրիգոր։ Թե քաշալները և թե քոսակները ժողովրդի հասկացողությամբ խորամանկ, հնարագետ, նենգավոր և ճարպիկ են լինում։

33. «Դիժ–Միքի», նշ. գիժ Միքայել։ Պատերազմող անձանց վերաբերությամբ «գիժ» մականունը ունի վայրագության նշանակություն, ինչպես մեր Հայկ դյուցազունի հետ պատերազմող տիտաններին «խոլ»՝ այսինքն՝ խենթ անունն է տալիս պատմությունը։

34. «Դելի–Մահրասա», նշ. գիժ-վարդապետ։ Բայց «դալի» բառը հեքիաթների մեջ տարապայման քաջի նշանակություն ես ունի։ «Դալի»-ներ կոչվում էին Քորօղլու թիկնապահներն ես։

35. «Դելի–Քեշիշ», նշ. գիժ-քահանա։

36. «Պել–Ճամալ», պել բառը հայ ռամկի լեզվում նույն միտքն ունի, որպես «դալի» բառը Թուրքերի մեջ, նշանակում է գիժ, խոլ, վայրագ, տարապայման քաջ։ Արդյոք այդ «Պելը» սեմեանների առասպելական Բելը կամ Նեբրովթը չէ, որ մնացել է մեր ժողովրդի մեջ։—Ճամալ՝ ավելի ճիշտ Ջամալ Թուրքաց անուն է, որ գործ են ածում և հայերը։ Բայց այդ Պել-Ճամալը մի զարմանալի տիպ է «Գաղտնիք»-ի մեջ։ Մակար վարդապետը տվել է նրան մի երկրորդ անուն ևս—«Արագահաս-Սուրբ-Սարգիս» (եր. 278)։

Ուշադրություն դարձրեք 33-ից մինչև 36-րդ մականունների վրա, բոլորը գժեր ու խենթեր են... ոչ մի խելացի չկա այդ չորս անունների մեջ...

37. «Տեռնմազ–Բելլու», նշանակում է մեջքը կամ թիկունքը ետ չդարձնող։ Այսպես կոչվում է նա այն պատճառով, որ երբեք առանց հաղթության ետ չէ դառնում կռվի դաշտից (եր. 68)։

38. «Գրախմազ-Օսեփ», *նշանակում է բաց չթողնող Հովսեփ։ Այդ անունը ստացել է նա, որովհետև մի անգամ յուր ձեռքը ընկած թշնամուն բաց չի թողնի, կոչնչացնե և առավելապես սիրում է կոտորել թշնամու զորապետներին (եր. 69)։*

39. «Պողպատ», *իբրև մարդու անուն, նշանակում է պողպատյա կամ երկաթյա կազմվածք ունեցող, զենքերից անմխելի։*

40. «Քյարփեթյուն-Տետե»,— *«քալփաթին», նշ. է աքցան կամ ունելի,—հյուսների կամ դարբինների այն գործիքը, որով մեխ են դուրս քաշում կամ շիկացած երկաթ են բռնում։ «Տետե» ինձ հայտնի չէ, թե որ անվան կրճատվածն է։*

41. «Թոխմախ-Սափարի»—*«թոխմախ» կոչվում է այն գործիքը, որով պարսիկները ջարդում են հանցավորների գլուխները, դա ահագին երկաթյա մուրճ է, դարբինների մուրճի կամ կռանի նման։*

42. «Ջնդան-Ավթանդիլ»—*«զնդան» կամ ավելի ուղիղ «սընդան», կոչվում է դարբինների սալը, որի վրա երկաթ են կռում։ Իսկ ժողովրդի լեզվում փոխաբերական մտքով ամրություն է նշանակում։*

*Ուշադրություն դարձրեք 40-ից մինչև 42-րդ մականունների վրա, որ ներկայացնում են դարբինների երեք անբաժան գործիքները, միայն փուքսը մոռացված է։*

43. «Կաֆե-Ջաֆի», *նշ. Կաքավ Զաքարիա։ Դա սուրհանդակի կամ փայակի պաշտոն է կատարում, այսպես կոչվում է յուր շափազանց արագընթացության պատճառով։*

44. «Ղարա-խան-Յուզբաշի», *նշ. Սև խան Հարյուրապետ։*

45. «Ալբեթյուն-Բատի», *ճիշտ ուղղագրությամբ «Ալբեթյուն» չէ, այլ «Աֆլաթուն» է։ Դա արաբացոց Պլատոնն է, մի հրաշագործ բժիշկ և փիլիսոփա։ Բայց արևելյան ազգերի մեջ, նույնպես և հայոց մեջ փոխաբերական իմաստով «աֆլաթուն» բառը հնարագետ, ամեն բանի ճարն ու դարմանը գտնող մարդու նշանակություն ունի։ «Բատի» Բաղդասար անվան կրճատվածն է։*

*Այդ բոլոր այլանդակ մականունների մեջ միայն սատանան էր պակաս, այն ևս չէ մոռացել Մակար վարդապետը,—ահա՛ և սատանան։*

46. «Շեյթան-Թյունի», *նշ. սատանա Հարություն։ Դա ուրիշ անուններ ևս ունի. «այր Աստուծոյ», «Ամբակում մարգարե» ևն։*

Շեյթան-Բյունին «Գաղտնիք»-ի նույն տիպն է, ինչ որ քավոր Պետրոսը «Խաչագողի հիշատակարանի» մեջ, ամեն ձև ու կերպարանք ընդունում է, ամեն լեզուներով խոսում է, ամեն տեղ մտնում է, առանց ճանաչված լինելու։ Դա մի քամելեոն է, որ ամեն րոպե մի նոր տեսք է ստանում։

Մակար վարդապետի վառ երևակայությունը միայն կարող էր այսպես հրեշավոր մականուններ ստեղծել։ «Գաղտնիք»-ը լի է ուրիշ շատ այս տեսակ մականուններով։ Օրինակ, «Քորօղլի-քեշիշ» (քորօղլի-քահանա), որ հետո կոչվեցավ «Վարդան Մամիկոնյան» (եր. 278), «Քաչալ Սագի», «Քեոհլան-Սագի» (եր. 103), որ նշանակում է սիգապանծ նժույգ Սարգիս, «Տոյտաղ-Քյասի» (եր. 104), որ նշանակում է վայրենի սագ-Կասպար, «Ճեյրան Ծատուր» (եր. 118), որ նշանակում է եղջերու Աստվածատուր։

Հոգևորականներն անգամ առանց այս տեսակ մականունների չեն, օրինակ, «Արծիվ-Թադեոս-եպիսկոպոս» (եր. 56), «Ալբեթյան վարդապետ» (եր. 56), «Ասլան-Մահրասա-Մեսրոպ վարդապետ» (եր. 57), «Օղլան-քեշիշ» (եր. 133), այսինքն՝ տղամարդ քահանա, «Քորօղլի-քեշիշ» և այլն, և այլն։ Եթե ժամանակ ունենայի «Գաղտնիք»-ի բոլոր ծալքերը քրքրելու, գուցե հարյուրներով կգտնեի այս տեսակ անուններ, բայց ինչ որ գտա, դասավորեցի և նկատողություններով մատնանիշ արեցի այն անբնական արհեստականության վրա, որով կազմված են այդ անունները, և որոնք պարզ ցույց են տալիս իրանց պատմական անգոյությունը։

Մի խոսքով, բացի այդ անուններից, որ Մակար վարդապետը առել է «Խամսայի մելիքություններից», մնացյալ համարյա բոլոր անունները այս տեսակ ուռած-փքված մականուններով կեղծյալ անուններն են, որոնք ամենևին պատմական գոյություն չեն ունեցել։

Հետաքրքիր են այդ զանազան «կայծակների», «կարկուտների», «վիշապների» և «դևերի» զորախմբերի անունները.

«Ազրայելի» («Գաղտնիք»-ի հեղինակ Աբրահամ Բեկնազարյանի) զորախումբը կոչվում է **«Արագահաս Սուրբ Սարգիս»**[1]:

1 (2) Թե սուրբ Սարգիսը և թե սուրբ Գևորգը ժողովրդի ավանդությունների մեջ, ամեն վտանգի ժամանակ, նեղյալներին օգնության են հասնում, այդ պատճառով սուրբ Սարգիսը կրում է «Արագահաս» մականունը, իսկ սուրբ Գևորգը «զորավոր»։

«Քարօղլի-քեշիշի» (Քարօղլի-տերտերի) զորախումբը կոչվում է «Հրեղեն Թուր»։

«Խուդադատ-բեկը» կոչվում է «Սուրբ-Գևորգ»[2], իսկ յուր զորախումբը կոչվում է «Ջուր–Տո–Քշի», որ նշ. է սաստիկ հորդած հեղեղ, որ ամեն ինչ քշում տանում է։

«Վանի-Յուզբաշին» կոչվում է «Հայկ Դյուցազն», իսկ յուր զորախումբն կոչվում է «Զարապատիժ-Դժոխք»[1]։

«Նևառուստէմլի» զորախումբը կոչվում է «Հրեղեն Նեձակ»:

Մակար վարդապետը այն աստիճան հափշտակված է եղել այդ անուններով, որ միևնույն երեսի վրա (եր. 278) «Քարօղլու» անունը երկու անգամ է կրկնում, և ամեն անգամին նրա զորախմբին զանազան անուններ է տալիս. նախ «Հրեղեն-Թուր», իսկ երկու տողից հետո՝ «Ծեփի-Անցկաց», որ նշ. զարկիր անցիր։

Մակար վարդապետը միայն մոռացել է այդ զորախմբերի դրոշակները նկարագրել։ Իհարկե նրանք էլ զանազան հրեշների և ճիվաղների նշաններով կլինեին զարդարված։

Ղարաբաղի մելիքները երբեք կանոնավոր զորք չեն ունեցել, որ նրանց զորքերը զանազան գնդերի բաժանված լինեին, և այդ գնդերը զանազան անուններ ունենային։ Նրանց ժամանակում ամեն մի ղարաբաղցի զինվոր էր։ Երբ թշնամին մոտենում էր, մելիքը բարձրանում էր յուր տան կտուրի վրա, ձայն էր տալիս և նույն րոպեում յուրաքանչյուր գյուղացի առնում էր զենքերը, նստում էր ձին և հետևում էր մելիքին։

---

1 Երբ «Գաղտնիք»-ի մեջ մտնում են իսկապես պատմական անձնավորություններ, որոնց ժառանգներն ներկայումս ևս գոյություն ունին, և մանավանդ, երբ այդ ժառանգները որևէ նշանակություն ունեցող մարդիկ են,—այդ դեպքում հեղինակի շողոքորթությունները ոչ չափ ունեն և ոչ սահման։ Վանի յուզբաշին, որ հետո եղավ Մելիք-Վանի, պատմական անձնավորություն է։ Նրա մասին խոսվել է «Խամսայի մելիքությունների» մեջ (եր. 285—299)։ Նրա մասին խոսում է և Դուբրովինը (Ист. войн. и влад. рус. на «Кавказе», т. IV, ст. 451, 452). Մելիք-Վանիի թոռները այժմյան Աթաբեկյաններն են, որոնց ամեն օր տեսնում ենք։ Հարցրեք նրանցից որին որ կամենում եք, թե ձեր պապը որևիցե ժամանակ կոչվե՞լ է «Հայկ Դյուցազն» կամ նա ունեցե՞լ է մի հզոր կազմակերպված զորախումբ, որ կոչվում էր «Զարապատիժ-դժոխք»: Ես հավատացած եմ, որ ամեն մի Աթաբեկյան խիստ կուշտ ծիծաղելուց հետո, կասե ձեզ. «Այդ ո՞վ է հնարել, մեր պապը երբեք այս տեսակ բաներ չէ ունեցել...»։

Ճշմարիտ է, ժողովուրդը յուր հասկացողության համեմատ, յուր հերոսներին մականուններ է տալիս։ Բայց այն տեսակ հերոսներ, որ իրանց գործողություններով սաստիկ ազդում են ժողովրդի երևակայության վրա, պաշտելի են դառնում և ժողովրդից մականուններ են ստանում,—այս տեսակները դարերի ընթացքում հայտնվում են մի կամ երկու հատ միայն։ Հայոց ամբողջ պատմության մեջ Հայկ—Դյուցազն, Վահագն Վիշապաքաղ, Տորք-Անգեղա, Հովհան-Քոչ, Գայլ-Վահան, Աշոտ-Երկաթ, Աշոտ-Մսակեր, Գող-Վասիլ, Առյուծ-Խաչիկ, դրանք այնպիսի հերոսներ են, որոնց նմանները ուրիշ դարեր չեն ծնել։ Դրանց անվան հետ ժողովուրդը կապել է յուր զգացմունքը, յուր երգերը և յուր առասպելաբանական էպոսը։

Բայց «Գաղտնիք»-ի մեջ հանկարծ և միաժամանակ բուսնում են 60—70 հերոսներ, որոնցից և ոչ մեկը առանց մականունի չէ։ Դա պատմական խեղություն չէ, դա մի անբնական վիժմունք է, միայն Մակար վարդապետի գլխից։ Որովհետև մարդկային պատմությունն ունի յուր անխախտ օրենքները, յուր հղությունը և յուր ծնունդը։

Զարմանալին այն է, որ հիշյալ 60—70 հերոսներից, ամբողջ 50-ը Մակար վարդապետի գյուղացիներն են Խնածախից՝ մի գյուղից, որ ընդամենը 50 ընտանիքից է բաղկացած։ Յուրաքանչյուր ընտանիք ծնել է մի-մի «Կայծակ» և մի-մի «Կարկուտ», մի-մի «Վիշապ» և այլն։ Եվ դրանք հասարակ մարդիկ չեն, այլ ամենքը Ղարաբաղի մելիքների մոտ «հարյուրապետի», «հազարապետի», «զորավարի» պաշտոն են վարում։ Կարծես ամբողջ Խնածախը մի զինվորական դասակարգ լիներ, և զորապետությունը միայն այդ գյուղացիների արտոնական ժառանգությունը լիներ։ Որտե՞ղ կորան նրանց սերունդները։ Եթե զորապետներ էին, հարկավ և՛ ազնվականներ էին, և՛ կալվածատերներ էին։ Բայց ամբողջ Խնածախը ոչ մի ազնվական չունի, ոչ մի կալվածատեր չունի։ Ամենքը Իբրահիմ-խանի ժառանգների հասարակ գյուղացիներն են և նրանց հողերն են մշակում։

Ինձ հայտնի են փաստեր, որ շատերը այնքան ճարպիկ, այնքան նախանձախնդիր են գտնվել ազնվականություն ժառանգելու, որ բոլորովին գռեհիկ գյուղացիներ, անհայտ ծագումից, ձեռք բերելով մի որևէ վկայական, իրանց տոհմը կապել են այս և այն

մելիքի կամ բեկի տոհմի հետ, կրելով նրանց ազգանունները։ Եթե Խնածախի ամբողջ 50 ազնվատոհմ ընտանիքների սերունդները բոլորովին ջնջվեին (որ անկարելի բան է), դարձյալ կգտնվեին մարդիկ, որ իրանց ժառանգ կհայտնեին, և նրանց տոհմանունները կպահպանվեին։ Բայց հիշյալ 50 ազնվական հերոսների և ոչ մեկի ժառանգներն են մնացել թե Խնածախում և թե մի այլ ուրեք։ Իսկ ժամանակները դեռևս այնքան չեն անցել, որ կարող լինեին իսպառ կլանել և անհետացնել նրանց։ Եվ վերջապես, ի՞նչ եղան այդ «Վիշապների» և «Վիշապազունների» կալվածքները։ Ղարաբաղի մելիքներից և նրանց մոտ ծառայող «յուզբաշիներից»[1] չկար մեկը, որ գյուղեր, անտառներ և ընդարձակ կալվածներ չունենար։ Եվ այսօր նրանց սերունդներից շատերը վայելում են հայրենական ժառանգությունը։ Իսկ Մակար վարդապետի ստեղծած 60—70 հերոսները, որոնք ամենքը զորապետներ և զորավարներ էին, մնում են առանց որևէ ժառանգության[2]։

Մելիքների տիրապետության դարերում, այնքան պատերազմական փայլուն գործողությունների մեջ, անկարելի էր, որ Ղարաբաղը նույնպես չունենար յուր հերոսները, որոնց սիրեր ժողովուրդը, որոնց յուր հատուկ տիտղոսը տար ժողովուրդը։ Դրանց թիվը շատ չէ, երեք հոգի է միայն—Դալի-Մահրասանը, Թյուլի-Արզումանը և Չալաղան—Յուզբաշին։ Առաջին երկուսի անունները Մակար վարդապետը առել է «Խամսայի մելիքություններից» և մտցրել է յուր յոթանասնից անունների մեջ, իսկ վերջինը չէ հիշվում։

1 Ղարաբաղի մելիքները միայն մեկ զինվորական աստիճան են ունեցել և այդ «յուզբաշի» (հարյուրապետ) աստիճանն է, թեև «յուզբաշին» կարող էր հարյուրից ավելի պատերազմողներ ունենալ յուր ձեռքի տակ։ Բայց Մակար վարդապետը ստեղծել է «հազարապետներ» և այլ զանազան աստիճաններ։

2 Մակար վարդապետը յուր ծանոթությունների մեջ (եր. 21, 63, 64, 65, 68) անդադար կրկնում է հինգ հասարակ անուններ՝ Բեյլունց, Սղուրլունց, Ջլանց, Աթոնց, Գյուլ-Ուհան,—և խիստ միամիտ կերպով ավելացնում է. «Այս մականուններից շատերն (՞) ցարդ մնացած են Խնածախում... իսկ ոմանք չեն հիշվում. քանզի ժամանակի երկարությունը (ընդամենը 50—60 տարի) ջնջած է հասարակության միջից»։ Հայր սուրբը չգիտե, որ իր ստեղծած հսկա անձնավորությունները շատ խոշոր հիշատակներ պետք է թողած լինեին՝ իրանց պատմական գոյությունը ապացուցանելու համար։

Ժողովրդական հերոսները ժողովրդի ավանդությունների մեջ ոչ թե մնում են, այլ դարերի ընթացքում հետզհետե աճում են, մեծանում են, և մինչև անգամ, ինչ որ նրանց ժամանակներում և նրանց ձեռքով չէ կատարված,—ժողովուրդը հատկացնում է նրանց։ Օրինակ, վեր առնենք Քոռօղլին։ Սկսյալ Թիֆլիսից մինչև Երևան և Երևանից մինչև Հին-Բայազետ և այնտեղից մինչև Կարին, ո՞ր լեռան գագաթին մի ավերակ կտեսնեք, ձեզ կասեն՝ «դա Քոռօղլու բերդն է», թեև նրանցից և ոչ մեկը Քոռօղլու բերդը չի եղել։ Վրաստանում ամեն մի ավերակ հատկացնում են Թամար թագուհուն։ Շուշի բերդի ստորոտում, քարաժայռի մեջ, կա մի ընդարձակ այր՝ զանազան ամրություններով, իսկ նրա հանդեպ, նույնպես քարաժայռի ճակատին, կա մի երկրորդ այր, դարձյալ ամրացրած պարիսպներով և բուրգերով։ Առաջինը հատկացնում են Սյունյաց հերոս Դավիթ-Բեկին, իսկ երկրորդը՝ Դուզարաց հերոս Ավան-Յուզբաշուն, թեև երկուսն էլ այս կողմերում ամրոցներ չեն ունեցել։

Ժողովուրդը յուր հերոսներին ավելի է տալիս, քան թե նրանք ունեցել են։ Իսկ ինչ որ իսկապես ունեցել են,—այն պահում է յուր հիշողության մեջ անմոռաց։

Ես, իհարկե, չեմ խոսում Ղարաբաղի մելիքների մասին, որոնց բերդերը, ամրոցները և պալատների ավերակները մինչև այսօր մնում են։ Իմ խոսքը ժողովրդական հերոսների մասին է։ Ղարաբաղի պատմության մեջ որպես վերևում հիշեցի, միայն երեք անձնավորություններ կան, որոնց անունների հետ կապված են ժողովրդի ամենասրտագին ավանդությունները։ Դրանք են Դալի-Մահրասան[1], Թուլի-Արզումանը[2] և Ջալաղան-Յուզբաշին[3]։ Ես

---

1 Դալի-Մահրասա նշանակում է խենթ վարդապետ, դա Եղիշե Առաքյալի վանքի վանահայրն էր, որը գտնվում էր Թարթար գետի ձախ կողմում։ Նրա իսկական անունը Ավագ վարդապետ էր։ Մելիքների ժամանակ յուր զարմանալի քաջագործություններով՝ այդ հերոս վարդապետը անմոռաց անուն թողեց։ Տե՛ս «Խամսայի մելիքությունները», եր. 80—91, 135, 155, 157, 201, 202, 280, 348։

2 Թուլի-Արզուման, նշանակում է Ավաղակ Արզուման։ Դա Ջրաբերդի Մելիք-Ադամի և նրա որդի Մելիք-Միջլումի քաջերից մեկն էր, որին հանձնում էին ամենահանդուգն և ամենավտանգավոր ձեռնարկությունները։ «Խամս. մելիքություն-ները», եր. 83—91, 134—198։

3 Ջալաղան-Յուզբաշի. նշ. հափշտակող կամ ասպատակող հարյուրապետ։ Այդ անունը ստացավ նա մեծամեծ հարվածների և ավարառությունների պատճառով,

տեսել եմ այն աշտարակը Եղիշա Առաքելո վանքի մոտ, որի մեջ բնակվում էր Դալի-Մահրասան և որի բարձրությունից սարսափ էր տարածում Ղարաբաղի թշնամիների վրա։ Ես տեսել եմ Թուլի-Արղումանի ամրոցը՝ Երից-Մանկանց վանքի հանդեպ, Թըրղի գետի ափի մոտ, այն սոսկալի և մթին խոխոմների մեջ, ուր և այժմ նայողը զարհուրում է։ Ես տեսել եմ նույնպես Ջալալան-Յուզբաշու ամրոցի ավերակները Թարթարի վրա, այն անտառապատ թավուտների մեջ, ուր բույն էր դրել այդ հափշտակող գիշակերը[1]։ Ամեն մի գյուղացի մատով ցույց է տալիս այդ տեղերը և նրանց մասին պատմում է շատ և շատ զարմանալի բաներ... Իսկ այդ անմոռանալի անձնավորությունները «Գաղտնիք»-ի մեջ շատ աննշան դեր են կատարում։ Որի ընդհակառակն, Մակար վարդապետի հնկանները հրաշքներ են գործում, բայց ոչ մի շոշափելի հիշատակ չեն թողնում...

Մակար վարդապետը ամբողջ Ղարաբաղում կարո՞ղ էր ցույց տալ մի բերդ, մի ամրոց, և վերջապես մի ավերակ շենք, որոնց հիշատակը կապված լիներ յուր հերոսների անունների հետ։ Նրա Ագրայելը («Գաղտնիք»-ի հեղինակ Աբրահամ Բեկնազարյանը) յուր հրամանի ներքո ուներ 5000 կանոնավոր զորք և 3000 անկանոն զորք (եր. 94), բայց ոչ մի ամրոց կամ բերդ ուներ։ Ղարաբաղի մելիքներից և ոչ մեկը ունեցել է այդքան զորք[2], բայց ամենքը բերդեր և ամրոցներ ունեին։ Մի տանձենի միայն Խնածախ գյուղում պահպանում էր Բեկնազարյանների անունը, այն ևս Մակար վարդապետը թուրքերի ձեռքով կտրել է տալիս և յուր հերոսների անունները իսպառ անհետացնում է (եր. 398)...

Այդ բոլորից հետո շատ պարզ է, որ Մակար վարդապետի 60—70 հերոսները իրանց այլանդակ և հրեշավոր մականուններով, որոնց ներկայացնում է նա «Գաղտնիք»-ի մեջ իբրև պատ-

---

որ կատարեց Ղարաբաղի թշնամիների վերաբերությամբ։ «Խամսայի մելիքությունները», եր. 83, 86, 384։

1 Ջալալան նշանակում է և ցին կամ ուրուր կոչված գիշակեր թռչունը։

2 Մակար վարդապետը փավստոսյան չափազանցությամբ զարմանալի շատ զորքեր է տալիս յուր հերոսների ձեռքը։ Երբ Պետրոս Մեծը պիտի գար Գանձակ, Ղարաբաղի բոլոր կայսրին դիմավորելու և իրանց ուժը ներկայացնելու համար, Ղարաբաղի մելիքները միասին կարողացան դուրս բերել Կոշկար գետի մոտ 12.000 զորք միայն։ «Պատմություն Աղվանից», տպված է Շուշի, 1839 ամ. եր. 58։

մական անձնավորություններ,—ամենը միասին վերառած, երբեք պատմական գոյություն չեն ունեցել։ Նրանք մինչև անգամ ժողովրդի ավանդությունների մեջ առասպելաբանական գոյություն չունեն։

Նրանք հայր սուրբի վառ երևակայության ծնունդն են և ավելի ոչինչ...

Հետևյալ գլխում ցույց կտանք այն պատկերը, որի մեջ գործում են այդ հերոսները։

## Ձ

Այժմ ներկայացնենք այն պատկերը, որի մեջ նկարագրված է Շուշի բերդի պաշարումը Աղա-Մամադ-շահից։

1795 թվին Աղա-Մամադ-շահը 60.000 (՞) զորքերով պաշարում է Շուշի բերդը։ Բերդում ամրացած է Իբրահիմ-խանը, որ իրան թե այդ բերդի և թե Ղարաբաղի իշխանն էր համարում։ Շրջակա հայոց գյուղերի բնակիչները վաղօրոք փախել և մտել են բերդը։ Այնտեղ պատսպարված են նաև Մակար վարդապետի հերոսների ընտանիքները՝ խնածախցիք։ Տները մնացել են դատարկ։

Խնածախցի «քաջերը», թվով 20 հոգի, ալյուր են կրում դեպի բերդը, որպեսզի պաշարյալները առանց պաշարի չմնան։ Դրանք նույն «կայծակներն», «կարկուտները», «վիշապներն» և զանազան հսկաներն են, որոնց հետ ծանոթացանք նախորդ գլխում։ (Այստեղ Մակար վարդապետը մոռացել է յուր հերոսների իսկական նշանակությունը և, նրանց հասարակ գյուղացիների տեղ դնելով, ալյուր է կրել տալիս, մինչդեռ նրանց յուրաքանչյուրը մի քանի հազար զինվորների հրամանատար էր)։

Հանկարծ 20 հոգի խնածախցի ալյուր տանողներին պատահում են Աղա-Մամադ-շահի սարվազները (զինվորները)։ Այդ միջոցին խնածախցիների հետ միանում են 60 բալլուջեցիներ, որոնք նույնպես ալյուր էին տանում բերդը։ Մակար վարդապետի «քաջերի» թիվը դառնում է 80 հոգի։

Խնածախցի քաջերի թվում գտնվում է և «Ազրայելը»՝ Մակար վարդապետի ստեղծած հոգեհան հրեշտակը,—այսպես էր կոչվում «Գաղտնիք»-ի հեղինակ Աբրահամ Բեկնազարյանը։ Հոր հետ լի-

նում է և որդին՝ Աբրես Բեկնազարյանը,—«Գաղտնիք»-ի երկրորդ հեղինակը։ Աբրայելը, տեսնելով շահի սարվազներին, որ ուղիղ դիմում են դեպի Խնածախ, հասկանում է նրանց դիտավորությունը և պատրաստվում է մյուս «քաջերի» հետ պաշտպանել գյուղը։

Շահի զորքերին առաջնորդում էր հայազգի գնդապետ Հովհաննես Մելիք-Հայկազյանը, որ ուներ յուր հրամանի ներքո «2000 կանոնավոր և 2000 անկանոն սարվազներ» (երբ սարվազներ էին, անկանոն չէին կարող լինել)։ Նրանց հետ միացած էին 3000 ձիավորներ երկու «հազարապետների» գլխավորությամբ, որոնց մեկի անունը Սուլեյման էր, իսկ մյուսի անունը՝ Իստամազ։ Եվ այսպես, թշնամու ամբողջ զորությունը բաղկացած էր 7000 հետևակ և ձիավոր զինվորներից։ Այդ ահագին բազմությունը գալիս էր երկու դատարկ գյուղեր ոչնչացնելու՝ Խնածախը և Բալլուջան, որոնց բնակիչները փախել, մտել էին Շուշի բերդը։

Բացի 80 հոգի ալյուր տանողները մնացել էին բերդի դրսում։ Դրանք հանդիպում են շահի զորքերին։ Կռիվը սկսվում է հենց Խնածախի մոտ։ Մի քանի ժամվա մեջ երեք անգամ ճակատամարտ է լինում, և ամեն անգամին Շահի զորքերը տերևների նման թոթափվում են այդ մի բուռն «քաջերից»՝ թողնելով պատերազմի դաշտում դիակների ահագին բազմություն։

Սուլեյման և Իստամազ «հազարապետները» սպանվում են և նրանց հրամանատարության ներքո գտնված 3000 ձիավորներից մի հատ էլ չէ մնում,—հայոց «քաջերը» բոլորին ամբողջապես կոտորում են (եր. 37)։ Իսկ հետևակ սարվազներից կոտորում են 2671 հոգի, որոնց թվում կային 1 հազարապետ և 8 հիսնապետ (եր. 34)։ Եվ այսպես, թշնամուց սպանվածների ամբողջ թիվը լինում է 5671 հոգի։

Իսկ հայոց «քաջերից» սպանվում են 2 հոգի միայն...

Հաղթությունը մնում է 80 հոգի ալյուր տանողների կողմը...

Այդ սարսափելի ստախոսությունից հետո «Գաղտնիք»-ի հեղինակ Աբրահամ Բեկնազարյանը, որ ինքը անձամբ մասնակցում էր կռվին, դեռևս երես ունի ասելու. «Սպանվածների քանակությունն թերևս չափազանցություն կերևի ընթերցողաց, բայց մենք ճշմարտությամբ գրեցինք» (եր. 34)։

Եթե Աղա-Մամադ-շահի զորքերը ամբողջապես ոտները կա-

պած հավերից բաղկացած լինելին, դարձյալ անկարելի էր մի քանի ժամվա մեջ 5671 հավ կոտորել։

Բայց այդ մի քանի ժամվա մեջ Մակար վարդապետի «քաջերը» ուրիշ գործեր էլ կատարեցին։ Նախ՝ բոլոր 5671 սպանվածների դիակները թաղեցին հողի տակ, և իրանց հաղթությունը հավերժացնելու համար, նրանց վրա բարձր հողաբլուրներ կանգնեցրին։ Հետո Սուլեյման հազարապետի ընկած տեղի անունը կոչեցին «Սուլեյմանի խութ», իսկ Իստամաղ հազարապետի ընկած տեղի անունը կոչեցին «Իստամաղի ձոր»։ Բայց այն տեղը, ուր թշնամուն կենդանի այրել էին, կոչեցին «Կոռուտ», որ մահմեդականաց դերեզմանատուն է նշանակում (նկ. 35, 37)։

Այդ հիշեցնում է Ջենոբի և նրա պատմությունը շարունակողի միամտությունը, որ ամեն մի կռվից հետո, դեպքերի համեմատ, տեղերին անուններ են տալիս։

Երբ ամեն ինչ վերջացած էր, Գյուլ-Ուհանը գայլի նման ոռնում է, և բոլոր «քաջերը» խաղաղ և հանգիստ կերպով նստում են բաց օդի մեջ ճաշելու (նկ. 38)։ Հետաքրքիր է, թե ո՞վ պատրաստեց նրանց համար այդ ճաշը։ Ամբողջ Խնածախը այրված էր, իսկ «քաջերի» ընտանիքները գտնվում էին Շուշի բերդում։ Բայց բանը դրանում չէ, երևի, երկնքից իջավ ճաշը,—բանը նրանումն է, որ ճաշելուց հետո, նոր կնքված «Կոռուտի» մոտ՝ անմիջապես կազմվեցավ «քաջերի» խորհուրդը, որ Կ. Պոլսի այժմյան հեղափոխականների ժողովի ճիշտ ձևը և համանման կազմակերպությունն ուներ։ Այդ ժողովի մասին ես կխոսեմ հետո, բայց տեսնենք ի՞նչ եղան Շահի մնացած զորքերը, ի՞նչ եղավ գնդապետ Մելիք-Հայկազյանը։ Այդ զորապետը կարծես եկել էր նրա համար միայն, որ ձեռքերը ծալած կանգնի և ամենայն սառնասրտությամբ ականատես լինի, թե ինչպես մի բուռն գյուղացիներ կոտորում են յուր հրամանատարությանը հանձնված զորքերը, որ հետո գնա և յուր թագավորին խաբար տանի, որի 60.000 զինվորներից բաղկացած բանակը դրած էր մի քանի քայլ հեռավորության վրա։

(Ավելորդ չեմ համարում հիշեցնել, որ Խնածախ գյուղը Շուշի բերդից 2 ժամվա հեռավորություն ունի, իսկ բերդը այդ միջոցին պաշարված էր Աղա-Մամադ-շահի զորքերով։ Այստեղ 80 գյուղացիներ կոտորում էին շահի զորքերը, իսկ այնտեղ 60.000

զինվորներից բաղկացած բանակում հրացանների ձայնը չէին լսում, որ գոնե օգնության հասնեին։ Իսկ շահի զորապետները այնքան հիմարվեցան, որ մի մարդ էլ չուղարկեցին բանակը օգնության խնդրելու և իզուր տեղը 5671 զինվոր կոտորել տվին...)։

Կրկնում եմ, ի՞նչ եղավ գնդապետ Մելիք-Հայկազյանը։

Կռվի սաստիկ ջերմության միջոցին՝ պատահեց մի միջանկյալ դեպք. առանց որևէ ստիպողական պատճառի, չնայելով, որ հաղթությունը յուր կողմն էր, խնածախցի «քաջերի» հրամանատար Աբրահամ Բեկնազարյանը («Գաղտնիք»-ի հեղինակը) յուր զենքերը դրեց Մելիք-Հայկազյանի ոտքերի տակ և անձնատուր եղավ։ Վերջինը ամենայն ազնվությամբ նրա զենքերը հետ տվեց և իսկույն բարեկամացան, սկսեցին միմյանց քաղցր խոսքերով ողջագուրել։ Իսկ նրանց աչքերի առջև խնածախցիները դեռ շարունակում էին կոտորել շահի զորքերը։ Մելիք-Հայկազյանը այն աստիճան հափշտակված էր հայր և որդի Բեկնազարյաններով, որ կարծես արբեցած լիներ նրանց սիրով, և ամենևին չէր նկատում, թե՝ ինչպես են կոտորում յուր զորքերը։ Նա այնքան բարի գտնըվեցավ, որ որպեսզի փոքրիկ Ասրես Բեկնազարյանը չվախենա այլանդակված դիակներից, առից պատանին և նրա հոր հետ մեկուսացավ դեպի մի այլ կողմ։ Իսկ խնածախցիք շարունակում էին կոտորել (եր. 24, 25)։

Այդ միջոցին հայտնվում են երկու սուրհանդակներ և բերում են երկու նամակներ։ Մեկը՝ շահը ուղարկել է գնդապետ Մելիք-Հայկազյանին, մյուսը՝ Մելիք-Մեջլումը, որ նույնպես շահի բանակում էր գտնվում, ուղարկել էր Աբրահամ Բեկնազարյանին։

Շահը գրում էր յուր նամակի մեջ, թե Սուլեյման և Իսամալ «հազարապետները» խաբել են իրան։ (Դրանք նույն անձինքն են, որ իրանց 3000 ձիավորների հետ սպանվեցան խնածախցի «քաջերից»)։ Թե այդ մարդիկը Իբրահիմ-խանի գործիքներն են եղել, և նրա թելադրությամբ ուղարկված են եղել յուր բանակը. որպեսզի առերես շահին բարեկամ ձևանալով, կարողանան յուր (շահի) ձեռքով Խնածախ և Բալլուջա գյուղերը ոչնչացնել տալ։ Թե այդ մարդիկ դիմեցին իրան, հավատացնելով, որ խնածախցիք և բալլուջացիք շահի թշնամիներն են և Իբրահիմ-խանի բարեկամները։ Այդ պատճառով ինքը (շահը) նրանց «հազարապետության» (՞) աստիճան շնորհելով իրանց 3000 ձիավորներով կարգեց իր

առաջնորդ գնդապետ Մելիք-Հայկազյանին, որ գնան հիշյալ գյուղերը ոչնչացնելու և այլն։

(Եթե Մելիք-Հայկազյանը մի այսպիսի հրահանգ էր ստացած, այդ ամբողջ պատմությունը պետք է առաջուց գիտենար, ի՞նչ հարկ կար, որ շահը նորից գրեր նրան, այն էլ մի քանի քայլ հեռավորությունից, երբ ավելի հեշտ էր մի աստիճանավոր ուղարկել և հրամայել նրան, թե հետ դարձեք)։

Շահը յուր երկար նամակը վերջացնում էր, պատվիրելով Մելիք-Հայկազյանին, որ Սուլեյմանին և Իսամազին կենդանի յուր մոտ բերե պատժելու համար, իսկ հիշյալ գյուղերին ամենափոքր վնաս անգամ չպատճառե։

Մելիք-Մեջլումի նամակը նույն միտքն էր հայտնում շահի խաբված լինելու մասին, հետո շարունակում էր մի երկար պատմություն Ղարաբաղի հարազատ և անհարազատ մելիքների մասին, Ղարաբաղի հարազատ և անհարազատ կաթողիկոսների մասին, շահի խոստումների մասին վաղեմի մելիքությունները վերականգնելու և այլն։ Վերջը հրավիրում էր Աբրահամ Բեկնազարյանին, որ յուր հետ առնելով խնածախցի և բալլուջեցի «քաջերին», դիմե շահի բանակը, խորհուրդ տալով, թե ավելի նպատակահարմար էր ծառայել շահին և սպասել նրա խոստումներին և այլն։

> «Հայրս,—շարունակում է որդի Բեկնազարյանը,—խընդրեց շահի նամակի հայերեն պատճենը. գնդապետն հայերեն թարգմանեց և հայրս մատիտով գրեց թղթի վրա։ Մելիք-Հայկազյանն զարմանք հայտնեց հորս նախապատրաստության վրա, որն կրում էր միշտ յուր վրա թանաքաման, թուղթ և գրիչ» (եր. 32)։

Այսօր անգամ Խնածախ գյուղում անկարելի է մի հատ մատիտ գտնել։ Իսկ Աբրահամ Բեկնազարյանը գործ էր ածում մատիտ. գիտե՞ք երբ,—1795 թվին, մեզանից 90 տարի առաջ, երբ Անգլիայում մատիտի անունն անգամ չէին լսել։ Եվ հետո քըրքըջելին այն է, որ կռվի միջոցին, «Գաղտնիք»-ի հեղինակը զենքերի հետ կրում էր յուր վրա **թուղթ, թանաքաման** և գրիչ… Այդ բոլոր նախապատրաստությունները տարակույս չկա, որ «Գաղտնիք»-ի համար էին, և հենց այդ նպատակով Աբ. Բեկնազարյանը խնդրեց շահի նամակի հայերեն թարգմանությունը։ Եվ շահի միա-

միտ գնդապետը յուր Թագավորի պաշտոնական նամակի պատասխանը հանձնեց «Պաղտնիք»-ի հեղինակին, հենց նույն րոպեում, երբ խնածախցիք նրա աչքերի առջև դեռ շարունակում էին կոտորել յուր զորքերը։ Կարծես, դա նրա համար միայն եկած լիներ, որ «Պաղտնիք»-ին մի նոր նյութ մատակարարեր...

Իսկ Աբրահամ Բեկնազարյանը ոտքի վրա գրում էր Մելիք-Մեջլումից ստացած նամակի պատասխանը։ Երբ վերջացրեց, սուրհանդակին ճանապարհ դրեց։

Խնածախցիք դեռ կոտորում էին...

Աբրահամ Բեկնազարյանը յուր որդուն՝ փոքրիկ Ասլանին հանձնում է գնդապետի պահպանությունը, իսկ ինքը անցնում է գետի անտառի կողմը, որտեղ կռիվը նորից բորբոքվել էր։ Շահի բարեխիղճ գնդապետը մնում է այնտեղ և այժմ դայակի պաշտոն է կատարում... (եր. 33)։

Այդ բոլորը շատ հասկանալի է, սպիտակ թելով կարկատած զառանցություններ են, մի այնպիսի մարդու գլխից ծագած, որ ինչպես երևում է, յուր կյանքում ոչ պատերազմ է տեսել և ոչ գիտե պատերազմող մարդու պարտավորությունները։ Մելիք-Շահնազարյանը յուր Թագավորին դավաճանած կլիներ, եթե թույլ տար, որ յուր հրամանին հանձնված զորքերը կոտորվեին, իսկ ինքը զբաղվեր թարգմանություններով կամ յուր ախոյանի որդուն պահպանելով...

Բայց բանը դրանում չէ։ Ես ավելորդ չեմ համարում ցույց տալ այն ծիծաղելի խնդիրը (բանսարկությունը), որ Մակար վարդապետի նկարած պատկերի հյուսվածքն է կազմում։

Երևակայեցեք, Խնածախ և Բալլուջա գյուղերը, որպես նախորդ գլխում տեսանք, Իբրահիմ-խանի սեփական կալվածներն էին։ Եթե այդ գյուղացիները անհավատարիմ հայտնվեցան, Իբրահիմ-խանը, որ այսօր պարսից ահարկու Թագավորին յուր 60.000 զորքերով պահել էր յուր անմատչելի բերդի պարիսպների մոտ[1],—մի՞թե նույն Իբրահիմ-խանը չէր կարող մի հարվածով ոչնչացնել հիշյալ գյուղերը, որոնց երկուսը միասին միայն 120 բնակիչներից էին բաղկացած։ Այն բարբարոսը, որ Ղարաբաղի վարդեմի մելիքությունները ոչնչացրեց և նոր, իրան հավատարիմ մելիքություններ ստեղծեց,—այն երևելի խորամանկը, որ Ղարաբա-

1 Այս անգամին Աղա-Մամադ շահը չկարողացավ գրավել շահի բերդը։

ղի Հարազատ կաթողիկոսությունը ոչնչացրեց և նոր, իրան հավատարիմ կաթողիկոսություն ստեղծեց։— Մի՞թե չէր կարող առաջուց պատժել յուր գյուղացիներին, երբ հայտնվեցավ նրանցից անհավատարմությունը։ Իսկ այսօր, երբ թշնամին յուր ահարկու զորությամբ պաշարել է նրա բերդը, մի այդպիսի տագնապի ժամանակ, Իբրահիմ-խանը, ամեն հոգսեր թողած, յուր գյուղացիներին պատժելու մասին է մտածում,— այն գյուղացիներին, որոնց ընտանիքները պատսպարված են յուր բերդում, իսկ տղամարդիկը այլուր և պաշար են կրում յուր բերդը... Եվ պատժել ինչպե՞ս— Իսամայլին և Սուլեյմանին 3000 ձիավորներով ուղարկելով պարսից բանակը, որ շահին խաբեն և նրանից ետ զորքեր առնելով գնան դատարկացած Խնածախը և Բալլուջան ոչնչացնելու...

Կարծես 3000 ձիավորը բավական չէր...

Մակար վարդապետը որքան և հսկաներ ստեղծած լիներ յուր խնածախցիներից, բայց դարձյալ այդ բոլորը շատ և շատ ծիծաղելի է։

Եվ, վերջապես Աղա-Մամադ-շահը, որ այնքան զորեղ իշխանություններ էր կործանել Պարսկաստանում,— նրա համար ի՞նչ նշանակություն ունեին երկու չնչին գյուղերի բարեկամությունը կամ թշնամությունն, որ նրանց վրա առանձին ուշադրություն դարձներ, և յուր գնդապետներին և հազարապետներին 7000 ձիավորներով ուղարկեր այդ դատարկ գյուղերը ոչնչացնելու։

Բայց Մակար վարդապետը այնքան քաջ գտնվեցավ, որ յուր դրացի 80 հսկաների ձեռքով բոլորին կոտորել տվեց։

Այժմ տեսնենք հսկաների ժողովը, որ տեղի ունեցավ այդ կոտորածից հետո, բաց օդի ներքո, սպանվածների թարմ գերեզմանների մոտ, որի անունը արդեն կոչել էին «Կոռուտ»։

> «Ճաշից հետո կազմվեցավ ժողով։ Նախագահ ընտրվեցավ Քյանդախուտա խաչատուրն, որն առաջարկեց ժողովին. «Մի քանի ստիպողական և ամենակարևոր խնդիրներ կան ժողովով լուծելիք, Ճըռ-խանությունն և Ճըռ-մելիքությունն[1] ոչնչացնելու խնդիր, Հարազատ մելիքությունն և Հարազատ

---

1 Ճըռ-խանություն կոչում է հեղինակը Իբրահիմ խանի իշխանությունը, որ բռնությամբ տիրապետել էր Ղարաբաղը։ Իսկ Ճըռ-մելիքություն կոչում է Իբրահիմ խանի կուսակից մելիքությունները, որոնք բաժանված էին Ղարաբաղի Հարազատ մելիքների միաբանությունից։

կաթողիկոսությունն վերականգնելու խնդիր, մեր ընտանյաց կյանքի ապահովության խնդիր, մեր ծառայությունը վարձատրելու խնդիր, մեր կենաց խնդիր, շահի և Մելիք-Մեջլումի հրավերը ընդունելու կամ մերժելու խնդիր։ Ահա այս խնդիրները պետք է լուծել կարգավ վիճաբանելով ինչպես մինչև ցարդ զորապետական խորհուրդներով լուծված են այնպիսի ծանր խնդիրներ։ Միայն, խնդրեմ ամեն ոք ձեզնից պետք է խոսի ազատորեն, կարծիք հայտնե պարզությամբ, հեռատեսությամբ և նուրբ կշռադատությամբ» (եր. 38)։

Առաջինը խոսում է «Գաղտնիք»-ի հեղինակ Աբրահամ Բեկնազարյանը մի երկար ճառով, որ սկսում է այդ խոսքերով.

«Ղարաբաղի ճըռ-խանությունը և ճըռ-մելիքությունը, եթե մենք մեր ձեռքով ոչնչացնենք (դոնքիշոտությանը նայեցե՛ք), շատ հեշտ է. (ինչո՞ւ մինչև այսօր թողեցիք) իսկ եթե պարսից շահերին կամ այլոց հուսով թողնենք՝ ծանրակշիռ և դժվարալույծ խնդիր է»...

Պարսից շահը 60.000 զորքով պաշարել է Ղարաբաղի խանի բերդը և չէ կարողանում ներս մտնել, իսկ Աբրահամ Բեկնազարյանը շատ հեշտ է համարում յուր 80 հոգուց բաղկացած խմբով ոչնչացնել նրա խանությունը...

Յուր ճառի շարունակության մեջ «Գաղտնիք»-ի հեղինակը պատմաբանորեն բացատրում է պարսից վերջին թագավորների աննպաստ վարմունքը Ղարաբաղի հայոց մելիքների վերաբերությամբ և, վերջ ի վերջո այն եզրակացությանն է հասնում, թե շատ չի պետք հավատալ Աղա-Մամադ-շահի խոստումներին, թե նա կվերականգնե Ղարաբաղի ընկած մելիքությունները և այլն։

Հետո սկսում են այդ հարցի վրա վիճել, բայց ամենքը հերթով են խոսում, առանց մինը մյուսին խանգարելու և ամեն հռետոր զոռ է տալիս յուր լեզվի ուռած, փքած պերճախոսությանը։

«Գաղտնիք»-ի հեղինակը պատասխանում է մի այլ ճառով, որի մեջ բացատրում է Ղարաբաղի մելիքների հարաբերությունները ռուսաց հետ, սկսյալ Պետրոս Մեծից, և հասցնում է մինչև յուր ժամանակը[1]։

---

1 Թե առաջին և թե երկրորդ ճառի բովանդակությունն ամբողջապես առնըված է «Խամսայի մելիքություններից»։

Հռետորները դարձյալ սկսում են վիճել, դարձյալ զոռ են տալիս իրենց պերճախոսությանը, բայց կարգով, առանց մինը մյուսին ընդմիջելու, և ավելի կարգով, քան թե Կ. Պոլսի այժմյան Ազգային երեսփոխանական ժողովը։

Հետաքրքիրն այն է, որ ժողովի բոլոր վիճաբանությունները արձանագրվում են։

«Խորհրդականաց խոսքերն նույնությամբ գրվեցան. թերևս ապագա սերնդոց օգտակար կլինեն» (եր. 54)։

«Որոշվեցավ, որ Օշախի Բաղդասարն (Վիշապ Բաղդասարը), Զարպազանն, Քիարփեթյունն (Քալբաթինը), Փեհլուանն (Հսկան), Սլբեթյունն (Աֆլաթունը), Պողպատն և Ջափարն (կոտորողը) ալյուրները տանեին, Շուշում թողնեին, և գալով մեզ միանային բանակատեղում» եր. 55)։

«Գաղտնիք»-ի հեղինակը մյուսների հետ միասին գնում են Աղա-Մամադ-շահի բանակը միանալու պարսիկների հետ և կռվելու պաշարված բերդի դեմ, որի մեջ պատսպարված էին նրանց ընտանիքները։ Նրանք ամենափոքր երկյուղ անգամ չեն կրում, որ Իբրահիմ-խանը նրանց զավակներին, կանանցը դնել կտա նույն գնդակների դեմ, որ նրանք կարձակեն յուր բերդի վրա։

Տեսնո՞ւմ եք, այդ էշերով Իբրահիմ-խանի համար ալյուր տանող գյուղացիները ոչ միայն հրաշագործ պատերազմողներ են, այլ, միևնույն ժամանակ ուսյալ, կրթյալ, խորին քաղաքագետ և պառլամենտական անձինք են։ Նրանք պատմություն գիտեն, նրանք գիտեն անցյալը համեմատել ներկայի հետ, նրանց յուրաքանչյուրին ծանոթ են իրանց ժամանակի բոլոր պետությունների միջազգային հարաբերությունները, երևի լրագրներ ևս կարդում են...

Մակար վարդապետը պատմության, ժամանակների, սովորույթների ու կարգերի հետ այնպես է խաղում, ինչպես յուր «տեր ողորմյայի» հատիկների հետ, կարծելով թե որ կողմն և ուզի, կարող է դարձնել։ Թուրքիո հայոց ազգային սահմանադրությունը հիմնվեցավ 1860 թվականին։ Բայց Մակար վարդապետը 1795 թվին նույն սահմանադրական վարչությունը տեղափոխում է, գիտե՞ք որտեղ, յուր ծննդավայր Խնածախի գյուղը...

Ոչ միայն Խնածախի գռեհիկ գյուղացիները, որոնց հասկացողության և աշխարհայեցողության հորիզոնը իրանց գյուղի սահմանից հեռու չէր տարածվում, այլ նույնիսկ Ղարաբաղի նշանա-

վոր մելիքները, որ իսկապես հոյակապ անձնավորություններ էին,—երբեք այս տեսակ ժողովներ չեն ունեցել։ Երբ Ղարաբաղի մելիքները խորհուրդ էին կազմում, հավաքվում էին մեկի տանը, նստում էին թոնրի մոտ, մի կողմում դրած էր լինում գինին, օջախի վրա ծխում էր խորովածը, մի կողմում լաց էր լինում անհանգիստ երեխան, հարսն ու աղջիկը ոտքի վրա սպասավորություն էին անում, տանտիկինը շերեփը ձեռին կերակուր էր ածում,—և երկրի իշխողները ուտում էին և նահապետական պարզությամբ խորհում էին իրանց երկրի չարն ու բարին։

Վերջապես Մակար վարդապետի «քաջերը» մոտենում են շահի բանակին։ Ընդունելությունը կատարվում է հանդիսավոր կերպով. թե «քաջերի» խմբից և թե բանակից հնչեցնում են փողերը, «ինչպես ի հնուց սովորություն էր պարսից»[1], Մելիք-Մեջլումը, Ջավադ-խանը և մի «պատվավոր անձն» շահի կողմից դիմավորում են նրանց (եր. 135)։

, Մելիք-Մեջլումը, որ վայելում էր շահի առանձին հարգանքը[2], ներկայացնում է «քաջերին» և «հականե-հանվանե» գովաբանում է, թե նրանց մատուցած ծառայությունները, թե հավատարմությունը և թե նրանց կատարած քաջությունները (եր. 135, 136)։

Շահը պատասխանում է մի ճառով, որի մեջ հատկապես շեշտում է հայոց մատուցած վաղեմի ծառայությունների վրա, և վերջացնում այդ խոսքերով.

> «Անվարձ չեն մնալու և ձեր քաջություններն և ծառայությունն» (եր. 136)։

Ո՞ր քաջություններն, ո՞ր ծառայությունները։

---

1 Մակար-վարդապետը լսել է, որ երբ հայոց դաշնակից զորքերը մոտենում են պարսից բանակին, երկու կողմից էլ փողեր են հնչեցնում, որը միմյանց ողջունելու նշան էր։ Բայց այդ սովորությունը շատ հին էր, կատարվում էր հայոց թագավորների և նախարարների ժամանակներում։ Իսկ մելիքների իշխանության ժամանակներում դադարած էր։

2 Մելիք-Մեջլումը Ղարաբաղի Ջրաբերդ կոչված գավառակի մելիքն էր, որ միացած էր Աղա-Մամադ-շահի արշավանքին և առաջնորդեց նրան Թիֆլիսի կործանման ժամանակ։ «Գաղտնիք»-ի մեջ հիշվում է այն արտոնությունները, որ շահը շնորհած էր Մելիք-Մեջլումին։ Իբրև մի նոր փաստ, թե ինչպես «Գաղտնիք»-ը բառ առ բառ քաղում է «Խամսայի մելիքություններից», և կրկնում միևնույն խոսքերը։

*Այն ծառայությունները, որ այդ «քաջերը» մի քանի ժամ առաջ կոտորեցին նույն շահի 5671 զորքերը...*

*Եվ շահը խսկույն վարձատրեց «Գաղտնիք»-ի հեղինակ Աբրահամ Բեկնազարյանին, որ «քաջերի» հրամանատարն էր և որին շահը «Հրաշագործ-Ազրայել»[1] էր կոչում (եր. 162)։ «Ծակ-քարի» մոտ կատարած քաջագործության համար (որտեղ ընկան շահի զորքերը) շնորհեց մի առյուծադրոշմ շքանշան, բայց «Հրաշագործ-Ազրայելը» քաղաքավարությամբ մերժեց, պատճառաբանելով, որ շահը ավելի լավ կանի, եթե կատարի յուր խոստումները Ղարաբաղի ընդհանուր մելիքությունների վերաբերությամբ (եր. 149)։*

*Այնուամենայնիվ, շահը, որովհետև ներքինի էր, զավակ չուներ, որդեգրեց «Հրաշագործ-Ազրայելի» որդի Աբրես Բեկնազարյանին («Գաղտնիք»-ի երկրորդ հեղինակին) և նրա անունը Ալլահվերդի (Աստվածատուր) կոչեց, որովհետև աստված նրան մի զավակ պարգևեց (եր. 136)։ Այդ մասին խոսվեցավ Դ-րդ գլխում։ Իսկ նրա հորը շնորհեց զորավարության (՞) աստիճան և պահեց յուր մոտ (եր. 170, 171, 172, 222)։ Այստեղից է սկսվում հայր և որդի Բեկնազարյանների երևակայական ծառայությունը պարսից երեք թագավորների մոտ, որի մասին խոսվեցավ նախորդ գլուխներում։*

*Պետք է ուղեղի սաստիկ հիվանդություն ունենալ այս տեսակ ցնորքներն իբրև պատմություն ներկայացնելու համար։ Չկա մեկը պարսից վերջին թագավորների մեջ, որ Աղա-Մամադ-շահի նման սիրելիս լիներ յուր զինվորներին։ Եվ չկա մեկը, որ նրա*

---

Շահը շնորհեց Մելիք-Միքլումին այդ երեք արտոնությունները.

1. «Երբ և կամենա կարող է անարգել կերպով ել և մուտ գործել յուր մոտ»։

2. «Ինչ որ խնդրելու լինի նրա կամքը կկատարվի»։

3. «Արքունիքի գանձարանը նրա տրամադրության ներքո կլինի»։

«Խամս. մելիքությունները», եր. 186։

«Շահը Մելիք-Միքլումին շնորհած էր հետևյալ արտոնությունները»։

Ա. «Մելիք-Միքլումն ամեն ժամանակ իրավունք ունի ազատ ներմուտ գործել շահի մոտ առանց արգելքի»։

Բ. «Ի՞նչ խնդիր առաջարկելու լինի՝ շահի կողմից կկատարվի անպատճառ»։

Գ. «Շահական գանձարանն հանձնըված է մելիքին ըստ պահանջման հարկին ծախսել պիտույից համար»...

«Գաղտնիք», եր. 138։

[1] «Հրաշագործ-Ազրայել» նշանակում է «Հրաշագործ հոգեհան հրեշտակ»։

նման վրեժխնդիր և ոխակալ լիներ։ Նա պատրաստ կլիներ ամբողջ հայոց ազգը ջնջել յուր զինվորներից մեկի մի կաթիլ արյան համար։ Իսկ նրա զորքերին և զորապետներին կոտորում են, նա փոխանակ վրեժխնդիր լինելու, այս տեսակ վարձատրություններ է անում…

Ահա՛ այն պատկերը, որը նկարելու համար Մակար վարդապետը սպառել է յուր հանճարի բոլոր զորությունը,—ահա՛ այն փայլուն գոհարը, որ զարդարում է «Գաղտնիք»-ի ճակատը։

## Է

Նախորդ երկու գլխում ծանոթացանք այն պատկերի հետ, որ «Գաղտնիք»-ի զարդն է կազմում,—ծանոթացանք և այն հերոսների հետ, որոնց Մակար վարդապետը ներկայացնում է իբրև նորագյուտ պատմական անձնավորություններ։

Հայր սուրբը սկզբում գրել է այդ պատկերը միայն, բայց ոչ իբրև պատմություն, այլ իբրև մի փոքրիկ վեպիկ։

Հայր սուրբը ինքը խնածախցի գոլով, այդ գյուղն ընտրել է իբրև ասպարեզ յուր վեպիկի մեջ կատարված գործողությունների։ Եվ այդ շատ բնական է։ Մեր բոլոր փոքրիշատե հայտնի վիպասանները գյուղացիներ են եղել։ Յուրաքանչյուրը յուր վեպերի նյութը առել է յուր հայրենական գյուղից։ Աբովյանը անմահացրեց Քանաքեռը։ Աղայանցը նկարեց Խաչենը։ Պռոշյանցը ծանոթացրեց մեզ Աշտարակի հետ։ Իսկ մեր նվաստությունը յուր մի քանի վեպերի նյութը առել է յուր հայրենական բնադավառ Սալմաստից։

Հենց առաջին անգամ, երբ վիպասանը սկսում է գրել, նրան ներկայանում է յուր մանկության ծննդավայրը, որ ավելի մոտ է նրա սրտին, որ ավելի ծանոթ է նրան։

Մակար վարդապետին ևս շատ բնական էր յուր վեպիկի նյութը առնել Խնածախից։ Այսպես էլ արել է նա։ Եվ այդ է այն տարօրինակ երևույթի պատճառը, որ նրա բոլոր հերոսները, որոնց թիվը քառասունից անցնում է, այդ գյուղիցն են ծնվում։

Նրա նկարած պատկերը, ինչպես երևում է «Գաղտնիք»-ից, սկզբում գրած է եղել խիստ նեղ շրջանակի մեջ։ Նա ներկայացնում էր Շուշի բերդի պաշարումը Աղա-Մամադ-շահից, խնածախ-

ցիների քաջագործությունները, Աղա-Մամադ-շահի երկրորդ արշավանքը և նույն բերդում սպանվելը։ Այդքանը միայն։

Եթե Մակար վարդապետը բավականանար այդ պատկերով միայն և նրան նույն ձևով ներկայացներ ընթերցող հասարակությանը, գուցե նրան կասեին՝ վատ նկարիչ է և ավելի ոչինչ։ Բայց յուր վերջին վարմունքով ենթարկել է իրեն մի այնպիսի պատասխանատվության, որ շատ ծանր պիտք է լինի նրա համար...

Հայր սուրբը, ինչպես երևում է «Գաղտնիք»-ից, հրապուրվել է և իր ձեռնարկության մեջ շատ առաջ է գնացել։ Նա սկսել է ընդարձակել յուր պատկերը։ Եվ նույն հերոսներին, որ նա ստեղծել էր միայն այդ պատկերի մեջ գործելու համար,—նույն հերոսներին մտցրել է այն բոլոր պատերազմների և քաղաքական հարաբերությունների մեջ, որ կատարվեցան Անդրկովկասում, սկսյալ այն օրից, երբ ռուսները առաջին անգամ ոտք դրեցին այդ երկրի վրա, մինչև նրանց կատարելապես տիրապետելը։

Վերջին վարմունքը շատ հասկանալի է՝ Մակար վարդապետին պետք է գցեր խիստ անելանելի դրության մեջ։ Նա յուր հերոսներին վիպական անձնավորություններից դարձրեց պատմական անձնավորություններ։ Այլ խոսքով, նա ստեղծեց մի պատմություն,—այն ևս կեղծ պատմություն։

Ինչպե՞ս պաշտպանել այդ կեղծությունը։

Միակ ելքը այն էր, որ Մակար վարդապետը ձեռքերը լվանար, մի կողմ քաշվեր, և բոլոր մեղքը ձգեր Բեկնազարյանների վրա, նրանց ցույց տալով իբրև հեղինակ «Գաղտնիք»-ի։ Այդպես էլ արել է նա։

Այսուամենայնիվ Մակար վարդապետը ցանկացել է, որ «Գաղտնիք»-ը ոչ միայն պատմական արժեք ունենար, այլ նա երևան հաներ այնպիսի «վտանգավոր գաղտնիքներ» և պատմության համար այնպիսի «թանկագին գանձեր», որոնք բոլորովին անհայտ էին մինչև այդ գրքի լույս տեսնելը։

Որքան մեծ է այդ խոստումը, նույնքան դժվարին է նրա կատարելը։ Որտեղի՞ց գտնել «թանկագին գանձերը»։

Որպեսզի գործից մաքուր դուրս գա, Մակար վարդապետը իրան թույլ է տվել այն վարմունքը, որ սովորաբար գործ են դնում կրկեսների կառավարիչները։ Հայտաթղթերի վրա խոստանում են աներևակայելի ներկայացումներ։ Մեծ փափագով հա-

*վարվում է հասարակությունը, և հանկարծ մեկը դուրս է գալիս և խոնարհաբար ազդարարում է հարգելի հասարակությանը, թե այսինչ ձեռնածուի կամ այնինչ խեղկատակի հիվանդության պատճառով խոստացած ներկայացումը հետաձգվում է, իսկ նրա փոխարեն տրվում է մի ուրիշը...*

*Նույնը արել է և Մակար վարդապետը։*

*«Գաղտնիք»-ի 89, 90, 91, 92 երեսներում հիշվում են յոթ բոլորովին անհայտ պատմագիրների անուններ, յոթն հրաշալյաց խորհրդավոր թվով։ Այդ յոթանց խումբը հայտնվում է միենույն դարում և գրում է 15 հատոր պատմություններ Ղարաբաղի վերաբերությամբ։ Ահա այն հարուստ գանձարանը, ահա այն անսպառ աղբյուրները, որոնցից օգուտ քաղելով «Գաղտնիք»-ի հեղինակը պետք է մատակարարեր մեզ յուր խոստացած* «անգին գանձերը»:

*Հետաքրքիր են այդ պատմագիրների և նրանց հեղինակների անունները.*

*Ա.* Երեմիա (Հասան-Ջալալյան) կաթողիկոս Գանձասարա վանքի, *գրել է.*

*1) «Պատմություն կաթողիկոսացն Աղվանից»։*

*2) «Ծագումն թագավորացն Աղվանից»։*

*3) «Ծագումն Ջալալյան տոհմի ի Վախթանգ թագավորազնէ», որը իբր թե Ջալալյան Գրիգորիս և Եղիա վարդապետների պատմության շարունակությունն է եղել*[1]։

*4) «Ժամանակագրություն անցից»։ Որ Ղարաբաղում կատարված քաղաքական և եկեղեցական պատմությունն է, որի մեջ կարգով գրված են եղել* բոլոր մելիքների *գործերը*[2]։

---

1 *Գրիգորիս և Եղիա վարդապետները վախճանվել են Երեմիա կաթողիկոսի վախճանվելուց 462 տարի առաջ (1238 թ.) և նրանք ոչ մի պատմություն չեն թողել, որ շարունակած լիներ Երեմիա կաթողիկոսը։ Կիրակոս Գանձակեցին յուր պատմության մեջ (եր. 159) հիշում է այդ երկու վարդապետների անունները, բայց ոչ իբրև պատմագիրների, այլ իբրև սրբակրոն աբեղաների։ Եթե նրանք պատմություն գրած լինեին, անկարելի էր, որ չգիտենար Գանձակեցին։ Տե՛ս Պատմություն Կիրակոս Գանձակեցվո, տպված Մոսկվայում, 1858 ամի։*

2 *Երեմիա կաթողիկոս Հասան-Ջալալյանը ինչպե՞ս կարող էր գրել բոլոր մելիքների գործերը, քանի որ նա վախճանվեց 1700 թվականին, իսկ մելիքները գործում էին մինչև 1830 թվականները։ Վեհափառը հո չէ՞ր կարող երկնքում պատմագրությամբ պարապվել։*

Բ. Եղիա վարդապետ Հասան-Ջալալյան[1].

1) *«Արշավանք թաթարաց և պատերազմ ի Կաշաղակաբերդին»։*

Գ. Եսայի (Հասան-Ջալալյան) կաթողիկոս Գանձասարա վանքի.

1) *«Ծագումն և պատմություն Մելիք-Հայկազյանց Մելիք-Եսայի, իշխողին Ջրաբերդի»։*

2) *«Ծագումն և պատմություն Մելիք-Աբովի առաջնոյ, իշխողին Գյուլիստան գավառի»։*

3) *«Հարաբերություն հայոց ընդ ռուսաց», որի մեջ ժամանակագրական կարգով շարադրված են եղել սկսյալ 1727 թվականից*[2]*, հայոց կաթողիկոսների և մելիքների ռուսաց կառավարության հետ ունեցած հարաբերությանց պաշտոնական թղթերի օրինակները։ Նույն պատմության մեջ յուրաքանչյուր նոր գահակալող կաթողիկոս շարունակել է գրել յուր ժամանակի գործերը, նույնպես ժամանակագրական կարգով։*

Դ. Մովսես վարդապետ *միաբան Գանձասարա վանքի.*

1) *«Վանորայք Արցախի և կալուածք նոցա»։ Այդ պատմության մեջ նշանակված են եղել Ղարաբաղի բոլոր վանքերի անունները, նրանց արձանագրությունները, նրանց կալվածքների տարածությունը իրանց սահմաններով, նվիրողների անունները, նրանց կալվածագրերը, թագավորների հրովարտակների օրինակները, որ հաստատում էին այդ կալվածքները իբրև սեփականություն վանքերի և այլն։*

Ե. Վարդան վարդապետ *վանահայր Դադի վանքի.*

1) *«Պատմություն մելիքաց Դիզակի և Վարանդի»։*

2) *«Դյուցազնական քաջագործությունք մելիքաց»։*

3) *«Ծագումն Փանահ Ճըռ-խանի և Ճըռ-Մելիք-Միրզախանի»։*

4) *«Իսրայել Ճըռ կաթողիկոս և գործք յուր»։*

Զ. Եղիա վարդապետ *միաբան Ամարասայ վանքի.*

1) *«Սահմանք հայ մելիքաց»։ Որի մեջ գրված է եղել Ղարա-*

---

1 *Կարդա առաջին ծանոթությունը։*

2 *Ահա՛ մի նոր պատմագիր ևս, որ երկնքումն է գրում։ Եսայի կաթողիկոս Հասան-Ջալալյանը վախճանվեցավ 1726 թվին, ի՞նչպես կարող էր գրել նա սկսյալ 1727 թվից հայոց մելիքների ռուսաց հետ ունեցած հարաբերությանց գործերը։*

բաղի մելիքների տիրած երկրների սահմանները, բերդերի թիվը և նրանց նկարագրությունները, ժողովրդի որքանությունը, գյուղերի անունները և բնակչաց թիվը, զորքերի քանակությունը և այլն։

Է. Ղևոնդ վարդապետ, վանահայր Ղևոնդեան անապատի.

1) «Մելիք-Շահնազար Երրորդ»։ Որի մեջ գրված է եղել Մելիք-Շահնազարյանների տոհմի ծագումը և նրանց ժառանգների գործերը։

Տեսնո՞ւմ եք որքա՛ն առատություն... Ղարաբաղը որքա՛ն հարուստ է եղել յուր պատմագրներով և պատմություններով։ Եվ ի՞նչ բախտավոր պատմագրներ, նրանք խմբով հայտնվում են միևնույն դարում, և իրանց գրքերի մեջ մի բան չեն թողնում, որի վրա ուշադրություն չդարձնեին,—մինչև անգամ վիճակագրություն...

Իսկ «Գաղտնիք»-ի հեղինակը օգուտ քաղե՞ց այդ գանձերից։

Դժբախտաբար,—ո՛չ։

Ինչո՞ւ։

Ահա ինչու։

> «Բայց հարազատ մելիքները բոլոր ձեռագրերը և թղթերը արդեն կանխավ երեք մասն բաժանած և պահված էին, յորոց առաջին մասը թաքցրած էին Գանձասարի և Խութա վանքի մեջտեղում, մի քարայրում և բերանը ամրացրած քարուկիր պատով և անհայտացրած. երկրորդ մասը Ջրաբերդի մի ստորերկրյա և անհայտ քարայրում, իսկ երրորդը Գյուլիստան գավառի Հոռեկա վանքի մոտերում» (եր. 89)։

Ի՞նչ հարկ կար այդ անմեղ պատմությունները այդպես գանազան տեղերում երեք գերեզմանների մեջ թաղելու։

Այդ հարկը այդպես է բացատրում «Գաղտնիք»-ի հեղինակը.

> «Երեք մասը բաժանելու պատճառն այն է, որ ոչ միայն Ճըռ-խանն (Իբրահիմ-խանն) հետապնդում էր ոչնչացնել այդ ձեռագրերը, այլև Մելիք-Շահնազար Գ-ն և Ճըռ-մելիք Միրզախանն (Իբրահիմ-խանի կուսակիցները), քանզի այդ ձեռագրերում անաչառապես պատմագրված էին բոլոր ճռերի (անհարազատների) և հարազատների արարքը» (եր. 89)։

Ծիծաղելի՞ է։ Ղարաբաղի մելիքները իրանց ամրոցներով և անմատչելի բերդերով, իրանց անթիվ զորքերով ինչպե՞ս էին պահպանում մի ամբողջ երկիր, երբ նրանք անզոր էին 15 հատ

գիրք պահելու: Կամ այդ գրքերը մելիքների մոտ ի՞նչ էին շինում: Եվ եթե նրանք այնքան հմուտ մարդիկ էին, որ հասկանում էին այդ գրքերի նշանակությունը, ինչո՞ւ երբ գաղթեցին դեպի Գանձակի և Վրաստանի կողմերը, չտարան գրքերը իրանց հետ, այլ թաղեցին գետնի տակ, որ փտեն: Եվ վերջապես, մի՞թե այդ գրքերը մի-մի օրինակներ էին, որ թաղվելով գետնի տակ, մոռացվեցան և բոլորովին անհայտացան:

Դժբախտաբար մի-մի օրինակներ էին: Ահա ինչ է ասում այդ մասին «Գաղտնիք»-ի հեղինակը.

«Հարկ է ասել, որ այս ձեռագիր գրքերն տակավին ընդօրինակված և ժողովրդի մեջ ցրված չեն (չէին), այլ հավաքված են (էին) Գանձասարի հնադարանում, քանզի թե Մելիք-Շահնազար Գ-ն և թե Իսրայել Ճըռ-կաթողիկոսն հետամուտ եղած են (էին) բազմիցս անհայտացնել այդ ձեռագրերը: Այս միջոցին դիմած են սոքա, որպեսզի եթե հնար է, յուրյանց մահից հետո պատմության մեջ չմնային յուրյանց վատ արարքները, և այսպես սերունդներից ծածկեին յուրյանց ամոթը ու նախատինքը: (Կարծես ամբողջ 15 գրքերը միայն Մելիք-Շահնազարի և Իսրայել կաթողիկոսի գործերի մասին գրված լինեին): Այսպես հետամուտ եղած էին ոչնչացնել այդ ձեռագրերը և բոլոր ճըռերն: Ահա ձեռագրերը թաքցնելու պատճառները» (եր. 91, 92)[1]:

---

1 Որպեսզի ցույց տա, թե իրավ թաքցրած են եղել պատմության գրքերը, Մակար վարդապետը յուր ծանոթության մեջ (եր. 89), ասում է, թե նրանց մի մասը գտավ Բաղդասար միտրոպոլիտը, որոնց թվում գտնվում էր Եսայի կաթողիկոսի հեղինակած «Պատմութիւն Աղւանից» գիրքը և ուրիշ շատ ձեռագրեր, որք անհայտացած են Շուշու առաջնորդարանից Բաղդասար սրբազանից հետո: (Որքա՜ն սիրում է Մակար վարդապետը գրքերի այդ անխնա կոտորածը... նրա մոտ ամեն ձեռագիր աշխատություն անհայտանում է...) «Ճշմարիտ է, Բաղդասար միտրոպոլիտի օրերում մի Թուրք հովիվ լեռների ծերպերի մեջ գտել էր մի քանի եկեղեցական գրքեր, և սրբազանը նրան մի եզն տալով առել էր այդ գրքերը: Բայց նրանց թվում ոչ Եսայի կաթողիկոսի «Աղվանից պատմությունը» կար և ոչ Ղարաբաղի վերաբերությամբ մի այլ պատմական աշխատություն: Թե ո՞ր թվականին գտավ Բաղդասար միտրոպոլիտը Եսայի կաթողիկոսի «Աղվանից պատմությունը»— այդ մասին լռում է Մակար վարդապետը, և նրա լռության պատճառը կհասկացվի հետո: Միայն այսքանը հայտնի է նրա խոսքերից, որ սրբազանը գտավ հիշյալ պատմությունը, երբ արդեն եպիսկոպոս էր և Ղարաբաղի միտրոպոլիտ: Բաղդա-

*Այդ բոլորը Մակար վարդապետի թքով կպցրած պատճառաբանություններն են...*

*Այսինչ ձեռնածուի և այնինչ խեղկատակի հիվանդության պատճառով ներկայացումը հետաձգվում է...*

*Բայց Մակար վարդապետի երևակայական պատմագիրները իրանց երևակայական պատմություններով, ոչ միայն հիվանդանում են, այլ գետնի տակ թաղվելով,—մեռնում են...*

*Ուրեմն, այլևս ի՞նչ մեղավոր է «Գաղտնիք»-ի հեղինակը, որ նա չկարողացավ իր խոստացած պատմական* «անգին գանձերը» *մեզ ավանդել, երբ այն բոլոր գրքերը, որ պետք է ծառայեին նրան իբրև աղբյուր, այդպես տարաբախտ կերպով ոչնչացան... և նրա ձեռքը չհասան...*

*Ամեն ինչ մտածել է Մակար վարդապետը «Գաղտնիք»-ի կեղծությունը ծածկելու համար, բայց մի բան մոռացել է։*

*«Գաղտնիք»-ի հեղինակ Աբրահամ Բեկնազարյանը («Հրաշագործ Աղբայրը»—Հոգեհան հրեշտակը) հո գիտեր հիշյալ գրքերի թաքցրած տեղերը։ Նա յուր ձեռքի տակ ուներ 7000 զինվորներ և 70—80 հսկաններ։ Իբրահիմ-խանը և նրա կուսակից «Ճըռ-մելիքներն» տերևի նման դողում էին նրա երկյուղից։ Նա ինքը Ղարաբաղի պատմություն էր գրում։ Այդ գրքերը նրան շատ հարկավոր էին։ Ինչո՞ւ մի օր չվեր առեց յուր «վիշապներին», յուր «առյուծներին» և յուր «կայծակներին» և չգնաց այդ գանձերը դուրս հանելու և թողեց, որ անհայտության մեջ ոչնչանային...*

*Դիցուք թե «Գաղտնիք»-ի հեղինակը չմտածեց այդ մասին։ Բայց նա ինքը Մաթուսաղայի տարիքն ուներ, ապրել էր համար-*

---

*տարը եպիսկոպոս ձեռնադրվեցավ Եփրեմ կաթողիկոսից 1820 թ., իսկ Ղարաբաղի միտրոպոլիտ կարգվեցավ նույն կաթողիկոսից 1830 թվին։ Ուրեմն Մակար վարդապետի խոսքով, այդ թվականներից հետո պետք է գրած լինի միտրոպոլիտը Եսայի կաթողիկոսի «Աղվանից պատմությունը»։ Իսկ իմ դրասեղանի պահարանում այսօր կարելի է տեսնել Բաղդասար միտրոպոլիտի իսկական ձեռքով գրված քաղվածքները Եսայի կաթողիկոսի պատմությունից և այդ պատմության շարունակությունը, որ նա արել է այն ժամանակ, երբ ինքը տակավին վարդապետ էր, և յուր հորեղբայր Սարգիս կաթողիկոսի հետ գտնվում էր Հաղպատա վանքում։ Ուրեմն այդ գրքի հետ ծանոթ էր նա նախքան 1820 թվականները, և ոչ Մակար վարդապետի հնարած զրույցից հետո։*

*Այդ ծանոթությունը չպիտի մոռանալ, որովհետև դա կբացատրե «Գաղտնիք»-ի հեղինակի մի քանի նոր խարդախությունները, որ կտեսնենք հետո։*

յա երկու դար, ամեն ինչ յուր աչքով տեսել էր և ամեն գործողությունների մեջ անձամբ մասնակցել էր, և բացի դրանից, նա ինքը Գանձասարի Ներսես կաթողիկոսի մոտ անհայտ նյութեր էր ընդօրինակում յուր «Գաղտնիք»-ի համար (էր. 15)։ Այդ նյութերը ի՞նչ եղան, որ չմտան «Գաղտնիք»-ի մեջ։

Նրանց հետ ևս դժբախտություն պատահեց...

Երբ «Գաղտնիք»-ի հեղինակը հիվանդ դրված էր մահվան անկողնու մեջ, յուր որդի Ապրես Բեկնազարյանին շատ խրատներ տալուց հետո, հանձնեց նրան թանկագին ավանդը, որ նա արձանագրեր «Գաղտնիք»-ի մեջ։

Այդ խորհրդավոր րոպեն հետևյալ կերպով է նկարագրում որդի Բեկնազարյանը.

> «Հետո յուր արխալուղի պինդ կարած ծոցաչերի կարերը քանդելով հանեց մի կարմիր ծրար և զայն ինձ տալով ասաց.
>
> Եվ դու, սիրելի որդյակ իմ Ապրես, ա՛ռ այս ծրարը, որա մեջ են Մեծին Պետրոսի Ղարաբաղի հարազատ մելիքներին գրած, Եկատերինե Բ կայսրուհուն, Աղվանից կաթողիկոսին և մելիքներին ուղղած պայմանաթղթոց պատճենները, և սոցա առ նոսա գաղտնի գրած պայմանաթղթոց պատասխանների ընդօրինակությունները, Արղության Հովսեփ եպիսկոպոսին, Աշտարակեցի Ներսես եպիսկոպոսին, Մինաս-Աղա Լազարյանցին, Մադաթովին, Մելիք-Վանուն, մեծ Սարմալովին, Ներսես եպիսկոպոսի ձեռով հայերին գրել տված և ինձ ղրկած ամենածածուկ և վտանգավոր նամակներն։ Այս բոլոր թղթակցությունները, որք վերաբերում են ռուսաց հայոց հետ կապած պայմանաց և գաղտնի հարաբերության՝ ժամանակագրական կարգաւ զետեղիր քո «Գաղտնիք Ղարաբաղի» պատմության մեջ, որովք թե հետաքրքիր կլինի ընթերցողաց քո պատմությունդ և թե չեն կորչիր, ինչպես կորած են Ղարաբաղի ձեռագիր պատմությունները։ (Նրանք, որ դու ինքդ թաղեցիր գետնի տակ...) Որքա՞ն լույս կսփռեն ապագա հայ պատմության ինչպես «Գաղտնիք Ղարաբաղին», նույնպես այդ նամակներն։ Բայց զգուշացիր, որ քո ձեռագիր պատմության գլխին ևս փորձանք չպատահի» (էր. 388)։

Փորձանքը պատահեց... Մակար վարդապետը «Գաղտնիք»-ի ձեռագիրը կորցրեց...

Իսկ ի՞նչ եղան այն «ամենածածուկ» և «վտանգավոր» նամակները, ի՞նչ եղան այն գաղտնի հարաբերությանց պայմանագրերը, որ ամփոփված էին «կարմիր ծրարի» մեջ։

«Կարմիր ծրարի» հետ ևս փորձանք էր պատահել...

«Երբ բացի այն ծրարը,—շարունակում է որդի Բեկնազարյանը,—որ նամակների ընդօրինակությունը վերցնեի այստեղ («Գաղտնիք»-ի մեջ), աստվա՜ծ իմ, ի՞նչ տեսա։ Տեսա, որ մի տառ անգամ մնացած չէր թղթոց վրա։ Թղթերն քրտինքներից փտած և հաճախակի շարժումներից տրորված և տառերն բոլորովին անհայտացած էին. քանզի գիշեր և ցերեկ հայրս միշտ յուր վրա էր կրում այդ ծրարը (ուրեմն արխալուղով էր քնում) և ինձանից անգամ զգուշությամբ պահում։ Լալով այրեցի ակամա այդ անօգուտ թղթերը հանդերձ ծրարովն» (եր. 390)։

Շա՜տ ապրի Ապրես Բեկնազարյանը, որ այդ հոգսից ևս ազատեց Մակար վարդապետին...

Տեսնո՞ւմ եք «Գաղտնիք»-ի հեղինակը ինչպես ճարպիկ կերպով դուրս պրծավ յուր խոստացած պատմական թանկագին գանձերը մեզ մատակարարելու պարտավորությունից...

Պարսից երեք թագավորների մոտ ամենաբարձր պաշտոններ կատարող Աբրահամ Բեկնազարյանը, 10.000 զորքերի հրամանատար Աբրահամ Բեկնազարյանը, Ֆաթալի-շահի ներքինապետ Աբրահամ Բեկնազարյանը՝ մի արկղիկ անգամ չէ ունեցել այդ գանձերը պահելու համար... Եվ սկսյալ Պետրոս Մեծի օրերից, հայոց և ռուսաց 127 տարվա (1701—1828) հարաբերությանց թղթակցությունները պահում էր յուր արխալուղի ծոցի գրպանում... մի փոքրիկ կարմիր ծրարի մեջ...

Եթե Մակար վարդապետը տեսած լիներ այն խոշոր հատորները, որ տպված են ռուսաց լեզվով և բովանդակում են իրանց մեջ հայոց և ռուսաց հարաբերությունների ոչ թե ամբողջ թղթակցությունները, այլ նրանց ցուցակները միայն, և որ կոչվում են «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа»—այդ տեսնելուց հետո կարծեմ Մակար վարդա-

պետը մի փոքր պիտի կարմրեր, մտածելով, որ թղթերի այդ ամբողջ արխիվը անկարելի էր ծոցի գրպանում պահել...

Հարկավոր է կրկին վերադառնալ դեպի վերևում հիշված 7 պատմագրերը և դեպի նրանց թվով 15 գրավոր վկաները, որոնք այնպիսի տարաբախտ վիճակի ենթարկվեցան,—սա էլ հարկավոր է այն նպատակով, որ դրանով պետք է բացատրվի «Գաղտնիք»-ի հեղինակի մի նոր օյինբազությունը։ Ուրիշ ավելի հարմար բառ հազիվ թե կարելի է գտնել մի նենգավոր վարմունք արտահայտելու համար։

Այն բոլոր նախամտածությունները,—15 պատմական մատյանների զանազան տեղերում թաքցնելը և անհետացնելը,—նրանց միայն մի-մի օրինակ լինելը,—այդ գրքերի Բաղդասար Միտրոպոլիտի ջանքերով գտնված օրինակների դարձյալ անհետանալը Շուշիի առաջնորդարանի գրադարանից,—Աբրահամ Բեկնազարյանի գրպանում մնացած թղթերի ոչնչանալը,—այդ բոլորը կրկնում եմ, սկսյալ 15 պատմագրերի թաղումից, մինչև «Գաղտնիք»-ի բնագրի թաղումը, որ կատարվեցավ Մակար վարդապետի ձեռքով,—այո՛, այդ բոլորն ինքնըստինքյան, ծագեցնում է մի միտք, մի խորին տարակուսանք. տեր աստված, ի՞նչ մի ճակատագրական անեծք կար այդ դժբախտ գրավոր վկաների վրա. որ այդպես ցավալի կերպով դատապարտվում են կորստյան, որ այդպես ոչնչանում և անհետանում են...

Այդ խնդիրը պարզելու համար, նախ՝ պետք է պարզել այն հարցը, արդյոք հիշյալ 15 մատյանները և նրանց 7 պատմագրերի խումբը որևէ ժամանակ գոյություն ունեցե՞լ են, թե՞ ոչ։

7 պատմագիրների մեջ միայն երկու անուններ կան, որ մեզ բավական հայտնի են։ Մնացած հինգը ես թողնում եմ Մակար վարդապետին ապացուցանել, արդյոք որևէ ժամանակ գոյություն ունեցե՞լ են, կամ պատմություն գրե՞լ են, թե ոչ։

Մեզ հայտնի անունները դրանք են.

1) Երեմիա կաթողիկոս Հասան-Ջալալյան, գահակալ Գանձասարա վանքի, օծվեցավ 1675 թվին, վախճանվեցավ 1700 թվին։

2) Եսայի կաթողիկոս Հասան-Ջալալյան, գահակալ Գանձասարա վանքի, օծվեցավ 1701 թվին, վախճանվեցավ 1726 թվին։

Վերջինը առաջինի եղբոր որդին էր։

Առաջինը՝ Երեմիա կաթողիկոսը, արդյոք գրե՞լ է պատմու-

թյուն թե չէ գրել, հայտնի չէ։ Նրա գրավոր վաստակներից մեր ձեռքը ոչինչ չէ հասել։ Այդ ես թողնում եմ Մակար վարդապետին պարզաբանել։

Երկրորդը՝ Եսայի կաթողիկոսը, իրավ է, գրել է պատմություն։ Յուր աշխատությունը սկսել է նա 1036 թվականից և հասցրել է մինչև 1711 թվականը[1]։

Դա միևնույն արժանահիշատակ անձնավորությունն է, որ Ղարաբաղի մելիքների Պետրոս Մեծի հետ ունեցած քաղաքական հարաբերությունների մեջ խիստ եռանդոտ դեր էր կատարում։ 1722 թվին դա էր, որ Ղարաբաղի հայոց զորքերով, վրաց Վախտանգ թագավորի հետ, Գանձակի մոտ սպասում էին Պետրոս Մեծի գալստյանը։ Իսկ երբ Պետրոս Մեծը զանազան հանգամանքների պատճառով վերադարձավ Դերբենդից,—դարձյալ դա էր, որ 1724 թվին գնաց Ռուսաստան և անձամբ տեսնվեցավ կայսրի հետ։ Վերադարձին օծեց նա Աստրախանի նորահավաք հայ գաղթականների կառուցած մայր եկեղեցին։ Յուր վերջին գործողությունները գրեց նա առանձին գրքույկով, որը հիշատակարանի ձև ունի։

Մակար վարդապետի ստեղծած մյուս 6 պատմաբաններին, հանդերձ իրանց սավառ մատենագրությամբ, մենք կվերջացնենք հայր սուրբին, եթե գոնե Եսայի կաթողիկոսի աշխատություններից մի բան առած և մեզ հաղորդած լիներ։

Բայց ի՞նչ է ստիպել նրան այսպես անխնա կերպով ոչնչացնել յուր ստեղծած պատմագիրներին։

Շատ հասկանալի է, թե ի՛նչը։— Որպեսզի «Գաղտնիք»-ից շատ բան չպահանջվի։ Որպեսզի չասեն, լա՜վ, այդ բոլորը ինչ որ կա «Գաղտնիք»-ի մեջ, մեզ համար գաղտնիք չէր, նախքան այդ գրքի լույս տեսնելը,—ուրեմն «Գաղտնիք»-ը ի՞նչ գաղտնիքներ երևան հանեց, ո՞ւր մնացին նրա խոստացած «քանկագին գան-ձերը»... նրա խոստացած «ամենավտանգավոր գաղտնիքները»... Որպեսզի Մակար վարդապետը իրավունք ունենա ասելու, թե այդ

---

[1] Եսայի կաթողիկոսի լիակատար պատմությունը մեր ձեռքը չէ հասել. Նրա խիստ կրճատած համառոտությունը Բաղդասար միտրոպոլիտը 1839 թվին տպագրել տվեց Շուշի քաղաքում հետևյալ վերնագրով՝ «Պատմություն կամ հիշատակ ինչ-ինչ անցից՝ գործելոց յաշխարհին Աղուանից, համառոտագրեալ ի սրբազնակատար կաթողիկոսեն Աղուանից ի տեր Եսայեայ-Հասան-Ջալալեանց, ի թվականին հայոց ՌՃԿ, իսկ ի թվականի Տեառն մերոյ Փրկչին Յիսուսի 1711»։

բոլորը կային և կլինեին, բայց ի՜նչ արած, որ պատմության 15 գրքեր անհայտացան, գետնի տակ թաղվելով, իսկ ինչ որ պահվել էր Աբրահամ Բեկնազարյանի արխալուղի ջիբում,— այն էլ մեր մեղքից փտեց, ոչնչացավ...

Պրծա՜վ, գնաց...

Մակար վարդապետը իրան մատնած կլիներ, եթե մի որևիցե հայտնի աղբյուր ցույց տար յուր աշխատության, որովհետև այն աղբյուրները ուղղակի կերպով պետք է հակառակեին այն բոլոր առասպելաբանություններին, այն բոլոր աններելի աղավաղումներին, որ նա արել է «Գաղտնիք»-ի մեջ։ Այդ է պատճառը, որ նա հիշում է այնպիսի երևակայական պատմաբանների և պատմությունների անուններ, որոնք երբեք գոյություն չեն ունեցել, և որոնց հետ անկարելի կլիներ համեմատություններ անել կամ ստուգել «Գաղտնիք»-ի առակաբանությունները։

Մակար վարդապետի վարմունքը նմանում է կաքավների վարմունքին, որոնք որսորդից փախչելու միջոցին՝ իրանց գլուխները թաղում են ձյունի մեջ և անշարժ կանգնում են, կարծելով, եթե իրանք որսորդին չեն տեսնում, որսորդն էլ նրանց չի տեսնի։

Կրիտիկայի հալածանքից ազատվելու համար Մակար վարդապետը աշխատել է երևակայությամբ բոլոր պատմագիրներին թաղել զանազան տեղերում, որպեսզի կատարված խարդախությունները ծածկվեին։ Բայց նա մոռացել է, որ դեռևս կան և մնացել են շատ աղբյուրներ, որոնք կարող են երևան հանել նրա յուրաքանչյուր տողի կեղծությունը։

Եվ այսպես, «Գաղտնիք»-ի պատմական մասը ոչ մի նոր և մեզ անհայտ աղբյուր չունի։ Այդ մասը առնված է «Խամսայի մելիքություններից», այն զանազանությամբ միայն, ինչ որ փոփոխել է Մակար վարդապետը և ինչ որ ավելացրել կամ պակասցրել է,— դրանք կամայական գեղծումներ և անխիղճ մեղանչումներ են ճշմարիտ պատմության դեմ։ Ես կարող էի համեմատություններով ցույց տալ այդ, բայց իմ հոդվածը առանց դրան էլ շատ երկարացավ։ Բավական է հիշել այդքանը միայն, որ հայր սուրբը յուր ստեղծած 70—80 հերոսներին, որոնց հետ ծանոթացանք նախընթաց գլուխներում, զոռով մտցրել է այն բոլոր նշանավոր անցքերի և գործողությունների մեջ, որոնք կատարվել են Ղարաբաղի պատմական կյանքում։ Ամեն տեղ վխտում են այդ զանազան «կայ-

ծակներին» ու «կարկատանները», ամեն տեղ կան այդ պանտաղան «վիշապներին» ու «դևերը» և ամեն քաջություն, ամեն սքանչելիք նրանց ձեռքով է կատարվում։ Մակար վարդապետը այն աստիճան անխիղճ է գտնվել, որ խլել է Ղարաբաղի բոլոր մելիքների փառքը և հատկացրել է յուր դրացի գյուղացիներին։

«Գաղտնիք»-ը չկարդացողների համար ես մի օրինակով կբացատրեմ այդ։

Մեզանից ամեն մեկին հայտնի է Խորենացու պատմության բովանդակությունը։ Երևակայեցեք մի այսպիսի բան. հանկարծ մեկը 6-րդ կամ 7-րդ դարում դուրս է գալիս դիցուք Տարոնի Հացիկ գյուղից, և յուր դրացի գյուղացիներից ստեղծում է մի խումբ հերոսներ, և առանց ուշադրություն դարձնելու ժամանակագրության վրա, յուր ստեղծած հերոսների ձեռքով կատարել է տալիս այն բոլոր գործողությունները, ինչ որ կատարել են Արշակունի թագավորները կամ նրանց նախարարները իրանց ամբողջ պատմական կյանքում։ Մի այդպիսի վարմունք շատ հեշտ է մի խելագար պատմագրի համար, որովհետև նա Խորենացու գիրքը աչքի առջև ունի, պատմական փաստերը հայտնի են, միայն հարկավոր է փոխել անձնավորությանց անունները, օրինակ, Տիգրանի, Արտաշեսի, Արշակի և մյուս թագավորների անվանց տեղ դնել յուր ստեղծած հերոսների անունները, և ամենայն չափազանցությամբ նրանց կատարել տալ առաջինների գործերը։ Դրանից, շատ հասկանալի է, պետք է առաջ գան աններելի անախրոնիզմներ,— ժամանակագրական վրիպումներ,— որովհետև միևնույն անձնավորությունը չէր կարող կատարած լինել թե Տիգրան Բ-ի և թե Արշակ Բ-ի գործերը, որոնք միմյանցից մի քանի դար հեռավորություն ունեին։ Այդ ոչինչ։ Խելագար պատմագիրը ձգձգում է յուր հերոսների հասակը և նրանց մի քանի դար կյանք է տալիս։

Նույնպես վարվել է Մակար վարդապետը։

Նրա բոլոր հերոսները չեն մեռնում, դարեր կյանք ունեն։ Նրանք ներկա են Ղարաբաղի մելիքների բոլոր գործողությունների մեջ, սկզբից մինչև վերջը։

Նա առել է «Խամսայի մելիքություններից» պատմական փաստերը և, փոփոխելով, չափազանց ձև տալով, կատարել է տվել յուր խնածախցիներին։ Այնպես որ, «Գաղտնիք»-ի մեջ Ղարաբաղի իսկական մելիքները և նրանց յուզբաշիները ոչ միայն սատանիկ

նսեմանում են, այլ բոլորովին անհայտանում են։ Մարդը չգիտե, թե ո՞ւր էին և ի՞նչ էին շինում մելիքները, երբ խնամածախիցիք հրաշքներ էին գործում։ Ամեն անցքերի մեջ միայն նրանք են երեվում, սկսյալ Ս. Պետերբուրգից մինչև Թեհրան և Թեհրանից մինչև Թավրիզ և Թիֆլիս... Ամեն տեղ տարածված են նրանք և բոլոր գործողությունների ու հարաբերությունների կապերը նրանց ձեռքումն է... Դրանք, մինչև անգամ նստում են թագավորների, թագավորազնների և պետական բարձր անձինքների մոտ, նրանց հետ վիճում են, նրանց հանդիմանական խոսքեր են ասում և նրանց հետ դաշնակցական պայմաններ են կապում...

Ես Մակար վարդապետի 70—80 հերոսներին մեծ զիջումներով իրան կներեի, եթե գոնե մեկի անունը նա ցույց տար մի որևէ պատմության մեջ։ Ղարաբաղի մասին շատերն են գրել, բայց ոչ մեկի մեջ Մակար վարդապետի «Ջարբաղանների» և «Վիշապների» անունները չեն երևում։

Եվ վերջապես այդ հսկաները, ինչպես վերևում հիշեցի, դարևոր կյանք ունեին, ապրեցին 1700 թվականներից մինչև 1840-ական թվականները[1], և վերջին թվականներից կենդանի Ղարաբաղում հազարավոր մարդիկ կան։ Ինչպե՞ս եղավ, որ հսկաներից ոչ մեկին չտեսան...

«Գաղտնիք»-ի պատմական մասը այսպես աղավաղված է։

Մնում է մի քանի խոսք ասել այն անթիվ թղթակցությունների մասին, որոնցով լի է այդ գիրքը։

Թղթակցությունները «Գաղտնիք»-ի ամենածիծաղելի կողմն են ներկայացնում։ Ս. Պետերբուրգի և Թեհրանի դիվաններից որքան պաշտոնական թղթեր են գրվում, որոնց խորհուրդը պետք է գաղտնի պահվեր, բոլորի կամ բովանդակությունը, կամ ամբողջ օրինակները մտնում են «Գաղտնիք»-ի մեջ։ Ռուս կամ պարսիկ պաշտոնականները ինչ թղթեր են գրում իրանց կառավարություններին,—նրանց օրինակները դարձյալ մտնում են «Գաղտնիք»-ի մեջ։ Հայոց կաթողիկոսների, եպիսկոպոսների, մելիքների և այլ բոլոր անձանց, որոնք քաղաքական որևէ դեր են խաղում, թղթակցությունները դարձյալ ընդարձակ տեղ են բռնում այդ գրքում։

---

[1] Ես 1840-ական թվականներն եմ վերցնում, որովհետև այդ ժամանակ է գրվում «Գաղտնիք»-ը։

Անդրկովկասի խաները ծածուկ նամակներ են գրում պարսից թագավորներին,— նրանց պատճեններն էլ կան այստեղ։— Մի խոսքով, չէ կատարվում ոչ մի գաղտնի գրավոր հարաբերություն, որ «Գաղտնիք»-ից ծածուկ մնար։ Ամեն տեղ «Շեյթաններ» (սատանաներ), ամեն տեղ «Դևեր» (դևեր) կան և խաբարը իսկույն տանում են...

Մարդ զարմանում է, թե որքան հեշտացրել է Մակար վարդապետը այդ ժամանակների հաղորդակցությունները։ Երբ էջմիածնի կաթողիկոսին ոչ թե ամիսներ, այլ տարիներ էին հարկավոր մի նամակ Վաղարշապատից Գանձասար վանքը հասցնելու համար,—ընդհակառակն, «Գաղտնիքի» մեջ ամեն մի նամակ Ս. Պետերբուրգից կամ Մոսկվայից թռչում է մի քանի րոպեում և հասնում է Թեհրան կամ Թավրիզ։ Կարծես աղավնիները կտուցներով բռնած, օդի միջով են տանում։

Այդ օդասլաց աղավնիները Մակար վարդապետի «Շեյթանթունի»-ները, «Կաքև-Ջաքի»-ները և զանազան «Հրտես-Սուլի»-ներն են, որոնք աներևույթ ուրվականների նման տարածված են ամեն կողմերում և ամեն տեղերից տեղեկություններ են հաղորդում։ Իսկ այդ բոլոր տեղեկությունների շտեմարանը և կենտրոնը «Գաղտնիք»-ի հեղինակն է և յուր գիրքը։

Այդ բոլորը կարդալով այնպիսի տպավորություն է գործում, թե խաբեբաների մի ամբողջ հասարակություն միաբանված են մի հրեշավոր կեղծություն ստեղծելու համար։

Ինչպե՞ս են խմբագրվում այդ կեղծ թղթակցությունները։

Շատ հեշտ կերպով։

Ժամանակների և կառավարությունների պատմական հարաբերությունները հայտնի են, և նրանց համեմատ նամակներ են գրվում։

Օրինակ, ռուսները տիրել են Անդրկովկասի մի մասը։ Այդ, իհարկե, հաճելի չէր կարող լինել պարսից թագավորին, որը իրան այդ երկրի տերն էր համարում։ Պարսից թագավորը դիտավորություն ուներ պատերազմել ռուսների հետ և հետ խլել կորցրած երկրները։ Հառաջ, քան պատերազմի հայտնելը, պարսից թագաժառանգը՝ Աբաս-Միրզան, աշխատում է Անդրկովկասի խաներին և Դաղստանի լեռնաբնակներին նախապատրաստել կամ ապըստամբացնել ռուսների դեմ։ Նրանց ծածուկ հրահանգներ կամ շըր-

չաբերականներ է ուղարկում։ Այդ դեպքում ի՞նչ կգրեր Աբաս-Միրզան յուր կրոնակիցներին։ Շատ հասկանալի է, թե ինչ կգրեր։

Բայց որքան էլ համարեցրած լինեին այդ թղթակցությունների բովանդակությունը կատարված անցքերի և հանգամանքների հետ, այնուամենայնիվ, նրանց ձևը, լեզուն, ոճը, շարադրությունը խիստ ցույց են տալիս Մակար վարդապետի բոբիկությունը դիվանական հմտությունների մեջ, որը պակասում է նրան՝ կեղծը իսկականին նմանեցնելու համար։ Հասարակ լրտեսը թագավորին ուղղակի նամակներ է գրում, այն էլ մի այնպիսի անփույթ ձևով, որը ընկերը ընկերին չի համարձակվիլ գրել։ Մի՞թե հասարակ մահկանացուներ կարող են պարզից թագավորին նամակներ գրել։ Նրան միայն կարելի է խնդիրքով դիմել, շարելով հազար ու մեկ փայլուն տիտղոսներ, որ կապված են նրա բարձր անվան հետ։ Այդ ձևերը, այդ տիտղոսները, իհարկե, չէր կարող գիտենալ Մակար վարդապետը, որը, ինչպես երևում է, յուր կյանքում ոչ մի պաշտոնական գրություն չի կարդացել։

«Գաղտնիք»-ի մեջ զետեղված բոլոր թղթակցությունները կեղծ են։ Կե՛ղծ են նախ այն պատճառով, որ այնքան թղթակցություններ, որոնք կառավարությունների և մասնավոր բարձր պաշտոնականների գաղտնի հարաբերությանց արդյունք են,—չէին կարող անմիջապես «Գաղտնիք»-ի հեղինակի ձեռքը հասնել։ Ո՞վ էր նա և ի՞նչ էր նա, որ բոլոր հակառակ կողմերի խորհրդապահը և արխիվը լիներ։ Երկրորդ, այդ թղթակցությունների թե խմբագրությունը և թե մատակարարությունը կատարվում է այնպիսի անձանց ձեռքով, որոնք երբեք գոյություն չեն ունեցել։ Դրանք, որպես ցույց տվինք, Մակար վարդապետի ստեղծած մարդիկ են։ Եթե այդ անձնավորությունները գոյություն չեն ունեցել, բոլորովին տրամաբանական կլիներ մտածել, որ նրանց գործողություններն էլ չէին կարող գոյություն ունենալ։ Ինչպե՞ս կարող է մեկը նամակներ գրել կամ նամակներ տեղ հասցնել, երբ նրա եսը հավասար է զրոյի։ Կարելի է մեկի կողմից նամակներ շարադրել, իսկ այդ լինում է վեպերի մեջ և ոչ թե պատմության մեջ։

«Գաղտնիք»-ի բազմաթիվ թղթակցությունների մեջ միայն երկու նամակ կա, որ իսկական են։ Դրանցից մեկը Մելիք-Ջումշուդ Մելիք-Շահնազարյանի նամակն է, որ գրված է 1806 թ. դեկ. 2-ին Շուշի քաղաքում (եր. 286—291), իսկ մյուսը՝ Գյուլիստանի Մելիք-

*Աբովի նամակն է, որ գրված է 1807 թ. նոյեմ. 23-ին Թիֆլիսում (եր. 292—296)։ Թե՛ առաջին և թե երկրորդ նամակը ուղղված են Աղա-Մինաս Լազարյանի հասցեին Ս. Պետերբուրգ։*

*Արդյոք ինչպե՞ս են մտել այդ նամակները «Գաղտնիք»-ի մեջ—այդ գաղտնիքը ես թողնում եմ, որ լուծե պ. Երիցյանը, որովհետև նույն նամակների ռուսերեն թարգմանությունը տպված է նրա* «Кавказская старина» *անունով ամսագրի մեջ, 1872 ամի, № 2։*

*Արդյոք պ. Երիցյանը երկնքում բաժանորդներ ունե՞ր կամ «Գաղտնիք»-ի հեղինակ Աբրահամ Բեկնազարյանը ստանո՞ւմ էր նրա ամսագիրը մյուս կյանքում...*

## Ը

*«Գաղտնիք»-ի մեջ ինչ որ ավելի հետաքրքիր է, ինչ որ իսկապես կարող է պատմական արժեք ունենալ,—դա է մելիքների տոհմային ազգաբանությունը։*

*Ղարաբաղի մելիքությունները ներկայացնող հինգ իշխանական տների ազգաբանությունը, հանդերձ իրանց մանրամասն ճյուղագրությամբ, զետեղված են «Գաղտնիք»-ի մեջ (եր. 180—208)։*

*Կարդալով այդ ճյուղագրությունները, մարդ զարմանում է, թե «Գաղտնիք»-ի հեղինակը որտեղի՞ց և ի՞նչ աղբյուրներից առել է անունների այն երկար շարքը, որոնց սկիզբը կապվում է Աղվանից ամենահին թագավորների հետ, իսկ վերջը հասնում է մինչև մեր ժամանակները։*

*«Գաղտնիք»-ին նայելով, Ղարաբաղի բոլոր մելիքական տները թագավորական ծագումից են, և բոլորն էլ միևնույն տոհմից։*

*Այդ ճյուղագրություններին նախանձախնդիր և ջերմ փափագով որոնող է եղել Ղարաբաղի միտրոպոլիտ Բաղդասար եպիսկոպոս Հասան-Ջալալյանը։ 1828 թվին, սեպտեմբերի 20-ին նորին սրբազանությունը մի նամակով դիմում է «Գաղտնիք»-ի հեղինակ Աբրահամ Բեկնազարյանին և ի միջի այլոց հայտնում է.*

> *«...Ես մտադիր եմ տպագրել տալ Ղարաբաղի և Աղվանից բոլոր* պատմությունները *և հրապարակավ ցույց տալ աշխարհին Ղարաբաղի հարազատ մելիքների ծագումը, որի առաջին օղակն սկիզբն առած է Առանից (Աղվանից առաջին*

իշխանից) և վերջին օղակն հասած է մեր օրերն: Բայց որովհետև դու երկար ժամանակ ապրած ես այդ բոլոր պատմությունները Գանձասարի Ներսես կաթողիկոսի մոտ, որովհետև քո գիտությամբ թաքցրած են այդ անգին գանձերը (ընթերցողներին հայտնի երեք տեղերում) և որովհետև այժմ իմ ձեռքում չունիմ այդ ձեռագիրները՝ վասն որո դիմում եմ քեզ: Լուսահոգի Սարգիս կաթողիկոսն[1] վախճանվելու ժամանակ ինձ պատվիրեց փութով ստացել տալ այն ձեռագիր պատմությունները. երբ հարցրի, թե ո՞ւր են այդ ձեռագիրները,—նա պատասխանեց.—«Այդ գրքերը երեք տեղերում թաքցրած են... Աճապարիր Ազրայիլի («Գաղտնիք»-ի հեղինակի) մոտ ղրկել Փիլ-Առուշանը և տեղեկանալով հանել տալ այդ ձեռագիր պատմությունները, որպեսզի չոչնչանան հոգի կերակուր լինելով...»: Արդ, սիրելի Բեկնազարյան, եթե դու անկարող կլինես փութով Ղարաբաղ, մեզ մոտ գալ՝ գոնե նամակաբերիս ձեռնով գրիր ինձ այն ձեռագրերի թաքստյան երեք տեղերը, բայց հականե հանվանե և մերձակա նշաններով և գտնելը դյուրացնող առարկաները մատնանիշ անելով» (եր. 386, 387):

«Գաղտնիք»-ի հեղինակը այդ նամակը ստանում է այն ժամանակ, երբ արդեն հիվանդ էր և նույն հիվանդությամբ վախճանվեցավ նա:

Բայց չնայելով, որ նա գիտեր ձեռագրերի թաքստյան տեղերը, այսուամենայնիվ, պատվիրեց որդուն՝ Ապրես Բեկնազարյանին պատասխանել մի այսպիսի անորոշ ձևով.

«Իմ մահից հետո Փիլ-Առուշանի ձեռք գրիր Բաղդասար սրբազանին, որ ես ականատես եղած չեմ այն ձեռագրերի թաղած տեղերին, այլ միայն հաճախակի լսած եմ Մելիք-Մեժլումից, Մելիք-Աբովից, Դրախմաղ-Հովսեփից, Տեր-Մահրասայից և Տոնմաղ-Պելլուից, որ գրքերի առաջին մասն թաղած է Գանձասարի և Խաթրա վանքի միջև մի քարայրում, որի մուտքն փակված է քարուկիր պատով, երկրորդ մասն

1 Սարգիս կաթողիկոսն Բաղդասար միտրոպոլիտի ազգականն էր, նույնպես Հասան-Ջալալյանների տոհմից, վախճանվեցավ 1828 թվին և նրա հետ վերջացավ Աղվանից կաթողիկոսությունը:

*Ջրաբերդի մելիքարանի (՞) տակ, իսկ երրորդն՝ Հոռեկա վանքի մոտերում» (արի ու գտի՛ր). (եր. 389)։*

*Այդ երկու նամակներից երևում է, որ մինչև 1828 թվականի սեպտեմբերի 20-ը ոչ Բաղդասար միտրոպոլիտը և ոչ էլ «Գաղտնիք»-ի հեղինակ Աբրահամ Բեկնազարյանը չեն տեսել թաղած պատմագրերը և նրանցից օգուտ չեն քաղել։*

*Այդ երկու նամակներից երևում է և այն, որ Բաղդասար միտրոպոլիտի գլխավոր նպատակը՝ թաղած ձեռագրերը գտնելու վերաբերությամբ, կայանում էր առավելապես նրանում, նախ որ տպագրել տա, որպեսզի գրականության սեփականություն դառնան, երկրորդ, ինչպես ինքը գրում է, որ կարողանա «Հրապարակավ ցույց տալ աշխարհին Ղարաբաղի հարազատ մելիքների ծագումն, որի առաջին օղակն սկիզբն առած է Առանից և վերջին օղակն հասած է մեր օրերը»։*

*Ապացուցանել Ղարաբաղի մելիքների վաղեմի հնադարյան ծագումը, որ նրանք շառավիղում են Աղվանից առաջին թագավոր Առանից—այդ խնդիրը Բաղդասար միտրոպոլիտի հետաքրքրության համար ոչ միայն պատմական նշանակություն ուներ, այլ առավել գործնական նշանակություն ուներ։ Ինչո՞ւ։*

*Ռուսները նոր են տիրել Ղարաբաղը։ Ազնվականների և ժառանգությունների որոշելու խնդիր էր ծագել։ Թուրք խաները և թուրք բեկերը, մի կողմից, հայոց բեկերը և հայոց մելիքները մյուս կողմից, սաստիկ մաքառում էին միմյանց հետ։ Յուրաքանչյուրը աշխատում է յուր տոհմային գերազանցությունը և յուր իրավունքները ապացուցանել նոր տիրող կառավարության առջև[1]։ Այդ բոլորը ստիպում էր Բաղդասար միտրոպոլիտին ավելի հիմնավոր տեղեկություններ ունենալ մելիքների ծագման մասին, մանավանդ այն պատճառով, որ այդ ժամանակ թե Բաղդասար միտրոպոլիտի, որպես Աղվանից բարձր հոգևոր ներկայացուցչի, և թե էջմիածնի կաթողիկոսի տված վկայությունները հայոց ազնվա-*

---

*1 Հենց այդ ժամանակներում Միրզա-Ջամալը և Միրզա-Ադիգեոզալը գրեցին Շուշիի նորաբուսիկ խաների պատմությունը, որոնց ծագման սկիզբը հասցրին մինչև Սամար-Ղանդի թագավորները, իսկ Բագուի Միրզա-Մուհամմադ-խանի որդի Արասղուլի բեկը գրեց Շիրվանի խաների և Դաղստանի տիրապետողների պատմությունը։*

կանների ծագման մասին՝ կառավարությունը ընդունում էր իբրև վավերական վկայական։

Բայց ի՞նչ ենք տեսնում։

Հենց միևնույն տարվա մեջ, երբ Բաղդասար միտրոպոլիտը յուր առաջարկություններով դիմում է «Գաղտնիք»-ի հեղինակին. այդ գիրքը արդեն գրված և վերջացած էր, և նրա մեջ կարգով արձանագրված կային Ղարաբաղի բոլոր հինգ տիրապետող մելիքների թե ազգաբանությունը և թե նրանց ծագման ճյուղագրությունները, ճիշտ նույն ձևով, որպես պահանջում էր Բաղդասար միտրոպոլիտը,— այսինքն՝ սկսյալ Աղվանից առաջին թագավոր Առանից և հասցրած մինչև Բաղդասար միտրոպոլիտի օրերը։ Բոլորը պատրաստ էր։ Եվ «Գաղտնիք»-ի հեղինակին մի այլ ավելի բարեհաջող առիթ չէր կարող ներկայանալ, քան թե այն, որ առաջարկում էր Բաղդասար միտրոպոլիտը։ Սրբազանը թե տպարան ուներ և թե միջոցներ նրա պատմությունը տպագրելու համար։ Բայց «Գաղտնիք»-ի հեղինակը յուր պատմության մասին լռում է (երևի նա Մակար վարդապետի համար էր պահում...) և փոխանակ յուր ձեռքում ունեցած արդեն պատրաստի պատմությունը սրբազանին ուղարկելու, նրան ցույց է տալիս գետնի տակ թաղված երևակայական պատմությունների երևակայական տեղերը...

Այդ այդպես։

Իսկ մյուս կողմից՝ գտնում ենք նույն ազգաբանությունները, նույն ճյուղագրությունները, նույն ձևով կազմված Բաղդասար միտրոպոլիտի աշխատությունների մեջ։ Եվ ե՞րբ—շատ տարիներով առաջ, քան նրա նամակով «Գաղտնիք»-ի հեղինակին դիմելը։ Եթե նրա մոտ կար այդ, այլևս ի՞նչ կարիք ուներ Բեկնազարյանին դիմելու։

Ահա՛ մի հանելուկ ևս, որ լուծելու համար պետք է նախ կարդալ երկուսի համեմատությունները։

Ես դնում եմ առաջ Բաղդասար միտրոպոլիտի կազմած Աղվանից թագավորների, Աղվանից իշխանների և Հասան-Ջալալյանների տոհմի ազգաբանությունը, իսկ հետո նույն ազգաբանությունը, որ տպված է «Գաղտնիք»-ի մեջ։

Ազգաբանութիւն և ծննդաբանութիւն ազգին Հասան-Ջալալեանց հանեալ և հաւաքեալ ի պատմութեանց Հայոց և Աղուանից և ի յարձանագրեաց ի խաչքարաց և ի տապանաքարաց, եղե-

*լոց ի վանսն Գանձասարայ և ի շրջակայ նորին վանորայս և տեղիս հանդերձ թուարանութեամբ, զորս համառօտ շարահիւսեցի ես Բաղդասար միտրոպոլիտ Աղուանից Հայոց որդի Դանիել-բեկ իշխանի և թոռն Մելիք-բեկ իշխանին Հասան-Ջալալեանց նախկին տերանցն երկրին Արցախոյ գաւառին Խաչենոյ, յաղագս տեղեկութեան նորկայ և ապագայ սերնդոց, տոհմայնոց և ազգականաց իմոց։*

*Գրեցաւ ի ՌՄՂԸ թուին Հայոց և ի 1849 ամի Տեառն*[1]։

Ի ծննդոց Հայկազանց *կարգեցա՝*

1. *Առան նախագահ Աղուանից։*

*Իսկ որք ըստ կարգի կացին թագաւորք տանս Աղուանից ի մեծ ազգեն Արշակունեաց՝ անուանք են այսոքիկ՝*

2. *Վաչական քաջ Ա.*
3. *Վաչէ Ա.*
4. *Ուռնայր.*
5. *Վաչական Բ.*
6. *Մրհաւան.*
7. *Սատոյ.*
8. *Ասայ.*
9. *Եսուաղեն.*
10. *Վաչէ Բ.*
11. *Վաչական Գ. բարեպաշտ։*

5

*Ի նոյն պատմութեան (Կաղանկատուացւոյ) 3 պրակն է և 22 գլուխն այսպէս է գրեալ.—Ստուգութեամբ այսպէս ծանեաք սակս Հայկազանց խնամաւորել Միհրական տոհմին և պատուասութեամբս այսուիկ տալ զոյգ ունել զպետութիւն արևելեաց կողմանցն Աղուանից։ Անուանք արքայիցն, որոց վերագոյն գրեցան ի քաջէն Վաչականայ մինչև ցբարեպաշտն Վաչական՝ տասն թագաւորք լեալ, յորոց ըստ թուոյ աւուրց տարւոյն եկեղեցիս միայն (ինքն)*

---

[1] *Ես թողնում եմ 1, 2, 3, 4-րդ մասը, որ հեղինակը զանազան պատմագիրների վրա հիմնվելով, գրում է իբրև ներածություն։*

բարեպաշտն Վաչական շինեաց յարևելս։ Եվ զկնի մահու նորա սկսաւ նուաղիլ ազգն այն։

6

Եվ Միհրանն, որ ի Սասանեան տոհմէն էր եկեալ ի պարսից հաստատեցաւ ի նախարարութիւն ի վերայ աշխարհիս Աղուանից և անուանք նոցա որդի ի հօրէ առնելով, են այսոքիկ՝ Միհր, Արմայել, Վարդ, քաջն Վարդան, որ հաւատացեալ ի Քրիստոս, և որ-շինողն Գարդմանայ բերդին։ Վարդան ծնանի Վարդ, Վարդ ծնանի զՎարազ Գրիգոր առաջին իշխանն Աղուանից։ Գրիգոր ծնաւ զչորս որդիս՝ Վարազ Բերոժ, Ջուանշիր, Եզուտ Խոսրով և Վարազման։ Եվ ի սոցանէ յերից որդւոյն շարելով ըստ կարգին անուանքն բերցուք ի յայտ առ Հայկազեանս, և այլք կացցեն։

7

Եվ են այսոքիկ՝ Վարազ Բերոժ, Վարազ Տրդատ, Վարդան, Ներսեհ դժնդակ, Ներսեհի որդի Գագիկ, Գագիկայ որդի Ստեփաննոս և Սպրամիկ քոյր իւր։ Զայս Վարազ Տրդատ և զորդի նորա և եղբօր որդի նորա Ստեփաննոս, Ներսեհ Փիլիպեան՝ ազգակիցն նորա սպան ի միում ժամու ի խորաձորն, որ կոչի Դատայի վանք։ Ապա յայն աղէտիցն զառն զգեցեալ արիութիւն կնոջն սպանելոյ՝ առեալ զմնացեալ դուստր իւր Սպրամ՝ գիշերահէն գնժանելի ուղևորութեամբ՝ մատանէ ի բերդն Խաչենոյ, և բարուրս խորհեալ տան իւրում՝ ամուսնացուցանէ զՍպրամ ընդ Ատրներսեհի՝ Սահլի որդւոյ, որ էր ի տոհմեն Հայկայ և տեր Սիւնեաց, որոյ բռնաղբոսութեամբ կալեալ էր զգաւառն Գեղամայ. և որդին իւր Ատրներսեհ հանդիպեցաւ կնոջ զգաստի, որք երկյուղածք յԱստուծոյ և բարեպաշտք զիւրեանցն ցուցանէին զկեանս և աշխարհի քաղցունք։

8

Ատրներսեհ իշխանն շինէ զբերդն Հանդու (Հանդաբերդ) և զապարանս իւր եդեալ ի գյուղն որ կոչի Վայունիք, ուր և բաղանիքն արքունական են և բերդն այն (այժմ կոչի Ջերմուկի ղալա, իսկ գյուղն Քաղաքատեղ ի գավառին Ջրաբերդու)։ Եվ Ատրներսեհ իշ-

խանն ընդ այլ իշխանաց Հայոց տարան յերկիրն Պարսից յերեք հարյուր և երեք թուին Հայոց յ854 ամի տեառն։ Եվ կալով նորա ընդ ամս բազումս, տիկինն Սպրամ առաւել հաճախէր ի բարեգործութիւնս, և մեծածախ տենչմամբ շինէ զՆորավանս ամենապայծառ զարդուք՝ ի գավառին Սոտէից ի նահանգին Գեղարքունւոյ։

9

Ատրներսեհ իշխանն իսկոյն գայր՝ զերծեալ ի կողմանցն Տաճկաց, և ի խաղաղութեամբ առ ժամայն լուծանէ զկեանս։ Ատրներսեհ ծնանի զԳրիգոր և զԱպուսեթ։ Գրիգոր իշխանն շինէ զբերդն Հաւքախաղացին ի գաւառին Խաչենոյ, և յայն կողմն ձգէ զձեռս իւր իշխանութեան՝ յերեք հարիւր քառասուն թուին Հայոց՝ յ891 ամի տեառն։ (Եւ բերդն Հաւքախաղացին այժմ կոչի Սաղսաղանու Ղալայ, և հեռի է ի Գանձասարու վանից և ի Խօխանաբերդէն ութն ժամու ճանապարհաւ)։

10

Գրիգոր իշխանն Ատրներսեհեան ծնանի զհինգ որդիս՝ Ապուա-լի, Ատրներսեհ Բ., Սահակ Սևադայ, Սմբատ և Վասակ։ Երէց որդի Գրիգոր իշխանին՝ Ապուալի իշխանն Աղուանից հայկազնի՝ սպանաւ յիւրմէ հարազատեն Սմբատայ յերեքհարիւր քառասուն և վեց թուին Հայոց յ897 ամի տեառն, և եղև այն սուգ մեծ իւրայնոցն զարմից։ Եվ եղբայր նորա Ատրներսեհ թագաւորեաց ի վերայ Աղուանից յ359 թուին Հայոց յ910 ամի տեառն։

11

Իսկ երրորդ որդի իշխանին (Գրիգորի) Սահակ Սևադայն եղև երևելի և մեծ իշխան քաջ և յաջողակ՝ առհասարակ տիրեաց Գարդմանայ գաւառին (որ ի նահանգին Գանձակայ) և Քաւսայ և Փառնայ[1] գաւառաց, այլև աւազակապետաց Ջորագետոյ և Արցա-

1 Այդ երկու գավառների անունները շատ տեղերում, գրչագրերի վրիպումներով միախառնելով գրում են ի միասին Վօստիփառնա։

*խոյ բովանդակ եղև իշխան և տիրապետող։ Եվ խնդրող իսկ գրագիտութեան՝ և դպրոցս ի տան իւրում կարգեաց. ընդ որում և բազմաջան հնարիւք թագաւորն Հայոց Սմբատ մարտուցեալ՝ ոչինչ կարաց ստերիւրել զնա ի կամս իւր։ Եվ զկնի մահուան Սմբատայ թագաւորին Հայոց, Աշոտ որդի նորին թագաւորեաց ի վերայ Հայոց և վասն քաջագործութեան նորա Աշոտ Երկաթ կոչիւր. և այս Աշոտ թագաւորն Հայոց էառ ի կնութիւն իւր զդուստր Սահակ Սևադայ հզօր և մեծ իշխանին Աղուանից և Արցախայ յ371 ամի թուին Հայոց և յ922 ամի տեառն։*

12

*Սահակ Սևադայ մեծ իշխանն Աղուանից ծնանի զԳրիգոր Բ. և զԴաւիթ։ Գրիգոր Բ. իշխանն ծնանի զՍևադայ Բ., որ իշխանիկ կոչիւր և զԱտրներսեհ Գ.։ Իսկ Սևադայն Բ. ծնանի զչորս որդիս՝ Յովհաննէս, Գրիգոր Գ., Փիլիպպոս և Ատրներսեհ Դ.։ Իսկ զերէց որդին իշխանկի (Սևադայ Բ-ի) զՅովհաննէս, որ և Սենեքերիմ կոչեցաւ, ընտրեաց աջն բարձրելոյն՝ կոչելով զնա ի թագաւորութիւն, և զվաղնջուց խափանեալ թագաւորութիւն տերն ամենակալ ի ձեռն սորա նորոգեաց, զոր և թագաւորն պարսից մեծամեծ զարդուք պատուէ և տայ նմա զթագ հօր իւրոյ ընորին երկվարին*[1]*։ Իսկ Փիլիպպոս թագաւորեաց ի վերայ Աղուանից ի ՆԺ թուին Հայոց յ961 ամի տեառն։ Փիլիպպոս ծնանի Գրիգոր Դ., Գրիգոր Դ. ծնանի զՍակառ, որ Վախտանգ կոչիւր, Սակառ Վախտանգ ծնանի զՎախտանգ Բ., Վախտանգ Բ. ծնանի զՀասան։*

13

*Հասան իշխանն Ծակառ-Վախտանգեան եղև երևելի և մեծ իշխան և էառ ի կնութիւն իւր զՄամայ զդուստր Կիւրիկէ թագաւորին Հայոց Բագրատունւոյ ի հինգհարիւր և ութսուն թուին Հայոց ի 1131 ամի տեառն։ Հասան իշխանն ծնանի զՎախտանգ Դ., զՎասակ Սմբատ, զԳրիգոր և զայլս։ Վախտանգ Դ. իշխանն Հասանեան եղև երևելի իշխան և էառ ի կնութիւն զԽորիշահ դուստր*

---

1 *Մինչև այստեղ հեղինակը հետևել է Կաղանկատուացու պատմությանը։*

*Սարգիս իշխանին և քոյր Զաքարիա և Իվանէի մեծամեծ իշխանացն Հայոց, և ծնանի զՀասան-Ջալալ, զԶաքարիայ, զԻվանէ, զԴօլի և զՄարիամ։*

14

*Ջալալ-Հասան որդի Վախտանգայ Դ. և թոռն Հասանայ եղև երևելի և մեծ իշխան ի ՈՂԲ թուին Հայոց և ի 1243 ամի տեառն, և էառ ի կնութիւն իւր զՄամքան թոռն Սեննքերիմ թագաւորին Սիւնեաց՝ զդուստր Գրիգոր իշխանին Սիւնեաց։ Ջալալ-Հասան ծնանի զԱթաբակ և զԻվանէ և զդստերս երիս՝ Ռուզան, Նանայ և Մինա-խաթուն։ Ռուզան եղև կին Բուղայի որդւոյ Չարմաղան խանին թաթարաց, Նանայ եղև կին Ումեկ Հայոց իշխանին Տփխիսեցւոյ, և ծնանի զՎախտանգ, Վախտանգ ծնանի զԱրղութ, Արղութ ծնանի զՄեհրապ։ Մեհրապ ծնանի զՇահնշէն։ Եվ զկնի մահուան Ջալալ-Հասան իշխանին, Մինա-խաթուն եղև կին Տարսայիճ իշխանին Սիւնեաց, և ծնանի զուստր Ջալալ և զդուստր Ափսայ (Ասփայ), ի ՉԻ ամին Հայոց և ի 1271 ամի տեառն։*

15

*Աթաբակ որդի Ջալալ-Հասանայ եղև երևելի ի ՉԾԵ թուին Հայոց, ի 1306 ամի տեառն, ծնանի զՋալալ Բ., որ Պարոն կոչիւր, և զԻվանէ, Իւանէ ծնանի զՎախտանգ Դ., Վախտանգ Դ. ծնանի զԱթաբակ Բ., Աթաբակ Բ. ծնանի զԱյտին և զԽիմշէ։ Պարոն Ջալալն Բ. երեց որդի Աթաբակին ծնանի զՅովհաննէս Ա. կաթողիկոսն, զՊարոն Աղբաստ, զՊարոն Պաստամ, զՄէժլիս, զԱմիր Հասան և զտէր Վարդան։ Յովհաննէս կաթողիկոսն վախճանեցաւ ՋԺԹ թուին Հայոց, ի 1470 ամի տեառն։*

16

*Պարոն-Աղբաստ որդի Պարոն-Ջալալ Բ. իշխանին ծնանի զՊարոն Սայտուն, Պարոն-Սայտուն ծնանի զԱրիստակէս կաթողիկոս, զՀատիր-Մէլիք, զՎէլիջան բէկ Ա., զՄէլիք։—Արիստակէս կաթողիկոսն վախճանեցաւ ի ՋՀԵ թուին Հայոց, ի 1521 ամի տեառն։*

17

*Հատիր-մէլիք իշխանն, որդի Պարոն-Սայատունին, ծնանի զՍարգիս Ա. կաթողիկոս և զՄեհրաբ-բէկ։—Սարգիս կաթողիկոսն վախճանեցաւ ՋՂԵ թուին հայոց ի 1546 ամի տեառն։—Մեհրաբ-բէկ որդի Հատիր-մէլիք իշխանին՝ ծնանի զԳրիգոր Ա. կաթողիկոս, զՋալալ-բէկ Գ. և զԲաղդասար-բէկ Ա։—Գրիգոր կաթողիկոսն վախճանեցաւ ի ՌԻԲ թուին հայոց, 1573 ամի տեառն։*

18

*Բաղդասար-բէկ որդի Մեհրաբ-բէկին ծնանի զԴաւիթ կաթողիկոսն և զԴաւիթ-բէկ։—Դաւիթ կաթողիկոսն վախճանեցաւ ի ՌԻԳ թուին հայոց, ի 1574 ամի տեառն. Դաւիթ-բէկ՝ որդի Բաղդասար-բէկին՝ ծնանի զՅովհաննէս Բ. կաթողիկոս և զՄուշբէհ-բէկն։—Յովհաննէս Բ. կաթողիկոսն վախճանեցաւ ի ՌՀ թուին հայոց և ի 1621 ամի տեառն։*

19

*Ջալալ-բէկ Գ. որդի Մեհրապ-բէկին՝ ծնանի զՎէլիջան-բէկ Բ. և զԱղաբէկ։ Այս Ջալալ-բէկ եղև երևելի և մեծ իշխան ի ՌԼԵ թուին հայոց, ի 1586 ամի տեառն, հանդերձ երկու եղբօրորդւովքն իւր և ընդ այլ իշխանաց հայոց և Աղուանից գնացին ի տեսութիւն առաջին և մեծ Շահ-Աբաս արքային պարսից և ի նմանէ յոյժ պատուեցան խիլայիւք, նաև Ջալալ-բէկն ի նոյն Շահ-Աբաս արքայէ էառ զֆէրման յանուն իւր եղբօրորդի Յովհաննէս Բ., կաթողիկոսին Աղուանից և դարձաւ ուրախութեամբ ի տուն իւր։ Վէլիջան-բէկ Բ. որդի Ջալալ-բէկին Գ. ծնանի զԳրիգոր Բ. կաթողիկոս և զԲաղդասար-բէկ Բ.—Գրիգոր կաթողիկոսն վախճանեցաւ ի ՌՃԲ թուին հայոց, ի 1853 ամի տեառն։*

20

*Բաղդասար-բէկ Բ. որդի Վէլիջան-բէկին Բ-րդի և թոռն Ջալալ-բէկին Գ-րդի՝ ծնանի զԵրեմիայ կաթողիկոս, զԱրիստակէս եպիսկոպոս զՎէլիջան-բէկ Գ. և զՄուլքի-բէկ։ Երեմիայ կաթողիկոսն վախճանեցաւ ի ՌՃԽԹ թուին հայոց և ի 1700 ամի տեառն։*

Վէլիջան-բէկ Գ. ծնանի զԵսայի կաթողիկոս և զՅովհաննէս։ Եսայի կաթողիկոսն վախճանեցաւ ի ՌՃՀԵ թուին հայոց և ի 1726 ամի տեառն։

21

Մուլքի-բէկ որդի Բաղդասար-բէկին Բ-րդ ծնանի զՄէլիք-Գրիգոր և զՄէլիք-Ալլահվերդի Ա.։ Մէլիք-Գրիգորն զիւր մելիքական իշխանութիւնն ետ իւր եղբօր Մէլիք-Ալլահվերդւոյն ի վերայ Խաչենոյ գաւառին, և ինքն հրաժարեցաւ յիւր մարմնաւոր իշխանութենէն և օծաւ վարդապետ և եղև առաջնորդ Սրբոյ վանիցն Գանձասարու ի ժամանակս տիրապետութեանց օսմանցւոց և Նադիր-շահ պարսից արքային, յորոց ֆէրմանսն յայտնի գրեալ երևի, որ առ մեզ գտանին։ Գրիգոր վարդապետ վախճանեցաւ ի ՌՃՂԷ թուին հայոց և ի 1748 ամի տեառն։

22

Յորդւոյ Մուլքի-բէկին՝ ի Մէլիք-Ալլահվերդւոյն Խաչենոյ ծնանի Եսայի եպիսկոպոս և Մէլիք-բէկ Ա., իսկ Մէլիք-բէկ իշխանն ծնանի զՅովհաննէս Գ. կաթողիկոս և զՍարգիս Բ. կաթողիկոս։ Յովհաննէս կաթողիկոսն վախճանեցաւ ի ՌՄԼԵ թուին հայոց և ի 1786 ամի տեառն։ Սարգիս կաթողիկոսն վախճանեցաւ ի ՌՄՀԷ թուին հայոց և ի 1828 ամի տեառն։—Եւ միւս վեց որդիք նորա Մէլիք-բէկ իշխանին են սոքա՝ Գաբրիէլ-բէկ, Դանիէլ-բէկ, Միքայէլ-բէկ, Իսրայէլ-բէկ, Ջալալ-բէկ Դ. և Ալլահղուլի բէկ։

Ա. Գաբրիէլ-բէկն ծնանի զԵրեմիա եպիսկոպոս և զԳրիգոր-բէկ։ Գրիգոր-բէկն ծնանի զՋալալ-բէկ Ե. և զդուստր Խորիշահ։ Ջալալ-բէկ Ե. ծնանի զՍարգիս-բէկ և զՄինա-խաթուն դուստրն։

Բ. Միքայէլ-բէկն ծնանի զԱպրես բէկ և զԱսլան-բէկ։ Ապրես-բէկն ծնանի զԱթա-բէկ Գ., զԳրիգոր-բէկ և զՋաւատ-բէկ։ Աթա-բէկն ծնանի զՄովսէս և զայլս։ Գրիգոր-բէկն ծնանի զԻվանէ և զայլս։

Դ. Ջալալ-բէկն ծնանի զԱթաբակ, զԱռստամ-բէկ և զԽորիշահ դուստր։ Առստամ-բէկն ծնանի զԵսայի և զայլս, որք գտանին ի Բոլնիս։

Ե. Ալլահղուլի-բէկն ծնանի զԱռուշան-բէկ և զՋհանգիր-բէկ։ Առուշան-բէկն ծնանի զիւր որդիս, որք գտանին ի Բոլնիս։

## 23

Վեցերորդ որդի Մելիք-բէկ իշխանին՝ Դանիէլ-բէկն ծնանի զԲաղդասար միտրոպոլիտ և զՄէլիք Ալլահվէրդին Բ. Խաչենոյ գաւառին։ Մէլիք-Ալլահվերդին Բ. ծնանի զԵրեմիայի քահանայ, զՄովսես վարդապետն, զԱբրահամ-բէկն և զՅովսէփ-բէկն։ Մէլիք-Ալլահվէրդին վախճանեցաւ ի 1276 թուին հայոց և 1827 ամի տեառն։ Եւ Մովսես վարդապետն վախճանեցաւ ի ՌՄՂԸ թուին հայոց և ի 1849 ամի տեառն։

Երեմիայ քահանայն ծնանի զվեց որդիս, որք են՝ Վախթանգ, Ջալալ, Շամիր...

Աբրահամ-բէկն ծնանի զՄէլիք-բէկ և զԱլլահվերդի-բէկ։

Յովսէփ-բէկն ծնանի զՎէլիջան-բէկ և զԴանիել-բէկն։

## 24

Այլ և յառաջին Մէլիք-բէկ իշխանեն Հասան-Ջալալեանց, որպես ի վերոյ գրեալ եմ և սոքա են կենդանիք արուականքն ի սերընդոց և ի տոհմականաց Հասան-Ջալալյանց։

Բնագրի վրա յուր խսկական ձեռքով ստորագրել է Միտրոպոլիտ Բաղդասար Հասան-Ջալալյանց։

## Թագավորք Աղվանից

Ա. Առան Սիսական, Հայոց Վաղարշակ թագավորից հաստատված.
Բ. Քաջն Վաչական Ա. Արշակունի ազգից.
Գ. Վաչե Ա.
Դ. Ուռնայր.
Ե. Վաչական Բ.
Զ. Միհրավան.
Է. Սատո.
Ը. Ասա.
Թ. Արովաղեն կամ Եսվաղէն.
Ժ. Վաչե Բ., որ հիմնում է Պարտավ քաղաքը (?).
ԺԱ. Վաչական Գ. բարեպաշտ։

## Սասանեան հեթանոս նախարարք

*Ա. Միրհանից ծնվում և իշխում է*

*Բ. Արմայելն Արմայելից*

*Գ. Վարդն Վարդից*

*Դ. Քաջն Վարդանն, որն ընդունում է քրիստոնեական հավատը և մկրտվում Աղուանից Վիրո կաթողիկոսի ձեռնով և հիմնում Կովկաս սարի տակ մի ավան և յուր անվամբ կոչում Վարդաշեն (?)։ Վարդանով կրկին շարունակվում է քրիստոնյա նախարարության շղթան։*

## Քրիստոնյա նախարարք.

*Ա. Քաջն Վարդանից ծնվում և նախագահում է՝*

*Բ. Վարդ Ա. սորանից*

*Գ. Վարազ- Գրիգոր Ա., որից*

*Դ. Վարդ Բ. (?), որից*

*Ե. Վարազ-Գրիգոր Բ., որից ծնվում են Վարազ-Պերոժ, Ջիվանշիր, Եղուտ-Խոսրով և Վարազման...*

*Զ. Ջիվանշիրին հաջորդում է յուր եղբայր*

*Է. Վարազ-Պերոժն, որից ծնում և տեղակալում է.*

*Ը. Վարազ-Տրդատ, որից*

*Թ. Վարդան Գ., որից*

*Ժ. Ներսեհ Դժնդակ..., որից*

*ԺԱ. Գագիկն, որից*

*ԺԲ. Ստեփաննոս, որ Վարազ-Տրդատի հետ սպանվում է Ներսեհ Դժնդակից Դատի վանուց ձորում, ահա այս է «Դժնդակ» կոչվելու պատճառն։ Գագկա կինն ունենալով միայն Սպրամ անվամբ մի դուստր՝ գիշերով փախչում է Խաչենի բերդն (Կաչաղակաբերդ (?) և այդ դուստրը ամուսնացնում Բագրատունի (?) Սմբատ իշխանի (?) թոռան Ատրներսեհի հետ։*

*ԺԳ. Ատրներսեհն շինում է Հանդաբերդը և յուր պալատը հաստատում Վերին Խաչենում չիմուկների կողմում։ Սորա անդրանիկն։*

*ԺԴ. Գրիգոր Ա. շինում է Հավքախաղաց բերդը և յուր իշխանությունը ավելի զորացնում այդ անառիկ բերդով, որից ծնվում և հաջորդում է...*

*ԺԵ. Սահակ-Սևադա, որ քաջ տղամարդ լինելով տիրում է Գարտման, Քաշոա և Փառնա գավառներին և սկսում է տարածել սոցա մեջ գիր, դպրություն և ուսում։ Սահակ Սևադայից...*

*ԺԶ. Գրիգոր Բ., որ Գուշատակ ևս է կոչվում, որից*

*ԺԷ. Փիլիպպոս (?), որից*

*ԺԸ. Սևադա Ա. (?), իսկ սորանից Հովհաննես (?), որ Սենեքերիմ ևս է կոչվում։ Վերջինս յուր բնական հանճարով, ռազմագետական տաղանդով և կառավարչական խորագիտությամբ, հաջողում է պարսից կառավարության միջոցավ ձեռք բերել Աղվանից թագավորությունը և թագը, որ վաղուց մեռած էր։*

*Ա. Սենեքերիմ (?) թագավորից ծնվում և իշխում է՝*

*Բ. Գրիգոր (?) թագավորն, որով կրկին մեռնում է Աղվանից թագավորությունն։ Գրիգոր թագավորից ծնվում են երեք որդիք՝ Վախտանգ թագավորազն, Սմբատ թագավորազն (?) և Վասակ թագավորազն (?)։*

Տագումն իշխանաց և մելիքաց Ջալալյան տոհմին.

*Ա. Վախտանգ թագավորազնին տեղակալում է յուր անդրանիկն*

*Բ. Հասան-Մեծն, որն ծնված էր Քուրդ իշխանի Արզու դստերից, Հասան-Մեծին տեղակալում է*

*Գ. Վախտանգ Սակարն (?), որն ամուսնացած էր Քուրդ իշխանին Սարգիս որդու Խորիշահ դստեր հետ.*

*Վախտանգ Սակարից (?) ծնվում է*

*Դ. Ջալալ-Դոլա Հասան, որն ամուսնացած է Մեծ Սյունյաց Տարսայիճ (?) իշխանի Մամքան դստեր հետ, որից ծնվում և հաջորդում է*

*Ե. Աթաբեկ Ա, որից*

*Զ. Պարոն Ջալալն, որից*

*Է. Աթաբեկ Բ-ն (?), որից*

*Ը. Այտին բեկն (?), սորա փոքր եղբայր*

*Թ. Աղբասան (?), որից*

*Ժ. Հատիր մելիքն (?), որից*

*ԺԱ. Մեհրամ բեկն (?), որից*

*ԺԲ. Ջալալ-բեկն, որից*

*ԺԳ. Վելիջան բեկ Ա., որից*

*ԺԴ. Բաղդասար բեկն, որից*

*ԺԵ. Վելիչան բեկ Բ., որից*
*ԺԶ. Մուլքի բեկն (?), որից*
*ԺԷ. Մելիք Գրիգորն, որին հաջորդում է փոքր եղբայրն*
*ԺԸ. Մելիք-Ալլահվերդին*
*ԺԹ. Մելիք-բեկ Մելիք-Գրիգորյան (?)*
*Ի. Դանիել-բեկ, որից ծնվում է Բաղդասար վարդապետը։*

*Այդ երկու համեմատություններից պարզ երևում է, թե որքա՞ն վարպետ է Մակար վարդապետը ուրիշի ապրանքը սեփականել իրան, և, որպեսզի հրապարակի վրա չճանաչվի, գույնը փոխել և այնպես վաճառել։*

*Այդ երկու համեմատություններից երևում է և այն, որ Բաղդասար միտրոպոլիտի կազմած ազգաբանությունը ավելի հարուստ է յուր մանրամասնություններով, ավելի լիակատար է, իսկ «Գաղտնիք»-ի հեղինակինը միայն համառոտ քաղվածք է նրանից, այն էլ սխալներով*[1]*։*

*Այդ սխալները առաջ են եկել նրանից, որ Մակար վարդապետը գրելու ժամանակ աչքի առաջ չէ ունեցել Բաղդասար միտրոպոլիտի հորինած լիակատար ազգաբանությունը, որը դեռ ոչ մի տեղ տպված չէ, այլ օգուտ է քաղել Սարգիս եպիսկոպոս Ջալալյանի քաղվածքից, որ նույն սխալներով տպված է նրա Ճանապարհորդության մեջ*[2]*։*

*Իսկ այդ դեպքում ևս կատարվում է այն բազմաթիվ հրաշքներից մեկը, որոնցով այնքան հարուստ է «Գաղտնիք»-ը։*

*Այդ գրքի հեղինակը վախճանվում է 1828 թվին։*

*Իսկ Բաղդասար միտրոպոլիտը յուր ազգաբանությունը հորինել է 1849 թվին։ Կնշանակե «Գաղտնիք»-ի հեղինակի մահից 21 տարի հետո։*

*Ուրեմն, կամ պետք է ընդունել, որ «Գաղտնիք»-ի հեղինակը յուր մեռնելուց 21 տարի անցնելուց հետո հարություն է առել և օգուտ է քաղել Բաղդասար միտրոպոլիտի կազմած ազգաբանությունից, կամ մի ուրիշը գողացել է այդ աշխատությունը, գույնը փոխել է և Բեկնազարյանների անունով հրապարակ է հանել։*

*Այդ վճիռը թողնում եմ ընթերցողների դատաստանին։*

*Բայց ես խոստացա ցույց տալ մի* «օյինբազություն...»:

---

1 *Սխալները մենք նշանակեցինք հարցական նշաններով։*

2 *«Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան», մասն Բ., եր. 352, 354։*

Եթե Բաղդասար միտրոպոլիտը ուներ այդ ազգաբանությունը, ուրեմն ինչո՞ւ էր նա յուր նամակով դիմում «Գաղտնիք»-ի հեղինակին և նրանից խնդրում միևնույնը։ Այդ ի՞նչ է նշանակում։

Ահա՛ ինչ է նշանակում. գուցե մի օր, ո՞վ է իմանում, Բաղդասար միտրոպոլիտը գերեզմանից կբարձրանա և գտնելով «Գաղտնիք»-ի մեջ յուր աշխատությունը, կբռնե Մակար վարդապետի օձիքից և նրան կասե.

—Այդ իմ աշխատությունն, այդ ո՞վ է գողացել։

Այդ ժամանակ Մակար վարդապետն իրավունք կունենա նրան պատասխանելու.

—Սրբազան, քո աշխատությունը որտեղի՞ց կարող էր լինել. եթե դու ունեիր այդ աշխատությունը, այլևս 1828 թվին ինչու էիր դիմում Աբրահամ Բեկնազարյանին և նրանից խնդրում...

Եվ Մակար վարդապետը ամենայն վստահությամբ ցույց կտա սրբազանի նամակը։

—Այդ նամակը կե՛ղծ է...—կպատասխանե սրբազանը։—Ես այդ աշխատությունը ունեի ոչ թե 1828 թվին, այլ նրանից շատ առաջ, 1800 թվականներում, երբ դեռ վարդապետ էի և Հաղպատա վանքում նստած աշխատում էի[1]։

Այսքանը բավական համարելով մենք գուցե մի ուրիշ ժամանակ կրկին կվերադառնանք Մակար վարդապետի կազմած մյուս տիրապետող մելիքների տոհմային ազգաբանությանը, որոնց մեջ երևում է հայր սուրբի վերին աստիճանի անբարեխղճությունը։ Այդ մյուս ազգաբանությունները կամ լցված են մի շարք երևակայական անուններով, կամ մելիքների տոհմերը խառնած են միմյանց հետ և կամ եղբայրը եղբոր հայրն է դառնում, իսկ հայրը՝ թոռ։ Բոլոր ճյուղագրությունների մեջ տիրում է մի գիծ միայն. այն ևս ուղիղ գիծ, որդի ի հորե. այլ շառավիղներ չկան։

Երբ «Արձագանքի» մեջ տպվում էր իմ հետազոտությունը, իմ բարեկամներից յուրաքանչյուրը հանդիպելիս միևնույն հարցն էր կրկնում. «Մի՞թե արժե մի այդպիսի հիմարության մասին այդքան գրել»։

---

1 Բաղդասար միտրոպոլիտի աշխատությունների թե յուր իսկական ձեռքով գրած սևագրությունները, որ նա հորինել է Հաղպատա վանքում, և թե մաքուր արտագրած օրինակները, որ կազմել է հետո, ցանկացողները կարող են տեսնել մեզ մոտ։

Եթե միայն հիմարություն լիներ, ես ոչինչ չէի գրի, բայց խարդախությունը, այն էլ գրական խարդախությունը, պետք չէ, որ մնա անպատիժ։

«Գաղտնիք»-ը դեռ լույս չտեսած դարձրեց յուր վրա կրիտիկայի ուշադրությունը, և ոչ մի աշխատություն մեզանում այնքան խոսել չտվեց յուր մասին, որպես այդ գիրքը։ Դա շատ բնական էր. «Գիժը մի քար նետեց փոսը, հարյուր խելոքներ հավաքվեցան, չկարողացան դուրս հանել»։ Դեռևս շատ խելոքներ պիտի տանջվեն «Գաղտնիք»-ի նենգավոր գաղտնիքները երևան հանելու։

Ամեն կեղծության վրա շատ են նայում, շատ են հետաքրքրվում։ Իսկ «Գաղտնիք»-ը, հակառակ յուր արդար վրդովմունքով զայրացած հարվածողների, ունեցավ և պաշտպաններ։

Իմ խոսքը, իհարկե, այն հայհոյական կրիտիկոսների մասին չէ, որոնք շողոքորթության բուրվառը ձեռքում բռնած, մի բաժակ օղիի համար միշտ պատրաստ են խնկարկել ամեն մի կեղտոտություն, ամեն մի անբարոյականություն։ Իմ խոսքը ավելի կրթված, զարգացած և, մինչև անգամ, բարձր ուսում ստացած պարոնների մասին է, որոնք ավելի լուրջ կերպով պետք է վերաբերվեին դեպի մի գրական խարդախություն, որի օրինակը մինչև այսօր չի տեսնվել։

«Գաղտնիք»-ի հեղինակը, հափշտակելով ուրիշների աշխատանքը, ճարպկություն ունեցավ հարստահարելու և այնպիսի հարգելի անձանց անունները, որոնք հազիվ թե հանձն կառնեին վրա լինել մի խաբեբա գործի։

Վերջացնում եմ հոդվածս, ավելացնելով, որ իմ հետազոտությունների մեջ՝ ես հասա հետևյալ եզրակացություններին.

1. «Գաղտնիք»-ի մի զույգ պատրվակյալ հեղինակները՝ հայր և որդի Բեկնազարյանները, երևակայական անձնավորություններ են։ Նրանք երբեք գոյություն չեն ունեցել ոչ իբրև մատենագիրներ և ոչ իբրև անհատներ։

2. «Գաղտնիք»-ը Մակար վարդապետի աշխատությունն է։ Միայն յուր գիրքը ավելի հրապուրիչ դարձնելու համար, կամեցել է մագաղաթի վրա ներկայացնել և նրան մի հին, վաղեմի գրվածքի ձև տալ։ Հետևապես «Գաղտնիք»-ի բնագրի գրաբար լեզվով գրված լինելը, Մակար վարդապետի թարգմանելը, հետո բնագիրը

կորցնելը,—այդ բոլորը պետք է հայր սուրբի հնարած առեղծաբանությունը համարել։

3. Այդ գիրքը իբրև մի պատմական աշխատություն ոչ մի նոր աղբյուր չունի և չէ ցույց տալիս։ Նա օգուտ չի քաղել մինչև անգամ ժողովրդական ավանդություններից։ Նա չէ բովանդակում յուր մեջ որևէ պատմական փաստ, որ մեր գրականության մեջ նոր լիներ։ Իսկ ինչ որ նոր է,—այդ Մակար վարդապետի առակախոսություններն են միայն։

4. Բուն պատմական անձնավորությունները՝ Ղարաբաղի խակական մելիքները, իրանց գործերով և քաջություններով, կորչում, անհետանում են այդ գրքի մեջ։ Իսկ դրանց փոխարեն գըրվում են Մակար վարդապետի ստեղծած հերոսները, որոնք երբեք գոյություն չեն ունեցել։

5. «Դավանիք»-ի լեզուն, ոճը, շարադրությունը մեր տասնութերորդ դարու գրվածքների ոչ պարզությունը ունի և ոչ բնավորությունը։ Նրա մեջ հաճախ հանդիպում են այնպիսի բառեր և այնպիսի դարձվածքներ, որ մեր նոր գրականության արդյունքըն են։

6. «Դավանիք»-ի գաղափարները, նկրտումները և պատմական երևույթների բացատրությունները՝ ամբողջապես առնված են «Խամսայի մելիքություններից»։ Եվ այդ ապացույց է մի կողմից նրա հեղինակի կույր հետևողությանը, իսկ մյուս կողմից՝ երևան է հանում նրա կեղծությունը։ Մեր հին ժամանակների պատմաբանները գրում էին բոլորովին կրավորական կերպով, առանց կրիտիկաբար վերաբերվելու փաստերին։ Քննադատական պատմությունը նոր ժամանակների գործ է։

7. Իբրև մի պատմական անհարազատ աշխատանք, այդ գիրքը զուրկ է ամեն հավատարմությունից։ Նրա մեջ փաստերը կամայական կերպով աղավաղված են։ Ամբողջ գրքի մեջ գործում է մի խարդախ գրչի արհեստականությունը միայն։ Նրա մեջ չէ երևում ժամանակի մարդը յուր բնական բարքով, վարքով և սովորություններով։ Նրա մեջ երևում են այլանդակ հրեշներ և հեքիաթների հերոսներ միայն։

8. «Դավանիք»-ը մի գրական նենգավոր ավազակություն է։ Նրա մեջ մացրած են այլոց աշխատությունները, առանց հեղինակների անունները հիշելու։ Բայց գողության հետքերը կորցնե-

լու համար իսկական հեղինակների փոխարեն հիշվում են այնպիսի անուններ, որոնք կամ երբեք գոյություն չեն ունեցել կամ ոչինչ չեն գրել։

9. «Գաղտնիք»-ը ոչ միայն գրականական որևէ արժեք չունի, այլ մինչև անգամ վնասակար է։ Անհմուտ ընթերցողին նա կարող է մոլորեցնել, և սուտը, կեղծը, անհավատալին ճշմարտի տեղ մատակարարել։ Այդ գրքի հորինվածքի մեջ այնքան չի պետք զարմանալ հեղինակի տգիտության վրա, որքան նրա անպատկառ հանդգնության վրա, որով նա վստահություն է ունեցել կարծելու, թե յուր աններելի վարմունքը գաղտնի կմնա «Գաղտնիք»-ի մեջ։ Մի այլ ավելի հարմար անուն հազիվ թե կարելի էր գտնել...

10. Այդ բոլորից հետո «Գաղտնիք»-ի վարագույրի հետևում ծածկված հեղինակին մնում է, իբրև կրոնավորի, իբրև կրոնուսույցի, իբրև ճշմարտության և բարոյականության քարոզչի, ձեռքը դնել սրտին, երեսը դարձնել դեպի ընթերցող հասարակությունը և, «Հրաժարիմք ի խաբեութենէն» ասել, և յուր հայոց գրականության ասպարեզում նետած գայթակղության քարը միջանեղից վերցնել...

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

«Արձագանքի» ներկա տարվա 29-րդ համարում ոմն Հարություն-բեկ Սարգիս-Բեկյան Հասան-Ջալալյան՝ դիմում է մեր հասցեին մի նկատողությամբ, թե մենք Հասան-Ջալալյանների տոհմագրության մեջ, որ տպվեցավ անցյալ տարի «Արձագանքի» 45 և 46 համարներում, սխալներ ենք արել. և այդ սխալները «յուր մոտ գտնված առավել հավաստարիմ տեղեկություններով» պարոնն իբր թե ուղղում է։

Առանց մի բառով անգամ ցույց տալու, թե որտե՞ղ կամ ինչո՞ւմն է մեր սխալը, պարոնը սկսում է Հասան-Ջալալ Մեծից և, ամբողջ յոթ հարյուր տարիների տարածությունը լցնելով միայն մի քանի անհայտ անուններով, իսկույն թռչում և հասնում է յուր հորը՝ Սարգիս-բեկին, և վերջացնում է ճյուղագրությունը յուր անունով, երևի ցույց տալու համար, թե ինքն էլ մեծն Հասան-Ջալալ իշխանի որդիներից է։

Եթե պարոնը հայերեն կարդալ իմանում է և կարդացածը հասկանում է, մենք խորհուրդ կտանք նրան՝ կրկին բաց անել անցյալ տարվա «Արձագանքի» 45 և 46 համարները, և կարդալ մեր հրատարակած Հասան-Ջալալյանների տոհմագրության վերնագիրը։ Ահա՛ նա.

«Ազգաբանութիւն և ծննդաբանութիւն ազգին Հասան-Ջալալեանց՝ հանեալ և հաւաքեալ ի պատմութեանց Հայոց և Աղուանից. նաև ի յարձանագրաց ի խաչքարաց և ի տապանաքարաց, եղելոց ի վանսն Գանձասարայ և շրջակայ նորին վանօրայս և անգիր հանդերձ թուաբանութեամբ, զորս համառօտ շարահիւսեցի ես՝ Բաղդասար Միտրապոլիտ Աղուանից Հայոց, որդի Դանիէլ-բէկ իշխանի և թոռն Մէլիք-բէկ իշխանին Հասան-Ջալալեանց, նախկին Տէրանցն երկրին Արցախոյ՝ գաւառին Խաչենոյ, յազգագ տեղեկու-

թեան ներկայ և ապագայ սերնդոց, տոհմայնոց և ազգականաց իմոց։ Գրեցաւ ի ՌՄՂԸ թուին Հայոց և ի 1849 ամի Տեառն»։

Կարծում, վերոհիշյալ տողերից պարոնը կհամոզվի, որ «Արձագանքի» մեջ տպված Հասան-Ջալալյանների տոհմագրությունը ոչ մեր հեղինակությունն է և ոչ մեր ստորագրությունն է կրում յուր ներքո։ Այլ այդ տոհմագրությունը կազմել է հանգուցյալ Բաղդասար Միտրոպոլիտը, և տպված է նրա անունով։ Եթե սխալ ներ կան, նրա սխալներն են, և ոչ թե մերը։ Ուրեմն, պարոնի ուղղակի մեր հասցեին դիմելը՝ խորին անուշադրություն պետք է համարել։

Բայց ինչ որ հետաքրքիր է պարոնի ճյուղագրության մեջ, այդ ա՛յն է, որ Հասան-Ջալալ Մեծը և Մուղալ Խաչենու իշխանը (երկուսն էլ տղամարդ) ծնում են Աթաբեկ Առաջինին (դարձյալ տղամարդ)։ Այդ իրավ, շատ հետաքրքիր է, որովհետև, սկսյալ հայր Ադամից և մայր Եվայից տեսնված է, որ մի տղամարդ և մի կին միայն ընդունակ են ծնել երրորդ մարդուն։ Իսկ պարոնի ճյուղագրության հենց սկզբի տողերում՝ երկու տղամարդիկ, առանց կնոջ միջնորդության, ծնում են երրորդ տղամարդին։ Եթե պարոնը «յուր մոտ ունեցած ավելի հավատարիմ տեղեկություններով» կարողացավ ապացուցանել այդքանը միայն, անտարակույս, մեծ գյուտ արած կլինի ոչ միայն Հասան-Ջալալյանների տոհմագրության վերաբերությամբ, այլ ամբողջ մարդկային սեռի պատմության վերաբերությամբ։ Եվ մենք ազնիվ խոսք ենք տալիս պարոն Հարություն-բեկ Սարգիս-բեկյան Հասան-Ջալալյանին, որ յուր նշանավոր գյուտը ապացուցանելուց հետո, նրա մյուս սխալները բոլորովին կներենք իրան։

## ՊԱՐՈՆ Գ. ԱՂԱՅԱՆՑԻ ՀԱՍՑԵԻՆ

Երբ լույս տեսավ «Կայծերի» առաջին հատորը, պ. Աղայանցը այն աստիճան հափշտակվեցավ, որ խորին ոգևորությամբ նվիրեց մեր աշխատությանը մի շատ երկար ներբողյան բանաստեղծություն։ Նրա մի օրինակը գտնվում է մեզ մոտ, իսկ մյուս օրինակը՝ «Աղբյուրի» խմբագրի մոտ։

Իսկ երբ լույս տեսավ «Կայծերի» երկրորդ հատորը, պ. Աղայանցը նրա գլխավոր հերոսներին կոչում է «իմաստակներ», «շառ-

լատաններ», «խողեր», «խաշագողներ» և այլն, և նրանց գործունեության մեջ օգտավետ կամ բարոյական ոչինչ չէ գտնում[1]։

Նույն հերոսները կային և նույն բնավորությամբ գործում էին «Կայծերի» առաջին հատորի մեջ ևս։ Բայց այն ժամանակ այդ «շառլատանները» իրանց գործունեությամբ բորբոքում էին պ. Աղայանցի բանաստեղծական ոգևորությունը։ Հանկարծ նա սառեց, և նրա իդեալները «խողեր» դարձան։

Ինչո՞վ բացատրել պարոնի հակասությունները։

Երկուսից մեկը. կամ նրա առաջին փառաբանությունները պետք է համարել պարզ շողոքորթություն, որով կամեցել է հաճոյանալ «Կայծերի» հեղինակին՝ մեզ, կամ վերջին հայհոյանքները պետք է համարել չարանախանձ ոգու ստոր վարմունք։

Բայց «Կայծերը» դարձյալ կմնան բարոյական կայծեր, և բնավ կարոտ չեն այնպիսի անձանց գովասանքներին, որոնք պատրաստ են իրանց համոզմունքները ամեն րոպե փոխել, նայելով, թե քամին ո՛ր կողմից է փչում...

## ՊԱՐՈՆ Գ. ԱՂԱՅԱՆՑԻ ՀԱՍՑԵԻՆ

Շատերի սովորությունն է, երբ նրանց հետ որևէ հարցի մասին վիճում ես, աշխատում են վիճաբանության իսկական առարկան մի կողմ դնել, և մի այլ, հարցի հետ ոչինչ կապ չունեցող խնդիր մեջ նետել, որպեսզի հարցը ավելի բարդվի, ավելի մթնանա։

«Արձագանքի» 39-րդ համարում տպված մեր փոքրիկ նկատողությունը, որ ուղղված էր պ. Աղայանցի հասցեին, շատ պարզ էր և հասկանալի։ Մենք պարոնին հիշեցրել էինք, որ սկզբում նա յուր համակրությունը արտահայտեց դեպի մեր աշխատությունը՝ «Կայծերը», նվիրելով նրան մի բանաստեղծություն, իսկ հետո նույն աշխատության մասին տպեց «Աղբյուրի» մեջ մի քննադատություն, որով թափել էր յուր սրտի ամբողջ մաղձը։

Շեշտելով պ. Աղայանցի հակասությունների վրա, մեր նպատակը երբեք այն չի եղել, որ ցույց տանք, թե մեր աշխատությունը որևէ ժամանակ վայելել է նրա համակրությունը։ Այլ կամեցանք ապացուցանել, որ նա համոզմունքից բոլորովին զուրկ մարդ

[1] Տե՛ս «Աղբյուր» №№ 8—9, օգոստոս-սեպտեմբերի տետրակը։

է, և նրա համակրությունը նույնքան նշանակություն ունի, որքան նրա հակակրությունը։

Ուրեմն, հարցը շատ պարզ էր դրված. խնդիրը պարոնի նվիրած բանաստեղծության մասին էր։ Նա պետք է կարճ կերպով պատասխաներ. արդյոք նվիրե՞լ է, թե ո՛չ։

Բայց պ. Աղայանցը, պատասխանելով մեր նկատողությանը, ոչ բոլորովին ուրանում է, և ոչ էլ պարզապես խոստովանում է, թե ճշմարիտ է, արել է մի այդպիսի նվեր։ Նա միայն խույս ակնարկներով ասում է. «Ձեր հիշած ոտանավորը տպագրված է «Աղբյուրի» 1884 թվականի երկրորդ տետրում «Սառնամանիք» վերնագրով, ընթերցողները կարող են ստուգել, թե կա՞ արդյոք նրանում ներբողյանի հետք դեպի ձեզ և ձեր աշխատությունը»։

Կարծես, վեճը «ներբողյան» բառի մասին լիներ։

Պ. Աղայանցը, ինչպես սովորաբար ասում են, կամեցել է բուն խնդիրը կողքը նետել, և միայն «ներբողյան» բառի պոչից բըռնելով, պատասխանում է, թե ինքը «ներբողյաններ» չէ գրել, և մեղադրում է մեզ, որ մենք բառերը շփոթում ենք միմյանց հետ[1]։ Բառերի գործածությունը պ. Աղայանցից սովորելու բնավ պետք չունենք։ Հիշյալ բառը մեր նկատողության մեջ գործ ենք ածել բոլորովին ծաղրական մտքով։

Ներբողներ այժմ ոչ ոք չէ գրում։

Հարցը նրանում չէ, արդյոք պ. Աղայանցը ներբողյա՞ն բանաստեղծություն է գրել, թե մի այլ տեսակ բանաստեղծություն։ Հարցը նրանումն է, թե ի՞նչ առիթով և ու՞մ համար է գրել։

Երբ մի գրող յուր բանաստեղծությունը նվիրում է որևէ գրքի, շատ ծիծաղելի կլիներ, եթե նա ներբողյան լիներ, այսինքն՝ գովասանական ճառի ձևով գրված։ Այլ հարկավոր է, որ նվերը ունենար մի ներքին հարաբերություն, կամ մի խորհրդավոր առնչություն նույն գրքի բովանդակության հետ, որին նվիրվում է։

1 Պ. Աղայանցը, յուր դատը թողնելով, մի ուրիշ փաստաբանություն ևս հանձն է առել յուր պատասխանի մեջ, հիշեցնելով մեզ «մաղալա» բառը, որի նշանակությունը, իբր թե մենք չհասկանալով, շփոթել ենք մի այլ բառի հետ։ Շատ շնորհակալ կլինեինք պարոնից, եթե նա շարունակեր յուր պաշտպանությունը, որով ցույց տված կլիներ յուր պատմական և աշխարհագրական հմտությունը։

Պ. Աղայանցի՝ «Կայծերին» նվիրած «Սառնամանիքը»[2] ուներ այդ հարաբերությունը։ Մի կողմ թողնելով նրա իսկական իմաստը, բավական է, եթե «Սառնամանիք» և «Կայծեր» բառերը դնենք միմյանց մոտ, մեկը սառցնող և ամեն աճելություն սպանող ցրտություն, իսկ մյուսը ջերմացնող և կենդանություն տվող զորություն։

Այդ բոլորից հետո պ. Աղայանցը, յուր ոչինչ չապացուցանող պատասխանի մեջ միամտաբար դիմում է մեզ, ասելով. «Բայց դուք, որ արդեն հասկացել եք ձեր սխալը (՞՞), կարող եք երկու տողով շտկել, իբրև ազնիվ մարդ»։

Մենք պատրաստ կլինեինք ոչ թե երկու տողով, այլ տասն տողով «շտկել» մեր սխալը, եթե պ. Աղայանցը ցույց տար, թե ինչո՞ւմն է մեր սխալը։ Բայց ով որ առանց փաստերի ուրիշին ազնվության է հրավիրում, պետք է նախ ինքը ազնիվ վարվի...

## ՊԱՐԿԱՊԶՈՒԿ ԱԾՈՂՆԵՐԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ձեզանից ամեն մեկը, ընթերցող, անշուշտ տեսած կլինի մի տեսակ թափառական երգիչներ, որոնք պարկապզուկը թևի տակ դրած, ամեն բակ մտնում են, ամեն լուսամուտի առջև կանգնած են և իրանց նահապետական նվագարանը ածելով, մի քանի գրոշներ են ստանում։

Այդ ողորմելի երգիչների ռեպերտուարը շատ փոքր է և համարյա բաղկացած է երկու երգից՝ մեկը գովասանություն, մյուսը պարսավ: Նրանք մտնում են հանգիստ տունը, սկսում են առաջին երգը՝ գովասանությունը, փառաբանում են տանտիրոջ առաքինությունները, բարեգործությունները, առատաձեռնությունները, նրա բարձր հասակը, քաջությունը, գեղեցիկ դեմքը, մի խոսքով. տալիս են նրան ամեն տեսակ լավ հատկություններ, թեև գովասանության առարկան ամենաանպիտանի մեկը լինի։

Իսկ երբ իրանց շողոքորթության ցանկացած վարձատրությունը չեն ստանում, սկսում են երկրորդ երգը՝ պարսավը, պախարակում են այն բոլոր լավ հատկությունները, ինչ որ իրանք գովաբանել էին։ Այժմ քաջը նրանց համար երկչոտ է դառնում,

---

2 Այդ բանաստեղծությունը առաջ ավելի խորհրդավոր վերնագիր ուներ, որը փոխել է պ. Աղայանցը։

առաքինին՝ չարագործ, առատաձեռնը՝ ժլատ, գեղեցիկը՝ տգեղ և այլն։

Այս տեսակ պարկապզուկ ածողներ կան և մեր գրականության մեջ։ Դրանց համար արդարությունը, ճշմարտությունը ոչինչ նշանակություն չունեն, դրանք միշտ պատրաստ են թեքվել դեպի այն կողմը, ուր շահերի հրապույրը ձգում է նրանց։

Սեփական խելք, սեփական համոզմունքներ չունեն, դատում են ուրիշի խելքով, իրանց համոզմունքները փոխում են, որքան փոխում են հանգամանքները։

Դրանք ցած, կեղտոտ և պատվի զգացմունքից բոլորովին զուրկ մարդիկ են...

Գրականության մեջ ոչինչ այնքան զզվելի չէ, որքան այդ վարձկան գրիչները. դրանք մի տեսակ ցինիկներ են, որ ում տանից հաց են ստանում, նրա օգտին էլ վայրահաչություններ են անում։

Այդ անամոթները չէին լինի և երբեք ձայն հանելու վստահություն չէին ունենա, եթե ընթերցող հասարակության մեջ զարգացած լիներ դատելու և լավը վատից, ճշմարիտը ստից զանազանելու ընդունակությունը։

Բայց քանի որ ընթերցող հասարակությունը ամեն մի ասված խոսքին նշանակություն է տալիս, այդ դեպքում խարդախները, խաբեբաները, ստախոսները, ընթերցողներին մոլորության մեջ ձգողները ժամանակավոր հաջողություն են գտնում։

Զարգացած, լուսավոր հասարակությունների գրականության մեջ այդ տեսակները, անտարակույս, երկար գալու համարձակություն չէին ունենա, իսկ մեր մեջ նրանք բազմությամբ վխտում են, քաջահույս լինելով, որ դեռ տիրում է խավարը, և մթության խավարի մեջ նրանց մերկությունը, այլանդակությունը ոչ ոք չի նկատի։

Խոսքս մասնավորելով, ես կվերցնեմ մեր գրականության պարկապզուկ ածողներից մի քանիսին...

## ՎԻՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՀԱՅԵՐԻ ՄԵՋ

Ռուսահայոց նոր գրականության մեջ վիպագրության առաջին օրինակը տվեց Աբովյանցը։ Նա գրեց մի գիրք միայն և իր հետևից քարշ տվեց հետևողների մի ամբողջ շարք։ Նա գրեց ռամկա-

կան բարբառով։ Նա նկարագրեց գյուղական կյանք, մյուսները նույնպես գյուղական կյանքի շրջանակի մեջ գրին իրանց նկարները։ Եվ այս բոլորը շատ բնական էր, որովհետև գրողները, առանց բացառության, ամենքը գյուղացիներ էին, և գեղջկական կյանքի պատկերները ավելի մոտ էին թե նրանց սրտին և թե երևակայությանը։

Պետք է մի առանձին բախտ կամ հանգամանքների պատահական դիպված համարել, որ մեզանում վիպագրության առաջին հիմնաքարը դրեց մի ճշմարիտ վարպետ, մի լավ պատրաստված մարդ, որ ինքը գյուղացի լինելով, սկսեց գյուղից։ Եվ այսպես, մեզանում դեռ քառասնական թվականներում, բոլորովին անգիտակցաբար ստեղծվեցավ այն, որ կոչվում է ժողովրդական գրականություն, և որը այժմ միայն սկսվել է ուրիշների մոտ կատարվել գիտակցաբար։

Բայց վիպագրությունը չէր կարող միշտ գեղջկական կյանքի նեղ, սահմանափակ շրջանակի մեջ մնալ, մանավանդ, որ Աբովյանից հետո չհայտնվեցան զորեղ տաղանդներ, որ ավելի խոր թափանցեին գյուղական կյանքի բոլոր ծալքերում և նրա մեջ նոր տարրեր, նոր երևույթներ գտնելով, ավելի հետաքրքիր դարձնեին իրանց աշխատությունները։ Թողյալ այդ, Աբովյանի հետևողները Աբովյանի անշնորհք աշակերտները եղան։ Դրանց համար հայկական վեպ նշանակում էր այն, ինչ որ միմիայն հային է վերաբերում, առանց մտածելու, որ հայը յուր կյանքում շփվում է օտար ազգերի հետ, որոնք նրա դրացիներն են, և որոնք նրա հետ միասին բաժանում են կյանքի միևնույն հանգամանքները։ Աբովյանը յուր գրքի մեջ տեղ տվեց օտարազգիներին, բայց նրա հետևողները ազգասիրաբար մերժեցին նրանց։

Հայկական վեպ դրանց համար նշանակում էր, որ անպատճառ պետք է ներկա լինեին գյուղի տերտերը, գյուղի տանուտերը, գյուղի խալիֆան և շատ-շատ՝ դրանց հետ ավելացնում էին մի հարստահարիչ չարչի կամ վաշխառու։ Պատկերը ամբողջացած էր համարվում, և միևնույն տիպարները, մինը մյուսից առնելով, զանազան ձևերով ծամծմում էին։ Եվ ով որ մի այսպիսի գիրք էր գրում, արդեն գրականական մանդարինի փառքը ստացած էր համարում։ Նրանց պահանջները սահման չունեին։ Քթները բարձրացրած զարմանում էին, թե ինչո՞ւ ամեն կողմից մատով չեն

ցույց տալիս նրանց։ Եվ եթե մարդիկ ուշադրություն չէին դարձնում, իրանք իրանց մասով ցույց տալու անհամեստությունն ևս ունեին։

Դրանց համար հայի անցյալ, հայի պատմություն չկար։ Դրանց համար չկար և հայի ապագա։ Դրանք ծանոթ էին այն գյուղի հետ միայն, որի մեջ ծնված էին և որի սահմաններից դուրս մի այլ կյանք չէին ճանաչում։ Դրանց աշխարհահայեցողության թռիչքը իրանց գյուղի հորիզոնից ավելի հեռու չէր անցնում։ Եվ եթե պատահում էր, որ ոտքը դուրս էին դնում իրանց գյուղից, իսկույն մոլորվում էին և խրվում էին հիմարությունների մեջ։

Երկար ժամանակ վիպագրությունը նույն նեղ, միակողմանի շավղով ընթանալով, նույն շավղի վրա մնաց և քարացավ, առանց որևէ առաջադիմություն գործելու։ Նա չկարողացավ նոր լեզու մշակել, որովհետև գրվում էր գեղջկական բարբառով։ Նա չկարողացավ ընթերցանություն տարածել, որովհետև հասկանալի էր միայն այն շրջանին, որի բարբառով գրված էր։ Եվ այսպես, իրանք հեղինակները իրանց աշխատությունները դատապարտեցին շատափույթ մահվան և սկսեցին կատաղել, թե ինչու հաջողություն չգըտան։ Նրանց աշխատությունները մնացին գրականության համար իբրև լեզվագիտական ցամաք նյութ, իսկ գեղարվեստի համար՝ իբրև շատ հասարակ արդյունք։

Ահա այս էր Արովյանցի ստեղծած շկոլան։ Նրա ներկայացուցիչները մինչև այսօր ևս գոյություն ունեն, շարունակում են ապրել, ոչ նորոգվում են և ոչ փոխվում, այլ եգիպտական մումիաների նման պահպանում են մի տեսակ մեռած կենդանություն։

Մենք անունների հետ առայժմ գործ չունենք։ Մենք արդեն ձեռնարկել ենք կազմել հայոց վիպագրության պատմությունը սկսյալ Արովյանից մինչև մեր ժամանակները։ Նույն աշխատության մեջ յուրաքանչյուրին երևան կհանենք յուր վաստակներով։

Մինչդեռ վիպագրությունը անդրկովկասյան հայերի մեջ այդ դրության մեջ էր, սարերի մյուս կողմում, հեռավոր Մոսկվայում, հրատարակվում էր «Հյուսիսափայլը»։ Կյանքից տարակաց, օտար հողի վրա, շատ հասկանալի է, որ չէր կարող ստեղծվել բուն հայկական վիպագրություն։ Եվ դրանով պետք է բացատրել «Հյուսիսափայլի» ամլությունը, որ նա իր ամբողջ տևողության ընթաց-

քում, բացի մի քանի աննշան պատկերներից, չտվեց ոչ մի հայոց դեմք։ Նա բավականացավ թարգմանություններով միայն։

Բայց Նազարյանցի շուրջը, հակառակ նրա ցանկության, ծնունդ առեց մի այլ տեսակ վիպագրություն։ Որովհետև հայոց ընդհանուր կյանք չկար, որովհետև նրա ամսագիրը հրատարակվում էր հայ գաղթականների մի շատ նեղ շրջանում, այդ պատճառով և վիպագրությունը այնտեղ բոլորովին նեղ և մասնավոր կերպարանք ստացավ։ Փոխանակ ընդհանուր տիպարներ երևան հանելու, սկըսեց նկարագրել զանազան անձանց անձնական կամ ընտանեկան կյանքը։

Իբրև մասնավոր անձանց պատկերներ, կարող էին այս տեսակ նկարները իրանց առանձին նշանակությունն ունենալ, եթե նկարիչները զրկված չլինեին միմիայն անձնական հաշիվներից։ Կիրքը ստիպում էր նրանց այլանդակել պատկերները։ Այդ ուղղությունը առաջ բերեց մի քանի մուրացկան-գրողներ, որոնք անբարոյականացրին վիպագրությունը և նրան բոլորովին անպատկառ պարսավաբանության ձև տվին։ Նրանք պատրաստ էին փառաբանել և ամենագեղեցիկ գույներով նկարագրել, եթե նրանց փող կտային, և միևնույն անձին պատրաստ էին ցեխի մեջ թաթախել, եթե նրանց հաճույքները կմերժեին։

Եվ այսպես, «Հյուսիսափայլը» հայոց վիպագրությունը չնպաստեց, և անկարող էր նպաստել, որովհետև նա հայոց կյանքից անջատված էր։ Նա նպաստեց միայն բանաստեղծության, և ավելի՝ քնարերգական բանաստեղծության։

1872 թվին սկսվեց հրատարակվել «Մշակը»։ Մինչև այս լրագրի լույս տեսնելը, հայկական աշխարհի հորիզոնը այնքան նեղ էր, որ մի փոքր հեռավորության վրա ոչ ոք չգիտեր, թե ի՛նչ է կատարվում։ Կյանք կարծես թե չկար կամ եթե կար, նրա վրա ոչ ոք ուշադրություն չէր դարձնում։ Հարցերը ինքնաբերաբար զարթնում էին և դարձյալ ինքնաբերաբար քնում էին։ Ամեն ինչ մրափում էր մի տեսակ խուլ, մեռելային թմրության մեջ։ Կար մի լրագիր, բայց մի քանի մարդիկ միայն գիտեին, թե նա կար։ Նրա գոյության մասին հիշում էին այն ժամանակ միայն, երբ մեկին շողոքորթում էր, իսկ մյուսին՝ պախարակում, կամ երբ մի փտած հիմնարկություն պաշտպանում էր, իսկ մի նոր միտք՝ հալածում։ Կենսական հարցերը մնում էին բոլորովին լքյալ դրության մեջ, իսկ անվերջ

վիճաբանությունները պտտվում էին մի փոքրիկ խմբակի շահերի շուրջը, որի պարագլուխն էր ինքը խմբագիրը։

«Մշակը» յուր մոգական հարվածով միանգամայն շարժեց հասարակական թմրած մարմինը։ Մարդիկ հանկարծ աչքները բաց արին, սկսեցին մտածել իրանց գործերի վրա, սկսեցին մտածել իրանց պետքերի վրա։ Լրագիրը դարձավ հասարակության դաստիարակ և, միևնույն ժամանակ, նրա ընդհանուր կարիքների արտահայտություն։

«Մշակը» ընդարձակեց, լայնացրեց հայկական աշխարհի նեղ հորիզոնը։ Ոչ միայն ռուսաստանցի հայի, այլ ամենուրեք, ուր որ հայեր էին ապրում, բոլորի գործերն ու կյանքը նրա քննադատության առարկան դարձավ։ Նա առաջինը եղավ, որ ծանոթացրեց ռուսահայերին իրանց տաճկաստանցի, պարսկաստանցի, հնդկաստանցի և երկրագնդի զանազան կողմերում ցրված եղբայրների հետ, որոնք առաջ մոռացված և մինչև անգամ արհամարհված էին։ Նա ուշադրություն դարձրեց և հայի դրացի օտարազգիների վրա, որոնց վիճակի ուսումնասիրությունը հայոց լրագիրը յուր պարտքը չէր համարում։

Յուր բոլորովին թարմ, երիտասարդ խմբագրի ղեկավարության ներքո «Մշակը» հեղեղեց հասարակությանը մի նոր կենդանացուցիչ հոսանքով, որ ամենափոքր ժամանակում արդասավոր արդյունք ունեցավ։ Վաղեմի, ավանդական ինքնախաբեության փոխարեն սկսեց տիրապետել կրիտիկական հայացքը։ Ինքնաքննությունը և ինքնաճանաչությունը՝ ահա այն դրոշը և առաջ մղող տեսակետը, որով սովորեցրեց նա հայ հասարակությանը մտածել յուր պետքերի և յուր թերությունների վրա։

Այդ բոլորը իհարկե չէր կարող չգրգռել խավարասերների բարկությանը։ Հին փարիսեցին կատաղեց, հին դպիրը փրփրեց, և ամեն կողմից սկսեցին քարեր արձակել։ Բայց քաջ մարտիկը անվեհեր կերպով առաջ տարավ յուր սկսած գործը և լավ տարավ։

«Մշակի» ուղղությունը խիստ բարերար ազդեցություն ունեցավ և վիպագրության վրա։ Նրա օրերում վիպագրությունը ավելի լայն շրջանակի մեջ դրեց յուր պատկերները։ Նա դուրս եկավ Աբովյանցի շկոլայի գեղջկական նեղ շրջանից, և սկսեց հետազոտել ժողովրդի կյանքի ամեն կողմերը։ Նա ավելի խոր թափանցեց զանազան դասակարգերի բոլոր ծալքերի և բոլոր խավերի մեջ, և

երևան հանեց նոր տիպարներ, նոր երևույթներ։ Քննադատական ոգին միացավ արհեստի գեղեցկության հետ, և միջազգությունը ավելի ռեալական հողի վրա դրվեցավ։

«Մշակի» օրով գավառական բարբառներն ընկան, և գրական լեզուն առաջին անգամ համարձակություն ստացավ միայն լեզու լինելու։ Գեղարվեստի հետ սկսեց գեղեցկանալ նա, և նյութի բազմակողմանիության հետ՝ սկսվեց մշակվել և հարստանալ։

Այս լրագրի հենց սկսվելու օրից նրա մշտական աշխատակիցը լինելու բախտն ենք ունեցել, և շարունակ 14 տարի նրա լծակի ծանրության մի կողմը մեր ուսերի վրա ենք տարել։

Թող ներվի մեզ, որ մենք մեր մասին պիտի խոսենք։ Յուր մասին անդադար խոսում էր բազմարդյան Նազարյանցը, որովհետև թշնամիները միշտ վատ էին խոսում։ Յուր մասին երբեմն խոսացել է և Գրիգոր Արծրունին, որովհետև խավարասերները, խաբեբաները միշտ հալածել են նրան, իսկ հայ հասարակությունը տակավին չէ ճանաչել յուր անկեղծ բարեկամին։ Մեր մասին էլ մենք պետք է խոսենք, մինչև կլսեն չար ոգիները, մինչև կպապանձվեն նեխած ճահիճների մեջ սնանվող պղծելի գեռունները, և կհայտնվեն անաչառ մարդիկ, որ ցույց կտան, թե ով ինչ է արել։ Քանի դեռ գործին հմուտ և արդարադատ անձինք հանձն չեն առնում քննադատել իրանց գործիչների արդյունքները, քանի դեռ ասպարեզը մնացել է վատերին և շառլատաններին, այդ դեպքում գործիչը ստիպված է, ոչ թե ինքնագովության համար, այլ գեթ ինքնապաշտպանության համար ցույց տալ, թե ինչ է արել ինքը։ Մեր հասարակությունը սատրիկ մոռացկոտ է, պետք է միշտ հիշեցնել նրան։

Մեր գրական ասպարեզում գործել ենք թե իբրև հրապարակախոս և թե իբրև վիպագիր։ Առաջինի մասին չենք խոսում, բավական է միայն բացել «Հյուսիսափայլի», «Մշակի», «Փորձի» համարները համոզվելու համար, թե ինչ ենք գրել։ Մենք մի փոքր հաշիվ կներկայացնենք միայն մեր վիպական վաստակների մասին։

Մեզանից առաջ դեռ ոչ մի վիպասան ուշադրություն չէր դարձրել մի մայր գաղափարի վրա, որ խավարի մեջ կեղեքում էր յուր զոհերին և անհագ վամպիրի նման ծծում էր նրանց արյունը։ Դա էր հարստահարիչ վաճառականների և վաշխառուների հասարակու-

թյունը, որ ոսկու փայլով սնգուրել էր յուր դեմքը և մեծ հարգանք էր վայելում։ Մենք պատառեցինք նրա ոսկեղեն դիմակը, մենք ցույց տվինք նրա այլանդակությունը, երբ գրեցինք «Ոսկի աքաղաղը», «Ուխտյալ միանձնուհին» և «Անմեղ վաճառքը»։

Մեզանից առաջ դեռ ոչ մի վիպասան ուշադրություն չէր դարձրել տաճկահայերի կյանքի վրա։ Մենք ցույց տվեցինք նրանց թշվառ դրությունը, մենք երևան հանեցինք նրանց կյանքի ամենատխուր պատկերները, երբ գրեցինք «Կայծերը», «Խենթը», «Ջալալեդդինը» և «Ղարիբ մշեցին»։

Մեզանից առաջ դեռ ոչ մի վիպասան ուշադրություն չէր դարձրել Պարսկաստանի հայերի դրության վրա։ Մենք նկարեցինք նրանց աննախանձելի կյանքի պատկերները, երբ գրեցինք «Գեղեցիկ Վարդիկը», «Սովը», «Կուսապրությունը», «Անբախտ Հռիփսիմեն», «Մի օրավար հողը» և այլն։

Մեզանից առաջ դեռ ոչ մի վիպասան ուշադրություն չէր դարձրել հասարակական կազմության մի բոլորովին նեխած, ապականված մասի վրա, որ գործում էր մթին խորշերում։ Մենք երևան հանեցինք այդ անծանոթ հասարակությունը, երբ գրեցինք «Խաչագողի հիշատակարանը»։

Մեզանից առաջ դեռ ոչ մի վիպասան ուշադրություն չէր դարձրել անցյալի վրա։ Մենք եղանք առաջինը, որ մտանք պատմության խորքերը և մոռացության վիհից ի լույս ածեցինք հայոց հին ժամանակների հերոսներին, երբ գրեցինք «Դավիթ Բեկը», «Պարույր Հայկազնը», «Սամվելը» և թարգմանեցինք «Ղարաբաղի աստղագետը»։

Մեզանից առաջ հայոց պատմությունը սկսվում էր Հայկից և վերջանում էր Լևոն Զ-ով։ Մենք եղանք առաջինը, որ անհայտության միջից գտանք մի կորած հայկական իշխանություն, երբ գրեցինք «Խամսայի մելիքությունները»։

Մեզանից առաջ դեռ ոչ մի վիպասան չէր մտածել օտար ազգերի կյանքը հայոց վեպի նյութ դարձնել։ Մենք տվեցինք առաջին օրինակը, երբ գրեցինք «Հարեմը», «Բիբի-Շարաբանին», «Խաս-փուշները» և այլն։

Մենք չենք խոսում մեր զանազան ուղևորությունների և ժողովրդագրական նկարագրերի մասին, ինչպես են «Հայ կինը», «Հայ երիտասարդությունը» և այլն, բայց հանգիստ խղճով մեզ

թույլ ենք տալիս տանել, որ երկար տարիների տոկուն աշխատու-թյամբ կառուցել ենք մենք հայ հասարակության ընթերցանու-թյան սեղանի վրա հիսունի չափ վեպեր, վիպակներ և զանազան պատկերներ:

Մենք չենք ունեցել մեր նախորդը, այլ մեր հետևից քարշ ենք տվել նոր գրողներին: Մենք առաջինն ենք եղել, որ վստահու-թյուն ենք ունեցել հայոց գեղ. անմշակ, աղքատ գրական լեզուն վե-պի լեզու դարձնելու և մեր աշխատությունների մեջ պահպանել ենք մեկ հատուկ ինքնուրույնություն:

Իբրև մի նոր ուղղության կարապետ, շատ բնական էր, որ մենք պետք է թշնամիներ և նախանձորդներ վաստակեինք: Եվ վաստակեցինք...

Շատ գործել և սակավ խոսել՝ միշտ այս է եղել մեր կյան-քի կանոնը... Թող ներվի մեզ, որ այս անգամ մեղանչեցինք մեր սովորական համեստության դեմ:

# ՆԱՄԱԿՆԵՐ

## 1857

### 1. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

[1857 թ. նոյեմբեր–դեկտեմբեր]

*Սրտակի՛ց եղբայր,*

*Ընկալա սիրալիր նամակդ ի 19-ն հոկտեմ. ամսո, որուն սպասեի մեծավ անձկությամբ։ Հիրավի շատ ուրախ եղև գիտելով Ձեր անվնաս Կ. Պոլիս հասնելն և Բերբերի ուսումնարանն մտնելն։ Նաև ընթերցա նույն դպրոցի բարեկարգություններն և ուսանելի առարկայից պեսպիսություններն։ Ահա՛ սիրելի, ա՛յս էր իմ ու Ձեր նպատակն, որ սույնպիսի գիտություններից ստանայիք ուսումն, հօգուտ Ազգի և Հայրենյաց։*

*Այո՛, Հովհաննես, երբեք մի մոռացիր հայրենիք և այն ալեքներն սպիտակացյալ ծեր Արարատն, որ ծածկած յուր գլուխն թուխ ամպերու քողովն, անմխիթար սգո մեջ է խղճալի որդվոցն համար, որոց մեծ մասն տարանջատյալ գնացին պանդուխտ երկիրներ, զանազան տերությանց գերի եղան, իսկ մնացյալքն յուր մայրական գրկումն նույնպես խղճության մեջ, զրկված նախնի բարեվայելչությունից... Միշտ միտքդ բեր նաև հայրենակցացդ ողորմելի վիճակն, նոցա անքաղաքավարի բարոյականությունն, որք մինչ ցայն աստիճան պատված են տգիտության խավարի մեջ, մինչ հազիվ թե կարողացել են պահպանել յուրյանց հայ և քրիստոնյա անուններ, իսկ ո՛չ նոցա էական մասունքն։ Մանավանդ՝ գիտե՞ք ի՛նչ դժոխմբեր ներգործություն ունի այժմ Ռուսիո կայսրությունն յուր հայ բնակչաց վրա. որո դիտավորությունն կորցնել է համայն Արամյան որդիքն Հայաստանից։ Մինչև անգամ խորհում են մին կերպով վերջացնեն հայոց կաթողիկոսական Տեղակալությունն. զի ազգն անհովիվ թողլով դյուրին եղանակավ կարողանան որսալ և գայլոց ճարակ առնել։*

Այս հանգամանքներս հարաժամ միտք բերելով կհուսամ վառ կպահեք Ձեր սրտի մեջն այն ազգասիրական անշեջ հուրն, որով կկարողանաք հալել ձմեռցյալ սրտից սառնամանիքն և լինել ճրագ լուսատու Հայաստանի խավար տան մեջ։

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

Պատվելի Գևորգ Խաչատուրյան Թոխատացվո խնդիրն շատ ուրախ սրտով կկատարեի, բայց միայն Հ. Քնարներու համար արտաշակի կանոններ գրված չեն. այլ մի քանի նորահաս հայ ուսումնականներ (որոնցմե շատերն Ձեզ ծանոթ են) մեծ փոքր գումար սահմանած են, որով պիտի տպագրվեն ազգային երգեր, թե հին և թե նոր. նաև այն երգերն, որ ազգային երգիչներն (աշուղներն են) կամ տաճկաց կամ պարսից լեզվով ասած են, պիտի թարգմանվին հայ աշխարհաբառով և տպագրվին։ Իսկ եթե հավատարիմ և ծանոթ անձն պատահեց՝ յուրաքանչյուր տետրակից 20 հատ կուղարկեմ Կ. Պոլիս. դուք բաժանեցեք Ձեր ու մեր սիրելիներուն։

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

Զույգ հայ պապականն վարդապետներեն, որք եկած էին Վիեննայից Սալմաստ, Հ. Ամբրոսիոսն, լսելով, Թեհրանում պարսից շահիցն հրամանագիր առացած է Սալմաստում Սավրա գյուղի մեջ վարժարան հաստատելու հայոց մանկանց համար։ Իսկ մյուսն, Հ. Մովսեսն, որ կբնակեր Խոյում, մին քանի մոլորյալ անձինք մացրել է Հռոմա փարախն. որոց մոլորվիլն դեռ գաղտնի է։ Հայր Ամբրոսիոսի Սամարկանդ գնալն հայոց հին գրչանց համար չի հաջողեցավ. ճանապարհի երկյուղն (բարբարոս թուրքմաններից) պատճառ լինելով։

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

Խնդրեմք փույթ ի փույթ մեզ հետ նամակացի խոսակցություն ունենաք. նաև մին հետաքրքրական լուր պատահելու լինի (թե՛ ուսումնական մասին և թե՛ քաղաքական մասին) մեզ գրեք։ Հույս ունիմ մայիս ամսուն ես ևս Պոլիս գտնվելու լինիմ, առևտրական մասին. այն ժամանակին միմյանց տեսնելով կխոսիմք երես առ երես՝ երկարորեն՝ ամենայն առարկայից վերա։ Եվ շատ կարելի է, որ Կարապետ եղբայրս ալ բերեմ հետս այնտեղ մին պատշաճավոր ուսումնարան հանձնելու։

Այնտեղ ուրիշ մասնավոր ուսումնարանաց հանգամանքներն ինձ գրեցեք, պատճառն՝ որ կամենում եմ եղբայրս հիմնովանից

պատրաստեմ նույն ուսումնարանաց մեջ մտնելու. զի Կ. Պոլիս գնալուց հետո այլևս դժվարություն չկրե, նախապատրաստ գոլով ուղղակի ընդունելի: Ողջ լերուք:

Մնամ Ձեր քաղցր տեսության անձկալի մտերիմ եղբայր Ձեր՝

Հակոբ Միրզայան:

# 1858

## 2. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Ի 1858—20 ապրիլի, Սալմաստ նահանգի Փիաջիկ գեղջ

*Սրտակից եղբայր,*

*Հովհաննես Ավետիսյան.*

*Շնորհալից նամակդ ընկալա ապրիլ ամսո 15-ին, որուն անձկալի սրտիվ փափագում էի, և հասու լինելով այժմյան վիճակիդ և պարագաներուդ, հիրավի՛, բազում հրճվանք լցվավ սիրտս: Ձեր նամակիցդ երևում է, որ դեռ երկմտության մեջ եք: Ես ծնողացդ վճռին սպասելով՝ չեք գիտում՝ արդյոք դեպի ո՛ր կողմն ուղղեք Ձեր մտաց զեկն հասնելու նպատակի նավահանգստին: Սիրելի՛դ իմ, այն ժամանակն արժան էր Ձեզ ծնողացդ կամացն ունկնդիր լինել, երբ նոցա խաղաղ գերդաստանին մեջ կյանք էիք վարում. բայց այժմ ո՞ւր եք դուք ու Բուզանդիոն, և ո՞ւր Աքուլյաց երկիրն: Հայաստանի ծնողաց կամքն (որպես և փորձած եմ) այն է, որ յուրյանց որդիքն երբեք աչքերու առջևից չի հեռացնին. զի միշտ տեսնելով նրանց սրտներու ուրախություն չպակասի: Ես այնպես՝ ըստ նախնյաց սովորության թե լավ և թե վատ կյանք վարեն:*

*Նաև այն դիտավորությունները, որ այժմեն ուղղած եք մտքներուդ մեջ, ինձ բավական անհամար է երևում: Այսինքն՝ Բեբեքի գոլլեջին Մալթա գնալը. այնտեղից Լոնդրայի համալսարանն և այնուհետև Փարիզու Հայոց ճեմարանն, նորանից հետո աստված գիտե որտեղ: Սիրելիդ իմ, որչափ է մարդու կյանքն: Այսչափ տեղերում շրջշրջելն համարյա կսպառե մարդկային կենաց մեծ մասն. ուրեմն ի՞նչ ժամանակ պիտի գործի դնեք Ձեր հավաքած գիտությունները ազգի օգտին համար.— այրության աշունացյալ սահմանո՞ւմն՝ իզուր: Մեղուն՝ զանազան ծաղիկներից նյութ հա-*

վաքելով ապա կտանա յուր փեթակին՝ մեղր շինելու։ Իսկ եթե նա միշտ նյութ հավաքելով պտտվի, ե՞րբ պիտի յուր քաղցր պարգևն ընծայե մեզ։ Բնականից դուրս բան է։ Գերմանիայի ուսման ագահ ստուդենտներու վիճակն արդեն նախածանոթ է Ձեզ.—այն ինչ մին համալսարանում յուրյանց ուսանելի արհեստն կվերջացնեն. ահա գրքերն չալակած սկսում են գնալ դեպի մյուս համալսարանն։ Այնտեղից էլ դեպի մյուսն գնալով ու մյուս, մյուս, մյուս ասելով, կտեսնես մեր պատվելի ստուդենտն սպիտակ ալերներով, զանազան տկարություններ ստացած նոր աշխարհ կմտնե ինքն անպիտան մեզ համար ու աշխարհն իսկ իրա համար...

Իմաստության անպարունակելի օվկիանոսն դժվարին է փոքրիկ գլխի մեջ ամփոփել. լավ էլ է, մին արժանավոր արհեստի մեջ կատարելագործվել և նորանով այս շուտ անց կյանքն անցուցանել հօգուտ Ազգի և Հայրենյաց։

Իսկ այդ ամերիկացվոց վարժարաններն՝ Պոլսում, Մալթայում և կամ այլ տեղերում հույժ անհարմար են մեր հայազգի պատանիների համար. պատճառն՝ ամերիկացիք այն դիտավորությամբ են հիմնած այդ ուսումնարանները, որ զանազան ազգաց որդիքն նորանցում կրթվելով յուրյանց սեփական ազգակցացն որսալու պատճառ լինին. նաև ուսանելի առարկաներն, նույն նպատակով սահմանված են իբրև գաղտնի մեքենա մոլորության։

Այս միջոցներումս մին նորջուղայեցի չափահաս տիրացու եկավ Ուրմիոյ միսիոներուն մոտ. որ և միտք ուներ անգլիարեն ուսանելու։ Մին ժամանակ Հնդկաստանում ամերիկացի քարոզիչներուն քով մնացած է, ստանալով նորանցմե պրոթեստանդական ոգի։ Տեղվույս քարոզիչներն նրան էլ առաջարկեցին Պոլսո Բեբեքի դպրոցն։ Դուք էլ շուտով կտեսնեք նրան։ Բայց հայկաբանության մեջ բավականին հմտություն ունի. որն երևում է նորա ինձ Ուրմիուց գրած նամակից։ Երբ որ այնտեղ եկավ, աշխատեցեք մըտքից հանելու և մին այլ հայոց ուսումնարանում աշխատեցնելու, որովհետև նորա վախճանն վտանգավոր կարող է լինել ազգի համար։

Շնորհակալ եմ, որ ազգին վերայոք մին քանի ուրախալի լուրեր գրած էիք։ Բայց սիրելիդ իմ, թեպետև զանազան կողմերից միշտ ազգի հառաջադիմության համար բարի ավետիքներ լսելով առժամանակ հանգչում է սրտիս տխրության հուրն. այլ մյուս

անգամ հայելով Ատրպատականի հայոց ողորմելի վիճակին, տառապանքներն կրկին պաշարում են զիս։ Պարսկահայք մահահրավեր քնով ննջած են ազատության խավարի սև քողին տակ, և չկա այն ազգասեր ոգին, որ կարողանա զարթուցանել նրանց խորին թմրությունից։ Պարսկաստանի վիճակավոր առաջնորդն, փոխանակ մի օգնություն անելու, ինքն մեծամեծ չարյաց պատճառ լինում է։ Ես շատ զարմանում եմ, որ այդպիսի անհոգ հոգևորականներու իշխանության ենթադրյալ ժողովուրդներն ինչպես մինչև ցայժմ չեն կորցրած յուրյանց ազգությունն. մանավանդ Պարսկաստանում, այլազգաց տերության մեջ։ Այդ կարի անլուծանելի խնդիր եղած է իմ մտքին։

Ո՜հ, Հովհաննես եղբայր. սկսյալ այն ժամանակից, որ Հայաստանն կորցրավ յուր երջանիկ սուրբ հայրերն, հայոց հոգևորականներն սկսած են հետզհետե դեպի ներքին աստիճանն դիմել. փչացնելով յուրյանց քահանայականություն և սրբազան պաշտոնի ճշմարիտ հատկությունները։ Որն քաջ կտեսնես ստորագրյալ նկարագրությունից։ Թեպետև շատ ուսումնականներ ազգի պակասությունն այլոց չի հայտնելու համար մինչև ցայժմ ծածկած են թողել։

Միտքդ բեր Հայաստանի անթիվ վանքերն, մենաստաններն, անապատներն, նաև նույն սբ. Էջմիածինն և նույնս մեջ լցված անհամար կրոնավորներն, որովք կարի վես սրտով պարծենում է հայոց ազգն։ Ի՞նչ օգուտ ունին այժմ այս աստուծո տաճարներն.—ուրիշ մի օգուտ չունին, եթե ոչ բնակարան եղած են մոլի, հեշտասեր, ծույլ անձանց, որք ընդունելով կրոնավոր անունն, ազգն հովվելու պաշտոն ստանալով, թողած են յուրյանց հոտ-անտերունչ, անօգնական գայլոց ժանիքներումն՝ ինքյանք առանձնացյալ են վանքերու սենյակներումն այնու. հույժ դյուրին միջոց գտանելով՝ ազգն կողոպտելու և յուրյանց անպիտան կյանքն վարելու։ Ս. Հ., որպես երբեմն խարազանով արտաքսելով տեր ի տաճարից ապականիչ գնողներն և փոխանցողներն, ասում էր զայրագին. «Իմ տունս աղոթքի տուն պիտի կոչվի, բայց դուք արեցիք այր ավազակաց»։ Երանի թե յուր աստվածային նախախնամությամբն ևս արտաքսեր մեր Հայաստանի սբ. տաճարներիցն ապականիչ վարդապետներն։ Նաև մտածիր, թե որչափ մեծ արդյունք բաշխում են չիրմեռանց հայք յուրյանց ազգային ուխտա-

*տեղիներում, որոնք եթե հավաքվելու լինեին առանձին տեսչությամբ շատ ազգօգուտ գործառնություններ կլինեին նորանցով. իսկ բոլորն վարդապետներու որկրամոլությամբն սպառվում են։ Եվ այս է գլխավոր պատճառն զի Հայոց Հոգևորականն վախճանելուց հետո մին մեծ վաճառականից ավելի փող է թողնում. որտեղի՞ց է—բոլորն ազգից կողոպտած են։*

*Ինչևիցե, Հայոց Հոգևորականներու չարիքներն այնչափ շատ են, որ ամենևին արժան ես չէ հիշել կամ գրչի տակ գցել։*

*Հատուկ բարև ունիմ ձեզ ու մեր սիրելիներուն։*

*(Ներեցեք, պատվելի Իսահակն շատոց դուրս գալու համար վաղ գրեցի. այս միջոցներումս կրկին նամակ կու ստանաք. նորանում մին քանի արժանավոր լուրեր կու հաղորդեմք)։*

*Մնամ Ձեր քաղցր տեսության անձկալի մտերիմ եղբայր, Ձեր*

Հակոբ Միրզայան։

## 3. ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆԻՆ

*1858 թ., [մայիս—հունիս, Սալմաստ]*

*Հայրենասեր հայր,*

*Արդեն շատ ամիսներու դյուրահոլով շրջանն լրացավ. մին՝ Ձեր նամակին սպասելով՝ սրտներուս անձկությանն օրըստավե-կրազմանու։ Հիրավի շատ հետաքրքրական լուր է՝ գիտել արդյոք որպիսի սաստիկ զորությամբ նորությունք կմարանչի հնության հետ։ Ի սկզբանե սկսած այս երկու նախանձավոր թշնամիներն՝ յուրաքանչյուրն առանձին խումբ արոշած, մարտ կմղեն, այլ առաջինն միշտ հաղթող գտնվելու է։*

*Մարդկային բնությունն մին առանձին դադանի հարաբերություն ունենալով տիեզերական համաշխարհական բնության հետ, միանգամայն և նորանից յուր կախումն ունի։ Զննելով տեսնում եմք. բառահոլով եղանակներուն հետ, երբ բնությունն տկարանում և մեռանում է. դարձյալ առողջանալով հարություն է առնում. ընդնմին և մարդկային սրտի եռանդն, ոգվո աշխույժն և մարմնո հասակությունն նույն ձևերն ընդունում են։ Զարմանալի հեղափոխություններ տեսնելու է՝ ոչ թե մին դարվո միջոցումն, այլ ընդ-*

հանուր դարերու սահմաններում. ուր ծեր Կոսմոսն հիանալի պատկերացուցանէ յուր ներգործութիւնները, որպէս համայն աշխարհական բնութեան վերա, նոյնպէս և առհասարակ բոլոր մարդկային ազգին վերա:

Այժմյան Եվրոպիո լուսավոր ազգաց իմաստութիւն, քաղաքականութիւն և զանազան արվեստաբանութիւն այդչափ զարմանում եմք. եթե փոքր-ինչ անցյալ ժամանակին հայելու լինիմք, կտեսնեմք նրանց թշվառ բարբարոսական վիճակին: Հայաստանն առաջագույն սկսավ ընդունել բնութեան բարի ձիրքերն. բայց ի՞նչ օգուտ, կատարելութեան չի հասավ, այլ հետզհետե նվազեցավ: Այն ժամանակն, որ Եվրոպիո զանազան բարբարոս ազգերն՝ մինչ պատերազմների մեջ շփոթված կոտորաբար միմյանց արյունն էին թափում, Հայաստանի ուշիմ որդիքը Աթինայի մեջ՝ Աթինաս Պալլասա ուսումն էին սովորում: Բայց ինչո՞ւ համար նոքա յուրյանց բարբարոսական վիճակից այժմյան լուսավորութեանն հասան. հայաստանյանք յուրյանց պայծառափայլ լուսավոր աստիճանից՝ օրըստավուր աղքատացան. կորցնելով ըստ մեծի մասին Ազգութիւնն, Կրոնն և Հայրենիքն: Այդ մասին թեպետ բազումք այլ և այլ պատճառներ հառաջ բերում են, իսկ նվաստս՝ տկար կարծյացս չափի, Հայաստանի հոգևորականաց անհոգութիւնը համարում եմ սորա միմիայն էական պատճառն: (Բայց ներողութիւն կխնդրեմք հառաջագույն, չլինի թե իմ դատողութիւններն Ձեր սրտին դիպչողական պատճառ լինին. ըստ որում դուք ևս հոգևորական դասակարգին լինելով՝ գուցե մեր գրվածքներումն նեղանայք: Այլ Ձեր ազգասեր ոգին և բարի նպատակն՝ որպէս ընդհանուր ազգին, նոյնպէս և մեզ բացահայտ է: Հուսամ զի ճշմարտութեանն ևս ընտրող լինիք և մեր տկար դատողութեան ներեք):

Հայաստանն արդեն քրիստոնեական ժամանակումն կորսնցուց յուր վեհափառ թագավորներն. այնուհետև ազգի պահպանութիւնն ընկավ հոգևոր կառավարութեան տակ: Բայց ափսո՜ս. զի որպէս առաջնույն կործանման պատճառն նախանձն, երկպառակութիւնն եղավ, նոյնպէս և հետնույն օրըստավուր տկարանալուն պատճառն՝ նույն սադայելի ոգին եղավ: Փառասիրութիւնն տիրեց ամենեցուն, վանքերն մեկ-մեկ դղյակներ դարձան. մեր պատվելի խաղաղութիւն ամենեցուն ասողներն առանձնացան

նոցա մէջ։ Հիրավի, եթե մի այլ հարմար տեղի գտանեին յուր-յանց հանգիստ, ծույլ, անպիտան կյանքն գյուղությամբ անցուցանելու՝ վանքերն ալ թող կուտային։ Բայց ո՞ւստի կարող էին գտանել այնպիսի տեղը, ուր որ ազգն ջերմեռանդ ոգով թափում է յուր ողորմության բարիքներն։ Թեպետ յուր հովիվներն՝ զինքն անտերունչ՝ գաղանաց ժանիքներումն թողած՝ իրքյանք հեռացել են. բայց նա (ազգն) միշտ յուր սրտին մեջ պահպանում է յուր ապերախտ կրոնավորաց հարգն։

Եվրոպացիք որչափ ավելի ջանք են տանում ուսումնարաններն բազմացուցանելու և տպագրությունն առաջ տանելու՝ Հայաստանի վարդապետներն այնչափ հերքում են։ Այս երկուս միայն պատճառ լինելով հասարակաց լուսավորությանն, եթե Հայաստանի մեջ ես գործի դրվեին՝ կարող են մեր այսքան հայր սուրբերու հարգությանն փոքր-ինչ պակասություն բերել։ «Որովհետև երբ այժմյան նախապաշարյալ հնասեր ծերերն վերջացան, և ազգին մեջ գիտնական անձինք գտնվեցան, այլևս չեն թողուլ կրոնավորներն վանքերու, անապատներու սենյակներումն փակկանալ, այլ նոցա սեփական պաշտոնն հասկացնել տալով, կստիպեին ըստ արժանվույն ժողովրդյան համար հոգ տանիլ», ինչպես նախնի սուրբն Սահակ, սուրբն Մեսրովբ և այլն անձնանվեր սուրբ հայրք, աշխատում էին ազգին մտաց լուսավորության համար. և քարոզությամբ սուրբն գրոց առաքինություն հաստատում էին նրանց սրտին մեջ։

Ազգին սերը, մանավանդ եվրոպացոց օրինակները, մեծ հորդոր եղավ Ձեզ հառաջ տանելու հայրենյաց մեջ այն ամենահարկավոր ձեռնարկությունը, որն ծնանիլ ունի շատ պիտանի օգուտներ։ Բայց իբրև նոր բան և թշնամի հնության հետ՝ մեծ ջանք, մեծ դժվարություն կպահանջե՝ ըստ ամենայն մասին։ Որա համար ամենայն բանից առավել հարկավոր է համբերությունը։ Դժվարին է մին տպավորություն իսպառ ջնջել և այլովն փոխարինել. իսկ համբերություն պետք է, մինչ ժամանակն ինքնին ի կատար ածե. ղի ժամանակն է պսակող ամեն բարի նպատակներու։

Խոհեմությունն միանգամայն զատավոր ընտրելով, նայելու է ամեն կողմերից, որ թե՛ ներկայի համար և թե՛ ապառնիս համար մին արգելք չհասնի, որ Ձեր նպատակի խանգարմանն պատճառ կարող է լինել, շուտով նորա դեմն առնելու է ամենայն զգու-

*շությամբ։ Եվ ամենայն բանից առավել վստահանալու է Փրկչի նախախնամությանն և անհուսահատությամբ կամաց-կամաց հառաջ տանելու է գործն։*

*Կաղոթեմք առ Հիսուս, որ իր շնորհաց նշույլն կաթեցնե դարձյալ Հայաստանին վրա, ինչպես երբեմն սուրբ իջման տեղին, որով պայծառ լուսավորվին Գրիգորի որդիքները, զարգանան ուսման հառաջադիմությամբ։ Այսքան կարճառոտ գրելով, կմնամ կարոտալի սուրբ աջույդ համբուրմանն։*

Հակոբ Միրզայան Մելիք-Հակոբյանց

## 1860

### 4. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱԹԱՆՅԱՆԻՆ

*Հոգեկից բարեկամ*

*Հ. Բ. Քաթանյանց.*

*Կարգս իմ այս գուղնաքյա գործը, որ անցյալ տարու ճանապարհորդության պտուղներիցն է, եթե հաճելի կթվի քեզ, կարող ես ուղարկել Մոսկվա, պարոն հրատարակչին «Հյուսիսափայլի», որ թե արժան կդատե, թող տպել տա յուր օրագրի տետրակներից մինի մեջ։ Խնդրեմ 1860 թվականում հրատարակելի «Հյուսիսափայլից» ուղարկեք ինձ մի օրինակ։ Հատուկ, անցյալ տարի մեծ հաճությունն ստացա այդ եվրոպական բանագիտությամբ գրած ու խոսուն տետրակներից։ Երկար ժամանակ փափագում էի տեսանելու մի այդպիսի օրագրի հրատարակություն, որի մեջ ճշմարտությամբ պատկերանային հայոց ազգի վերքը և նոցա բժշկության համար գործադրելի հնարները։ Տա Աստված ընդ երկար տևել «Հյուսիսափայլին» հօգուտ մեր հայրենիքի։*

*Ձեր* Հակոբ Մելիք-Հակոբյանց

*15-ին հունվարի, 1860, Փիաչիկ*
*Սալմաստ*

## 5. ՍԱՎԱԳ ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆԻՆ

1868, 1 հունվարի, Փայաջիկ

*Անգին բարեկամ պարոն Սավագ Գևորգյան Ավթանդիլ։*

*Քրիստոնյաների ընդունած տարեթիվը փոխեց յուր մի ցիֆրը, և այդ թվաբանական նշանագրի փոփոխության պատճառով, այսօր հազարավոր քաղաքներ, միլիոնավոր տներ, լցված ուրախությամբ, անհամար ձայներ կոչում են. «Շնորհավոր Նոր տարի»։*

*Բայց, անգին բարեկամ, ես չեմ սիրում հաղորդ լինել հասարակաց անխորհուրդ ուրախություններին, ուրեմն ներեցեք, որ միևնույն քաղաքավարությամբ չեմ բարևում Ձեզ։ Մանավանդ այս րոպեիս իմ սիրտը չէ զգում ոչինչ ուրախություն, այլ ընդհակառակն, մի անտանելի ցավ վրդովում է ինձ. և մի աներևույթ ձայն մեղմիկ շշնջում է իմ ականջիս. «Եղբայր, մի տարի ևս գնաց քո կյանքից...»։*

*Ասել է, թե մի քանի քայլերով մոտեցանք գերեզմանին։*

*Այս գիշեր (դեկտեմբերի վերջին գիշերն էր այդ) ես, նստած միայնակ իմ առանձնական սենյակիս մեջ, խորասույզ եղած խառն մտածմունքներում, հանկարծ լսեցի անսովոր դղրդմունք, և միևնույն վայրկյանում հրացանի գործիքների որոտը թնդացուցին իմ սենյակիս մելամաղձական լռությունը։ Դուրս գնացի. հա՜յ, հո՜յ, աղաղակ, հայհոյանք, անեծք, լսելի էին լինում գյուղական խրճիթների կտուրների վերա։ Այդ բաբելոնյան կատաղի խառնաձայնությունը տևեց մի քանի ժամ։ Ես կարծեցի, թե գյուղացիք այդ սպառնալիքներով հալածում էին սատանային, որ այնքան հնուց բույն էր դրել նոցա խրճիթների մեջ։ Բայց ինձ ասացին, թե հայերը յուրյանց սովորական ավանդությամբ հալածում են հին տարին։*

*—Ինչո՞ւ,—հարցնում եմ ես առաջին հանդիպող գյուղացիին։*

*—Նորա համար, որ,—պատասխանում է ռամիկը յուր խռպոտ ձայնով,—այդ հին տարին խիստ չար տարի էր, նա չբաշխեց մեզ ոչինչ բախտ. թող կորչի գնա հավիտենական կորստյան մեջ։*

—Բայց Նոր տարին, կարծո՞ւմ եք, բերում է ձեզ մի նոր բա՞խտ, մի նոր օ՞ր,—կրկնում եմ իմ հարցը։

—Այո,—պատասխանեց ռամիկը ինքնաբավական հաստատամտությամբ և հեռացավ։

Կարճելով իմ խոսակցությունը մոլեռանդ ռամկի հետ, դառնում եմ դեպ քեզ, իմ անգին բարեկամ, քանի՜-քանի՜ հազարավոր այդպիսի դեկտեմբերներ յուրյանց հրացաններով արտաքսել են հայոց ռամիկները, քանի՜-քանի՜ նոր տարիք սիրով և ուրախությամբ ընդունել են նոքա։ Բայց նոցանից և ոչ մինը չէ բերել նոցա համար մի նոր բախտ։

Արդարև, հոլովական տարիքը ոչինչ չեն ներգործում հայերի ախտք և արատում վիճակի վերա։ Պատճառն, որ թեպետ բնության նախասահմանյալ օրենքներին համաձայն տարիքը փոփոխվում են, գնում է հինը, գալիս է նորը. բայց հայերը, հանդարտ կենացով յուրյանց գերեզմանական անշարժության մեջ, երբեք չեն մտածում փոխել յուրյանց մեռելային դրությունը։ Հայերը յուրյանց կյանքը չեն համաձայնեցնում տարիների ընթացքի հետ. և ժամանակի պիտույքների հետ։ Հայերի համար թե անցյալը, թե ներկան և թե ապառնին ունեն միևնույն կարատարեր նշանակությունը։ Միով բանիվ, հայերի համար չկա «Նոր տարի»։

Չկամենալով ավելի տխուր գրգիռներ տալ Ձեր զգացողությանը, վերջացնում եմ իմ խորհրդածությունը նոր տարվա մասին. և շտապում եմ հայտնել իմ ուրախությունը, որ պատճառեց Ձեր վերջին նամակը, երբ կարդացի, թե կրկին անգամ ընդունելություն եք գտել հեռագրատան մեջ։ Այդ ծառայությունը, միա դնելով Պարսկաստանի անկարգ կառավարությանը, թեպետ մին նշանավոր բան չէ, բայց կարող էր դա ազատել ձեզ այն վտանգավոր ախտեն, որ կոչվում է դատարկություն:

Քանքարավոր Մ. Նալբանդյանցի ցավալի կյանքը և նորա ազավոր մահը նկարագրող լրագիրը անհամբերությամբ սպասում եմ ստանալ, որ և անհապաղ ետ կդարձուցանեմ։

Իմ աչքերս այժմ բոլորովին առողջ դրության մեջ են։ «Խմբջիկի» մասին տակավին մին վճռական որոշումն արած չեմ. այլ և դուք չգրեցիք, արդյոք մի բան այդ մասին խոսեցա՞ք հարգի Տիգրան Աղայի հետ։

Վերջին լուրերը խ... խ... մասին խիստ տարակուսական են

Սուլթանի կառավարությունը օրեցօր սահմանափակվում է, ստանալով խիստ ճնշյալ և կաշկանդյալ դրություն, և հանապազօրյա թշնամական հարաբերությունքը, հանկարծ կբանկին մի ազդու հեղափոխության բոցերը...

Ենկի եղբորը՝ Բաղդասարին նշանեցին Մահտեսի Հարությունի Վարդանյանի աղջկը։ Ուրեմն նորա Թավրիզում հարս անելու միտքը մնաց անկատար։

Ձեր՝ Հակոբ Մ. Մելիք-Հակոբյան

## 6. ԱՎԱԳ ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆԻՆ

1868, 29 հունվարի, Փայաչուկ

*Ազնիվ բարեկամ,*
*Պարոն Ավագ Գևորգյան,*

*Իմ հորեղբոր որդի Տահապասի ձեռամբ ստացա Ձեր նամակը հունվարի 1-ից գրված, մի քանի հատ «Մասիսի» թերթերից, և մի հատ ներկա տարվա օրացույց, որ կացուցանում եք Ձեր առ ինձ սիրո հիշատակարանը։*

*Բայց ի՜նչ անհամեմատություն... ո՛րքան չնչին դնով փոխհատում եք Դուք սերը, սերը, որս հիշատակի համար կանգնված մետալյա, մարմարյա արձանքը, ահագին որձաքարյա կոթողները, գրանիտյա սյուները, գեղեցիկ մավզոլեոնքը, բոլորը մաշվում, փչանում են և չեն դիմանում կործանարար ժամանակի հարվածներին։ Ես ցավում եմ, Ձեր սիրո հիշատակարանը հանդիսացնում է մի փոքրիկ գիրք, մի հատ օրացույց, որ տարին լրանալուց հետո կորուսանում է իր նշանակությունը և միայն մի կողմ ձգվի...*

*Ներեցեք մի փոքր երգիծաբանության։*

*Այս ղասիդով ստացա Ձեր մի քանի տող գրությունը, մի քանի հատ «Մասիս» թերթերից, այլև «Ծաղիկ» կիսամսագիրը, որս մեջ կարդացի պարոն Մ. Նալբանդյանցի մահը։ Այս հատվածը այնքան գոհացուցիչ չէր, ազգային այդ թանկագին զոհի ցավոտ մահը նկարագրելու համար՝ հռչակավոր Հյուգոյի գրիչն պետք է, և Աբովյանի վառված, կրակված սիրտը։ Մի՞թե այդքան կարճ պետք է խոսել այն մարդու մասին, որ այնքան երկար և սրբ-*

տաշած ոճով խոսացել է մեր ազգային պիտույքների մասին։

«Մեղվին» այս գրով կստանաք։ Մի՛ մոռացեք իմ շնորհակալությունը պարոն Ելիզբեկյանցին հիշելու, իր կիսամսագրին մեզ ուղարկելն ընդունելու մասին։

Դուք գրած էիք, թե պարոն Նալբանդյանցի լուսանկար պատկերը հիշյալ պարոնի մոտ տեսած եք. բայց ի՞նչ եղավ Ձեր Պոլսից գրել տված հանգուցյալի պատկերը։ Արժանապես Մոսին Թովմասի խոստմունքներն հավիտենականության կարոտություն ունին. բե՛ր այնքան համբերություն։ Լավ է, որ դուք Ձեր այժմյան ծանոթ պարոն Ելիզբեկյանի միջնորդությամբ բերել տաք իմ և Ձեր խնդրած պատկերները։

Թավրիզի նոր լուրեր մի՛ խնայեցեք ինձ հաղորդելու։ Այստեղից Ձեր հետաքրքրությանն գրավող նոր գրելիք չունեմ, առայժմ մնաք բարյավ։

Որպես իմն՝ Հակոբ Մ. Մելիք-Հակոբյան

## 7. ԱՎԱԳ ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆԻՆ

Ի 1868, 24 օգոստոս, Թիֆլիս

Ազնիվ բարեկամ,

Պարոն Ավագ Ավթանդիլ.

Ես այժմ Թիֆլիսում եմ, դուք այդ վաղուց լսած կլինեք, բայց ի՞նչ Թիֆլիս... ո՛չ այնպես երևում է ինձ այժմ այդ վեհ ու շռայլ քաղաքը, որպես տեսել էի նորան տասն տարի առաջ. այժմ ինձ այստեղ ամեն մի առարկա, ամեն մի իրողություն հրապուրում է և հիացնում է... Դուք, գիտեմ, Ձեր մեծամիտ անփութությամբ կասեք. ի՞նչ հաճոյական մի բան պիտի լինի, մի կիսաասիական և կիսաեվրոպական քաղաքում, որպիսին է կովկասյան Թիֆլիսը։ Ի՞նչ եք ուզում, սիրուն հավերժահարսե՞ր... անմահ հուրինե՞ր, կախարդական դրասանքնե՞ր, գեղեցիկ, ծառազարդ ճեմելիքներո՞վ... միով բանիվ, ամեն ինչ, որ կարող են գրավել մեր խելքը. մեր միտքը ու մեր սիրտը, դուք կտեսնեք այստեղ։

Դոքա ցնորական բաներ են։

Բայց ես ունեմ այժմ մի նախանձելի շրջանակ այստեղի ուսումնական և կարի աշխույժ երիտասարդներից։ Իմ «Մեղվիկը»

զարմանալի ընդունելություն գտավ տեղի ընթերցող հասարակու-թենեն. քանի՛-քանի՛ գիշերներ եղել են առանձին-առանձին ժողով-ներ նորա ընթերցանության համար։

Նազարյանցեն նամակներ եմ ստանում, նա պահանջել էր իմ գիրքը Մոսկվա ուղարկելու, որ տպվի յուր «Լապտեր Հայաստանի» օրագրի մեջ, որ միտք ունի այս տարի ի լույս ընծայել։ Բայց քանի որ տակավին կուշացնիմ նորա ուղարկելը, պատճառ, շատե-րը ցանկանում են կարդալ։

Մեր առևտրական գործի և ընկերական հաշիվների մասին, որո համար այստեղ եկած էիմք, տակավին պետք ուշանամք, որովհետև, անիրավ Զաքարիան, զանազան չարահոգի և մեզ թըշ-նամի անձանց թելադրությամբ չկամի յուր գործն մեզ հետ խաղա-ղությամբ վերջացնել։

Միմիայն խնդրեմ, այս խորհուրդն շատով տեղեկանալով, առանց ուշացնելու, հեռագրով մեզ լուր տաք. այսինքն, ինչպես գրված էր նախ բուլվար-զարին, որ Բաբա Հարությունյանին Սալ-մաստից մուհասիլով բերել տալով Թավրիզ բանտում պահել տար. արդյոք բերել տվա՞ծ է, թե ոչ։

Արժանապատիվ Մոսիս Թովմասին, և նորա ընկեր պարկեշ-տափայլ Աննա խանումին մեր կողմից սիրո ողջույն կնվիրեք։

Մի մոռացեք և աղա Հեթումի քեփն հարցնելու։

Փեսա Սողոմոնն, փառք աստծո, կատարյալ առողջության մեջ է։

Ձեր՝ Հակոբ Մ. Մելիք-Հակոբյան.

## 1869

### 8. ԱՎԱԳ ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆԻՆ

Ի 1869 ամի, 22 մարտի, Թավրիզ

Ազնիվ պարոն։

Ավելորդ եմ համարում իմ գործերի այժմյան վիճակից ձեզ որևիցե տեղեկություն տալ, մտածելով, այն իրողությունքն, որ այնքան անտանելի են ինձ, չցավեցնել նոցանով մի վաղեմի բա-րեկամի սիրտ։

Բայց զարմանալի է, երբ մարդկային կյանքի մի տարրը շեղ-

վում է յուր բնական կարգից, արդեն դժբախտության մրրիկը կատաղաբար սկսում է ամեն կողմից փչելու... ազգականք, բարեկամք, ընկերք և ծանոթք բոլորն հեռանում են նորանից... բայց մարդը, այդ դժոխմբեր դրության մեջ ոչինչ հույս, ոչինչ մխիթարություն և ապավէն չէ գտանում յուրյան, բացի այն միակ աներևույթ էակը, որա վերա դրվում է անճարների հույսը։

Արդարև, ես մի մեծ պատերազմ եմ պատերազմում բախտի անհաջողության հետ, բայց միևնույն ժամանակ իմ սիրտս և իմ խղճմտանքս այնպես անդորր և հանգիստ են որպես առաջ։ Ես միշտ մխիթարություն եմ գտանում իմ տեսած, լսած և կարդացած հազարավոր օրինակների մեջ, երբ բախտի անհաստատ ճախարակի շրջանը երբեմն մինչև աստղերը բարձրացնում է մարդը. իսկ երբեմն մինչև անդունդը ի խոր գլորում։

Կամք նախախնամության օրհնյալ եղիցի. կվարվիմք բախտի հեղափոխությանց հետ, միշտ ակներև տեսնելով, որ աշխարհս անցավոր մի բան է։

Պարո՛ն, բավականին զգալի է ինձ իմ խղճի խայթը, երբ կամենում եմ գրել ձեզ այն, որ մինչև այսօր, թեև ձեզ միշտ կարեկից բարեկամ, չեմ կամեցել ասել։ Բայց իմ դրության այժմյան կարիքը ստիպում է... դուք կտաք աղա Երեմիային ինձանից քանի տարի առաջ ձեր ստացած Լաճ թումանը, որո փոխարենն ես այստեղ ստացա այդ պարոնից։

Հուսով եմ, որ դուք կկատարեք ձեր բարեկամական սրբազան պարտքը, իմ այժմյան կարոտության մեջ փոխարինելով այն լավությունը, որն որ ես արած եմ ձեզ այն ժամանակ, երբ դուք ևս ինձ նման զգում էիք արծաթի կարոտություն։

Ձեր՝ Հակոբ Մ. Մելիք-Հակոբյան

## 1872

### 9. ԱՎԱԳ ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆԻՆ

Ի 1872 ամի, 4 օգոստոսի, Թիփլիս

Հարգի պ. Ավագ Ավթանդիլոֆ։

«Մշակ» 30-րդ համարի մեջ կտեսնեք ձեր վերջին նամակը տպված, որ գրված էր Պարսկաստանի միսիոներների առիթով։

խմբագրությունը միշտ սիրով կընդուներ ավելի այդպիսի նամակներ, եթե դուք կշարունակեք ուղարկել: Լրագրության համար խիստ թանկագին են ճիշտ, առօրյա տեղեկությունները, անցքերը, որք կարող էին հետաքրքրություն շարժել: Ձեր վերջին նամակը զուրկ չէր այդ հատկություններից:

Մի քանի փոփոխություններ, որ եղած են ձեր նամակի մեջ, ցույց կտան «Մշակի» հայացքը և նորա ուղղությունը: Հուսով եմ, այսուհետև կհարմարեցնեք ձեր նամակները այս լրագրի ուղղությանը, որ ստիպված չլինի նա յուր կողմից փոփոխություններ անել:

Ձեր առաջին նամակները ես անհարմար համարեցի տպել տալ, ճշմարիտն ասած, ինձ ցանկալի չէր, որ դուք այդպիսի նամակներով գրականական հանդես դուրս գաք: Ձեր լեզուն բավականին մշակված է, դուք ավելի շատ ծանոթ եք Պարսկաստանին, դուք կարող եք գրել ավելի լավ նամակներ:

Թեև հեգնական և պարսավաբանական ոճը ձեզ շատ հաջողվում է, և այդ նամակները այդ մասին ունեին յուրյանց գեղեցիկ կողմերը, բայց մի այդպիսի ոճով գրվում են կյանքից առած փոքրիկ պատկերներ, վեպիկներ և ո՛չ նամակագրություններ:

«Մշակի» խմբագրությունը միշտ ստանում է Թավրիզից զանազան թղթակցություններ, պարոն նամակագիրքը կարծես միմիայն Թավրիզով են զբաղված, կարծես Պարսկաստանի այլ քաղաքներում ոչինչ չեն պատահում: Պարսկաստանը լի է առօրյա հետաքրքրական անցքերով, որոնց մասին ոչ մի պարբերական հրատարակություն չէ խոսում:

Ինչե՞ր չեն լինում դիվանխանաներում, ինչե՞ր չեն լինում շարիաթխանաներում, ինչե՞ր չեն գործում նահանգների հաքիմները, մոլլաղարները և ինչե՞ր չէ անում վերջապես մեր Ատրպատականի հոգևոր կառավարությունը: Այն բոլոր անկարգությունները, որ պատահում են այս տեղերում, միշտ առատ նյութեր կարող են լինել լրագրության համար:

Դուք եղել եք Թեհրանում, Ղազվինում և տեսել եք Պարսկաստանի զանազան քաղաքներ, դուք կարող եք շատ նյութեր հավաքել մեզ: «Մշակի» խմբագրությունը միշտ պատրաստ է ամենայն ուրախությամբ տպել, այլև վարձատրել ձեր աշխատությունը, մի օրինակ ձրի ուղարկելով ձեզ:

Եվ ձեր մի այդպիսի աշխատասիրությամբ մի այլ պատճառով ես կվարձատրվի, երբ դուք կծանոթելիք Հայոց ընթերցող հասարակությանը, և երբ այս կողմերը գալու լինիք, շուտով կարող եք ձեզ որևիցե պաշտոն գտանել։

Ուշադրությամբ կարդացեք «Մշակի» № 31 Ղարադաղցու նամակը, այդպիսի պարունակություն ունեցող նամակներ միշտ հետաքրքրությամբ կկարդացվին։ Թեև նա ամենևին Պարսկաստանից չէ գրված, այսուամենայնիվ, ճիշտ տեղեկություններ է տալիս այդ գավառի վիճակից։

Ինձ շատ ցանկալի էր գիտենալ մեր վաղեմի բարեկամ Մոսես Թովմասի և նորա ընտանիքի առողջությանը։ Ձեզանից շնորհակալ կլինիմ, եթե հաղորդեք նոցա մասին մի քանի տեղեկություն։ Ես մինչև մահ չեմ կարող մոռանալ այդ պատվելի գերդաստանի ազնիվ հյուրասիրությանը։

Այլև գրեցեք ինձ, թե ի՞նչ եք շինում այժմ դուք, և ձեր նպատակները ի՞նչ է ձեր ապագայի մասին։

Ապա Երեմիայից ոչինչ լուր չունեմ, չգիտեմ այդ պարոնը ինչո՞վ է պարապվում այժմ։

Դուք կարդացած կլինիք «Մշակի» մեջ «Մեխրզադե» ստորագրությամբ մի պատմական հոդված վրաց թագավորազնի, վալիի Պարսկաստանի կյանքից, ես դարձյալ պատրաստում եմ մի հոդված վալիի մասին, խնդրեմ իմ եղբայրական ողջույնը մատուցանելով Աննա խանումին, ասեք, եթե նորան հայտնի էին որևիցե անցքեր վալիի կամ նորա հետ Պարսկաստան եկած թավադների մասին, հաղորդել մեզ։

Այլև գրեցեք, թե «Մշակը» ինչպիսի ազդեցություն է ունենում տեղի ընթերցողների վերա, համակրում են, թե ո՛չ։

Ձեր՝ Հ. Մելիք-Հակոբյան

Միրզա-Մելքում խանի մասին ոչինչ չեն գրում, թե նա ի՛նչ նորություններ արեց, կամ անելու միտք ունի Պարսկաստանի քաղաքական կյանքում։ Ձեր վերջին նամակը միսիոներների մասին գրված ամենևին չէր կարդացվում թանաքի և թղթի անպիտանության պատճառավ։

## 1873

# 10. ԱՎԱԳ ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆԻՆ

Ի 1873 ամի, 17 մարտի, Թիֆլիս քաղաք

*Ազնիվ բարեկամ պարոն Ավագ։*

*Ձեր նամակներն բոլորն ստացած եմ, այսքան ժամանակ չպատասխանելուս պատճառը իմ առ ժամանակյա մարմնական տկարությունն էր։ Իմ Թիֆլիսեն դուրս գալս առժամանակ ետ ընկավ, չեմ կարող ճշտությամբ ասել, թե ե՞րբ կարող եմ հեռանալ այստեղից, որովհետև զանազան հանգամանքներ ստիպում են դեռես սպասել։*

*«Մշակի» համարներն կուղարկվին ձեր գրած հասցեներով։ Զարմանում եմ փոստայում ամեն մի համարի մասին 15 կոպ. պահանջելու համար։ Այդ մի մեծ արգելք կարող էր լինել «Մշակի» Պարսկաստանում տարածվելուն։*

*«Մեղուի» 7-րդ համարում կարդացի Խ. Գրիգորյանի նամակը. ես չեմ ճանաչում ո՞վ է այդ հիմարը։ «Մեղուի» խմբագրության անդամներից մեկը ինձ ասաց, թե նա իր նամակի մեջ զանազան անձնական հայհոյանքներ էր գրած իմ և Էսայինի դեմ. միայն նոքա դուրս էին ձգել նրա նամակից։ Հարկավոր է մի լավ սաք շիշ այդ անասունին։*

*Ձեր երկու նամակներն պարոն Արծրունու անվամբ կարդացի. համարներն կուղարկվին յուրյանց հասցեներով, միայն երրորդ և չորրորդ համարներն սպառված են։*

*Պարոն Արծրունին ավեց ինձ, և կարդացի պարոն Սաաքյանի նամակը, որի մեջ նա խոստանում է այսուհետև «Մշակին» նյութեր հաղորդել. նա հիշում է և իր թարգմանությունների մասին։ Թարգմանական գրվածքները «Մշակը» չի տպագրում, եթե նոքա հասարակական նշանակություն չունենին և կամ մասնավորապես հայերին չէին վերաբերում։ Թեհրանի «Իրան» լրագրի հետաքրքրական տեղերից թարգմանություններ ավելի նշանակություն կունենան, որովհետև այդ լրագիրը Թիֆլիսում չէ ստացվում, բայց մի համարից, որ պարսից հյուպատոսարանը միշտ գաղտնի է պահում։*

*Այսուհետև ձեր նամակները կարող եք ուղղակի իմ անունով*

գրել։ Հաղորդեցե՛ք, խնդրեմ, պարոն Կ. Շերմազանյանը Թավրիզումն է, թե գնացել է Թեհրան։ Որովհետև նա ինձ ասաց, թե երկար չպետք է մնա այնտեղ։

Պարոն Մելիք-Ազարյանցը ինձ պատմեց հաքիմ Սահաբի աղջկա Ղարաբաղում մարդի տալը. շատ ցավում եմ այդ թաբրիզյան հավերժահարսի անբախտության մասին։ Ես զարմանում եմ, թե ինչու նրա ծնողքը այդպես անխոհեմաբար վարվեցան։

Ձեր՝ Հ. Մ. Մելիք-Հակոբյան.

Եթե ժամանակ ունենաք, ղարաբաղցոց լեզվով մի փոքրիկ ծիծաղաշարժ պատկեր գրեցեք։

# 1874

## 11. ԱՎԱԳ ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆԻՆ

1874, 14 հունվարի, Թիֆլիս

Պարոն Ավագ Ավթանդիլոֆ։

Պարոն Աստվածատուր Ղարաբեկովի նամակները չտպվեցան, որովհետև խմբագրատունը անմիջապես հետագիր ստացավ հեղինակից չտպագրելու համար, և համաձայն ձեր գրության, ետ ուղարկեցինք։

Խմբագրությունը չէ ստացել ոչ մի նամակ Էսպիոնից, Թաբրիզում առաջնորդի դեմ եղած խռովությունների մասին։ Նույն պարունակությամբ ստացվել էր միայն մի նամակ «Թաբրիզեցի» ստորագրությամբ, որը տպվեցավ ներկա տարվա «Մշակի» առաջին համարում։

Ձեր խնդրած «Մշակի» թերթերը կուղարկվեն յուրյանց հասցեներով։

Հ. Մ. Մելիք-Հակոբյան

Պ. Սարի Միքայելյանի որդուն պատկանած թերթերը ուղարկվել են տեր Արզուման Նազարբեկյանի անունով։

Հ. Մ.

## 12. ՌԱՖԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆԻՆ

1874, 9 օգոստոսի, Թիֆլիս

*Ազնիվ բարեկամ.*

*Այս փոստայով ուղարկեցի Ձեր անվամբ մի կապոց, որ պարունակում է յուր մեջ* քսան *օրինակ (1 և 2-րդ համար) Րաֆֆիի «Փունջ» կոչված բանաստեղծական և վիպասանական աշխատություններից: Հուսով ենք, նեղություն հանձն կառնեք այդ գրքերը Ձեր կողմերում տարածելու և գոյացած արծաթը կուղարկեք Թիֆլիս «Մշակ» խմբագրատանը պ. Գրիգոր Արծրունու անունով:*

*Ցանկալի է հեղինակին լսել Ձեր կարծիքը յուր աշխատությունների մասին թե առանձին նամակով և թե տպագրությամբ: Հուսով եմ, Դուք չեք զլանալու այդ Ձեր բարեկամից:*

*Մեր դրությունը նույնն է որպես տեսած եք, տակավին չենք հաշտված անողոք բախտի հետ...: Ձեր ինձ Գերմանիա գնալու հորդորը մի սաստիկ բաղձանք է թողած սրտիս մեջ, բայց ի՞նչ միջոցներով հասնել այդ նպատակին, այդ անորոշ է:*

*Պարոն Արծրունին առողջ է, բարևում է Ձեզ, միայն խեղճը անդադար աշխատությունից կմախք է դարձել:*

*«Մեղվականների» ատելությունը դեպի «Մշակը» ու նորա աշխատակիցները օրըստօրե ավելի ուժեղ կերպարանք է ստանում: Ցավալի է, որ գործող երիտասարդությունը այդպիսի ոխակալ հարաբերությանց մեջ է գտնվում...*

*Ձեր ազգակիցը՝ պ. Ք. Պատկանյանը այստեղ է, բայց դեռ երեսը տեսած չենք: Ես զարմանում եմ, այդ պարոնը մոտ տարիներումս երկու անգամ Թիֆլիսում գտնվեցավ, բայց միշտ յուրյան թաքուստի մեջ պահեց:*

*Այժմ պատրաստում եմ «Փունջի» 3-րդ համարը տպագրության համար. այդ աշխատությունը եթե ոչ նյութապես, բայց բարոյապես մխիթարում է մեր կյանքի դառնությունը:*

*Եթե գրքերից ավելի ծախվելու լինի, հայտնեցեք կրկին ուղարկել:*

*Ձեզ միշտ հարգող Հ.* Մելիք-Հակոբյան

Մեր հասցեն—
Тифлис, редакция газеты «Мшак»
Акопу Мелик-Акопяну.

# 13. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

1 դեկտեմ., 1874, Թիֆլիս

*Պատվելի բարեկամ*

*Հ. Կարապետյան.*

*Դուք հեռացաք այստեղից առանց ինձ հետ տեսնվելու, փույթ չէ՛, ես այդ վերաբերում եմ որևիցե դիպվածքի. բայց թե դուք բոլորովին զլացաք ձեր ինձ արած խոստմունքները, ես այդ ներել չեմ կարող։*

*Հիշո՞ւմ եք, թե ինչեր խոստացաք ինձ. միշտ անպակաս անել ձեր նամակագրությունը և հաղորդել տեղային դրությունը թե դպրոցի, թե նորա վարչության և թե այլ հասարակական երևույթների մասին։ Հուսով եմ, որ դուք այնքան մոռացկոտ չեք և ո՛չ այնքան ծույլ, որ չկատարեք ձեր խոստմունքը։*

*Ձեր հոգաբարձուներից մինը՝ պ. Ա. Ղարաբեկովն քանի շաբաթ առաջ անցել էր Թիֆլիսից դեպի Եվրոպա, ցավում եմ, որ նորան տեսնել չկարողացա, որովհետև մինչև իմ լսելս նորա մասին, հեռացել էր այստեղից։ Բայց մի պարոնից, որ նորա հետ տեսնված էր, իմացա, որ պ. Ղարաբեկովն գոհ էր ձեր մասին, այդ խիստ ուրախություն պատճառեց ինձ։*

*Հետաքրքրական է գիտենալ, թե որպես է վարում յուր պաշտոնը ձեր ընկերը. արդյոք նա արդարացրուց այն նախագուշակությունները, որ լինում էին նորա մասին, թե փոքրիշատե ուղղվե՞լ է... Գրեցեք, խնդրեմ, թե ինչպե՞ս եք տեսնում տեղային առաջնորդին կամ ձեր տեսչին. գրեցեք, ո՞վ է այժմ գլխավոր դերը խաղում այնտեղի հասարակական գործերում։*

*Ես զբաղված եմ իմ գրքի III հատորի պատրաստությամբ. գալոց տարվա հունվարից տպագրությունը կսկսվի։ Այդ աշխատությունը չափից դուրս զբաղեցրել է ինձ այժմ։*

*Գալոց տարի «Մշակի» հրատարակությունը կշարունակվի նույն պրոգրամայով. մի օրինակ կուղարկեմ տեղային դպրոցի անունով, դուք նա կկարդաք։*

*Իմ անունով նամակներ կարող եք տալ պ. Մելիք-Ազարյանցի ընկեր մահտեսի Սիմոնին, նա կհասցնի ինձ։*

*Ցանկանում եմ ձեզ բախտ և հաջողություն։*

Հ. Մելիք-Հակոբյանց

## 14. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

20 հունվարի, 1875, Թիֆլիս

*Սիրելի բարեկամ*
*Հ. Կարապետյան,*

*Ձեր նամակներն ստացած եմ, ցավում եմ, որ Թավրիզում Ձեր նպատակներն արգելքների են հանդիպում. մի անզարգացած հասարակության մեջ, ուր տիրում է կիրքը և խավարի նախապաշարմունքը, այլ կերպ լինել կարող չէր։ Այդպիսի հանգամանքներում միշտ համբերությունը և հաստատ կամքը հաղթող են հանդիսանում. ուրախ եմ, որ դրանք Ձեր մեջ կգտնվեն։*

*Այդ վաղեմի ճշմարտություն է՝ թե «ոսկին գետնի վրա չի մնա», կհանդիպի նրան մի ճանաչող, որ վեր կբարձրացնե։ Մի՛ հուսահատվեցեք, արդարև, շատ անգամ կեղծավոր շողոքորթողներն ավելի են աչքի ընկնում և համեստ աշխատողները անհայտության մեջ են մնում. իսկ դրանք ժամանակավոր բաներ են. խաբեությունը վաղ թե ուշ, վերջապես մի օր կմերկանա...*

*Ես թե ձեր պատվին և թե իմ պատվին ընդդեմ համարեցի այդ. Աստուն և Սարգսին նամակ գրելը. միայն խնդրեցի պ. Մելիք-Ադամյանցին, նա գրեց աղա Արզումանին և մահտեսի Սիմոնին, որ ձեզ պաշտպանեն։ Պետք է ուշադրություն չդարձնել այնպիսի անձանց չարություններին. «Շունը կհաչի, բայց քարվանը կանցնի»։*

*Ես դեռ վաղ եմ համարում հայտնել ձեզ իմ դիտավորությունս Թավրիզի մասին, միայն այսքանը կասեմ, որ ներկա տարվա հուլիս ամսին այնտեղ կլինեմ. շատ բաներ ուրիշ ձև և ընթացք կստանան...*

*Կարդացի ձեր ուսումնարանի պրոգրաման, չափից դուրս անկարգ է. ցավում եմ, որ հոգաբարձությունը յուր պայմանով այդպես անիրավացի կերպով կապված է տեսչի հետ. այդ եզվիտը բավականին խորամանկ կերպով սանձահարել է նրանց...*

*Գրեցեք, որքան ձեզ հայտնի է, թե ի՞նչ էին գլխավոր շարժառիթները, որ չուզեցին ես տեղվույդ ուսումնարանում մտնել. ինձ շատ հետաքրքրական է այդ գիտենալ։ Այլև հայտնեցեք. առաջնորդի ձայնը որքան ուժ ունի ուսումնարանի կառավարու-*

թյան մեջ, կամ հաղթարձաններից որի՞ն ավելի են նախապատվում:

Պ. Սարգիսը վայրահաչ է, բայց պ. Աշրին այնքան վատ մարդ չէ, որպես դուք նկարագրում եք, եթե նրան կարողանաք հաճոյանալ, նա այնպես հո չէ, որ զրկե ձեզ վարձատրությունից. նա յուր հաշիվների մեջ ճիշտ է. միայն մի փոքր պետք է նրա փառասիրությանը խունկ ծխել. այդպիսի հիմարները սիրում են այդ:

Մի նախանձեցեք Մուշեղյանցի փառքին. «Ամեն ինչ ոսկի չէ, ինչ որ փայլում է». խաբեությունը երբեք տևողական լինել կարող չէ. սիրամարգի փետուրներով զարդարված ագռավը դարձյալ կմնա ագռավ... Այստեղ մեղավոր է կույր հասարակությունը, որ ընդունակ չէ որոշել արժանավորը անարժանից...

Չգիտեմ ինչո՞ւ առաջնորդը չպատասխանեց իմ նամակին. մի՞թե նա այնքան մեծամտություն ունի. մի՞թե նա չգիտե նրա փառքի ղեկը մասնավորապես իմ ձեռքումն է և կարող եմ հակառակ կողմը դարձնել... Այդպիսի մարդկանց պետք է զգալ տալ իրանց ոչնչությունը... Այս միջոցներում որքան գանգատանաց թղթեր ստացավ մեր խմբագրությունը նորին սրբազնությունից. բայց ես չթողեցի տպագրվելին խնայելով նրա պատվին, միայն մինը տպվեցավ:

Շարունակեցեք Ձեր նամակագրությունը, ես պատրաստ եմ միշտ պատասխանել, չխնայելով իմ օգնականությունը, որքան կարելի է:

Ձեր բարին միշտ ցանկացող՝

Հ. Մելիք-Հակոբյանց

Հ. Գ. Իմ գրքերը, եթե Ձեզ դժվարություն է պատճառում, հանձնեցեք մեր ագենտին, թող նա սպասե մինչև իմ նորից կարգադրությունը, ժամանակ չունեցա առանձին նամակ գրել պարոնին:

## 15. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Ի 1875, 24 մարտի, Թիֆլիս

Սիրելի բարեկամ
պարոն Հ. Կարապետյան,

Պարոն Հ. Ղազարյանի ձեռքով ուղարկած նամակը ստացա.

որի մեջ ամենախելոք տեղն այն է, որ գրում եք, թե Դավրեժի սրբազան առաջնորդը ինձանից դժգոհ է այն պատճառով, որ ես թույլ եմ տվել «Մշակի» մեջ տպվել է նրա պատվին դիպչող մի նամակ, և կամ, որպես թե նույն նամակը իմ հեղինակությունն է և այլն։

Սրբազան առաջնորդին ներելի է այսպիսի ծուռ ու սխալ գաղափար կազմել մի մարդու մասին, որին չէ ճանաչում, և մանավանդ, որպես երևում է, յուր կյանքում որևիցե լրագրի խմբագրության կանոններին տեղյակ չէ։ Բայց դուք, պ. Կարապետյան. իբրև Թիֆլիսում եղած մարդ և «Մշակի» խմբագրության պայմաններից շատ ու քիչ ծանոթ, դուք կարող էիք ցրել առաջնորդի սխալ կարծիքը իմ մասին։

«Մշակ» լրագիրը ունի խմբագրություն, մոտ տասն մարդկներից կազմված, ամեն շաբաթ չորեքշաբթի գիշերներում լինում են խմբագրական ժողովներ, ուր կարդացվում են տպվելիք հոդվածները, և ժողովի բազմության ձայնով կամ ընդունվում են, կամ հերքվում են և կամ փոփոխության են ենթարկվում։ Ժողովի մեջ մի ձայնը բազմության դեմ ոչինչ նշանակություն չունի. ուրեմն ես որքան էլ ցանկանայի, իրավունք չունեի ասել ժողովին, որ նամակը չտպվի, երբ նա ընդհանուր հավանությամբ ընդունվեցավ։ Բայց ես իմ կողմից այսքանը կարողացա անել, որ համոզեցի ժողովին՝ ջնջել նամակից մի քանի տեղեր, որոնք չափազանց հարձակողական էին և ուղղակի անձնավորության էին դիպչում. որպես երևում էր, նամակը սաստիկ կրքով էր գրված և բավականին հմուտ գրչի գործ էր։

Նամակների վերաբերությամբ յուրաքանչյուր խմբագրության պայմանն այն է, որ նա առանց խտրության դնելու կապե ամեն մի նամակ, միայն թե յուր ուղղության դեմ չլինի, և միշտ պատրաստ է խմբագրությունը հակառակ կողմի հերքումը նույնպես տպագրելու։ Այսպես էլ պատահեցավ սրբազանի մասին տպված նամակի հետ և տպվեցավ նրա հերքումը։ Նշանակե, խմբագրությունն այստեղ անաչառ է, նա անձնական կիրք կամ թշնամություն չունի դեպի այս կամ այն անձը։

Իսկ ինչ որ վերաբերում է այն բանին, որ նամակը իմ հեղինակությունն է, բոլորովին երեխա պետք է լինել և այսպես մտածել։ Նամակի իսկականը դեռ մնում է խմբագրատան մեջ, եթե

*սրբազանին ցանկալի կլիներ գալ բաց անել իմ կամ «Մշակի» խմբագրի հետ, նա կհամոզվեր, որ յուր կարծիքը սխալ է. որովհետև բուն հեղինակը այն ժամանակ յուրյան չի թաքցնի, որ Դավրեժում և առաջնորդարանից ոչ այնքան հեռու բնակվում է:*

*Եթե ես Անդրեաս սրբազանի հետ որևից ոխակալություն ունենայի, ինձ ամենևին չէր թաքցնիլ մի սուտ ստորագրությամբ նամակի քողով, որ այնպես հրապարակ դուրս գայի. իմ դրոշակը հայտնի է և բացարձակ: Բացի դրանից, ոխակալությունը դրական առարկայում ոչինչ նշանակություն չունի, իմ կողմից շատ ստորություն կլիներ այսպիսի առիթներով մի մարդու պատվին արատ քսել:*

*Իսկ ինչ որ վերաբերում է այն բանին, որ դուցե ես վշտացած լինեմ սրբազանից այնտեղի դպրոցի վարժապետության համար: Այս բոլորովին սխալական մտածմունք է, որովհետև Դավրեժի դպրոցում վարժապետությունը մի այնքան նախանձելի բան չէ, որ ես նրա չհաջողվելու համար ափսոսայի: Ո՞վ եղավ պատճառը, թե Կիրակոսը և թե Մարտիրոսը, ինձ համար միևնույն է, ես ոչ մեկի դեմ ոխ կամ թշնամություն չունիմ: Միայն ես կդատապարտեմ հայերի կուրությունը, որ նրանք ընդունակ չեն իրանց հասարակական գործերը օրինավոր կերպով կառավարելու և լավն վատից ջոկել...*

*Դուք ինքներդ գիտեք, թե որքան մեծ զոհաբերություն կլիներ իմ կողմից մի այնպիսի ստոր պաշտոնը ընդունելը, բայց ես հոժարվեցա նրա համար միայն, որ մի փոքր ես ծառայեմ հայրենիքիս, որին ավելի պարտական եմ իմ գոյությամբ:*

*Եթե կհանդիպեք սրբազանին, իմ կողմից ասացեք, թե հասարակական գործիչները այսպիսի չնչին բաներից չեն խրտնում, չեն հուսահատվում. պետք է ունենալ կամքի և համոզմունքի հաստատություն և ազգային գործը հառաջ տանել: Եթե մարդ սպասե, որ բոլոր աշխարհը նրան լավ ասե, որ ինքը մի բան չինե, այդ խիստ մնոտի և կույր փառասիրություն է: Բայց ընդհակառակն, մարդկության բարեկամներն միշտ հալածվել են, միշտ պախարակվել են, նրանք անցել են փուշերով լի ուղին և հետո ստացել են հաղթության պսակը: Անտեղի գովությունը և շողոքորթությունը, մինչև անգամ վնասակար է, թուլացնում է մարդու մեջ ճշմարիտ եռանդը և արգելում է նրան յուր աշխատանքով մի բանին հասնել: Գրականության մեջ պախարակվում են եկեղեցական ան-*

ձինք, որք ավելի բարձր աստիճանի վերա են կանգնած, քան թե Անդրեաս սրբազանը, այսուամենայնիվ, աշխարհը ճանաչում է նրանց որպես օրինավոր մարդիկ։ Նույնպես գրականության մեջ ամենայն գովեստներ են շռայլում մի այլ եկեղեցականին, բայց երբեք չեն կարողանում սրբել նրանից անազնվության մուրը, նա մնում է միշտ կեղտոտ մարդ։ Ուրեմն գործն է, որ արտահայտում է մարդու արժանավորությունը, ոչ թե տված տառը։

Հ. Մ. Մելիք-Հակոբյան

## 16. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

22 մայիսի, 1875, Թիֆլիս

*Սիրելի բարեկամ*
*Հ. Կարապետյանց,*

*Ձեր 10 մայիսից գրված նամակն ստացա, որի մեջ նկարագրում եք տեղվույդ ուսումնարանի ու այնքան նախանձելի դրությունը։ Որպես երևում է ձեր նամակից, գյուղացի մեջ ծագած անախորժությունների պատճառը եղել է գլխավորապես դանահարությունը (ծեծը), որ հարուցել է ծնողների դժգոհությունը ձեր դեմ, և ուրիշ կերպ լինել կարող չէր, որովհետև ծեծը ավելի զգալի բան լինելով, շուտ էլ հայտնվում է, մինչդեռ մյուս անկարգությունները շատ անգամ մնում են թաքուն։*

*Ճշմարիտն ասած, շատ տխուր տպավորություն գործեց ձեր նամակն ինձ վերա, և մանավանդ, դրանից առաջ ստացած նամակը դարձյալ նույն միտքն էր արտահայտում։ Եվ այս բոլորը վերաբերում են այն իրողությանը, որ ձեզանում ուսուցչական ժողովներ չկան, որոնց մեջ վարժապետների ընդհանուր համաձայնությամբ որոշվեին նրանց պարտականությունները և իրավունքները. դպրոցի* դիսցիպլինան *կախված է մնում յուրաքանչյուր վարժապետի կամայականությունից, ով ինչպես ուզում է՝ «յուր էշը քշում է»... Այդպիսի հանգամանքներում մի օրինավոր վարժապետի խղճմտաբար գործ դրած ջանքը կկորցնե յուր նշանակությունը դպրոցի ընդհանուր անկարգության մեջ։*

*Ծեծի զորությամբ ստիպել աշակերտին սովորել յուր դասերը, դա վարժապետի անհմտության գլխավոր նշաններից մեկն է, որովհետև դա ցույց է տալիս՝ թե որքան անընդունակ է վարժապետը ներշնչելու աշակերտի մեջ սեր, պատիվ և համակրու-*

*թյուն դեպի յուր անձը։ Աշակերտը, երբ որ պատվում է վարժապետին, սիրում է նրան, նա միշտ կպատրաստե յուր դասերը ուսուցչի գոհունակության առիթ չտալու համար։ Իսկ երբ վարժապետը գործ է դնում յուր ֆիզիկական կոպիտ ուժը, նշանակում է նա դեռ չէ գրավել աշակերտի ակնածությունը դեպի ինքը։*

*Ես մի մասնավոր նամակից ես իմացա գանգատներ ձեր մասին, և չեմ կարողացել հասկանալ, թե ինչպես է եղել, որ Մ. Մ-ցի նման ավանակին հաջողվել է գրավել հասարակության համակրությունը, իսկ ձեզ՝ ոչ։ Այդ իրողությունը, որպես անկեղծ բարեկամ, տանում եմ ձեզ, որ աններելի է ձեր կողմից։ Իհարկե, այս գյուղում մեծ դեր է խաղում ժողովրդի նախապաշարմունքը և նրա կոշտ ընտրողությունը, որ կարող չէ որոշել լավը վատից, այսուամենայնիվ, դուք պետք է գործ դնեիք բոլոր ձեր եռանդը պատերազմել ամեն արգելքների հետ և հառաջ տանել ձեր գործը, դա է քաջությունը։ Բայց ձեր նամակից երևում է՝ բոլորովին հուսահատված եք։*

*Ես ներկա ամսի վերջին, դուցե մի քանի օր հետո, ճանապարհ կընկնեմ դեպի Թավրիզ. եթե դուք նպատակ կունենայք այնտեղ մնալու, ես կարող եմ այնպես անօրինել, որ դուք մնայիք ձեր պաշտոնում, և հույս ունիմ, որ այնուհետև գյուղացի բարեկարգությունը ուրիշ կերպարանք կստանա, և այժմյան բարեկանյան խառնակությունը կանհետանա։ Որպես ինձ երևում է, գյուղացի անկարգությունը բոլորովին ուրիշ արմատից է ծագում. նախ և առաջ պետք է այնտեղ մաքրել։*

*Ձեր այստեղ գալը այնքան նպատակավոր չէ. բայց Թավրիզում մի քանի տարի վարժապետությամբ պարապվելը ապագա ունի, գործանով ինքներդ կպատրաստվեք, թողյալ այդ, փոքրիշատե նյութապես կապահովվեք ձեզ։ Թիֆլիսի մեջ մասնավոր դասերը խիստ անհաստատ արդյունքի աղբյուրներ են. ոչինչ բախտավոր վախճանի հասցնել կարող չեն. մենք տեսնում ենք այս գործով պարապվողների վիճակը, թշվառություն, ավելի ոչինչ։*

*Ավելորդ եմ համարում ամեն ինչ գրել այժմ, հույս ունեմ, որ հունիսի 15-ին կտեսնվենք Թավրիզում և կխոսենք ինչ որ հարկն է։*

*Ձեր բարին ցանկացող՝*

Հ. Մելիք-Հակոբյան

## 17. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

21 հուլիսի, 1875, Սալմաստ

*Պարոն Հ. Կարապետյան.*
*սիրելի բարեկամ,*

*Ձեր նամակը դեղորայքի հետ ստացա, շնորհակալ եմ ձեր հոգատարության համար: Ձեր պաշտոնի մեջ մնալու և պայմանի նորոգվելու մասին ես աներկմիտ էի, ուրախ եմ, որ նույնը կատարվեցավ առանց տարաձայնության:*

*Պարոն Սարուց կստանաք իմ սնդուկի բանալին, նրանով բաց կանեք սնդուկը, որ թողած եմ պ. Ցեներջյանի տանը, այնտեղ թղթերի երեսին դրած կգտնեք մի փոքրիկ դաֆթար, որի մեջ գրված է «Փունջ» գրքի վաճառումը, զանազան քաղաքներ ուղարկվելը, այն դաֆթարի մեջ պետք է մնացած լինի կաթողիկոսի նամակը: Եթե գտնեք, տվեք ղասիդը բերե, իսկ բանալին հանձնեցեք պ. Ցեներջյանին:*

*Սրբ. առաջնորդն արդեն 5 օր է, որ Սալմաստ եկած է, բայց տակավին տեսած չեմ, այսօր գնալու եմ տեսության, նա բնակվում է Հաֆթվան կոչված գյուղումը, որը մեր գյուղից մեկ մղոն հեռավորություն ունի:*

*Դուք գրած էիք մի քանի գոլինների վայրիվերո խոսակցության մասին. եղբայր, շատերի սրտին ծանր քար եղավ մեր (իմ և քո) Դավրեժի դպրոցում մնալը. թող խոսեն որքան պետք է իրանց, «պտուղը ցույց կտա գործի արդարությունը»:*

*Իմ հիվանդությունը այժմ փոքր-ինչ լավ է, բայց շատ վախենում եմ դեպի Դավրեժ վերադառնալու ժամանակ կրկին չնորոգվի. որովհետև այստեղ գալու միջոցին շատ վնասվեցա... Եթե բժիշկը հարկավոր կհամարե* բալզամ կապիի *կոչված դեղը ընդունելը, ուղարկեցեք մի փոքր: Ներկա ամսույս վերջին ճանապարհ եմ ընկնելու դեպի Դավրեժ, միայն շատ երկյուղ եմ կրում հիվանդությանս սաստկանալու մասին: Հաղորդեցեք ինձ այդ մասին ձեր բարի խորհուրդը:*

*Ես խիստ տխուր եմ անցուցանում այստեղ, շատ փոշմանեցա, որ մի քանի օր ես չսպասեցի, մինչև դուք Ձեր քննությունները վերջացնեիք, ձեզ վեր առնեի ինձ հետ:*

*Մուշեղյանցը մնալո՞ւ է, թե գնաց. այդ մասին ինձ իմացում արեք։*

Ձեր՝ Հ. Մելիք-Հակոբյանց

## 18. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Սալմաստ, 1875, 28 հուլիսի

*Պարոն Համբարձում Կարապետյան.*

*սիրելի բարեկամ,*

*Ձեր նամակը ստացա. հույս ունիմ օգոստոսի 3-ի հանդեսի ժամանակ Դավրեժում գտնվել, որովհետև ամսույս 30-ին այստեղից պետք է ճանապարհ ընկնիմ։ Իմ այստեղ ուշանալու գլխավոր պատճառն սրբազանն էր. որովհետև մի քանի գործերում նա կարոտ էր իմ օգնությանը, ցանկանում էր յուր մոտ լինեմ։*

*Ձեր պայմանի համար մի շտապեցեք, եթե տակավին կապած չեք. ես կգամ, որպես կարգն է, այնպես կտնօրինենք։*

*Իմ առողջությունս լավ է, եթե ճանապարհին չվրդովվի, բոլորովին հոգ չունեմ։*

*Ես ինքս հասկանում եմ, թե դպրոցի համար նոր պրոգրամա պետք է կազմել, նոր կարգադրություններ անել, և այդ մասին շտապում եմ մի քանի օրով առաջ գտնվել Դավրեժում։ Հուսով եմ, ամեն ինչ կերթա յուր կարգով։*

*Սրբազանի հետ Ձեր անձնավորության վերա շատ խոսակցություններ եղան, կլսեք ինձանից, երբ աստուծով այդտեղ կհասնեմ։*

*Իրանի աշխարհագրության մասին առանձին հրահանգներ չկան, որտեղից կարելի լիներ լիակատար նյութեր քաղել, բայց ես բավականին ծանոթ եմ Իրանին. մնացյալ տեղեկությունները կարելի է հավաքել այնտեղում։ Այդ հանգամանքների համար այժմ խոսել ավելորդ էր. մենք այնտեղում մեր տանը մասնաժողով կունենանք և մեր մեջ կկարգադրենք, թե որպես հարկավոր է գործել։*

*Նամակիս պատասխանը մի՛ գրեցեք, պատճառ, չի հասնի։*

*Ձեր բարի ցանկացող՝*

Հ. Մելիք-Հակոբյանց

## 19. ԱՐԱՄՅԱՆ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆԸ

Դավրեժի Արամյան դպրոցի ազգային հոգաբարձության
Հակոբ Մելիք-Հակոբյանից
խոնարհաբար խնդիր

*Որպես լուր հասավ ինձ, պարոն Հակոբ Ղազարյան նուհավերդյանց յուր ստանալյաց ցուցակին մեջ, որ ներկայացուցած է քաղաքիս Նախբուլվուլարային, նշանակել է և ինձ յուր պարտականների շարքում, որպես թե 200 թուման ստանալիք ունի ինձանից։ Այդ մասին ես ստիպված եմ անդադար դուռը գնալ և բառ պահանջին բացատրություններ տալ։ Բայց որովհետև այդ գործը ինձանից բավական ժամանակ կխլեր, և ես իմ պաշտոնով կապված եմ դպրոցի հետ, այդ պատճառով, որպես ստորագրյալ վստահանում եմ խնդրել հոգաբարձությանը, որ մի ժողով կազմելով, պարոն Հակոբ Ղազարյանին կանչել տա և քննե նորա հետ իմ ունեցած հաշիվները։ Ըստ որում, ես ոչ միայն պարոն Ղազարյանին պարտական չեմ, այլ ինքս ունեմ նորանից բավականին պահանջելիք, որը կերևա հաշիվներից և առանձին գրավոր ապացույցներից, որոնք կներկայացնեմ Ձեր ժողովին։*

Հակոբ Մ. Մելիք-Հակոբյան

*ի 4 դեկտեմ. 1875 ամի*
*Թավրեզ*

## 20. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

10 հունվարի, 1876 թ., Թավրիզ

*Մեծապատիվ*
*պարոն Հ. Առաքելյան,*

*Ես հետաձգեցի Ձեր նամակի պատասխանը, պատճառն այն էր, որ չգիտեի ինչ միջոցով հասնել Ձեզ, որովհետև ուրիշի ձեռքը չանցնի, մանավանդ այդ մասին նախազգուշություն էիք արած։*

*Ձեր դեպի ինձ ունեցած համակրությունը, որն այնպես անկեղծաբար արտահայտվում է Ձեր նամակից, խիստ քաջալերական է։ Արդարև, եթե որևիցե համազգացություն կարող էի գտնել ես իմ այժմյան ընտրած ասպարեզում, այդ հուսալի է այն սրտերից միայն, որոնք կենդանի և թարմ են, որոնք խավարած չեն սև նախապաշարմունքներից։ Ուրախ եմ, որ մի այդպիսի սիրտ գտնում եմ Ձեր մեջ։*

*Հայրենիքում ընտրած Ձեր նոր ասպարեզը գովելի է։ Բաժանորդ լինել Հայր Խորենի գործունեությանը և աշխատակցել նորա «Հայկական աշխարհին» ես գտնում եմ Ձեր կողմից որպես մի ազնիվ ցանկություն. գործով Դուք մասամբ օգնած կլինեիք այդ եռանդոտ աշխատողի գործին, որն որքան հոգատար և անձնանվեր է դեպի հասարակաց բարին, այնքան հալածված և ճնշված է...*

*Բայց ցավում եմ, որ համաձայն Ձեր առաջարկության չէի կարող նույնը անել և ես, որովհետև ես ոչ միայն խոստացած եմ պ. Արծրունուն, քանի ապրում է «Մշակը» աշխատակից լինել նորա հրատարակությանը, այլ պարտավոր ևս եմ, ըստ որում այս լրագրի սկզբնավորության հիմքը դնողներից մեկն էլ ես եմ, այս պատճառով բարոյական պարտավորություն ունեմ հոգ տանել*

նորա գոյությունը պահպանելու և օրըստօրե զարգանալու մասին։ Իսկ վարձատրության համար, որ առաջարկած էիք Ձեր վերջին նամակում, ավելորդ է պատասխանել, որովհետև իմ հրաժարվելը շահասիրության հետ ոչինչ կապ չունի, և ես նյութական հաշիվներ ի նկատի չունեմ։

«Մշակի» № 38 Ատրպատականի հայոց վիճակագրական տեղեկությունների մասին, որպես գրում եք, կասկած է ծնվել Ձեր մեջ, մի գուցե նորա քաղված լինելին Գրիգորիս եպիսկոպոսի Ձեր անունով գրված, բայց դիպվածով իմ ձեռն ընկած նամակից... Այդ մասին Ձեր կասկածանքը անտեղի էր, քանի դուք կարդացած պետք է լինեիք, որ նույն հոդվածում առանձին ծանոթությամբ ես հայտնած եմ վիճակագրական թվանշանների ինչ աղբյուրից քաղելը։ Իսկ ինչ որ վերաբերում է մյուս տեղեկություններին, բավական էր մտածել, որ ես Պարսկաստանումն եմ ապրում։

Այժմ դառնանք դեպի մեր ներքին գործերը. քաղաքիս ազգային դպրոցը այնքան նախանձելի դրության մեջ չի գտնվում, որքան փափագելի էր։ Եթե չկամենայինք ուրիշների նման խիստ մասնավոր և աննշան երևույթներով հրապուրվել, պետք է պարզ խոստովանվել, թե դեռ երկար ժամանակ պետք է, մինչև նա մի բարեկարգ վիճակի վերածվի, իսկ նորա ներկա դրությունը տանում է դեպի օրըստօրեական անկումն։ Պատճառը մի քանի հակառակ տարրերի միմյանց հետ անմիաբանությունն է, որը հայոց կյանքի մեջ դժբախտաբար նոր բան չէ...

Մեր այս քաղաքը եկած օրից ջանք գործադրեցինք դոյաննորան համոզելով, որ մի օրինակելի դպրոցի հիմքը դրվի, համարյա մեծ մասամբ հաջողվեցավ, իսկ երբ գործը յուր վախճանին մոտենալու վերա էր, անձնական կրքերը մեջ մտան, և հաստաբակաց գործը երեսի վերա մնաց։ Ես չեմ ուզում մատնացույց անել խռովարարները, որովհետև դուք բավականին ճանաչում եք տեղվույս ժողովուրդը... բայց մեր խոսքերը հուսահատական ձայներ չեն. մենք դարձյալ կաշխատենք, դարձյալ կգործենք, եթե չ' հաջողվի, գոնյա մեր խիղճը հանգիստ կլինի, թե ինչ որ պետք էր անելու, արեցինք։

Ընթերցարանի գործը վատ չէ գնում, որովհետև այնտեղ գործում է ժողովրդի ավելի թարմ մասը, նորա, արդարև, փոքրաթիվ երիտասարդությունը, թեև նա, իր զարգացման աստիճանին նա-

*չեմ, դեռ շատ ինչ սովորելու կարոտություն ունի։ Դոցա գլխավոր թերությունը ինքնահավանությունը և յուրյանց գիտցածից բավականությունն է, որ խիստ վատ նշան է անգործունեության։*

*Ընդունեցեք մեր բարեկամության խորին հավաստիքը, որով մնամ*

*Ձեզ միշտ հարգող՝*

Հ. Մելիք-Հակոբյան.

## 21. ԱՐԱՄՅԱՆ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆԸ

19 մարտի 1876 ամի

Դավրիժո Ազգային դպրոցի հոգաբարձությանը

*Հ. Մելիք-Հակոբյանից*

*խոնարհաբար պատասխան*

*Ստացա 8 մարտի ներկա ամի հոգաբարձության կողմից ինձ ուղղած ազդարարությունը, որով հոգաբարձությունը բարեհաճել է ընդունել ինձ և առաջիկա 1877 թվականի համար ուսուցիչ յուր հսկողությանը հանձնված դպրոցում, ու ցանկանում է հոգաբարձությունը կանխապես գիտենալ իմ հաճությունը, թե ես կամենի շարունակել իմ պաշտոնը նույն դաշինքով, թե ոչ։*

*Անկարող լինելով այժմ իմ վերջին և վճռական պատասխանը տալ, ես թողում եմ պատասխանել առաջիկա Զատկից հետո։ Իսկ եթե հոգաբարձությունը համբերել կարող չէ մինչև այն ժամանակ, նա ազատ է յուր ընտրողությանց մեջ յուր պարտուպատշաճ տնօրինությունները անելու։*

## 22. ՓԻԼԻՊՈՍ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

20 մարտի, 1876, Դավրեժ

*Մեծապատիվ*

*Պարոն Փ. Վարդանյան,*

*Ստացա Ձեր նամակը, որով հայտնում եք, թե Ձեր խմբագրությամբ հրատարակվելու է Պետերբուրգում մի ամսագիր «Լումա» անունով, և հրավիրում եք ինձ ես աշխատակից լինել Ձեր ամսագրին։ Ձեր առաջարկությունը ընդունում եմ ամենայն սիրով, որովհետև Ռուսաստանում մի օրինավոր ամսագրի հրատարակու-*

*թյունն խիստ վաղուց իմ բաղձանքների առարկան է եղել։ Ես այժմ շատ ուրախ եմ, որ նույնը կատարվելու է, և այնպիսի անձանց գործակցությամբ, որոնց անունները երաշխավորում են գործի լիակատար օգտավետությունը։*

*Իմ աշխատակցությունը կլինի կանոնավոր և հարատև. ես ունիմ արդեն բավականին պատրաստի պաշար, որ կնվիրեմ «Լումայի» հրատարակությանը։ Չգիտեմ, «Լուման» որպիսի գիրք և բովանդակություն կունենա, հավանական է, որ նա կլինի ավելի մեծադիր և բազմաթերթյա և ո՛չ որպես մինչև այսօր եղածները։ Որպես և լինի, ես խոստանում եմ յուրաքանչյուր ամսի 20-ից մինչև 30—50 երես բաղկացնող գրվածքներ ուղարկել Ձեզ։ Ես արդեն ավել եմ պատրաստել մի ամբողջ վիպասանական աշխատություն, որ կարող է մի քանի ամիսների նյութ տալ։*

*Իսկ ինչ որ վերաբերում է իմ աշխատությանց վարձատրությանը, ես ավելորդ եմ համարում այժմեն Ձեզ հետ սակարկություն անել, այդ թողնում եմ, մինչև Դուք կստանայիք և կծանոթանայիք իմ՝ Ձեզ ուղարկած նյութերի հետ։*

*Անհամբերությամբ սպասում եմ «Լումայի» պրոգրամին ստանալուն, իսկ այնքանը, որ Դուք Ձեր նամակով հայտնած էիք Ձեր ամսագրի ուղղության և նորա նպատակի մասին, բավականին գոհացուցիչ է. ցանկալի էր, որ «Լուման» լիներ հայկական շահերը պաշտպանող, նորա օգտին ծառայող, ազնիվ հայի սրտից բխած մի նվեր մեր գրականության չքավոր գանձանակին, որի համար կմնամ Ձեզ միշտ հարգող*

Հ. Մելիք-Հակոբյանց

## 23. ՓԻԼԻՊՈՍ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

**19 հունիսի, 1876 ամի, Դավրեժ քաղաք**

*Մեծապատիվ պարոն,*

*Ձեր ապրիլի 3-ի, որպես և մայիսի 23-ի նամակները ստացած եմ, բայց պատասխանը ուշացնելս իմ կողմից մի ուրիշ պատճառ չունի, բացի ծուլությունից։ Իմ հոժարությունն «Լումային» աշխատակցելու վերաբերությամբ նույնն է, որպես առաջին նամակովս հայտնած եմ։ Ես եթե մինչև այսօր հետաձգեցի որևիցե գրավոր բան ուղարկել Ձեզ, պատճառն այն էր, որ չհաճեցա բա-*

վականական փոքրիկ հոդվածներով, այլ ցանկացա մի այնպիսի աշխատություն ուղարկել «Լումային», որ մի քանի ամիսների պաշար կարողանա լինել: Այս մտքով ես ուզեցի արտագրել երկու հատորներից բաղկացած մի պատրաստի գործ, որ կոչվում է «Խաչագողի հիշատակարան»: Բայց գրքի դանդաղկոտությունն հետաձգեց ուղարկելը:

Բայց մինչև «Խաչագողի»[1] Ձեր ձեռք հասնելը հարկավոր եմ համարում նրա պարունակությունը համառոտ կերպով հայտնել. Այս աշխատությունը յուր ամբողջությամբ նվիրված է հայոց մշակ դասին և պատկերացնում է, թե որպիսի տեղային և հասարակական հանգամանքներ ստիպում են նրանց թողնել հայրենիքը և պանդխտության մեջ բախտ որոնել: Նյութը առնված է Պարսկաստանի և ասիական Տաճկաստանի հայերի կյանքից՝ թե որպես նրանք օտար երկրներում, պանդխտության մեջ մաշվում են, անհետանում են, առանց կրկին յուրյանց ընտանիքը վերադառնալու բախտ ունենալու:

Հիշյալ աշխատության գլխավոր հերոսն է մի երևելի խաչագող, և որովհետև նա ամեն տեղ, ամեն երկիր անցնում է և յուր հիշատակարանի մեջ նկարագրում է ամեն տեղ տեսած հայ պանդուխտների թշվառ վիճակը: Մի խոսքով, «Խաչագողի» մեջ ընթերցողը կարող է տեսնել հայի կեցության պատկերը մահմեդական Ասիայում և նրանից դուրս, օտար երկրներում, որոնց մեջ նա թափառում է որպես համալ, մշակ կամ բախտախնդիր խաբեբա:

Այս աշխատությունը իմ մի քանի ճանապարհորդությունների և երկար ժամանակյա մտածությանց արդյունքն է. նա գրված է հիշատակարանի ձևով և խառն է զանազան ռոմանտիկան և վիպական անցքերով, որոնք բոլորը ներքին կապ ունին:

Առաջին հատորի արտագրված օրինակը արդեն պատրաստ է, երկրորդը շուտով կպատրաստվի, որովհետև քանի օրից հետո մեր գյուղացի արձակուրդը կսկսվի, այնուհետև ազատ ժամեր շատ կունենամ աշխատելու:

---

[1] «Խաչագողներ» կոչվում են այն հանրածանոթ մոլաշրջիկ հայերը, որոնք թափառում են աշխարհի մի ծայրից դեպի մյուսը և զարմանալի ճարպկություններով փող են որսում: Այս երևելի խաբեբաների հասարակությունը Պարսկաստանում կազմում է համարյա մի առանձին դաս:

Ձեր դժգոհությունը «Մշակի» հարձակման մասին դեռ լույս չտեսած «Լումայի» վերա՝ բոլորովին իրավացի է, բայց նորա հարձակումն ես չեմ վերաբերում պ. խմբագրի նախանձին կամ նորա անձնական կրքերին դեպի Ձեզ, որովհետև պ. Արծրունուց Ձեր մասին միշտ համակրական խոսքեր եմ լսել, եթե այժմ նա յուր կարծիքը փոխել է, այդ չգիտեմ։ Բայց կներել մի դեռ չծնված ամսագիր «կղերական» անունով, դա հառաջ է եկել պ. Արծրունու այն ջղային-զառանցական րոպեից, որ շատ անգամ նորա հետ հանդիպում է և յուր թերթի մեջ մեծամեծ սխալներ է գործել տալիս...

Բայց Ձեզ թո՛ղ չվհատեցնեն այսպիսի խայթերն, եթե գործելու եռանդ ունիք, որովհետև ազնիվ նպատակը և տոկուն աշխատությունը, թեև ուշ, վերջապես կպսակվին արդյունավոր արգասիքով։

Ձեր գործունեությունը անկեղծ սրտով համակրող

Հ. Մելիք-Հակոբյան

## 24. ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

6 նոյեմ., 1876 ամի, Դավրեժ

*Մեծ. պ. Փ. Վարդանյան։*

*Հոկտեմ. 29-ին Ձեր հասցեով ուղարկած եմ «Խաչագողի» առաջին մասը, բաղկացած 475 երեսներից, բայց տակավին մի քանի գլուխներ պակաս են մնացած, մինչև առաջին մասը լրանա. գրագիրս հասցնել չկարողացավ, և ես էլ տեսնելով, որ մոտենում է հունվարը, շտապեցի ուղարկել, որքան պատրաստ էր։ Մնացած մի քանի գլուխները Դուք կստանաք նոր տարուց առաջ։*

*Բայց այնքանը, որ ուղարկել եմ, ունի յուր մեջ ամբողջություն և Դուք կարդալով, կարող կլինիք ծանոթանալ այս աշխատության նպատակի և նորա ո՛ր աստիճան հասարակական նշանակություն ունենալու հետ։*

*«Խաչագողը» իմ՝ Վանա, Բաղեշի, Մուշի և Արզրումի կողմերի ճանապարհորդության արդյունքն է, որ գրել եմ 1872—73 և 74 թվականներում, երբ Թիֆլիզումն էի բնակվում, ուր տեղային լրագրության և երիտասարդության մեջ դեռ նոր էր սկսել արծարծվիլ Տաճկաստանի հայոց խնդիրը։ Իսկ գործերի այժմյան դրությունը, երբ արևելյան հարցը նորից բորբոք ստացավ, խրա-*

խույս տվեց ինձ ի լույս ածել քանի տարի առաջ գրած աշխատությունս, որ տաճկահայոց այժմյան պահանջներին, որպես սիտի տեսնեք, համապատասխանում է, և կարող է լույս ձգել այն մթին խնդիրների վերա, որ շատերի երևակայության առարկա են դարձել։

Թե ո՛րքան ինձ հաջողվել է, այդ ընթերցողներին եմ թողնում դատել. բայց իմ կարծիքով, «Խաչագողի» մեջ, եթե ոչ բոլորովին, գոնյա մեծ մասամբ լուծվել է Տաճկաստանի և Պարսկաստանի հայոց խնդիրը։ Նրանց կյանքի տխուր նկարագրությունների մեջ ընթերցողը կտեսնի, թե ո՛ր աստիճան ցնորական է այն անձանց մտածությունները, որ դեռ չճանաչած մի երկիր և մի ժողովուրդ, նրա համար օդեղեն ամրոցներ են կառուցանում...

«Խաչագողի» առաջին մասի անցքերը կատարվում են Հայաստանում, այսինքն՝ Վասպուրականի, Տարոնի և Ատրպատականի մեջ, իսկ կենտրոնը Վան քաղաքն է։ Այս մասի մեջ նկարագրված է հայի ներքին կյանքը հայրենի հողի վերա։ Բայց երկրորդ մասի անցքերն կատարվում են Հայաստանից դուրս՝ Փոքր Ասիայում, Ռուսաստանում, Հնդկաստանում, իսկ կենտրոնն է Կ. Պոլիսը։ Այս մասի մեջ նկարագրված է հայի գաղթական կյանքը պանդխտության մեջ։

Երկրորդ մասը յուր բովանդակությամբ ավելի հետաքրքրական է. նրա մեջ այլ և այլ երկրների բազմազանության հետ հայի կյանքը միշտ նոր ձև և նոր կերպարանք է ստանում։ Բայց գործի վիպական թելը ոչ մի տեղում չէ կտրվում, բոլոր անցքերը շարժվում են և պտույտվում են նրա բոլորտիքը։ Երկրորդ մասն յուր ծավալով առաջինի չափ է և գրված ու պատրաստ է, միայն արտագրության կարոտություն ունի։

Խոստովանում եմ, որ մի այսպիսի մեծ աշխատությունը ավելի կատարելագործելու համար, ես կարոտ էի ճանապարհորդությունների, և ավելի ընդարձակ ճանապարհորդությունների, բայց դա հազիվ կարող էր հնարավոր լինել մի գրողի, որ ստիպված է օրեկան հացի համար մտածել...

Ես այժմ ես մեծ փափագ ունիմ նորից ճանապարհորդել ասիական Տաճկաստանում և գոնյա վեց ամիս Կ. Պոլսում մնալ, լավ հետազոտելու համար տեղային ժողովրդների և մանավանդ

հայերի կյանքը և վճռել եմ, եթե մի կողմից օգնություն չգտնեմ, դերվիշի պես կդառնամ և այնպես ման կգամ...

Կ. Պոլսի հայ երիտասարդությունն անտարբեր է դեպի Տաճկաստանի հայոց ներքին կյանքը և դեպի նրա պահանջները: Կ. Պոլսի հայ երիտասարդը այնքան անգիտություն ունի Փոքր Ասիայի մասին, որքան Չինաստանի մասին, և չի էլ հետաքրքրվում, թե ինչպես են ապրում այնտեղ հայերը:

Իմ կարծիքով, «Լուման» մի առանձին պարտավորություն պետք է հանձն առնի, որքան կարելի է խորին և բազմակողմանի կերպով հետազոտել տաճկահայոց կյանքը, ցույց տալ նրանց պետքերը և միևնույն ժամանակ զգացնել Կ. Պոլսի շաղակրատ «հռետորներին», թե ինչ բանի վրա պետք է մտածել և ինչ գործել:

«Մշակը» որքան էլ յուր թերություններն ունենար, որքան էլ ծայրահեղությունների դեմ լինի, և որքան էլ կրքեր խաղային նրա մեջ, դարձյալ նա ունի յուր արժանավորությունը այն կողմից, որ յուր գոյության սկսելու առաջին օրից միշտ զբաղվել է Տաճկաստանի հայերի հարցերով, միշտ գրգիռ է տվել նրանց թմրությանը: Դա ամեն հայ լրագրության և օրագրության պարտավորություններից գլխավորն պետք է լինի:

Ձեր վերջին նամակները բոլորը անկորուստ ստացել եմ: Օգոստոսի 2-ի նամակում հայտնում եք, թե կցանկանայիք ինձանից ստանալ և այնպիսի հոդվածներ, որպես «Փորձի» մեջ տպված «Պարսկաստանը»: Ես պատրաստ եմ ամեն կերպով ծառայել «Լումային», բայց մի բան, որ դժվարացնում է ինձ, դա է իմ չափից դուրս զբաղված լինելը: Դպրոցը շատ ժամանակ է խլում, որովհետև դասերը շարունակվում են և կեսօրից հետո, և ընթերցարանի տեսչությունը ինձ վրա լինելով, պետք է ստեպ հաճախել այնտեղ: Մնում է աշխատել գիշերներով, այն ևս շատ անգամ ազատ չեմ լինում, կամ աշակերտների շարադրություններն եմ ուղղում, կամ նրանց համար հայոց պատմությունից դասեր եմ գրում (որովհետև դասագրքեր չունին) և կամ այնքան հոգնած եմ լինում, որ ոչինչ չեմ կարողանում գրել:

Մանավանդ այս տարի հարց եղավ 5-րդ դասատուն բաց անել. դպրոցն այնքան միջոցներ չունի նոր վարժապետներ հրավիրելու, մենք մի քանի վարժապետներով ձրի հանձն առինք նրա դասատվությունը, այսպիսով ազատ ժամերս բոլորովին կորան:

*Եթե ես գիտենայի, որ «Լուման» ինձ այնքան կարող էր վարձատրել, որ ապրուստի կարոտություն չունենայի, այն ժամանակ ես դպրոցի մեջ դասերիս թիվը կպակասեցնեի և աշխատելու ավելի ժամանակ կգտնեի։ Մանավանդ արձակուրդներին կարող կլինեի փոքր ճանապարհորդություններ անել և նյութեր հավաքել։*

*Ինձ դեռ հայտնի չէ, թե ինչ ծավալ կունենա «Լուման». եթե նա կլինի «Հյուսիսափայլի» գրքով, այն ժամանակ «Խաչագողի» պես մի աշխատություն հազիվ թե նրա մեջ տպագրվելու հարմարություն կունենա։ Դա կլիներ նույնը, որպես «Սև լեռան մարդը» «Արևելյան Մամուլի» մեջ, որը հավատացած եմ, ոչ ոք չէ կարդում։*

*Ցանկալի էր, որ «Լուման» եթե ոչ «Փորձի» չափ, գոնյա նրա կես ծավալն ունենար, այն ժամանակ նպատակավոր կլիներ։ Թեև այսպես լինելուց հետո պետք էր բարձր գին նշանակել, բայց հոգ չէ, որովհետև մեր հասարակության մեջ մի որոշ թիվ ընթերցողներ կան, որոնք թանկ ու աժանությունը չեն նայում, այլ ստանում են մի հայոց հրատարակություն, որովհետև կարդալու պետք են զգում։ Իսկ նրանց, որ հեռու են այս կարևորությունից, եթե ձրի էլ տալու լինես, չեն կարդա, գուցե «խաթրի համար» կառնեն։*

*Ես այդ փորձով գիտեմ. «Մշակի» գինը, երբ որ 7 ռուբլի էր առաջին տարիներում, ուներ 600—650 բաժանորդ, բայց երբ որ 7 ռուբլուց 5 ռուբլու իջուցինք գինը այն հույսով, որ բաժանորդների թիվը կավելանա, դարձյալ նույնը մնաց։ Այնուհետև համոզված էինք, եթե 3 ռուբլու իջեցնեինք «Մշակի» գինը, դարձյալ նույն բաժանորդները կմնային։ Այդ նորանից է, որ կարդացողների թիվը պակաս է, և ոչ թե լրագրներն իրանց թանկության պատճառով անմատչելի են։ Ռուսաստանում, իմ կարծիքով, մի օրինավոր ամսագիր կարող է մոտ 1000 բաժանորդ ունենալ, միայն առաջին տարում պետք է տարածելի լավ գործակալների ձեռքով։ Ամսագիրն ավելի շատ կտարածվի, քան թե լրագիրը, որովհետև* բանասիրական *մասը ամսագրի ավելի հարուստ է, ու մեր ժողովուրդը սիրում է այդ կարդալ և յուր որդիներին, թոռներին թողնել կարդալու։*

*Ինձ բոլորովին զարմացնում է պ. Պալասանյանի առաջարկությունը «Լումայի» և «Փորձի» միացնելու մասին։ Ես էլ մի այսպիսի բան իմացած էի։ Այս նպատակը, իմ կարծիքով, հասաց*

*նկած պիտի լինի երկու շարժառիթներից. առաջին, դուցե մտածել են, թե երկու ամսագիրներ շատ են Ռուսաստանի համար և չեն կարող այնքան բաժանորդներ գտնել, որ իրանց գոյությունը պահպանել կարողանան, երկրորդ՝ մտածել են, թե մեզանում այնքան գրողներ չկան, որ կարողանան երկուսին ևս նյութեր հասցնել։ Բայց իմ կարծիքով, թե՛ առաջին և թե՛ երկրորդ կարծիքը անհիմն են։ Նախ, «Լուման» և «Փորձը» մինը մյուսին վնասել չեն կարող, որովհետև տարբեր նշանակություններ ունին. իսկ ինչ որ վերաբերում է գրողներին, ես այսքանը կասեմ, որ մի օրինավոր ամսագիր ինքն կարող է տաղանդներ հայտուցանել և հանգած հանճարներին բորբոք տալ։ Որպես «Հյուսիսափայլի» հետ հայտնվեցան շատ գրողներ, որոնք առաջ կարծես չկային։ Նույնպես «Մեղուն» և «Մշակը» ստեղծեցին շատ գրողներ։*

*Ես առայժմ Ձեզ ուղարկած «Խաչագողի» առաջին մասի վարձատրության համար այսքանը հարկավոր եմ համարում ծանուցանել Ձեզ. եթե իմ աշխատությունը ընդունելություն կգտնի «Լումայի» մեջ տպվելու, այն ժամանակ Դուք որպես գրավական կանխիկ պետք է ուղարկեք ինձ 500 ռուբլի արծաթ։ Ես ստիպված կլինիմ այնուհետև դպրոցի մեջ սակավացնել դասերիս թիվը, որպեսզի կարողանամ հարատև և անընդհատ կերպով աշխատակցել «Լումային»։ Այնուհետև, երբ մի մասը կտպվի, հայտնի կլինի, թե քանի թերթերից է բաղկանում Ձեզ ուղարկած նյութը, և նրա համեմատ մնացյալ փողը կվճարեք, յուրաքանչյուր թերթն (16 երես) 25 ռ. արծաթ հաշվելով։ Թեև իմ ստացած վարձը մասամբ միայն կարող է լրացնել այն ծախսը, որ ես արել եմ ճանապարհորդության մեջ հիշյալ աշխատության նյութերը հավաքելու համար, բայց փույթ չէ, ես ի նկատի ունիմ «Լումայի» ապագա հառաջադիմությունը։*

*Եթե հիշյալ պայմանները ընդունելի կլինին Ձեր կողմից, իմ նշանակած գումարը (500 ռուբ.) կուղարկեք Թիֆլիս պարոն Աղեքսանդր Մելիք-Ազարյանցի անունով, նա կհասցնե ինձ։ Իսկ եթե ոչ, գիրքը կդարձնեք Թիֆլիս նույն պարոնի անունով։*

*Ձեզ միշտ անձնանվեր՝*

Հ. Մելիք-Հակոբյան

Հ. Գ. Ուրախությամբ կարդացի Ձեր նամակում, թե մեծ. Սանասարյանցը բարեհաճել է զանազան իրեղեններ ուղարկել Դավրեժի ազգային դպրոցին։ Ցանկալի էր, որ սույն իրեղենները լինեին այնպիսի բաներ, որոնց դպրոցը շատ կարոտություն ունի, օրինակ. զանազան պատկերներ սրբազան պատմությունից առած, պատկերներ կենդանաբանության, տնկաբանության վերաբերյալ և զանազան տեսարաններ ներկայացնող պատկերներ։ Որովհետև մեր աշակերտները բոլորովին փակ ընտանիքի շրջաններում ապրած լինելով, համարյա ոչինչ առարկայի վրա գաղափար չունին։ Նաև շատ հարկավոր է աղքատ աշակերտներին բաժանելու համար հետևյալները. գրելու թուղթ, մատիտներ, զմելիներ, գրիչներ իրանց կոթերով, գեղեցիկ կազմած փոքրիկ գրքեր ֆրանսերեն կամ հայերեն լեզվով՝ պարգևաբաշխության համար, պաղամարներ և մի քանի կտոր սպունգ գրատախտակները սրբելու համար, այստեղ ամենևին չէ գտնվում։

Ուրիշ թանկագին ուսումնական առարկաներ, որպիսին են՝ ֆիզիկայի և քիմիայի վերաբերյալ գործիքներ, դեռ պետք չեն, որովհետև այս առարկաները չեն ավանդվում։ Քարտեզներ և երկրագունդ ունինք, միայն փոքրիկ ատլասներ պետք են աշակերտներին բաժանելու համար, կամ ֆրանսերեն կամ ռուսերեն լեզվով, մեկ տարրական ուսումնարանի ուրիշ պիտույքները ձեզ ավելի հայտնի են։

Բայց եթե մեծ. Սանասարյանցը ուղարկեր մի փոքրիշատե նշանավոր գումար փող, այն ժամանակ պարսից թագաժառանգը, որ քաղաքումս է բնակվում, իմացում կտար շահին նորա բարեգործությունը Պարսկաստանի մի ուսումնարանի վերաբերությամբ և փոխարենը մեծ. Սանասարյանցը կստանար մի փառավոր շքանշան հանդերձ արքունական ֆիրմանով։ Այս խոսքերը ես կատակի համար չեմ գրում, այլ մեր դպրոցի հոգաբարձուների ասածն եմ կրկնում ձեզ, և անիրագործելի չէ։

Աբգարի աշխատությամբ մի քանի ամիս առաջ Թիֆլիսից հավաքվել էր 1000 ռուբլի մեր դպրոցի համար, որ արդեն ստացված է։

Հ. Մ.

## 25. ԱԿԱՊ ԱԼԹԱՆԴԻԼՅԱՆԻՆ

3 նոյեմբեր, 1877, Ագուլիս

*Ազնիվ բարեկամ*
*Պարոն Ա. Ալթանդիլյան,*

*Ներողություն եմ խնդրում այսպես անագան Ձեզ նամակ գրելու համար, որի պատճառը իմ ծուլության մեջ պետք է որոնել։ Եթե ո՛չ, ես միշտ եղել եմ բարեկամներիս հետ մտերիմ, և մանավանդ Դուք բոլորովին արդարացրել եք իմ վստահությունը։*

*Գիտեմ, Ձեզ ցանկալի կլինի լսել իմ Պարսկաստանից դարձալեն հետո վարած թափառական կյանքը, ուրեմն գրեմ։— Դեռ Թիֆլիս չհասած բարեկամներիս հայտնի էին այս բոլոր անիրավ անցքերը, որ անցան ինձ հետ Թավրիզում. ամենը համարում էին ինձ կորած... այս պատճառով իմ անակնկալ հայտնվիլը Թիֆլիսում բոլորին զարմացք պատճառեց։ Բոլորն նայում էին ինձ վերա, որպես մի Ղազարոսի վերա, որ նոր էր վերադարձել գերեզմանից...*

*Թիֆլիսում ես մնացի մի ամբողջ ամիս, այս մի ամիսը անցավ որպես մի քանի րոպե. ամեն տեղ սեր և համակրություն էի ստանում ծանոթներից։ «Փորձի» խմբագրության մեջ արդեն բացվել էր ինձ համար մի տեղ. որովհետև պարոն Աղայանցը գնացած լինելով Երևան, նրա պաշտոնը կատարող չկար. բացի դրանից, Ներսիսյան դպրոցում դասեր առաջարկեցին։ Բայց ես չկամեցա Թիֆլիսում մնալ, երբ Ագուլիսի հոգաբարձությունից հրավեր ստացա։ Ինձ վաղուց սիրելի էր հեռու մնալ քաղաքի աղմկալի կյանքից և գյուղական պարզ ու խաղաղ մի անկյունի մեջ ապրել։ Ագուլիսը իմ այս ցանկությանը համապատասխանում էր։ Այստեղ կարող եմ փոքր-ինչ շունչ քաշել և հանգստանալ անցյալ հոգնածությունից...*

*Երևակայեցե՛ք Ձեզ Սալմաստի Խոսրովան, Ագուլիսը մի այնպիսի տեղ է, միայն դորա լեռնային դիրքը բացառություն է կազմում, որ ավելի նպաստում է օդի բարեխառնությանը։ Բոլոր տները կորած են այգիների և պարտեզների մեջ. փողոցներով հոսում են սառն և մաքուր աղբյուրներ։ Ես կենում եմ Թոմա առաքելո հոյակապ վանքումը. երեք սենյակ ունեմ բոլոր պատրաստի պարագաներով հանդերձ. կացարանիս լուսամուտները երկու կողմից ես*

նայում են ծառազարդ պարտեզների վերա։ Վանքի գավիթումն է նաև տղայոց դպրոցը. այստեղ է կենում և վանահայրը՝ Հայր Սուքենյան վարդապետը, որն միանգամայն թե՛ փոխ-առաջնորդ է, թե՛ տեղվույս երկսեռ դպրոցների տեսուչն է, այլև դասեր ունի աշխարհագրությունից և ընդհանուր պատմությունից։

Հայր Սուքենյանը մի երիտասարդ կրոնավոր է, որ վարդապետական վեղարի ներքո պահպանել է ուսանողի և գիտնականի մաքուր բնավորությունը. շատ եռանդոտ և ազնիվ մարդ է։ Ես և նա թեև առանձին սենյակներում ենք ապրում, բայց մեր խոհանոցը ընկերովի է, միասին ենք ճաշում և ընթրիք անում։

Ես ընդունել եմ տղայոց և օրիորդաց դպրոցների բարձր դասարանից Հայոց լեզվի և Հայոց պատմության դասերը. շաբաթական 24 դաս ունեմ։ Դասերը սկսվում են առավոտյան 8 ժամին և շարունակվում են մինչև կես օրից անցած երկու ժամը. այնուհետև ամեն ուսուցիչ ազատ է, թեև աշակերտներն և աշակերտուհիք դարձյալ հավաքվում են, բայց առանձին վերակացուների հսկողության ներքո սերտողությամբ են պարապվում։

Եվ այսպես, ես ամեն օր կեսօրից հետո ազատ ժամեր ունիմ՝ իմ առանձին գրավոր աշխատություններով զբաղվելու, որոց մեջ գտնում եմ իմ գլխավոր մխիթարությունը։ Թողյալ այդ, տեղվույս հասարակությունը բավականին համակրական է. չնայելով որ գյուղում են ապրում, բայց բոլորովին կրթյալ քաղաքացու կյանք են վարում. նրանց ընկերությունը ոչ սակավ զվարճություն է պատճառում ինձ։ Գլխավորն այն է, որ բավական խաղաղասեր և ազնիվ մարդիկ են։

Եթե չեմ սխալվում, Դուք այժմ ամուսին եք։ Ձեր նշանդրեքը չտեսա, Ձեր հարսանիքից նույնպես զուրկ մնացի. ինձ մնում է միայն բարեմաղթել Ձեզ բախտավորություն և խաղաղ ընտանեկան կյանք։

Չգիտեմ, Դուք այժմ ի՞նչ գործով եք զբաղված, և եթե տեղական դպրոցումն եք, նույնպես չգիտեմ, թե ովքե՞ր են Ձեր պաշտոնակիցներն. ցանկալի էր ինձ այդ մասին տեղեկություն ունենալ, և մանավանդ դպրոցի այժմյան դրությունը ինձ շատ հետաքրքրում է։ Աշխատեցեք, եղբայր, խնամք տանել դպրոցի բարվոր մանը, ոչ միայն իբրև վարժապետ, այլ որպես ազնիվ հայր, որ ճանաչում է, թե ինչ կարևորություն ունի ազգային դաստիարա-

կությանը: ԽԱՎԱՐԱՍԵՐՆԵՐԻ խուլիգաններն թող չվհատեցնեն Ձեզ. խավարասերն ամեն տեղ լուսո դեմ պատերազմում է, բայց ճշմարիտ ազգասերի եռանդը թուլացնել չէ կարողանում:

Չգիտեմ, ինչպես վերջացան ինձանից հետո տեղվույգ խռովությունները. մի քանի տեղեկություններ ինձ գրած էին, բայց լիակատար բավականություն չավեցին իմ հարցասիրությանը. Կցանկանայի, որ ԽԱՎԱՐԱՐՆԵՐԸ մինչև այժմ հանգստացած լինեին իրանց չար կրքերից, որ պատիվ չէ բերում Թավրիզի հասարակությանը. և մանավանդ կործանման անդունդ է բացում ամենի առջև...

Ես ներում եմ և աշխատում եմ մոռանալ այն բոլոր անիրավությունքը, որով վարվեցան ինձ հետ իմ թշնամիքը. և քրիստոնեական անհիշաչարությամբ ցանկանում եմ, որ աստված հեռու պահեր այդ ողորմելիներին իրանց մոլորությունից... Հույան միայն հավիտենական դատապարտությունը վարձ ստացավ իր գործի համար, այսպես են և բոլոր մատնիչները...

Ողջունեցեք իմ կողմից Բարգուլիմեոս հայր սուրբին և տեր Մեսրոպ հորը. մի մոռացեք և իմ խոնարհությունը հիշել աղա Երեմիային, աղա Ներսեսին և մեծապատիվ Սոլոմոն խանին:

Ձեր՝ Հ. Մելիք-Հակոբյան

Իմ հասցեն.

В Верхный Акулис, учителю
Акопу Мелик-Акопяиц.

## 1879

### 26. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիս, 10 դեկտեմբերի, 1879 ամի

*Մեծապատիվ*

*Պարոն Մելքոն Փանյանց,*

*Թող ներվի ինձ, որ առանց Ձեզ հետ ծանոթ լինելու, ես վստահացա ձանձրացնել Ձեզ իմ հանձնարարություններով։ Բայց Դուք հասարակաց բարեկամ եք, և մանավանդ այն անձերի, որոնք գործում են կրթության և գրականության ասպարեզում։ Այդ Դուք ապացուցեցիք Ձեր բարեկամությամբը հանգուցյալ Նազարյանցի հետ։*

*Ես Ձեր մասին շատ եմ լսել Ձեր հայրենակիցներից, որոնց հետ բախտ եմ ունեցել ծանոթանալու, և իմ քաղած տեղեկությունները երաշխավորում են, որ Դուք* «Մայծերի» *հրատարակության գործի մեջ կլինեք նույնքան բարի, որպես եղել եք ամեն մի ազգային և հասարակական գործերում։ Սեղմում եմ Ձեր բարեկամական ձեռքը։*

Հ. Մելիք-Հակոբյանց

### 27. ԳԵՎՈՐԳ ՎԵՀԱՊԵՏՅԱՆԻՆ

10 դեկտեմբերի, 1879 ամի, Թիֆլիս

*Սրբազան հայր,*

*Կյանքի տխուր հանգամանքները ինձ ձգեցին գրականական ասպարեզի վրա, և ես ինձ բախտավոր եմ զգում, որ կարող էի մի փոքրիկ օգուտ բերել ազգիս և այն հասարակությանը, որի մեջ ապրում եմ։ Ես խպառ թողեցի Պարսկաստանը և այժմ ընտանիքովս զետեղված եմ Թիֆլիսում։ Պարապվում եմ «Մշակ» լրագրի խմբագրատան մեջ, և եթե կհաջողվի, նպատակ ունիմ յուրաքան-*

չյուր տարի իմ հեղինակություններից տպագրել մի կամ երկու գիրք։

«Կայծերի» ստորագրության թերթը ես Ձեզ ուղարկեցի ոչ միայն դրդված մեր վաղեմի բարեկամական զգացմունքից, այլ այն համոզմունքից, որ Դուք միշտ հանդիսացել եք որպես կրթության և լուսավորության օժանդակիչ։ Հավատացած եմ, որ իմ հույսը չի խաբում ինձ։

Ձերդ սրբազնությանը միշտ անձնանվեր՝

Հ. Մելիք-Հակոբյան

## 28. ԱՎԱԳ ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆԻՆ

29 դեկտեմբերի, 1879 թ., Թիֆլիս

Սիրելի բարեկամ,

Պարոն Ա. Ավթանդիլյան,

Վաղուց է, որ առիթ չեմ ունեցել Ձեզ նամակ գրելու. Պարսկաստանի հետ հարաբերություններս կտրելով, ես անզգալի կերպով մոռացա բարեկամներիս։ Բայց պետք է մոռանալ տխուր անցյալը։ Ես կցանկանայի, որ Դուք շարունակեիք Ձեր թղթակցությունները ինձ հետ, որպես մեկը իմ հին բարեկամներից։ Ինձ հետաքրքրում է Ձեր այժմյան վիճակը. արդյոք ինչպե՞ս է ընթանում Ձեր ընտանեկան կյանքը. ունի՞ք զավակներ, և ինչպե՞ս են անցնում Ձեր օրերը։

Կյանքի ալիքների մեջ տատանվող իմ նավը այժմ, կարծես թե, հասել է իր նավահանգստին. երկար թափառելուն հետո, երկար անախորժություններ կրելուն հետո, վերջապես Թիֆլիսում դադար գտա։ Տացև ասված, որ մի նոր փոքրիկ չբարձրանար, որն ինձ գրեթե վիճակված է...

Այժմ ես իմ աշխարհի մեջն եմ գտնվում, որ վաղուց փափագելի էր. գրավոր աշխատանքը միշտ եղել է իմ կյանքի նպատակը, և գոհ եմ, որ այդ աշխատանքով կարողանում եմ մի կողմից իմ ապրուստը հայթայթել, մյուս կողմից՝ իմ մտքերը տարածել։ Օրեկան երկու ժամ պարապմունք ունիմ «Մշակի» խմբագրատան մեջ, այնուհետև ազատ եմ և զբաղվում եմ մասնավոր հեղինակություններով։ Դուք արդեն «Մշակի» մեջ կարդացած կլինեք, որ

առաջիկա տարվանից կսկսվի տպվել իմ մի վեպը «Կայծեր» անունով։ Այստեղ և գավառներում զանազան պարոններ ստորագրություն են հավաքում տպագրության համար։ Առաջին անգամն է, որ մեր հասարակությունը սկսում է համակրել և նպաստել գրականությանը։ Դա ուրախալի երևույթ է։

«Կայծերը» նույն աշխատությունն է, որի մի մասը Դուք հանձն առաք արտագրել, բայց վերջին ժամանակներում ես շատ փոփոխություններ արեցի։ Ցավում եմ, որ զանազան տխուր հանգամանքների պատճառով, Թավրիզից հեռանալու ժամանակ, ես մինչև չունեցա վարձատրելու Ձեր աշխատությունը։ Դուք կստանաք 20 օրինակ այդ գրքից, երբ դուրս կգա մամուլի տակից։ Բայց որքան հիշում եմ, նրա մի կտորը մնացած պետք է լինի Ձեզ մոտ, որովհետև թղթերիս մեջ չէ երևում։ Խնդրում եմ որևիցե եկվորի ձեռքով ուղարկել։ Դուք զգույշ մարդ եք, չեմ կարծում, որ կորցրած կամ ոչնչացրած լինեք։

Շարունակեցեք Ձեր թղթակցությունները «Մշակին», Ձեր նամակները հետաքրքիր են։ Խիզանյանը այստեղ տարածել էր, թե Թավրիզու նամակները ինքն էր գրում. այդ հսկայական ստի պարկը աշխատել էր պարծենալ դրանով. մենք, իհարկե, չհայտնեցինք թե ով է գրում։ Թավրիզից լավ ձայներ են լսվում, երևի մի շարժում կա, օրիորդաց դպրոց, թատրոն և այլն։ Բայց ես չեմ կարող երևակայել, թե ինչպես ներկայացումներ են տալիս այնպիսի անպատրաստ մարդիկ, որ իրանց կյանքում թատրոն չեն տեսել։

Խնդրեմ այս ծրարով Ձեզ ուղարկված նամակները հավատարիմ մարդու միջոցով հասցնել Վան քաղաքը։

Սեղմում եմ Ձեր ձեռքը՝ Հ. Մելիք-Հակոբյան

Իմ հասցեն.

Тифлис. Редакция «Мшак», А. Мелик-Акопяну

Հ. Գ. Եթե Թիֆլիս եկողներ շուտով չպատահին, խնդրեմ, հիշյալ տետրակը ուղարկել փոստայով, որի համար կստանաք 1 ռուբլու մարկա։

Հ. Մ.

# 1880

## 29. ԱՎԱԳ ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆԻՆ

12 փետրվարի, 1880 ամ., Թիֆլիս

*Սիրելի բարեկամ*
*Ա. Ավթանդիլով.*

*Իմ՝ Ձեզ մոտ թողած տետրակը Ձեր երկու նամակների հետ ստացել եմ։ Թավրիզի ընթերցարանի համար ոչ որ ստորագրված չէ, այդ պատճառով «Մշակը» չէ ուղարկվում։ Պ. Ալեքսիս Տեր-Օհանյանը մի անգամ ինձ ասաց, թե կգա և կգրվի, բայց չեկավ, դուցե մոռացած կլինի։ Ատրպատականի բոլոր քաղաքները, այնպես էլ Թավրիզ, «Մշակը» ուղարկվում է շաբաթը երկու անգամ անխափան. զարմանում եմ, թե ինչու ճշտությամբ չէ ստացվում։*

*Ուրախ եմ, որ տեղվույդ թատրոնական ներկայացումները հաջող են գնում. որպես նոր բան՝ թատրոնը այնտեղ շատերին կարող է հետաքրքրել, և այդ գործը կարելի է այն աստիճան ընդարձակել, որ վերջը, բացի բարեգործական նպատակների ծառայելուց, ապրուստի և շահի աղբյուր դառնա դերասանների համար։ Այդ պատճառով վատ չէր լինի, եթե բեմական ձիրք ունեցող երիտասարդներից մի քանի հոգի գային Թիֆլիս և մտնելով այստեղի թատրոնական խմբի մեջ, վարժվեին և կատարելագործեին իրանց տաղանդը։*

*Թավրիզի դպրոցի համար Կ. Պոլսից տեսուչ հրավիրելը ես բոլորովին ապարդյուն եմ համարում. պոլսեցիք, որքան ինձ հայտնի է, շատ փոքր տեղեկություն ունին նոր մանկավարժական գիտությունից. նրանց դպրոցները դեռ կառավարվում են հին սիստեմայով, և կարելի է ասել, որ ամբողջ Կ. Պոլսի մեջ մի բարեկարգ դպրոց չկա, ոչ թե բարձր, այլ միջին կամ տարրական դպրոց։ Վերջին պատերազմից հետո Թիֆլիս շատ են գալիս*

Կ. Պոլսից ուսում առած երիտասարդներ, որոնք զանազան ընկերությունների ներկայացուցիչներ են, և ամբողջ օրերով «Մշակի» խմբագրատանը վեր ընկած են լինում ու ես նրանցից շատ եմ հարցրել Կ. Պոլսի դպրոցների դրության և տեղային մանկավարժների մասին և իմ առած տեղեկությունները միշտ անմխիթար են եղել։ Պոլսեցոց ճայուճոյին մի նայեք, նրանք շատ ետ են մնացել կրթության գործի մեջ։

Թավրիզեցիք ավելի խելքություն արած կլինեին, եթե իրանց դպրոցները իրանց մարդիկներով կառավարեին։ Ռուսաստանից նույնպես դժվար է մի օրինավոր մարդ հրավիրելը, որովհետև մեծ ռոճիկ կպահանջեն, իսկ փոքր ռոճիկով եկողները նրանց նման կլինեն, որոնց արդեն տեսել եք։ Այդ բոլորից հետո անհնարին է Թավրիզի դպրոցները մի բարեկարգ վիճակի մեջ դնել, քանի որ նրանց նյութական վիճակը խիստ աննախանձելի է և օրինավոր կերպով վարձատրել չեն կարող վարժապետներին։

Հ. Մելիք-Հակոբյան

## 30. ՍՈՒՔԻԱՍ ՊԱՐԶՅԱՆԻՆ

15 ապրիլի, 1880 ամ., Տիֆլիս

Սրբազան հայր,

Շնորհակալությամբ ստացա բժիշկ Հարություն Ա. Դավթյանցի ձեռքով Ձեր ուղարկած 39 ռուբլին «Կայծերի» բաժանորդագրության համար։ Ես ուրախ եմ, որ տակավին ստորագրությունը շարունակելու նպատակ ունիք։

Պարոն Դավթյանցը հաղորդեց ինձ նաև Ձեր բերանացի հանձնարարությունը, որով խորհուրդ եք տալիս «Կայծերի» առաջին հատորը տպագրել, որ հասարակությունը տեսնի, հետաքրքրվի, և այսպիսով բաժանորդների թիվը կավելանա։ Ձեր խորհուրդը ճիշտ է նոր և անհայտ հեղինակների վերաբերությամբ։ Բայց ես այսքան տարվա աշխատություններովս, կարծեմ փոքրիշատե ցույց եմ տվել, թե մինչև ո՞ր աստիճան կարող եմ օգուտ բերել մեր հասարակությանը, իսկ եթե հասարակությունը դեռևս չէ ճանաչել իր աշխատավորին, կնշանակե նա բոլորովին կույր է և մտավորապես մեռած։ Այդ դեպքում իզուր է մեր աշխատանքը։

Հասարակությունը կարդում է այժմ «Խենթը», կարդաց «Ջալալեդդինը», կարդաց «Փունջը» և կարդացել է «Մշակի» մեջ տպագրված իմ բազմաթիվ վեպիկները. մի՞թե դրանք բավական չեն։

*Ճշմարիտը կասեմ Ձեզ, սրբազան հայր, որ մեծ բարոյական տանջանք է պատճառում ինձ այս եղանակով գիրք տպագրելը։ Մինչ ուրիշ ազգերի մեջ մի հեղինակ մի գիրք գրելով, իր ամբողջ կյանքը ապահովացնում է, մենք ստիպված ենք մուրացկանություն անել, դրան և նրան ձանձրացնել, փող հավաքել, որ գոնե մեր աշխատությունը լույս տեսնի, և ուրախ ենք լինում, որ նյութապես չենք վնասվում։*

*Ես «Փունջի» հրատարակության շարունակությունը թողեցի, որովհետև բավական վնասվեցա։ Իսկ եթե «Կայծերը» չշոշափեին մի քանի նշանավոր ժամանակակից խնդիրներ, ես երբեք չէի հանձն առնի այժմ տպագրել։ Բայց մտածեցի, որ մի քանի տարուց հետո այդ աշխատությունը չի ունենա այն ազդեցությունը, որ այժմ կարող է ունենալ։*

*Ես ուրիշ մխիթարություն չունեմ, և չեմ էլ սպասում, այսքանը բավական է, որ բարեկամների մի փոքր թիվ համակրում է իմ գործունեությանը։ Գուցե ապագան այլ կերպ կվարվի, բայց այն ժամանակ ուշ կլինի։*

*Ընդունեցեք իմ խորին հարգանքը՝*

**Հ. Մելիք-Հակոբյան**

## 31. ԱՎԱԳ ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆԻՆ

**18 ապր., 1880 թ., Թիֆլիս**

*Բարեկամ,*

*Ստացա Ձեր մարտի 30-ի նամակը։ Գանգատվում եք, թե Ձեր թղթակցությունները «Մշակի» մեջ չեն տպվել, և իբր ես եմ արգելք եղել, և այդ հայտնել են Ձեզ Թիֆլիսից անցնող պարսկաստանցիները, որոնց հետ ես տեսություն եմ ունեցել։ Մի այսպիսի կարծիք իմ վերաբերությամբ մինչև անգամ վիրավորական է։*

*Ես այստեղ պարսկաստանցիների հետ հարաբերություն չունեմ։ Այն օրից, որ տեղափոխվել եմ Թիֆլիս, ինձ հետ տեսնվել են երեք հոգի միայն՝ պ. Արիստակեսը, Թոմասը և Գորոյանը։ Ես չեմ կարծում, որ նրանք այն աստիճան անազնիվ մարդիկ լինեին, որ իմ բերանից սուտ հնարեին և Ձեզ ասեին։*

*Ներկա տարվա փետրվար ամսից միայն ես կառավարում եմ*

*«Մշակի»* ներքին տեսության *խմբագրի պաշտոնը և* արտաքին տեսության *նամակներին եմ նայում։ Իմ ժամանակում Ձեզանից ստացվել է մեկ նամակ միայն, այն էլ տպվել է։ Ուրիշ նամակներ ես չեմ ստացել։ Բայց ինձանից առաջ այս պաշտոնը կատարում էր մի ուրիշ պարոն, գուցե նրա ժամանակներում Ձեր նամակները անտիպ են մնացել. որովհետև նա առհասարակ վատ էր վարվում թղթակիցների հետ, ջնջումներ էր գործում, և այս պատճառով հրաժարվեցրին իր պաշտոնից։*

*«Մշակը» իրան նպատակ է դրել ընդհանուր ազգային օրգան լինել և պաշտպանել հայերի շահերը ինչ պետության մեջ և ապրելիս լինեն նրանք։ Այդ դիտավորությամբ, նա զբաղված է ոչ այնքան Ռուսաստանի հայերով, որքան Տաճկաստանի, Պարսկաստանի, Հնդկաստանի և այլ երկրների հայերով։ Այդ, կարծեմ, Դուք ինքներդ նկատած կլինեք «Մշակի» այսքան տարվա գործունեության ընթացքում։ Պարսկաստանից մենք այժմ համարյա թղթակիցներ չունենք։ Դուք եք միայն երբեմն փայլող աստղի նման երևում և շուտով անհայտանում։ Այսուամենայնիվ, Ձեր նամակները միշտ համակրությամբ են ընդունվել խմբագրատան կողմից։ Շատ անգամ Թավրիզից կամ Սալմաստից ստացվում են այնպիսի հիմար նամակներ, որ իսկույն պետք է զամբյուղը գցել. բայց ես դարձյալ վեր եմ առել, ինձանից բաներ եմ ավելացրել, գեղեցկացրել եմ և տպել տվել, որպեսզի իմ հայրենիքի մասին ևս խոսք լինի լրագրության մեջ։*

*Դուք, բարեկամ, շարունակեցեք գրել և աշխատեցեք Ձեր նամակների բովանդակությունը միշտ բազմակողմանի լինի։ Ուշադրություն դարձրեք ամեն երևույթների վրա, մի բավականացեք միայն տեղային հարցերով։ Իհարկե, ես Ձեզանից չեմ պահանջում և մինչև անգամ խորհուրդ չեմ տա գրել այնպիսի բաների վրա, որ կարող էր վնասել Ձեր ասպարեզին։ Գրում եք՝ «Խենթը» Թավրիզում հետաքրքրությամբ է կարդացվում։ Ամեն գավառներից ստանում եմ այս տեսակ տեղեկություն։ Երկու պարոններ ինձանից թույլտվություն ստացան այս վեպը թարգմանել ռուսաց լեզվով։ Տեսնենք, Կ. Պոլսի հոսոսները այդ բոլորը կարդալուց հետո խելքի կգա՞ն, թե ոչ։ Բայց ցավում եմ, որ շատ տեղեր ցենզուրայից չանցավ։*

*Ցանկանում եք գիտենալ մի քանի անձնավորությունների ով լինելը։* Ասիացին՝ *ինքը պ. Արծրունին է.* Գամառ-Քաթիպան՝ *որ*

երբեմն գրում է Սյունիկ կեղծանունով՝ պ. Ռափայել Պատկանյանն է։ Գամառ-Քաթիպայի նշանակությունը ես էլ չգիտեմ, իրանից հարցրի, մի որոշ բան ասել չկարողացավ։ Պ. Նիկողոսյանը մի երիտասարդ օֆիցեր է՝ արտիլերիստ, որ վերջին պատերազմում մասնակցում էր հանգուցյալ գեն. Լազարևի ձեռքի տակ։ Պարոն Փ. Վարդանյանին թույլ չտվեցին «Լուման» հրատարակել, որովհետև նա համարվում է կասկածավոր մարդ. այժմ Նոր Նախիջևանի ազգային դպրոցի ուսուցիչ է։

Տիգրանին դեռ չեմ տեսել, որ Թավրիզի մասին տեղեկություններ իմանամ, եղբայրը խոստացավ բերել ինձ մոտ։ Նա բավական խելացի տղա է, այստեղ մնալով, կարող է շատ զարգանալ։ Ես նրան կծանոթացնեմ պ. Արծրունու հետ։

Խիզանյանը այստեղ թափառում է. ի՞նչ գործով է զբաղված, չգիտեմ, մի երկու անգամ միայն աչքիս երևացել է. ես նրա հետ չեմ խոսում։

Շուտով Ձեր քաղաքում կտեսնեք երևելի Համբարձում Առաքելյանին, որ պիտի գա յուր հոր փտած գործերը կարգի բերելու։ Առաքելյանցի մասին շատ բաներ ունեի գրելու, բայց հետո...

Պարսկաստանի սովի մասին ցավալի տեղեկություններ ենք ստանում։ Այսօր պ. Ամիրխանյանը ինձ մոտ էր, սարսափելի բաներ էր պատմում։ Թիֆլիսը այժմ կատարյալ Պարսկաստան է դարձել։ Փողոցները լցվել են թուրքերով, ասորիներով և պարսկահպատակ հայերով։ Ամեն բակե տեսնում եմ խոսրովեցի, սալմաստեցի և ուրմեցի կնանիք, որ դռնից դուռն ընկած, կամ մուրացկանություն են անում, կամ զանազան ծառայություններ են կատարում։

Հացը այժմ թե Թիֆլիսում և թե շրջակա գավառներում ավելի թանկ է, քան թե Պարսկաստանում կամ Տաճկաստանում. բայց սով չկա, որովհետև փող կա, ժողովուրդը աշխատում է և ապրում։Բացի դրանից, կառավարությունը և հասարակությունը օգնում են աղքատներին։ Երևակայեցեք, այս զատկին ձվի 100 հատը ծախվեցավ 4 ռուբլով. յուղը՝ ֆունտը 40 կոպ., տեղային պանիրը՝ հասարակը 30 կոպ., մի փոքր լավը՝ 40 կոպ., մյուս ուտեստները դրանց համեմատ է։

Ձեր հոդվածը կտպվի զատկից հետո։ Տոների պատճառով «Մշակը» մի շաբաթ չի տպվի։

Հ. Մելիք- Հակոբյան

## 32. ԱՎԱԳ ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆԻՆ

[18—28 ապրիլի, 1880 թ., Թիֆլիս]

*Հ. Գ. Թավրիզի դպրոցի մասին ոչինչ չեք գրում, իսկ ընթերցարանի մասին, Ձեր գրության համեմատ կաշխատեմ փոքրիշատե օժանդակություններ գտնել։ Նպատակ ունեմ դիմել այստեղի նոր կազմված Տպագրական ընկերությանը և խնդրել, որ նա իր հրատարակություններից մի-մի օրինակ ուղարկե Թավրիզի ընթերցարանին։ Բացի դրանից, միտք ունեմ, «Մշակի» մեջ մի փոքրիկ հոդվածով հայտնել Թավրիզի ընթերցարանի կարևորությունը, և խնդրել հեղինակներից կամ մասնավոր անձինքներից, որ գրքեր ուղարկեն ինձ, և ես կհասցնեմ Թավրիզ։ Պետք է խոստովանած, որ այս տարի թանկությունը և Թուրքիայի սովատանջների վիճակը այն աստիճան զբաղեցրել են մեր հասարակությանը, որ այդ տեսակ բաների վրա մտածելը, գոնե առայժմ, փոքրինչ տարաժամ է համարվում։*

*«Մշակի» խմբագրատունը ուղարկեց Թուրքիայի սովատանջներին մինչև այժմ 24.000 ռուբլի. դեռ նվիրատվությունները շարունակվում են։*

*Ողջունեցեք իմ կողմից պ. Ա. Գորոյանցին, ես խնդրեցի նրան, որպես պարսից գրականության հետ ծանոթ մարդու, ուղարկել ինձ պարսկերեն փոքրիկ և հետաքրքիր վեպիկներ։ Նա խոստացավ, բայց ոչինչ չուղարկեց։ Եթե ձանձրություն չէր լինի, ես կցանկանայի, որ նա կատարեր իր խոստմունքը, նախապես ուղարկելով ինձ գրքերի ցուցակը և արժեքը, իսկ փողը ես անմիջապես կհասցնեի նրան։*

*Պարսկերեն լեզվում, որքան ինձ հայտնի է, կան այնպիսի գրքեր, որ բովանդակում են իրենց մեջ փոքրիկ վեպիկների մի ամբողջ հավաքածու, կան և առանձին փոքրիկ գրքույկներ, պետք է ընտրել դրանցից, որոնք ավելի հետաքրքիր են ընթերցանության համար։ Ես այժմ պարապվում եմ պարսկերենով։*

*Ողջունեցեք մեր հին ծանոթներին. անունները գրելու հարկ չկա. դուք գիտեք։*

Հ. Մելիք-Հակոբյան

## 33. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

23 նոյեմբ., 1880 ամ., Թիֆլիս

*Թանկագին բարեկամ*
*Մելքոն Կասպարիչ Փանյանց.*

*Ձեր նամակը ստացա. շնորհակալ եմ Ձեր բարեսրտության համար, որ արտահայտվում է Ձեր գրության յուրաքանչյուր տողից։ Ձեր համակրությունը դեպի իմ անմխիթար գործունեությունը չափազանց խրախուսում է ինձ, որպես բարեկամի և ազգասերի անկեղծ սրտից բխած քաջալերական խոսք։ «Կայծերի» տպագրությունը հակառակ իմ ցանկության, արդարև բավական ուշացավ։ Ես ամեն ջանքով աճապարում էի, որ այս աշխատությունը իբրև ժամանակակից լինի, իբրև մեր մաքերը զբաղեցնող հարցերը շոշափող մի երկասիրություն, որքան կարելի էր շուտով լույս տեսներ։ Բայց հետաձգության պատճառը պետք է որոնել երկու գլխավոր պատճառների մեջ. նախ, որ ես մինչև այսօր իմ բաժանորդներից չկարողացա այնքան փող ստանալ, որ գոնե տպագրության ծախքը ծածկեր. երկրորդ, ես հույս չունեի, որ այս աշխատությունը տեղվույս ցենզուրայից ամբողջապես անցներ։ Տաճկաստանի Հայոց վերջին շարժումներից հետո այստեղի ցենզուրան սկսեց բավական խստությամբ վերաբերվել դեպի ամեն մի գրվածք, որ կարող էր նրանց մեջ ազգասիրական զգացմունք և ազգասիրական ոգի ներշնչել։ Այդ մի բախտ էր, որ «Խենթը» անցավ, թեև նրա ամենագեղեցիկ տեղերը ջնջվեցան «Մշակի» մեջ տպվելու ժամանակ։ Բայց ես մեծ դժվարություն կրեցի, մինչև կարողացա կրկին հրաման ստանալ երկրորդ տպագրության համար։*

*Այս հանգամանքը ի նկատի առնելով, ես գրեցի պ. Գաբրիել Միրզոյանցին, որը Մոսկվայի համալսարանի ուսանող է, որ հանձն առնե «Կայծերը» Մոսկվայում տպագրելու։ Այնտեղ ցենզուրան ավելի ազատ է, թուղթն ավելի էժան է և տպագրությունը ավելի մաքուր։ Տակավին պատասխան չեմ ստացել, բայց հույս ունեմ, որ կընդունի, որովհետև այդ պարոնը, որպես իմ լավ բարեկամ, նույնպես և մեր ամենաեռանդոտ և գործունյա երիտասարդներից մեկն է։*

*Պարոն Միրզոյանցը մի երկու ամիս առաջ դիմել էր ինձ,*

խնդրելով, որ ես իրավունք տամ «Խենթը» Մոսկվայում տպագրելու, բայց ես չկարողացա կատարել նրա գեղեցիկ ցանկությունը, որովհետև նրանից առաջ արդեն իրավունք էի տված Շուշիում տպագրելու: Այս քաղաքից «Խենթի» առաջին թերթերը ուղարկել էին ինձ տեսնելու համար, թուղթը բավական լավն է և տպագրությունը մաքուր, երևում է այնտեղի տպարանը այժմ փոքրիշատե կանոնավորված է:

Հարցնում եք, թե ինչո՞ւ այստեղի Տպագրական ընկերությունը հանձն չի առնում իմ գրքերը ի լույս ընծայելու: Բարեկամ, մի խաբվեցեք այս տեսակ խոշոր անուններից: Մեզանում մասնավոր մարդիկ ավելի շատ գործ են կատարում, քան թե ամբողջ ընկերություններ: Այդ ընկերությունը իր չնչին դրամագլխով իրան նպատակ է դրել հրապարակել մանր, ըստ մեծի մասին մանկավարժական գրքույկներ, և ոչ թե ընդարձակ նշանավոր աշխատություններ ժողովրդի մեջ միտք և ընթերցանություն տարածելու համար: Բացի դրանից, ընկերության քննիչ հանձնաժողովն այնպիսի անձինքներից է բաղկացած, որ հազիվ թե փոքրիշատե իր հեղինակությունը հարգող մի գրող կցանկանար իր աշխատությունները նրանց քննությանը ենթարկել:

Գրում եք, թե ես մի մեծ հանցանք գործած կլինեմ, եթե զրկեմ հասարակությանը իմ գրավոր աշխատություններից: Ընդունում եմ Ձեր անկեղծ բարեկամական հանդիմանությունը: Բայց հարկավոր է, որ հասարակությունն էլ իր կողմից թե՛ բարոյապես և թե՛ նյութապես քաջալերեն իր գրականության անբախտ մշակներին: Եթե վեննետիկցիք կարճ ժամանակում կարողացան այնքան ահագին քանակությամբ գրքեր տարածել հայոց ազգի մեջ, դրա գլխավոր պատճառն այն էր, որ նրանք ունեին մեկենասներ, և նրանց գրքերի մեծ մասը զարդարած էին զանազան Տյուզյանների և Տառյանների անուններով: Բայց ո՞ւր է մեր հարուստների կողմից այս տեսակ ազգասիրական բարեսրտություն:

Ընդունեցեք իմ խորին հարգանքը՝

Հ. Մ. Մելիք-Հակոբյան

Հ. Գ. «Կայծերը» թե վաղ, թե ուշ կտպվի, դրանում տարակույս մի ունեցեք, շարունակեցեք Ձեր բաժանորդագրությունը: Ես

սպասում եմ պ. Միրզոյանցի պատասխանին, եթե նա հանձն կառնե Մոսկվայում տպագրել տալ, Ձեզ մոտ գտնված փողերը կհանձնեք նրան, իսկ եթե ոչ, ես ստիպված կլինեմ այստեղ տպագրել տալ։

Ձեր պահանջած «Մշակի» համարները պատվիրեցի խմբագրատանը ուղարկել Ձեզ։

Ես պատրաստել եմ մի պատմական վեպ ես «Դավիթ-Բեկ» անունով, որ շուտով կսկսվի տպվել «Մշակի» մեջ։ Վեպի բովանդակությունն առնված է Դավիթ Բեկի՝ Սյունյաց իշխանի կյանքից։ Գործողությունների մի մասը կատարվում է Ձեր հայրենիքում։

Հ. Մ.

## 1 8 8 1

## 34. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

25 փետրվարի, 1881 ամ., Թիֆլիս

Թանկագին բարեկամ
Մ. Կ. Փանյանց,

Ձեր 24 դեկտեմբերի գրած նամակը վաղուց արդեն ստացած եմ. այսքան ժամանակ պատասխանի ուշացնելը պետք է վերաբերել իմ ծուլությանը և ավելի ոչինչ։ Այս նամակով կստանաք իմ լուսանկարը, իսկ պ. Արծրունին ինքը կուղարկե Ձեզ յուր պատկերը, որպես խնդրած էիք։

«Կայծերի» Մոսկվայում տպագրելու դիտավորությունս ես արդեն թողած եմ։ Ինձ ստիպեց այդ մտքին դիմելու անցյալ տարվա ցենզուրայի խստությունը, իսկ այժմ այստեղի ցենզուրան փոքր-ինչ մեղմացել է, այլևս այնպիսի բռնությամբ չէ վարվում դեպի ամեն մի գրվածք, որ կարող էր տաճկահայերի մեջ ազգասիրության զգացմունք զարթեցնել։ Ես կտպագրեմ «Կայծերը» Թիֆլիսում, և գուցե շուտով կսկսեմ տպագրությունը, եթե ծախքը բոլորովին լրացրած կլինեմ։

Պ. Նիկողոսյանը, որպես Ձեզ հայտնի է, Կ. Պոլսումն է. նա աշխատակցում է ռուսաց «Порядок» լրագրին, և ինչպես յուր մասնավոր նամակներից երևում է, կարող է այնտեղ շատ օգտա-

վետ լինել մեր բուն ազգային գործերում։ Ես բոլորովին համաձայն եմ Ձեզ հետ պ. Նիկողոսյանի բնավորության մասին, արդարև, նա փոքր-ինչ դյուրագրգիռ, շատ հափշտակվող երիտասարդ է, բայց այնուամենայնիվ մեր անկեղծ, անձնվեր և եռանդով գործիչներից մեկը պետք է համարել նրան։ Բայց նա չափազանց անձնավստահ մարդ է, այդ է նրա գլխավոր թերությունը։

«Խենթի» տպագրությունն այնքան վատ չի լինի, որքան Դուք կարծում եք. առաջին տպագրված թերթերի օրինակները ուղարկել էին ինձ, բավական մաքուր էին. միայն շատ ուշացրին, պետք էր մինչև այսօր լույս տեսած լիներ։

«Դավիթ Բեկը» «Մշակի» մեջ հրապարակելով, միևնույն ժամանակ առանձին գրքով տպվում է ինձ համար. երբ կվերջանա, քանի օրինակ որ կցանկանաք, կուղարկեմ Ձեզ։

Դուք, իհարկե, կարդացած կլինեք «Մեղուի» առաջնորդող հոդվածը Մոսկվայի և Ս. Պետերբուրգի եկեղեցիների երեցփոխանության մասին. եթե Ձեր ժամանակը ներեր, ես շատ կցանկանայի, որ բուն խնդրի մանրամասնությունները գրեք ինձ, թե ինչո՞ւմ է կայանում բուն վիճաբանությունը, կամ ովքե՞ր են հակառակ կողմի պարագլուխները, ի՞նչ է նրանց նպատակը։

Քանի շաբաթ առաջ այստեղից անցավ մեր հայրենակից մահտեսի Սիմոն Թումանյանցը, նրանից Ձեր առողջության մասին տեղեկանալով շատ ուրախ եղա։

Այս տարի, եթե կհաջողվի, նպատակ ունեմ դեպի Կ. Պոլիս մի ճանապարհորդություն անել և Հայաստանով վերադառնալ Թիֆլիս. անցյալ տարի չհաջողվեցավ, գուցե այս տարի կհասնեմ ցանկալի նպատակիս։

Ընդունեցեք իմ խորին հարգանքը՝

Հ. Մելիք-Հակոբյան

## 35. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

26 մայիսի, 1881 ամ., Թիֆլիս

Թանկագին բարեկամ
Մ. Կ. Փանյանց,

Ապրիլի 7-ից գրված Ձեր նամակը ստացա, խոստացել էիք Ձեր պատկերը ուղարկել, մինչև այժմ սպասել եք տալիս ինձ։ «Խենթի» մեկ օրինակը ուղարկեցի Ձեզ, չգիտեմ ինչպես կհավա-

նեք տպագրությունը. Շուշի քաղաքից դրանից ավելի չէր կարելի սպասել։ «Դավիթ Բեկի» առաջին և երկրորդ մասը արդեն առանձին գրքով տպված և վերջացված է, կազմարարի մոտ է գտնվում, շուտով մի օրինակ կուղարկեմ Ձեզ։ Իսկ երկրորդ մասը, որ ավելի ընդարձակ է, լույս կտեսնի «Մշակի» մեջ հրատարակությունը ավարտվելուց հետո, որովհետև առաջ նրա մեջ տպվում է, հետո բրոշյուր է կազմվում։

Մոսկվայի ուսանողներից մեկը նամակով դիմել էր իմ բարեկամ պ. Գաբրիել Միրզոյանցին, հայտնելով, թե տեղիդ անկելանոցի դրամարկղում կա մի գումար, և հոգաբարձությունը ցանկություն ունի այդ գումարը մի որևիցե ազգային գործի համար ծախսել, և երբ թե հոգաբարձական ժողովում հարց է ծագել, որ հիշյալ գումարը տան ինձ տաճկական Հայաստանում ճանապարհորդելու համար, և հարցը մնացել է դեռ անվճիռ, որովհետև չգիտեն, ես հանձն կառնե՞մ գնալ Հայաստան, թե ոչ։ Իմ դիտավորությունը գիտենալու համար գրած էին պ. Միրզոյանցին, որ ինձանից հարցմունք անե։

Ես դեռ անցյալ տարի հունիս ամսի սկզբին պատրաստվեցա Կ. Պոլիս գնալու, որ այնտեղից անցնեմ Հայաստան, բայց մի քանի արգելքներ, որոնց մեջ գլխավոր տեղը բռնում էր նյութական միջոցների պակասությունը, թողեցին իմ ցանկությունն անկատար։ Այժմ, եթե իրավ կա մի գումար, որ կամենում են Հայաստանի ճանապարհորդության համար գործ դնել, ես մեծ ուրախությամբ հանձն կառնեմ այդ ճանապարհորդությունը, հետևյալ պայմաններով. առաջին, իմ ճանապարհորդությունը կտևե հինգ ամիս. այդ հինգ ամսվա համար ծախք կպահանջեմ հազար ռուբլի, երկրորդ, որ ամենագլխավորն է, չի պիտի տարածվի, թե ես գնում եմ Հայաստան։ Ես պիտի աշխատեմ, որքան կարելի է իմ ճանապարհորդությունը գաղտնի պահել։ Պատճառները, առանց իմ ասելու, Դուք կհասկանաք։ Ձեզ հայտնի է, թե ինչ հալածանք կա Տաճկաստանում այն անձանց դեմ, որոնք աշխատում են հայոց գործի համար։ Եթե իմ Հայաստան գնալը հենց սկզբից հռչակվի, անկարելի է, որ թուրքաց կառավարությունն ուշադրություն չդարձնի։ Թիֆլիսի տաճկաց կոնսուլը ամենաչնչին երևույթների անգամ հաղորդում է իր կառավարությանը, ուր մնաց մի փոքրիշատե հայտնի մարդու ճանապարհորդելու նպատակով Հայաստան գնալը։ Թեև իմ ճանապարհորդությունը ոչինչ քաղաքական նպատակ

չունի և չպիտի ունենա, այսուամենայնիվ, Թուրքաց կառավարությունը շատ պատճառներ ունի կասկածանքով վերաբերվել դեպի մի ճանապարհորդ, որ Ռուսաստանից գնացել է Հայաստան։ Այդ կարող էր ոչ միայն իմ անձը վտանգի ենթարկել, այլ զրկել ինձ այն հետազոտություններից, որոնք միայն ուսումնական բնավորություն ունեն, և վերաբերվում են երկրի ու բնակիչների դրությանը, նրանց փոխադարձ հարաբերություններին և այլն։

Բայց, որպեսզի հնար լինի ավելի խորը թափանցել ժողովրդի մեջ, դրա համար հարկավոր են իմ վերև հիշված պայմանները, այսինքն՝ ճանապարհորդել ծպտյալ կերպով (инкогнито)։

Իմ կարծիքս այս է, եթե տեղվույդ հոգաբարձությունը կընդունե իմ առաջարկած պայմանները, թող 1000 ռուբլի բոլորովին ուրիշ անունով ուղարկե «Մշակի» խմբագրատանը պ. Արծրունուն. պ. Արծրունին այդ գումարը կկարգադրե իմ ճանապարհորդության համար։ Այդ կարող են գիտենալ Մոսկվայում մի քանի խոհեմ անձինք միայն, իսկ մնացյալ հասարակությանը պետք է անհայտ մնա։

Հուսով եմ, որ այդ մասին անհապաղ կպատասխանեք ինձ, որ ես նրա համեմատ իմ գործերը կարգի դնեմ։

Ձեր՝ Հ. Մելիք-Հակոբյան

## 36. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

27 հունիսի, 1881 թ., Թիֆլիս

*Ազնիվ բարեկամ*
*Մ. Կ. Փանյանց,*

Ձեր 17 և 18 հունիսի նամակները ստացել եմ. այլև ստացա Ձեր պատվական ընծան՝ «Հրապարակախոս ձայն» կոչված գիրքը. այդ մասին ընդունեցեք իմ խորին շնորհակալությունը։

«Կապարյան անկելանոցից» ես ոչինչ տեղեկություն չունեի։ Այդ մասին խոսել էին, կարգադրել էին ուրիշները, առանց նախապես իմ հաճությունը հարցնելու։ Թող անկելանոցի մարդիկը անկելանոցի վրա մտածեն... Մենք ավելի կենդանի հիմնարկություններից կսպասենք մեր նպատակների իրագործումը։

Ստացա Ձեզանից քսան և հինգ ռուբլի, որի փոխարեն պահանջում եք ուղարկել Ձեզ 10 օրինակ «Դավիթ Բեկ» վեպից։ Դուք

երևի հաշվի մեջ սխալվել եք, 10 օրինակ «Դավիթ Բեկը» արժե 15 ռուբլի և ոչ ավելի։ Ես փոստով ուղարկեցի 40 հատ «Դավիթ Բեկ», որ նեղություն հանձն առնեք Մոսկվայում վաճառելու, և Ձեզանից ստացած տասն և հինգ ռուբլին գրեցի այդ գրքերի հաշվին։

«Խենթի» տպագրությանը և գրքի գինը ես էլ չեմ հավանում, գուցե շուտով երկրորդ տպագրությունը կլինի, որովհետև առաջինն արդեն սպառվել է։

Ընդունեցեք իմ խորին հարգանքը՝

Հ. Մելիք-Հակոբյանց

## 1882

### 37. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

2 հունվարի, 1882 թվ., Թիֆլիս

Մեծապատիվ պարոն
Մելքոն Կասպարիչ Փանյանց,

Բավական ժամանակ է, որ մեր միմյանց հետ ունեցած թղթակցությունը ընդհատված է. իմ կողմից մի այլ պատճառ չկա, բացի նրանից, որ ավելի քան երեք ամիս Թիֆլիսից բացակա էի գտնվում, գնացել էի ճանապարհորդություններ անելու։ Իսկ Դուք ի՞նչ պատճառով զրկում եք մեզ Ձեր նամակներից, այդ պահանջը սաստիկ գրավում է ինձ։

«Դավիթ Բեկը» դարձյալ սկսվեցավ տպվել և ներկա տարվա հունվար ամսվա վերջում կավարտվի երրորդ գրքի տպագրությունը, միևնույն գինով, որպես լույս տեսավ այդ վեպի առաջին և երկրորդ գիրքը միասին։ Կմնա մի հատոր ևս հրատարակելու, և այդ վեպը բոլորովին կվերջանա, որովհետև ամբողջ վեպը չորս գրքերից է բաղկացած։

Չգիտեմ, Ձեզ ուղարկված հատորները վաճառվեցա՞ն, թե ոչ։ Երևակայեցեք, ես այդ գրքից միայն 600 օրինակ եմ տպել տվել, և մեր բոլոր հայաբնակ քաղաքներում փոքրիշատե ուղարկել եմ, բայց դեռ ոչ մի տեղից փող չեմ ստացել։ Իսկ գովասանական դատարկ նամակներ շատ եմ ստանում, թե հետաքրքրությամբ

*կարդում են, անհամբերությամբ սպասում են մյուս հատորների լույս տեսնելուն և այլն... Բայց մյուս հատորները ի՞նչ միջոցներով պիտի լույս տեսնեն, դրա վրա ոչ ոք չէ մտածում։*

*Մենք մեր հասարակությունից շատ բան չենք պահանջում, միայն մեր աշխատության գինը մեզ տան, որ կարողանանք շարունակել մեր գործունեությունը. հակառակ դեպքում կմնա մեզ թողնել գրական ասպարեզը, գոնե հանգիստ խղճմտանքով կարող ենք ասել՝ մենք կատարեցինք, որքան մեզանից կախված էր, իսկ դուք մեզ գնահատել չկարողացաք։*

*Ընդունեցեք իմ խորին հարգանքը՝*

Հ. Մելիք-Հակոբյան

## 38. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

**10 փետրվարի, 1882 ամ., Թիֆլիս**

*Ազնիվ բարեկամ Մելքոն Կասպարիչ,*

*Ձեր վերջին նամակը ստացա. ցանկանում եք մի քանի տեղեկություններ հաղորդել Ձեզ պ. Նիկողոսյանի մասին. մեծ հոժարությամբ կկատարեմ Ձեր փափագը։*

*Պ. Նիկողոսյանը, ինչպես Դուք նկատած կլինեք, վերջին ամիսներում դադարեցրել է իր թղթակցությունները Կ. Պոլսից, թեև ինքը չէ հայտնել պատճառը, բայց նրա մի բարեկամի գրելով (որը նույնպես թղթակցում է «Մշակին»), իր հիվանդությունն է պատճառ, որ առժամանակ պիտի զրկի նրան աշխատելուց։ Բայց գլխավոր առիթը, որպես Դուք շատ ճիշտ գրած էիք,* նյութական հաշիվներ *են, որոնք իմ կարծիքով պատճառ չի պիտի տային պ. Նիկողոսյանին սառչել «Մշակից»։*

*Բոլորովին զրպարտություն կլինի ասել, թե «Մշակը» նրա նամակները չէր տպում կամ անխնա փոփոխություններ էր անում։ Այդ ամեն մի օրինավոր խմբագրություն իրավունք ունի մերժելու, ինչ որ անհարմար է, ինչ որ վնասակար է։ Եթե «Մշակի» խմբագրությունը նրա հոդվածներից ջնջել է, ջնջել է գլխավորապես ա՛յն տեղերը, որոնք բովանդակում էին իրենց մեջ բացարձակ ցինիկական հայհոյանքներ և ավելի ոչինչ։ Առանց դրան և նրա նամակները շատերի մեջ զզվանք և անհամակրություն հարուցին*

դեպի «Մշակը», իսկ եթե ամբողջապես տպվելու լինեին, այն ժամանակ «Մշակը» կդառնար բոլորովին հայհոյանքների օրգան։ Բայց մի լրագիր չէ կարող այս և այն թղթակցի անձնական կրքերին ծառայել։

Ինչ որ վերաբերվում է այն վարձատրությանը, որ պ. Նիկողոսյանը ստանում էր «Մշակի» խմբագրությունից, պետք է ի նկատի ունենալ, որ սկզբից պ. Արծրունին չէ ուղարկել նրան Կ. Պոլիս որպես թղթակից և ոչ որևէ խոստմունք արած ունի նրան վճարելու համար։ Պ. Նիկողոսյանը ինքնակամ գնաց Կ. Պոլիս և սկսեց այնտեղից թղթակցել. հետո ժամանակ առ ժամանակ սկսեց փողեր պահանջել։ Պ. Արծրունին չէր մերժում և ուղարկում էր պահանջածը։ Եվ դուցե կշարունակեր, եթե չափավոր լիներ, բայց նա անդադար ձանձրացնում էր։ Հետո, պ. Արծրունին խիստ քաղաքավարի կերպով ակնարկեց նրան «Մշակի» խմբագրության չքավոր միջոցները, որպեսզի նա իր պահանջները փոքր-ինչ սահմանափակե։ Դրանից երևի վիրավորվել է նա։ Եթե գումարելու լինենք մինչև այժմ պ. Նիկողոսյանի ստացած փողերը, միջին թվով յուրաքանչյուր ամիս ստացած կլինի 60 կամ 70 ռուբլի։

Պ. Արծրունին բոլորովին զարմացավ, երբ տվեցի նրան կարդալ Ձեր նամակի այն մասը, որ վերաբերվում էր պ. Նիկողոսյանին։ Նա մինչև այսօր հայտնած չէ, թե ինքը Մոսկվայից նպաստներ է ընդունում, և միշտ կարծել է տվել, թե ապրում է միայն «Մշակի» խմբագրատնից ստացած միջոցներով։ Իհարկե, Ձեր գրածը կմնա, ինչպես իմ, այնպես էլ պ. Արծրունու մոտ, որպես գաղտնիք, բայց շնորհակալ ենք, որ Դուք բավական բացատրեցիք նրա վարմունքը։

Ես չեմ կարծում, որ նա բոլորովին դադարե «Մշակին» աշխատակցելուց. վերջ ի վերջո կսկսե գրել։ Պ. Արծրունին առիթ չէ տվել նրան վիրավորվելու, միայն երբեմն բարեկամական խորհուրդներ է տվել, որ իր համար մի հաստատուն պարապմունք գտնե և իր ապագայի համար մտածե. գրական աշխատանքը չի կարող ապահովեցնել նրան, այսքանը միայն։

Ձեր՝ Հ. Մելիք-Հակոբյան

## 39. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

20 մարտի, 1882 ամ., Թիֆլիս

*Հարգելի բարեկամ,*

*Ստացա Ձեր 3 մարտի նամակը. պ. Նիկողոսյանի մասին ինչ որ գրած եք, կաշխատեմ կատարումը տալ։*

*Բայց մի նոր տեղեկություն հարկավոր եմ համարում հաղորդել Ձեզ։ Ամեն անգամ, երբ պատահել է իմ Ձեզ գրած նամակներում խոսել պ. Նիկողոսյանի վրա, Դուք հիշում եք, որ ես միշտ գանգատվել եմ նրա անտակտության, նրա անխոհեմ վարմունքների մասին։ Այժմ պ. Նիկողոսյանը ապացուցեց, որ ես սխալված չեմ եղել իմ կարծիքների մեջ։ Ահա բանը ինչումն է։ Պ. Նիկողոսյանը հանկարծ դադարեց «Մշակին» թղթակցելուց, առանց նախապես բացատրելու պատճառները։ Նույն միջոցին նրա բարեկամ դոկտոր Փեշտմալջյանից նամակ ստացանք, որ հիվանդ է։ Այդ իմանալով պ. Արծրունին ուղարկեց 150 ռուբլ։ Հետո մի քանի ամիսներ անեց նրա լռությունը, ամենևին տեղեկություն չունեինք, թե ինչ դրության մեջ է կամ ինչով է զբաղված։*

*Հանկարծ (մի շաբաթ առաջ) այստեղ զանազան պարոններ Բաքվից նամակներ են ստանում, որոնց բովանդակությունից երևում է, թե պ. Նիկողոսյանը դիմել է Բաքվի «Մարդասիրական ընկերությանը» նրանից օժանդակություն խնդրելու, և իր նամակի մեջ նկարագրել է ոչ միայն իր դժբախտությունները, այլ իր բոլոր դժգոհությունները պ. Արծրունու վերաբերությամբ, թե նա թողել է իրեն քաղցած, չի կատարում իր պայմանները և այլն։ Ասացեք խնդրեմ, դա ազնվությո՞ւն է, խայտառակել «Մշակի» խմբագրին, որից շատ բարիքներ է վայելած, և կոտրել հայ հասարակության առջև «Մշակի» խմբագրական վարկը։ Ես բոլորովին հակառակ չեմ ու շատ բնական եմ գտնում, որ նյութական կարոտությունը ստիպել է նրան դիմել զրա և նրա օգնությանը։ Բայց ինչո՞ւ արատավորել ուրիշների պատիվը, ինչո՞ւ զրպարտություններ անել։ Իհարկե այդ բոլորը սաստիկ կվիրավորեին պ. Արծրունուն, մանավանդ Բաքվից նամակներ ստացողներից շատերը դիմեցին ինձ և պ. Արծրունուն, բացատրություն էին խնդրում պ. Նիկողոսյանի գրածները ստուգելու համար, որպեսզի մարդասիրական ընկերությանը տեղեկություն տան։*

*Գուցե Բաքվից ստացած լուրերի մեջ չափազանցություններ*

կան, այսուամենայնիվ պ. Նիկողոսյանն ավելի ազնիվ վարված կլիներ, եթե ճշմարիտը գրեր, թե «Մշակի» խմբագրությունից ստացած վարձատրությունն այնքան աննշան է, որ նրանով Կ. Պոլսում իր ապրուստը հոգալ չի կարողանում և այդ պատճառով խնդրում է, որ «Մարդասիրական ընկերությունն» էլ իրան օգնի։ Ես կարծում եմ, որ այդ ձևը ավելի համակրական կլիներ, քան թե ամեն ինչ ուրանալ և ստիպել ընկերությանը Թիֆլիս գրելու և «Մշակի» խմբագրից բացատրություններ պահանջելու Պ. Արծրունին իհարկե ոչինչ չպատասխանեց, դարձյալ պահպանելով պ. Նիկողոսյանի պատիվը։ Բայց ես որքան կարող էի, աշխատեցի, զանազան բարեկամներիս նամակներ գրել տալով, որ համոզեն «Մարդասիրական ընկերությանը» մի գումար ուղարկելու Կ. Պոլիս պ. Նիկողոսյանին, և հուսով եմ, որ կուղարկեն։

Այդ բոլոր անցքերից երկու օր չանցած ես ստանում եմ պ. Նիկողոսյանից մի նամակ գանգատներով լի պ. Արծրունու վրա և նամակի հետ մի հոդված, որի մասին խնդրում է կամ անփոփոխ կերպով «Մշակի» մեջ տպել տալ, կամ հանձնել «Մեղուի» և կամ «Արձագանքի» խմբագրներին։ Ես չկամենալով, որ պ. Նիկողոսյանը բոլորովին ստորացնե իր պատիվը ուրիշ խմբագրությունների դիմելով (որոնց հետ ունեցած հարաբերությունները Ձեզ հայտնի է), դարձյալ խնդրեցի պ. Արծրունուց, որ նրա հոդվածը ընդունե և անփոփոխ տպագրե։ Կեսը տպվեցավ «Մշակի» 47 համարի մեջ, իսկ մնացած կեսը ցենզորը ամբողջապես կտրեց, այժմ ներկայացված է ցենզուրական կոմիտեին, չգիտեմ թույլ կտա՞ն տպելու, թե ոչ։ Դրանից պարոն Նիկողոսյանը կարող է հասկանալ, թե ինչո՞ւ նրա հոդվածներից շատ բաներ ջնջվում էին։

Վերջապես պ. Նիկողոսյանի նամակը ստանալուց հետո ես նրան պատասխանեցի, և ինչ խրատներ, որ պետք էր տալ նրան, բոլորը գրեցի։ Հույս ունեմ, որ այսուհետև խելքը գլուխը կհավաքե և կրքերի անձնատուր չի լինի։

Ինչ որ վերաբերվում է Ձեր առաջարկությանը, թե լավ կլիներ, որ պ. Արծրունին մի երկու ամսվա համար 150 ռուբլ ուղարկեր նրան, այդ հեշտ է կատարել տալ, միայն հարկավոր է, որ վերոհիշյալ անախորժությունները փոքր-ինչ մոռացվեն, և նա շարունակե իր գործը, իհարկե պ. Արծրունին նրան կարոտության մեջ չի թողնի։

Մոսկվայում բնակվում է Սարգիս Հարությունյան Թումանյանցի ընտանիքը․ նրա որդի Վարդանը, որ տեղային ռեալական դպրոցի ուսանող է, մի ժամանակ Թավրիզում իմ աշակերտն է եղել։ Այդ ընտանիքի հետ ես լավ բարեկամ եմ․ մանավանդ մահտեսի Սիմոնը, որ իր եղբայրների մեջ ամենազարգացածն է, իմ մտերիմներից մեկն է։ Քանի օր առաջ Վարդանից մի նամակ ստացա, որով հայտնում է, թե դիտավորություն ունի առանձին գրքերով տպագրել տալու իմ բոլոր այն աշխատությունները, որոնք զանազան ժամանակ «Մշակի» մեջ հրատարակված են, բայց տակավին լույս չեն տեսած առանձին գրքերով։ Սկզբից նա ընտրում է տպագրության համար իմ «Ջալալեդդին» անունով վեպիկը և իր նամակով թույլատվություն է խնդրում, որ ես տամ իմ համաձայնությունը։

Ինձ, իրավն ասեմ, շատ ուրախացրեց Վարդանի ցանկությունը, որ յուր պատանի հասակում ցույց է տալիս այդպիսի ազնիվ ձգտումներ։ Բայց որովհետև նա դեռ անփորձ է, և նրա հայրը այն տեսակ մարդերից չէ, որ հասկանա տպագրական պայմանները, այդ պատճառով ես հարմար համարեցի դիմել Ձեզ, որ Դուք նեղություն հանձն առնեք խոսելու նրանց հետ իմ կողմից ինչ որ հարկն է։ Հուսով եմ, որ չեք զլանա կատարելու իմ խնդիրքը։

Ցույց եք նրանց հայտնի լինի, երբ առանձին մարդիկ հանձն են առնում տպագրելու մի որևիցե հեղինակի գրքերը, նախ վարձատրում են հեղինակին՝ տպագրելու իրավունք ստանալու համար։ Երբ «Խենթը» Շուշիում տպեցին, պ. Ապրեսյանցը ուղարկեց ինձ 300 օրինակ տպված գրքերից, որպես վարձատրություն, ավելի տալ չէր կարող, որովհետև մի աղքատ տղա էր։

Ես Վարդանին պատասխանեցի, թե հոժար եմ, որ նա տպել տա «Ջալալեդդինը», բայց պայմանների մասին պետք է խոսել Ձեզ հետ։ Դրանք են իմ պայմանները.

1. Իրավունք եմ տալիս միայն առաջին տպագրության համար, և տպել ոչ ավելի, քան 2400 օրինակ։ Երկրորդ կամ ապագա տպագրությունների իրավունքը ինձ վրա եմ պահում։

2. Որպես վարձատրություն պետք է ինձ կամ կանխիկ վճարեն 200 ռուբլի փող, կամ 500 օրինակ տպված գրքերից, այն պայմանով, որ իրանք Թիֆլիսում իրավունք չունենան վաճառելու, որպեսզի իմ ունեցածը այստեղ վաճառվի։

Ահա դրանք են իմ գլխավոր պայմանները, իսկ ինչ որ կվե-

բաների տպագրության մաքրությանը, թղթի լավությանը, գրքի դիրքի գեղեցկությանը, այդ բաների մեջ ես կարծում եմ, որ դուք այնքան կիրթ ճաշակ ունեք, որ բոլորը կարող եք ցույց տալ նրանց։

Եթե գիրքը կտպվի այնպիսի թղթի վրա, որպես էր Գամառ-Քաթիպայի երգարանի թուղթը, ամենայն վստահությամբ կարելի էր յուրաքանչյուր գրքույկին 50 կոպեկ գին նշանակել, և մեծ դյուրությամբ կվաճառվի։ Պ. Պատկանյանը, կարծեմ, 300 ռուբլի ստացավ յուր երգարանի տպագրության իրավունք տալու համար, այն ևս իր պատկերով։

«Ջալալեդդինը» իմ աշխատություններից ամենագեղեցիկն է. մի ժամանակ մի քանի պարոններ դիտավորություն ունեին այդ վեպիկը մի քանի հազար օրինակներով տպել տալ և ձրի բաժանել մանավանդ Տաճկաստանի հայերի մեջ։ Բայց մեր մեջ ամեն օգտավետ դիտավորություն մնում է անկատար, այդ ևս այնպես մնաց։

Մի քանի շաբաթ առաջ պ. Նիկողոսյանի միջնորդությամբ Կ. Պոլսից դիմեց ինձ մի պարոն, որը տեղային լեզվագետ է և բարձր ուսում ստացած երիտասարդներից մեկն էր, Թերզյան ազգանունով, նա «Խենթը» և «Ջալալեդդինը» ֆրանսերեն լեզվով թարգմանելու թույլտվություն էր խնդրում, ես, իհարկե մեծ հոժարությամբ իմ համաձայնությունը հայտնեցի։ Պարոնի դիտավորությունն այն է, որ իր թարգմանություններով եվրոպական հասարակությանը ծանոթացնե մեր գրականության և մեր ներքին կյանքի հետ։

Դոքտոր Թամամշյանը, որ Կ. Պոլսի ռուսաց դեսպանատան բժիշկն է, գրած էր ինձ, որ իր առաջարկությամբ «Խենթից» դրամա էր կազմվել և դիտավորություն ունի ֆրանսերեն և անգլերեն լեզուներով թարգմանել տալու, որպեսզի Եվրոպայի մի քանի նշանավոր քաղաքներում ներկայացվի։ Թեև ոչ մի կողմից մխիթարություն չունենք, այսքանը գոնե բավական քաջալերում է մեզ, երբ տեսնում ենք, որ մեր աշխատությունները ապարդյուն չեն մնում։

Պ. Նիկողոսյանի մասին ապահով եղեք, ես չեմ խնայիլ ամեն կերպ օգնել նրան։ Ձեր նամակը պ. Արծրունուն ցույց չտվեցի, միայն բովանդակությունը պատմեցի։

Ձեր՝ Հ. Մելիք-Հակոբյան

## 40. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

9 մայիսի, 1882 ամ., Տիֆլիս

*Հարգելի բարեկամ*
*Մելքոն Կասպարիչ,*

*Ապրիլ 13-ից գրված Ձեր նամակը ստացած եմ. հաղորդում եք, թե երիտասարդ Թումանյանցը համաձայն է իմ պայմանների հետ «Ջալալեդդինի» տպագրության մասին. միայն «Մշակի» այն համարները չունի, որոնց մեջ տպված է եղել այդ վեպիկը։ Եթե արգելքը դրա վրա է, ես կուղարկեմ կամ Ձեզ, կամ նրան այդ համարները։*

*Դարձյալ հայտնում եք Ձեր նամակի մեջ, թե երիտասարդ Թումանյանցը ցանկություն ունի և «Կայծերը» տպագրելու «Մշակի» մեջ հրատարակված իմ նամակից Դուք արդեն տեղեկացած կլինեք, որ ես ինքս պատրաստվում եմ «Կայծերը» տպագրելու ծախքի համար 500 ռուբլ արդեն ունեմ, մնացածը մի կերպ կտնօրինեմ։*

*Եթե պ. Թումանյանցի հայրը նրան այնքան միջոցներ կտա, որ նա կարող լինի «Կայծերի» նման մի գիրք տպագրել, որի համար ամենափոքր 1500 ռուբլ ծախք է հարկավոր, այդ դեպքում ես նրան խորհուրդ կտամ մի բան անել, փոխանակ միայն «Ջալալեդդինը» մի գրքույկով հրատարակելու, նա ավելի լավ կաներ և ավելի նպատակահարմար կլիներ, եթե ի մի հավաքեր իմ մի քանի փոքրիկ վեպիկները և բոլորը միասին մի գրքով հրատարակեր։ Ձեզ հայտնի է, որ սկսյալ «Մշակի» առաջին տարիներից, այդ լրագրի մեջ տպվել են իմ զանազան վեպիկները կամ փոքրիկ պատկերները։ Այդ բոլորը այժմ մոռացված են, բայց ժողովրդի ընթերցանության համար մեծ նշանակություն ունեն։ Մի քանիսը այդ աշխատություններից թարգմանվեցան գերմաներեն և ռուսերեն լեզուներով և տպվեցան զանազան պարբերական հրատարակությունների մեջ, թե այստեղ և թե Բեռլինում։*

*Կարելի էր ընտրել այս վեպիկներից մի քանիսը և «Ջալալեդդինի» հետ միասին տպել. այն ժամանակ գիրքը մի խոշոր գիրք կստանար և կլիներ մի հավաքածու գոնե իմ աշխատությունների մի մասի։*

*Թումանյան եղբայրները հարուստ և բարի մարդիկ են, եթե կամենում են հայոց գրականությանը՝ որևից նպատակով նպաս-*

*տել, պետք է այնպիսի գործ կատարեն, որ իրանց անվանը արժանի լինի և պատիվ բերե։*

*Ես կարծում եմ, որ Դուք ևս համաձայն կլինեք ինձ հետ, որ մի այսպիսի ձեռնարկություն ավելի նպատակահարմար կլինի։ Թիֆլիսի Տպագրական ընկերությունը հրատարակեց պ. Պատկանյանի երգերի հավաքածուն, պ. պ. Թումանյանները նույնպես կարող են հրատարակել իմ վեպիկների հավաքածուն, և այդ գործի մեջ նրանք բնավ կորուստ չեն ունենա, որովհետև ընթերցանության գրքերը այժմ, թեև դանդաղ կերպով, այնուամենայնիվ վաճառվում են։*

*Եթե կհամաձայնվեն, ես կուղարկեմ «Մշակի» բոլոր այն համարները, որոնց մեջ տպված են այդ վեպիկներից, իսկ եթե ոչ, թող միայն «Ջալալեդդինը» տպեն, որպես ցանկանում են։*

*«Արձագանքի» խմբագրատանը ոչինչ չեմ հայտնել, որովհետև մոռացել էի, այսօր կգնամ կխոսեմ։*

*Ընդունեցեք իմ խորին հարգանքը՝*

Հ. Մելիք-Հակոբյան

*Չգիտեմ ստացա՞ք մի օրինակ «Դավիթ Բեկի» 3-րդ գրքից, թե ոչ։*

## 41. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

**4 օգոստոսի, 1882 թ., Թիֆլիս**

*Ազնիվ բարեկամ*
*Մելքոն Կասպարիչ,*

*Այսօր փոստով ուղարկեցի Ձեզ «Մշակի» 10 համարներ, որոնց մեջ կգտնեք այն վեպիկները, որ խոստացել էի Ձեզ ուղարկելու։ Այսքան ժամանակ ուշացնելու պատճառն այն է, որ ուղիղն ասած ինձ շատ հաճելի չէր մի տեսակ առևտրական հաշիվների մեջ մտնել պ. պ. Թումանյանների հետ։ Երիտասարդ Թումանյանը գուցե ազնիվ ձգտումներ ունի, բայց նրա հա՞յրը... չգիտեմ ինչպես կվերաբերվեր դեպի որդու ձեռնարկությունը։ Այդ պատճառով Ձեզ չէի ցանկանում մի ձանձրալի գործի միջնորդ դարձնելու։*

*Վերջապես, եթե կցանկանաք, թող նրա ուղարկված վեպիկները «Ջալալեդդինի» հետ միասին առանձին գրքով տպել տան, եթե ո՛չ, թող մնա՛, Դուք առանձին ուշադրություն մի՛ դարձնեք։*

*Պայմանները կլինեն միևնույնը, որպես սկզբից գրած էի, թեև պ. պ. Թումանյանների հարստության մեջ շատ զգալի չէր լինի, եթե մի գիրք հեղինակի օգտին տպագրել տալու լինեին։ Բայց այդպիսի բարերարություն ես իմ հայրենակիցների կողմից չեմ սպասում...*

*«Մշակի» մեջ կարդացած կլինեք այն լուրը, որ պոլկովնիկ Մելիք-Հայկազյանը հանձն է առել «Դավիթ Բեկի» բոլոր հատորները իր ծախքով նորից տպագրել տալու։ Դա մի գովելի օրինակ է, մանավանդ զինվորականի կողմից։ Նա ցանկանում է, որ այդ նոր տպագրությունը պատկերազարդ լինի և խիստ շքեղ։ Պատկերները այստեղ կնկարվեն։ Իսկ փորագրության համար կուղարկվին կամ Մոսկվա, կամ Ս. Պետերբուրգ։ Ահագին ծախք կլինի, բայց նա բոլորը նվիրում է հօգուտ հեղինակի։*

*«Խամսայի մելիքությունների» պատմությունը վերջացավ. 1200 օրինակ առանձին գրքով տպված է, բայց այժմ ցենզորի հետ մեծ վեճ ունենք, թույլ չէ տալիս, որ գրքերը դուրս գան, ասելով, թե նորից պետք է քննվեն, որովհետև գրքի մեջ շատ ազատ մըտքեր անց են կացել։ Չնայելով, որ «Մշակի» մեջ տպվելու ժամանակ ինքը թույլ է տվել, այժմ կրկին վիճաբանություններ է հարուցանում։ Չգիտեմ ինչով կվերջանա, եթե նորից քննելու լինեն, գիրքը բոլորովին կկորցնի իր նշանակությունը. թեև սկզբից «Մշակի» մեջ տպվելու ժամանակ շատ կտորներ են հանել նրա միջից և երբեմն ամբողջ գլուխներ ջնջել են։*

*Ավելորդ չեմ համարում մի երկու խոսք գրել Ձեր և մեր բարեկամ պ. Նիկողոսյանի մասին։ Իմ բոլոր աշխատությունը ապարդյուն անցավ. ես թեև Ձեզ խոստացել էի, բայց չկարողացա նրան հաշտեցնել պ. Արծրունու հետ։ Մեղքը իրանն է և ոչ ոքի։ Սկսեց զանազան սպառնական և վիրավորական նամակներ գրել, իր հոդվածները ետ պահանջել, մինչև պ. Արծրունուն բոլորովին զզվեցրեց, նա էլ հոդվածները ետ ուղարկեց՝ իր հարաբերությունները կտրեց նրա հետ։ Այժմ ի՞նչ է շինում Կ. Պոլսում, ինչո՞վ է ապրում, ինձ հայտնի չէ։*

*Ծրարիս մեջ կգտնեք մի ցուցակ, որ գրված է նրա համար, որ պ. Թումանյանը գիտենա, թե ինչպես պետք է դասավորե նյութերը տպագրելու ժամանակ, բայց որովհետև ինձ դեռևս հայտնի չէ, թե գիրքը տպվելո՞ւ է, թե ոչ, այդ պատճառով չեմ ուղարկում*

*իմ մյուս հրահանգները, արդյո՞ք գրքի առաջին երեսի վրա ինչ պետք է գրված լինի և այլն։ Իհարկե, Դուք ինձ շուտով իմացում կտաք։*

*Ընդունեցեք իմ խորին հարգանքը՝*

Հ. Մելիք-Հակոբյան

## 42. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

7 նոյեմբերի, 1882 թ., Թիֆլիս

*Հարգելի բարեկամ*
*Մելքոն Կասպարիչ,*

*Իմ վերջին նամակի պատասխանը դեռ չեմ ստացել Ձեզանից։ Պարոն Սմբատ Շահազիզյանից մի քանի տեղեկություններ էի պահանջած, եթե պատահելու լինեք, հիշեցրեք, որ շտապի պատասխանել։ Տեղեկությունները այժմ «Մշակի» մեջ տպվող «Ղարաբաղի աստղագետը» վեպի հեղինակի մասին է, մինչև տպագրության վերջանալը հարկավոր էր պ. Շահազիզյանից պատասխան ստանալ։*

*«Կայծերը» տպվում է, հույս ունեմ, որ մինչև ներկա ամսի վերջը առաջին հատորի տպագրությունը վերջանա։ Ձեր ստորագրել տված բաժանորդների թվի համեմատ նույնքան օրինակներ կուղարկեմ Ձեզ։ «Կայծերը» տպվում է մի բարերարի հաշվով, որի անունը հետո կհայտնեմ։*

*Չգիտեմ, պ. պ. Թումանյանները դեռևս ցանկանո՞ւմ են «Ջալալեդդինը» և մյուս վեպիկները տպագրել տալ, թե ասեցին և այնպես էլ շուտ մոռացան։ Այդ հարցմունքը նրա համար է, որ մի քանի երիտասարդներ ցանկանում են «Ջալալեդդինը» այստեղ տպել տալ և մի քանի հազար օրինակներով ձրի տարածել, մանավանդ Տաճկաստանի հայերի մեջ, նրանց թմրած զգացմունքները զարթնեցնելու համար։ Բայց ես այդ պարոններին դեռ խոսք չեմ տվել, որովհետև Մոսկվայից լուր չունեմ։*

*«Խամսայի մելիքությունները» կոչված պատմական աշխատությունն առանձին գրքով լույս տեսավ, մի օրինակ ուղարկել էի Ձեզ։ «Ղարաբաղի աստղագետը» նույնպես առանձին գրքով լույս կտեսնի ներկա ամսում։ Այդ երկու գրքերը միմյանց հետ ներքին*

*կապ ունեն, վերաբերվում են Ղարաբաղի հայկական իշխանությունների, մեկը որպես պատմություն, մյուսը որպես վեպ։*

*Չեմ կարող առանց վրդովմունքի հիշել մեր անշնորհակալ հասարակության անտարբերությունը «Խամսայի մելիքությունները» գրքի վերաբերությամբ։ Այդ գիրքը իմ բոլոր աշխատությունների պսակը պիտի համարել. ես դրանով կենդանացրի մի վաղուց կորած և մոռացված պատմություն. ես դրանով ապացուցեցի, որ հայկական իշխանությունը շարունակվում էր մինչև ներկա դարը։ Դա մեծ բան է։ Բայց փոխանակ հասարակությունից խրախուսանք և քաջալերություն գտնելու, ամեն կողմից գանգատներ եմ լսում՝ գինը թանկ եք նշանակել։*

*Եվ այդ ասում են այն մարդիկ, որ իրանց քեֆերի համար հազարներ են վատնում։ Ոչ ոք չէ մտածում, որ հեղինակը ճանապարհորդել է, ծախքեր է արել, նյութեր է հավաքել, թե իր առողջությունը, թե իր կոպեկները վատնել է, մինչև կարողացել է մի այսպիսի պատմություն ի լույս ընծայել։*

*Ես մեր հասարակության սառնասրտության վրա ուշադրություն չեմ դարձնի, կշարունակեմ աշխատել, միայն ինձ շատ երջանիկ կհամարեի, եթե քանի կենդանի եմ, իմ բոլոր հեղինակությունները տպված տեսնեի։ Առողջությունս արդեն սկսել է քայքայվել, կուրծքիս հիվանդությունն այս աշուն ավելի սաստկացած է. կենսական ուժերս օրըստօրե սպառվում են... Ճանապարհորդությունը բավական կազդուրում է ինձ, բայց այս ամառ որքան ցանկացա դեպի Վանի կողմերը գնալ, չկարողացա, պատճառները կարող եք նախագուշակել...*

*Պ. Նիկողոսյանից ոչինչ տեղեկություն չունիմ, չգիտեմ ի՞նչ է շինում նա Կ. Պոլսում։ Այդ երիտասարդը ցավալի է, որ իր անխոհեմությամբ սաստիկ վայր ձգեց իրան։*

*Ընդունեցեք իմ խորին հարգանքը՝*

Հ. Մելիք-Հակոբյան

*Հ. Գ. Ես մտածում եմ, Ռուսաստանի գոնե գլխավոր հայաբնակ քաղաքներում ունենալ մի-մի մարդ, որ հանձն առնեն իմ գրքերը վաճառելու, իհարկե, ստանալով միևնույն ժամանակ որոշյալ տոկոս իրանց աշխատության համար։ Այդ նրա համար է, որ ես, ուղիղը խոստովանեմ Ձեզ, սաստիկ խղճահարվում եմ, երբ զանազան ծանոթներին և բարեկամներին ձանձրացնում եմ, հանձ-*

նելով նրանց իմ գրքերը վաճառելու։ Ինձ լավ հայտնի է, թե որքան դժվար է հայերի մեջ գիրք տարածել։ Բայց առանձին մարդիկ իրանց օգտի համար կաշխատեին տարածել։ Ես արդեն մի քանի քաղաքներում ունեմ այսպիսի մարդիկ, ցանկանում եմ, որ մեկն էլ Մոսկվայում լինի։ Դուք, հույս ունեմ, այնքան նեղություն հանձն կառնեք, որ գտնեք Մոսկվայում մի անձնավորություն, որին ես վստահանայի իմ գրքերը ուղարկելու։ Նա կախում կունենա Ձեզանից և Դուք գրքերը նրան հանձնելով, նրանից հաշիվ և փող կըստանայիք, հետո կուղարկեիք ինձ։

Եթե ամեն տեղ կանոնավոր կերպով իմ հրատարակությունները վաճառվեն, ես միջոց կունենամ իմ մնացած հեղինակությունները հետզհետե տպագրելու։ Գրավաճառների վրա հույս դնել չի կարելի, պետք է ամեն տեղ սեփական մարդիկ ունենալ։ Ես «Դավիթ Բեկի» երրորդ գրքի վաճառելու իրավունքը տվի տեղվույս «Կենտրոնական գրավաճառանոցին», բայց այն չկարողացավ անել, ինչ որ ես սպասում էի։ Իմ բարեկամներին, կրկնում եմ Ձեզ, չեմ ուզում ձանձրացնել, ավելի լավ է, որ գրքերից գոյացած գումարից մի որոշ մասը վճարեմ ուրիշ մարդիկների, քան թե դրան և նրան նեղություն պատճառեմ։

Հուսով եմ այդ մասին Ձեր կարծիքը կհայտնեք ինձ։

Ձեր՝ Հ. Մելիք-Հակոբյան:

## 43. ԱՎԱԳ ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆԻՆ

1882 թ., նոյեմբեր, Թիֆլիս

...Այդ բոլորը Ձեզ գրելու նպատակս այն է, որ կան շատ բաներ, որոնց վրա Դուք ուշադրություն չեք դարձնում։ Եվ շատ բնական է այդ. ես էլ Պարսկաստանում եղած ժամանակ ուշադրություն չէի դարձնում. բայց հիմա եմ զգում, թե որքան մեծ պաշար կարող էին դուրս բերել Պարսկաստանից, եթե ծուլություն չանեի և գործը այսօր-էգուց չգցեի...

Դուք, կարծեմ, իմ միտքը հասկացաք։ Օրըստօրե մեզանում ևս գրական վաստակը վարձատրվում է։ Ձեր աշխատությունները անգնահատելի չեն մնա, եթե մի որևիցե լուրջ, կապիտալնի գործ կարդյունաբերեք։ Ես Պարսկաստանում բայցի Ձեզանից ուրիշ ոչ ոքի չեմ ճանաչում, որ ընդունակ լիներ այս տեսակ պարապմունքների։ Աշխատեցեք հանգամանքներից օգուտ քաղել։

Տեր-Աստվածատրյանցի մասին ոչինչ լուր չունեմ, արդյոք նա եկա՞վ, հասա՞վ Թավրիզ, թե մնաց ճանապարհներում։ Գրեցեք, այդ մարդը խելքը գլխին հավաքե՞լ է, թե տակավին հին ցնորքների մեջն է գտնվում։

Շնորհակալ եմ Ձեր նախազգուշության համար, որով հայտնել էիք ինձ, մեր ընտանիքը տեղափոխել Սալմաստից։ Բայց զանազան հանգամանքներ առիթ են տալիս մտածելու, որ թե շեյխը և թե նրա խումբը այս տարի հազիվ թե շարժումներ կանեն դեպի Պարսկաստանի կողմերը, Այս պատճառով ես բարվոք համարեցի, որ մեր ընտանիքը դեռևս մնա Սալմաստում։

Ողջունեցեք իմ կողմից Ձեր հարգելի տիկնոջը։

Ընդունեցեք իմ հարգանքը՝

Հ. Մելիք-Հակոբյան

Հ. Գ. «Կայծերը» մամուլի տակ է, տպվում է. կուղարկեմ Ձեզ մի քանի օրինակ. ես այդ գրքի արտագրության համար մի բան Ձեզ պարտական եմ։

## 44. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիս, 1882 թվ., 6 նոյեմբ.

Հարգելի բարեկամ Մելքոն Կասպարիչ,

Ձեր վերջին երկու նամակները ստացել եմ, շնորհակալ եմ Ձեր բարեսրտության համար, որ դարձյալ Ձեր վրա եք ընդունում իմ գրքերը տարածելու ծանրությունը, որը Ձեր բազմահոգ զբաղմունքների մեջ հարկավ շատ զգալի պետք է լինի։

«Դավիթ Բեկի» առաջին հատորը Թիֆլիսում վաղուց սպառված է, ինձ մոտ նույնպես չի մնացել, ավելի լավ կանեք, որ մնացած օրինակները ետ ուղարկեք, որովհետև շատ պահանջողներ կան։

Մինչև Ձեր նամակի ստանալը արդեն փոստով ուղարկած էի Ձեր անունով 30 օրինակ «Դավիթ Բեկի» երկրորդ հատորից, մտածելով, որ առաջին հատորը բոլորը վաճառված է և առաջինի գնողները հարկավ երկրորդն էլ կառնեն։

«Խամսայի մելիքությունները» գրքից ուղարկեցի 50 օրինակ, այնքանը թեև Մոսկվայի համար շատ է, բայց կպահեք Ձեզ մոտ,

*կամաց-կամաց կծախվի։ Իմ մյուս աշխատություններից «Խենթը» չէ մնացել, իսկ «Փունջի» հատորներից կուղարկեմ յուրաքանչյուրից 10 օրինակ։ Իսկ «Ղարաբաղի աստղագետը» առանձին գրքով լույս կտեսնի մի շաբաթից հետո։ Չգիտեմ ի՞նչ տպավորություն գործեց Մոսկվայի ընթերցողների վրա այդ վեպը։ Դրանից առաջին անգամ կուղարկեմ Ձեզ 10 օրինակ և ոչ ավելի։*

*Ձեր գանգատը այստեղի Հայոց տպագրական ընկերության անհոգության վերաբերությամբ բոլորովին իրավացի է։ Երեկ պ. Թավադյանցին տեսա, որը Ընկերության գանձապահն է, նա ասաց, թե Ձեր նամակների պատասխանը ժամանակին գրել են, և զարմանում է, թե ինչպե՞ս է պատահել, որ չեք ստացել, և խոստացավ, որ նորից նամակ պիտի գրեն Ձեզ։*

*Տեր-Իսրայելյանցը «Կենտրոնական գրավաճառանոցի» գործակատարներից մեկն է, կարծեմ գրավաճառանոցի ընկերության մեջ մաս էլ ունի, նրա գրությունների վրա կարող եք վստահանալ։*

*Պարոն Արասխանյանցի հետ հաճախ տեսնվում եմ, երբեմն պ. Արծրունու մոտ ճաշի է գալիս, ես էլ այնտեղ եմ լինում։ Շատ պատվական երիտասարդ է. նա Թիֆլիսում հաջողություն կգտնե, խոստացել են այստեղի բանկերից մեկի մեջ պաշտոն տալ։ Բացի դրանից, դիտավորություն ունի մի շարք դասախոսություններ կարդալ իր մասնագիտությունից. այդ ավելի կնպաստե նրա առաջադիմությանը։*

*Պ. Նիկողոսյանի մասին բավական ժամանակ է ոչինչ տեղեկություն չունեմ։ Նա իր աշխատությունների մասին մի անգամ էլ ինձ գրած էր, բայց ես ի՞նչ կարող էի անել. հայկական առածը ասում է. «Քաչալը դեղ գիտենա, առաջ իր գլխին կանե...»։*

*Պարոն Շահազիզյանցի նամակը ստացել եմ, շնորհակալ եմ նրա ուշադրության համար, շուտով պատասխանը կգրեմ։*

*Ընդունեցեք իմ խորին հարգանքը՝*

Հ. Մելիք-Հակոբյան

## 45. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

**24 հունվարի, 1883 ամ., Թիֆլիս**

*Հարգելի բարեկամ*
*Հ. Առաքելյան,*

*Ներեցեք, որ մի գործի առիթով ստիպված եմ Ձեզ ձանձրույթ պատճառել։ Ես ուղարկել էի Կարապետ վարդապետ Այվազյանի վրա իմ գրքերից՝ Ձեր կողմերում տարածելու համար։ Այս օրերում նամակ ստացա, որ Հարգելի հայր սուրբը թողնում է իր վիճակը և պիտի տեղափոխվի մի այլ տեղ։ Թեև նա գրում է ինձ, որ գրքերի մասին պարտուպատշաճ անօրինություն կանե, որ նրանք չկորչեն, և վաճառվեն, բայց ո՞վ է իմանում, նրա բացակայությունից հետո արդյոք կկատարվի՞ նրա կարգադրությունը, թե ոչ։*

*Այդ պատճառով խնդրում եմ Ձեզ, որ Դուք ևս վերահասություն գործեք, քանի որ դեռ հայր սուրբը Շուշուց չէ հեռացել, գրքերի վերաբերությամբ մի այնպիսի կարգադրություն անեք, որ նրանք նպատակի հասնեին։ Ես կարծում եմ, եթե գրքերը Ձեր գիտությամբ հանձնվեին վաճառողներին, ավելի ապահով դրության մեջ կլինեին։ Խնդրեմ այդ մասին խոսեք հայր սուրբի հետ։*

*Ձեզ մոտ «Փունջի» հատորներ կային, նրանց մասին ևս խնդրեմ մի կարգադրություն անել, որ չմնան, այլ վաճառվեն։ Հայր սուրբի վրա ուղարկած գրքերը՝ իմ «Ղարաբաղի աստղագետը» և «Խամսայի մելիքությունները» կոչված աշխատություններից էին։ Հատկապես Ղարաբաղին վերաբերելով, իմ ցանկությունն էր, որ այդ գրքերը Ձեր կողմերում որքան կարելի է մեծ քանակությամբ տարածվեին, և հայր սուրբի համար հնարավոր էր, իբրև վիճակի առաջնորդի, գյուղերում ևս տարածել քահանաների միջ-*

նորոգությամբ։ Յուրաքանչյուր գյուղում եթե 2—3 հատ գտնվեր, ամբողջ գյուղը կկարդար։

Ի՞նչ եք շինում այդտեղ, պ. Արծրունին ինձ ասաց, որ Դուք հիվանդ եք եղել, հիմա ինչպե՞ս է Ձեր առողջությունը։

Ձեր մի հոդվածը, որի մեջ պաշտպանություն կար Հայր սուրբի վերաբերությամբ, շտապեցայ, պատճառը Դուք ինքներդ կիմանաք, երբ որ այստեղ կլինեք։ Հայր սուրբը ինձ գրած էր, որ աշխատեմ տպել տալու, բայց իմ ջանքը ապարդյուն եղավ, պ. Արծրունու մերժելու փաստերը բավական իրավացի էին։ Այդ մասին հայր սուրբին ոչինչ չասեք։

Ընդունեցեք իմ հարգանքը՝

Հ. Մելիք-Հակոբյան

## 46. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

**Թիֆլիս, 1883 թվ., 1 փետրվարի**

Հարգելի բարեկամ
Մելքոն Կասպարիչ,

Ձեր նամակը ստացա. «Ոսկի աքաղաղից», որպես պահանջել եք, մի քանի հատ դարձյալ կուղարկեմ Ձեզ։

«Կայծերի» վերջին թերթը այսօր կտպվի։ Աստված ազատե այստեղի տպարաններից, բավական ժամանակ ուշացրին։ Մինչև ներկա ամսվա վերջը գիրքը պատրաստ կլինի։

«Խաչագողի հիշատակարանը» նույնպես առանձին գրքով տպվում է։ Ցանկալի է գիտենալ, թե Մոսկվայի ընթերցողների վրա ի՞նչ տպավորություն է գործում այս աշխատությունը։

Ներեցեք հարգելի բարեկամ, որ ես խիստ սակավ անգամ եմ նամակներ գրում Ձեզ։ Եթե Ձեզ հայտնի լինեին իմ ծանր և անընդհատ աշխատությունները, Դուք ավելի ներողամիտ կլինեք դեպի մի մարդ, որ ամենևին օգնական չունի և ստիպված է ամեն գործ իր ձեռքով կատարել։

Ընդունեցեք իմ խորին հարգանքը՝

Հ. Մելիք-Հակոբյան

Ողջունեցեք, խնդրեմ պ. Շահազիզյանին, ես նրան էլ պարտական եմ. նրա վերջին նամակի պատասխանը դեռ չեմ գրել։

## 47. ՄԽԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիս, 26 փետրվարի, 1883 թվ.

*Հարգելի բարեկամ,*

*Փոստով ուղարկվեցավ Ձեր անվամբ գրքերի երկու կապոց. 70 օրինակ «Կայծերի» առաջին հատորից, 50 օրինակ «Ոսկի աքաղաղ»։*

*«Կայծերից» նվերներ են ուղարկված հետևյալ անձինքներին մի-մի հատ.*

| | |
|---|---|
| *1. Ուսանողների գրադարանին,* | |
| *2. Մկրտիչ Էմինին,* | *Գրքերի* |
| *3. Ս. Շահազիզյանին,* | *վրա իմ* |
| *4. Աբելյանցին,* | *մակագրությունը* |
| *5. Ձեզ։* | *կա* |

*Հուսով եմ, որ Դուք կհավանեք «Կայծերի» թե գիրքը և թե տպագրության մաքրությունը։ Այդ գիրքը այստեղ մեծ հետաքրքրությամբ կարդացվում է և բավական վաճառվում է։*

*Արդեն պատրաստ է «Խաչագողի հիշատակարանի» I և II մասները առանձին գրքով, իսկ այդ աշխատության III և IV մասները նույնպես առանձին գրքով կարտատպվի «Մշակից»։ «Կայծերի» II հատորը կտպվի այս տարի նույնպես պ. Մելիք-Հայկազյանի ծախքով։*

*Ընդունեցեք իմ խորին հարգանքը՝*

Հ. Մելիք-Հակոբյան

## 48. ՄԽԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիս, 3 մայիսի, 1883 թվ.

*Հարգելի բարեկամ,*

*Ձեր ուղարկած փողերը, թե վաճառված գրքերից և թե «Կայծերի» բաժանորդների մասին, բոլորը ստացել եմ։ Պարոն Արծրունին նույնպես ստացել է «Մշակի» բաժանորդագինը։ Ներեցեք, որ այսքան ժամանակ չպատասխանեցինք։*

*Շտապում եմ հայտնել Ձեզ մի շատ տխուր լուր. ամսույս 1-ին պ. Արծրունու բնակարանը և «Մշակի» խմբագրատունը խուզարկության ենթարկվեցան, որը տևեց երեք օր։ Խուզարկողներն*

էին, բացի ոստիկանությունից, նահանգական դատարանի պրոկուրորը և մի ժանդարմի գնդապետ։ Բոլոր թղթերը, ինչ որ կարողացան գտնել, թե պ. Արծրունու բնակարանի մեջ և թե խմբագրատան մեջ, գրավեցին։

Հայտնի չէ, թե ի՞նչ նպատակով կատարվեցավ այդ խուզարկությունը, անպատճառ մատնության գործ է, և գուցե մի որևիցե հայի մատը խառնված է այդ գործի մեջ։ Բայց ես վստահ եմ, որ տարած թղթերի մեջ չեն կարող գտնել այնպիսինները, որ պ. Արծրունու անձնավորությունը կասկածելի դարձնեին։ Ես իբրև նրա շատ մոտ բարեկամ, գիտեմ, որ նա երբեք կասկածավոր անձանց հետ հարաբերություններ չէ ունեցել, նրա գործունեությունը եղել է բուն ազգային, և դրա մեջ ևս կառավարության որոշած սահմաններից չէ անցել։ Այն բոլորը, ինչ որ կատարել է նա Տաճկաստանի հայերի վերաբերությամբ, կառավարությունից ծածուկ չէին։

Չգիտեմ ինչով կվերջանա այդ փորձանքը. չգիտեմ նաև, թե արդյոք «Մշակի» հրատարակությունը կխափանե՞ն, թե ոչ։ Բայց ինչ էլ որ լինի, «Մշակը» գուցե մի քանի շաբաթ հրատարակվել չէ կարող, որովհետև խմբագրատան բոլոր նյութերը տարել են, մի թղթի պատառ անգամ չեն թողել։

Այժմ սկսել են սաստիկ ուշադրություն դարձնել հայերի վրա։ Երևանում 22 նշանավոր երիտասարդների տներում խուզարկություն է կատարվել. բոլորին էլ ոստիկանության հսկողության ներքո են դրել, մեկը բանտարկված է։ Շարժառիթները չնչին են, միայն լուրից ուղտ են շինում և չնչին գործերին քաղաքական կերպարանք տալիս։ «Պսակ» լրագիրը խափանված է։

Պարոն Արծրունին կալանավորված չէ։ Մեզանից ամեն մեկը ժամեժամ սպասում է, որ ժանդարմները կմտնեն իր բնակարանը։ Ասում են, մի քանի հայոց տներում ևս պետք է խուզարկություններ լինեն։ Ինչպե՞ս կվերջանա այդ բոլորը, դժվար է նախագուշակել։ Սաստիկ հուսահատության մեջ ենք։

Այստեղ մի խումբ, որի պարագլուխն է «Մեղուի» խմբագիրը, աշխատում են, որ Մակարի կաթողիկոս լինելը հաջողացնեն։ Մի քանի խմբեր ևս Ներսեսի համար են աշխատում։ Հայտնի չէ, թե կառավարությունը որ աստիճանի համարում ունի Մակարի վրա։ Բայց նրա կուսակիցները ամեն տեղ տարածում են, թե նա կառավարության կանդիդատն է։ Եթե Մակարի կաթողիկոս ընտրվելը հաջողեցնեն (որին ես չեմ հավատում) այն ժամանակ

էջմիածինը կատարյալ ավազականոց կդառնա. Մանկունուց ավելի վատ մարդիկ կմտնեն այնտեղ։

Կաթողիկոսական աթոռին արժանի մենք միայն մեկ մարդ ունենք, և դա Ներսեսն է։ Ամեն մի ազնիվ Հայի պարտքն է նրա համար աշխատել։

Ընդունեցեք իմ խորին հարգանքը՝

Հ. Մելիք-Հակոբյան

## 49. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիս, 17 մայիսի. 1883 ամ.

*Հարգելի բարեկամ,*

*Անցյալ նամակովս հայտնած էի Ձեզ, որ «Մշակի» խմբագրության մեջ խուզարկություն կատարվեցավ, այժմ շտապում եմ հաղորդել Ձեզ, որ ներկա ամսի 13-ին նույնպես խուզարկություն կատարվեցավ իմ բնակարանի մեջ։ Բոլոր թղթերս, մինչև անգամ դեռ չտպված գրավոր աշխատությունները, բոլորը գրավեցին։ Եվ այժմ գտնվում եմ ժանդարմների վարչության հսկողության ներքո, ինձ արգելված է Թիֆլիսից հեռանալ։*

*Դեռ հայտնի չէ, թե ինչով կվերջանան այդ խառնությունները։ Միայն այսքանը հայտնի է, որ սաստիկ նշանակություն են տալիս գործին, որ ինքնըստինքյան շատ հասարակ բան է։*

*Թե ես, թե իմ համախոհները մինչև այսօր Ռուսաց կառավարության դեմ ոչինչ հանցավոր նպատակներ չենք ունեցել և երբեք ռուս նիհիլիստների հետ հարաբերություններ չենք ունեցել։ Մեր գործունեության նպատակը, մեր ցանկությունները խիստ համեստ են եղել և մեր ազգային պետքերի սահմանից այն կողմը չեն անցել։ Հայկական հարցը ծագելուց հետո մենք, իրավ է, աշխատել ենք տաճկահայերի ցավալի դրության բարվոքման մասին, աշխատել ենք Բեռլինի 61-րդ հոդվածի իրագործման մասին, բայց մեր աշխատությունները կատարվել են հրապարակաբար, մենք գաղտնի ոչինչ չենք ունեցել։*

*Իսկ այժմ երևի զանազան մատնիչներ այստեղի կառավարությանը մոլորության մեջ են ձգել, իբր թե գտնվում են զանազան գաղտնի ընկերություններ, թե այստեղ Անդրկովկասում և թե Տաճկաստանում, որոնք ծածուկ կապեր ունեն միմյանց հետ, և*

ամենայն ջանքերով աշխատում են վերականգնել Հայոց Հին Թագավորությունը և այլն։ Տեսնո՞ւմ եք, որքան Հրեշավոր կերպարանք են տվել գործին։ Այս տեսակ երևակայական ընկերություններ մենք երբեք չենք ունեցել և այժմ չունենք։ Եվ բոլոր Եվրոպայից ստորագրված 61-րդ Հոդվածի իրագործումը պահանջելու Համար Հարկ չկար գաղտնի ընկերություններ ստեղծել։

Ես չեմ կարծում, որ իմ բնակարանից տարած թղթերի մեջ գտնվեին այնպիսիները, որոնք որևիցե Հանցանք դնեին իմ վրա, իսկ իմ մինչև այսօր լույս ընծայած գրքերը բոլորը տպագրվել են ցենզուրայի թույլտվությամբ։ Ես ինչո՞վ եմ մեղավոր, որ կառավարության տրամադրությունը Հայկական Հարցի վերաբերությամբ այժմ, ինչպես երևում է, փոխվել է։ Թող Հրամայեն, որ ես այսուհետև չգրեմ։ Ես ուրախ կլինեի, եթե այսքանով վերջանար գործը, բայց վախենում եմ, որ Հեռացնեն Ռուսաստանից, որովհետև ես օտար պետության Հպատակ լինելով, բանտարկել կամ աքսորել չեն կարող։

Ես նպատակ ունեի Հունիսի 1-ին Հեռանալ Թիֆլիսից և գնալ Տաճկաց Հայաստանում ճանապարհորդելու, բայց այդ անբախտությունը կապեց ինձ Թիֆլիսի Հետ, և ես ստիպված պիտի լինեմ մնալ այստեղ և սպասել մինչև քննությունների վերջանալը։

Վատ ժամանակների մեջ ենք ապրում. «լուից ուղտ են շինում» և մարդկանց չարչարում են։ Խնդրեմ Ձեր նամակներում զգույշ լինեք, շատ Հավանական է, որ իմ անունով եկած նամակները կբաց անեն։ Ձեր առաջվա նամակները, թեև բոլորովին անմեղ էին, այսուամենայնիվ ես ոչնչացրի։

Ձեր՝ Հ. Մելիք-Հակոբյան

## 50. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիս, 2 հունիսի, 1883 ամի

Հարգելի բարեկամ,

Վերջին նամակը ստացա, շնորհակալ եմ Ձեր ցավակցության Համար։ «Մշակը» դեռ դադարեցված չէ, և Հույս ունենք, որ չդադարեցնեն։ Միայն «Մշակի» վերաբերությամբ սաստիկ խստություններ են գործ դրվում։ Ցենզորը խմբագրին պարտավորեցրել է, որ յուրաքանչյուր Համարի մեջ տպված, թե անստորագիր, և

թե կեղծ անուններով ստորագրված բոլոր հոդվածների, թղթակցությունների և մինչև անգամ լուրերի հեղինակների անունները ամեն անգամ պետք է հայտնել ցենզորին։ Մինչև այսօր խմբագիրը միշտ գաղտնի էր պահում իր աշխատակիցների անունները և ամեն պատասխանատվություն իր վրա էր առնում, իսկ այժմ ստիպում են հայտնել բոլորի անունները։ Դրա հետևանքը այն կլինի, որ մեր աշխատակիցները այսուհետև երկյուղ կկրեն և կդադարեն թղթակցություններ ուղարկել կամ լուրեր հաղորդել։ Լրագիրը կվնասվի։

Թե պ. Արծրունու գործը և թե իմ գործը դեռևս քննվում է. ես չեմ կարծում, որ մեր մոտի տարած թղթերի միջից գտնեն այնպիսի բաներ, որոնք որևէ հանցանք դնեին մեզ վրա։ Մենք կասկածավոր թղթեր երբեք չենք ունեցել և կասկածավոր հասարակությունների հետ հարաբերություն ունենալուց միշտ հեռու ենք պահել մեզ։ Իսկ որքան գործել ենք մեր բուն ազգային պետքերի մասին, դա մեզ թույլ տված է եղել կառավարությունից։ Նրա հակառակ որևէ գաղտնի նպատակ կամ հանցավոր ցանկություններ չենք ունեցել։ Ուրեմն այլևս ի՞նչ կարող էին գտնել, որով դատապարտեին մեզ։ Արդարությունը վերջ ի վերջո հաղթող կհանդիսանա, և մատնիչների երեսը կսևանա։

Դուք, իհարկե, լսած կլինեք, որ Երևանում ևս մի քանի նշանավոր երիտասարդների մոտ խուզարկություններ են արել. սկզբում մի քանի օրով կալանավորել են, հետո դրամական երաշխավորություն են առել ու բաց թողել։ Նրանց քննությունն էլ դեռևս վերջացած չէ. տեղային գուբերնատորը նրանց դեմ սաստիկ ինտրիգա է անում։ Վերջը ի՞նչ կլինի, հայտնի չէ։

Վատ ժամանակներում ենք ապրում, ամենաարդար մարդը կարող է կասկածանքի ենթարկվել և տարիներով տանջվել։ Չգիտենք, ինչո՞վ կվերջանա այդ բոլորը։ Դրությունները սաստիկ հուսահատական է։ Ժամեժամ սպասում ենք նորանոր անախորժությունների. աշխատելու և գործելու սիրտ չէ մնացել։ Անորոշ դրությունը սպանում է մեզ։ Ցավում եմ, որ մի այսպիսի ժամանակ, երբ երկու նշանավոր ազգային հարցեր ունենք վճռելու (կաթողիկոսական և հայկական հարցը), մենք ստիպված ենք առժամանակ լռել։ Մեր հակառակորդները խոսում են, գրում են, իսկ մենք պատասխանել չենք կարողանում։

*Ես այժմ ժանդարմերիայի հսկողության ներքո եմ գտնվում։ Ինձ արգելված է Թիֆլիսից հեռանալ. երբ կազատեն ինձ, դիտավորություն ունեմ առժամանակ թողնել Թիֆլիսը։ Բայց ուր գնալիքս և ինչով գնալիքս չգիտեմ։*

*Այժմյան հանգամանքներում «Կայծերի» երկրորդ հատորը հրատարակել չեմ կարող, պետք է սպասեմ հարմար ժամանակի։ Գործերը ինչ ընթացք որ ստանալու լինեն, կհաղորդեմ Ձեզ։*

*Ընդունեցեք իմ խորին հարգանքը՝*

Հ. Մելիք-Հակոբյան

*Մակարը, բացի էջմիածնից ստացած փողերից, 2000 ռուբլի Քիշինևի կոնսիստորիայից է ստացել։*

## 51. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Թիֆլիս, 20 հունիսի, 1883 ամի

*Հարգելի բարեկամ,*

*Ձեր նամակը ստացա, շնորհակալ եմ Ձեր ցավակցության համար։ Դուք հետաքրքրվում եք այստեղ կատարված անախորժ անցքերով, կհաղորդեմ Ձեզ, որքան ներում է նամակիս անձկությունը։*

*Կ. Պոլսի լրագրները խիստ սխալ տեղեկություններ են տալիս, երբ թե ռուսաց կառավարությունը հայերի մեջ նիհիլիստների հետքեր է որոնում, այս տեսակ անձնավորություններ, Ձեզ պետք է բավական հայտնի լինի, որ հայերի մեջ չկան։ Միայն վերջին ժամանակներում կառավարությունը սկսեց կասկածանքով վերաբերվել դեպի հայ գործիչների ամենահամեստ ցանկությունները, որոնք բովանդակվում էին նրանում միայն, որ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը իրագործվի, և տաճկահայերի թշվառ դրությունը փոքրիշատե բարվոքվի։ Կառավարությանը մոլորության մեջ ձգողները եղել են մի քանի բախտախնդիր պաշտոնատարներ, որոնք իրանց իշխանությանը ծառայություն ցույց տալու համար, սկսել են երևակայական ցնորքներ ստեղծել, երբ թե Անգլիկովկասում գոյություն ունի մի «Մանուկ Հայաստան», որը կապեր ունի Տաճկաստանի հայոց գաղտնի ընկերությունների հետ, որոնք բոլորը միասին ձգտում են ընդհանուր ապստամբություն հարուցանել Հայաստանում և այլն։ Այդ բոլորը ավելի քան ծիծաղելի է։*

Այդ առիթով Երևանում զանազան անձանց մոտ կատարվեցան խուզարկություններ, և նույն առիթով խուզարկություններ եղան Թիֆլիսում, թե «Մշակի» խմբագրատան մեջ և թե իմ բնակարանում։ Բայց կարող եմ ապահովացնել Ձեզ, որ ոչ մի տեղում ոչինչ չէ գտնվել, որով արդարացնեին այն զրպարտությունները, որ ստեղծել էին հայ գործիչների վերաբերությամբ։ «Մշակի» խմբագրատանից տարած ահագին քանակությամբ թղթերը երեկ վերադարձրին, բայց իմ բնակարանից տարած թղթերը դեռ չեն վերադարձրել։ Հույս ունեմ շուտով ստանալ։ Թե ես և թե պ. Արծրունին տակավին գտնվում ենք ժանդարմայի վարչության հսկողության ներքո։ Շատ հավանական է, որ շուտով կազատեն։

Գործի մեջ մատնություններ երևում են, բայց ո՞ր կողմից, դեռ հայտնի չէ։ Թեև ժողովրդի մեջ մեղվականների կամ Մակար եպիսկոպոսի մասին կարծիքներ են պտտվում, բայց ավելի հավանական է, որ հրամանը շատ վերևից է եկել. կառավարությունը ցանկացել է մի կողմից տեղեկանալ, թե մինչև ո՞ր սահմանն է հասնում հայ երիտասարդության «չափազանց» եռանդը, մյուս կողմից, կամեցել է փոքր-ինչ շողոքորթել Թուրքիային, երբ թե խեղդում է ամեն մի վնասակար ձգտում հայկական հարցի առիթով, այն հարցի, որ ինքն ստեղծեց Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածով։

«Մշակը» դադարեցրած չէ, և ամենևին առիթ չունեն, որ դադարեցնեն, միայն ցենզուրայի կողմից այժմ առհասարակ բոլոր պարբերական հրատարակությունների վրա խստություններ են գործ դնում. խմբագիրներին պարտավորացրել են, որ յուրաքանչյուր համարում տպված բոլոր հոդվածների, մինչև անգամ լուրերի հեղինակների անունները հայտնեն։

Երևում է, որ Հայկունու կրիտիկաները, ինչպես այստեղ, այնտեղ էլ գլվանք են պատճառել։ Բայց հանգամանքները ստիպում են նրա մատնություններին առժամանակ լռությամբ համբերել։ Ես Ձեզ հետ բաժանում եմ այն միտքը, որ գրական այսպիսի վիճաբանությունների ժամանակ բարձր ուսում ստացած երիտասարդությունը պետք է դատավոր հանդիսանա, բայց նրանք ևս լռում են, ասպարեզը մնում է հայկունիներին։

Ընդունեցեք իմ խորին հարգանքը

Հ. Մելիք-Հակոբյան

## 52. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիս, 26 հունիսի, 1883 հ.տ.

*Հարգելի բարեկամ,*

*Իմ միճակը ավելի ծանրացավ, քանի օր է, որ արդեն տնային բանտարկության եմ ենթարկված, բնակարանիցս դուրս գալու իրավունք չունեմ, տան դուռը պահապան են դրել։*

*Այս դրության մեջ պետք է մնամ մինչև քննությունների վերջանալը, բայց քննությունները կարող են տարիներ տևել։*

*Թեև մինչև այսօր ոչ մի մեղադրանք ապացուցված չէ իմ վերաբերությամբ, այսուամենայնիվ խստություններ են գործ դնում։ Իմ բնակարանից տարած թղթերի մեջ գտել են մի քանի բոլորովին աննշան և անմեղ բաներ, որոնց մեծ նշանակություն են տալիս։ Թեև վերջը, երբ գործը այստեղի պրոկուրորի ձեռքը կհասնի, այն ժամանակ կհայտնվի արդարությունը, բայց մինչև այն ժամանակը բավական տանջանքներ պետք է կրեմ։ Ի՞նչ պետք է արած, կհամբերենք։*

*Իմ թղթերը, որ տարել էին իմ բնակարանից, տակավին չեն վերադարձրել, բայց պ. Արծրունու բնակարանից տարած թղթերը վերադարձրին, պահել են երկու թուղթ միայն, բայց շատ անմեղ բաներ են։*

*Զանազան քաղաքներում հայ երիտասարդների տներում խուզարկություններ են կատարվում, բայց ամեն տեղ ոչինչ չեն գտնում։ Չգիտեմ ինչո՞վ կվերջանա այդ բոլորը։ Զարմանալին այն է, որ խուզարկությունները կատարվում են նրանց մոտ միայն, որոնք «Մշակի» թղթակից են եղել։*

*Այնքան վշտացած եմ, որ եթե ազատվելու լինեմ, վճռել եմ այլևս այստեղ չմնալ, բավական տանջվեցա։ Մեր հասարակության սառնասրտությունը ավելի սպանում է ինձ, ոչ մի կողմից կարեկցություն չեմ գտնում։ Մեր ժողովրդի ապերախտությունը դեպի իր մշակները Ձեզ բավական հայտնի է։*

*Խնդրեմ եթե ինձ նամակ գրելու լինեք, ուղղակի իմ անունով չուղարկեք, գրեցեք մասնավոր անձանց ծրարների մեջ։*

*Ընդունեցեք իմ հարգանքը՝*

Հ. Մելիք-Հակոբյան

Տնային բանտարկությունը ոչ թե նրա համար է, որ ինձ վրա որևէ հանցանք է ապացուցված, այլ նախազգուշության համար է, որ քաղաքից չհեռանամ։

## 53. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Թիֆլիս, 11 հուլիսի, 1883 ամի

*Հարգելի բարեկամ,*

*Ստացա Ձեր հունիսի 30-ի գրած նամակը։ Թավրիզում տպարան հիմնելու և մի ամսագիր հրատարակելու Ձեր գեղեցիկ նպատակը շատ ուրախացնում է ինձ։ Հաջողություն եմ ցանկանում։ Բայց մի այսպիսի ձեռնարկություն պահանջում է, որ Դուք երկար ժամանակ կապված լինեք Թավրիզի հետ, որպեսզի գործը հաստատուն հիմք ստանա։ Իսկ պ. Միրզոյանցի նամակում գրած էիք, որ մի երկու տարի միայն ցանկություն ունեք Թավրիզում մնալու։ Ես կարծում եմ, որ դա շատ փոքր ժամանակ է, Ձեր բացակայությունից հետո, Դուք հազիվ թե Ձեր սկսած գործին շարունակող կունենաք։*

*Ես համոզված եմ, եթե Դուք վճռեք Թավրիզում մնալ, այդտեղ առաջին ղեկավարող անձն կլինեք և գործելու ընդարձակ ասպարեզ կունենաք։ Այժմյան անախորժությունները կանցնեն. դրանք արդյունք են այն հին ինտրիգաների, որ մի քանի ողորմելի անձինք Բիշոբրատովին հաճոյանալու համար գործ դրեցին Ձեր հանգուցյալ հոր դեմ։*

*Առաջարկում եք աշխատակցել Ձեր ամսագրին, ցավում եմ, որ այժմ որոշակի ոչինչ պատասխանել Ձեզ չեմ կարող, որովհետև իմ դրությունը նույնպես անորոշ է, չգիտեմ ինչո՞վ կվերջանա իմ գործը։ Իմ վիճակը ավելի ծանրացավ, տնային բանտարկության ենթարկեցին ինձ, երկու ամբողջ շաբաթ իմ բնակարանի դռան մոտ երկու պահապան էր դրված։ Վերջը պարսից հյուպատոսը երաշխավոր եղավ 3000 ռուբլ դրավականով, և ազատ թողեցին ինձ։ Բայց դրանով գործը չէ վերջանում, այդ միայն նախազգուշություն է, որ ես Թիֆլիսից չհեռանամ, մինչև քննությունները վերջանան։ Այժմ ուշադրություն են դարձնում իմ մինչև անգամ ցենզուրայի թույլտվությամբ ի լույս ընծայած գրքերի վրա։ Ասում են, թե Ս. Պետերբուրգից առանձին հանձնաժողով է*

*ուղարկվում թե Երևանի և թե Թիֆլիսի գործերը քննելու համար։ Թեև ես հավատացած եմ, որ ոչինչ չի դուրս գա, այսուամենայնիվ, շատերը պետք է տանջվեն, մինչև արդարությունը հաղթող կհանդիսանա։*

*Գաբոն հոժարվում է Թավրիզ գալու, բայց պահանջում է, որ տեսչության պաշտոնն էլ իրան հանձնեն. այդ մասին գրել եմ պ. Ցեներչյանին։ Ֆրանսերեն լեզվի դասատվության համար կուղարկենք պ. Նավասարդյանցին, այդ երիտասարդին, կարծեմ, Դուք չեք ճանաչում, թիֆլիսեցի է, ուսել է Ֆրանսիայում և երեք տարի Զվիցերիայում է մնացել։ Բացի ֆրանսերենից գիտե գերմաներեն և մասնավորապես անգլիերեն։ Պարոն Սիմոն Հախումյանցը անհարմար է այդտեղի դպրոցի համար, խնդիր եք առաջարկել. նա թե բարոյապես և թե մտավորապես հիվանդ մարդ է. զանազան հիմարություններ կանի և բոլորին կզզվեցնի։ Դուք գիտեք Շուշիի դպրոցի հետ կամ Կարսում ինչպես վարվեցավ։*

*Հոգաբարձությունը այստեղից երեք վարժապետներ հրավիրելու համար նշանակել է 2000 ռուբլ շատ, շատ փոքր է, ես գրեցի, որ 3000 ռուբլ հազիվ կբավականանա, մանավանդ, որ մեկը տեսչի պաշտոն պետք է կատարե։*

*Ընդունեցեք իմ հարգանքը՝*

Հ. Մելիք-Հակոբյան

## 54. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիս, 12 հուլիսի, 1883 ամ.

*Հարգելի բարեկամ,*

*Անցյալ նամակումս Ձեզ անախորժ տեղեկություններ էի հաղորդած, այժմ մասամբ կուրախացնեմ Ձեզ, ամսային բանտարկության մեջ մնացի 10 օր միայն, հետո պարսից հյուպատոսը երաշխավոր եղավ 3000 ռուբլու պատասխանատվությամբ և ինձ ազատ թողեցին, բայց տակավին Թիֆլիսից հեռանալու իրավունք չունեմ, մինչև գործերի քննությունը վերջանա։*

*Պարոն Արծրունին սաստիկ հիվանդ էր, կուրծքից արյուն էր գնում, այժմ արյունը դադարել է և առողջանալու վրա է. վտանգը անցավ։ Վերջին ժամանակների անախորժ հանգամանքները նրա*

վրա սաստիկ ներգործություն արեցին, և նա դիմանալ չկարողացավ։

Պարոն Արեւյանը ինձ ասաց, որ Դուք մի բանի մասին անհանգիստ եք. միամիտ կացեք, ինձ մոտ Ձեր կողմերից եկած ոչինչ չեն գտել։

Խնդրում եմ, եթե գրքերի վաճառքից փոքրիշատե փող է գոյացել, ուղարկեք ինձ. ծախքերի կարոտություն ունեմ։ Գիտեմ, որ վաճառածները նիսիա տված կլինեք, այն էլ հայտնի է, որ մեր հայերը որքան ծույլ են իրանց պարտքերը վճարելում, այսուամենայնիվ աշխատեցեք, որքան հնար է հավաքել ապառիկները։

«Մեղուի» մեջ մի շարք կեղտոտ կրիտիկաներ տպվեցան իմ աշխատությունների մասին, որոնց մեջ մինչև անգամ ուղղակի մատնություններ կային։ Շատ պատասխաններ են ստացվել «Մշակի» խմբագրատան մեջ հիշյալ կրիտիկաների մասին։ Ժամանակը վատ է, դեռևս լռում ենք։

Ընդունեցեք իմ խորին հարգանքը՝

Հ. Մելիք-Հակոբյան

## 55. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիս, 27 սեպտ., 1883 ամ.

Հարգելի բարեկամ,

Ձեր փոստով ուղարկած հիսուն ռուբլին ստացած եմ ի հաշիվ վաճառված գրքերի։ Ընդունեցեք իմ շնորհակալությունը։

Ձեզ հայտնի գործը լավ դրության մեջ է. թե ես և թե պ. Արծրունին արդարացված ենք։ Երևանի 32 հոգի մեղադրվածներից կպատժվեն երեք անձինք միայն, թեթև պատժով։ Բայց թե ես և թե պ. Արծրունին տակավին գտնվում ենք երաշխավորության և հսկողության ներքո, որովհետև գործը ուղարկված է Ս. Պետերբուրգ, այնտեղ պետք է տան վերջնական վճիռը։ Իմ թղթերը դեռ չեն վերադարձրել։

Այս տարի ես շատ վնասներ կրեցի։ Մշտապես կաշկանդված լինելով, ոչինչ գրել և ոչինչ հրատարակել չկարողացա։ Նույն դրությունը դեռևս շարունակվում է։ Երևակայեցեք մի գրողի վիճակը, որ պետք է ապրե գրական աշխատանքով։

*Այս տեսակ դժվարություններ շատ ենք անց կացրել, կհամբերենք և կսպասենք մինչև վերջը։*

*Ընդունեցեք իմ հարգանքը՝*

Հ. Մելիք-Հակոբյան

## 56. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

18 դեկտեմ., 1883 ամ., Թիֆլիս

*Հարգելի բարեկամ*
*Հ. Առաքելյան,*

*Ձեր քույրը Ձեր նամակը բավական ուշ հասցրեց ինձ, ես էլ մի քանի օր հետաձգեցի պատասխանել, գուցե Ձեր խնդրածը կարողանայի գտնել, այդ պատճառով իմ պատասխանը ուշացավ։ Ֆոնոգրաֆ չկա այստեղ, շատերից հարցրի, եթե թագաժառանգը փափագում է ունենալ այդ գործիքը, կարծեմ, ավելի հարմար է Թավրիզի միսիոներների միջնորդությամբ բերել տա Ամերիկայից։*

*Ձեր տեղեկությունները Թավրիզի ազգային դպրոցի մասին տխուր տպավորություններ գործեցին իմ վրա. այդ դպրոցի վրա կարծես թե մի անեծք կա, նա երբեք բարեկարգվել չէ կարող։*

*Կաթողիկոսի ընտրության օրը մոտենում է, չգիտեմ Թավրիզեցիք այս անգամ ո՞ւմն են մտադիր ուղարկել Էջմիածին. գոնե մի հասկացող և անկաշառելի մարդ ուղարկեին։*

*«Աղբյուրի» բաժանորդագրությունը 84 թվականի համար հաջող է գնում, առաջիկա օրվանից այդ ամսագիրը ավելի նպատակահարմար պայմանների մեջ կդրվի. պ. Միրզոյանցը սաստիկ աշխատում է։*

*Մեր գործը դեռ նույն դրության մեջ է. Ս. Պետերբուրգից տակավին պատասխան չէ ստացված, բայց մեծ հույս կա, որ կվերջանա առանց որևիցե վնասակար հետևանքի։*

*Ձեր քրոջը երբեմն հանդիպում եմ դպրոցից վերադառնալու ժամանակ, երբեմն տեսնում եմ օրիորդ Արղությինսկու հետ ման գալիս, շատ առողջ է և միշտ ուրախ։*

*Ընդունեցեք իմ հարգանքը՝*

Հ. Մելիք-Հակոբյան

## 57. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիս, 28 դեկտ., 1883 ամ.

Հարգելի բարեկամ,

Կարդացեք պ. Թումանյանցի բաց նամակը և բովանդակությունից հայտնի կլինի Ձեզ, թե ինչու ես վճռեցի Ձեր միջնորդությամբ հասցնել նրա նամակը։ Ձեզ հայտնի է նրա անցյալ տարիների թղթակցությունների բովանդակությունը, երբ նա ցանկանում էր իմ աշխատություններից մի քանիսը իր ծախքով տպագրել։ Ձեզ հայտնի է և այն, որ երկար Ձեզ և ինձ ձանձրացնելուց հետո, վերջապես իր խոստումները թողեց անկատար։

Մի երկու ամիս առաջ իմ աշակերտներից մեկը, պ. Ապրեսյանը, ցանկություն ուներ տպագրելու «Ջալալեդդինը» և նվիրել հօգուտ իմ հոբելյանի։ Այդ միջոցներում ստանում եմ պ. Թումանյանից երկու հեռագրեր, որով խնդրում էր, որ ես հայտնեմ պ. Ապրեսյանցին, որ նա դադարեցնե հիշյալ վեպի տպագրությունը, որովհետև ինքը, պ. Թումանյանցը արդեն սկսել է «Ջալալեդդինի» տպագրությունը, և վերջանալու վրա է։ Որովհետև այդ գործը ուղղակի ինձանից կախում չուներ, ես նրա հեռագրերը հանձնեցի հոբելյանը կատարող մասնաժողովին, և նրանք պատվիրեցին պ. Ապրեսյանցին, որ թողնե իր տպագրությունը։ Շատ հավանական է, որ մասնաժողովը համոզված էր, որ պ. Թումանյանցը նույն նպատակով է տպագրում, ինչ նպատակով որ պիտի տպագրել տար պ. Ապրեսյանը, որովհետև պ. Թումանյանցին հայտնի էր պ. Ապրեսյանցի նամակի բովանդակությունը, որ տպված է «Մշակի» մեջ։

Հեռագրերը ստանալուց հետո, անցնում է մի քանի շաբաթ, հանկարծ ստանում եմ պ. Թումանյանից նամակ, որով հիշեցնում է ինձ անցյալ տարիների մեր բանակցությունները «Ջալալեդդինի» տպագրության մասին, ներողություն է խնդրում, որ առանց կրկին ինձանից իրավունք ստանալու ձեռնարկեց տպագրելու, և վերջապես խոստանում է, որ մեր հին պայմանի համեմատ, որ ունեցել ենք անցյալ տարիներում, ինձ պատկանող օրինակները կուղարկե և այլն։

Պարոնի նամակը ես ամոթ համարեցի ցույց տալ մասնաժողովին, առավելապես այն պատճառով, որ մի այնպիսի գրքում,

երբ օտարները աշխատում են թե բարոյական և թե նյութական համակրություն հայտնել ինձ, այդ ժամանակ իմ հայրենակիցը և իմ աշակերտը վաճառականական սակարկության մեջ է մտնում ինձ հետ, այն էլ անկանոն կերպով։

*Պարոնի նամակը կստանաք ծրարի մեջ և կկարդաք. խնդրեմ հոգ. տանեք, գոնե պատկերը օրինավոր կերպով փոխադրել տա։ Ես նրան ավելի ոչինչ չգրեցի, որովհետև չարժե այդ տեսակ երեխաներից ազնիվ զգացմունք սպասել։*

*Ընդունեցեք իմ խորին հարգանքը՝*

Հ. Մելիք-Հակոբյան

## 58. ՆԵՐՍԵՍ ԱԲԵԼՅԱՆԻՆ

Թիֆլիս, 14 հունվարի, 1884 ամի

*Հարգելի բարեկամ,*

*Շնորհակալությամբ ստացա Ձեր նամակը, որով խնդակցություն էիք հայտնել իմ կյանքին վտանգ սպառնացող արկածից ազատվելու համար։ Ես ամեն տեսակ անազնվություն սպասում էի իմ թշնամիներից, բայց այդ չէի սպասում։ Այսուհետև զգույշ կլինեմ։ Երեկոյան 7 ժամից հետո տանից դուրս չեմ գալիս. գիշերը մի քաջ* հասաս *է պահված լինում իմ նախասենյակում։ Այժմ երկու ռեոլվեր ունիմ, երկրորդը ընծա ստացա մի պարոնից։*

*Հոբելյանի առիթով կատաղած են, ամեն կեղտոտություններ գործ են դնում արգելելու համար։ Բայց գավառներում սաստիկ արձագանք է գտել այդ միտքը, և ամեն տեղ համակրությամբ են վերաբերվում։*

*Ուղիղն ասեմ, բարեկամ, ես ամենևին հոժարություն չունեի, որ այս տարի կատարվեր իմ հոբելյանը, դա Գաբոյի և մի քանի բարեկամներիս ցանկությունն էր։ Ես չէի ուզում գրգռել իմ թըշնամիներին, որովհետև ժամանակները վատ են, իսկ նրանք՝ ամեն ցածության ընդունակ... Բայց հիմա, որ գործը բավական առաջ է գնացել, այլևս կես ճանապարհից դառնալը ամոթ է...*

*Պ. Արծրունու հետ իմ հարաբերությունները այժմ բավական լարված են. ես դադարել եմ նրանց մոտ ճաշ ուտել. տիկնոջ խնտրիգները վերջապես զզվացրին ինձ։ Ես դիտավորություն ունեի այս տարվա սկզբում մի քանի փոփոխություններ անել խմբագրատան կազմակերպության մեջ. նոր մարդիկ հրավիրել և հներին հեռացնել, որպեսզի «Մշակը» փոքր-ինչ կենդանանա։ Բայց հնար չեղավ. տիկինը տարավ հաղթությունը, իսկ պ. Արծրունին նրա ձեռքում այժմ դարձել է մի ռոռի կտոր։*

Շատ կարելի է, որ բոլորովին դադարեմ «Մշակի» մեջ աշխատակցելուց, և եթե կարողացա հաջողացնել, պիտի նախապատրաստվեմ առաջիկա տարվանից իմ խմբագրությամբ մի ամսագիր հրատարակել, որի մասին Ձեզ հետ շատ անգամ խոսացել եմ։

Այստեղ շատ վատ տպավորություն գործեց ճեմարանից այնքան աշակերտների հեռացնելը։ Մի՞թե չկարողացաք այդ խայտառակության առաջը առնել։ Վաղարշապատից շատ հեռագրներ և նամակներ ստացանք, բայց ոչ մեկը չտպեցինք, պահպանելով ճեմարանի վարկը։

Գաբոն ինձ ասաց, որ Դուք գրել եք, իբր թե Պոլսի Ազգ. ժողովը Կարինի նախկին առաջնորդ Հարություն եպիսկոպոսին կաթողիկոս է ընտրել։ Եթե ճշմարիտ լինի, դա շատ անհաջող ընտրություն է։ Այդ անձը հայտնի է որպես չափազանց կաշառակեր և շահասեր մարդ, նրա բոլոր արժանավորությունը միայն նրանումն է, որ շատ հարուստ է։

Սեղմում եմ Ձեր ձեռքը՝

Րաֆֆի

## 59. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիս, 18 փետրվարի, 1884 ամի

*Հարգելի բարեկամ*
*Մելքոն Կասպարիչ,*

Ստացա Ձեր նամակը իմ գրքերի հաշվի հետ. ստացա նաև 46 ռ. պ. Արասխանյանից նույնպես գրքերի հաշվից։ Շնորհակալություն։

«Ջալալեդդինի» մի օրինակը տեսա, ուղարկված էր «Մշակի» խմբագրատանը. տպագրությունը և թուղթը գեղեցիկ է, բայց լիքն է տպագրական սխալներով, շատ տեղերում մի բառ ուրիշ բառի տեղ է դրված, շատ տեղերում բառերը պակասում են։ Չգիտեմ ով է արել դրա սրբագրությունը։ Պատկերը լավ չէ դուրս եկել, խիստ սառն է, կյանքի արտահայտություն չունի։ Երևի խնայել են ծախքը և փորագրել չեն տվել։

Պ. Թումանյանից դեռ իմ նամակի պատասխանը չեմ ստացել. ինձ պատկանելիք գրքերը նույնպես դեռևս չէ ուղարկել, թեև

*հայտարարությունը ուղարկել էր, և տպվեցավ «Մշակի» մեջ։ Պահանջողներ շատ կան, բայց գրքեր չկան։*

*Կաթողիկոսական հարցի առիթով Մակարի մասին սաստիկ պրոպագանդա է կատարվում Կ. Պոլսում, իհարկե, փողի ուժով. մեծ խայտառակություն կլիներ հայոց ազգի համար, եթե մեր գիտակցական դարում, երբ հայերիս պես նույնպես առողջ մտածությունը և հասարակաց կարծիքը բավական զարթուն է, մի այնպիսի անպիտանը իր կողոպտած փողերի շնորհիվ հայրապետական աթոռը կբարձրանար։ Էջմիածնում ցանկանում են, որ Մակարը կաթողիկոս լինի, ավելի այն պատճառով, որ ծածկեն այն անլավությունները, որ կատարվեցան Գևորգի մահվան ժամանակ, որից, ընդհակառակն, վախենում են, մի գուցե Ներսեսը կամ Խրիմյանը կաթողիկոս ընտրվելուց հետո սկսեն քննություն բաց անել կատարված չարագործությունների մասին։*

*Թեև պ. Արծրունու մեջ տեղի ունեցած մի փոքրիկ անհամաձայնության պատճառով ես դադարեցի գրել «Մշակի» մեջ, բայց շուտով կշարունակեմ աշխատակցել և նրան միայնակ չեմ թողնի։ Այդ մարդը, եթե իր լավ ձգտումների հետ անտանելի բնավորություն չունենար, մենք շատ գործեր կարող էինք հաջողացնել։*

*Ցավում եմ, որ Դուք Ձեր երկու ամենալավ բարեկամների կորստյան դժբախտությունն եք ունեցել։ Լավ բարեկամը ամենաբարձր մխիթարությունն է մարդու համար կյանքի մեջ։*

*Ընդունեցեք իմ խորին հարգանաց հավաստիքը՝*

Հ. Մելիք-Հակոբյանց

## 60. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

**Թիֆլիս, 7 մարտի, 1884 ամի**

*Հարգելի բարեկամ*

*Մելքոն Կասպարիչ,*

*Ձեր 28 փետրվարի նամակը ստացա. պ. Թումանյանցի հիմար վարմունքը որքան Ձեզ, ավելի ես ինձ վրդովեցնում է. այդ թեթևամիտ համբակը ինձ կատարելապես խայտառակեց։ Երևակայել չեմ կարող մի այնպիսի հիմարություն, գիրքը լույս է տեսնում, մի-մի օրինակ ուղարկում է այստեղի բոլոր խմբագիրներին և նրանց հայտարարություն է ուղարկում, հայտարարությունները տպվում են, թե «Թիֆլիսում կարելի է ստանալ միայն*

հեղինակից»։ Ամեն օր տաս-քսան մարդիկ դիմում են ինձ, գիրք են խնդրում, բայց ինձ մոտ ոչ մի հատ գիրք չկա, բոլորին պատասխանում եմ, թե դեռ չեմ ստացել։ Այդ ի՞նչ հիմարություն է, և վերջապես նա ի՞նչ իրավունք ունի իմ մասին հայտարարություն տալու, մի՞թե ես ինքս չէի կարող հայտարարել գրքերը ստանալուց հետո։ Նա այսքանը չէ մտածում, երբ հայտարարությունը տպվեցավ, պետք է գիրքը պատրաստ լինի գրավաճառների կամ հեղինակի մոտ։

Ես կներեի պ. Թումանյանցի հիմարությունը, եթե միայն հիմարություն լիներ, բայց ես նրա վարմունքի մեջ նկատում եմ և խայտառակություն։ Նա «Ջալալեդդինը» սկսեց տպագրել առանց ինձանից իրավունք խնդրելու։ Իմ մի քանի տարի առաջ տված իրավունքը կորցրել էր իր նշանակությունը, որովհետև նա ինքը չկատարեց մեր մեջ կայացած պայմանը։ Այդ պետք է Ձեզ լավ հայտնի լինի։ Ուրեմն, երբ նա դիտավորություն ուներ տպագրելու, պետք է նորից դիմեր ինձ և իրավունք խնդրեր, այդ մասին հայտնի օրենքներ կան։ Բայց նա այդ օրինական ձևերին չհետևեց։ Նա առանց իմ կամքը հարցնելու ինքնակամ սկսեց տպագրել գիրքը այն ժամանակ, որ «Մշակի» մեջ նրա ձեռնարկությունից շատ առաջ լույս էր տեսած պ. Ապրեսյանցի նամակը, որով նա առաջարկում էր «Ջալալեդդինի» տպագրության համար հանգանակություն սկսել և տպագրել հօգուտ հեղինակի հոբելյանի։ Եվ պ. Ապրեսյանը սկսել էր արդեն փող հավաքել։ Այդ միջոցներում հեռագիր եմ ստանում պ. Թումանյանցից, որով խնդրում է հայտնել պ. Ապրեսյանցին, որ դադարեցնե իր ձեռնարկությունը, որովհետև ինքը արդեն սկսել է տպագրել «Ջալալեդդինը», և նոր տարվա սկզբում (1884 թվի) գիրքը պատրաստ կլինի։ Ես խնդրեցի պ. Ապրեսյանցին, որ թողնե իր դիտավորությունը, հավատացած լինելով, որ պ. Թումանյանցը նույնպես ամբողջ տպագրությունը նվիրել է հօգուտ հոբելյանի, ինչպես նպատակ ուներ պ. Ապրեսյանցը։

Անցնում են շաբաթներ, անցնում է ամիս, գիրքը լույս է տեսնում մամուլի տակից, այդ ժամանակ միայն նամակ եմ ստանում պ. Թումանյանցից, որի մեջ հիշեցնում է ինձ մեր մի քանի տարի առաջ ունեցած հին պայմանը... Ասացեք խնդրեմ, դա խաբեբայություն չէ՞։ Թե ինչ պատասխանեցի ես նրան, Ձեզ

հայտնի է, և նրա նամակի պատասխանը բաց ուղարկեցի Ձեզ ծրարով: Ես կարծում էի, որ իմ պատասխանը ստանալուց հետո նա այնքան քաղաքավարի կլինի, որ կհասկանա իր պարտավորությունը, բայց երևակայեցեք, մինչև այսօր իմ նամակի պատասխանն էլ չեմ ստացել: Հիմա ի՞նչ պետք է անել այդ տեսակ լակոտների հետ: Ես նրա հոր մասին շատ անեկդոտներ էի լսել, բայց երևում է, որ որդին պիտի գերազանցի հորից:

Թե անցյալ տարիներում և թե վերջին անգամ ես նրան գրել էի, որ «Ջալալեդդինի» տպագրությունը Ձեր գիտությամբ և Ձեր խորհրդով կատարվի: Այժմ Ձեր նամակից երևում է, որ նա Ձեզանից ոչինչ չի հարցրել և Ձեր կարգադրությանը չէ դիմել, այլ գործը հանձնել է մի ինչ-որ Բարխուդարյանցի, որ գիրքը լցրել է հարյուրավոր աններելի սխալներով:

Ես դեռ սպասում եմ նրանից իմ նամակի պատասխանը. ես թույլ չեմ տա, որ նա ինձ հետ այդ տեսակ խաղեր խաղա: Նա գրականության գործերում նույնպիսի խարդախությամբ է վարվում, որպես իր հայրը վարվում է Միշմիշի և բադամի վաճառականության մեջ:

Ձեզանից հարցրել եմ մեր անցյալ տարիների պայմանը. այն պայմանը ոչինչ նշանակություն չունի: Ես նրան մեծ զիջում արած կլինեմ, եթե համաձայնվեմ, որ իր արած տպագրության ծախքի փոխարեն նշանակյալ գնով գրքեր վեր առնե, իսկ մնացյալ օրինակները ուղարկե ինձ: Չգիտեմ, որքան օրինակ է տպել:

Պարոն Արծրունու մասին հետևյալ նամակով կգրեմ Ձեզ:

Ձեր՝ Հ. Մելիք-Հակոբյան

## 61. ՆԵՐՍԵՍ ԱԲԵԼՅԱՆԻՆ

Թիֆլիս, 12 մարտի, 1884 ամի

Հարգելի բարեկամ,

Ձեր վերջին նամակը ստացա, հանգուցյալ Աբել եպիսկոպոսի ձեռագրի մասին ընդունեցեք իմ խորին շնորհակալությունը: Այդ եպիսկոպոսը մի պատմություն ուներ գրած, որ բովանդակում էր իր մեջ էջմիածնի վերջին ժամանակների անցքերը, ու հասցրած էր մինչև Գևորգի օրերը: Պարսկաստանում, մեր տանը եղած ժամանակ, նա շատ անգամ այդ աշխատությունը կարդում

էր ինձ մոտ, խիստ հետաքրքիր տեղեկություններ կային: Նա շարունակում էր այդ պատմությունը մինչև իր մահվան ժամանակը: Հանգուցյալի մահից հետո, այդ թանկագին աշխատությունը անհետացավ նրա թղթերի միջից: Ձեզ պետք է հայտնի լինի, որ նա իր ծառայի տանը մեռավ: Ասում են, որ Մանկունին ծառային կաշառելով, նրանից առած և ոչնչացրած լինի հիշյալ ձեռագիրը, որովհետև Գևորգի մասին աննպաստ տեղեկություններ է բովանդակում իր մեջ: Այն ևս ասում են, որ ծառայի ձեռքում մնացած է: Հետաքրքրվեցեք, եթե գտնվի, ես պատրաստ եմ մի բան տալ և գնել:

Գրում եք, թե ոմանք ցնդավորություն ունեն «Վարժարանը» ընդհանուր գրականական ամսագիր դարձնել: Թե Դուք և թե մենք ճանաչում ենք այդ մարդիկներին, որոնք «բարվան կարողներ» չեն: «Փորձերը» ապացուցեցին, որ միայն կապիտալը չէ, որով կարելի է մի հաջողված ամսագիր կամ լրագիր հրատարակել, այլ հարկավոր են ուրիշ պայմաններ, որ պակասում են այդ պարոններին:

Այստեղ ևս, մեր ձեռնարկության ձայնը լսելով, խոսում են, թե առաջիկա տարվանից պետք է սկսվի «Փորձի» հրատարակությունը, բայց դրանք խոսքեր են միայն մեզ վախեցնելու համար:

Ժամանակն է, վերջապես, որ ազատվենք բարձրաս խմբագիրներից, որ իրանց կապիտալով խեղդում են մեզ: Նոր երիտասարդությունը պետք է խմբվի մի նոր գործի շուրջը: Ինչո՞վ վարձատրեց պ. Արծրունին իմ 12 տարվա ծառայությունը: Այն վատ ժլատների նման, ոչ ինքը օգուտ քաղեց «Մշակից» և ոչ թողեց, որ մենք օգուտ քաղենք: Նա այժմ կրկնում է այդ խոսքերը. «Ես մեռնելու եմ, թող «Մշակն» էլ ինձ հետ մեռնե»... Եվ այդպես էլ կլինի, նա չի պիտի կարողանա շարունակել այդ թերթը, բայց ցավում եմ, որ «Մշակը» կմեռնի բամբասված, արատավորված...

Ես ուրախ եմ, որ ազատ եմ այդ մեղքից: Ես անցյալ տարվա վերջին ամիսներում խորհուրդ տվի նրան, որ ներկա տարվա համար խմբագրատան կազմակերպությունը փոխվի: Նա խոստացավ, բայց չկատարեց, և ինքը պատժվեցավ, որովհետև ստիպվեցավ շաբաթը երկու անգամ դարձնել, իսկ հետո կստիպվի բոլորովին դադարեցնել: Եթե նա ինձ լսեր, դրանցից ոչ մեկը չէր պատահի: Աշխատում ենք վերականգնել այդ լրագիրը, բայց այն-

քան հույս չունենք, որ այդ անտանելի մարդը։ Հետ կարելի կլինի մի բան անել, մանավանդ, որ այժմ նա բոլորովին ապաստանած է մի կիսախելագար կնոջ յուբկայի ներքո և այնտեղից է տանում բոլոր խարդավանքները։

Մի ամսագիր, մի շաբաթական թերթ հրատարակել և «Աղբյուրի» խմբագրատունը միացնել դրանց հետ, այդ հարցերը արդեն վճռված են մեր մեջ։ Երբ որ այստեղ գալու լինեք, կխոսենք։ Գարոն դիտավորություն ունի համալսարան մտնել և մի դիպլոմ ձեռք բերել։ Նրա բացակայությունը փոքր-ինչ կկաղացնե գործը։ Մեզ ուրիշ ոչինչ պետք չէ, բայց միայն մարդիկ, ճարմ, հաստատամիտ և ազնիվ մարդիկ։ Պետք է ի մի խմբել այսպիսիներին, և այն ժամանակ գործը կարելի է հաջողված համարել։ Հեղինակություններից փախչում ենք մենք, այդ փտած հեղինակությունները սպանեցին մեզ։ Հարկավոր են նոր մարդիկ, չփչացած մարդիկ։

Ձեր՝ Րաֆֆի

## 62. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիս, 13 մարտի, 1884 ամի

*Հարգելի բարեկամ*

*Մելքոն Կապարիչ,*

*Նախորդ նամակում խոստացած էի գրել Ձեզ իմ և պ. Արծրունու մեջ տեղի ունեցած սառնության պատճառները, որոնք հետաքրքրում են Ձեզ, որպես իմ և նրա բարեկամի։*

*Անկարելի է, որ Դուք նկատած չլինեք, որ անցյալ տարի «Մշակը» թե իր ներքին բովանդակությամբ և թե իր կանոնավոր հրատարակությամբ խիստ թույլ կերպով գնաց և կատարելապես չգոհացրեց իրեն ընթերցողներին։ Այդ տարվա համար կարելի էր ներել, որովհետև «Մշակի» խմբագրատան հետ այնպիսի անսպասելի անցքեր պատահեցան, որ ավելին չէր կարելի պահանջել։*

*Եվ որպեսզի «Մշակը» կրկին իր առաջվա ուժը և կենդանությունը ստանա, ես անցյալ տարվա վերջին ամիսներում առաջարկեցի պ. Արծրունուն, որ խմբագրատան կազմակերպությունը փոխվի, և նոր տարվանից սկսյալ, նոր խմբագրություն կազմվի, բոլորովին ուրիշ հիմունքների վրա հաստատված։ Նա համաձայ-*

նեցավ ինձ հետ, բայց երբ նոր տարին հասավ, այլևս չկատարեց իր խոստումները։ Ի՞նչ եղավ հետևանքը. այն, որ ես նախագուշակում էի, ինքը չկարողացավ շարունակել, և ստիպվեցավ շաբաթը երկու անգամ հրատարակել, և եթե այսպես տանե գործը, դուցե ստիպված կլինի բոլորովին դադարեցնել։

«Մշակի» կարևորությունը հայոց հասարակության համար Ձեզ բացատրելու հարկ չկա։ Դուք ինքներդ ավելի լավ գիտեք, բայց ի՞նչ արած, որ այդ անտանելի մարդը յուր անտակտությամբ ամեն բան փչացնում է։

Նրա մասնավոր գործերի դրությունը այնպես է, որ նա գոնե առժամանակ պետք է իրան հեռու պահեր խմբագրական հոգսերից, մինչև իր սեփական գործերը կարգի գնեին։ Եվ ես «Մշակի» բոլոր հոգսերը ինձ վրա էի առնում, բայց ինձ մի այնպիսի դրության մեջ դրեց, որ երկար համբերել չկարողացա։

Այժմ թեև չեմ գրում, բայց իմ հարաբերությունները «Մշակի» հետ բոլորովին կտրված չեն։ Աշխատում եմ և կշարունակեմ աշխատել, որ այդ լրագիրը կրկին վերականգնի, որովհետև ես իմ անունը կապված եմ համարում նրա հետ և եթե «Մշակի» վրա բիծ դրվի, նրա մի մասն էլ իմ վրա կընկնի։ Տեսնենք ինչո՞վ կվերջանա։

Պարոն Թումանյանցի նամակը կկարդաք և իրան կհանձնեք։ Այդ հիմարը ինձ այն աստիճան զայրացրել է, որ ուրիշ կերպ չէի կարող գրել։ Այն անտիտան Բարխուդարյանցից իմ հեռագրի պատասխանը ստացա, թե գրքերը վաղուց ուղարկված են։ Բայց ի՞նչ ճանապարհով, ի՞նչ միջոցով, այդ մասին ոչինչ չէ հայտնել։ Գիտեմ, որ սուտ է, եթե փոստայով ուղարկած լինեին, շատուց ստացած կլինեի։ Հեռագիրը 10 օրից ավելի է, որ ստացել եմ։ Գոնե մի քանի հարյուր օրինակ փոստայով ուղարկեին, եթե ծախքերը խնայում էին, իսկ մնացածը ուրիշ ճանապարհով։

Բանը նրանումն է, որ եթե այսուհետև գրքերը այստեղ հասնելու լինեն, այլևս այնպես չեն վաճառվի, ինչպես առաջ կվաճառվեին։ Որովհետև երբ ուշանում է, հասարակությունը սառչում է, էլ ուշադրություն չէ դարձնում։ Սկզբից միայն հետաքրքրվում են, երբ առաջին անգամ հայտարարությունը կարդում են։

Ընդունեցեք իմ հարգանքը՝

Հ. Մելիք-Հակոբյանց

## 63. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիս, 24 ապրիլի, 1884 թ.

*Հարգելի բարեկամ,*

*Ձեր վերջին երկու նամակները ստացել եմ. առաջին նամակով բավական զգալի հանդիմանություն եք անում ինձ և իմ վարմունքը պ. Արծրունու վերաբերությամբ համեմատում եք պ. Նիկողոսյանցի վարմունքի հետ։ Մի այսպիսի հանդիմանություն կարող է անել կամ վատ թշնամին, կամ լավ բարեկամը։ Ես ընդունում եմ այդ վերջինը։ Իբրև հեռվից նայողի և գործերի մանրամասնություններին անտեղյակ մարդու, ես բոլորովին բնական եմ գտնում Ձեր արդար վրդովմունքը, երբ տեսնում եք, որ «Մշակը» այսօր անկյալ դրության մեջ է և նրա խմբագիրը միայնակ և անօգնական մնացած։*

*Բայց ո՞վ է մեղավորը,—դրանումն է գլխավոր հարցը։ Ես, իհարկե, այժմ չեմ կարող այն բոլոր գաղտնիքները դուրս թափել, որոնք ավելի* ընտանեկան *բնավորություն ունեն և որոնք չարաչար կերպով ազդեցին թե պ. Արծրունու կործանման վրա և թե «Մշակի» անկման վրա։ Դա մի երկար պատմություն է, որը գուցե մի ժամանակ բավական առատ նյութ կտա պ. Արծրունու կենսագրությանը։ Ես այդ մարդուն հարգում եմ, նրա գործունեությունը միշտ ազնիվ և օգտավետ եմ համարել, բայց նա մի անբախտ զոհ է իր գործած մի* մեծ սխալի, *որը ոչ ոք ուղղել չէ կարող և որի պատճառով ինքը պատժվեցավ։*

*Ես բաժանում եմ Ձեր բարի խորհուրդը, թե պ. Արծրունու այժմյան դրության մեջ ես պետք է նրան միայնակ չթողնեի։ Ես այդ մասին արել եմ, ինչ որ կարող էի, և որքան ինձանից կախված էր։ Դեռ անցյալ տարվա վերջին ամիսներում ես առաջարկեցի պ. Արծրունուն խմբագրատան բոլոր հոգսերը ինձ վրա թողնել, որպեսզի ինքը ազատ ժամանակ ունենա իր տնտեսական գործերը կարգի դնելու։ Նյութական ոչինչ հաշիվներ չկային մեջտեղում. ես առաջարկեցի մինչև անգամ ներկա տարվա սկզբից ամեն ինչ ձրի կատարել և ոչինչ վարձատրություն չպահանջել նրանից, միայն թե «Մշակը» պահպանվի։ Բայց իմ բոլոր ջանքերը իզուր անցան, որովհետև մեջտեղում կար մի* սատանա, *որ*

ամեն ինչ խառնում էր, ի՞նչ կարող էի ես անել կնոջ ինտրիգայի դեմ... Իմ և պ. Արծրունու մեջ ոչինչ անբավականություններ չեն տեղի ունեցել։ Ես վրդովված եմ եղել միայն այն կնոջ դեմ, որը համարյա թե կախարդել է խեղճ մարդուն, որը ստիպում է նրան ամեն ինչ ծախել, ամեն ինչ բարուքանից անել և գնալ արտասահման, իրանից նշանակությունը մի անծանոթ երկրում ծածկելու համար... Այլևս ի՞նչ կարող էի անել ես, երբ գործի մեջ այդ տեսակ ընտանեկան գաղտնիքներ կային։

Ես առաջարկեցի պ. Արծրունուն (փառք աստծո, մեր մեջ վկաներ կան), եթե նա ցանկություն ունի արտասահման գնալու, թող «Մշակը» ինձ հանձնե և խոստացա յուրաքանչյուր ամիս 150 ռուբլի փող ուղարկել նրան։ Նա սկզբում համաձայնեցավ, բայց հետո իր խոստումը չկատարեց։ «Եթե ես մեռնելու եմ,—ասում է նա,—թող ամեն ինչ ինձ հետ մեռնի»... Ահա այս ծայրահեղությանն է հասել նա։ Ես դեռ սպասում եմ, որ գուցե հանգամանքները կփոխվեն, գուցե ես հնար կգտնեմ «Մշակը» վերականգնելու։ Այժմ խմբագրատան մեջ ոչ ոք չէ մնացել, բոլոր ծառայողները արձակված են։ Եթե գործը այսպես գնա, նա անկարող պիտի լինի շարունակել և մի երկու ամսից հետո ստիպված կլինի դադարեցնել։

Եթե պ. Արծրունու հետ հաշտվել չկարողացանք, այդ դեպքում իմ բարեկամները խորհուրդ են տալիս ինձ մի ամսագիր հրատարակել «Փորձ»-ի դիրքով և մի թերթ, որ շաբաթը երկու անգամ հրատարակվեր։ Այդ մասին դեռ մտածում ենք, երբ ամեն պատրաստություններ կարգի կդրվեն, իսկույն խնդիր կներկայացնեմ հրաման ստանալու համար։ Ես այն աստիճան սովորած եմ հրապարակախոսության պարապմունքին, որ ինձ համար մի կենսական պահանջ է դարձել, այսուհետև չեմ կարող անգործ մնալ։ Իմ սրտից արյուն է գնում, երբ տեսնում եմ, որ մեր հրապարակախոսները ամեն կեղտոտություն դուրս են թափում, իսկ ես ստիպված եմ լուռ ականատես լինել։

Ձեր՝ Հ. Մելիք-Հակոբյան

## 64. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիս, 21 հունիսի, 1884 թվ.

*Հարգելի բարեկամ,*

*Ձեր վերջին նամակը ստացած եմ, ուրախ եմ, որ համաձայնվեցանք միմյանց հետ. պ. Արծրունու վիճակը էգուց կորոշվի: Նրա կայքերի աճուրդի օրն է: Շատերի կարծիքն այն է, որ գնողներ չեն գտնվի և կայքերը կմնան բանկի սեփականություն: Այժմ Թիֆլիսը դրամական սաստիկ նեղ դրության մեջ է. կապիտալիստների մոտ փող չկա:*

*Ցավալի է, որ այսպիսի թանկագին կայքերը պետք է դառնան վրացիների սեփականություն: Բանկը նրանցն է պատկանում: Դիտավորություն կար ընդհանուր ազգային հանգանակությամբ գնել այդ կայքերը և նվիրել Էջմիածնի ճեմարանին: Բայց խոսեցին, խոսեցին և ոչինչ չշինեցին, մինչև աճուրդի օրը հասավ:*

*Աճուրդից հետո պ. Արծրունին ամենաթշվառ մարդը կդառնա. նա իր բոլոր կալվածները կկորցնե և, բացի դրանից, ավելի քան 100 հազար ռուբլու մասնավոր պարտքերի տակ կմնա: Ի՞նչ կլինի այնուհետև «Մշակի» դրությունը, շատ հեշտ է նախագուշակել:*

*Ես մինչև այսօր ոչինչ չեմ խոսացել պ. Արծրունու հետ. նա մի այնպիսի տրամադրության մեջ էր գտնվում, որ նրա հետ խոսելն անգամ անկարելի էր: Բայց երբ վիճակը բոլորովին կորոշվի, ես կառաջարկեմ նրան իմ բարեկամական ծառայությունը: Այդ մարդը իր դժբախտությունից հետո այստեղ մնալ չէ կարող. նա պետք է գնա արտասահման, բայց արտասահմանում ապրելու ոչինչ միջոց չի ունենա:*

*Ես արդեն կազմել եմ երիտասարդների մի խումբ, որ «Մշակը» վեր առնենք և շարունակենք հրատարակել, իսկ պ. Արծրունու համար ամսական մի գումար կնշանակենք, որ արտասահմանում ապրի: Եթե նա կընդունե մեր առաջարկությունը, իր համար էլ լավ կլինի և «Մշակն» էլ կպահպանվի, իսկ եթե կմերժե, այնուհետև ոչ որ մեղավոր չի լինի, բացի ինքը:*

*Ընդունեցեք իմ խորին հարգանքը՝*

Հ. Մելիք-Հակոբյան

## 65. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիս, 27 հուլիսի, 1884 ամի

*Հարգելի բարեկամ,*

*Ձեր վերջին նամակը ստացա, պ. Արծրունու գործերի ցավալի վախճանը արդեն լսած կլինեք. աճուրդի ժամանակ նրա կալվածքները ոչ ոք գնող չեղավ, այդ պատճառով մնաց վրացոց բանկի վրա։ Հայտնի բան է, բանկը նույնպես անկարող կլինի պահել, ստիպված է վերջը վաճառել, գուցե շատ պակաս գնով։ Վերջը այդ կալվածները կդառնան դարձյալ հայերի սեփականություն։*

*Որպես խոստացել էի Ձեզ իմ նախորդ նամակում, ես կատարեցի իմ խոստումները. երբ պ. Արծրունին ամեն ինչ կորցրել էր և անմխիթար հուսահատության մեջ էր գտնվում, ես գնացի նրա մոտ և առաջարկեցի թե իմ բարեկամությունը և թե իմ ծառայությունը։ Ես այն աստիճան վիրավորված էի նրանից, որ իմ կողմից մի այսպիսի քայլ անելը պետք է չափազանց զիջողություն համարել։ Բայց ես իմ անձնասիրությունը ճնշեցի և կրկին ձեռք մեկնեցի նրանց. նրանց դժբախտությունը պահանջում էր ինձանից ներողամտություն և մոռացություն այն բոլոր անախորժ անցքերի, որ կատարվել էին մեր մեջ։*

*Վերջապես ես մեծ մասամբ հասա իմ նպատակին, այն է՝ մի կողմից միջոց տալ պ. Արծրունուն ապրելու, իսկ մյուս կողմից՝ պահպանել «Մշակի» գոյությունը։ Կազմվեցավ երիտասարդների մի խումբ, որ հանձն առեր «Մշակի» հրատարակությունը, խոստանալով առաջիկա 1885 թվականի սկզբից յուրաքանչյուր ամիս վճարել պ. Արծրունուն 100 ռուբլի մինչև 5 տարի։ Նոր խմբագրի պաշտոնը կընդունե մեզանից մեկը, պ. Միրզոյանցը, ես անկարող էի խմբագիր լինել, նախ այն պատճառով, որ ռուսաց հպատակ չէի, երկրորդ, անցյալ տարվա գործերի քննությունը տակավին վերջացած չէ։*

*Մենք հանձն ենք առել հրատարակել «Մշակը» եկող տարվա սկզբից, բայց այս տարվա սեպտեմբեր ամսվա սկզբից շաբաթական մի քանի համար կտանք, որպեսզի բաժանորդները պահպանենք։*

*Ցանկալի կլիներ, որ Ձեր և մեր բարեկամ պ. Արասխանյանցը նույնպես լիներ մեր խմբի մեջ, բայց այնպես վարվեցավ, որ հա-*

մասամբ կորցրեց մերայինների մոտ իր համակրությունը։ Փոխանակ միանալու մեզ հետ, նա մի քանի տարբեր անձինքներից (հակառակ կուսակցության) առանձին խումբ կազմեց և կամենում էր ինքը վեր առնել «Մշակը», որ, իհարկե, չհաջողվեցավ։ Այդ երիտասարդը ավելի հարգելի կլիներ այստեղ, եթե իրան փոքր-ինչ ժանր ու խոհեմ պահեր։ Նրա թեթևամտությունները ամենին զզվեցնում են։ Մեզ բավական վնասեց «Մշակի» գործի մեջ։

Ընդունեցեք իմ խորին հարգանքը՝

Հ. Մելիք-Հակոբյան

Հ. Գ. Կ. Պոլսից մասնավոր նամակներ ստացա, գրում են, որ Զեյթունի մեջ ապստամբություն կա, Պապիկ իշխանը դարձյալ գլուխը բարձրացրել է...

## 66. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիս, 3 նոյեմ., 1884 ամի

Հարգելի բարեկամ,

Ձեր վերջին նամակը սեպտեմբերի 5-ից գրված, ստացել եմ. պ. Արծրունին «Մշակի» խմբագրությունը մեզ հանձնելով, ուղևորվեցավ արտասահման. այժմ նա ապրում է Զվիցերիայի Ժնև քաղաքում։ Հայտնի չէ, նա կրկին անգամ կվերադառնա՞ իր հայրենիքը, թե ոչ։ Եթե արտասահմանում մի որևիցե պարապմունք գտավ, շատ հավանական է, որ կմնա այնտեղ։ Բայց ցավալին այն է, որ նա իր հետ տարել է նաև իր կնոջը, որը, որպես այստեղ նրան դժբախտացրեց, նույնպես և ամեն տեղ իր վատ ազդեցությամբ թույլ չի տա, որ նա իր գրությունը ուղղի և մի որևիցե գործով զբաղվի։ Այդ կինը մի հրեշ է, որի իսկական պատկերը Ձեզ ներկայացնելու համար երկար նկարագրություններ պետք են։

«Մշակի» համարները մինչև այսօր որքան ցանկալի էր, դարձյալ չկարողացանք տալ, որովհետև կառավարությունը դեռևս մեր անունով չէ հաստատել այդ լրագրի խմբագրությունը, թեև հարկավոր եղած բոլոր թղթերը ներկայացված են։

Հաստատությունը սպասում ենք Ս. Պետերբուրգից, այժմ այնտեղից կախում ունի ամեն մի լրագրի թույլատվության իրավունքը։ Հույս կա, որ մինչև նոյեմբեր և դեկտեմբեր ամիսները ստացվի իրավունք հրատարակելու. եթե մի որևիցե այլ արգելք առաջ

չբերեն։ Այժմ լրագրություն և առհասարակ մամուլի դրությունը խիստ դժվարին պայմանների մեջ է գտնվում...

*Գ. Արասխանյանցը այստեղ է. նա իր նախկին պաշտոնի մեջ է գտնվում, այսինքն՝ Ներսիսյան և Գայանյան դպրոցներում դասեր է տալիս։ Որքան էլ նրա վարմունքը մեր վերաբերությամբ անվայել էր, բայց կարող եք հավատացած լինել, որ այն րոպեից, երբ «Մշակը» կսկսի հրատարակվել, մենք կընդունենք նրան մեր ամենալավ աշխատակիցների թվում։ Այժմ կարծես նա իր սխալը հասկացել է և սկսել է մոտենալ մեզ։*

*Չեք կարող երևակայել իմ հոգեկան դրությունը, թե որքան տանջվում եմ ես, որ մնացել ենք առանց սեփական օրգանի, որ «Մշակի» հրատարակությունը այսպես հետաձգվում է։ Նորից պետք է կաթողիկոսական հարց ծագի. եթե գիտենայիք, թե որքա՜ն դարանակալություններ, որքա՜ն դավաճանություններ և որքա՜ն ազգավնաս ներգործություններ պետք է կատարվեն, իսկ մենք ստիպված պետք է լինենք վատ գործերի լուռ հանդիսատես լինել...*

*Ընդունեցեք իմ խորին հարգանքը՝*

Հ. Մելիք-Հակոբյան

## 67. ԱՎԱԳ ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆԻՆ

Թիֆլիս, 9 նոյեմ., 1884 թ.

*Հարգելի բարեկամ,*

*Ձեր նամակը, 23 օգոստոսի գրված, ստացել եմ. մեծ ուրախությամբ կկատարեի Ձեր հանձնարարությունը պ. Մարտիրոս Մելիք-Թադևոսյանի մասին, եթե նա իր ժամանակին եկած լիներ։ Թիֆլիսի արհեստավորաց դպրոցում աշակերտներ ընդունվում են օգոստոսի 20-ից սկսած, մինչև այդ ամսի վերջը, բայց Մելիք-Թադևոսյանը շատ ուշացած էր, դասատուններում տեղ չկար, որովհետև ամեն տարի ընդունում են մի որոշ թիվ աշակերտների։ Այսուամենայնիվ, հիշյալ դպրոցի վարչության նախագահը ինձ խոստացած էր, թե աշակերտներից դուրս մի քանիսը կարտաքսեն դպրոցից, այն ժամանակ տեղ կբացվի։ Բայց պ. Մելիք-Թադևոսյանը չսպասեց, այժմ, որպես լսում եմ, իր եղբոր հետ մանրավաճառի փոքրիկ խանութ է բաց արել։*

«Մշակ» լրագրի խմբագրությունը, իրավ է, անցել է իմ և իմ երկու ընկերների ձեռքը, բայց մինչև այսօր դեռ կառավարությունը չէ հաստատել, թեև թե մեր կողմից և թե պ. Արծրունու կողմից հարկավոր եղած խնդիրքները մատուցված են։ Թույլտվությանը սպասում էինք Ս. Պետերբուրգից, որովհետև այժմ այնտեղից կախում ունի լրագրի հրատարակվելու թույլտվության իրավունքը։ Այն օրից, որ հրաման ստացանք, կսկսենք հրատարակել։ Պ. Արծրունին գնացել է արտասահման, այժմ ապրում է Զվիցերիայի Ժնև քաղաքում։

Ընդունեցեք իմ հարգանքը

Հ. Մելիք-Հակոբյան

## 68. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիս, 18 փետրվարի, 1885 ամի

*Հարգելի բարեկամ,*

*Այստեղ «Ջալալեդդինի» օրինակները բոլոր գրավաճառների մոտ սպառված լինելով, բավական պահանջ կա։ Եթե Ձեզ մոտ մնացել են, ուղարկեցեք, իսկ եթե ոչ, խնդրեմ հայտնեցեք տպագրիչին մի 30 օրինակ ուղարկի։ Իմ հասցեն նույնն է, որպես առաջ։*

*Կաթողիկոսական ընտրության վերաբերությամբ մեծամասնության աչքը Խրիմյանի վրա է, շատ կարելի է, որ նա ընտրվի։ Խրիմյանից հետո Մելքիսեդեկի վրա աչք ունեն։ Մակարի մասին էլ ծակուծուկերում աշխատողներ կան, բայց հազիվ թե կարող կլինեն մի բան հաջողեցնել։*

*Հայոց դպրոցների հարցի մասին Ձեզ պետք է հայտնի լինի, որ վերջին օրերումս բարձրագույն հրաման էր եկած, որ երկու շաբաթվա ընթացքում դպրոցների մեջ մտցնեն նոր կարգադրություններ, եթե ոչ, կառավարությունը ստիպված կլինի փակել դպրոցները։ Էջմիածնի Սինոդը հրավիրել է բոլոր թեմական առաջնորդներին, որ ժողով կազմեն և միախորհուրդ մտածությամբ պատասխան պատրաստեն։ Այդ հարցը այն աստիճան դժվարին և միևնույն ժամանակ վտանգավոր կողմեր ունի, որ հազիվ թե Սինոդը կարողանա մի որևիցե նպատակահարմար ելք գտնել առանց կաթողիկոսի, բայց ժամանակ էլ չեն տալիս մինչև կաթողիկոս ընտրվի։*

*Պ. Արծրունուց նոր նամակ ստացած չենք։ Ապրիլ և մայիս ամիսներում սպասում ենք նրա վերադարձին այստեղ։*

*Ես այժմ զբաղված եմ մասնավոր աշխատություններով, տպա-*

գրության համար շատ բաներ եմ պատրաստել, առանց հույս ունենալու, որ կտպագրվեն. ցենզուրայի խստությանը չափ չունի...

Ընդունեցեք իմ խորին հարգանքը՝

Հ. Մելիք-Հակոբյան

## 69. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիս, 30 հունիսի. 1885 ամի

Հարգելի բարեկամ,

Ես շատ մեղավոր եմ Ձեր առջև, որ Ձեր նամակը թողել եմ առանց պատասխանի, կարող եք հավատացած լինել, որ այդ առաջ է եկել ոչ թե անուշադրությունից, այլ մոռացկոտությունից։ Այսպես շատ է պատահել ինձ հետ, նամակներ եմ ստանում, երբ մի փոքր ուշանում է, կարծում եմ, թե պատասխանը գրել եմ. և այսպիսով շատերին վիրավորել եմ ես։ Բայց Ձեր իրավացի հանդիմանությունը ինձ համար մի լավ խրատ եղավ, երբ ստացա Ձեր վերջին նամակը, հենց նույն օրը գնեցի մի փոքրիկ գրքույկ, որ նրա մեջ նշանակեմ ստացված նամակները, թե որին եմ պատասխանել կամ որն է մնում առանց պատասխանի։ Հուսով եմ, որ այս տեսակ անքաղաքավարություններ այսուհետև իմ կողմից այլևս չեն պատահի։

Պ. Արծրունին այստեղ է, մի քանի շաբաթ է, որ վերադարձել է արտասահմանից. դիտավորություն ունի «Մշակի» հրատարակությունը շարունակել և հենց այդ նպատակով էլ եկած է։ Բայց ցենզուրայի կողմից արգելք են դնում, ասելով, որ իբր թե ժամանակը կորցրել է։ Մամուլի օրենքով մի լրագրի դադարման օրից մինչև մեկ տարի խմբագիրը իր իրավունքը պահպանում է, որ կրկին սկսի հրատարակել։ Եվ «Մշակի» վերջին համարը անցյալ տարի դուրս եկավ հուլիսի 11-ին, ուրեմն ժամանակը չէ կորել, որովհետև մինչև այս տարվա հուլիսի 11-ը մի տարի կլրանա։ Վերջապես անտեղի արգելքներ են դնում, երևում է, որ խափանելու դիտավորություն ունեն։ Պ. Արծրունին գանգատվել է, գրել են Ս. Պետերբուրգ, այնտեղից պատասխան ենք սպասում։ Ինչպե՞ս կվճռեն, դեռ հայտնի չէ։ Պ. Արծրունու արտասահման գնալու ժամանակ մեզ մերժեցին, թույլ չտվին հրատարակել։ Հիմա ինքը խմբագիրն է եկել, նրան էլ թույլ չեն տալիս։

Կաթողիկոսի մասին դեռ լուր չկա, թե կայսրը որին է հաստատել։ Այստեղ խոսվում է, թե Մելիքսեդեկը առաջարկել է կառավարության՝ իբր թե ինքը չպիտի ընդունի կաթողիկոսությունը, եթե հայոց դպրոցները իրանց նախկին դրությանը չվերածվեն, և այդ ուշացնում է հաստատությունը։ Մյուս կողմից՝ մակարականները մեծ աշխատության մեջ են. ասում են, թե վեց եպիսկոպոսներ, որոնց պարագլուխն է Պարգյանց արքեպիսկոպոսը, խնդիր են ներկայացրել, թե կցանկանային Մակարին կաթողիկոս տեսնել. նկարագրելով Մակարի առավելությունները և Մելիքսեդեկի վնասակարությունը, իհարկե, կառավարության տեսակետից։ Եթե այդ մասնությունը ճիշտ լինի, մեծ արատ է դնում հոգևորականության վրա։ Բայց շատերը խոսում են իբրև կատարված իրողություն։ Թե այսպես, թե այնպես այսքանը միայն ճիշտ է, որ կողմնակի և ուղղակի աշխատություններ շատ կան՝ հօգուտ Մակարի և ի վնաս Մելիքսեդեկի։ Իսկ խեղճ Հայրիկը այս անգամ ևս զրկվեցավ այն աթոռից, որին նա և միայն նա էր արժանի։

Այս տարի դիտավորություն ունեմ հրատարակելու «Կայծերի» երկրորդ հատորը և «Դավիթ Բեկի» առաջին հատորը։ Վերջինը պետք է պատկերազարդ լինի։ Ձեզ կխնդրեի, որ ինձ տեղեկություն տայիք, արդյոք հնարավոր կլինի՞, որ պատկերները Մոսկվայում նկարել և փորագրել տայի։ Այդ մասին, եթե հարմար կգտնեք, խորհրդակցեցեք պ. Ջ. Մսերյանցի հետ. նա «Փարոսի» հրատարակությամբ ցույց տվեց, որ պատկերներ պատրաստել տալու մեջ բավական ճաշակ ունի։ Այստեղ ոչ լավ նկարիչ կա և ոչ էլ լավ փորագրող։ Մենք կարող ենք ուղարկել Մոսկվա միայն պատկերների ստվերագիծը (էսքիզները), իսկ այնտեղ նրանց համեմատ պետք է նկարել և փորագրել։ Պատկերները կլինեն «Կայծերի» առաջին հատորի դիրքին համեմատ։ Գրեցեք, խնդրեմ, մոտավորապես որքան կարժենա յուրաքանչյուր պատկերը, որ նրա համեմատ ծախքերի մասին հոգանք։ Մեկ հատորի համար հարկավոր կլինի ոչ ավելի քան 10 պատկեր։

Սպասելով Ձեր պատասխանին, կմնամ Ձեր ամենաջերմ հարգող՝

Հ. Մելիք-Հակոբյան

## 70 ԼԵՈՅԻՆ

[1885 թիվ, 11-ը հուլիսի]

*Պարոն Արծրունին վերադարձավ արտասահմանից, գլխավորապես այն նպատակով, որ «Մշակը» կրկին հրատարակե։ Բայց ցենզուրական կոմիտեն թույլ չտվեց, հայտնելով, թե իրավունքը կորցրել է, թեև իսկապես կորցրել չէր։ Յուրաքանչյուր խմբագիր, երբ իր լրագիրը դադարեցնում է, մինչև մեկ տարի իր իրավունքը պահպանում է կրկին հրատարակվելու։ Բայց «Մշակի» տարին լրացած չէր, երբ պ. Արծրունին կամեցավ նորից սկսել հրատարակությունը, այնուամենայնիվ, նրան մերժեցին, ասելով, թե նոր կարգադրություն է դուրս եկել և այլն։*

## 71. ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒՆ

12-16

Թիֆլիս, 18 հոկտեմբեր, 1885 ամ.

*Հարգելի Գրիգոր։*

*Ստացա Ձեր նամակը։ Ուրախ եմ, որ «Մշակը» իրավունք ստացավ կրկին հրատարակվելու. կատարյալ հաջողություն եմ ցանկանում։*

*Ես սպասում էի, որ Դուք կհրավիրեիք ինձ և ինձ հետ «Մշակի» մի քանի բարեկամներին՝ միասին խորհելու, թե ինչպե՞ս և ի՞նչ կարգադրությամբ պետք է սկսել նրա վերստին հրատարակությունը, բայց Դուք հրավիրում եք ինձ, որպես «Մշակի» հին աշխատակցին, միայն աշխատակցելու։ Շնորհակալ եմ Ձեր բարի ուշադրության համար, բայց շատ ցավում եմ, որ ինձ անհնար կլինի ընդունել Ձեր առաջարկությունը։*

*«Մշակի» դրությունը անորոշ տեսնելով, Դուք, որպես հայտնում եք Ձեր նամակի մեջ, դժվարանում եք վճռել, թե ե՛րբ և ո՛րքանով կարող կլինեք վարձատրել իմ աշխատությունները։ Ես ամենայն սիրով կհամարվեի «Մշակի» դրության հետ, եթե գիտենայի, որ «Մշակի» փողերը* միմիայն «Մշակի» վրա *գործ կդրվեին և ավել փող չէր մնա ինձ վարձատրելու համար, իհարկե, Ձեզ մի չափավոր ապրուստ դուրս գալուց հետո։ Այո՛, ես կհամարվեի և կսպասեի իմ վարձատրությունը «Մշակի» հաջողությունից, նրա բաժանորդների բազմությունից։ Բայց, որպեսզի այդ*

*հաջողությունը հուսալի լինի, հարկավոր է, նախ, որ նրա խմբագրությունը օրինավոր պայմանների մեջ դրվի, երկրորդ, որ մեր հարաբերությունները կատարելապես որոշված լինեն՝ թե՛ դեպի Ձեզ և թե՛ դեպի «Մշակը»։*

*Ես երբեք այսպես խստապահանջ չէի լինի, եթե մեր մեջ մնացած լիներ առաջվա մտերմությունը և փոխադարձ հավատը։ Բայց անցյալ փորձերը, այն դա՛ռն, տխո՛ւր փորձերը ինձ սովորեցրին, որ ավելի լավ է գործի սկզբից ամեն պայման որոշել, քան թե ապագայի համար անբավականությունների պատճառներ թողնել։*

*Խնդիրը բոլորովին այլ կլիներ, եթե իմ դրությունը փոքրիշատե ապահովված լիներ, և ես գրեի միմիայն իմ անձնական բավականության համար։ Բայց ես ապրում եմ իմ գրական աշխատանքով և, բացի ինձանից, մի ամբողջ ընտանիքի ապրուստ պետք է այդ աշխատանքից հայթայթվի։ Ուրեմն ես չեմ կարող չգնահատել իմ աշխատանքը, թեև ոմանք, մինչև անգամ քաղաքատնտեսներ, սովորել են աշխատանքի վարձատրությունը սատացողի կողմից* շահասիրություն *կոչել...*

*«Մշակի» հրատարակությունը այժմ ավելի դժվար է և ավելի աշխատանք է պահանջում, քան որևէ ժամանակ։ Նրա խմբագրատան մեջ ծառայողը ոչ միայն պետք է գրե, այլ ուրիշ շատ կողմնակի աշխատանքներ պետք է կատարե, որ թերթը տարածվի, որ բաժանորդների թիվը ավելանա։ Նա միևնույն ժամանակ պետք է մղե ամենասաստիկ պատերազմ հակառակ կուսակցությունների հետ, որոնք իրանց ուժերով անհամեմատ զորավոր են և կզորանան։ «Մեղուն» այժմյան կաթողիկոսի օրով կլինի կիսապաշտոնական օրգան կդառնա։ Թեմական առաջնորդները, վիճակների հաջորդները, քահանաները, նրա գործակալները կլինեն, ամեն տեղ կտարածեն, գուցե «Արարատի» նման պաշտոնագիր կանեն շատերին ստանալ։ «Նոր դարը» պատրաստություններ է տեսնում առաջիկա տարվանից նոր ուժերով հանդես գալու, «Արձագանքը» նույնպես։ Ինչո՞վ պետք է «Մշակը» մրցե դրանց հետ։ Իր անցյալո՞վ։ Այդ բավական չէ։*

*Ես ավելի ազնիվ եմ համարում անախորժ ճշմարտություններ ասել Ձեզ, քան թե շատերի նման շողոքորթել։ Դուք թե «Մշակի» անունը և թե Ձեր անցյալը վտանգի տակ դրած կլինեք, եթե Ձեր այժմյան ուժերով կսկսեք «Մշակի» հրատարակությունը։ Այժմ*

հասարակությունը ավելի պահանջող է դարձել, ավելի մեծ ակնկալություններ ունի «Մշակից»։ Զրկված լինելով մյուս պարբերական հրատարակություններից, նա ամեն ինչ «Մշակից» է սպասում։ Եթե Դուք չկարողացաք նրա պահանջներին բավականություն տալ, ամեն նույն հաջողության համար պետք է կարած համարել «Մշակի» գոյությունը և նրա հաջողակ հարատևությունը նույնքան մոտ լինելով իմ սրտին, որքան Ձերին, ես թույլ եմ տալիս ինձ պարզապես ասել Ձեզ, որ Դուք, մանավանդ Ձեր այժմյան վիճակում անկարող կլինեք գործի ծանրությունը միայնակ տանել, Դուք ավելի խոհեմ վարված կլինեք, եթե կհավաքեք Ձեր շուրջը մի խումբ համերաշխ անձինք, որոնք թե՛ բարոյապես և թե՛ նյութապես կապված լինեն լրագրի խմբագրատան հետ, որոնք իրանց մեջ բաժանեն բոլոր աշխատանքը։ Փույթ չէ, եթե այդ խումբը փոքր լինի թվով, և ավելի լավ է, որ փոքր լինի, բայց անհրաժեշտ է, որ լինի նա։ Թե ի՞նչ անձինքներից և ինչպե՞ս կկազմակերպեք այդ խումբը, դա Ձեր գործն է, միայն առանց խմբի որևէ հաջողություն սպասելը՝ պետք է կատարյալ ինքնախաբեություն համարել։

Դուք բոլորովին կղզիացած եք, պ. Արծրունի, և այդ դրությունը ոչ սակավ թուլացրեց Ձեր եռանդը, խլեց Ձեր հավատը թե՛ դեպի աշխարհը և թե՛ դեպի գործը և դրեց Ձեզ անխուսափելի վհատության մեջ։ Դա սարսափելի դրություն է, երբ մարդ կորցնում է հավատը։ Նա սկսում է այնուհետև իր հետ պատահած ամեն չարիքների, ամեն դժբախտությունների արմատները ուրիշների մեջ որոնել, առանց ինքն իրան քննելու։ Նրա հավասարակշռությունը՝ իր ներքին աշխարհի և արտաքին աշխարհի հետ՝ խախտվում է...

Դուք ապրում եք անապատի մեջ, պ. Արծրունի։ Ձեր մթնոլորտի օդը սաստիկ ծանրացած է, սաստիկ ապանիչ է. պետք է մի նոր հոսանք բաց թողնել այնտեղ, որ կենդանություն տանի, եթե ոչ, Դուք կորած եք։

Դուք սիրում եք ճշմարտությունը այն ժամանակ միայն լսել, երբ չարիքը արդեն կատարված է, բայց սկզբում նա վրդովեցնում է Ձեզ։ Ես համոզված եմ, որ այդ նամակը նույնպես կվրդովեցնի Ձեզ, փույթ չէ, բարկացե՛ք, բայց ասածս ճշմարտություն է, թեև կծու է։

Դուք առանց ընկերների, և լավ ընկերների, չեք կարող ապրել։

*Ձեր ամենալավ աշխատությունները միշտ եղել են արդյունք տաք վիճաբանությունների և կենդանի խոսակցությունների բարեկամների շրջանում։ Պետք է կրկին կենդանացնել այդ շրջանը, որպեսզի փարատվի Ձեր մթնոլորտի մռայլն ու վհատությունը, և կրկին վերադառնա Ձեր վաղեմի եռանդն ու զորությունը։*

*Դուք պետք է ցած դնեք Ձեր* դիկտատորի *գավազանը և ընկերների հետ ընկերաբար վարվեք։ Դուք պետք է հավասար բաժանեք թե՛ աշխատանքը, թե՛ արդյունքը, թե՛ իրավունքները և թե՛ պարտականությունները։ Այլ կերպով «Մշակը» Ձե՛զ, միայն Ձեզ չի հաջողվի հրատարակել։*

*Եթե Դուք լինեիք Ձեր առաջվա դրության մեջ, ես այդ խորհուրդները չէի տալ Ձեզ։ Ես միշտ այն կարծիքի էի, որ մեր մեջ գործերը դեռ ընկերաբար վարելը շատ դժվարություններ է հարուցանում, հարկավոր է, որ մեկը դիկտատոր լինի։ Բայց լրագրական գործում այդ կարող է հաջողվել այն ժամանակ միայն, երբ դիկտատորը հարուստ մեկը կլինի, փողը կտա ու կասե՝ դու լեզուդ լու պահի՛ր և միայն քո գործը կատարի՛ր։*

*Այժմ Դուք ինքներդ Ձեր ապրուստի միջոցները սպասում եք «Մշակից» և այդ ավելի պատճառ պետք է տա Ձեզ՝ հաստատ հիմունքների վրա դնել նրա գոյությունը, որպեսզի Ձեր ապրուստն էլ փոքրիշատե ապահովված լինի։*

*Բարոյական կապ, գաղափարներ, իդեալներ, զոհաբերություն, այդ բոլորը շատ գեղեցիկ խոսքեր են, բայց դրանք լինում են գործի սկզբում միայն, և իր ժամանակին չխնայվեցան «Մշակի» հաջողության համար։ Իսկ երբ գործը մի որոշ ձև է առնում, այն ժամանակ* նյութական *հարցը ինքնըստինքյան ներս է սողում։ Միթե կարելի՞ է փոխել կյանքի անհրաժեշտությունները։ Ի՞նչ պետք է արած, որ մարդիկ այնպես չեն ստեղծված, որ առանց ուտելու, առանց խմելու գործեին։*

*Ես կատարելապես հաստատում եմ Ձեր կարծիքը իմ մասին (որպես շատերի մոտ բամբասել եք), որ ես այժմ* մատերիալիստ *եմ դարձել։ Աղքատությունը սովորեցրեց ինձ այդ։ Իմ կյանքում կրած ամենադառն փորձերից ես համոզվեցա, որ քաղցած փորով ոչինչ չէ կարելի շինել, իսկ այն օրը, եթե գրպանումս մի ռուբլի ունեմ ճաշելու համար, իմ գրավոր աշխատանքը ավելի գեղեցիկ է դուրս գալիս։ Մի՞թե այդքան ծանր հարվածներ կրելուց հետո, Դուք ևս չհամոզվեցաք, որ փողը լավ բան է։*

Թե ի՞նչ անօրինություններ եք արել «Մշակի» առաջիկա տարվա հրատարակության համար, ինձ հայտնի չէ։ Բայց այդքանը պետք է ի նկատի ունենալ, որ «Մշակի» գալոց տարվա հաջողությունը կախված է ներկա տարվա վերջին ամիսների գործողություններից։ Դուք բավական ժամանակ կորցրիք, իսկ եթե այդ մնացած ամիսներն էլ ապարդյուն անցկացնեք, ապագա հաջողությունը շատ երկբայական պետք է համարել։

Վերջացնում եմ նամակս, հայտնելով Ձեզ, եթե այդ մոտ ժամանակներում մենք որևէ համաձայնության չհասանք, ես ստիպված կլինեմ հայտարարել, որ «Մշակի» հետ իմ գործակցությունը վերջացած է։ Այդ ես պետք է անեմ, ահա ինչ պատճառով. դեռևս թե՛ այստեղ և թե՛ գավառներում ինձ չեն բաժանում «Մշակից» և ամեն կողմից զանազան հարցերով ձանձրացնում են ինձ. դեռևս իմ նամակները և փողի ծրարները «Մշակի» խմբագրատան անունով են ուղարկվում, և բացի դրանցից, որ ամենակարևորն է, չեմ ծածկում Ձեզանից, եթե ես «Մշակից» բաժանվելու լինեմ, ինձ կհարկավորվի մի այլ խմբագրատան մեջ պարապմունք գտնել (իհարկե, բացի «Մեղուի» և «Նոր դարի»), կամ մտածել մի սեփական պարբերական հրատարակություն սկսելու մասին։

Ցանկանում եմ Ձեզ կատարյալ հաջողություն,՝ տացե ստաված, որ իմ հայտնած կարծիքները «Մշակի» ապագայի մասին բոլորովին սխալ հայտնվեին։

Րաֆֆի

## 72. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիս, 24 նոյեմբ., 1885 ամի

*Հարգելի բարեկամ*
*Մելքոն Կասպարիչ,*

*Ձեր վերջին նամակը օգոստոսի 4-ից գրած ստացել եմ. շնորհակալ եմ Ձեր հոգածության համար պատկերների մասին, բայց դեռ չեմ վճռել, թե որքան հարմար է Մոսկվայում պատրաստել տալը, որովհետև նույն նպատակով ես բանակցությունների մեջ եմ գտնվում և Գերմանիայում պ. Անդրեաս Արծրունու հետ, և Վենետիկում հայր Ալիշանի հետ։*

*Պ. Արծրունին կրկին իրավունք ստացավ «Մշակը» հրատա-*

յակելու. այս տարի մի քանի համարներ միայն կտա, իսկ եկող տարվանից կսկսվի կանոնավոր հրատարակությունը։ Դեռևս հայտնի չէ՝ արդյո՞ք պիտի աշխատակցեմ, թե ոչ, որովհետև ես և մի քանի երիտասարդներ առաջարկում ենք պ. Արծրունուն, որ նա մի խումբ կազմե մշտական աշխատակիցներից և ընդհանուր ուժերով սկսե հրատարակությունը և ոչ թե միայնակ։ Ընթերցող հասարակության պահանջներին բավականություն տալու համար հարկավոր է, որ լրագրի խմբագրությունը լավ կազմված լինի, նրա յուրաքանչյուր բաժինը իր առանձին գլուխն ունենա, որ համարները անբովանդակ և դատարկ դուրս չգան։

Պ. Արծրունին միշտ պատճառ է բերում, թե փող չունի և չի կարող վճարել և այլն։ Բայց այդ խումբը պատրաստ կլինի և ձրի աշխատել, միայն թե իր կատարած պարտականությունների հետ և որոշ իրավունքներ ունենա խմբագրատան մեջ։ Իսկ այդ իրավունքներն էլ չի կամենում տալ նրանց պ. Արծրունին, ցանկանում է առաջվա նման միապետ լինել իր խմբագրատան մեջ։ Լրագրի շահերը պահանջում են, որ նա փոքր-ինչ զիջողություններ անե, որովհետև նրա դրությունը փոխվել է և պետք է բոլորովին նոր պայմանների մեջ դնե գործի սկզբնավորությունը։ Ձեր բարեկամ պ. Արասխանյանցը նույն խմբի մեջ կլինի, եթե հիշյալ առաջարկությունը չընդունվեցավ, ես կհրաժարվեմ աշխատակցելուց, որովհետև «Մշակի» համար ոչինչ հաջողություն չեմ սպասում ես, եթե անկարգ դրության մեջ կսկսվի նրա հրատարակությունը։ Ամեն ոք ցանկանում է օգնել պ. Արծրունուն, բայց նա էլ պետք է մտածե, եթե իր աշխատակիցներին փողով վարձատրել չէ կարող, գոնե պետք է բարոյապես վարձատրե։

Մակարի ընդունելությունը այստեղ խիստ փառավոր կերպով կատարվեցավ, բայց այդ ավելի պոլիցիական ընդունելություն էր, քան թե ժողովրդական։ Ժողովուրդը սառնասիրտ մնաց, համակրության ոչ մի ցույց չարտահայտեց, ընդհակառակն, բոլորի դեմքերի վրա նկատվում էր խորին դժգոհություն։

Նա դեռ այստեղ է, դպրոցների բացման մասին իշխան Դոնդուկովի հետ բանակցություններ է անում։ Ասում են, որ իշխանը խոստացել է այդ, մոտ օրերում գնալու է Պետերբուրգ, որտեղ կաշխատե բարեփոխել տալ մեր դպրոցների մասին կազմված ծրագիրը և բացման իրավունք կտանի։ Ես հավատում եմ այդ խոստ-

*մանը, միայն իմ կարծիքով ծրագրի բարեփոխությունը շատ աննշան կլինի, որովհետև, որպես լսվում է, Մակարը արդեն մի քանի կարևոր կետերում համաձայնություն է հայտնել։*

*Ընդունեցեք իմ խորին հարգանքը՝*

Հ. Մելիք-Հակոբյան

## 73. ԼԵՈՅԻՆ

[1885 թիվ, 15-ը դեկտեմբերի]

*«Մշակը» առաջիկա հունվարից կսկսվի հրատարակվել, բայց դեռ հայտնի չէ՝ արդյոք ես պիտի աշխատակցե՞մ, թե ոչ, որովհետև դեռ իմ և պ. Արծրունու մեջ համաձայնություն չէ կայացել մեր պայմանների մասին։ Նրա այժմյան վիճակը ի նկատի առնելով, ես առաջարկեցի, որ մի խումբ կազմվի, և ամենքը* ընկերաբար *կատարեն լրագրի հրատարակության գործը, այնպես որ, խմբագրատան անդամների իրավունքները և պարտավորությունները որոշված լինեն, և խմբագրատունը իր մեջ ուժ ու համերաշխություն ունենա։ Բայց նա, որպես երևում է, դժվարանում է ընդունել այդ առաջարկությունը, ցանկանում է առաջվա նման ինքը միայնակ լրագրի թե՛ տերը և թե՛ կառավարիչը լինել։ Այսպես, իմ կարծիքով, հազիվ թե նա կարող կլինի հասարակությանը գոհացնել, որովհետև նյութերի մեծ կարոտություն կունենա և ստիպված կլինի դատարկ, անբովանդակ համարներ դուրս տալ և մյուս լրագրերի պես հասարակությանը զզվացնել։ Մի մարդ, առանց հիմնավոր և ուժեղ խմբագրատան, չէ կարող մի օրինավոր լրագիր հրատարակել, որքան էլ ինքը տաղանդավոր լինի։ Շատ ցավում եմ, որ ես պետք է թողնեմ իմ սիրած լրագիրը, և ցավում եմ ավելի այն պատճառով, որ նրա համար մի լավ ապագա չեմ տեսնում...*

## 74. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիս, 25 դեկտ., 1885 ամի

*Հարգելի բարեկամ Մելքոն Գասպարիչ.*

*Մի փոքրիկ հանձնարարություն առիթ տվեց ինձ գրել այդ նամակը։ Մի քանի օր առաջ ճանապարհ ընկավ դեպի Մոսկվա*

*Ձեր հայրենակիցներից մի երիտասարդ Քրիստափոր Միքայելյան անունով, որ դիտավորություն ունի այնտեղ բարձր ուսում ստանալու։*

*Այդ երիտասարդը բոլորովին աղքատ տղա է. նա ինքը կպատմե Ձեզ, թե ինչպես կամ ինչ միջոցներով կարողացել է ուսում առնել։ Մոսկվայում ապրելու համար նա ունի միայն ամսական 15 ռուբլի, իհարկե, դա շատ փոքր գումար է նրա ապրուստի համար։*

*Ես և ինձ հետ պ. Միքայելյանի մի քանի բարեկամները աշխատելու ենք, որ Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերությունը ամսական մի 10 կամ 15 ռուբլի նշանակե նրա համար։ Բայց մինչ որ այդ կիրագործվեր, և որպեսզի նա ծախքերի կարոտություն չկրեր, ես կխնդրեի Ձեզանից, որ ծանոթացնեիք նրան զանազան հայ ընտանիքների հետ։ Եթե երեխաների համար մասնավոր դասատու կպահանջեին, նա կարող է շատ խղճմտանքով պարապել։ Պ. Միքայելյանը լավ վարժապետ է, իսկ նրա բարոյականության մասին կարող եք հավատացած լինել, որ ամենապատվական երիտասարդ է։*

*Ընդունեցեք իմ անկեղծ հարգանքը՝*

Հ. Մելիք-Հակոբյան

## 75. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիս, 8 հուլիսի, 1886 թ.

*Հարգելի բարեկամ*
*պարոն Մ. Փանյանց,*

*Շնորհակալությամբ ստացա իմ գրքերի մնացած հաշվից գոյացած 15 ռուբլ. 30 կոպ., ստացել եմ նաև Ձեր վերջին երկու նամակները։ Չեմ կարող խոսքերով բացատրել այն մեծ գոհունակությունը, որ Դուք Ձեր առաքինական բարեսրտությամբ պատճառեցիք ինձ այսքան տարվա ընթացքում։ Շնորհակալ եմ, ազնիվ պարոն, թող իմ սրտագին երախտագիտությունը վարձատրություն լինի Ձեր աշխատության։ Դուք միշտ բարի եք եղել դեպի հանգուցյալ Նալբանդյանցը և նույն բարությունը ցույց տվեցիք ինձ։ Եթե հայերը Ձեր հոգին ունենային, նրա գործիչները շատ դժբախտ չէին լինի։*

*Լավ եք մտածել, որ հեռանում եք մայրաքաղաքի աղմուկից և Ձեր կյանքի վերջին օրերը ցանկանում եք հայրենյաց գրկում անցկացնել։ Թեև Ձեր բացակայությունից հետո Մոսկվայի եկեղեցիները շատ պիտի կորցնեն իրանց բարեզարդությունից, այսուամենայնիվ Ձեզ պետք է հանգստանալ, և հանգստանալ հայրենյաց լռության մեջ, հին բարեկամների և ազգականների շրջանում։ Դուք Ձեր կյանքում շատ եք գործել, և Ձեր պարտքը պետք է վճարած համարել։*

*Կցանկանայի այստեղ տեսնել Ձեզ և մոտից սեղմել Ձեր բարեկամական ձեռքը։ Ձեզ, իհարկե, դժվար կլինի գտնել իմ բնակարանը, բավական է, եթե հայտնեք «Կենտրոնական դրավաճառանոցում», որ Դուք եկել եք, և ես ավելի շուտով կգտնեմ Ձեզ։*

*Ընդունեցեք իմ խորին հարգանքը՝*

Հ. Մելիք-Հակոբյան

## 76. ԱՌԱՔԵԼ ՄԱՏՈՒՐՅԱՆԻՆ

Թիֆլիս, 25 օգոստ., 1886 ամ.

*Մեծապատիվ պարոն*
*Ա. Մատուրյան,*

*Խորին շնորհակալությամբ ստացա Ձեր ծախքով տպագրված «Գաղտնիք Ղարաբաղի» կոչված գիրքը։ Բայց ցավելով պետք է հայտնեմ Ձեզ, որ զանազան խաբեբաներ, օգուտ քաղելով Ձեր բարեսրտությունից, Ձեզ տպագրել են տվել մի գիրք, որ հավիտյան պետք է* գայթակղության քար *դառնա հայոց պատմական գրականության մեջ և պետք է շատերին մոլորեցնե։*

*Եթե այդ գիրքը լիներ իսկապես մի* հին գրվածք, *ինչպես ներկայացրել է Ձեզ Մակար վարդապետը, շատ հասկանալի է, որ Դուք մեծ ծառայություն արած կլինեիք հայոց գրականությանը, տպագրելով նրան։ Բայց այդ գիրքը նույն իսկ Մակար վարդապետի աշխատությունն է, միայն հին անվան տակ ծածկված, որպեսզի հետաքրքրություն շարժե ու գնողներ հրապուրե։*

*Պատմական գրականության մեջ այդպիսի խարդախ գրքերի հեղինակը նույն նշանակությունն ունի, ինչպես մի մարդ կեղծ վկայականներ կամ կեղծ թղթադրամներ է շինում։ Եվ Մակար վարդապետը արել է այդ աններելի խարդախությունը։*

*Այդ խոսքերով ես նպատակ չունիմ վշտացնել Ձեր սիրտը, որովհետև Ձեր ցանկությունը բարի է եղել, բայց Ձեզ խաբել են։*

*Դուք կարդացել եք և կկարդաք այդ գրքի մասին մինչև անգամ գովասանական հոդվածներ լրագրների մեջ։ Բայց դրանց գրողները կամ տգետներ են և պատմությունից ոչինչ տեղեկություն չունին, կամ ամենաստոր շողոքորթներ են։ Ես սպասում եմ, մինչև ամենքը իրանց ասելիքը ասեն, հետո փաստերով կապացուցանեմ, որ այդ գիրքը Աբրահամ կամ Սարգիս Բեկնազարյանների գործը չէ, այլ Մակար վարդապետի կեղծ աշխատությունն է։*

*Վերջացնելով նամակս, բարեկամական խորհուրդ կտայի Ձեզ, որ Դուք այդ մեղքը Ձեզանից հեռացնելու համար, քանի որ գիրքը բոլորովին տարածված չէ, մի օրինակ ուղարկեցեք Թիֆլիսի «Տպագրական ընկերությանը» և խնդրեցեք, որ քննեն և իրանց*

կարծիքը հրապարակավ հայտնեին, որպեսզի ապագայում այդ գիրքը պատմության մեջ մոլորության պատճառ չդառնար։

Ընդունեցեք իմ խորին հարգանքը՝

Հ. Մելիք-Հակոբյան (Րաֆֆի)

# 1887

## 77. ԱՂԵՔՍԱՆԴՐ ԱԲԵԼՅԱՆԻՆ

Թիֆլիս, 28 նոյեմբ., 1887 ամի

Մեծապատիվ պարոն Աղեքսանդր Հ. Աբելյանց,

Պարոն Շիրվանզադեն հաղորդեց ինձ Ձեր բարի ցանկությունը, որով կամեցել էիք նպաստել «Կայծերի» 2-րդ հատորի տարածմանը Բաքվի մեջ։ Շնորհակալ եմ Ձեր անկեղծ համակրության համար։ Ամսույս 25-ին փոստով ուղարկվեցավ Ձեզ 22 օրինակ, որից մեկը կընդունեք իմ կողմից Ձեզ նվեր, մեկը կընծայեք Ձեր գործավորների ընթերցարանին, իսկ մնացյալ 20-ը կվաճառեք։

Նույն կապոցի մեջ կգտնեք 20 անդորրագիր «Սամվելի» բաժանորդագրության։ Խնդրեմ տարածեք Ձեր ծանոթների մեջ։

Դեռ «Սամվելի» առաջին գլուխները նոր էին լույս տեսել «Արձագանքի» մեջ, ես շատ տեղերից նամակներ ստացա, ցանկություն էին հայտնում այդ վեպը առանձին գրքով տպագրված տեսնել։ Իմ ընթերցողների բաղձանքներին բավականություն տալու համար ես սկսեցի առանձին գրքով արտատպել «Արձագանքից»։ Մինչև այժմ տպված է 34 թերթ, այսինքն՝ 534 երես։ Հույս ունեմ. մինչև նոյեմբեր ամիսը տպագրությունը վերջանա։ «Սամվելի» առաջին հատորը բաղկացած կլինի երեք գրքերից, թե՛ գիրքը և թե՛ ծավալը ավելի մեծ կլինի, քան թե «Կայծերի» 2-րդ հատորը։

Ներկայումս գիրքը և ժողովրդի մեջ ընթերցանություն տարածելը այն փրկարար միջոցներից մեկն է, որ կազատեն նրան շատ մոլորություններից։ Նոր, ժամանակակից և թարմ մտքերի հետ ծանոթանալով նա կուղղե յուր ճանապարհը, յուր ընթացքը։ Եվ «Սամվելը» այդ իսկ նպատակով գրված է, թեև նա պատմական վեպ է։ Մեր այժմյան դրությունը նույն դրությունն է, ինչ որ էր չորրորդ և հինգերորդ դարերում։ Բայց ցավալին այն է, որ ընթերցանություն տարածելու գործը մեզանում խիստ դանդաղ և խիստ թույլ

կերպով է առաջ գնում։ Պատճառը, իմ կարծիքով, այն է, որ մեղանում կրթության գործը միակողմանի է և սահմանափակ։ Վերջին ժամանակներում ամենքն իրանց խելքն ու միտքը տվեցին դըպրոցներին և ամեն լույս նրանից էին սպասում, առանց մտածելու, որ դպրոցը չէ կարող այն տալ, ինչ որ կարող է տալ մի լավ և նպատակահարմար կերպով մշակված ընթերցանության գիրք։ Իմ աշխատությունների նպատակը մինչև այսօր եղել է և պիտի լինի՝ մեր ժողովրդին նոր մտքեր տալ և նոր գաղափարների հետ ծանոթացնել։ Բայց մեր հասարակության մտածող մասը, որ փոքրիշատե հասկանում է այդ, պետք է նպաստի հեղինակին, որ նա կարողանա հառաջ տանել յուր սկսած գործը։ Ես ոչ ոքից ողորմություն չեմ պահանջում։ Ես պահանջում եմ այսքանը միայն, որ հայ հասարակությունը, վերջապես, հասկանա, որ գիրքը նույնպիսի մի կենսական պահանջ է, որպես հացը և ջուրը, առանց որոց ապրել չէ կարող նա։ Իսկ առանց գրքի նա կմեռնի թե՛ բարոյապես և թե՛ մտավորապես...

Բաքուն, որ շատ հիմար բարեգործությունների մեջ ցույց է տվել յուր եռանդը և առատաձեռնությունը, բայց իմ վերաբերությամբ մինչև այսօր անտարբեր է գտնվել։ Իմ գրքերը այդտեղ համեմատաբար ավելի սակավ են տարածվում, քան մի որևէ աննշան քաղաքում։

Ձեր եղբորը հայտնի է իմ այժմյան դրությունը, եթե երկար շարունակվեց, ես ցավելով պետք է թողնեմ այն ասպարեզը, որ սուրբ էր, որ նվիրական էր ինձ համար։ Այսքան տարիների աշխատություններից հետո, չքավորության մեջ մեռնելը շատ ախորժելի բան չէ... մանավանդ, որ առողջությունս բոլորովին քայքայված է...

Թողնենք այդ տխուր խոսողությունները։ Եթե Անդրկասպյան երկրների, նոր հայ գաղթականների մեջ ծանոթներ կամ բարեկամներ ունեք, մատնացույց արեք ինձ, ես կուղարկեմ նրանց «Սամվելի» բաժանորդագրության մի քանի անդորրագրեր։ Այդ հիմարները, որպես լսեցի, մի գրքի տպագրության համար 2000 ռուբլի փող են հավաքել, որը երկրորդ «Գաղտնիք Ղարաբաղի» պետք է դառնա մեր գրականության մեջ...

Ընդունեցեք իմ խորին հարգանքը՝ Րաֆֆի

Թե՛ գրքերի և թե՛ բաժանորդների արծաթը խնդրեմ շտապեք շուտով հասցնել ինձ, որովհետև նրանք այժմ պետք են «Սամվելի» տպագրության ծախքերը հոգալու:

## 78. ԽԱՉԱՏՈՒՐ ՏԵՐ-ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

Թիֆլիս, 18 օգոստոսի, 1887 ամի

*Մեծապատիվ պարոն*
*Խ. Տեր-Զաքարյանց,*

*Ստացա Ձեր և մահտեսի Սիմոնի ստորագրությամբ նամակը, որով մի վարժուհի և մի վարժապետ եք պահանջում անեղվույգ-դպրոցների համար: Վարժուհի՝ պարոն Սաաիկը այստեղ եղած ժամանակ՝ վարձեց. այդ Ձեզ պետք է հայտնի լինի: Իսկ ինչ որ վերաբերում է վարժապետին, կա մի վարժապետ, որ Ձեր հայտնած պայմանների համար շատ հարմար է: Դա միևնույն անձնավորությունն է, որի մասին թե՛ ես և թե՛ «Մշակի» խմբագրությունը հեռագրել է Ձեզ, բայց տակավին պատասխան չէ ստացվել: Ազգանունը Գյուլամիրյանց է, ավարտել է Ներսիսյան դպրոցում և մի քանի տարի վարժապետություն է արել: Բնիկ ագուլիսեցի է:*

*Ես խոստացել էի նրա համար տարեկան 500 ռուբլի ռոճիկ և 30 ռուբլի ճանապարհի ծախք: Բայց «Մշակի» խմբագրատունը, որպես լսում եմ, խոստացել է 600 ռուբլի: Հայտնի բան է, որ նա այդ վերջին գումարով կհոժարվի գալ:*

*Չգիտեմ ի՞նչ եք մտածել, որ երեք, միմյանց բոլորովին հակառակ խմբագրատուններին՝ հանձնարարություն եք արել վարժապետ վարձելու առանց ի նկատի առնելու, որ յուրաքանչյուրը յուր կուսակիցները և յուր մարդիկն ունի, իհարկե, նրան կառաջարկե, և այսպիսով կծագեն տարաձայնություններ: Եթե այդ երեք խմբագրատներին վարձեին երեք վարժապետներ և ուղարկեին, նրանք ամենայն իրավունքով յուրյանց ռոճիկները կստանային Ձեզանից: Եվ Սպանդարյանը կամենում էր մի այդպիսի բան անել:*

*Վերջապես, բարեբախտաբար «Մշակի» խմբագրատունը, առանց ինձ հետ խորհրդակցելու, նույն անձին է առաջարկել, որին ես եմ առաջարկել: Եթե կամենում եք, կարգադրեցեք, որ ճանապարհ դնենք: Միայն մի ուշացրեք, որովհետև նրան ուրիշ տեղերից ես հրավիրում են, և Թավրիզի հուսով մնալով, կզրկվի յուր պաշտոնից:*

Դարձյալ, պարոն Խաչատուր, հանգուցյալ աղա Աբրահամը իմ «Կայծեր» կոչված վիպասանության համար բաժանորդագրություն էր արել Թավրիզում, և այդ վեպի երկրորդ հատորն էս լույս անելով, ես պետք է ուղարկեմ բաժանորդներին։ Ծրարիս մեջ կգտնեք բաժանորդների անվանական ցուցակը, խնդրեմ, հայտնեք ինձ, թե որո՞նք գտնվում են այնտեղ, և որո՞նք բացակա են, որպեսզի նրանց թվի համեմատ գրքեր ուղարկեմ։ Դուք, հույս ունիմ, որ կընդունեք այդ ծանրությունը՝ հանձնելու ըստ պատկանելույն։ Այս շաբաթ փոստով ուղարկեցի միայն 10 հատ, բայց ոչ պասիլկայի ձևով, այլ բանդրոլով (խաչակապով), երկու գիրք միասին կապած։

«Կայծերի» բոլոր բաժանորդները վճարել են ճանապարհի ծախք առաջին և երկրորդ հատորների համար 50 կոպեկ։ Դուք ևս ստացեք Թավրիզի բաժանորդներից, բայց եթե դժգոհություն հայտնելու լինեն, հարկավոր չէ։

Ընդունեցեք իմ հարգանքը՝

Հ. Մելիք-Հակոբյան

Հ. Գ. Նամակս գրել, վերջացրել էի, հետո նկատեցի, որ Թավրիզի բաժանորդների ցուցակը թղթերիս մեջ չէ երևում։ Եթե մինչև գալոց փոստի օրը չգտա և չուղարկեցի, կնշանակե, որ իմ մոտ խուզարկության եղած ժամանակ մյուս թղթերիս հետ տարած են։ Այդ դեպքում շատ դժվար պետք է լինի իմանալ, թե ովքե՞ր էին այնտեղի բաժանորդները։ Առաջին հատորը հանձնվել է որքան հիշում եմ, Ցինեքչյանի ձեռքով. կարելի՞ է արդյոք իմանալ, թե ովքե՞ր են ստացել առաջին հատորը։ Ինձ այսքանը միայն հայտնի է, որ Թավրիզի բաժանորդները 16 հոգի են եղել և ոչ ավելի, և 16 գիրք պետք է բաժանվի։ Բայց գուցե, միևնույն անձը մի քանի օրինակի գրված լինի։ Այդ դեպքում, բաժանորդների թիվը 16-ից կպակսի, բայց գրքերի քանակությունը նույնը կմնա, այսինքն 16 հատ։

Հ. Մ.

## 79. ԽԱՉԱՏՈՒՐ ՏԵՐ-ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

Թիֆլիս, 12 նոյեմ., 1887 ամի

*Մեծապատիվ պարոն*
*Խ. Տեր-Զաքարյանց,*

*Ստացա Ձեր 19 սեպտեմբերից գրված նամակը, շնորհակալ եմ Ձեր ուշադրության համար, որ ուղարկել եք Թավրիզի և Արդաբիլի բաժանորդների ցուցակը։ Թավրիզի բաժանորդների թիվն է 16, իսկ Արդաբիլինը՝ 19. երկուսը միասին՝ 35 օրինակ։*

*Ես ուղարկել եմ Ձեզ մի անգամ 10 օրինակ, իսկ այս փոստայով դարձյալ ուղարկեցի 30 օրինակ, ընդամենը՝ 40 օրինակ։ Եթե բաժանորդներին հանձնելից օրինակները դուրս գանք, կմնա 5 օրինակ ավել։ Այդ 5 օրինակից մեկը իմ կողմից կընծայեք տեղվույդ Հայոց ընթերցարանին, իսկ մնացած չորսը կտաք պ. Ավագ Ավթանդիլյանին։ Նա «Կայծերի» առաջին հատորի մի մասը արտագրել էր ինձ համար, և իբրև վարձատրություն, չեմ հիշում առաջին հատորից քանի օրինակ էի ուղարկել, այժմ կրկին ուղարկում եմ 4 օրինակ երկրորդ հատորից, թեև նրա աշխատությունը այդքան վարձատրության չէր արժի։*

*Բաժանորդներից, որոնք մեռած են, պետք է հասանելի գրքերը հանձնել նրանց ժառանգներին, իսկ որոնք բացակա են, պետք է սպասել՝ մինչև հայտնվեն։ Եթե ես գիտենայի որտեղ են, այստեղից կուղարկեի։*

*Եթե գրքերի խաչակապների վրա կպցրած մարկաներին նայելու լինեք, կտեսնեք, թե որքան փոստային ծախք ունին։ Ռուսաստանի բաժանորդները վճարել են հիսունական կոպեկ ճանապարհի ծախք, բայց Դուք Պարսկաստանի բաժանորդներից ստացեք յուրաքանչյուր գրքի համար գոնե մեկ կռան, որպեսզի ճանապարհի ծախքը մեզ վրա չծանրանա։ Իսկ եթե դժգոհություն հայտնելու լինեն, հարկավոր չէ։*

*Դարձյալ, հարգելի բարեկամ, ես դիտավորություն ունեմ ընտանիքս այս աշուն բերել տալու Թիֆլիս, որովհետև որդիներիս ուսում առնելու ժամանակն է։ Արդեն գրած եմ նրանց, և պետք է այժմ ճանապարհ ընկած լինին։ Նրանք գալու են Թավրիզ, խնդրեմ հոգ տանեք՝ մուժումբարցի ջարվադարներով ճանապարհ դնեք մինչև Ջուլֆա, կամ, եթե կարելի լինի, մինչև Նախիջևան, որ ավե-*

լի համար կլինի, այնտեղից ֆուրգոն կվարձեն, կգան մինչև Թիֆլիս: Եթե Թավրիզից այս կողմերը ընտանիքներ գալու լինեն, լավ կլինի, որ նրանց հետ գան: Երբեմն պատահում է, որ Թավրիզից ևս ուղղակի ֆուրգոններ են գալիս մինչև Թիֆլիս կամ Երևան: Դրանց հետ ևս կարելի է ճանապարհ դնել:

Վերջապես, այնտեղի հանգամանքները Ձեզ ավելի լավ պետք է հայտնի լինեն, որպես հարմար կգտնեք, այնպես ճանապարհ դրեք: Եթե ճանապարհի ծախքի կարոտ կլինեն, խնդրեմ տաք, ինձ գրեցեք, ես փոխարենը այստեղ կվճարեմ պարոն Մելիք-Ադամյանցին: Թավրիզում պետք է օրինավոր պասպորտ տանեք նրանց համար, որպեսզի սահմանի վրա նեղություն չտան:

Հուսով եմ, որպես միշտ ցույց եք տվել մեզ Ձեր բարեկամական բարեսրտությունը, այդ մասին ևս չեք խնայի Ձեր ջանքերը, որով շատ և շատ պարտավորված կլինեք մեզ: Ես արդեն վճռել եմ վերջնական կերպով մնալ Թիֆլիսում, և պետք է իմ ընտանիքը այսուհետև ինձ մոտ լինի:

Ուշտից մի քանի անգամ դիմել են ինձ, խնդրելով, որ մի-մի օրինակ իմ հեղինակություններից ընծայեմ տեղային Հայոց ընթերցարանին: Այդ մարդիկը հանգստություն չեն տալիս և միշտ կրկնում են իրանց խնդիրքը: Ես կհայտնեմ նրանց, որ մի որևէ մարդու հանձնեն Թավրիզում ստանալ Ձեզանից մի-մի օրինակ Ձեզ մոտ գտնված գրքերից, որպեսզի ճանապարհի հոգսն էլ Ձեզ վրա չմնա: Տվեցեք նրանց մի-մի օրինակ, միայն անկազմ կամ հասարակ թղթով:

Պարոն Ցենկերչյանի ինձ ուղարկած հաշվից երևում է, որ Ձեզ մոտ բավական գրքեր է թողել, ես շատ սխալվեցա, որ այդքան ուղարկեցի, կարծելով, որ Թավրիզում կծախվի: Այժմ ես բերելը մեծ դժվարություններ ունի, թող առ ժամանակ ես մնա Ձեզ մոտ, մինչև կկարգադրեմ, թե ի՞նչ պետք է անել: Միայն «Ջալալեդդինից» որքան մնացել է, մեր տանեցոց հետ ուղարկեցեք, որովհետև այստեղ ոչ մի հատ չունեմ:

Ընդունեցեք իմ խորին հարգանքը՝

Հ. Մելիք-Հակոբյան

## 80. ՎԱՍԻԼ ԵՂԻԱԶԱՐՅԱՆՑԻՆ

Թիֆլիս, 26 դեկտեմ., 1887 ամի

*Հարգելի բարեկամ*
*Վ. Եղիազարյանց,*

*Շնորհակալությամբ ստացա «Սամվելի» բաժանորդագրությունից գոյացած 63 ռուբլին, կաշխատեմ գրքերը անհապաղ հասցնել պ. բաժանորդներին։ Տպագրությունը արդեն վերջացած է, գիրքը լույս կտեսնի տոներից հետո։*

*Սուրխասանովին հանձնած տետրակի բաժանորդագրության փողը նույնպես ստացած եմ նրա ազգական Մակար Տեր-Սարգսյանի միջոցով 63 ռուբլի։*

*Բաժանորդների ցանկությունը՝ գրքերը յուրաքանչյուրի հասցեով ուղարկել՝ փոքր-ինչ դժվար կլինի կատարել, որովհետև շատ անգամ պատահել է, որ հայ ծառայողները գրքերը փոստատանից ստանում են և իրանց հասցեին չեն հասնում։ Որպեսզի այս տեսակ անկարգություններ չպատահին, հարկավոր կլինի ապահովացնել։ Այն ժամանակ ամեն մի գիրքը 50 կոպեկ ավել ծախք կվերառնի, որովհետև «Սամվելը» ավելի մեծ կդուրս գա, քան թե «Կայծերի» 2-րդ հատորը։*

*Դուք այնքան զբաղմունքներ ունեք, որ, իհարկե, Ձեզ նեղություն չեմ տա, այլ գրքերը միանգամից կուղարկեմ պ. Կարապետ Դադամյանցին, նա բավական ճիշտ մարդ է, կհասցնե ըստ պատկանելվույն։*

*Ձեր պահանջած գրքերի ցուցակը հանձնեցի «Կենտրոնական գրավաճառանոցը». Ձեր հանձնարարությունը կկատարեն։*

*Ընդունեցեք իմ խորին հարգանքը՝*

Րաֆֆի

*Զավակներս առողջ են, ընտանիքս բավական ուրախ է Թիֆլիս տեղափոխվելու համար։ Ես նույնպես հանգիստ եմ, թեև սկզբում փոքր-ինչ նեղություններ պետք է կրեմ մեր աղքատ տնտեսությունը կարգի դնելու պատճառով։ Շնորհակալ եմ Ձեր բարեկամական կարեկցության համար։*

## 81. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

Թիֆլիս, 19 մարտի, 1888 թվի։

*Մեծապատիվ պարոն Մ. Փանյանց,*

*Երկար ժամանակ Ձեզանից նամակ չստանալուց հետո, վերջապես ստացա 25 փետրվարի գրած նամակը, որով հայտնում եք, թե «Կայծերի» երկրորդ հատորը իր ժամանակին ստանալով հանձնել եք բաժանորդներին, բացի երեք անձինքներից, որոնց անունները նշանակել եք Ձեր նամակում։ Նրանց պատկանելի օրինակները կաշխատեմ շուտով հասցնել իրանց, ստուգելուց հետո, թե որտե՞ղ են գտնվում։*

*Լույս տեսավ իմ մի նոր աշխատությունը՝ «Սամվել» պատմական վեպը։ Թե որպիսի ընդունելություն կգտնե ընթերցող հասարակությունից, դեռ չգիտեմ, միայն այսքանը կասեմ, որ հայերը տակավին պատրաստված չեն մի լուրջ և ծանր բան կարդալու համար։*

*Հիշյալ վեպից 5 օրինակ ուղարկեցի Ձեզ, որից մեկը կբարեհաճեք ընդունել մեր կողմից նվեր, իսկ մնացյալ չորսը կբաժանեք հետևյալ պարոններին.*

*1 օրինակ Սմբատ Շահազիզին,*
*1 օրինակ Մկրտիչ Էմինին,*
*1 օրինակ Գ. Ենգիբարյանցին (ուսանող),*
*1 օրինակ Հովհ. Հովհաննիսյանցին (նոր բանաստեղծ)։*

*Ընդունեցեք իմ խորին հարգանքը՝*

Հ. Մելիք-Հակոբյան

Գրքերի յուրաքանչյուրի վրա մակագրված է անունները:

## 82. Խ. ՏԵՐ-ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

Թիֆլիս, 29 մարտի, 1888 ամի

*Մեծապատիվ պարոն*
*Խ. Տեր-Զաքարյան,*

*Ստացա Ձեր նամակը։ Տեղվույդ օրիորդական դպրոցի վարժուհու վարմունքը ինձ շատ չէ զարմացնում, նա այստեղ ևս հայտնի էր որպես թեթևամիտ աղջիկ։ Բայց նրա վարձելումը պ. Սաաիկը մեղավոր չէ, մեղավորը մի այլ անձն է, որը գուցե Ձեզ հայտնի լինի։*

*Նոր վարժուհի վարձելու համար ես հոգ կտանեմ, թեև բավական դժվարություններ կան այնպիսին գտնելու, որը թե՛ Ձեր դպրոցին համար լինեի և թե՛ Ձեր երկրին։ Այն վարժուհին, որի մասին Ձեր նամակում հիշած էիք, այժմ գտնվում է Ղզլարում, յուր ամուսնի հետ։ Նրա ամուսնի հասցեն այսպես է.*—В Кизляр. Никите Горисовичу Оганянцу.

*Ամուսինը ղզլարեցի է, իսկ կինը՝ Թիֆլիսեցի։ Փորձեցեք նամակ գրել, ես նույնպես կգրեմ, ամուսինը ինձ հետ ծանոթ է։ Ռուսերեն նա լավ գիտե, բայց հայերեն ոչ այնքան։ Ինքը հիվանդոտ աղա է, շատ կարելի է, որ խոսք տա Թավրիզ գալու. բայց այն ևս պետք է ի նկատի ունենալ, որ վարժապետները առհասարակ սուտ են լինում, երբ զանազան տեղերից հրավեր են ստանում և ամենին խոսք են տալիս, հուսադրում են այնքան ժամանակ, մինչև իրանց գտնված դպրոցի վարչության հետ նոր պայմաններ են կապում։*

*Ես իմ հավատը հայ հասարակության երկու դասակարգի վերաբերությամբ բոլորովին կորցրել եմ—քահանաների և վարժապետների, ոչ մեկին չէ կարելի հավատալ։*

*Ֆրանսերեն լեզվի դասատու այստեղ դժվար է գտնել։ Մի պոլսեցի երիտասարդ կա, որ նոր է եկած Թիֆլիս, մասնավոր դասեր է տալիս, նա շատ լավ կլիներ Ձեր դպրոցի համար, եթե համաձայնվեր գալու։ Յուր հետ դեռ չեմ խոսացել։ Ուսում է առել Փարիզում և հաստատ վկայականներ ունի։*

*Չգիտեմ ինչո՞ւ չեք կամենում օգուտ քաղել Առաքելյանի քրոջից, նա Ձեր դպրոցի համար կարող էր վարժուհի լինել, և*

նրանց դրությունը այժմ այնպես է, որ մասնավոր ռոճիկով կբավականանար։ Եղբայրը տուն թողնելու պտուղ չէ, բայց քույրը լավ աղջիկ է։

Մինչև օգոստոս դեռ բավական ժամանակ կա, կարելի է վարժապետների մասին մտածել և նպատակահարմար ընտրություն անել։ Դժվարությունը նրանումն է, որ Ձեր դպրոցի միջոցները խիստ սուղ են, չեք կարող այնքան վճարել, որ դոնե փոքր հրապուրանքով կարելի լիներ օրինավոր մարդիկ տանել։ Մնում են շառլատանները և անգործ մարդիկ, որոնք չնչին ռոճիկով պատրաստ են ամեն տեղ գնալ։

Մի հանգամանք կա, որ կարող է Ձեր գործը փոքրիշատե գլորացնել. խոսվում է և կարծեմ ուղիղ պետք է լինի, որ առաջիկա ուսումնական տարվա սկզբից՝ ռուսաց վկայական չունեցող վարժապետները չի պետք ընդունվին հայոց դպրոցներում, և այդ խստիվ պահանջում է կառավարությունը։ Այդ դեպքում, հայոց վարժապետների մեծ մասը պետք է անգործ մնա, որովհետև վկայականներ չունեն և ստիպված կլինեն օտար երկրներում հաց որոնելու։ Մինչև անգամ ռուսաց համալսարանի դիպլոմը բավական չէ տալիս վարժապետություն անելու, դրա համար պետք է առանձին քննություն տալ և վկայական ստանալ, որը շատ դժվար է։

Փոստից կստանաք 4 օրինակ «Սամվել» կոչված վեպից և կբաժանեք հետևյալ անձինքներին.

1 օրինակ Ձեզ (ընծա),

1 օրինակ առաջնորդին (ընծա),

1 օրինակ Ալթանդիլովին (ընծա),

1 օրինակ Սեդրակ Հարությունյանին (բաժանորդ է)։

Եթե պահանջողներ լինեն, մի քանի օրինակ կուղարկեմ այնտեղ վաճառելու։

Շնորհակալ եմ Ձեր կարեկցության համար, որով մի քանի անգամ հարցրել եք մեր ընտանիքի դրությունը։ Նրանք հասան Թիֆլիս խիստ հանգիստ կերպով և լավ ընկերներով, իսկ այժմ առողջ են։

Հ. Մելիք-Հակոբյան

# ՂԱՐԱԲԱՂԻ ԱՍՏՂԱԳԵՏԸ

ՂԱՐԱԲԱՂԻ ԱՍՏՂԱԳԵՏԸ

ԿԱՄ

ՇՈՒՇԻ ԲԵՐԴԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

1752 ԹՎԱԿԱՆՈՒՄ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՊ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԼԱՏՈՆ ԶՈՒԲՈՎԻ

## ԹԱՐԳՄԱՆՉԻՑ

*Թարգմանելով ռուսաց լեզվից Պլատոն Զուբովի «Ղարաբաղի աստղագետը»* (Карабагскій Астрологъ) *անունով վեպը, մեր նպատակն է եղել ծանոթացնել հայ հասարակությանը այդ գեղեցիկ աշխատության հետ, որի նյութը առնված լինելով Ղարաբաղի մելիքների կյանքից, հարկավ, մեզ՝ հայերիս համար պետք է շատ հետաքրքիր լինի:*

*«Ղարաբաղի աստղագետը» տպվեցավ Մոսկվայում 1834 թվականում, կնշանակե, մեզանից 48 տարի առաջ: Բայց չնայելով, որ այդ գրքի լույս տեսնելուց անցել է մի ամբողջ կես դար, այնուամենայնիվ, մենք՝ հայերս, մինչև այսօր ոչ միայն նրա բովանդակության հետ ծանոթ չէինք, այլ նրա գոյության մասին անգամ տեղեկություն չունեինք: Մենք չգիտեինք, որ ռուսաց գրականության մեջ կա մի գիրք, որը ամբողջապես նվիրված է Ղարաբաղում կատարված տխուր անցքերին...*

*Այժմ ներկայացնելով «Ղարաբաղի աստղագետը» մեր ընթերցող հասարակությանը, մեր ցանկությունն է՝ ոչ միայն ծանոթացնել նրան մի գեղեցիկ վիպական ստեղծագործության հետ, որի մեջ արևելյան կյանքը նկարված է իր պարզ, նահապետական գույներով, այլ առավել թանկագին է մեզ համար այդ գիրքը այն կողմից, որ իբրև մի* պատմական արձանագրություն, *բավական ճիշտ կերպով պատկերացնում է մեզ այն աղետալի հանգամանքները, որոնք Ղարաբաղի հայկական իշխանությունների քայքայման և անկման պատճառը դարձան: Եվ ինքը, հարգելի հեղինակը, այդ նպատակով է գրել իր վեպը, և դրա համար էլ կոչում է նրան «Անդրկովկասյան պատմական վեպ»* (Исторический закавказский роман)*:*

*Երեսուն թվականների ռուս գրողներից միայն Զուբովի նման մեկը կարող էր տալ մեզ մի այսպիսի աշխատություն, որ պահան-*

ջում է բավական ծանոթ լինել երկրի հետ, ուր կատարվել են վեպի մեջ նկարագրված անցքերը, պահանջում է խորին ուսումնասիրություն տեղային ժողովուրդների կենցաղավարության, բնավորությունների և նրանց միմյանց հետ ունեցած պատմական հարաբերությունների։ Զուբովը իր տեղում բավական ուսումնասիրած էր այդ բոլորը։ Դեռ Պողոս կայսրի թագավորության վերջերում նա եկավ Անդրկովկաս և մնաց այստեղ մինչև Նիկոլայի ժամանակները, և նրա ավելի քան երեսուն տարի կեցությունը Անդրկովկասում առիթ ավեց այդ հարցասեր գրողին ոչ միայն ծանոթանալ երկրի և տեղային ազգաբանությունների հետ, այլ գրեց իր օրերում կատարված ռուսաց արշավանքների և նշանավոր անցքերի պատմությունը թե պարսիկների, թե Վրաստանի և թե կովկասյան լեռնաբնակների վերաբերությամբ։ Նա թողեց բազմաթիվ աշխատություններ, իբրև հարուստ նյութ Անդրկովկասի պատմության համար[1]։ Իր աշխատությունների մեջ, որտեղ հայերի և հայոց երկրի վրա խոսք է լինում, նա միշտ համակրությամբ է խոսում։

Կարդալով «Ղարաբաղի աստղագետը», ընթերցողը կնկատե այն ջերմ համակրությունը, որ արտահայտվում է հեղինակի յուրաքանչյուր տողից հայոց ժողովրդի և մելիքների վերաբերությամբ։ Իր վեպի մեջ Զուբովը շոշափում է այն զգալի վերքերը, որոնք մեր ազգի պատմական կյանքում շատ անգամ եղել են հայկական իշխանությունների անկման և մահացության պատճառները։ Այդ վերքերն են՝ անմիաբանությունը և ներքին երկպառակությունը։ Ցույց տալ դրանց վնասակար հետևանքները, կացուցանում է «Ղարաբաղի աստղագետի» գլխավոր նպատակը։

Ահա ինչ է ասում հեղինակը Վարանդայի իշխան Մելիք-Շահնազարյանի բերանով. «Երկպառակությունը և ներքին կռիվները ոչնչացրին հայոց թագավորությունը, որ մի ժամանակ ծաղկած էր և կանգնած էր խիստ նշանավոր աստիճանի վրա հին թագավորությունների շարքում։ Մենք, միայն Ղարաբաղի լեռնա-

1 Պլատոն Զուբովի աշխատությունների ցուցակը կարելի է գտնել Մ. Միանսարյանցի բիբլիոգրաֆիայի հետևյալ երեսներում՝ 362, 678, 736, 745, 756. «Bibliographia Gaucasica et Transcaucasica». Опыт справочного систематического каталога печатным сочинениям о Кавказе, Закавказьи и племенах. эти края населяющих. Составил М. Миансаров. Том I. С. Петербург. 1874—1876.

կան մելիքներս, պահպանեցինք մեր անկախությունը։ Մեր նախնյաց քաջագործությունները հարգված էին մինչև անգամ Շահ-Աբաս Մեծից... Բայց ինչո՞վ մեր նախնիքը կարողացան այնպես հաջողությամբ պատերազմել այդ մեծ թագավորի դեմ։ Միայն նրանով, որ Խամսայի բոլոր հինգ մելիքները միացած էին բարեկամությամբ և արյան ամուր դաշնակցությամբ։ Նրանց հաջորդները հետևեցին նախորդների օրինակին, և մեր հայրենիքի անկախությունը պահպանվեցավ»։ (Երես 13)։

Նույն դառն բողոքը հայտնում է հեղինակը և Թալիշի մելիքի բերանով, երբ Փանահ խանը արդեն բավականաչափ բռնացել էր Ղարաբաղի վրա. «Այդ բոլորի պատճառը մեր ներքին երկպառակություններն են։ Եթե մենք միշտ միմյանց հետ կապված լինեինք, ինչպես մեր նախնիքը հին ժամանակներում կամ Շահ-Աբասի օրերում, այն ժամանակ այդ չվանշիրցին (Փանահ խանը) մտածել անգամ չէր համարձակվի լինել Ղարաբաղի իշխողը։ Բայց մենք բոլորս, Խամսայի հինգ փոքրիկ իշխանություններս, որոնք հայոց հռչակավոր թագավորության վերջին մնացորդն ենք, սկսեցինք անդադար միմյանց հետ վիճել, միմյանց հետ կռվել, և ամեն մի հիմար բանի վրա, ամեն մի չնչին հարցի պատճառով սկսեցինք միմյանց հետ պատերազմել։ Եվ ի՞նչ եղավ մեր ներքին կռիվների արդյունքը, այն, որ շահեցինք մեզ վրա մի օտար հրամայող...»։ (Երես 206)։

Թե ո՛րքան կործանարար հետևանքներ է ունենում մի ազգի համար անմիաբանությունը և ներքին երկպառակությունը, այդ մահացու ախտը, շոշափելի կերպով երևան է հանում հարգելի հեղինակը, ոչ թե հիմնվելով բանաստեղծական շինծու ապացույցների վրա, այլ ցույց տալով մի պատմական փաստ, մի պատահած աղետալի իրողություն հայոց կյանքում։ Այդ հիմնական միտքը կազմում է Զուբովի վեպի ամբողջ հյուսվածքը։

Իբրև նյութ իր հետաքրքիր վիպասանության, հեղինակը վեր է առել 1750 թվականներում Ղարաբաղի մեջ կատարված անցքերը։ Այդ ժամանակ Ղարաբաղի նահանգում կային հինգ հայկական իշխանություններ, որոնք զետեղված էին հինգ առանձին գավառներում, և բոլորը միասին կոչվում էին Խամսայի մելիքություններ։ Պատսպարված իրենց անմատչելի լեռների մեջ, այդ հինգ գավառների մելիքները (իշխանները) պահպանում էին

կատարյալ անկախություն։ Քանի որ նրանք հաշտ էին, միաբան էին և վտանգի ժամանակ օգնում էին միմյանց, այնքան ժամանակ կազմում էին մի ամբողջ միացյալ զորություն, որ սարսափի մեջ էր պահում թշնամիներին, և Ղարաբաղը պահպանվում էր որպես մի բախտավոր, հզոր իշխանություն։ Իսկ երբ սկսվում է ներքին երկպառակությունը մելիքների մեջ, երբ անմիաբանությունը ջլատում է նրանց ուժերը, այդ ժամանակ նրանց զորությունը այն աստիճան թուլանում է, որ Փանահ խանի նման մի հասարակ խաշնարած, մի թափառական ջվանշիրցի, որը մի ժամանակ Նադիր Շահի մոտ մունետիկի պաշտոն էր կատարում, իսկ հետո մի հանցանքի համար փախավ և Ջրաբերդի մելիքի մոտ ծառայության մեջ մտավ, մի այնպիսի բախտախնդիր, օգուտ քաղելով հայոց մելիքների անմիաբանությունից, այնքան բարձրացավ, որ մտածեց նրանց վրա իշխել։ Բայց Փանահ խանը բանաստեղծական մարդ չէ, նա պատմական անձնավորություն է։

Զուրաբը ներկայացնում է մեզ մեր պատմության տխուր ավերագիրը։ Գուցե նա մեր պատմությունը ամբողջապես չէր ուսումնասիրած, գուցե նա չգիտեր, թե ինչեր են կատարվել Հայաստանի մեջ ավելի հին դարերում, բայց այդ միևնույն է, բավական է, որ նա ուսումնասիրել էր խիստ մոտ ժամանակների անցքերը։

Պատմական անցքերը նույնպես կրկնվում են մի ազգի կյանքում, որպես կրկնվում են նրանք մի անհատի կյանքում։ Զուրաբը վեր է առել միայն 1750 թվականների Ղարաբաղում կատարված անցքերը։ Բայց այդ մի փոքրիկ կտորի մեջ նա ցույց է տալիս այն բոլոր դժբախտությունները, որ կրել է Հայաստանը ավելի հին դարերում։ Ո՞վ չգիտե, որ ամեն անգամ, երբ հայրենիքը վտանգի մեջ է գտնվել, երբ թշնամին կամեցել է բռնանալ մեր երկրի վրա, երբ օտարը մտածել է ոչնչացնել հայկական գահն ու գայիանը, այդ միջոցներում միշտ գտնվել է մի հայ, մի վատ դավաճան, որը թշնամու ձեռքում գործիք է դարձել, որը առաջնորդել է նրան և իր հայրենիքը մատնել է օտարի ձեռքը։

Մելիք-Շահնազարյանի տիպի մեջ հեղինակը ցույց է տալիս մեզ մի այսպիսի մարդ։

Մելիք-Շահնազարյանը Վասակի, Մեհրուժանի կամ Վեստ-Սարգսի նման տիպ չէ։ Նա բարի մարդ է, նա սիրում է իր հայրենիքը, բայց այնքան կամքի զորություն և բնավորության ուժ չունի, որ հայրենիքի ընդհանուր շահերը գերադասե իր անձնական նեղ կրքերից։ Նա միանում է Փանահ խանի հետ, օգնում է նրան, զորացնում է, բարձրացնում է, միայն թե կարողանա նրա ձեռքով ոչնչացնել Ղարաբաղի մնացած հայ մելիքներին։

Քանի՜-քանի՜ անգամ այդ տխուր երևույթը կրկնվել է հայոց պատմական կյանքում, քանի՜ անգամ հայոց իշխանները միացել են օտարների հետ և սկսել են իրանց հայրենիքի շահերին հակառակ գործել, սկսել են ոչնչացնել իրանց նման հայ իշխաններին։ Բայց պատմությունը միշտ պատժում է այդպիսիներին։ Նրանք ոչնչացնելով ուրիշներին, ոչնչանում են և իրանք։ Նրանք իրանց նմաններին օտարի լծի տակ գնելով, իրանք նույնպես օտարի ստրուկ են դառնում։ Նույնը պատահեց և Մելիք Շահնազարյանի հետ։ Նա սկզբում նպաստեց Փանահ խանին իշխել Ղարաբաղի անկախ մելիքների վրա, վերջը ինքն էլ նույն խանի հպատակը դարձավ, կորցրեց իր անկախությունը։ (Երես 228)։

Իր գրքի վերջական մասում հեղինակը նկարում է հայ ընտանիքի այն գլխավոր գծերը, որ արտահայտում են նրա թե առարնին և թե հասարակական բնավորությունը։ Ընտանիքի պետը՝ մեծ հայրը, իշխում է ոչ միայն ընտանիքը կազմող անդամների անձնավորության վրա, այլև նրանց սրտերի և հոգու վրա։ Նա կամենում է իրան հպատակեցնել և սերը, որ յուրաքանչյուր անհատի անբռնաբարելի զգացմունքն է։ Դոն Ջումշուդը երեխա էր, երբ հորեղբայրը (որը երեխայի վրա հոգաբարձության պաշտոն ուներ) նշանադրում է նրա համար իբրև ապագա հարսնացու Թալիշի մելիքի աղջկան, որը դեռ օրորոցի մեջ կերակրվում էր մոր ստինքով։ Ջումշուդը չափահաս դառնալով, բողոք է հայտնում այդ ընտանեկան բռնության դեմ, և սիրելով գեղեցիկ Սաֆիհային, մերժում է Թալիշի մելիքի դստեր ձեռքը։ Այստեղից ծագում է բոլոր խնարքյան, որ մելիքների երկպառակության պատճառն է դառնում։ Հույները կռվում են տրոյացիների հետ հափշտակված Հեղինեի համար, իսկ Ղարաբաղի մելիքները կռ-

վում են միմյանց հետ այն անպատվության համար, որ նշանադրված աղջիկը մերժվեցավ։

Ջամշուդի և Սալիհայի սիրո մեջ հեղինակը կամենում է արտահայտել այն միտքը, թե ամուսնական երջանկությունը կայանում է ոչ թե նրա մեջ, որ մի իշխանազն երիտասարդ ընտրում է իր կենակից մի օրիորդ, նույնպես իշխանական ծագումից, այլ ամուսնությունը կարող է բախտավոր լինել և այն ժամանակ, երբ օրիորդը ընտրվում է ստոր ծագումից, միայն թե ամուսնացող զույգը կապված լինեն ճշմարիտ սիրով։ Սալիհան հասարակ հովվի աղջիկ է, բայց հազիվ թե կարելի է երևակայել մի այնպիսի անկեղծ, բոցավառ սեր, որ անապատների այդ անմեղ դուստրը ուներ դեպի Ջամշուդը։

Ընտրելով իր հերոսի՝ Ջամշուդի համար ամուսին Սալիհային, որը ծագումով թուրք էր և կրոնով մահմեդական, հեղինակը, կարծես, այդ օրինակով ցանկանում է խրատ տալ հայերին, թե ոչ միայն պետք չէ խորշել այլազգիներից կամ այլադավաններից, այլ ընդհակառակն, աննպատակ չէր լինի ամուսնանալ այլասեռ և այլակրոն հարևան ցեղերի աղջիկների հետ, և նրանց քրիստոնեություն ընդունել տալով, հայացնել։ Սալիհան նույնպես քրիստոնեություն ընդունեց և հայացավ։

Ավելի խորին խորհուրդ թաքնված է Ջամշուդի դաստիարակության մեջ։

Զուրովլի հերոսի՝ Ջամշուդի հայրենիքը շրջապատված է մի կիսավայրենի ցեղով, որոնք էին ջվանշիրցիները։ Այդ ժողովուրդը հովվական պարզ կյանք է վարում, ապրում է իր անասուններով և ավազակությամբ։ Նա քաջ է, պատերազմասեր է, գիտե կռվելու արհեստը և վտանգ է սպառնում Ջամշուդի հայրենիքին։ Նրանց հետ մրցելու, նրանց հարձակումներից, ասպատակություններից անվտանգ պահպանվելու համար պետք է ունենալ նույն լավ հատկությունները, որ նրանց առավելություններն են կազմում. այսինքն՝ լինել նրանց նման քաջ, ճարպիկ և վարժ կռվի գործի մեջ։ Հենց այդ դիտավորությամբ Վարանդայի իշխան Մելիք-Շահնազարյանը իր եղբորորդի Ջամշուդին չորս տարվա ժամանակով ուղարկում է ջվանշիրցիների մոտ, ուսումնասիրելու նրանց կենցաղավարության պայմանները, սովորելու նրանց ճարպկությունները ձիավարության և զինաշարժության մեջ։

Ղարաբաղի հայոց մելիքները ներկայանում են Ջուրոլի վեպի մեջ իբրև քաջ, խստաբարո և չափազանց վեհանձն մարդիկ, բայց միևնույն ժամանակ, սաստիկ անքաղաքագետ և դյուրահավատ մարդիկ։ Որոնց ընդհակառակն, նրանց թշնամին՝ ջվանշիրցի Փանահ խանը, ներկայանում է որպես մեղմ, փափուկ, բայց չափազանց նենգավոր մարդ։ Դա քաջության հետ միացրել է և խորամանկություն, այդ պատճառով էլ հաղթող է հանդիսանում։ Քաջությունը առանց դիպլոմատիայի կորցնում է իր զորության նշանավոր մասը։

Փանահ խանի գործիչը՝ աստղագետ Հասանը, որ պտտեցնում է իր փորձված ձեռքում Ղարաբաղի ճակատագրական աստղը, այդ մեծ խաբեբան ներկայացնում է պարսկական մարմնացած խորամանկության կատարելատիպը։

Մի կողմում քաջություն և պարզամտություն, մյուս կողմում՝ քաջություն նենգավորության հետ միացած, այդ երկու հակառակ բնավորությունների ընդհարումների մեջ «Ղարաբաղի աստղագետի» հարգելի հեղինակը, կարծես, կամեցել է նկարել այն տխուր պատկերը, որ մեր ազգի պատմական կյանքում միշտ նրա դժբախտության պատճառն է եղել։

Ամեն մի հայ, առանձին վեր առած, խելացի է, գուցե բավական խորամանկ է իր մանր հաշիվների մեջ, բայց ազգովին վեր առած, չէ կարելի ասել, թե խելացի է, այլ ընդհակառակն, չափազանց դյուրահավատ և միամիտ ժողովուրդ է։

Հայկական բնավորության այդ թույլ կողմերը ավելի որոշ գծերով երևում են «Ղարաբաղի աստղագետի» մեջ, իսկ մանրամասները կարելի է տեսնել մեր «Խամսայի մելիքությունները» կոչված գրքում, որ բովանդակում է իր մեջ Ղարաբաղի վերջին տարիների պատմությունը։ Այդ երկու աշխատությունները անմիջական կապ ունեն միմյանց հետ և լրացնում են մինը մյուսի թերությունները, մեկը՝ որպես վեպ, մյուսը՝ որպես պատմություն. այդ մտքով էլ մենք թարգմանեցինք «Ղարաբաղի աստղագետը», համարելով նրան իբրև մի օժանդակ կամ լրացուցիչ աղբյուր «Խամսայի մելիքությունները» կոչված պատմության համար։

Մեր թարգմանության մեջ ոչինչ փոփոխություններ չենք արել, ամենայն հարազատությամբ հետևել ենք բնագրին։ Հեղի-

նակի ծանոթությունների հետ ավելացրինք, և մեր ծանոթությունները, գրքի մթությունները լուսաբանելու համար։ Մի քանի տեղերում ուղղեցինք այն սխալները, որ հեղինակը անում է թե գրքի և թե իր ծանոթությունների մեջ։

## I

## ԱՍՏՂԱԳԵՏ[1]

Վարանդայի[2] տիրապետող Մելիք-Շահնազարյանը[3] մեծ քայլերով անցուդարձ էր անում իր հոյակապ ամրոցի սենյակներից մեկի մեջ, որ գտնվում էր Ձանախչի[4] բերդում։ Երբեմն իր հայացքը պարզում էր նա դեպի լուսամուտը, որտեղից երևում էին Ղարաբաղի անտառապատ լեռները, նայում էր սքանչելի հովտի վրա, որով շրջապատված էր Ձանախչին, նայում էր այն հազարավոր, գույնզգույն, գեղեցիկ ծաղիկների վրա, այն շքեղ, դալար բուսականության վրա, որ զարդարում էին այդ հիանալի հովիտը։ Դեպի աջ կողմը հոսում էր մի գետ, շրջապատված ձեռնատունկ ծառերով, որոնց ճյուղերը ցոլանում էին նրա սրընթաց ալիքների մեջ։ Իսկ գետի մյուս կողմում դարձյալ ձգվում էին հորիզոնի հետ։ Արեգակը իր փայլուն ճառագայթներով լուսավորում էր այդ բազմանկար պատկերները։ Բայց նրանք չունեին ոչինչ հրապուրանք Մելիք-Շահնազարյանի համար, որի մռայլված դեմքը արտահայտում էր հոգեկան սաստիկ անհանգստություն։

Երբեմն նա հարդարում էր մորուքն ու բեղերը և անհամբերությամբ, որ տհաճություն էր հասնում, նայում էր դեպի մի կարճահասակ և այլանդակ թուրք, որը ծալապատիկ նստած էր գորգի վրա և ինչ-որ գծագրում էր քարե հատակի վրա։ Այդ վերջինը երբեմն մատը տանում էր դեպի ճակատը, կարծես թե մի բանի վրա մտածում էր։ Հետո նա վեր էր առնում իր արևելյան ձևով թանաքամանը, որ կոչվում էր դվիթ-ղալամ[5], թաթախում էր նրա մեջ եղեգնյա գրիչը և նրանով ինչ-որ գրում էր կոկած թղթի վրա, որ դրած էր նրա մոտ։ Հետո կրկին խորասուզվում էր մտածությունների մեջ, կամ լուսամուտից նայում էր արեգակին։ Երևում էր, որ նա չէր նկատում մելիքի ոչ անհամբերությունը, և ոչ տհաճությունը, և մինչև անգամ ամենևին ուշադրություն չէր դարձնում այն բոլորի վրա, ինչ որ շրջապատում էր նրան։

Մելիքը, վերջապես հոգնելով սենյակի մեջ ման գալուց, կանգնեց մտահույզ Թուրքի մոտ, նայում էր նրա աշխատությունների վրա։ Նրա դժգոհությունը այժմ ավելի և ավելի սաստկացած էր։ Վերջը իր համբերությունը բոլորովին կորցնելով՝ նա խլեց Թուրքի գլխից դառան մորթուց կարած երկայն գդակը և, ձգելով հատակի վրա, բարկությամբ գոչեց.

—Ով դու Հանաֆի և Մալիքի[6] զավակն, Աբուբաքրի և Օմարի[7] ժառանգ, մինչև ե՞րբ պիտի սպասել տաս քո թվահաշիվներին։ Երեկ, դու այսօր քեզ նպատակ ես դրել բոլորովին գժվացնել ինձ։ Ասա, ե՞րբ պիտի վերջանան քո հիմարությունները։

Այդ հանկարծակի հարձակման միջոցին, սափրած գլխով Թուրքը սարսափելով վեր թռավ տեղի վրա և, աչքերը լայն բացած, նայում էր Մելիքի վրա, չխոսելով ոչ մի բառ։ Այդ դրության մեջ ուներ նա զարմանալի նմանություն կապկի հետ, որը նայում էր իր տիրոջ վրա, սպասելով նրա հրամաններին, թե ե՞րբ պետք է սկսե իր խաղերը հանդիսականներին զվարճացնելու համար։ Նրա կերպարանքը այն աստիճան ծաղրաշարժ էր, որ Մելիքի բոլոր բարկությունը անցավ, և նա սկսեց սաստիկ ծիծաղել։

—Երդվում եմ իմ մորուքով[8],—գոչեց նա, ձեռքերով փորը բռնելով,—որ մի ամենակտրատաբեր սատան, երևի, հալածում էր քո մորը, սիրելի իմ աստղագետ, սկսյալ այն օրից, երբ դու գոյություն ստացար քո մոր արգանդումը, մինչև քո ծնունդը։ Որովհետև, դժվար է երևակայել, թե ինչպե՞ս ձևակերպվեցան այդ բոլոր այլանդակ մասնիկները, որ բաղկացնում են քո մարմինը։

—Բայց, Մելիք, ես շատ և շատ շնորհակալ եմ ձեզանից։

—Ինձանի՞ց, ինչի՞ համար։

—Եթե դուք չլինեիք, ես բոլորովին կորած էի։ Թող փառք լինի Ալլահին և սուրբ Հուսեինին[9]։ Ես դրանից հետո կմնամ ողջ և անվնաս։ Վտանգը անցավ. ես այդ չէի սպասում։

Արտասանելով այդ խոսքերը՝ նա խիստ սառնասրտությամբ վեր առեց իր գդակը և դրեց գլխին։

—Լսիր, աստղագետ, բոլոր ցնդած դերվիշներից[10] ամենախելագարն անգամ պետք է հազարապատիկ խելացի համարել քեզանից։ Դու կամ զառանցության մեջ ես գտնվում, կամ բոլորովին գժված ես։ Ես քեզ խնդրեցի նախագուշակություններ անել քո աստղերով, քո երկնային շրջաններով, և Աստված գիտե, ի՞նչ

տանայական առեղծվածներով, որոնք ինձ բնավ հասկանալի չեն։ Խնդրեցի քեզ՝ հայտնել ինձ, արդյոք հիմա բարեհարմա՞ր ժամանակ է խոսելու իմ խելագար եղբորորդու հետ, որը իր հիմարություններով շատ նման է քեզ։ Դու քո դանդաղկոտությամբ դրդեցիր իմ տհաճությունը։ Ես բարկացա և քո գդակը մի կողմ ձգեցի և աշխատեցի հայհոյել քեզ այն ընտիր անուններով, որոնց դուք՝ Ալիի հետևողներդ[11], շատ չեք սիրում։ Իսկ դու այդ բոլորի փոխարեն դեռ ես շնորհակալություն ես հայտնում ինձ։

—Իհարկե շնորհակալություն կհայտնեմ և միշտ շնորհակալ կլինեմ,—պատասխանեց աստղագետը։—Եթե դուք, Մելիք, փոքրի-շատե գիտություն ունենայիք երկնային լուսատուների մասին, շատ հասկանալի է, որ ինքներդ կպարզեիք այն կորստաբեր համատեղությունից, որը վտանգ էր սպառնում ինձ հենց միևնույն րոպեում, երբ դուք խլեցիք իմ գլխարկը։ Ես բոլորովին մեռածի նման էի երկյուղից։ Բայց ինչո՞վ վերջացավ նա. շատ հասարակ բանով։ Ինչպե՞ս շնորհակալ չլինել ձեզանից։ Եթե դուք իմ գդակը չխլեիք, ես, կարելի է, հենց միևնույն րոպեում սարսափելի կերպով հոգին կտայի։

—Ծիծաղելի է, շատ ծիծաղելի,—ասաց Մելիքը,—որ ես կարող լինեի փոխել ճակատագրի վճիռը։ Նա պատրաստել էր քեզ համար մահ, իսկ քո գդակը վեր առնելով, դու ազատվեցար մահից։

—Իհարկե,—պատասխանեց աստղագետը, հանգիստ կերպով տեղավորվելով գորգի վրա և ուրախանալով, որ առիթ գտավ իր իմաստությունների վրա խոսելու։

—Լսեցեք, Մելիք, մենք՝ գիտնականներս, հետևողներ ենք մի մեծ աստղագետի (որին Թող Ալլահը հանգիստ պարգևեսցե) ։ Կարող ենք ամեն ժամանակ երկնային համատեղությունների շնորհիվ նախագուշակել մարդիկների դժբախտությունները։ Մենք իմանում ենք այդ մոլորակների և մեծ աստղերի միավորվելուց կամ նրանց՝ միմյանց հակառակ կանգնելուց։ Դրանցից ամեն մեկը ունի առանձին ազդեցություն մարդու վիճակի վրա և գտնվում է զանազան հարաբերությունների մեջ նրա սեփական աստղի հետ[12]։

Բայց ինչո՞ւմն է իսկապես կայանում աստղերի սպառնացող վտանգը, այդ խիստ հազիվ անգամ կարելի է ճշտությամբ հասկանալ։ Թեև ոմանք խաբեբաներից (Թող Ալլահը ուղարկե

նրանց վրա իր նզովքը), կոչելով իրանց աստղագետներ, որոնք ձիրքով բացատրություններ են տալիս այդ մասին։ Բայց դա ստություն է։ Դժբախտությունը, թե մեծ լիներ նա, և թե փոքր, դարձյալ դժբախտություն է։ Ես տեսնում էի, որ ինձ սպառնում էր մի դժբախտություն, և այդ պատճառով խորասուզված էի մի համաստեղության գիտության մեջ։ Այդ կատարվում էր իսկ և իսկ նույն րոպեում, երբ ձեր բարկությունը բորբոքվեցավ ինձ վրա։ Եվ հենց ձեր բարկությունն էր չար աստղի ինձ սպառնացող դժբախտությունը։ Հետո...

—Հետո՞,—անհամբերությամբ կրկնեց Մելիքը,—հետո վերջ կդրվի՞ քո այդ անտանելի շատախոսություններին։ Ինչ են գուշակում այդ քո քանանններն ու դժադրությունները։ Կարո՞ղ եմ ես այժմ խոսակցել իմ եղբորորդու հետ։ Ասա, կամ այո, կամ ոչ։

—Շնորհ արեք, Մելիք, մի տաքացեք։ Պետք է քննել այդ հանգամանքը մանրամասն կերպով։ Շտապելով կարելի է բոլորը փչացնել։ Ես կսկսեմ...

—Էլ ի՞նչ պիտի սկսես, ապա ի՞նչ էիր շինում, երբ գծեր էիր քաշում հատակի վրա։

—Ես չորրորդ անգամ պատրաստվում էի դիտողություններ անել, որպեսզի վերստուգեի իմ նկատողությունները։ Այդ միջոցին կանգնած հայտնվեցավ հենց այն չար աստղը, որը խռովաբեր իմ անձին էր վտանգ սպառնում։ Ես այնքան վախեցա, որ թողեցի իմ գուշակությունները։

—Շնորհակալ եմ։ Դու հիմա նորից սկսիր քո գուշակությունները, միայն աշխատիր շուտով վերջացնել։ Եթե քո աչքերին կրկին անգամ կհայտնվի այն չար աստղը, իսկույն ասա ինձ, ես կխլեմ քո գլուխը, և ամեն ինչ կփարատվի։

Աստղագետը մինչև անգամ չժպտաց Մելիքի այդ կատակի վրա, այլ հանգիստ կերպով նստեց գորգի վրա, կրկին շարունակելով իր դիտողությունները։

Մելիքը կրկին սկսեց անցուդարձ անել սենյակի մեջ, կծելով իր շրթունքները և ինքն իրան մրթմրթալով. «Մենք էլ խելագարներ ենք, որ հավատում ենք այդ աստղագետներին։ Քրիստոնյա լինելով հանդերձ, հավատում ենք նախասահմանությանը։ Ահա ինչ է նշանակում պարսիկների ազդեցությունը, որ խիստ զգալի է դար-

ձել Ղարաբաղի վրա։ Այժմ մենք մեծ չափով մահմեդական նախապաշարմունքներ ենք ընդունել և համարյա կես-մահմեդականներ ենք դարձել։ Դրանով պարսիկները և թուրքերը հայոց ամբողջ թագավորությունը կարողացան բաժանել իրանց մեջ։ Մենք՝ հայոց մելիքներս միայն մնացել ենք անկախ մեր լեռների մեջ։ Այդ խիստ ցավալի բան է։ Միշտ կորստաբեր է լինում այն թուլությունը, երբ մի ժողովուրդ ընդունում է սովորություններ օտարներից։ Ես գիտեմ, որ հիմարություններ են այդ բոլոր նախագուշակությունները, այդ բոլոր աստղաբաշխական համարումները, այսուամենայնիվ, չեմ վստահանում առանց նրանց վճռել մի որևիցե գործ, թեև շատ հասարակ լինեի նա։ Ինչպես չեմ վստահանում խոսակցել իմ եղբորորդու հետ, որից կախված է պատերազմ կամ խաղաղություն իմ և Թավրիզի[13] իշխանի մեջ։ Իսկ ինչի՞ց է առաջ գալիս այդ. այն սնահավատությունից, թե կարելի է որ լինի փոքր-ինչ ճշմարտություն աստղաբաշխական ցնորաբանությունների մեջ...»։

Այդ միջոցին մելիքի խորհրդածությունները ընդհատեց աստղագետը, որը գժի նման վեր թռչելով, բացականչեց.

—Շտապեցեք, շտապեցեք, մելիք, հրամայեցեք շուտով կանչել ձեր եղբորորդուն. եթե մի քանի րոպեներ ևս անցնելու լինեն, շատ ուշ կլինի։ Միթե չե՞ք նկատում, թե որպիսի չար աստղեր են մոտենում ձեր բախտավոր համաստեղությանը։

Նա ժամանակ չավեց մելիքին խորհելու և իր աղաղակով կանչեց բոլոր նոքարներին[14]։ Այդ վերջինները զարմացած խմբվեցան աստղագետի շուրջը, որը հազար անգամ կրկնեց Ջամշուդի[15] անունը։

—Կանչեցեք իմ եղբորորդուն,—հրամայեց մելիքը,—հայտնեցեք, որ այս րոպեիս ես պահանջում եմ նրան իմ մոտ։

Նոքարները վազեցին կատարելու հրամանը։

Մելիքը, դառնալով դեպի աստղագետը, ավելացրեց.

—Հա, ճշմարիտ, դու խենթ ես եղել, աստղագետ, և քո աստղերն էլ նույնպես...

Թուրքը չպատասխանեց և նստեց դարձյալ գուշակություններ անելու համար։

## II

## ՋՈՒՄՇՈՒԴ

Շուտով բացվեցավ դուռ, հայտնվեցավ մի երիտասարդ հրապուրիչ դեմքով, որի հայացքը արտահայտում էր հոգեկան սաստիկ տխրություն։ Նա պատկառանքով ողջունեց իր հորեղբորը, որը լռությամբ տեղ ցույց տվեց նրան գորգի վրա, իսկ ինքը նստեց նրանից փոքր-ինչ հեռու։

— Ասա ինձ, Ջումշուդ, վերջապես խելքի եկա՞ր դու, այժմ զգո՞ւմ ես քո վարմունքի բոլոր անտեղիությունը։

—Ես շատ հանցավոր եմ ձեր առջև, հորեղբայր, և ինձ չեմ արդարացնում։ Բայց այդ չէր կարող ուրիշ կերպ լինել...

—Ինչպե՞ս չէր կարող ուրիշ կերպ լինել, հանդուգն պատանի,— բարկությամբ գոչեց մելիքը։—Ստիպել ինձ երդմնազանց լինել, հավիտյան կավացնել ինձ Խամսայի բոլոր մելիքների[16] հետ, այդ բոլորը քո աչքում ոչի՞նչ բան է երևում։

— Դուք խոսք ու երդում տվեցիք առանց իմ համաձայնության, երբ ես դեռ երեխա էի,— պատասխանեց Ջումշուդը սառնությամբ։ —Իսկ այժմ ես երիտասարդ եմ, բան եմ հասկանում, չեմ ցանկանում համաձայնվել։ Եվ դրա մեջ ես մի պատճառ չեմ տեսնում, որ առիթ տար ձեզ բարկանալու, իսկ Թալիշի մելիքին ձեզ ստիպելու, որ կատարեք ձեր խոստումները։

— Այդ լավ է, բայց դու դեռ շատ ջահել ես, որ կարողանաս մեզ բան սովորացնել։ Մի խոսքով, ես այդ կամենում եմ, ես պահանջում եմ, և որպես քո տերը, հրամայում եմ քեզ, եթե ոչ, երդվում եմ իմ նախնյաց ոսկորներով, որ այդ խենջարը իմ ձեռքով կցցեմ քո կուրծքի մեջ,— որոտաց մելիքը։

Ջումշուդը փոխանակ պատասխանի, բաց արեց իր կուրծքը և սկսեց սառնասրտությամբ նայել հորեղբոր վրա։

Երիտասարդի այդ հերոսական վարմունքը զինաթափ արեց մելիքին։ Նա տեսավ, որ Ջումշուդի հաստատամտությունը ոչնչացնում է իր բոլոր նպատակները։ Եվ հուսալով, որ մեղմությամբ կարող է համոզել նրան, մոտեցավ, բռնեց եղբորորդու ձեռքը, ասելով.

—Ես մեծ բավականությամբ եմ տեսնում, սիրելի Ջումշուդ, որ հերոսների արյունը վազում է քո երակների մեջ։ Տեսնում եմ քո

հաստատամտությունը և նրա վրա ուրախությամբ զարմանում եմ։ Բայց լսիր. յուրաքանչյուր մարդ պետք է համարվի հանգամանքների հետ։ Երկպառակությունը և ներքին կռիվները ոչնչացրին հայոց թագավորությունը, որ մի ժամանակ ծաղկած էր և կանգնած էր խիստ նշանավոր աստիճանի վրա հին թագավորությունների շարքում։ Մենք, միայն Ղարաբաղի լեռնական մելիքները, պահպանեցինք մեր անկախությունը։ Մեր նախնյաց քաջագործությունները հարգված էին մինչև անգամ Շահ Աբաս[17] Մեծից։ Նա Վարանդայի, Գյուլիստանի[18], Թալիշի և Խամսայի մնացած մելիքներին ավելի գերադասեց, քան այդ ժամանակ Հայաստանը կառավարող հայոց մյուս իշխանական տոհմերի ներկայացուցիչները։ Նա թույլ ավեց մեզ մնալ անմատչելի և շնորհեց «մելիք»[19] նշանավոր կոչումը, որը մենք այժմ կրում ենք։ Բայց ինչո՞վ մեր նախնիքը կարողացան այնպես հաջողությամբ պատերազմել այդ մեծ թագավորի դեմ։ Միայն նրանով, որ Խամսայի բոլոր հինգ մելիքները միացած էին բարեկամության և արյան ամուր դաշնակցությամբ։ Նրանց հաջորդները հետևեցին նախորդների օրինակին, և մեր հայրենիքի անկախությունը պահպանվեցավ։

— Քո հոր մահից հետո,— առաջ տարավ մելիքը,— երբ դու դեռ երեխա էիր, ես վեր առնելով քեզ իմ խնամակալության ներքո, միևնույն ժամանակ մտածեցի անօրինել քո ապագա բախտավորությունը։ Այդ էր պատճառը, որ քեզ համար նշանադրեցի որպես հարսնացու Թալիշի մելիքի աղջիկը, որն այն ժամանակ գտնվում էր դեռ օրորոցի մեջ[20]։ Եվ այդ խնամության վրա մենք դրած էինք մեր հույսը, որ բարեկամությունը մեր տների մեջ ավելի ամրապնդված կլինի։ Ես խոսք ավեցի Թալիշի մելիքին, և այդ խոսքը հաստատված էր սուրբ երդումով։ Երբ որ դու չափահաս դարձար, ես հարկավոր համարեցի ժամանակ ուղարկել քեզ ջվանշիրցիների[21] մոտ։ Այդ այն նպատակով էր, որպեսզի դու կարողանայիր սովորել այդ անվեհեր, լեռնական ձիավորներից նրանց պատերազմական հմտությունները, նրանց զենք և նիզակ գործածելու ձևերը։ Դու արդարացրիր իմ հույսերը։ Բայց այնտեղից վերադառնալուց հետո ես քեզ տեսնում էի միշտ տխուր, միշտ խորասուզված մի այլ մտատանջությունների մեջ։ Թալիշի մելիքը, լսելով քո վերադարձը, դեսպանություն ուղարկեց մեզ մոտ, հրավիրելով մեզ իր բերդը՝ Ձեյվա[22], քո և նրա դստեր պսակի խաղ-

հույզը կառավարելու համար։ Այդ պատճառով ես առաջարկեցի քեզ մեր գնալու մասին և միևնույն ժամանակ բացատրեցի իմ նպատակները։ Իսկ դու, փոխանակ հայտնելու ինձ քո հնազանդությունը, որպես հարկն էր, բոլորովին մերժում ես կատարելու այն խոսքը, որ ես տվել եմ դրանից տասնչորս տարի առաջ։ Դու կամենում ես, որ ես դավաճանեմ իմ տված խոսքին և երդմանը։ Խոսիր, ի՞նչը կարող է արդարացնել քո այդ վարմունքը։

—Դուք իրավունք ունեք, հորեղբայր,—պատասխանեց Ջամշուդը,—ես չեմ կարող արդարացնել ինձ։ Բայց ի նկատի ունեցեք, որ մարդու կյանքում երբեմն այնպիսի դեպքեր են պատահում, որոնց ժամանակ անկարելի է դառնում հետևել խոհականության մինչև անգամ ամենախիստ ձայնին...

— Ես չեմ կամենում մտնել քո պատճառաբանությունների մեջ, քանի որ դու ինքդ չես կամենում հայտնել ինձ այդ պատճառաբանությունների գաղտնիքը։ Բայց ի՞նչ պատասխանեմ ես մելիքի դեսպանին։

— Ինչ որ դուք կամենում եք։

—Այդ հեշտ է ասել, բայց դժվար է կատարել, Ջամշուդ, դու չե՞ս խղճում, որ քո վարմունքով պիտի աղմկես Ղարաբաղի խաղաղությունը։ Ես ճանաչում եմ Թալիշի մելիքին. նա պատվապահության պայմանների մեջ չափազանց խիստ է։ Մեր բոլոր պատճառաբանությունները նա կընդունե որպես վիրավորանք, և պատերազմը այնուհետև կբորբոքվի նրա և մեր մեջ։ Մնացած մելիքները ստիպված կլինեն բռնել՝ ոմանք մեր, ոմանք նրա կողմը, և Ղարաբաղը կդառնա ներքին արյունահեղության ամոթալի մի հանդիսարան։

— Եթե Թալիշի մելիքը խելացի մարդ է, նա պետք է բավականանա, երբ իրանից ներողություն կխնդրեն։ Իսկ եթե ոչ, թող շնորհ բերե մեզ մոտ. մենք նրա ստրուկները չենք. մենք ազատ մարդիկ ենք, և զենքը կվճռե գործը...

—Իհարկե, այդպես է։ Բայց մենք հազիվ կարող ենք հույս դնել հաղթության վրա, երբ ինքներս ենք պատճառ տալիս պատերազմի։ Ջամշուդ, լավ մտածիր, թող երիտասարդական աշխույժը չհրապուրե քեզ. գործը վերաբերում է ամբողջ Ղարաբաղի խաղաղությանը։

—Ես հասկանում եմ ձեր բոլոր ապացույցների կարևորու-

թյունը, այսուամենայնիվ, չեմ կարող ամուսնանալ Թալիշի մելիքի դստեր հետ, որովհետև չեմ կամենում անբախտացնել նրան...

—Ի՞նչ ես խոսում դու։

—Բոլորովին ուղիղ է իմ ասածը։ Պսակվելով ինձ համար վաղուց նշանադրված հարսնացուի հետ, ես կարող եմ միայն ատել նրան, ցանկալ նրան մահ և կորուստ...

—Ի՞նչ սոսկալի խորհուրդ է թաքնված այդ խոսքերի մեջ,— գոչեց մելիքը տեղից վեր թռչելով։—Դու պետք է այդ գաղտնիքը հայտնես ինձ։

—Այդ՝ ես չեմ կարող,—սառնասրտությամբ պատասխանեց Ջումշուդը։

—Հա, դու չե՞ս հայտնի,—որոտաց մելիքը ավելի կատաղությամբ։—Ի՞նչ հիմար եմ եղել ես, որ իզուր խոսքեր եմ վատնում մի համբակի հետ, երբ կան ուրիշ շատ միջոցներ ստիպելու նրան, որ հնազանդվի։

—Մտաբերեցեք, մելիք, որ ես մահից երկյուղ չունեմ,—ասաց Ջումշուդը, իր նստած տեղից կանգնելով։

—Դու երկյուղ չունե՞ս մահից,—գոչեց մելիքը բարկությամբ։—Լավ, լավ։ Բայց դու այնպես շատ չես մեռնի, որքան էլ ցանկանալու լինեիր։ Ես կծանոթացնեմ քեզ այնպիսի մահվան հետ, որը հազարապատիկ տաժանական է, քան թե իսկական մահը...

—Բռնեցեք դրան,—հրամայեց նա նոքարներին,—կաշկանդեցեք շղթաներով և բանտարկեցեք աշտարակի ստորերկրյա նկուղի մեջ, որ գտնվում է գետի մոտ։ Տվեցեք դրան միայն ցամաք հաց և ջուր, թող սովորի, թե ի՞նչ է նշանակում հայրենիքի խաղաղությունը վրդովելը իր դատարկ համառությամբ։

Նոքարները տարան Ջումշուդին, որը սենյակից դուրս գալու միջոցին, խիստ սառն կերպով ասաց իր հորեղբորը.

—Դուք դրանով ոչինչ չեք շահի...

Մելիքը, բարկությունից սաստիկ հուզված, նստեց գորգի վրա։ Մի քանի րոպե մնաց լռության մեջ։ Այդ միջոցին աստղագետը հանգիստ կերպով նայում էր նրա վրա, կարծես, աշխատում էր գուշակել, թե ի՞նչ է կատարվում նրա սրտի մեջ։ Վերջը մելիքը դառնալով նրան, սաստիկ ահաճությամբ ասաց.

—Դե, պարոն ստախոս, ո՞ւր մնացին քո այն բարեհաջող աստղերը, որոնցով հրապուրում էիր ինձ։

—Նրանք կային, բայց անցան մելիք։ Մի՞թե ես չասացի ձեզ, որ նրանց ետևից կգան վատ աստղեր։ Ո՞վ խորհուրդ տվեց ձեզ՝ շարունակել ձեր խոստովանությունը։ Ես միայն չցանկացա խանգարել ձեր երկար ճառախոսությունը, թե չէ, արդեն պարզ տեսնում էի վտանգավոր աստղերի մոտենալը։ Եվ ես չեմ զարմանում, որ Ջումշուդը այսպես համառ գտնվեցավ։

—Ուրեմն քո կարգադրության համեմատ ես քանի՞ բաժակ պիտի խմեի Ջումշուդի հետ, որ լավ լիներ։ Ախ, խաբեբաներ, ա՞յդ է ձեր նշանավոր գիտությունը։ Եվ ես, անխելքս, հավատացի քեզ։ Պարզելի է, դու հիմարությամբ քո բոլոր թվանշանները շփոթեցիր միմյանց հետ։ Եվ ես քո տխմար գուշակությունների համեմատ, փոխանակ լավ բաժակին, ընտրեցի վատ բաժակն իմ եղբորորդու հետ խոսակցելու համար։ Եվ այդ պատճառով նրա հետ կռվեցա, նրա հետ, որին ես սիրում եմ ավելի քան մի հարազատ որդի։ Դու ես պատճառը այդ բոլոր երկպառակության։

—Խոսիր, անպիտան,—շարունակեց մելիքը, կատաղությամբ բռնելով աստղագետի մորուքից,—հիմա ի՞նչ են նախագուշակում քո համաստեղությունները քեզ համար։

—Նրանք նախագուշակում են իմ ազատվելը կորուստից,—ասաց աստղագետը դողդողալով։

—Նրանք խաբում են քեզ,—պատասխանեց մելիքը և, դառնալով դեպի նոքարները, հրամայեց.

—Վեր առեք այդ ցնորվածին, ձգեցեք դրան միևնույն ստորերկրյա ներքնատան մեջ, որտեղ այժմ նստած է իմ եղբոր որդին։ Թող երկու խելագարներ միմյանց հեքիաթներ պատմեն...

Աստղագետին տարան։

Մելիքը կրկին նստեց գորգի վրա, հրամայեց իրան տալ ղելյան և սկսեց լռությամբ ծխել։ Նրա աչքերը արտահայտում էին սաստիկ հուսահատություն, և ոչ ոք տանեցիներից չէր համարձակվում մոտենալ նրան։

## III

## ՋՈՒՄՇՈՒԴԻ ՀԱՄԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌԸ

Նեղ, մթին, ստորերկրյա բանտում, շղթայակապ որպես մի հանցավոր, նստած էր Ջումշուդը։ Բանտի խոնավ պատերը երբեք

չէին զգացել Ղարաբաղի բոցավառ արեգակի բարերար ազդեցությունը։ Այդ մշտական տխրության նկուղը ծառայում էր միայն որպես բնակարան կարիճների, մամուկների (փալանգ) և հազար այլ տեսակ զզվելի սողունների համար։ Վախենալով մարդու ներկայությունից՝ նրանք սողացին պատերի վրայով և թաքնվեցան ճեղքերի մեջ, որոնք գոյացել էին խոնավությունից և ժամանակի հնությունից։ Լեռնային գետակի աղմուկը, որը վազում էր ուղիղ նկուղի մոտով, ավելի ևս բազմապատկում էր այդ խավար բանտի զարհուրանքը։ Բայց Ջումշուդը, երևի, չէր զգում շղթաների ծանրությունը, որոնցով կաշկանդված էր ինքը։ Նրա դեմքը արտահայտում էր խորին ցնծություն, կարծես թե, ձեռքերը մեկնած, մեկին ողջունում էր նա, այսպես բացականչելով.

—Սալիհա, սքանչելի, անզուգական, անգին Սալիհա, իմ աստվածային կույս, ես քեզ եմ պատկանում, քեզ միայն, մինչև հավիտյան։ Ոչ ոք, ոչ ճակատագիրը, ոչ մարդիկ մեզ բաժանել չեն կարող։ Կկռվեմ բոլոր անարդարությունների դեմ, բոլոր թշվառությունների դեմ և ավելի բարվոք կհամարեմ ոչնչանալ, քան թե դավաճանել այն երդմանը, որ տվել եմ քեզ։ Բայց ինչպե՞ս...

Նրա խոսքը ընդհատեց մի աղմուկ, որ լսելի եղավ բանտի դռնից։ Դռները բացվեցան, նոքարները ներս հրեցին աստղագետին, կրկին կողպեցին դռները և հեռացան։

Ջումշուդը սկզբից չկարողացավ ճանաչել, թե այդ ինչ նոր ընկեր էր, որ բերեցին իր համար։ Բայց լսելով նրա գանգատները, որ մրթմրթում էր նա, ճանաչեց, որ դա պետք է լիներ միևնույն աստղագետը, որին իր հորեղբայրը հավատում էր։ Նա մտածեց, որ դա պետք է մի տեսակ խորամանկություն լիներ, որ գործ էր դրված, այդ խաբեբայի միջոցով համոզելու իրան, ընդունել հորեղբոր առաջարկությունը։ Այդ պատճառով երիտասարդը լուռ կացավ, ուշադրություն չդարձնելով իր նոր դրացու վրա։

—Ո՞ւր եք դուք, մելիք Ջումշուդ,—վերջապես հարցրեց աստղագետը երկչոտ ձայնով։

—Կարծես դուք ոչինչ հարկավորություն չունեք իմ մեջ,—պատասխանեց նա։

—Ինչպե՞ս չունեմ, մի՞թե դուք կարծում եք, որ ես չեմ ցավում ձեր դրության վրա։

—Խորհուրդ եմ տալիս ցավել ձեր մասին։

—Ճշմարիտ, միլիք, ձեր հորեղբայրը սաստիկ դյուրագրգիռ մարդ է, քան բոլոր մարդիկը, որոնց ես ճանաչում եմ այս աշխարհում։ Մեկը հարցնելիս լինի, թե ինչո՞ւ համար նա նետեց մեզ այդ ստորերկրյա վիրապի մեջ, ուր շատ հեշտությամբ կարելի է կարիճների կերակուր դառնալ։

—Ի՞նչ պատճառով քեզ նետեցին այստեղ, ես չգիտեմ։ Իսկ ես, իմ վերաբերությամբ, վաղուց այդ սպասում էի։ Միայն դու ինձ շատ պարտավորած կլինես, եթե կլսես. ինձ մի մեծ զվարճություն չէ պատճառում քեզ հետ մասլահաթներ անելը։

—Ինչո՞ւ եք այդպես խոսում, միլիք, ի սեր Աստուծո, ի՞նչ կնշանակե լաց ու մունչ նստելը։ Այստեղ այնպես սարսափելի է, այնպես մութն է, որ մարդու մազերը բիզ-բիզ են կանգնում։ Ով սուրբ Հուսեին, այդ ի՞նչ պատիժ է։ Ինձ այնպես է թվում, որ կարիճները սողում են մարմնիս վրա։ Ի սեր օրհնյալ Ալիի, ազատեցեք ինձ, ես կորած եմ։

Եվ ողորմելի աստղագետը սկսեց բարձր ձայնով լաց լինել։

—Լսիր, աստղագետ,—հարցրեց Ջումշուդը,—ո՞ր դերվիշներից սովորեցար դու այդ խորամանկությունները։

—Ո՞ր դերվիշներից,—կրկնեց նա լալագին ձայնով,—մի՞թե դուք կարծում եք, որ իմ սրտի տրտմությունը կեղծ է։ Արդյոք մի այսպիսի անիծյալ տեղում ընկնելուց հետո կարելի՞ է ուրախ լինել։ Ես չեմ հասկանում, թե ինչպես կարող էիք դուք այդպես մտածել...

—Թող տուր այդ կեղծավորությունները, խնդրում եմ։ Ես գիտեմ, որ դու ուղարկված ես իմ հորեղբոր կողմից, որ համոզես ինձ ընդունելու նրա առաջարկությունը։ Բայց այդ խիստ զուր աշխատանք կլինի քեզ համար։ Դու կարող ես կեղծել, որքան քեզ պետք է, բայց դա ամենևին չի օգնի քեզ։

—Ի սեր Ալլահի, ի սեր օրհնյալ մարգարեի և տասներկու սուրբ իմամների[23], այդ ի՞նչ ասելու բան է, միլիք, երբ թե ես ուղարկված եմ ձեր հորեղբոր կողմից, կամ ես կեղծավորություն եմ անում։ Երդվում եմ ձեզ դրախտի այն ծառով[24], որ բուսնում է Մահմեդի բնակարանի մեջ, որ ձեր կարծիքը իմ վերաբերությամբ ուղիղ չէ։ Ես ձեր հորեղբոր կատաղության մի նույնպիսի ողորմելի զոհն եմ, որպես դուք, միլիք։

Աստղագետի խոսքերի արտասանության մեջ կային այնքան շատ համոզիչ ձայներ, որ Ջումշուդը պարզ կերպով նկատեց, թե սխալված է իր կարծիքի մեջ, և ասաց նրան ավելի մեղմ կերպով.

—Երբ որ այդպես է, ես բոլոր սրտով ցավում եմ քեզ վրա. անբախտ աստղագետ: Բայց զարմանում եմ, թե ինչպե՞ս դու քո ամբողջ գիտությամբը չկարողացար այդ դժբախտությունը հեռացնել քեզանից, կամ գոնե կանխատեսել թե ինչ էր պատահել քեզ:

—Ձեր հորեղբայրը մի առանձին ընդունակություն ունի իր բարկությամբը խառնաշփոթելու իմ բոլոր նախագուշակությունները: Բայց հավատացեք, մելիք, որ ես տեսնելով ձեր անբախտությունը, մոռանում եմ իմը: Դուք, ձեր մատաղ հասակում, այսպես գեղեցիկ, այսպես քաջ մի երիտասարդ, պետք է մաշվեք այդ օդից զուրկ բանտի մեջ: Եվ ինչի՞ համար: Ահա այսպիսի դեպքերում մենք, մուսուլմաններս, ավելի երջանիկ ենք ձեզանից. կարող ենք ամուսնանալ չորս կնիկների հետ: Հիմա ձեր հորեղբայրը ձեր վրեն կապում է մեկին միայն, և դուք վախենում եք, որովհետև հետո մի ուրիշ ավելի լավի հետ անկարելի կլինի ամուսնանալ...

Նա խոսքը փոխեց, շարունակելով.

—Լսեցեք, մելիք, մենք երկուսս էլ այժմ գտնվում ենք վտանգի մեջ, պետք է աշխատել ազատվելու այստեղից: Հավատարմություն ունեցեք դեպի ձեր ծառան, պատմեցեք, թե ինչպես ի՞նչ պատճառներ ստիպում են ձեզ՝ այսպիսի վճռականությամբ ընդդիմանալ ձեր հորեղբոր ցանկություններին: Եվ ես կաշխատեմ հնարել մի որևիցե միջոց ձեր ազատության համար:

—Այդ չեմ կարող հայտնել. դա մի գաղտնիք է,—պատասխանեց Ջումշուդը:

—Մի՞թե մոռանում եք դուք, մելիք, որ ես տեղեկություններ ունեմ երկնային լուսատուների ընթացքի մասին, կարող եմ նախագուշակել բախտավորություն և անբախտություն, կարող եմ որոշել բարեհաջող րոպեները մարդերի գործողությունների համար: Ես կարող եմ շատ օգտավետ լինել ձեզ, եթե միայն դուք կարժանացնեք ինձ՝ ընդունել ձեզ մոտ որպես ծառա: Երդվում եմ իմ մորուքով, որ դուք չեք գտնի ինձանից ավելի հավատարիմ և ջերմեռանդ մի սպասավոր: Ինձ բոլորովին ձանձրացրել է ձեր հորեղբոր խիստ բնավորությունը: Ծառայելով նրա մոտ՝ ամեն րոպե պետք է մահը աչքի առաջ ունենալ: Ի սեր Աստուծո, համաձայնվեցեք ընդունել ինձ ձեր մոտ. դուք չափազանց կբախտավորացնեք ինձ, և ես կաշխատեմ արժանավոր կերպով երախտամատույց լինել ձեզ:

Ջումշուդը բնավորությամբ խիստ բարի էր։ Աստղագետի դրությունը երևաց նրան իսկապես ցավակցության արժանի։

—Լավ,—ասաց նա,—ես ընդունում եմ քո խնդիրքը։ Բայց դու գիտես, որ նրա կատարումը դեռևս ինձանից կախված չէ։ Նախ այն պատճառով, որ ես չգիտեմ, արդյոք ե՞րբ կբարեհաճի Հորեղբայրս ինձ ազատել այդ փառավոր ապարանքից, երկրորդ, արդյոք թույլ կտա՞ քեզ ինձ մոտ ծառայելու։

—Շնորհակալ եմ, հազար անգամ շնորհակալ եմ ձեզանից, մելիք։ Թող ես լինեմ շնից պակաս, եթե ամեն բանի աշխատելու չլինեմ արժանացնելու ինձ ձեր ողորմածությանը։ Իսկ ինչ որ վերաբերում է մեր բանտարկությանը, այդ իմ կարծիքով, երկար չի տևի։ Երբ ձեզ բերեցին այստեղ, ձեր Հորեղբայրը սաստիկ տխրեց և մտածությունների մեջ ընկավ։ Նա սկսեց նախատել ինձ, իբր թե ես պատճառ դարձա, որ նա կռվեց ձեզ հետ։ Նա մեղադրում էր ինձ, թե ես սխալ գուշակություններ արեցի իմ աստղերով։ Որովհետև նախքան ձեզ հետ ունեցած տեսությունը, նա հրամայեց ինձ նախագուշակել, արդյոք աստղերը խոստանո՞ւմ են հաջողություն խոսակցությանը սկսելու համար, թե ոչ։ Հենց դրա համար էլ նա բարկացավ ինձ վրա և նստացրեց այդ զնդանի մեջ։ Ես ճանաչում եմ ձեր Հորեղբորը, նա թեև չափազանց դյուրաբորբոք մարդ է, բայց շուտով մոռանում է անցյալը։ Երբ կզայրանա, պատրաստ է ոչնչացնել ամենին մահվան տանջանքով, իսկ երբ բարկությունը կանցնի, այդ ժամանակ ինքը կզղջա իր վարմունքի համար։ Բայց դուք, մելիք, ինքներդ եք մեղավոր։ Լավ մտածեցեք։ Դուք սխալվում եք նրան երդմնազանց լինել և ենթարկում եք նրան ներքին պատերազմների վտանգներին...

—Հասկանում եմ, շատ լավ եմ հասկանում,—գոչեց Ջումշուդը։—Բայց նրա ցանկությունը կատարելը իմ կամքից կախված չէ։ Այդ անկարելի բան է։ Եթե քեզ բոլոր հանգամանքները հայտնի լինեին, դու ինքդ կասեիր, որ ես իրավացի եմ։

—Արժանացրեք ինձ, մելիք, ձեր հավատարմությանը, պատմեցեք ձեր մտերիմ ստրուկին այդ նշանավոր գաղտնիքը։ Դուք չեք զղջա, եթե ձեր սիրտը բացելու լինեք իմ առջև։ Ես իմ կյանքով ձեզ եմ պատկանում, պատրաստ եմ ձեզ համար ապրել և ձեզ համար մեռնել։

Ջումշուդը տեսավ, որ աստղագետը անկեղծաբար կարեկցում էր իրան, և վճռեց հաղորդել նրան իր գաղտնիքը, ավելի այն

պատճառով, որ պետք էր զգում որևիցե մեկի առջև թափել իր սրտի ցավերը։

—Լսիր,—ասաց նա աստղագետին,—ես կպատմեմ քեզ բոլոր հանգամանքները, որոնք արգելում են ինձ ընդունելու հորեղբորս առաջարկությունը։ Բայց երդվում եմ, որ եթե քո լեզուն մի որևիցե մարդու կհայտնի իմ խորին գաղտնիքը, դու անպատճառ կսպանվես իմ ձեռքով, և ոչ մի զորություն չի կարող ազատել քեզ իմ վրեժխնդրությունից։

Աստղագետը պատասխանեց.

—Թող ես միևնույն րոպեում զոնկլուզի[25] կերպարանք ստանամ և այնպես մնամ մինչև վերջին դատաստանի օրը, եթե ես այս աստիճան անխորհրդապահ կգտնվեմ։ Եվ ի՞նչ օգուտ ինձ դավաճանել իմ տիրոջ գաղտնիքին։ Ձեզ հայտնի է, մելիք, որ ոչ թե լոկ հետաքրքրության համար խնդրում եմ հաղորդել ինձ ձեր պատմությունը, այլ առավելապես նրա համար, որ ես միջոց ունենամ լավ մտածելու, արդյոք չե՞մ կարող մի որևիցե օգուտ բերել ձեզ և դրանով ապացուցանել իմ անձնանվիրությունը։ Դուք գիտեք, մելիք, որ ես թափառել եմ ամբողջ աշխարհում, տեսել եմ և հնդկացիներին, և զանգիներին[26], և ուղղափառ մուսուլմաններին, և անմաքուր ջհուդներին, և...

Ջումշուդը ընդմիջեց աստղագետի խոսքը, ասելով.

—Լավ, լավ, ես քեզ հավատում եմ, հիմա լսիր։

Եվ նա սկսեց պատմել հետևյալը.

## IV

## ՋՈՒՄՇՈՒԴԸ ՋՎԱՆՇԻՐՑԻՆԵՐԻ ՄՈՏ

«Իմ հայրը շուտ մեռավ. նրա մահից հետո հորեղբայրս ինձ ընդունեց իր հոգաբարձության ներքո։ Տասն և յոթ տարեկան էի ես, երբ նա ուղեց ինձ մի հանձնարարական նամակ, որ գրված էր ջվանշիրցիների[27] մի ծերունի ցեղապետի անունով։ Այդ քաջ և պատերազմասեր ցեղը բնակվում է մեր լեռների վրա, արևմտյան կողմում։ Նա ցանկանում էր, որ ես, ապրելով այդ լեռնաբնակների մեջ, ընտելանայի նրանց բարքուվարքի պարզությանը, սովորեի նրանց ճարպկությունները նիզակ և զենքեր գործածելու մեջ և վերադառնայի որպես մի վարժ պատերազմող, որ կարող լիներ ամեն անգամ փառքով հանդիսանալ կռվի դաշտում։ Իմ վար-

ծությունների համար ժամանակ որոշեց նա չորս տարի, ընծայեց ինձ մի գեղեցիկ նժույգ, հարուստ զենքեր, երեսուն թուման փող. և ես ճանապարհ ընկա, գնացի։

Իմ ճանապարհորդությունը տևեց երեք օր, չորրորդում ես տեսա իմ առջև չվանշիրցիների եղեգնյա տաղավարները։ Նրանք չվել էին այդ ժամանակ իրանց հոտերի հետ լեռների ամենաբարձր գագաթների վրա։ Որովհետև եղանակը սաստիկ տոթային էր, և արևակեզ ջերմությունը անտանելի էր դարձել ոչ միայն հովիտներում, այլ մինչև անգամ լեռնային բարձրավանդակների վրա։

Որքան մեծ բավականությամբ նայում էի ես չվանշիրցիների օբաների[28] վրա։ Նրանց բազմաթիվ հոտերը ազատ շրջում էին ձոր, կանաչազարդ արոտամարգերի մեջ։ Անհամեմատ գեղեցիկ ձիաները թռչկոտում էին, կայտառում էին, ծփելով իրանց ագիներն ու բաշերը։ Օդը բարեխառն էր, մի առանձին տարօրինակ քաղցրություն թափված էր նրա մեջ։ Ես հասա այնտեղ արևի մայր մտնելուց առաջ։ Տղամարդիկը, շուրջ հավաքված, ինչ-որ բանի վրա խոսակցում էին։ Ոմանք անհոգ նստած էին իրանց տաղավարների մուտքի առջև և ծխում էին։ Մանուկները խաղում էին նրանց մոտ։ Կանայքը ծածկված չէին այն անտանելի քողերով. որոնք մեզ մոտ գործածության մեջ են։ Նրանք բոլորովին բաց երեսներով նստած էին տաղավարների առջև և զբաղված էին զանազան աշխատություններով։ Ոմանք բուրդ էին մանում, ոմանք գորգ էին գործում, ոմանք իրանց համար հագուստներ էին կարում, իսկ մի քանիսն էլ, ձեռքով բռնած ոչխարներին կամ գառներին. խուզում էին նրանց բուրդը։ Մի խոսքով, աչքի էր զարկում կնիկների ժրաջան աշխատասիրությունը, իսկ տղամարդների կատարյալ անգործությունը, որոնք զբաղված են լինում միայն իրենց նժույգներով, զենքերով և ճարպիկ ձիարշավներով[29]։

Հենց որ ես հայտնվեցա, իսկույն իմ վրա դարձրի ընդհանուրի ուշադրությունը։ Հյուրասիրությունը համարվում է ամենագլխավոր առաքինություններից մեկը չվանշիրցիների մոտ։ Նրանցից յուրաքանչյուրը, մինը մյուսի հակառակ, ցանկանում էր բավականություն գտնել, հյուրասիրելով ինձ իր մոտ։ Ես մերձեցա մի բնակարանի, որի հանդեպ նստած էր մի պատկառելի ծերունի, զարդարված ալիքներով։ Նրա դեմքի ազնիվ գծերը արտահայտում էին մի առանձին հրապուրանք։

Ես ողջունեցի, ասելով.

—Սալամուն ալեյքում[30]։

—Ալեյքում աս սալամ,—պատասխանեց նա։

—Թող շնորհի քեզ Ալլահը խաղաղություն և բարեբախտություն, բաբա,—ասացի ես,—կարո՞ղ ես ինձ ցույց տալ, թե որն է Հասանի ցեղապետի տաղավարը։

—Թող բազմանան քո տարիքը, ինչպես երկնքի աստղերը,—պատասխանեց ծերունին։—Հասանը այլևս չկա մեր մեջ։

—Ո՞ւր է գնացել։

—Պարսկաստան, Քերիմ խանի[31] մոտ, որը մտքին դրել է նստել Իրանի գահի վրա։

—Ի՞նչ պատճառ ուներ Հասանը հեռանալու իր հայրենիքից,—շարունակեցի ես, ձիուց ցած իջնելով և ծալապատիկ նստելով ծերունու մոտ։

—Հասանը չկարողացավ հաշտվել մեր նոր տանուտերի հետ և ստիպվեցավ մեր երկրից հեռանալ, որովհետև երկյուղ ուներ նրա վրեժխնդրությունից։

—Ուրեմն դուք նոր տանուտեր ունե՞ք։

—Ինչպես չէ։ Նրան կոչում են Փանահ խան[32]. նա ծնված է մեր լեռներում։ Ես նրան ճանաչում էի, երբ դեռ երեխա էր. այդ հասակում ևս նա այնքան հանդուգն էր և կռվարար, որ ոչ ոք չէր սիրում նրան։ Տեսնելով, որ մեզ մոտ բնակվելը իրան շատ շահավետ չէ, հեռացավ դեպի Պարսկաստան, այնտեղ մտավ ծառայության մեջ Նադիր շահի մոտ և չաուշի (մունետիկ) պաշտոն էր կատարում։ Իսկ հետո վերադարձավ մեզ մոտ։ Նրա ճարպկությունը, խորամանկությունը, խոսելու մեջ վարպետությունը, որը ժառանգել էր իրանցիներից, նրան հաջողեցրին գրավելու մեր պարզամիտ չվաչկրյաների խելքը, և դրանով եղավ նրանց տանուտեր։ Միայն Հասանն էր, որ ընդդիմացավ Փանահ խանի ընտրությանը, բայց այդ վերջինը հաղթող հանդիսացավ, և Հասանը ստիպվեցավ հեռանալ։

—Ափսոս, շատ ափսոս,—պատասխանեցի ես,—նա ինձ շատ հարկավոր էր։ Ես ունեմ նրա անունով մի հանձնարարական նամակ իմ հորեղբորից՝ Վարանդայի իշխանից։

—Լսիր,—ասաց ծերունին,—ոչ ոքին չի պիտի հայտնես, թե դու Հասանի բարեկամն ես, եթե այդ գիտենան, քեզ համար վատ կլինի։ Բարի սրտով խորհուրդ եմ տալիս քեզ։

Ես գոհունակությամբ շնորհակալություն հայտնեցի ծերունուն նրա նախազգուշության համար։ Երբ նա իմացավ իմ նպատակը, թե դիտավորություն ունեմ ջվանշիրցիների մոտ սովորելու պատերազմական արհեստը, սկսեց խնդրել ինձ, որ բնակվեմ իր մոտ։

—Իմ որդիները կլինեն քո ընկերները,—ասաց նա,—նրանք համարվում են ամենալավ ձիավարները մեր ցեղի մեջ։ Իմ տունը կլինի քո տունը։

Հետո կանչեց իր որդիներին և նրանց ներկայացրեց ինձ։ Այդ երիտասարդները եղբոր պես ընդունեցին ինձ։ Նրանց անկեղծ դեմքերը ինձ շատ հաճելի թվեցան։ Երեցը, որ կոչվում էր Աբդուլ, կարծես թե պատկանում էր հսկաների սերունդին. նա խիստ բարձրահասակ էր։ Նրա մարմնի բոլոր գծերի մեջ արտահայտվում էր արիություն և քաջություն։ Նրա բոլոր անդամները ցույց էին տալիս դյուրաթեքություն և արագաշարժություն։ Ամեն ինչ նրա մեջ հոյակապ էր ու վեհանձնական։ Աբդուլին չէր կարելի գեղեցիկ համարել, բայց նրա դեմքը բավական դուրեկան էր, թեև արտահայտում էր մի ինչ-որ խորին խստասրտություն։ Կրտսեր որդին, որ կոչվում էր Իսմայիլ, բարձրահասակ չէր. նրա բոլոր գծերի մեջ երևում էին կանացի քնքշություններ։ Նրա ձայնը այնքան գրավիչ էր, որ թափանցում էր ուղիղ մարդու հոգու մեջ։

Ծերունին իմ վերաբերությամբ հնարեց մի չլսված պատմություն, որը հաղորդեց իր որդիներին, ասելով, իբր թե ես մի մուսուլման եմ Խորասանի կողմերից, թե նշանավոր պատճառներ ստիպել են ինձ թողնել իմ հայրենիքը. թե ես սպանել եմ մի պարսիկ աստիճանավորի, որը ցանկանում էր վիրավորել ինձ, և այդ սպանման պատճառով հեռացել եմ Խորասանից, ապաստան գտնելու ազատ ջվանշիրցիների մոտ։

Երիտասարդները, լսելով այդ առասպելը, երդվեցին իմ եղբայրները լինել և խնդրեցին, որ ես համարեմ նրանց կայքը և բնակարանը որպես իմ սեփականություն։

—Բայց դուք չի պիտի զարմանաք, զավակներս,—շարունակեց խելացի ծերունին,—երբ կտեսնեք, որ մեր հյուրը մեզ հետ չի կատարում այն սուրբ պաշտամունքները, որոնք սահմանված են մեզ համար երկնային գրքով։ Որպես պատիժ իր գործած հանցանքի, նա շարունակ հինգ տարի չէ կարող գնալ մեչիդը նամազ[33] անելու և մեր կրոնական մյուս ծեսերը կատարելու համար։ Այդ

արգելումները գրված են նրա վրա, որպես սաստիկ պարտավորություն, մի սուրբ շեյխից[34], որին խոստովանել է նա իր հետ պատահած արկածները։

Ես հասկացա ծերունու նպատակը և սրտանց շնորհակալ եղա նրանից։ Բայց նրա մանկահասակ որդիքը զարմանում էին շեյխի՝ իմ վերաբերությամբ սահմանած խիստ ապաշխարանքի մասին։

Երբ նրանք հեռացան, որ տեղավորեին իմ ձին և նրան ճարակ տան, ծերունին ինձ հետ միայնակ մնալով, ասաց.

—Դու մի զարմացիր այդ նախազգուշությունների համար, որ ես գործ եմ դնում։ Այժմ մեզ մոտ այն ժամանակները չեն մնացել, որպես առաջ էր, երբ որ թագավորում էր ազատությունը մտածելու և զգալու, որպես մարդ ցանկանում էր։ Մեր այժմյան մտավոր ծանոթությունը իրանցիների հետ ծանոթացրեց մեզ մահմեդական մոլեռանդության բոլոր ցնորաբանություններին, բոլոր այլանդակությունների հետ։ Առաջ մեզ համար միևնույն էր թե քրիստոնյան, թե մուսուլմանը, և թե մինչև անգամ չհուդը, երբ պատահում էր նրանց հյուր լինել մեզ մոտ։ Իսկ այժմ մուսուլման չլինելը մի սարսափելի արատ է, և ես մեր ամբողջ վրանաբնակների կողմից ինձ պիտի ենթարկեի անախորժությունների, նրա համար, որ պահեցի ինձ մոտ մի քրիստոնյա հյուրի։ Երևակայեցեք, այդ մոլեռանդությունը այժմ այն աստիճան արմատացել է մեր մեջ, որ ես այդ դեպքում չեմ կարող հավատալ մինչև անգամ իմ հարազատ որդիներին։ Դրա համար էլ ես հնարեցի այն առասպելները։ Խորասանցու կեղծ անունով դու կապրես մեզ մոտ, որպես քո տան մեջ։ Ամենքը կաշխատեն ստանալու քո բարեկամությունը։ Ես քեզ դրանից հետո պիտի կոչեմ Մահմեդ։ Եվ որպեսզի դու ստիպված չլինեիր կատարելու մեր մահմեդական ծեսերը, ես հնար գտա դրանից ես քեզ ազատելու։

—Ախ, Ջամշուդ,—ասաց տխրավ ծերունին,—ճշմարիտ ասած, շատ ցավալի է, երբ մտածում ես, թե ի՞նչ ժամանակների ենք հասել, որ ես ստիպված եմ խաբել, սուտ խոսել մինչև անգամ իմ զավակների առջև։ Ո՞ւր կորավ մեր նախնական անկեղծ պարզությունը, մեր սրտերի ազատությունը։ Այդ բավական չէ, ստիպում են մեզ թաքցնել մեր կնիկներին, ստիպում են փաթաթել նրանց չադրաների[35] մեջ և պահել։ Իսկ մենք՝ տղամարդիկներս, պետք է բոլոր աշխատությունները կատարենք[36], փոխարինելով, մի դույզն

մեր կնիկներին դուրս հանելով, մի որևիցե մարդ կտեսնի նրանց երեսները։ Ես լսեցի, որ Փանահ խանը, պարսից խաների սովորության համեմատ, արդեն կազմակերպում է իր համար մի ամբողջ հարեմ[37]. նրան պակաս են միայն ներքինիները (Թող Ալլահը ուղարկե նրանց վրա իր նզովքը)։ Այժմ Փանահ խանի կնիկները արդեն ծածկված են չադրաների մեջ և երեսների վրա կրում են անթափանցիկ, ցանցատեսակ քող (ռուբենդ)։ Այդ վատ է, շատ վատ է...

Այդ բոլոր խոսքերը ասում էր ծերունին կիսաձայնով, վախենալով, մի գուցե լսեին նրա դատողությունները։

Արեգակը մայր մտավ։ Փիշ-նամազը[38] կարդաց ազանը[39], հրավիրելով աղոթելու։ Ծերունին թողնելով ինձ, դիմեց դեպի մի տաղավար, որ ծառայում էր մզկիթի փոխարեն։ Այնտեղ ամեն կողմից թափվում էր ժողովուրդը աղոթելու համար։ Ես մնացի միայնակ, նստած թախտի վրա, որ տարածված էր ծերունու խրճիթի առջև, և մեծ բավականությամբ նայում էի երկնային սքանչելի արշալույսի վրա, որը ոսկե գույնով նկարում էր երկինքը։

## V

## ԳԵՂԵՑԻԿ ՍԱԼԻՀԱՆ

Ծերունին վերադարձավ շատ ուշ, իր երկու որդիների հետ, և խնդրեց ինձ մտնել տաղավարը, ուր պատրաստված էր ընթրիքը։ Այնտեղ տեսա նրա կնոջը, որի անկեղծ, ուրախ կերպարանքը ինձ խիստ հաճելի թվեցավ։ Կնոջ մոտ նստած էր ծերունու դուստրը, մի մանկահասակ, տասնևվեց տարեկան աղջիկ, որ զբաղված էր մեզ համար ոչխարի կաթ պատրաստելով։ Նա փաղաքշանքով նայեց իմ վրա և, թեթև կերպով գլուխ տալով, ողջունեց ինձ։ Ախ, իմ սիրելի աստղագետ, երկնքի վրա գտնված բոլոր աստղերը չէին կարող համեմատվել նրա սև աչքերի փայլի հետ։ Նրա արևից վառված դեմքի վրա նկարված էր մի տեսակ կախարդիչ հրապուրանք։ Ես չէի կարողանում աչքերս հեռացնել նրանից և խորին հոգեզմայլությամբ գաղտուկ նայում էի սքանչելի Սալիհայի վրա։

Ես բնակվեցա այդ բարեսիրտ մարդկանց մոտ, և բախտ ունեի ամեն օր տեսնելու իմ նազելի Սալիհային։ Ես օրըստօրե զգում էի ավելի սաստիկ սեր դեպի այդ աննման աղջիկը, որը իր գրավիչ պարզամտության հետ միացրել էր խիստ ուրախ և կենդա-

նի բնավորություն: Նա կոչում էր ինձ կարդաշ (եղբայր) և երևում էր, որ մի առանձին բավականություն էր գտնում իմ ներկայությունից: Այդ երջանիկ լեռնաբնակների բարքուվարքի պարզությունը չէր արգելում ազատ հարաբերություններ երկու սեռերի մեջ: Այդ միջոց էր տալիս ինձ ավելի մոտ լինել Սալիհային և քաղցրացնում էր մեր բարեկամությունը միշտ նորանոր վայելչություններով: Նրա եղբայրների հետ շատ անգամ ես ձիով ման էի գալիս, գնում էինք որսորդության, և ես եղա նրանց հետ ավելի մտերիմ, քան թե կարող էր լինել մի սերտ բարեկամ: Մենք սիրում էինք սանձահարել անզուսպ, սատանի խառնվածքի նժույգներին. սիրում էինք, թռչելով նրանց վրա, կամ դեպի ցած սլանալ սարափերի զառիվայրերից և կամ բարձրանալ ահռելի ժայռերի վրա: Մենք ձիու վրա կատարում էինք զանազան տեսակ խաղեր, երբեմն սաստիկ արագավազ ընթացքի միջոցում գետնից վեր էինք բարձրացնում օդի մեջ ձգած խնձորը և կրկին նետում էինք միմյանց գլխի վրայով. երբեմն ջիրիդ[40] էինք խաղում, կամ հրացաններով նպատակին դիպցնելու փորձեր էինք անում, և ես ամեն օր սովորում էի ավելի ու ավելի ճարպկություններ, ավելի հմտություններ ձիավարելու մեջ:

Սալիհան սիրում էր ինձ ամենաջերմ սիրով: Ես նկատում էի այդ սերը նրա հիանալի հայացքի մեջ, որը միշտ հառած էր լինում իմ վրա, նկատում էի նրա խորին ուշադրության մեջ դեպի այն բոլորը, ինչ որ ինձ էր վերաբերում: Բայց նա սիրում էր ինձ, ինչպես մի եղբայր, ինչպես իր միակ բարեկամին: Նրա սիրտը չէր կարող բաժանել այն սերը, որը զգում էր դեպի ինձ, այն զգացմունքից, որ ուներ դեպի իր հարազատ եղբայրները: Այդ երկու հակումները, թե դեպի ինձ և թե դեպի իր եղբայրները, ոչնչով չէին տարբերվում նրա սրտում: Նրա մայրը միամիտ կին էր և մտածում էր միայն տնային տնտեսության վրա: Ինձ ոչ սակավ անգամ հաջողվում էր միայնակ մնալ Սալիհայի հետ, օգնել նրան կատարելու իր այս և այն աշխատությունները, և երբեմն գնալ նրա հետ ջուր բերելու լեռնային առվակներից: Այսպիսի դեպքերում մենք դիտմամբ դանդաղեցնում էինք մեր ընթացքը, և ես այդ ժամանակ քաղում էի նրա համար գեղեցիկ ծաղիկներ, որոնցմով զարդարված էին լեռները: Այդ ծաղիկներով նա ուրախանում էր, որպես մի երեխա: Երբեմն սեղմում էի նրան իմ կրծքի վրա, համբուրում էի

նրա մարջանի նման կարմիր շրթունքները: Բոլոր այդ դեպքերում՝ նա չէր ընդդիմանում, դնում էր իր գեղեցիկ գլուխը իմ ուսի վրա և երեխայական քնքուշ համառությամբ նայում էր իմ աչքերի մեջ, հարցնելով. «Եղբայր, դու ինձ միշտ պիտի սիրե՞ս»: Ես խոստանում էի նրան մշտական սեր ու բարեկամություն: Դրանով նա ուրախանում էր, և որպես մի թեթև այծյամ, վազվզում էր, թռչկոտում էր, իրան գոհ ու բախտավոր էր համարում: Շատ անգամ իմ գյուղագրգիռ արյունը բորբոքվում էր, և ես զգում էի, թե սրտիս սաստիկ կրակ այրում էր իմ սիրտը... Բայց Սալիհան այնքան անմեղ կերպով հավատացած էր ինձ, նա այնքան միամիտ էր և պարզասիրտ, որ վախենում էի խանգարել նրա երեխայական բախտավորությունը...

Այդ դրության մեջ էին մեր հարաբերությունները, երբ սկսեց մոտենալ ժամանակը, որ պետք էր ցած իջնել լեռներից տափարակների վրա ձմեռելու համար: Կարծեմ, դու շատ լավ գիտես, որ Ղարաբաղի բոլոր խաշնարած ցեղերը գարնան սկզբից սկսում են հեռանալ դեպի լեռները և հետզհետե աստիճանաբար բարձրանում են նրանց վրա այն չափով, ինչ չափով սաստկանում է արեգակի տոթը, երբ ցամաքացնում է բուսականությունը տափարակների վրա և դաշտային տեղերում մարդկային կեցությունը դարձնում է անկարելի: Երբ սկսում է աշունը, այդ խաշնարածները ևս սկսում են փոքր առ փոքր ցած իջնել լեռներից, որոնց վրա ցուրտը արդեն զգալի է դառնում: Իսկ ձմեռը կրկին բնակվում են իրենց ձմեռային խրճիթներում, որ փորված են գետնի տակ[41]: Այսպես չվելով մի տեղից մյուս տեղ, նրանք տարվա ամբողջ ընթացքում վայելում են ծաղկյալ գարուն, և նրանց բազմաթիվ հոտերը, գեղեցիկ նժույգների ընտիր երամակները միշտ գտնում են դալար և սննդարար կերակուր:

Եվ այսպես, չվանչիրցիները վերադարձան ամառանոցից և բնակվեցան իրանց ձմեռային գետնափոր խրճիթներում: Այդ ժամանակ պատահեց մի անցք, որը նշանավոր ազդեցություն ունեցավ իմ վիճակի փոփոխության վրա:

Քարիբլուցիները[42] քշեցին-տարան մեր ձիաները: Չվանչիրցիները սաստիկ վրդովվեցան այդ հափշտակության պատճառով: Վճռեցին վրեժխնդիր լինել: Մեր բոլոր ընտիր ձիավորները հավաքվեցան և ուխտեցին չափխուն անել (ասպատակել) քարիբլուցիների ձմեռանոցը: Ես էլ մասնակցեցի այդ արշավանքի մեջ: Սալի-

հայի երեց եղբայրը և մինչև անգամ ծերունի հայրը միացան քաջերի հետ: Ես շատ թախանձեցի ծերունուն, որ նա հետ մնա այդ վտանգավոր ձեռնարկությունից, բայց նա չկամեցավ լսել ինձ։ Նա կորցրել էր իր ամենալավ նժույգներից մեկը, արաբական ցեղից, որին խիստ թանկ էր գնահատում։ Սալիհայի կրտսեր եղբայրը մնաց տանը։ Նա խիստ տխուր էր, որ նրան զրկեցին մասնակցել մեր քաջագործությունների մեջ, բայց այդ անհրաժեշտ էր, որովհետև մեկը պետք է մնար տան վրա հսկելու համար։ Բոլոր կնիկները քնած էին, երբ մենք ճանապարհ ընկանք, այդ պատճառով ես միջոց չունեցա Սալիհային մնաք բարյավ ասելու։

Հետևյալ գիշերը մենք հասանք քաբիլուցիների ձմեռանոցը։ Գիշերային մթությունը նպաստեց մեզ անտեսանելի կերպով մոտենալ այն տեղին, ուր պահված էին մեր և նրանց ձիաների երամակները։ Կոտորելով պահապաններին՝ մենք քշեցինք նրանց երամակները և ոչխարների հոտերը մեզ մոտ։ Բայց խավարի մեջ չկարողացանք նկատել, որ հովիվներից մեկը միջոց գտավ ազատվելու և փախչելով, իմացում տվեց քաբիլուցիներին մեր հարձակման մասին։ Մի ակնթարթում այդ վերջինները պատրաստվելով, վրա պրծան մեր ետևից։ Եվ որովհետև մենք, ծանրաբեռնված լինելով հարուստ ավարով, չէինք կարող արագությամբ շատ հեռու գնալ, այդ պատճառով նրանք կարողացան մյուս օրվա կեսօրին հասնել մեր ետևից և շրջապատել մեզ։ Կռիվը երկու կողմից ևս խիստ արյունահեղ էր։ Վերջը քաբիլուցիները հաղթող հանդիսացան։ Մենք կորցրինք շատ տղամարդիկ և, թողնելով ամբողջ ավարը, ստիպվեցանք ազատություն որոնել փախուստի մեջ։ Սալիհայի հայրը, մահացու վերք ստանալով իր կուրծքի մեջ, ընկավ հենց իմ մոտ, չարտասանելով ոչ մի խոսք։ Ես նույնպես վերք ստացա գլխի վրա և կորցրի շատ արյուն։

Ավելի հետո, երբ մենք ամեն ինչ կորցրած մոտեցանք մեր ձմեռանոցին, բոլոր կնիկները դուրս եկան մեզ ընդառաջ։ Նրանք, որ հույս ունեին ուրախությամբ հանդիպել մեզ, տեսնելով պատահած դժբախտությունը, սկսեցին լաց լինել, աղաղակել, փետել իրանց ծամերը և պատառոտել իրանց հագուստը։ Չկար նրանց մեջ մի այնպիսին, որ սուգ չաներ իր ազգայիններից որևիցե մեկի համար, որ սպանված լիներ կռվի դաշտում։ Սալիհան դունաթափ, կիսամեռ, նայում էր ինձ վրա իր գեղեցիկ աչքերով, որ

լցված էին արտասուքով։ Նրա մայրը լաց էր լինում սպանված ամուսնու համար։

Սալիհան սկսեց հոգ տանել իմ առողջության մասին, պատրաստեց ինձ համար հանգիստ անկողին, որ կազմված էր մի քանի թաղիքներից։ Նա ավելի մեծ խնամք ուներ իմ վրա, քան թե իր եղբոր վրա, որը նույնպես վիրավորված էր, բայց թեթև կերպով։ Այդ վերջինը շուտով առողջացավ, և կրտսեր եղբոր հետ շատ անգամ հեռանում էին տնից, գնում էին անտառը գազաններ որսալու։ Մայրը միշտ զբաղված էր իր տնտեսական գործերով, և ես վայելում էի մի անգնահատելի բախտավորություն, շատ անգամ միայնակ տեսնելով իմ մոտ աննման Սալիհային։

Նա մի առանձին կարեկցությամբ աշխատում էր նախագիտել իմ ցանկությունները. երբեմն մի քանի ժամ շարունակ անց էր կացնում իմ անկողնի մոտ, քնքշությամբ նայում էր իմ վրա, աշխատելով գուշակել իմ զգացմունքները, իմ դրությունը։ Ախ, որքան անսահման ուրախալի էին այդ րոպեները։ Մի այսպիսի բախտավորություն խիստ հազիվ անգամ շնորհվում է մարդկանց։ Ես շնորհակալ էի լինում Աստուծուց իմ ստացած վերքի համար և այն բոլոր տանջանքների համար, որ այդ վերքը պատճառեց ինձ։

Մի օր Սալիհայի եղբայրները տանը չէին։ Մայրը, որ սակավ անգամ դուրս էր գալիս, նույնպես հեռացավ գեղի մերձակա անտառը ցախ հավաքելու համար։ Օրը թեև ձմեռային էր, բայց բավական տաք էր։ Քեզ հայտնի է, որ մեր տափարակների վրա խիստ հազիվ անգամ է ձյուն գալիս, և եկածը երկար չէ մնում։ Մենք Սալիհայի հետ մնացինք խրճիթում միայնակ։ Ես արդեն զգում էի ինձ բոլորովին առողջացած. գլխի վերքը կատարելապես բուժված էր։ Իմ գեղեցիկ բարեկամը, ուրախանալով իմ առողջության վրա, այն օր ավելի զվարթ էր, ավելի հրապուրիչ էր, քան թե մյուս օրերը։ Նա նստած էր իմ մոտ, և իր սովորության համեմատ, նայում էր իմ աչքերի մեջ։ Ես մոտ քաշեցի նրան, նա չընդդիմացավ։ Ես գրկեցի նրան, համբուրում էի և սքանչանում էի իմ կյանքում վայելած ամենաբերկրալի րոպեով... Սալիհան նույնպես սեղմել էր ինձ իր կուրծքի վրա, խորին հրճվանքի մեջ էր և կոչում էր ինձ ամենահաճելի անուններով։ Նա կատարելապես բախտավոր էր համարում իրան, բախտավոր իր անգիտությամբ, իր պարզամտությամբ... Իսկ ե՞ս, ես արդեն զղջացած, տանջվում էի խղճի խայթով...

Ապագան նկարչում էր ինձ ամենասարսափելի կերպարանքով։ Ինձ լավ ծանոթ էր մեր լեռնաբնակների բնավորության խստությունը այսպիսի դեպքերում։ Ես գիտեի, եթե Սալիհայի վարմունքը հայտնվեր, այն ժամանակ նա կորած էր, նրան կքարկոծեին։ Եղբայրները ոչ միայն չէին պաշտպանի նրան, այլ ընդհակառակը, իրանք առաջինը կլինեին, որ օրինակ կտային մահվան դատապարտելու նրան։ Ես ամբողջ մարմնով սոսկացի, երբ նայեցի իմ նազելի Սալիհայի վրա, որը ուրախ ժպիտը երեսին, թեքված էր իմ ուսի վրա։ Երևակայում էի, որ կարելի է հենց մի քանի րոպեներից հետո, նա արյունաթաթախ ընկած կլինի իմ աչքերի առջև և կմեռնի զարհուրելի տանջանքների մեջ։

Նրա կյանքը ազատելու համար ինձ միայն մի միջոց էր մնում, այն է՝ պսակվել նրա հետ օրինավոր ամուսնությամբ։ Բայց մի անդունդ բաժանում էր մեզ միմյանցից. նա մահմեդական էր, իսկ ես՝ քրիստոնյա։ Սալիհան զարմանում էր իմ տխուր լռության վրա. նա հետաքրքրությամբ անդադար հարցնում էր. արդյոք ես կրկին վա՞տ եմ զգում ինձ, կամ ես չե՞ի կամենա մի որևիցե բան։ Ես վախենում էի հայտնել նրան իմ մտատանջությունները և բավականանում էի պատասխանելով, թե ես բոլորովին առողջ եմ։ Այդ խոսքերը լսելով՝ նրա փաղաքշանքը չափ չուներ։ Նա այնքան գոհ էր, այնքան ուրախ էր, որ ես չէի համարձակվում զրկել նրան իր զվարճությունից, հայտնելով, թե որպիսի վտանգ է սպառնում թե ինձ և թե նրան։ Բայց իմ սիրտը կտոր-կտոր էր լինում։

Իսկ այն, որ թաքցնում էի ես, ինքնըստինքյան հայտնվեցավ Սալիհայի պարզամտության պատճառով։ Հենց որ մայրը վերադարձավ անտառից, նույն րոպեում աղջիկը պատմեց նրան բոլորը, ինչ որ կատարվել էր մեր մեջ։ Նա ուրախությամբ խնդրում էր իր մորը, որ շնորհավորե իրան, որպես իմ ամուսին։ Հարցերի պառավը իսկույն նկատեց իր դստեր դրության բոլոր զարհուրանքը։ Նա սոսկաց, մտաբերելով այն դատապարտությունը, որ սպառնում էր իր սիրելի զավակին։ Արգելելով նրան այդ մասին ոչինչ չխոսել իր եղբայրների մոտ՝ պառավը եկավ ինձ մոտ։ Ես տեսա նա լաց էր լինում և հասկացա, որ Սալիհան բոլորը խոստովանվել էր նրան։

— Այդ ի՞նչ արեցիր դու, Մահմեդ,— հեկեկալով ասաց ինձ Սալիհայի մայրը։— Դու ծածկեցիր ամոթով իմ ընտանիքը, դու խեղճ, միամիտ Սալիհայի կորստյան պատճառը դարձար։ Մի՞թե

դրա համար մենք ընդունեցինք քեզ մեր օջախի մեջ, որպես մեր հարազատ որդի։ Մենք հավատում էինք քո խոստակությանը, բայց դու խաբեցիր մեզ։ Կարելի է ձեզ մոտ՝ Խորասանում, այդ համարվում է մի հասարակ բան։ Բայց մեզ մոտ, այդ լեռների մեջ, միշտ սարսափելի մահ է սպասում այն կույսին, որ մեղանչում է ողջախոհության դեմ։ Զարագործ, դու էլ անպատիժ չես մնա, իմ որդիների խենչարները կցցվեն քո կուրծքի մեջ։ Ախ, սուրբ Ալի, ինչեր են պատահում։ Ես պիտի տեսնեմ, թե ինչպես իմ թանկագին Սալիհային ամեն կողմից կքարկոծեն մարդիկ։ Ախ, Ալլահ, առաջ փակիր իմ աչքերը, որ չտեսնեն այդ սարսափը...

Խղճալի պառավը սկսեց ավելի սաստիկ կերպով լաց լինել։

Դժբախտաբար, նա խոսում էր բավական բարձր ձայնով։ Սալիհան, որ այդ ժամանակ գտնվում էր գետնափոր խրճիթի մյուս բաժնում, լսեց պառավի զարհուրելի խոսքերը։ Նա հանկարծակի բացեց և մեռելի նման գունաթափ դեմքով ներս վազեց մեզ մոտ, մի՛ քանի քայլ լուռ կանգնած մնաց, հետո տատանվելով օրորվեցավ և ցած ընկավ համարյա իմ ոտքերի մոտ։

Թե ի՞նչ կրեցի ես այդ սարսափելի րոպեներում, չեմ ցանկանում իմ ամենաչար թշնամուն անգամ։ Երկինքը սոսկալի կերպով պատժում էր ինձ իմ հանցանքի համար։ Այդ րոպեում ես մոռացել էի մեր կրոնքների տարբերությունը, մոռացել էի իմ հորեղբորը, մոռացել էի ամբողջ աշխարհը և տեսնում էի միայն զարհուրելի դրությունը նրա, որը ինձ համար ամեն բանից ավելի թանկագին էր... Եվ ես վճռեցի։

Այդ դեպքում անկարելի էր նրանց բացատրել, թե որքան էլ ես սրտով ցանկանայի պսակել Սալիհայի կյանքը, դարձյալ չէի կարող, որովհետև ես քրիստոնյա էի։ Այդ կնշանակեր սպանել նրան։ Եվ ո՞ր բարբարոսը, եթե նա լիներ իմ տեղը, այդպես կվարվեր։ Ես հետևեցի իմ սրտի ձայնին և, բարձրացնելով կիսամեռ Սալիհային և պահելով նրան իմ գրկի մեջ, ասեցի.

—Հանգստացիր, իմ սիրելի և թանկագին ամուսին, հանգստացիր և դու, ով հարգելի մայր, փոխանակ տրտմության՝ թող ուրախություն լինի մեր սրտերը։ Ես հանցավոր եմ ձեր առջև, բայց հենց այսօր կքավեմ իմ հանցանքը։ Հենց որ կվերադառնան Սալիհայի եղբայրները, ես իսկույն կխնդրեմ նրանց համաձայնությունը, որ մենք միանանք օրինավոր ամուսնությամբ։ Զենք

հայտնի նրանց պատահածի մասին, կծածկենք նրանցից մեր գաղտնիքը: Դու, իմ Թանկագին Սալիհա, կլինես իմ սիրելի կինը, իսկ դու, հարգելի մայրիկ, կունենաս մի նոր որդի:

Արտասանելով այդ խոսքերը, ես մոռանում էի, որ խոստանում էի մի անկարելություն, որով ստիպված պիտի լինեի կամ դավաճանել իմ կրոնին, կամ մեղանչել իմ խոստման դեմ: Ես տեսնում էի միայն իմ Սալիհայի սարսափելի վիճակը և պատրաստ էի ամեն քայլ անել:

Չեմ կարող նկարագրել այն ուրախությունը, որ տեղի ունեցավ իմ խոսքերից հետո: Սալիհան անսահման հոգեզմայլությամբ ընկավ իմ գիրկը: Նրա մայրը չոքեց գետնի վրա, աղոթում էր ինձ համար: Ես այդ րոպեում գտնվում էի անչափ բախտավորության մեջ:

## VI

## ՋՈՒՄՇՈՒԴԻ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱԼԻՀԱՅԻ ՀԵՏ

Երբ որ վերադարձան Սալիհայի եղբայրները, ես հայտնեցի նրանց իմ ցանկությունը, թե դիտավորություն ունեմ ամուսնանալու նրանց քրոջ հետ: Նրանք ուրախությամբ տվեցին իրենց համաձայնությունը, որովհետև եղբոր պես սիրում էին ինձ: Մյուս օրը նշանակվեցավ մեր ամուսնության խորհուրդը կատարելու համար: Առաջին օրը հավաքվեցան մեր խրճիթում շատ տղամարդիկ և կանայք, զվարճանում էին, երգում էին և քեֆ էին անում: Երկրորդ օրը կատարվեցավ խինայով[43] ձեռքեր ներկելու սովորությունը: Երրորդ օրը բոլոր պատրաստությունները պսակի խորհուրդը կատարելու համար արդեն կարգի էին դրված: Եվ չնայելով բարքավարքի պարզությանը, որ տիրում է չվանչիրցիների մեջ, ես ստացա այդ օրվա մեջ բազմաթիվ ընծաներ իմ հարսնացուի ազգականներից և բարեկամներից: Ես հագնված էի փառավոր կերպով. բոլորը աշխատում էին ցույց տալ ինձ իրանց համակրությունը, և ես էի այն օրը կատարելապես բոլոր հրավիրյալների պետը: Իմ հարսնացուի երկու եղբայրներն էին այնօրվա հանդեսի մեջ իմ սաղդասար և սոլդասար[44]. դրանք ամենայն ճշտությամբ կատարում էին իմ բոլոր հրամանները: Ես մոռացա քեզ ասելու, որ հարսանիքի հանդեսը կատարելու ժամանակ ինձ հատկացրել էին մի առանձին խրճիթ, որը բավական հեռու էր Սալիհայի խրճիթից:

Սալիհան այնօր հագած ուներ իր ամենաշքեղ զգեստները, օծված էր անուշահոտ յուղերով, ստանում էր նույնպես ընծաներ։ Բոլոր կանայքը, որ հավաքված էին նրա մոտ, անընդհատ հանաքներ էին անում և զվարճացնում էին նրան։

Երբ որ ժամանակը հասավ, ես նստեցի ձիու վրա և իմ բոլոր հյուրերի ուղեկցությամբ գնացի Սալիհային ընդառաջ։ Նա ևս մոտենում էր ինձ հակառակ կողմից, նույնպես ձիու վրա նստած և շրջապատված իր ազգականներով ու բարեկամներով։ Զվանչիրցիների սովորության համեմատ, դեռ Սալիհան բոլորովին ինձ չմոտեցած, ես նետեցի դեպի նրան մի խնձոր, որ այս նպատակով ձեռքումս բռնած ունեի։ Դա մի նշան էր խաղերը սկսելու համար։ Այդ միջոցին Սալիհան, որ նստած էր մի ամենալավ նժույգի վրա, նետի նման սլացավ դեպի իր բնակարանը։ Իմ խումբը ընկավ նրա ետևից։ Նրա խումբը ընդդիմադրում էր, աշխատում էր օգնել փախըստականին։ Իսկ իմ մարդիկը աշխատում էին բռնել Սալիհայի ձիու սանձից և կանգնեցնել նրան։ Երկար մրցությունից հետո մեկը իմ խմբից կարողացավ կանգնեցնել նրան։ Մենք միացանք և ամբողջ խմբերով դիմեցինք դեպի իմ բնակարանը։ Երբ որ հասանք իմ խրճիթին, ես սկսեցի խնդրել Սալիհային, որ ցած իջնե ձիուց. ինձ հետ ձայնակցեցին և նրա բոլոր ազգականները։ Բայց կանայքը, որ ուղեկցում էին Սալիհային, հորդորում էին նրան չըկատարել իմ խնդիրքը։ Այդ հասարակ ծեսի համար տեղի ունեցան երկար հակաճառություններ։ Վերջապես Սալիհան ձիուց ցած իջավ, ես ընդունեցի նրան և հանդիսավոր կերպով ներս տարա իմ խրճիթը։ Մոլլան պատրաստ էր. նա կատարեց պսակի խորհուրդը, կարդալով մի քանի գլուխներ ղուրանից։ Հետո բոլորը հավաքվեցան իմ խրճիթում, աղաղակում էին, երգում էին և թաշկատում էին։ Երբ նվագածուները իրանց քամանչաներով[45] հայտնվեցան, հանդիսականների ուրախությունը ավելի կենդանացավ։ Սկսեցին պարել։ Բոլորը միմյանց ձեռքից բռնելով և շրջանակներ կազմելով, նվագարանների եղանակի համեմատ, ռիթմական շարժումներ էին գործում մինչև կեսգիշեր։ Մեր ձմեռանոցի բոլոր խաշնարածները զվարճանում էին իմ հարսանիքում։ Սալիհան գոհ էր և ուրախ, ինչպես մի երեխա, նա բոլորովին նվիրված էր ինձ և անսահման կերպով սիրում էր ինձ։ Նրա եղբայրները և մայրը նույնպես գոհ էին Սալիհայի բախտավորությունով։ Իսկ ես գոհ էի իմ նվիրած պա-

հաճելությամբ, որով դարձա փոքրիկ այն արարածի կյանքին, որին սիրում էի, և բախտավորացրի նրա ընտանիքը:

Ինձ ավելին որպես մշտական սեփհականության այն խըրճիթը, որի մեջ կատարվեցավ իմ ամուսնական խորհուրդը, և ես բնակվեցա այնտեղ իմ անգին կենակցի հետ: Որպիսի բերկրալի օրեր անց էի կացնում ես նրա հետ, որքան անսահման բավականություն էի վայելում նրա կուրծքի վրա: Սալբիհան այնքան բարի էր, այնքան հնազանդ էր, այնքան սիրելի էր, որ ես համարում էի ինձ այս աշխարհի մարդիկներից ամենաբախտավորը, և բոլորովին մոռացել էի իմ դրությունը:

Երբեմն իմ առանձնակի խորհրդածությունների ժամանակ ինձ ներկայանում էր իմ գործած հանցանքը, այն գեղծումը, որ ես կատարել էի մեր կրոնի կանոններին հակառակ, որոնք արգելում են քրիստոնյային ամուսնական կապով միանալ մահմեդականի հետ: Ես զգում էի, որ շատ վատ եմ, և չգիտեի, թե ի՞նչ երեսով պիտի հայտնվեմ հորեղբորս մոտ և ի՞նչ պիտի ասեմ նրան: Այսպես երբեմն տանջվում էի ես և հուսահատության մեջ պատրաստ էի ամեն ծայրահեղությունների դիմել: Բայց հենց որ նայում էի Սալբիհայի վրա, իմ բոլոր մթին մտածությունները իսկույն անհետանում էին, և բավականանում էի միայն նրան ունենալու զվարճությամբ:

Այսպես անցավ երեք տարի: Ես հայր եղա մի որդու և մի դըստեր: Զավակներիս ծնունդից հետո Սալբիհան երևում էր ինձ ավելի պաշտելի և ավելի կատարյալ: Ես ապրում էի, ես շնչում էի միայն նրանով: Հետևելով ամեն բանի մեջ չվանչիրցիների պարզ կենցաղավարության եղանակներին, մենք նրանց հետ գարունքին չվում էինք դեպի լեռների բարձրությունները, իսկ, երբ սկսվում էր ձմեռը, կրկին վերադառնում էինք դեպի մեր գետնափոր խըրճիթները:

Իմ երջանկությունը կատարյալ լինելու համար պակաս էր միայն ունենալ իմ Սալբիհային քրիստոնյա. դրանով ես կամենում էի հանգստացնել իմ խիղճը, որը սաստիկ բողոքում էր իմ ամուսնության դեմ: Այդ նպատակով ես աշխատում էի ծանոթացնել իմ կնոջը մեր կրոնի մաքերի և սուրբ ճշմարտությունների հետ: Սալբիհան մեծ հաճությամբ լսում էր բոլորը, ինչ որ պատմում էի նըրան: Նա շուտով սովորեց բավական հիմնավոր տեղեկություններ մեր կրոնի վարդապետությունների մասին: Տեսնելով նրան բոլո-

բովին պատրաստված՝ հայտնեցի նրան, որ ես քրիստոնյա եմ և Վարանդայի մելիքի եղբորորդին։ Պատմեցի իմ՝ չվանչիրցիների մոտ ուղարկվելու իսկական նպատակը և բոլոր անցքերը, ինչպես որ ճշմարտապես էին։ Նա զարմացած լսում էր իմ պատմությունը և զգում էր, թե որքան շատ նրա համար թանկ էի ես, և խորին հրճվանքով հավատացնում էր ինձ, որ պատրաստ է լինել քրիստոնյա և ամեն տեղ հետևել ինձ, ուր որ ես գնալու լինեմ։

Ուրախացած այդ բարեբախտ նորությունով, ես միայն մտածում էի, թե արդյոք ինչպե՞ս պետք է ի կատար ածել իմ ցանկությունները, որոնք կայանում էին նրանում, որ Սալիհային մկրտել տամ և իմ հորեղբոր համաձայնությունը ստանամ, որ նա ընդունե մեր ամուսնությունը։

Հորեղբորս՝ ինձ համար նշանակած ժամանակամիջոցը արդեն անցել էր, և ես կարող էի վերադառնալ նրա մոտ, առանց որևէ դժվարության հանդիպելու։ Ես հայտնեցի Սալիհային իմ դիտավորությունը. նա համաձայնվեցավ, թեև չէր կարող առանց սարսափելու մտածել, որ ստիպված պիտի լինի առժամանակ անջատվել ինձանից։ Ես աշխատեցի հանգստացնել նրան, խոստանալով, որ բաժանվում եմ նրանից ոչ ավելի, քան քսան օրով։ Ես հանձնեցի Սալիհային և իմ զավակներին նրա մոր հոգատարությանը։ Մեր միմյանցից անջատվելու րոպեն խիստ սրտաշարժ էր։ Ես հայտնեցի նրանց, թե մի կարևոր պատճառ ստիպում է ինձ գնալ Խորասան, իբր թե մի ժառանգություն ստանալու համար, որը մնացել է իմ մեռած ազգականներից մեկի մահից հետո։ Բայց միայն Սալիհային կատարելապես հայտնի էր ճշմարտությունը։

Երբ ես վերադարձա հորեղբորս մոտ, ինձ տեսնելով, նա շատ ուրախացավ։ Ես մեծ բավականությամբ վայելում էի նրա հայրական սերը և փաղաքշանքը և օրըստօրե սպասում էի մի հարմար րոպեի, որ առիթ ունենամ նրա առջև բաց անելու իմ սիրտը։ Բայց այդ ժամանակ մենք պատերազմ ունեցանք Խամսայի մելիքների հետ, որը տևեց ավելի քան երկու ամիս։ Մենք կռվում էինք փոփոխական բախտով. երբեմն հաջողությունը մեր կողմն էր լինում, երբեմն՝ նրանց կողմը։ Վերջը հաշտության դաշն կապվեցավ։

Իմ հորեղբայրը վերադարձավ Չանախչի, ուրախությամբ գրկեց ինձ, գովաբանում էր իմ հմտությունները, իմ ճարպկությունը պատերազմական արհեստի մեջ։ Հենց այդ րոպեում ես պատրաստվում էի հայտնել նրան իմ բաղձանքը, բայց նա իմ

խոսքը կարեց, ասելով, թե իր մանկության հասակից նա ուխտ է դրել Թալիշի մելիքի հետ, նրա աղջիկը ինձ համար կնության առնելու, երբ ես քսանմեկ տարեկան կլինեմ, իսկ իր հարսնացուն՝ տասնև- վեց տարեկան: Եվ ավելացրեց, թե հիմա ժամանակը հասել է, և Թալիշի մելիքը, լսելով իր վերադարձը, ուղարկել է իր որդուն, որ հրավիրեն մեզ Ջեյվա, կատարելու համար արդեն վաղուց նշանա- դրված ամուսնական պայմանը:

Լսելով այդ խոսքերը՝ ես շվարած մնացի, իմ բոլոր հույսերը կորան: Իսկ հորեղբայրս խոսում էր այդ խնամության վրա խիստ մեծ փափագով: Դրանով նա հույս ուներ ամրացնել հաստատուն հիմքի վրա մի սերտ, բարեկամական կապ Խամսայի բոլոր մելիք- ների մեջ: Տեսնելով նրա ցանկությունները՝ այլևս չհամար- ձակվեցա հայտնել նրան, թե ես արդեն ամուսնացած եմ, որով- հետև գիտեի, որ նա իր քաղաքական նպատակների համար պատ- րաստ կլինի զոհել իմ թանկագին Սալիհային: Բայց ես չէի կարող համաձայնվել նրա առաջարկության հետ. այդ պարզ տեսնում ես դու: Ահա բոլոր պատճառները, որ ստիպեցին ինձ այնպես համա- ռությամբ մերժել նրա ցանկությունները և չհայտնել նրան իմ գաղտնիքը: Ինքդ դատիր, աստղագետ, արդյոք իմ վարմունքը իրա- վացի չէ՞ր»:

Այդ պատմության ժամանակ աստղագետը իր բոլոր լսածնե- րի պատճառով գտնվում էր զարմացած և հիացած դրության մեջ:

—Դուք բոլորովին իրավացի եք, հարգելի մելիք,—պատաս- խանեց նա,— երդվում եմ իմ մորուքով, հազար անգամ իրավացի եք: Եվ երբեք այդ գաղտնիքը չէի հասկանա, եթե դուք ինքներդ չբաց անեիք: Ի նկատի առնելով ձեր հորեղբոր դյուրաբորբոք բնա- վորությունը և գործի այժմյան դրությունը, իրավ է, որ չէ կարելի հայտնել նրան ձեր ամուսնության մասին Սալիհայի հետ:

—Ինձ առավելապես անհանգստացնում է այն,—պատաս- խանեց մելիքը,—որ ես մինչև այժմ չկարողացա տեղեկություն ստանալ իմ կնոջ և զավակների մասին և չկարողացա նաև իմ մասին տեղեկություն տալ նրանց, որովհետև վախենում էի հո- րեղբորիցս: Երևակայում եմ, թե որքան անհանգիստ կլինեն նը- րանք, ամբողջ երկու ամիս ոչ մի լուր չստանալով իմ մասին: Բայց ես նրանցից բաժանվելու ժամանակ խոստացա, որ ինքս կվերադառնամ քանի օրից հետո:

Աստղագետը պատասխանեց.

—Եթե Ալին և սուրբ մարգարեն հաջողություն կշնորհեն և ես շուտով կազատվեմ այդ վիրապից, ես ձեզ ապահովացնում եմ, մելիք, որ դուք վստահությամբ կարող եք հանձնել ինձ՝ ձեր մասին որևէ տեղեկություն տանել ձեր կնոջը և զավակներին։ Ես կաշխատեմ ապացուցանել ձեր առջև իմ հավատարմությունը, որ դուք մտածեք, թե տառապյալ Հասանն էլ մի որևէ բանի պետք կգա։ Ես ձեզ այնքան սիրեցի, մելիք, որ պատրաստ եմ կրել երկու հարյուր հարվածներ իմ ոտների տակ, միայն թե տեսնեի ձեզ հանգիստ ու բախտավոր։

—Շնորհակալ եմ, Հասան,— պատասխանեց երիտասարդը,— ես կվարձատրեմ քո հավատարմությունը, երբ որ կվերադառնամ, և այն չափով, որ դու միշտ կհիշես։ Եթե ես գիտենայի, որ իմ կինը և զավակներս հանգիստ և առողջ են, այն ժամանակ ես համբերությամբ կտանեի այդ բանտի չարչարանքները, որովհետև կմտածեի, որ այդ բոլորը կրում եմ նրանց համար, որոնք այդ աշխարհում ամեն բանից ավելի թանկագին են ինձ համար։

Այդպես խոսելով, նրանք չնկատեցին, որ ամառային կարճատև գիշերը արդեն անցել էր, և արշալույսի առաջին ճառագայթները, ծագելով հրեղեն ժապավենի նման, ավետում էին նոր և պայծառ առավոտ։ Բայց նրանց ստորերկրյա վիրապի մեջ լույսի շառավիղները թափանցել չէին կարող։

## VII

## ԹԱՎՐԻԶԻ ՄԵԼԻՔԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ

Վարանդայի մելիքը գիշերը անցկացրեց խիստ անհանգիստ կերպով։ Նա չգիտեր ինչ անել։ Դառն մտածությունները, մինը մյուսից ավելի սարսափելի, փոփոխակի կերպով վրդովում էին նրա երևակայությունը։ Նա գիտեր, որ իր իշխանության ներքո գտնվող երկիրը այնքան մեծ ու զորավոր չէ, որ կարողանա ընդդիմադրել Խամսայի բոլոր մելիքների միացյալ ուժերին, որոնք վաղուց արդեն մի հարմար առիթ էին որոնում, որ զինվորվեն իր դեմ։ Նա ամենից ավելի հույս էր դրած Թավրիզի մելիքի դաշնակցության վրա, որը միացած լինելով իր հետ, կարող էր խաղաղ կերպով արգելել մյուս երեք մելիքների թշնամական գործողությունները։ Իսկ այժմ և այդ հույսը, թվում էր նրան, որ բոլո-

բուլին ոչնչացավ։ Նա վստահ էր, որ իր եղբորորդին կնպաստի իր քաղաքական դիտավորությունների կատարմանը, բայց նա էլ, ընդհակառակն, կատարելապես ընդդիմանում էր իրան։ Բայց ի՞նչ էր նշանակում այդ համառությունը, ի՞նչ էր նրա պատճառը։ Ջամշուդը դեռ չէր տեսած իր համար նշանակված հարսնացուին. ուրեմն օրիորդին անհավան լինելը չէր կարող առիթ տալ նրան, որ չհամաձայնվի պսակվելու նրա հետ։ Պետք է մի ուրիշ պատճառ լիներ։ Որքան ավելի մտածում էր նա, այնքան ավելի նրան անհայտ էր մնում մթին գաղտնիքը։ Հարկադրել Ջամշուդին անկարելի էր։ Մելիքը շատ լավ գիտեր իր եղբորորդու համառամիտ և անվեհեր բնավորությունը։ Նա գիտեր, որ Ջամշուդը ոչ մի վտանգից սոսկալու սովորություն չունի, և նրա ամուր կամքը միշտ կլինի անխորտակելի պատնեշ ամեն մի բռնադատական գործողությունների դեմ։ Մեղմ միջոցները չէին օգնում. դրանք արդեն փորձված էին։ Էլ ի՞նչ պետք էր անել. ի՞նչ միջոցների պետք էր ձեռնարկել։

Երկար դատողություններից հետո մելիքը վճռեց, որ այդ դեպքում անհրաժեշտ է հաշտեցնել երկու հակառակ ծայրահեղություններ. նախ, մերժել Թավրիզի մելիքի պահանջը այնպիսի վարպետությամբ, որ նա առիթ չունենա վիրավորվելու, և այդպիսով մնալ նրա հետ բարեկամական հարաբերությունների մեջ, իսկ հետո, ամեն միջոցներով աշխատել տեղեկանալու Ջամշուդի համառության գաղտնի պատճառը, որը պետք է շատ նշանավոր լինի, և հարկավ, կունենա մեծ ազդեցություն ապագա գործողությունների վրա։

Մելիքն այժմ ցավում էր, որ իր բարկության և ցասման մեջ վշտացրեց Ջամշուդին և աստղագետին։ Լինելով բավական սնահավատ, նա չէր վստահանում սկսել այդքան նշանավոր գործեր, առանց նախապես հարցումներ անելու աստղագետից։ Չէր կարող և վստահանալ, որ աստղագետը կասե նրան ճշմարիտը։ Ավելի հավանական էր համարում, որ աստղագետը, վիրավորված լինելով, դիտմամբ կաշխատեր օգուտ քաղել մելիքի դրությունից, և վնասակար ու կործանարար աստղերի ազդեցությունը ցույց կտա նրան որպես բարեհաջող, որպեսզի ոչնչացնե մելիքին և նրանից վրեժխնդիր լինի։ Այդ կասկածանքի պատճառով նա վճռեց այլևս չհրավիրել աստղագետին խորհուրդ հարցնելու համար, իսկ վաղ

սավառյան կանչել իր մոտ Թալիշի մելիքի որդուն, բարեկամաբար խորհուրդ անել նրա հետ և բացատրել Ջումշուդին նրա քրոջ հետ ամուսնացնելու անկարելիությունը։

Թալիշի մելիքի որդին արդեն տասն օր էր, որ գտնվում էր Ջանախչի ավանում և անհամբերությամբ սպասում էր մի վճռակա՛ն պատասխանի, որը օրըստօրե հետաձգելով, ուշացնում էին։ Նա մտածում էր, որ իր քրոջ հետ ամուսնանալու պատիվը պետք է ուրախությամբ լցներ Ջումշուդի սիրտը, բայց տեսնում էր դրա հակառակը։ Այն ծածկամտությունը, որով թաքցնում էին նրանից Ջումշուդի և իր հորեղբոր մեջ տեղի ունեցած խոսակցությունները, որոնք նրա կարծիքով բոլորովին ավելորդ էին, միանգամայն համբերությունից դուրս էր բերում նրան։ Նա արդեն վճռել էր գնալ մելիքի մոտ և բացարձակ կերպով հայտնել իր պահանջը, երբ նրան կանչեցին մելիքի մոտ։

—Ցավում եմ, սիրելի Հուսեին[46], որ ես պիտի հայտնեմ քեզ անախորժ նորություն... —ասաց նա։

—Ինձ թվում է,—պատասխանեց դյուրաբորբոք երիտասարդը, —որ ոչինչ բան այնքան անախորժ չէր կարող լինել, քան ինձ իզուր սպասել տալը, որով այդքան ժամանակ տանջեցիք ինձ։

—Ինչպե՞ս, մի՞թե դուք ձանձրանում եք իմ հյուրասիրությունից։

—Իհարկե, ձանձրանում եմ, որովհետև ես եկած եմ այստեղ գործի համար, որը վաղուց պետք է վերջացած լիներ։ Ես չէի կարծում, որ տասնեչորս տարի առաջ տված խոսքի կատարելու համար կրկին հարկավոր կլինեին այդքան խորհրդակցություններ, այդքան հետաձգումներ։

Մելիք-Շահնազարյանին չափազանց տհաճություն պատճառեց իր հյուրի վարմունքը, որը այդպես գոռոզաբար էր խոսում նրա հետ։ Բայց, որքան կարելի է, զսպելով իր բարկությունը, շարունակեց.

—Ես վաղուց ցանկություն ունեի և մեծ ուրախությամբ կփութայի ձեր հոր հետ տեսություն ունենալու. ես զգում եմ դեպի նա խորին հարգանք և բարեկամություն. նա միշտ գտնվել է ինձ հետ սերտ դաշնակցության մեջ։ Բայց ի՞նչ պետք է արած։ Ես աշխատում եմ համոզել իմ եղբորորդուն, բայց նրա համառությունը միակ պատճառն է գործի բոլոր հետաձգության...

—Ինչպե՞ս,—ընդմիջեց նրան մելիք Հուսեինը ավելի բորբոքվելով,—Ջամշուդը չէ՞ համաձայնվում պսակվել իմ քրոջ հետ։ Մի՞թե նա կարծում է, որ կարող է մեզ հետ անպատիժ կերպով այսպիսի կատակներ անել։ Եվ դուք, մելիք, լինելով այդ տան գլխավորը, լինելով նրա հորեղբայրը, թո՞ւյլ եք տալիս նրան այդպես վարվել։ Ես պարզ տեսնում եմ, որ դուք նրա հետ կամակից եք և գործում եք ընդհանուր համաձայնությամբ։ Էլ ինչո՞ւ էիք ինձ իզուր տեղը այսքան սպասել տալիս։ Կարելի էր շատ շուտով տալ այդ վճռական պատասխանը։ Ո՞վ կիմանար, որ Վարանդայի մելիքը կխաղա իր տված խոսքի հետ, ինչպես մի երեխա...

—Հանդարտվի՛ր, հանդարտվի՛ր, այ աղա,—ընդհատեց նրան մելիք Շահնազարյանը,—դու մոռանում ես քեզ...

—Ամենևին չեմ մոռանում,—պատասխանեց վրդոված երիտասարդը։—Բայց դուք զգո՞ւմ եք, մելիք, թե ի՞նչ կարծիք պետք է ունենալ մի մարդու վրա, որ տասնչորս տարի առաջ, Խամսայի բոլոր մելիքների ներկայությամբ տված խոսքը առանց որևէ պատճառի այժմ կամենում է ոչնչացնել։ Ի՞նչ անուն պետք է տալ մի այդպիսի մարդուն...

—Հուսեին, մտածի՛ր, որ դու քո տանը չես...

—Ես ամեն տեղ միևնույնն եմ. կխոսեմ ճշմարիտը ամեն տեղ և ամեն մարդու երեսին։ Դուք համարձակվում եք ծածկել նախատինքով իմ քրոջ և մեր ամբողջ տան անունը, իսկ ես պետք է լռե՞մ...

—Բայց, Հուսեին, մի՞թե այդ իմ մեղքն է...

—Մելիք, ես երեխա չեմ, ես լավ հասկանում եմ ձեր անտեղի պատճառաբանությունները։ Մի ծածկեցեք խնդիրը այդպիսի դատարկ հեքիաթներով, որոնց ես բնավ չեմ հավատում։ Մենք ունենք թրեր և խենջարներ, որոնք ձեր ունեցածներից ամենևին սուր չեն. մեր զարկը ձերից պակաս չէ։ Դուք շուտով կտեսնեք, որ Թալիշի մելիքը գիտե՞ արդյոք վրեժխնդիր լինել իր վիրավորանքի համար, թե՞ ոչ։ Ձեր Ջանախչին ապերից չէ կազմված...

—Հուսեին, պատիվ դնելով քո հորը, ես միայն ներում եմ քեզ քո գոռոզ խոսքերի համար։

—Ես կարոտություն չունեմ ձեր ներողամտության մեջ։ Ահա իմ պատասխանը,—նա ձեռքը դրեց խենջարի վրա։—Նրանով հա-

մարձակ կասեմ ամենի առջև, թե Մելիք-Շահնազարյանը խաբեբա է...

Մելիքի բարկությունը բորբոքվեցավ ինչպես կայծակ, աչքերը լցվեցան արյունով, և նա գոչեց.

—Լիրբ արա, դուրս իմ տնից, թե չէ, երդվում եմ բոլոր սրբերի անունով, որ ես ակնածություն չեմ անի հյուրասիրության սուրբ օրենքներին, որոնք պաշտպանում են քեզ իմ հարվածներից։ Դուրս, կրկնում եմ քեզ։ Ես արհամարհում եմ քեզ, արհամարհում եմ քո բոլոր ընտանիքը, քո զորքը և ամբողջ Թավրիզի ժողովուրդը։ Թող լինի անեծք, մահ և մշտական պատերազմ մեր մեջ, մինչև ես կըկործանեմ քո Չեյվան և կշաղախեմ արյունով ձեր բնակարանների մոխիրը։ Եթե ես չվախենայի պղծել իմ ձեռքերը, քեզ անպատճառ կտոր-կտոր կանեի և քո մարմինը կտայի գիշակեր թռչուններին ուտելու համար։ Տեր Աստված, ի՞նչ եմ տեսնում ես, մի համբակ համարձակվում է հայհոյել ինձ...

—Մի կատաղիր, մելիք,—ասաց Հուսեինը սառնասրտությամբ, դու իզուր քո արյունը կպղտորես...

Նա դուրս եկավ սենյակից, հեծավ իր ձին և իր խմբի հետ հեռացավ Չանախչիից։

Մելիքը մնաց որպես քարացած։ Սրամտությունից երկար չէր կարողանում արտասանել մի բառ անգամ։ Բարկությունը բոլորովին ափրել էր նրան։

## VIII

## ՇԱՏ ԽՈՍՏԱՑՈՂԸ

Մեր խեղճ կալանավորները, որոնք տանջվում էին վիրապի մեջ, ազատվեցան։ Դեռ կեսօր չէր եղած, նրանց կանչեցին մելիքի մոտ։

Նա սիրով ընդունեց նրանց, խնդրեց մոռանալ բոլոր անցածը և հայտնեց Ջումշուդին իր մշտական բարեկամությունը, ասելով.

—Ներիր ինձ, սիրելի Ջումշուդ, իմ բարկության համար։ Ես, արդարև, վիրավորեցի քեզ, բայց պետք է գիտենաս, որ դու ինքդ առիթ տվեցիր... Ինձ այժմ սաստիկ ցավ է պատճառում, մտածելով, որ կրկին պիտի սկսվի մեր երկրում ներքին պատերազմը, որը այժմ բոլորովին անխուսափելի է դարձել։ Նստիր, Ջումշուդ, այդ մասին ավելի մանրամասնաբար պիտի խոսեմ քեզ հետ

Ջամշուդը նստեց, ասելով.

—Ոչ թե ձեզ, այլ ինձ, հորեղբայր, պետք է ներողություն խնդրել, ես այնքան հանցավոր եմ ձեր առջև, որ չգիտեմ, թե ինչո՞վ կարող եմ քավել իմ հանցանքը։

—Մոռացության տանք այդ բոլորը, սիրելի Ջամշուդ,—ասաց մելիքը։—Ինձ ծանոթ է քո փորձառությունը և քո քաջությունը պատերազմական գործերում, այդ պատճառով ցանկանում եմ հայտնել քեզ իմ դիտավորությունները։ Ես մերժեցի Թալիշի մելիքի առաջարկությունը, դրանից հետո դու ազատ ես քո պարտավորությունից. այդ մասին կարող ես անհոգ լինել. ես այլևս չեմ ստիպելու քեզ ամուսնանալ նրա աղջկա հետ։ Ես այժմ դժոխքի նման ատում եմ նրանց բոլոր ընտանիքը։

—Ախ, որքան շնորհակալ եմ ձեզանից, հորեղբայր, որքան բախտավոր եմ ես և որքան ուրախ։ Դուք չափազանց ազարմած 'ք գեցի ինձ։

—Շնորհակալ մի լինիր ինձանից, Ջամշուդ։ Ես կռվեցա Թալիշցիների հետ, որովհետև քո նախկին հարսնացուի եղբայրը, այն լիրբ, անպիտան տղան, համարձակվեցավ իմ տան մեջ ինձ խրատներ տալ, համարձակվեցավ կոչել ինձ խաբեբա... Չեմ կարող առանց կատաղության մտաբերել այդ բոլորը։ Ես հայտնեցի նրան պատերազմ, և մենք պետք է դրա համար պատրաստվենք։ Ինձ շատ լավ հայտնի է, հենց որ Թալիշի մելիքը կհրատարակե իրան իմ թշնամի, այն ժամանակ Խամսայի բոլոր մնացած մելիքները անպատճառ կմիանան նրա հետ, և ես.. ստիպված կլինեմ պատերազմել չորս մելիքների դեմ։ Մենք ունենք բավական զորք, այդ ճշմարիտ է, և կասկած չունենք մեր զորքերի քաջության մեջ, այսուամենայնիվ, ուժերի գերազանցությունը դարձյալ նրանց կողմը կմնա՝ չորսը մեկի դեմ։ Մենք պետք է ավելի հիմնավոր կերպով մտածենք, թե ինչո՞վ կարող ենք առաջը առնել այն փոթորիկի, որը սպառնում է մեզ։ Ասա ինձ, Ջամշուդ, դու այնքան երկար գտնվում էիր ջվանշիրցիների մոտ, ծանոթ ես նրանց բարքուվարքին ու քաջությանը, ասա, դու ի՞նչ կարծիք ունես նրանց մասին։ Արդյոք նրանք նույնքան արի՞ են, նույնքան ճարպի՞կ են կռիվների մեջ և նույնքան անձնավստա՞հ են հարձակումների մեջ, որքան նրանց մասին խոսվում է։

—Ջվանշիրցի ասպետները ոչ առանց պատճառի հռչակված են իրանց արհեստով և քաջություններով։

—Երբ որ այդպես է, ուրեմն ես կհայտնեմ քեզ իմ նպատակը: Ես կամենում եմ խնդրել Փանահ խանից և նրա ջիվանշիրցիներից, որ ինձ օգնեն մեր մելիքների դեմ: Այդ անհրաժեշտ է: Դիտավորություն ունեմ քեզ հանձնել այդ պատգամավորությունը: Լավ ծանոթ լինելով բոլոր հանգամանքներին, որ վերաբերում են այդ լեռնաբնակների բարքուվարքին, դու ավելի հեշտ կարող ես կատարել այդ դեսպանախոսությունը:

—Մեծ ուրախությամբ կկատարեմ ձեր հրամանը, տերեղբայր,—պատասխանեց հիացած Ջումշուդը:—Չէ՞ կարելի, որ հենց այսօր թույլ տաք ինձ ճանապարհ ընկնելու: Որքան շուտ, այնքան լավ: Որովհետև մենք կփութացնենք գործը, դժվարության մեջ դնելով մեր թշնամիներին, և մինչև կանխենք նախապես հարձակում գործելու նրանց երկրների վրա:

—Քո դատողությունը շատ խելացի է, Ջումշուդ, բայց հարկավոր է գոնե մեկ օրով հետաձգել քո գնալը: Ես կամենում եմ, որ դու ներկայանաս Փանահ խանին այն փառքով, որ պատշաճ է Վարանդայի իշխանին: Ես կտամ քեզ մեծաքանակ սվիտա և կհանձնեմ տանելու Թանկագին ընծաներ: Փանահ խանը երկար տարիներ ապրել է պարսիկների մեջ, որոնց մոտ առանց փեշքեշի[57] չէ կատարվում ոչ մի գործ, և նա ինքը, անտարակույս, կսիրի փեշքեշներ:

Հետո նա դարձավ դեպի աստղագետը, ասելով.

—Իսկ դու, իմ Թանկագին աստղագետ, նույնպես մտածիր մեր անցյալ տարաձայնությունը և ուղիղ կերպով որոշիր, թե էգուց ո՞ր ժամին ավելի հարմար կլինի իմ դեսպանությունը ճանապարհ դնելու: Միայն խնդրում եմ, մի խառնափնթորիր քո նախագուշակությունները, ինչպես երեկ արեցիր, գործը դատարկ բանի չէ վերաբերում:

—Ամենամեծ ուրախությամբ, մելիք,—պատասխանեց աստղագետը,—միայն թույլ տվեցեք խնդրել ձեզ, որ ինձ էլ ուղարկեք Ջումշուդի հետ:

—Ինչո՞ւ համար:

—Նրա համար, որ ձեր դեսպանությունը կարողանա իր բոլոր քայլերը, իր ամեն մի վարմունքը անօրինել ըստ ժամանակի[58], համեմատ բարեհաջող աստղերի ազդեցության: Ես կլինեմ ձեր դեսպանության ուղեցույցը, և դուք կարող եք հույս դնել կատարյալ հաջողության վրա:

—Համաձայն եմ,—պատասխանեց մելիքը,—ավելի լավ է, որ ես առժամանակ զրկված լինեմ մի այնպիսի խիստ ու մարդու ներկայությունից, որպիսին դու ես, որը կարող է ինձ համար որոշել ժամանակները, թե երբ պետք է չիբուխ ծխել, երբ պետք է գնալ որսորդության և այլն։ Կարծեմ, դրանից ավելի մի այլ կարևոր պարապմունք չի պիտի ունենամ մինչև ձեր վերադառնալը։ Որովհետև Թալիշի մելիքը միայնակ չի համարձակվի արշավանք գործել իմ երկրի վրա, իսկ մինչև մյուս մելիքներին իր հետ միացնելը, դուք Աստուծո հաջողությամբ վերադարձած կլինեք, և ես քաջ ջվանշիրցիների աջակցությամբ երկյուղ չեմ ունենա մեր ուժերի անհավասարության մասին։ Մնաք բարյավ, իմ սիրելիներ, գնացեք հանգստացեք, երեկվա անախորժություններից հետո ձեզ պետք է հանգստանալ և պատրաստվել ճանապարհի համար։ Ընծաների և ձեր սվիտայի համար ես ինքս հոգ կտանեմ։

Ջումշուդը հրավիրեց աստղագետին իր սենյակը, այն պատրվակով, իբր թե կամենում է նրանից լսել մի քանի նախագուշակություններ։ Երբ նրանք առանձնացան, Ջումշուդը սկսեց գժի նման վազվզել սենյակում, բացականչելով.

—Ի՜նչ բախտ է, ի՜նչ բախտ է, ես այժմ ազատված եմ այն բարբարոսական ամուսնությունից, որը ինձ այնքան տանջում էր։ Ես հաշտվեցա հորեղբորս հետ, ես կրկին կտեսնեմ իմ սիրելի, գեղեցիկ Սալիհային և կգրկեմ իմ երեխաներին։ Ա՜խ, որքա՜ն բախտավոր եմ ես, որքան ցանկանում եմ, որ շուտով անցկենար այդ օրը, որը անտանելի է ինձ իր երկարությամբ...

Այստեղ ընդհատեց նա իր խոսքը, և դառնալով աստղագետին, որն այդ միջոցին ինչ—որ գրում էր, ասաց.

—Դեն գցիր, խնդրեմ, քո այդ կախարդական համարումները և ուրախացիր ինձ հետ...

—Ես մեծ բավականությամբ ուրախակից եմ լինում ձեզ,—պատասխանեց աստղագետը գլուխը վեր բարձրացնելով,—և հենց այդ բանում ձեր ուրախությունը բազմապատկելու համար էի կատարում իմ համարումները։

Ես այդ բաներին շատ չեմ հավատում, դու հաշվում ես աստղերի ընթացքը, բայց հիմա ցերեկ է, նրանց տեսնել անկարելի է։

—Հարկավոր չէ անպատճառ տեսնել նրանց։ Ինձ հայտնի են նրանց շրջանները, նրանց պտտվելու ժամանակները, թե իրանց առանցքի շուրջը և թե երկրագնդի շուրջը...

—Լսիր, դու խոստացար լինել իմ հավատարիմ ծառան, իսկ այժմ քո կեղծ ու պատիր պատմություններով աշխատում ես խաբել ինձ, ինչպես խաբում ես ուրիշներին։ Խոստովանիր, որ քո բոլոր աստղաբաշխական գիտությունը կատարյալ սուտ է։

—Դե, մելիք...

—Պահիր քո քարոզները նրանց համար, որոնք հավատում են քեզ։ Ես չեմ մեղադրում քեզ քո խորամանկությունների համար. պետք է մի բանով հաց ճարել, և իհարկե, ավելի լավ է աստղագետ լինել, քան թե մուրացկանություն անել։ Ճակատագիրը ամենքին հարստություն չէ տալիս։ Դու ինչո՞վ ես մեղավոր, որ քեզ չվիճակվեցավ խան լինել։ Այն ժամանակ դու էլ քո կողմից կհավատայիր և կվարձատրեիր մի որևիցե աստղագետի նրա նախագուշակությունների համար։

—Ինչպե՞ս, մելիք, մի՞թե դուք այդպիսի կարծիք ունեք իմ մասին...

—Ոչ միայն կարծիք, այլ համոզված եմ, որ այդպես է։

—Ուրեմն ես չունե՞մ ձեր աչքում ոչ մի արժանավորություն։

—Ընդհակառակն, դու ունես հավատարիմ ծառայի արժանավորություններ, եթե միայն ցանկանալու լինես։ Եվ հավատա ինձ, որ այդ ծառայությունը քեզ համար ավելի օգտաբեր և շահավետ կլինի, քան թե քո բոլոր աստղաբաշխական գիտությունը։ Ես կամենում եմ հանձնել քեզ մի կարևոր գործ, լսիր։ Մենք էգուց պիտի ճանապարհ ընկնենք դեպի ջվանշիրցիների օբաները. Երբ կմոտենանք Փանահ խանի բնակարանին, դու պետք է աննկատելի կերպով բաժանվես իմ սվիտայից և գնաս իմ սիրելի Սալիհայի օբան։ Այնտեղ զգուշությամբ նրա մասին տեղեկություններ պետք է հավաքես, հետո պիտի աշխատես տեսնվել իմ կնոջ հետ այնպես, որ ոչ ոք նրա ազգականներից չնկատե։ Հետո նույնպես զգուշությամբ կվերադառնաս ինձ մոտ և քո բոլոր տեղեկությունները կհաղորդես ինձ։ Եթե այդ բոլորը խոհեմությամբ կկատարես, այն ժամանակ ես կարող եմ նախագուշակել քեզ համար ավելի ճշգրտությամբ, քան բոլոր աստղագետները, որ շատ թումաններ[48] իմ քսակից կթռչեն և կմտնեն քո գրպանը։ Տես, պետք է զգույշ լինես և դրանից հետո այդ գործի մասին մի բառ անգամ չի պիտի հանես բերանիցդ։ Որքան ուզում ես, քո աստղերով խաբիր իմ հորեղբորը և իմ բոլոր սվիտային. այդ քո գործն է. միայն

*պետք է գիտենաս, որ ես չեմ հավատում քո համաստեղություններին։*

*—Ես պատրաստ եմ իմ ծառայությունը մատուցանել ձեզ, մելիք, և ինքներդ կտեսնեք, թե որքան ես կարող եմ տեղեկություններ հաղորդել մի գործի մասին, որ ծածուկ էր չհասկանա։ Պետք է խոստովանվել, մելիք, որ դուք առաջին խելացի մարդն եք, որ պատահել է ինձ տեսնել այս աշխարհում։ Խոսքը թող մեր մեջ մնա, մինչև հիմարություն չէ՞ հավատալ, թե աստղերը ազդեցություն ունեն մարդկային գործողությունների կամ վիճակի վրա։ Այստեղ դեռ ոչինչ։ Նայեցեք, Պարսկաստանում մի քայլ անգամ չեն անում առանց աստղագետի հետ խորհուրդ անելու. եթե ձախ ոտքով անցար շեմքի վրայից՝ դժբախտության կհանդիպես[49], եթե փռշտացիր՝ վատ է, [50]եթե աղը թափեցիր՝ կատարյալ դժբախտության նշան է։ Իսկ մեր եվրոպացի աստղագետները, քաղցածությունից ստիպված, վայրիվերո կերպով սովորում են աստղերի դրությունը, անգիր սերտում են նրանց անունները և հետո սկսում են ողորմելի ռամիկների մոտ լուրջ կերպով ցնորաբանություններ անել, խոսել համաստեղությունների մասին և բացատրել նրանց դիրքը, կացությունը, և միայն Աստված գիտե, թե ուրիշ ինչ հիմարություններ են խոսում։ Մահմեդական իշխանները վախենում են մի քայլ անգամ տնից դուրս գնալ առանց խորհրդակցելու աստղագետի հետ[51]։ Եթե նա պատահմամբ մի բան նախագուշակում է, որքան գովասանքներ, փառք և փող է ստանում։ Իսկ եթե նախագուշակությունը սխալ է հայտնվում, գործը միշտ մնում է իրավացի. ասելով, թե հետաձգեցին գործը, այն ոտքը առաջ չդրեցին, որ պետք էր, այնպես պետք չէր նայել, երևի մի չար մարդ աչքով տվեց, և հազարավոր այսպիսի հիմար պատճառներ կբերեն, որ անկարելի է մի առ մի հիշել։ Եվ ինչո՞ւ եք զարմանում, մելիք, որ մեզ մոտ աստղագետների թիվը օրըստօրե բազմանում է. դա խիստ շահավետ մի պարապմունք է...*

*—Հավատում եմ,—պատասխանեց Ջումշուդը,—բայց մի բանը ասում է ինձ, որ մենք անցյալ գիշերը չքնեցինք, երբ գտնվում էինք ստորերկրյա վիրապի մեջ, իսկ էգուց պետք է ճանապարհ գնանք, ուրեմն հիմա պետք է հանգստանալ։ Ցտեսություն, աստղագետ։*

*Նրանք պառկեցին գորգերի վրա և շուտով քնեցին խորը քնով։*

IX

# ՓԱՆԱՀ ԽԱՆԻ ՄՈՏ ՀԱՍՆԵԼԸ

Մյուս օրը, կեսօրվա պահին, զինվորախումբը ճանապարհ ընկավ։ Ջամշուդը հագած ուներ մի տեսակ զգեստ, թուրքաց ձևով, որ հարուստ կերպով զարդարված էր ոսկեհուռ ժապավեններով։ Նա նստած էր սև նժույգի վրա, որը իր վայելչագեղ կազմվածքով և փոքրիկ գլխով ցույց էր տալիս իր արաբական ծագումը։ Երբ հարյուր տղամարդիկ, զինված ոտքից գլուխ, բաղկացնում էին նրա ավխտան։ Իրանց հարգանքը ցույց տալու համար այդ ձիավորները գնում էին նրա ետևից և առջևից, բավական հեռավոր տարածության վրա։

Ճանապարհին գնալու ժամանակ, իրանց ընթացքը աստղերի բարեհաջող ընթացքի հետ հարմարեցնելու պատրվակով, Ջամշուդը հրամայեց աստղագետին, որ ձին իր ձիու հետ հավասար կերպով քշե, որպեսզի կարողանա նրա հետ խորհուրդներ անել։ Բայց փոխանակ աստղերի վրա խոսելու, ճանապարհի ձանձրույթը ցրվելու համար, հազիվ լսելի ձայնով, խոսում էր նրա հետ իր Սալիհայի մասին, տալիս էր զանազան պատվերներ, թե ինչպես պետք էր նրա հետ տեսնվել, ինչպես առանձնանալ, որովհետև մի ուրիշի ներկայությամբ Սալիհայի հետ խոսելը կարող էր հակառակ հետևանքների հասցնել, և նրա չափազանց պարզամտությունը կարող էր երևան հանել իրանց գաղտնիքը։

Երբ մոտեցան ջվանշիրցիների օրաններին, ճանապարհի վրա կանգ առին։ Այդ միջոցին աստղագետը, Ջամշուդի ցանկության համեմատ, նստեց մարգագետնի վրա և սկսեց նախագուշակություններ անել, թե երբ կհասնի բարեհաջող րոպեն օրանները մտնելու համար։ Ջամշուդի ամբողջ խումբը նույնպես ձիերից իջնելով, զարմացած նայում էր աստղագետի պարապմունքների վրա։ Նրանց նայացքները արտահայտում էին հույս և երկյուղ։ Լավ ճանաչելով իրան շրջապատող անձինքների հասկացողությունը, աստղագետը դիտմամբ ցույց էր տալիս երևակայական դժվարություններ, որոնք իբր թե ներկայանում էին նրան աստղերի ընթացքը հետազոտելու ժամանակ։ Բոլորը զարմանում էին նրա իմաստության վրա, բացի Ջամշուդից, որը ժպտալով լսում էր նրա իմաստակությունները։ Վերջապես աստղագետը ուրախությամբ բացականչեց.

—Երեկոյան ժամուն, երբ արեգակը խոնարհված կլինի դեպի իր մուտքը, դուք ևս կարող եք մուտք գործել Փանահ խանի օրայի մեջ և կարող եք իսկույն գնալ նրա մոտ։ Նա կընդունե ձեզ սիրով, և դուք հաջողություն կգտնեք ձեր նպատակների մեջ։ Իսկ ինձ այժմ անհրաժեշտ է բաժանվել ձեզանից և առժամանակ թաքնվել մի ուրիշ օբայի մեջ։ Հետո կվերադառնամ և կհաղորդեմ միայն մելիք Ջումշուդին այն գաղտնիքը, որն աստղերի շնորհիվ պիտի երևան հանեմ։ Պատվիրում եմ, թե իմ գնալը և թե վերադարձը պետք է, որպես մի գաղտնիք, նույնպես ծածկված մնա Փանահ խանից կամ նրա մարդիկներից։ Ոչ ոք պետք չէ, որ գիտենա, թե ես պատկանում եմ ձեր խմբին, մինչև ես ինքս հայտնելու չլինեմ այդ։ Եթե դուք իմ այս պատվերները ճշտությամբ չեք կատարի, այն ժամանակ ոչինչ հաջողություն ունենալ չեք կարող։

—Մենք խոստանում ենք ճշտությամբ կատարել քո պատվերները, ով իմաստուն աստղագետ,—պատասխանեց Ջումշուդը, մի առանձին պատկառանքով նշանակություն տալով նրա խոսքերին։

Հետո իր խմբին հրամայեց նա ձիաների թամբերը վեր առնել, հանգստանալ, սպասելով աստղագետի նշանակած ժամանակին։ Իսկ ինքը այս վերջինի հետ հեռացավ ծառերի ստվերի ներքո և, գրելով մի քանի խոսքեր, տվեց նրան Սալիհային հանձնելու համար։ Աստղագետը «մնաք բարյավ» ասելով, հեռացավ։

Երեկոյան պահուն Վարանդայի մելիքի դեսպանությունը մտավ Փանահ խանի օբան։ Ջվանշիրցիների այդ նոր տանուտերը թեև բնակվում էր նույնպիսի տաղավարի մեջ, որպես մյուսներն ունեին, բայց դա կազմված էր թաղիքներով, իսկ ներսից զարդարված էր պարսկական գորգերով։ Տաղավարը բաժանված էր մի քանի մասերի, որոնցից կանանց բնակության համար որոշված մասը այն աստիճան ամուր կերպով ծեփած էր կավով և սպիտակացրած դրսից, որ դարձել էր ինչպես մի քարեղեն շինվածք։ Մի քանի ներքինիներ պահապան էին կարգված այդ արգելյալ բնակարանի վրա, որի մուտքը բաց էր միայն Փանահ խանի համար։ Հակառակ ջվանշիրցիների կենցաղավարության պարզ սովորություններին, Փանահ խանի կնիկները կրում էին չադրա, երբ դուրս էին գալիս ներքինիների առաջնորդությամբ, և պարսից սովորության համեմատ, ծածկում էին իրանց երեսները թանձր, ցանցավոր քողերով։

Փանահ խանը ընդունեց Վարանդայի իշխանի դեսպանությունը մի առանձին ուրախությամբ, որը ծածկել չկարողացավ։ Նա պարզ կերպով նախատեսում էր, որ իր մասնակցությունը այն պատերազմի մեջ, որը Մելիք-Շահնազարյանը պիտի վարեր Խամսայի մելիքների դեմ, իրան միջոց կտար ավելի ևս բարձրանալու, հենց նույնիսկ մելիքների հաշվով։ Նա խոստացավ հինգ օրից հետո պատրաստ լինել իր օգնությունը մատուցանելու համար և հրամայեց տեղավորել Ջումշուդին և նրա ուղիտային առանձին տաղավարներում, իր բնակարանի մոտ։ Նա խիստ փաղաքշանքով էր վարվում դեսպանի հետ և աշխատում էր ամեն կերպով նրան բավականություն տալ։

Դեսպանությունը Փանահ խանի մոտ ժամանելու մյուս օրը Ջումշուդին իմաց տվին, թե աստղագետը սպասում է նրան մերձակա անտառում, մի կարևոր տեղեկություն հաղորդելու համար։ Ջումշուդը իսկույն վազեց նրա մոտ և, տեսնելով աստղագետի մթին դեմքը, մնաց ապշած։

—Ասա, ի՞նչ տեղեկություն ունես,—գոչեց նա,—կարելի է դու մահվան բոթաբե՞ր ես։

—Հանգստացեք, մելիք,— պատասխանեց աստղագետը,— պատրաստվեցեք լսել մի անախորժ նորություն....

—Խոսիր, մի ծածկիր,—կրկնեց երիտասարդը անհամբերությամբ,—ի՞նչ է պատահել, իմ Սալիհան մեռա՞ծ է...

—Ոչ, նա կենդանի է, բայց գտնվում է ուրիշի տիրապետության ներքո...

—Ո՞ւմ... ո՞վ է այդ բարբարոսը... ես իմ խենջարը կցցեմ նրա կուրծքի մեջ, թե նա գետնի տակում ես թաքնված լինի։ Ասա, ո՞վ է, ինչո՞ւ ես լռել...

—Նա գտնվում է Փանահ խանի հարեմի մեջ...

—Փանահ խանի հարեմի մեջ...—կրկնեց երիտասարդը և կայծակնահարի նման մնաց շփոթված։ Երկար չկարողացավ նա հուշի գալ, վերջը թույլ ձայնով բացականչեց.

—Ես կորած եմ...—այդ խոսքերի հետ օրորվեցավ, ընկավ խոտերի վրա։ Աստղագետը հոգատար կերպով բռնեց նրա ձեռքից, ասելով.

—Մելիք, մի տխրեք, կա հնար ձեր դժբախտությանը օգնելու...

—Ի՞նչ հնար։ Մի՞թե դու չգիտես, որ եթե ես կռիվ սկսեմ Փանահ խանի հետ, դրանով պիտի զրկեմ իմ հորեղբորը այն օգնությունից, որ ստանում է նրանից։ Այն ժամանակ մեր թշնամիները իրանց ախտակալությամբ կհագեցնեն մեր արյունով և Ջանախչին մոխիր կդարձնեն։ Իսկ մնալով Փանահ խանի հետ բարեկամական հարաբերությունների մեջ, ես հարկադրված կլինեմ հավիտյան զրկվել Սալիհայից։ Ախ, այդ սարսափելի է... Բայց որտե՞ղ են իմ զավակները...

—Նրանք մնացել են Սալիհայի մոր խնամատարության ներքո։

—Պատմիր այդ սոսկալի դեպքի բոլոր մանրամասները,—գոչեց Ջամշուդը զայրացած կերպով,—ես պատրաստ եմ ամեն ինչ անել, միայն թե իմ Սալիհան ազատված լինի։

—Ձեր հեռանալուց անմիջապես հետո, որպես պատմեց ինձ Սալիհայի մայրը, Փանահ խանը մտածեց անձամբ շրջել բոլոր օբաները և տեսնել իր նոր հպատակներին, որոնք առաջ նրա հավասար մարդիկ էին։ Մեկը նրա մերձավորներից պատահմամբ տեսավ ձեր կնոջը և, հիացած նրա գեղեցկությամբ, պատմեց Փանահ խանին Սալիհայի անհամեմատ չքնաղության մասին։ Փանահ խանը տեղեկանալով, որ նա մի խորամանկ կին է եղել, որի ամուսինը հեռացել է դեպի իր հայրենիքը, իրան իրավունք համարեց անտեր մնացած կնոջը ձեռք բերել այնպիսի խորամանկությամբ, որ ոչ ոք նրա դրացիներից չկարողացավ գիտենալ, թե որտեղ անհետացավ այդ կինը։ Միայն Սալիհայի մայրը և եղբայրները գիտեն, թե որտեղ է գտնվում նա, որովհետև ինքը՝ Փանահ խանը հայտնել է նրանց, խնդրելով, խոստանալով իր հովանավորությունը և հարուստ ընծաներ[52]։ Այժմ բարբարոսի ապականությունը այն աստիճան տիրել է ջվանշիրցիներին, որ նրանք ուրախությամբ ընդունել են խանի խոստումները։ Այն էլ պետք է ասած, որ Սալիհայի թե մայրը և թե եղբայրները հույս չեն ունեցել, որ մյուս անգամ կտեսնեին ձեզ։ Հիմա ձեր խեղճ կինը, հենց ձեր հյուր եղած տան մեջ, տանջվում է տխրությունից, անջատված լինելով իր ամուսնից և զավակներից։ Նա անդադար արտասուք է թափում, և այդ արտասուքը դառնացնում է Փանահ խանի սիրտը, որովհետև սիրում է նրան՝ ավելի քան իր բոլոր կիներից։ Եվ խեղճ կինը այն աստիճան հոգեպես տանջվեցավ և մաշվեցավ, որ

այժմ բոլորովին հիվանդ է, և Փանահ խանը հիմա գտնվում է սաստիկ հուսահատության մեջ...

—Իմ կինը մեռնում է, տեր Աստված, տեր Աստված, գնանք, տղայակս, մի ուշացիր, կամ կգտանենք նրան, կամ կկորչենք... Ես արդեն վճռեցի... ես մոռանում եմ բոլորը...

Այդ խոսքերով սաստիկ զգացված երիտասարդը քարշ էր տալիս տղայակին իր ետևից.

—Սպասեցեք, մելիք, սպասեցեք, մենք կկորչենք իզուր տեղը, առանց կարողանալու օգնել ձեր ամուսնին։ Կա մի ուրիշ հնար...

—Ի՞նչ հնար, ասա, սիրելիդ իմ տղայակս, դու հավիտյան կպարտավորես ինձ։ Բայց արդյոք չե՞ս խաբում ինձ...

—Ամենևին։ Փանահ խանը գտնվում է հուսահատության մեջ, նրա համար, որ ոչ ոք չէ կարողանում առողջացնել նրա սիրելի Սալիհային։ Ես կձևացնեմ ինձ բժիշկ։ Խորամանկության մեջ ես վարպետ եմ. դուք, կարծեմ, ինձ ճանաչում եք։ Ես նրան կհամոզեմ, որ Սալիհային առողջացնելու համար անպատճառ հարկավոր է, որ ես հիվանդի հետ տեսնվեմ, որ կարողանամ որոշել նրա բախտավոր և անբախտ աստղերը, որ կարողանամ հետազոտել հիվանդության էական որպիսությունը, և նրա համեմատ կարգադրեմ բժշկելու հնարները։ Փանահ խանը կհավատա ինձ. նա երկար ժամանակ ապրել է Պարսկաստանում, և երևի, սովորած է պարսիկների սնահավատությանը։ Իմ կերպարանքը հրապուրիչ չէ, այդ պատճառով էլ վտանգավոր չէ կարող լինել նրա հարեմի համար։ Ինձ թույլ կտան մտնել ձեր կնոջ մոտ, և այսպիսով միջոց կգտնեմ նրան տեղեկություն տալու, որ դուք գտնվում եք այստեղ, իսկ հետո կաշխատեմ նրան ազատել հարեմից և տանել Ջանախչի։ Իսկ դուք, այսուամենայնիվ, շարունակեցեք ձեր դեսպանախոսությունները Փանահ խանի հետ, վարվեցեք նրա հետ ամենայն հաշտությամբ և ցույց մի տվեք ամենափոքր նշան անգամ, թե դուք ճանաչում եք ինձ։ Ես ինձ պատասխանատու եմ համարում գործի հաջողության վերաբերությամբ։ Հիմա բաժանվենք, ձեր երկար բացակայությունը կարող է նկատելի լինել...

—Մնաք բարյավ, իմ սիրելի տղայակս, դու հավատացած եղիր, որ Շահնազարյան Մելիք-Ջումշուդը կգիտենա, թե որպես պետք է շնորհակալ լինել քեզանից։

Նրանք բաժանվեցան։

X

## ԱՍՏՂԱԳԵՏԸ ՆԵՐԿԱՅԱՆՈՒՄ Է ՓԱՆԱՀ ԽԱՆԻՆ

*Իր փառավոր տաղավարի մեջ նստած էր Փանահ խանը և, խորին մտախոհության մեջ ընկղմված, ծխում էր ղելյանը։ Նրա անհանգիստ դեմքի վրա նշմարվում էր սրտի բազմատեսակ կրքերի կռիվը. երբեմն արտահայտում էր բավականություն, երբ մտաբերում էր Վարանդայի իշխանի բարեկամական հրավերը և նրա ձեռքով իր բարձրանալու ապագա հույսերը. իսկ երբեմն տխրություն, երբ մտաբերում էր իր սիրած կնոջ ծանր հիվանդությունը։*

*Այդ միջոցին նրա ծառաներից մեկը ներս մտավ, հայտնեց, թե մի ինչ-որ օտարական, որ կոչում է իրան աստղաբաշխ և Ղազվինի[53] գիտնական-բժիշկ, ցանկանում է ներկայանալ։ Փանահ խանը գլխի շարժումով նշան տվեց ներս թողնելու նրան։*

*—Ալլահը և սուրբ մարգարեն թող օրհնեն քաջ ջվանշիրցիների մեծափառ հրամանատարին, և թող լինեն նրա օրերը պայծառ, ինչպես արեգակի ճառագայթները, և բազմաթիվ, ինչպես երկնքի աստղերը,— ասաց ղազվինցի բժիշկը, գլուխ տալով, որի միջոցին մի ձեռքը դրեց կուրծքի վրա, իսկ մյուսը նախ տարավ դեպի ճակատը, հետո խոնարհեցնելով, կպցրեց գետնին։*

*Փանահ խանը բավական նայեց նրա վրա և լռությամբ երկար զննում էր նրա օտարոտի կերպարանքը, վերջը հարցրեց.*

*—Ի՞նչ ես ուզում դու ինձանից։*

*—Սուրբ Հուսեինը թող տարածե ձեզ վրա իր օրհնությունը։ Ես լսեցի ձեր ամենաթանկագին ամուսնի հիվանդությունը և եկա առաջարկելու ձեզ իմ ծառայությունները։*

*—Մի՞թե դու հույս ունես ավելի բախտավոր լինել, քան թե քո մյուս արհեստակիցները, որոնք իզուր գործ դրին իրանց բոլոր հմտությունները։*

*Կարելի է նրանք հասկացողություն չունեին աստղերի շըրջանների և նրանց ունեցած ազդեցության մասին մարդու վիճակի վրա...*

*—Իսկ դու հասկացողություն ունե՞ս։*

*—Քանի սուրբ իմամների[54] ինձ շնորհած կարողությամբը ես ուսումնասիրել եմ բնության գրքի ամենաբարձր խորհուրդները։*

Իմ վարդապետը եղել է հռչակավոր Շեյխ Աբդուլ Ֆաթիհ Ալին, որին մարգարեի մատը պետք է համարել ամբողջ երկրի վրա։

—Լավ, դու կարող ես փորձել քո արհեստը և կարող ես հույս ունենալ, որ կստանաս նշանավոր ընծաներ, եթե հաջողություն ցույց կտաս։ Ես կհրամայեմ իմ կնիկների վերատեսչուհուն, և նա կպատմի քեզ Սալիհայի հիվանդության բոլոր մանրամասնությունները։ Նրա պատմությունից դու կարող ես անել քո եզրակացությունները հիվանդության որպիսության մասին, այնուհետև, հարմարվելով աստղերի ցուցմունքների հետ, դու կնշանակես բժշկելու եղանակները, թեև ես շատ հույս չունեմ...

—Բարի, բարի[55], ինքը իմաստությունն է խոսում ձեր շըրթունքներով։ Բայց ներեցեք ձեր դռան շեմքի ստրուկին իր խոնարհ կարծիքը հայտնել, որ տարաշխյա բժշկությունը երբեք չէր կարող իր նպատակին հասնել։ Առանց ճիշտ կերպով որոշելու, թե ինչ տաղ է առաջնորդել ձեր մեծապայծառ կնոջ ծննդյանը (որի գեղեցկությունը թող գերազանցի լուսնից), չէ կարելի և որոշել բժըշկելու եղանակները...

—Այսինքն ի՞նչ ես պահանջում դու,—հարցրեց Փանահ խանը սուր կերպով նայելով աստղագետի երեսին։

—Միայն թույլտվություն տեսնվելու հիվանդի հետ և կես ժամի չափով առանձին խոսելու նրա հետ, առանց վկաների ներկայության, այնուհետև ես վստահ կլինեմ իմ բժշկության կատարյալ հաջողության մեջ։

—Խոսել նրա հետ... կես ժամ... այն էլ առանց վկաների...— կրկնեց խանը, կասկածավոր կերպով նայելով աստղագետի վրա։

Բայց լավ հետազոտելով նրա այլանդակ կերպարանքը և այն անփույթ ձևը, որով պահում էր իրան աստղագետը, խանը պատասխանեց.

—Լավ, համաձայն եմ։ Ե՞րբ ես ցանկանում տեսնել իմ կնոջը։

—Հենց այս րոպեիս, եթե կբարեհաճի ջվանշիրցիների մեծ հրամանատարը։

—Հետևիր ինձ,—ասաց խանը, կանգնելով նստած տեղից։ Աստղագետին շատ հաճելի չէր տեսնել, որ ջվանշիրցիների գլխավորը ինքը անձամբ պիտի ներկա գտնվի Սալիհային բժշկելու ժամանակ, և դրանով կարող են խանգարվել իր բոլոր դիտավորությունները։ Նա առավելապես վախենում էր միամիտ Սալիհայի

պարզամտությունից, որի մի անզգույշ խոսքը կարող էր դավաճա-նել իրան և վտանգի ենթարկել: Բայց ուրիշ հնար չկար: Նա ճնշ-ված սրտով գնաց Փանահ խանի ետևից, օգնություն կանչելով իր բոլոր հմտությունը խաբեբայության արհեստում և հույս դնե-լով իր խորամանկությունների վրա, որոնց մեջ խիստ լավ վարժ-ված էր:

Երբ որ նրանք մտան հարեմը, զարմացած կնիկները, տեսնե-լով իրանց հրամանատարի հետ մի օտար մարդ, սաստիկ ճիչ բարձրացրին և, փախչելով, ծածկվեցին իրանց սենյակների մեջ: Սալիհան պառկած էր անկողնի մեջ, որը պատրաստված էր թախ-տի վրա և շուրջանակի պատած էր պարսկական զարդերով: Նրա շքնաղ դեմքը գունաթափված էր, գեղեցիկ աչքերը խորն էին ըն-կած, և բոլոր գծերի մեջ նկարված էին հոգեկան սաստիկ տանջան-քի նշմարները:

—Ջանիկ[56],—ասաց Փանահ խանը, մոտենալով նրա անկող-նին,—ես բերեցի քեզ համար մի նոր և շատ հմուտ հաքիմ[57], որը միևնույն ժամանակ լավ աստղաբաշխ է. ես հավատացած եմ, որ դա կբժշկե քեզ: Խոսիր նրա հետ:

Սալիհան իր տխուր հայացքը դարձրեց դեպի նորեկը և, տես-նելով աստղագետի ծիծաղելի կերպարանքը, չկարողացավ զսպել իր ժպիտը: Բայց այդ ժպիտը նման էր լուսնային ճառագայթի րա-ղեակյան փայլին, որ երբեմն նշմարվում էր աշնանային գիշերի մթին մառախուղի մեջ: Դրանից հետո առաջվա դառն տխրության խավարը կրկին պատեց նրա ճակատը: Նա խոսեց թույլ ձայնով.

—Շնորհակալ եմ ձեր աշխատության համար, որը բոլորովին իզուր է... իմ հիվանդությունը անբժշկելի է... դուք ինքներդ գի-տեք այդ...

—Ինչո՞ւ եք դուք խանում[58], անձնատուր լինում հուսահա-տության,—մեջ մտավ աստղագետը,—Ալլահը և սուրբ մարգարեն անօրինել են ձեզ համար շուտափույթ առողջություն...

—Ի՞նձ համար...—պատասխանեց Սալիհան, աչքերը բարձ-րացնելով նրա վրա:

Այդ միջոցին աստղագետը աչքի մի ճարպկությամբ կա-րողացավ իր աչքերի և հոնքերի խորհրդավոր շարժումներով նրան նշաններ ցույց տալ, որ խանը ոչինչ չնկատեց, միայն Սալիհան հասկացավ:

—Այսպես, ուրեմն, դուք կարծում եք,—շարունակեց հիվանդը, դառնալով դեպի խանը,—որ ես կարող եմ վստահ լինել այդ հաքիմի բժշկության վրա:

—Անտարակույս:

—Երբ այդպես է, մոտ եկեք, հաքիմ,—դարձավ նա դեպի աստղագետը,—և ասացեք, ես ի՞նչ պիտի անեմ:

—Թույլ տվեցեք ինձ, խանում,—պատասխանեց աստղագետը,—նախ հաշվել աստղերի ընթացքը և որոշել այն աստղը, որը լուսավորել է ձեր ծննդյան րոպեն[59]:

—Այդ որքա՞ն ժամանակ կտևի,—հարցրեց Փանահ խանը:

—Ժամանակը ճշտությամբ ասել չեմ կարող, դա ինձանից կախված չէ, այլ սուրբ մարգարեի կամքից,—պատասխանեց աստղագետը:

—Իսկ այդ գուշակությունները, կարծեմ, կարելի է կատարել և իմ առանձին բնակարանում,—խոսեց Փանահ խանը:

—Անհնարին, խան,—պատասխանեց աստղագետը,—ոչ միայն ձեր բնակարանում չէ կարելի կատարել, այլ մինչև անգամ այստեղ ևս չէ կարելի, եթե դուք հրաման չեք տա ինձ՝ մնալու խանումի հետ միայնակ:

—Քե՞զ... միայնա՞կ...—կրկնեց խանը,—այդ նոր բան է... Նա դարձյալ սկսեց ուշադրությամբ երկար նայել աստղագետի վրա, որի կատարելապես այլանդակությունը փոքր-ինչ հանդարտացրեց խանի կասկածը, և նա հարցրեց.

—Միթե չէ՞ կարելի թողնել այստեղ գոնե մի ներքինի:

—Ոչ մեկին, խան, այդ անսիրտ մարդիկը ունեն ամենավատ ազդեցություն մանկահասակ խանումների ճակատագրի վրա: Նրանք բոլորը ստեղծված են անբարեհաջող աստղերի ներգործության ներքո:

—Լսիր, աստղագետ,— ասաց Փանահ խանը,— դու առաջինն ես իմ տեսած բոլոր հաքիմներից և աստղաբաշխներից, որ պահանջում ես այսպիսի նախազգուշություններ: Արդյոք, թաքնված չէ՞ մի բան այդ օտարոտի պահանջումների տակ: Տես, զգույշ կաց: Փանահ խանը գիտեր արժանավոր կերպով վարձատրել ծառայությունները, գիտեր և խիստ կերպով պատժել անհավատարմությունը:

—Մի բարկացեք խան,— ասաց Սալիհան անզգուշությամբ,—

կարելի է դա ավելի հմուտ է բոլորից։ Թույլ տվեցեք ինձ խոսել դրա հետ։

Փանահ խանը այդ խոսքերից հասկացավ ավելի շատ բան, քան թե սպասում էր։ Նույն րոպեում հրամայեց նա ներքինիներին տանել բոլոր կիներին հարեմի մյուս բաժին և թողնել տառապյալին միայնակ Սալիհայի հետ։

—Ես հեռանում եմ,—ասաց նա տառապյալին,— և հույս ունեմ, որ դու կաշխատես շուտով ավարտելու քո գուշակությունները... և համոզված եմ, որ դու կվարձատրվես քո բժշկության համար...—ավելացրեց նա կծու ժպիտով և դուրս եկավ հիվանդի սենյակից։

## XI

## ԱՍՏՂԱԳԵՏԸ ԱՌԱՆՁՆԱՑԱԾ ՍԱԼԻՀԱՅԻ ՀԵՏ

Երբ որ ամենքը հեռացան, աստղագետը սկսեց նախ ուշադրությամբ հետազոտել սենյակի բոլոր անկյունները, կասկածելով, որ կարող են լսել նրա խոսակցությունը, հետո մոտեցավ հիվանդի անկողնին և գլուխը խոնարհեցնելով, հազիվ լսելի ձայնով ասաց.

—Դուք, խանում, անզգույշ գտնվեցաք. պետք չէր հայտնել ձեր ցանկությունը ինձ հետ խոսակցելու մասին... Ես ձեր ամենախոնարհ ստրուկն եմ... Այժմ պետք է ուշադիր լինեք իմ խոսելուն, և ինչ որ ես ասելու կամ հարցնելու լինեմ, դուք պետք է այնպես ցույց տաք, թե ամեն բանում համաձայն եք ինձ հետ։ Ձեր ամուսինը՝ Ջամշուդը, այստեղ է, շատ մոտիկ է և նույնպես սիրում է ձեզ...

—Այստե՞ղ, այստե՞ղ, ի սեր Ալիի...

Աստղագետը նշանացի անելով, հասկացրեց նրան, որ լռե, իսկ ինքը նստեց փոքր-ինչ հեռու, գորգի վրա, սկսեց զանազան հարցումներ անել, թե քանի տարեկան է, թե նա ինչ մի առանձին դեպք է հիշում իր մանկությունից և այլն։ Բոլորը քննելով, վերջը աստիճանաբար հասավ մինչև տիկնոջ տասնևվեց տարեկան հասակը և հարցրեց.

—Այդ հասակում դուք շրջապատված եք եղել ամենաչար աստղերով. պետք է որ այդ ժամանակ մի որևիցե նշանավոր դեպք պատահած լինի ձեզ։

Այո, այո,—բացականչեց Սալիհան,—ես այդ ժամանակ չափազանց երջանիկ էի...

—Երջանի՞կ, խանում, անկարելի է։

—Ինչպե՞ս չէ։

—Իհարկե չէ։ Այդ ձեզ այնպես երևում էր միայն, երբ թե երջանիկ էիր։ Բայց բոլորը, ինչ որ վայելում էիք այն ժամանակ, տանում էր ձեզ դեպի անբախտություն։ Պետք է աշխատեք մոռանալ այդ...

—Մոռանա՞լ, մի՞թե այդ կարելի է...—պատասխանեց Սալիհան խորին վրդովմունքով։

Բայց աստղագետը խորհրդավոր կերպով ակնարկեց նրան, նա հասկացավ և փոխեց խոսքը.

—Մոռանալ... մի՞թե դուք կարծում եք, որ այդ լավ կլինի...

—Այդ կփրկե ձեզ, խանում, կփարատե ձեր հիվանդությունը և կբախտավորացնե ձեզ։ Այդ ես պարզ տեսնում եմ այն բարի աստղերից, որոնք այժմ շրջապատում են ձեզ։ Ջվանշիրցիների հրամանատարի աստղը գտնվում է իր կատարյալ ծագման մեջ...

—Իսկ իմ զավակները... ի սեր Ալիի, ասեցեք, ի՞նչ են անում իմ զավակները... ինչո՞ւ համար ինձ բաժանել են նրանցից...

—Հանգստացեք, խանում, ձեր զավակները առողջ են և բախտավոր։ Բայց նրանք կլինեն ավելի բախտավոր, երբ որ դուք կառողջանաք և դրանով կուրախացնեք խանին։ Ես հավատացած եմ, որ նա հանձն կառնի անօրինելու ձեր զավակների բախտը։ Իսկ հիմա դառնանք դեպի ձեր հիվանդությունը։ Դուք զգում եք սաստիկ ջերմություն, այդպես չէ՞։

—Խիստ սաստիկ։

—Լավ, երբեմն ձեր գլուխը մտնում են մթին մտածություններ, և դուք բոլորովին անձնատուր եք լինում այդ մտածություններին։

—Այո, ես տխրում եմ, տանջվում եմ, մեռնում եմ սրտիս ցավերից...

—Ձեր սրտի ցավը հետևանք է ձեր մտատանջությունների, և ավելի ոչինչ։ Ասեցեք, արդյոք զգո՞ւմ եք ձեր մեջ այնքան ույժ, որ կարողանաք ձիով ման գալ։

Այդ հարցման միջոցին աստղագետը աչքերով նշան ավեց հիվանդին։

—Զգում եմ։

—Շատ լավ, ձեզ հարկավոր է թարմ օդ, խանում։ Մեկնեցեք դեպ ինձ ձեր ձեռքը։

Հիվանդը մեկնեց դեպի բժիշկը իր ձեռքը, և նա, ցույց տալով, որ թե շոշափում է նրա երակը, հազիվ լսելի ձայնով ասաց. «Ականջ դրեցեք ինձ և դուք ազատված կլինեք»։

Հետո նա նստեց սենյակի միջանցքը, գրպանից դուրս հանեց իր դիվիթ-ղալամը և եղեգնյա գրիչը, սկսեց աստղաբաշխական համարումներ անել։ Սալիհան հետաքրքրությամբ նայում էր նրա դեմքի ծիծաղելի ծամածռությունների վրա, որ անում էր նա իր գործողությունները կատարելու ժամանակ։ Նա ուրախությամբ կցանկանար ընդհատել աստղագետի պարապմունքը և իր սիրելի Ջամշուդի մասին տեղեկություններ հարցնել, բայց վախենալով, մի գուցե իր հարցափորձով խանգարեր նրան, այդ պատճառով լռեց։ Բայց աստղագետը խորասուզված էր իր գործի մեջ. ուշադրությամբ քննում էր մոլորակները և զանազան գծերը, որ գրել էր թղթի վրա, միևնույն ժամանակ ինքն իրան մի առանձին ծանրությամբ խոսում էր. «Շատ գեղեցիկ... ծննդյան աստղը մտնում է... նա ընթանում է ավելի բարձր և բարձր... նա կանգնեց... հասկանում եմ, առավոտը դեռ խիստ վաղ է... դեպի աջ կողմը՝ աստղերը բարեհաջող են... դեպի ներքև՝ մեկը վնասակար է... բայց ես գիտեմ, թե երբ է ծագում դա, կարելի է դրանից խույս տալ... այդտեղ կանգնած է մի աստղ, որ մեծ խոչընդոտ կարող է լինել... բայց ահա ձին... նա ազատված է... այդ չափազանց լավ է... Այդ ի՞նչ փայլուն աստղ է, հա, դա խանի աստղն է... որքան երջանիկ է նա... ինչ փառք է շրջապատում նրան... Նա այնքան պայծառ փայլում է, որ նայել անկարելի է նրա վրա... զարմանալի է... խանումը կատարելապես կառողջանա, եթե խույս կտա աստղի ազդեցությունից... Ահա, մի ինչ-որ խորասանի աստղ է վազում հորիզոնի վրա... նա վազում է բռնելու խանումի աստղին... ահա նրանք զարկվեցան միմյանց... խանումի աստղը հրճվանքի մեջ է... և...»։

—Կարելի՞ է վերջապես ներս մտնել,—հարցրեց Փանահ խանը, որը դրսից ծածուկ կերպով ականջ էր դնում նրանց ամբողջ խոսակցությանը, որովհետև վստահություն չուներ աստղաբաշխի վրա։

Աստղագետը վեր թռավ գորգի վրայից, ասելով.

—Համեցեք, խան, միայն ի սեր Ալիի, աջ ոտքով և ներս մտնելուց հետո երեք անգամ թքեցեք դեպի ձախ կողմը։

Անմիջապես խանը կատարեց նրա պատվերները, ներս մտավ, հարցնելով.

—Հիմա ասա, առողջանալու հույս ունե՞ս։

—Մեծ հույս ունեմ,—պատասխանեց աստղագետը,—խանումի հիվանդությունը բոլորովին կանցնի մի հաֆթայի[60] ընթացքում, եթե դուք, խան, շնորհ կանեք կատարելու իմ տված խորհուրդները։

—Ասա, ի՞նչ խորհուրդներ։

—Նախ, երեք օր շարունակ, արևի ծագելուց առաջ, խանումը պետք է խմե մի-մի բաժակ ջուր այն առվակից, որը հոսում է դեպի աջ կողմը։

—Այդ հեշտ բան է, շարունակեցեք։

—Վեց օր շարունակ նա պետք է ձիով գնա այն լեռան վրա, որը գտնվում է աջ կողմում։ Այդ զբոսանքը կատարելու համար նա պետք է նստած լինի ձեր ամենալավ և արագընթաց նժույգներից մեկի վրա։ Ճանապարհ ընկնելու ժամանակը պետք է նշանակել ամեն օր արեգակի առաջին ճառագայթը ծագելու րոպեում։ Երբ որ խանումը կհասնի այնտեղ, լեռան վրա, պետք է ձիուց ցած իջնի, և երեսը դարձնելով դեպի Մեքքայի կողմը[61], պետք է անգիր կարդա մի քանի գլուխներ Ղուրանից։ Հետո կրկին պիտի նստե ձիու վրա և վերադառնա տուն։ Խանումը պետք է ծածկված լինի չադրայի մեջ, և դեմքը քողարկված երեսակալով։ Եվ ոչ ոք այդ զբոսանքները կատարելու ժամանակ չի պիտի ուղեկցի նրան։

—Ինչպե՞ս թե ոչ ոք,—գոչեց խանը անհանգստությամբ,—դու երևի ցնորքների մեջ ես գտնվում, աստղագետ։

—Երդվում եմ ձեր մորուքով, խան, որ ես խոսում եմ ճշմարիտը։ Ամեն մի տղամարդ, որ կուղեկցե նրան, կլինի պատճառ նրա կորստյանը։ Որովհետև, իմ հիշած ամբողջ վեց օրերի ընթացքում խանումի աստղը պիտի փայլե ամենապայծառ կերպով, բայց հենց որ նրան կմոտենա տղամարդի աստղը, այն ժամանակ տիկ-նոջ աստղը իսկույն կնսեմանա։

—Իսկ ներքինինե՞րը։

—Այդ կիսամարդիկը նրա հիվանդությունը կդարձնեն բոլորովին անբուժելի։

-Բայց դու դժվա՞ր ես, աստղագետ,— խոսեց խանը փոքր-ինչ բարկացած կերպով,— ինչպե՞ս կարելի է թույլ տալ կնոջը միայնակ զբոսանք կատարել այդքան հեռավոր տարածության վրա։ Դա անկարելի է. մեր սովորություններին հակառակ է այդ։

—Ամենակարող խան, ես հայտնեցի ձեզ այն, ինչ որ ցույց տվեց ինձ իմ խորին գիտությունը, որը ես ունեմ երկնային լուսատուների մասին, որոնք կանխապես սահմանում են մարդկային ճակատագիրը։ Իսկ դուք չեք կամենում լսել ինձ, այդ ձեր կամքն է։

Փոխանակ խանը մնաց շվարած դրության մեջ. չգիտեր ինչ վճռել։ Իրան հատուկ կասկածամտությունը կռվում էր նրա սրտում, մի կողմից անհավատության հետ, որով դժվարանում էր նա չհավատալ աստղագետի խոսքերին, իսկ մյուս կողմից՝ այն ցանկության հետ, որով կամենում էր տեսնել Սալիհային կատարելապես առողջացած։ Երկար ժամանակ բնակած լինելով պարսիկների մեջ՝ նա սովորած էր հավատալ աստղագետների գուշակություններին և նրանց խորհուրդների համեմատ կարգադրել իր գործերը։ Բայց այդ աստղագետի պահանջները այն աստիճան օտարոտի էին, որ նա չգիտեր, թե ինչ պետք է անել։ Աստղագետը, նկատելով նրա մտատանջությունը, խոսեց.

—Թույլ տվեցեք, ամենազոր խան, ձեր ստրուկին ասել, որ ես ոչ մի պատճառ չունեմ ձեզ խաբելու։ Ինձ հայտնի է ձեր ամենակարողությունը, որով պատժել կարող եք խաբեբային։ Ինձ հայտնի է և ձեր առատաձեռնությունը դեպի այն մարդիկը, որոնք կկատարեն ձեր ցանկությունները և որոնք կարդարացնեն ձեր հույսերը։ Ես կմնամ այստեղ մինչև այն ժամանակ, երբ խանումը կատարելապես կառողջանա։ Եվ այն ժամանակ դուք կտեսնեք, խան, որ սուրբ Ալիի կամեցողությամբն է եղել, որ ինձ ուղարկել է այստեղ, որպեսզի իմ ձեռքով փարատվի այն տրտմությունը, որը տիրում է ձեր ամուսնի վրա։ (Եվ թող բազմապատկե Ալլահը նրա բախտավորությունը և թող երկարացնե նրա կյանքը այնքան ժամանակ. որ նա կարողանա տեսնել իր ժառանգներին մինչև յոթերորդ սերունդը)։ Ես գիտեմ, թե որպիսի ընծաների կարժանանամ և որպես կվարձատրե ինձ իշխողներից ամենամեծը՝ ջլանչիրցիների խանը (որի դեմքը թող հավիտյան փայլի փառքի և վեհության պայծառությամբ)։

Փանտահ խանը կատարելապես հրապուրվեցավ աստղագետի խորամանկ ճառից: Նրան ավելի գրավեց գիտնականի անկեղծ ուրախությունը, որը արտահայտվում էր նրա դեմքի վրա, երբ խոսում էր իր ստանալիք ապագա ընծաների մասին:

—Ես համաձայն եմ,—ասաց նա,—էգուցվա օրից կսկսենք Սալիհային բժշկելու կարգադրությունները:

Հետո մոռացավ հիվանդին, բայց նա, կամենալով խույս տալ անտանելի բռնակալի ներկայությունից, ձևացրեց իրան իբր թե քնած է: Խանը կրկին կանչել տվեց իր կնիկներին և ներքինիներին իրանց տեղում և ինքը աստղագետի հետ հեռացավ:

## ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ ՎԵՐՋԸ

## ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

### I

### ՍԱԼԻՀԱՅԻ ԱՌԵՎԱՆԴՈՒՄԸ: ԱՍՏՂԱԳԵՏԻ ԳԵՐՎԵԼԸ: ՇՈՒՇԻ ԲԵՐԴԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ:

*Աստղագետը բավական ճարպիկ կերպով սարքեց Սալիհայի առևանգելու ամբողջ ծրագիրը: Հետո գիշերով գաղտնապես մտավ Ջումշուդի տաղավարը, հաղորդեց նրան ինչ որ կատարվեցավ: Զմայլված երիտասարդը ուրախությամբ գրկեց աստղագետին, խոստացավ նրա ծառայությունը առավելապես վարձատրել, երբ ինքը կվերադառնա Ջանախչի ամրոցը: Նրանք երկուսն էլ համաձայնություն կայացրին այն միջոցների վերաբերությամբ, թե ինչ եղանակով պետք է գործեին, որ կասկածանքի առիթ չտային:*

*Մյուս օրը Ջումշուդը, տեսնվելով Փանահ խանի հետ, թույլտվություն խնդրեց իր խումբով վերադառնալ, որպեսզի իր հորեղբորը տեղեկություն տա, թե խանի զորքերը շուտով նրան օգնության կհասնեն: Փանահ խանը, հայտնելով նրան իր ափսոսանքը, թե զրկվում է մի մեծ բավականությունից, որ չէ կարող ավելի երկար ժամանակով պահել իր մոտ թանկագին հյուրին, ասաց, որ նա կարող է գնալ, երբ որ կցանկանա, իսկ ինքը, առանց ժամանակ կորցնելու, նրա ետևից իր զորքերով կգա:*

*Հրաժարական ողջույն տալով Փանահ խանին՝ Ջումշուդը ճանապարհ ընկավ: Բայց մի օրվա ուղևորությունից հետո նա հանձնեց խումբը իր հավատարիմ նոքարներից մեկին, հրամայեց գնալ Ջանախչի, տալով նրան մի նամակ իր հորեղբոր անունով. հետևյալ բովանդակությամբ. «Ամենակարող Աստուծո կամքով մեր գործերը հաջողակ են ընթանում: Փանահ խանը չորս հազար ջվանշիրցիներով կգա մեզ օգնելու, ոչ այնքան ուշ, քան տասն օրից հետո: Նա հանձնեց ինձ հայտնել ձեզ իր մշտական անկեղծ բա-*

րեկամության զգացմունքը և իր փափագը՝ նվաստանալու ձեր առաջադիմության։ Ներեցեք, որ ես ինքս չեմ բերում ձեզ այդ համբավը։ Մի կարևոր հանգամանք պահանջում է իմ շուտափույթ գնալը ջլանշիրցիների օրաներից մեկում, որտեղ ես անցուցել եմ այն չորս տարիները, երբ սովորում էի պատերազմական արհեստը։

Անհանգիստ մի լինիք իմ մասին։ Ես շուտով կհայտնվեմ դարձյալ ձեզ մարտակից լինելու համար մեր ընդհանուր թշնամիների դեմ»։

Երկու հավատարիմ նոքարներ իր հետ առած, Ջումշուդը բաժանվեցավ իր խմբից և, զարտուղի ճանապարհներով հետ դառնալով, եկավ, թաքնվեցավ այն անտառի մեջ, որ շատ հեռու չէր Փանահ խանի բնակարանից և բոլորովին մոտ էր այն լեռանը, որի վրա, ավազակի կարգադրության համեմատ, Սալբհան պիտի այցելության գործեր զորան կարգալու համար։

Արեգակը դեռ նոր էր մայր մտել, երբ ավազակը եկավ Ջումշուդին տեսնելու։ Նրան դժվար չէր գտնել երիտասարդին, որովհետև առաջուց ժամադիր էին եղած, թե անտառի որ վայրում պետք է սպասե ավազակին։ Այդ վերջինը բերեց Ջումշուդի և նրա երկու նոքարների համար խորասանի սաղավարտներ և զրահներ[1], որոնց գնելու համար սկզբից փող էր առացած երիտասարդից։

—Որքան ուրախ եմ և շնորհակալ եմ քեզանից, իմ սիրելի ավազակ, որ դու ճշտությամբ կատարեցիր քո խոստումը։ Հիմա ասա ինձ, սկսվեցա՞վ արդյոք իմ նազելի Սալբհային բժշկելու հրաշալի եղանակը։

—Այսօր առավոտյան առաջին անգամ նա ձիով դուրս եկավ։ Թեև ես սաստիկ արգելեցի, որ ոչ ոք չուղեկցեր նրան, բայց կասկածամիտ Փանահ խանը, նստած ձիու վրա, հեռվից իր հայացքով հետևում էր նրան։ Խանին ես հակառակել չկարողացա։ Նրա այդ կասկածանքը ստիպում է մեզ ավելի զգույշ լինել։ Եգուց, երբ աղջիկը կբարձրանա սարի վրա և ձիուց ցած կիջնե ղորանի ընթերցանության համար, դուք ձեր նոքարների հետ, ցած թողնելով սաղավարտների երեսակալները, պետք է հանկարծ հարձակվեք դուրս ձեք և հափշտակեք Սալբհային։ Շտապեցեք, որքան կարելի է, շուտով մտնել անտառը։ Ես էլ նստելով Սալբհայի ձիու վրա, իսկույն

կմիանամ ձեզ հետ։ Պետք է զգուշանանք մեր ետևից ընկնողներից։

—Գեղեցիկ խորհված է, դրանից ավելի լավը մտածել անկարելի էր։ Բայց չգիտեմ, ինչո՞ւ, իմ սիրտը այսպես սաստիկ կերպով բաբախում է։ Երևի դա մի որևէ դժբախտության նախազգացումն է։ Բայց ինչ էլ որ պատահելու լինի, արդեն վճռված բան է... ես պիտի ամեն ինչ զոհեմ Սալիհայի փրկության համար։ Միայն չգիտեմ, որտե՞ղ ես պիտի տանեմ իմ կնոջը։

— Զանախչի, ուղիղ ձեր հորեղբոր մոտ. ահա իմ խորհուրդը։ Դուք վաղ թե անագան պետք է հայտնեք ձեր գաղտնիքը և պետք է ցույց տաք նրան ձեր կնոջը։ Այժմ ամենահարմար ժամանակն է։ Ձեր հորեղբոր՝ Թավրիզի մելիքի հետ ունեցած երկպառակությունը, նրա անհրաժեշտ կարոտությունը ձեր սրի և խորհուրդների մեջ՝ սկսվող պատերազմի վերաբերությամբ, այդ բոլորը կհարկադրեն նրան հաշտվելու ձեզ հետ, և ամեն ինչ կմոռացվի։

Ջումշուդը համաձայնվեցավ տանուտերի ենթադրություններին հետ, և նա վերադարձավ Փանահ խանի մոտ։

Մյուս օրվա առավոտը, երբ պետք է կատարվեր ամուսնությունը, էր այն հրապուրիչ և շքեղ առավոտներից մեկը, որոնք սովորական են Ղարաբաղում, առավել ամառային եղանակների ժամանակ։ Հենց որ ծագեցին արեգակի առաջին ճառագայթները, Սալիհան, նստած իր պատվական նժույգի վրա, դիմեց դեպի լեռը, սկսեց բարձրանալ նրա գագաթի վրա։ Փանահ խանը ոչ մի կերպով չէր կարող համբերել, որ հեռվից չդիտեր նրա գործողությունները։ Ջումշուդը և նրա երկու ընկերները, ոտքից գլուխ պատած զրահի մեջ և դեմքերը ծածկած երկաթյա երեսակալներով, թաքնված թավախիտ թփերի մեջ, ուշադրությամբ նայում էին այն գործողությունների վրա, որ նրանց աչքի առջև կատարվում էին։ Աստղագետը գործի հաջողությունը ավելի դյուրացնելու համար, բռնած Սալիհայի ձիու սանձից, տանում էր մինչև սարի գագաթը։

Տիկինը ձիուց վայր իջածին պես աստղագետը տարածեց նրա ոտների տակ գորգը, որի վրա ծալապատիկ նստելով, սկսեց նա լսելի ձայնով կարդալ ղորանի այաթները։ Այդ րոպեին Ջումշուդը իր երկու ընկերների հետ թռան նժույգների վրա և նետի պես սլացան դեպի նույն լեռը։ Հափշտակելով ապշած Սալիհային իր գրկի մեջ՝ Ջումշուդը կայծակի արագությամբ անհետացավ անտառի

խորքում։ Նոքարները և աստղագետը հետևեցին նրան։ Վերջինը կարողացավ նստել Սալիհայի ձիու վրա։ Փանահ խանը տեսնելով այդ անցքը, նույն րոպեում հասկացավ, որ ինքը խաբված է, և իր հետ եղած խմբով նետվեցավ փախստականների ետևից։ Բայց փախստականները ունեին ամենալավ ձիաներ և միջոց գտան մի քանի տասնյակ րոպեներով առաջ անցնել։ Բացի դրանից, անտառի մեջ, խոտորնակի պտույտներով, նրանք աշխատում էին այնպես շուռ-շուռ փոխել ճանապարհը, որ Փանահ խանը մի ամբողջ ցերեկ նրանց հետամուտ լինելուց հետո երեկոյան բոլորովին կորցրեց նրանց հետքերը։ Բայց, դժբախտաբար, աստղագետի ձին փախչելու միջոցին սայթաքելով, ցած գլորվեցավ։ Նա ընկավ այնպես անհաջող կերպով, որ աստղագետի մի ոտքը մնաց ձիու տակին։ Այդ դժբախտ դրության մեջ նա չկարողացավ ազատվել վերահաս վտանգից։

Փանահ խանը իր խմբի հետ վրա հասավ և տեսնելով ողորմելի աստղագետին, մի առանձին գազանային ուրախությամբ աղաղակեց.

— Փա՜ռք սուրբ մարգարեին, որ դու վերջապես իմ ձեռքը ընկար։ Խաբեբա, այդ անտառը կլինի քո գերեզմանը...

Հետո դառնալով դեպի իր խումբը, հրամայեց.

— Դուրս քաշեցեք այդ անիրավին ձիու տակից, որին նա իզուր տեղը փչացրեց, և բերեք ինձ մոտ։ Թեև մենք կորցրինք իմ սիրելի Սալիհային հափշտակողների հետքերը, այժմ գոնե կիմանանք, թե ովքեր էին նրանք։ Անպատճառ այդ ստախոսին արժանի բարեկամները կլինեն, որը համարձակվեցավ այնպես խորամանկ կերպով խաբել ինձ։ Բայց ես դրա հատուցումը կտամ...

Նոքարները դուրս քաշեցին աստղագետին, որը երկյուղից դողդողում էր և բերեցին Փանահ խանի մոտ։ Նա նստած էր մի ծառի կոճղի վրա, իր քննական հայացքը դարձրել էր դեպի աստղաբաշխը։ Նրա բարկությունը չափ չուներ։

— Իմանո՞ւմ ես արդյոք,— ասաց նա,— թե որպիսի՞ պատժի արժանի ես։ Կարո՞ղ ես որոշել նրա չափը։

Աստղագետը ոչինչ չպատասխանեց։

— Հասկանում եմ,— շարունակեց Փանահ խանը,— որ դու ինքդ չես կարող որոշել։ Լավ, ես ինքս կնշանակեմ։ Նախ, դու պետք է հայտնես, թե ովքե՞ր էին այն ստահակները, որոնք համարձակ-

վեցան հափշտակել իմ կնոջը, և ի՞նչ նպատակով: Այդ պարզ է, որ դու նրանց հետ համախոհ ես եղել: Հետո ես կմտածեմ, թե ո՞ր լավ կլինի, կախե՞լ քեզ սանեքից այդ սենյակի մեջ գիշակեր թըռչունների կերակուր դառնալու համար, թե՞ կենդանի թաղել գետնի մեջ[2]: Այսուամենայնիվ, ես այնքան ներողամիտ կլինեմ, որ այդ երկուսից մեկի ընտրությունը կթողնեմ քո կամքին... Հիմա առանց այլևայլության դառնանք դեպի գործը: Սկզբից նախազգուշացնում եմ քեզ, որ դու ամեն հարցի մեջ, եթե դարձյալ կաշխատես խաբել ինձ, ամեն անգամ կստանաս հինգ հարյուրական հարվածներ քո ոտների տակ: Խոսիր:

Աստղագետը չոքեց ծնկների վրա, ասաց.

—Ամենակարող խան, ես զղջում եմ իմ վարմունքի բոլոր գարշելիությունը, բայց եթե ջվանշիրցիների հրամանատարի ողորմածությունը թույլ կտա ինձ, ես կհաղորդեմ նրան բոլորը, ինչ որ ինձ հայտնի է: Ես ցույց կտամ այն բոլոր միջոցները վեհափառ Փանահ խանին, որոնցմով նա կլինի ամբողջ Ղարաբաղի տերը:

—Դու կամենում ես կրկի՞ն խաբել ինձ:

—Ոչ հենց այդ րոպեում շան կերպարանք ստանամ, եթե իմ ասածներս ճշմարիտ չլինեն:

—Տեսնենք: Ես կշնորհեմ քեզ մի քանի ժամ ևս կյանք: Բայց հիշիր, որ եթե քո պատմության մեջ կստախոսես, յուրաքանչյուր ստի համար կստանաս հինգ հարյուր հարվածներ ոտներիդ տակ: Վեր կաց, քո ծնրադրությունը ամենևին չի փրկի քեզ:

Աստղագետը վեր կացավ և սկսեց պատմել այն բոլորը, ինչ որ արդեն մեզ հայտնի է Ջումշուդի և Սալիհայի ամուսնության վերաբերությամբ, բացատրեց այն պատճառները, որ ստիպել էին Ջամշուդին իրան ձևացնել խորասանցի, հայտնեց, թե ինչ գաղտնիք կար, որ առիթ էր տալիս Ջումշուդին ծածուկ պահելու իր ամուսնությունը իր հորեղբորից, վերջը, որ նա վճռեց առևանգել Սալիհային ինչ կերպով և լիներ, իսկ ինքը, աստղագետը, նրա դիտավորությունը օգնում էր, կատարելով հավատարիմ ծառայի պարտավորությունը:

Այդ պատմության միջոցին Փանահ խանը ոչ սակավ անգամ արտահայտում էր իր զարմացումը և կարեկցությունը դեպի Ջումշուդի անել դրությունը, որից ստիպված, վճռել էր նա ծայրահեղության դիմել: Վերջապես ասաց նա.

*—Ցավում եմ, որ ես այդ բոլորը առաջուց չգիտեի, այն ժամանակ, շատ կարելի է, որ ես չէի ցանկանա զրկել այդ սիրարժան երիտասարդին իր կնոջից, որին նա այնքան զոհաբերությամբ տիրացել էր: Այդ պատմությունը մեղմացնում է իմ աչքում և քո հանցանքը: Ծառայի համար ամեն պարտավորություններից նախադաս է լինել հավատարիմ իր տիրոջը: Դու կատարել ես քո պարտքը: Բայց, թեև դու ինձ խաբեցիր, իսկ ես հանգամանքները ի նկատի առնելով, ներում եմ քեզ: Հիմա դու ինձ այն ասա, թե ինչ միջոցով կարող եմ ես հասնել ամրոց Ղարաբաղի վրա տիրելու բարձր իշխանությանը: Համոզված եղիր, որ ես կվարձատրեմ քեզ արժանավոր կերպով:*

*—Թող Ալլահը և սուրբ մարգարեն տարեն ամենակալ, ամենաողորմած և ամենաբարի խանի վրա իրանց օրհնությունը և թող բազմացնեն նրա կյանքի տարիները Մեծ ծովի[4] ավազների թվով: Ձեր՝ դեպի ինձ ցույց տված գթության համար, խան, ես կհաղորդեմ այդ նշանավոր գաղտնիքը: Երկպառակությունները, որ ծագել են խամսայի մելիքների մեջ, բոլորովին քայքայել են նրանց միաբանությունը: Իսկ այդ նոր սկսվող պատերազմը կըհասցնե վերջին հարվածը: Նրանց զորությունը խղճուկ կթուլանա: Ամրոց Ղարաբաղի վրա բարձր իշխանություն ձեռք բերելու համար անհրաժեշտ է ունենալ միայն մի բերդ, որը կառուցված լինի մի անմատչելի տեղում: Իսկ ես գիտեմ մի այդպիսի տեղ: Ջանախչիից 12 վերստ հեռավորության վրա կա մի սար, որի գագաթի վրա ստորոտից բարձրանալու համար հարկավոր կլինի մեկ և կես ժամ: Սարափելի զառիվերները տանում են դեպի նրա ժայռոտ գագաթը: Այդ սարը երեք կողմից բոլորովին անմատչելի է: Նա շրջապատված է պարսպաձև ապառաժներով, որոնց ներքևից աղմկելով որոտում է մի գետ և արագությամբ վազում է քարերի միջով: Միայն մի կողմից կարելի է մուտք գործել դեպի սարի գագաթը, և այդ կողմը կարելի է ամրացնել պարիսպներով: Իսկ մնացած կողմերը պաշտպանված են բնական ամրություններով: Սարի գագաթի վրա կա մի տափարակ տարածություն, որի շրջապատը երկու ժամվա ճանապարհ կլինի: Այդ տեղում կարելի է հիմնել մի քաղաք և բնակեցնել այն քաջ պատերազմողներով: Այնուհետև դուք կլինեք անմատչելի, երբ մի որևիցե վտանգ կսպառնա թշնամին, և կարող եք միշտ հարվածել ձեր թշնամիներին, պա-*

հելով շրջակա բնակիչներին սարսափի մեջ և սրի ուժով կհարկադրեք նրանց ձեզ հպատակվելու:

—Շատ գեղեցիկ և չափազանց լավ մտածված է,—պատասխանեց Փանահ խանը:—Դու, ով աստղագետ, թեև վատ բժիշկ ես, թեև խաբեբա ես, բայց որպես երևում է, հնարագիտության մեջ խիստ վարպետ ես: Ո՞ւմն է պատկանում հիմա այդ տեղը:

—Վարանդայի մելիքին: Եվ որովհետև դուք այժմ հրավիրված եք նրան օգնելու համար, այդ պատճառով խիստ դյուրին կլինի ձեզ պահանջել նրանից, որ այդ տեղը ընծայե ձեզ: Մի բան էլ կա. իմ տված խորհրդի համեմատ, Ջումշուդը պետք է իր կնոջը ներկայացնե իր հորեղբորը: Դուք կարող եք պահանջել ձեզ համար բավականություն այն հափշտակության մասին, որ կատարեց Ջումշուդը, առևանգելով Սալիհային, որը արդեն ձեր կինն էր դարձել: Ձեզ հետ իր բարեկամական կապերը պահպանելու համար և իր եղբորորդուն ձեր վրեժխնդրությունից ազատելու համար, որ նա կրկին բախտ ունենա իր Սալիհայի ամուսինը լինել, ես հավատացած եմ, որ Վարանդայի մելիքը ուրախությամբ կհամաձայնվի ընծայել ձեզ այն տեղը, եթե դուք կընդունեք այդ որպես վարձատրություն ձեզ հասցրած անպատվության փոխարեն:

—Դու չափազանց խելացի մարդ ես, աստղագետ: Այն պարգևը, որին դու արժանի ես, կլինի քո ազատությունը պատժվելուց և վարձատրություն փողերով: Դու կստանաս թե առաջինը և թե երկրորդը, հեռացիր ինձ:

Նրանք գնացին:

## II

## ԳԻՇԵՐԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ ՁԱՆԱԽՁԻԻ ՄՈՏ: ՆՐԱՆՑ ԱԶԱՏՎԵԼԸ ՊԱՇԱՐՈՒՄԻՑ

Ջումշուդը իր թանկագին ավարի հետ ձիավարում էր մի ամբողջ օր, առանց հանգստանալու: Վերջապես զգալով սաստիկ հոգնություն և այլևս չտեսնելով իրանց ետևից հետամուտ եղողներին, նրանք կանգ առին:

Սալիհան, որ սկզբից սաստիկ վախեցած էր, ուրախացավ, երբ լսեց ծանոթ ձայնի հնչյունները, որոնք այնքան մոտ էին նրա սրտին: Հասկանալով կատարված անցքի նպատակը՝ նա ճանա-

պարՀի ամբողջ ընթացքում միայն նայում էր Ջումշուդի վրա այն աչքերով, որ լցված էին Հոգեկան բերկրությամբ, և չէր կարողանում իր Հրճվանքին բավականաչափ սնունդ տալ: Երբ որ նրանք կանգ առին, ՍալիՀայի Հարցմունքները չափ չունեին: Անդադար գրկում էր իր ամուսնին, ճնշում էր իր կուրծքի վրա, աշխատում էր արտաՀայտել իր սրտի բոլոր բորբոքը, բոլոր սերը, բոլոր տանջանքները, որ կրել էր նա իրանց անջատման միջոցով: Ջումշուդը նույնպես գտնվում էր մի այնպիսի Հիացման մեջ, որ խոսքեր չէր գտնում իր ուրախությունը արտաՀայտելու: Փափուկ խոտերը ծառայում էին նրանց անկողնի տեղ, իսկ միլիոնավոր աստղերը, որոնք շքեղ կերպով սփռված էին կապույտ երկնակամարի վրա, լուսավորում էին նրանց: Ով սիրո քաղցր րոպեներ, ինչո՞ւ ամենին չեք վիճակվում դուք: Բայց ավաղ, զվարճությունները խեղճ մաՀկանացուների գնվում են խիստ թանկ գնով և Հոգեկան դառնությունների Հետ գտնվում են միևնույն կարգում, դառնություններ, որոնք վաղ թե անագան Հաջորդում են ուրախություններին:

Երրորդ օրվա երեկոյան պաՀուն Ջումշուդը տեսավ իր առջև մի խումբ զինված մարդիկ, որոնք, ինչպես երևում էր, Հանգստանում էին, որովՀետև նրանց ձիաները արածում էին նրանց շուրջը: Երիտասարդը Հետաքրքրվեցավ գիտենալ, թե ովքեր էին նրանք, այդ նպատակով իր նոքարներից մեկին Հրամայեց, որ գնա տեղեկանա: Երբ որ նա վերադարձավ, Ջումշուդը իմացավ, որ նրանք իր մարդիկն էին, որոնց առաջուց ինքը ճանապարՀ էր դրել, որ գնային Զանախչի: Նա զարմացավ, թե ի՞նչ արգելք կարող էր այդքան ժամանակ նրանց պաՀած լինել այդ տեղում, և իսկույն մոտեցավ, սկսեց պատճառը Հարցնել միևնույն նոքարից, որին Հանձնել էր իր խմբի գլխավորությունը:

—Գուցե ձեզ Հայտնի չէ, իշխան,—պատասխանեց նա,—որ Խամսայի բոլոր մելիքները ապստամբվեցան մեր դեմ, և Թալիշեցիք, ջարդելով ձեր Հորեղբոր զորքերը, արդեն պաշարել են Զանախչին: Մենք չՀամարձակվեցանք առանց ձեզ առաջ գնալու և վճռեցինք սպասել ձեր վերադարձին:

—Հո՜, այդ շատ վաղ են սկսել... ես այդ չէի սպասում... Շա՞տ է թշնամիների թիվը:

—Մոտ երեք Հազար:

—Այդ ոչինչ. ես կաշխատեմ շուտով ծանոթանալ Թալիշեցի-

ների հետ... Մենք հենց այդ գիշեր պետք է հարձակվենք թշնամիների վրա և ազատենք Զանախչին պաշարումից։

Ջումշուդը խորհուրդ տվեց Սալիհային հովիվի ապստամբի ձևով և հարձակում գործելու միջոցին չբաժանվել իրանից։ Ժամանակը նպաստում էր բաց երկատարդի դիտավորությանը։ Երկինքը ծածկվելով ամպով, որոտը որոտում էր, կայծակը կտրատում էր մթին ամպերը։ Ամեն ինչ ցույց էր տալիս, որ գիշերը փոթորկային և խավար լինի։ Ջումշուդը բաժանեց իր խումբը երեք մասի, հրամայելով յուրաքանչյուր մասին հարվածել թշնամուն միմյանց հակառակ կողմերից։ Որպեսզի խավարի մեջ միմյանց ճանաչեն, նրանք ընտրեցին որպես նշանաբան Սալիհա անունը։

Գիշերից: Սատանի անձրևը հեղեղի նման թափվում էր ամպերից։ Անընդհատ որոտման միջոցով կայծակի փայլատակումը հետևում էր մինը մյուսին. շանթահար երկինքը կարծես թե վառվում էր կրակի մեջ։ Կամաց, առանց աղմուկի, Ջումշուդի խումբը առաջ էր ընթանում։ Անձրևի ձայնը խլացնում էր նրանց քայլերի խշխշոցը։ Նրանք գնում էին հետիոտն, ձիաները իրանց ետևից քարշ տալով։ Զանախչի բերդին խիստ մերձ հեռավորության վրա նրանք տեսան թշնամիների մի խումբ, որ զետեղված էր տաղավարների մեջ։ Տաղավարները հյուսված էին ծառերի ճյուղերից։ Եղանակի վատությունը ստիպել էր նրանց ծածկվել այդ ժամանակակից բնակարանների մեջ։ Միայն տեղ-տեղ տեսնվում էին կանգնած պահապաններ, որոնք անձրևից պահպանվելու համար մինչև ականջները ցած էին թաղել իրանց փափախները և նայում էին դեպի հակառակ կողմը։

Հետազոտելով այդ բոլորը կայծակի լույսով, որը անդադար փայլատակում էր, Ջումշուդը նշանացի կերպով իմացում տվեց նստել ձիաների վրա։ Նրա հրամանը կատարվեցավ այնքան հանդարտությամբ, որ անկարելի էր լսել ամենափոքր շարժման ձայն անգամ։ Հարյուր մարդ դիմեց դեպի գետի կողմը, մյուս հարյուրը դիմեց դեպի բերդի հյուսիսային կողմը, իսկ Ջումշուդը մնացածների գլուխն անցնելով, ընտրեց գործել դեպի կենտրոնը։ Մի ակնթարթում երեք խմբերը միասին, սարսափելի աղաղակներով հարձակվեցան քնաթաթախ, ընդարմացած թալիշեցիների վրա։ Արյունահեղությունը սոսկալի էր։ Թշնամիների մեջ տիրեց շփոթություն և իրարանցում։ Նրանք չհասկանալով, թե ում հետ գործ

ունեն, կամ խլում էին իրանց զենքերը և հարձակվում էին միմյանց վրա, կոտորում էին միմյանց, կամ ընկնում էին՝ վերք ստանալով վարանդացիների խենջարներից ու թրերից։ Այդ միջոցում կայծակը, կարծես թե կամենալով նպաստել Ջումշուդի հաջողությանը, փայլատակեց մի ապառաժի վրա և այրեց նրան։ Այրման զարհուրելի պայթյունը դղրդեց ամբողջ շրջակայքը, և լեռների խորքից հազարավոր բամբյուններ վերադարձրին նրա արձագանքը։ Կրակը արագությամբ տարածվեցավ բոլոր տաղավարների մեջ, և հրդեհի լուսավորության առջև վարանդացիները կոտորում էին իրանց թշնամիներին, ինչպես գիշատիչ գազաններին։

Թալիշի մելիքի որդին, որը բերդը պաշարողների հրամանատարն էր, գործ դրեց բոլոր հնարավոր միջոցները, որ կարողանա հավաքել իր զինվորներին, որպեսզի ընդդիմադրե հարձակվողներին, բայց նրա ջանքերը իզուր անցան։ Վերջապես նրան հաջողվեցավ միացնել մինչև հինգ հարյուր հոգի, որոնք գտնվում էին անպատրաստ և անկարգ վիճակի մեջ։ Նա խսկույն հայտնեց նըրանց, թե թշնամու թիվը շատ փոքր է, և թե չափազանց ամոթալի բան կլիներ մի բուռ գյուղերից խույս տալը, կորցնելով այն բոլոր օգուտները, որոնք ձեռք էին բերված այնքան թանկ գներով։

—Ամաչեցեք,—աղաղակում էր նա,—ամաչեցեք երկչոտ զինվորներ, ո՞ւր եք փախչում այդպես շտապով։ Միթե չե՞ք տեսնում, որքան փոքրաթիվ են այն ստահակները, որ համարձակվում են մեզ անհանգստացնել։ Միթե դուք նույն թալիշեցիները չե՞ք, որոնք մի քանի օր առաջ մահ և սարսափ էին տարածում Վարանդայի գյուղերի մեջ։ Ինչի՞ց եք վախենում դուք, ձեր տաղավարների հրդեհի՞ց, թե այդ մի բուռ մարդիկներից։ Սրբենք դրանց արյունով մեր սրերը և դրանով փարատենք մեր նախատինքը։ Երևի, դուք ցանկանում եք, որ ես ամաչելով հիշեմ, որ ձեր հրամանատարն եմ եղել։ Եկեք, եկեք հավաքվենք և ստիպենք զղջալ այդ հանդուգն հիմարներին, որոնց ես չեմ ճանաչում։ Խելքի եկեք, թալիշեցիք, եթե ոչ, երդվում եմ բոլոր սրբություններով, որ ես կոտորել կտամ ձեզ, ինչպես անպիտան ստրուկների, որոնք իրանց տերերից են վախենում։

Այսպես աղաղակելով, թուրը շարժելով և անհնազանդներին իր ոտքերի տակ ձգելով, մելիք Հուսեինը հավաքեց իր զորքերից

մնացածներին, մի կողմ տարավ, որպեսզի ժամանակ ունենա նրանց կարգի բերելու: Վարանդացիները, այլևս չտեսնելով թշնամիներին, վազեցին ավարի առնելու թշնամու բանակը, որն արդեն մոխիր էր դարձած: Հանկարծ նրանց ետևից լսելի եղավ խառնաձայն աղաղակ: Մելիք Հուսեինը իր մարդիկներով հարձակվեցավ Զամշուդի զորախմբի վրա և չորս կողմից պաշարեց նրան: Կռիվը նորոգվեցավ այժմ ավելի համառությամբ: Հուսեինը պատառելով թշնամու խումբը, մոտեցավ Զամշուդին, և երկուսի մեջ սկըսվեցավ առանձին մենամարտություն: Զամշուդին ազատեց նրա զրահը և սաղավարտը, իսկ Հուսեինին՝ նրա անհամեմատ ճարպկությունը: Զամշուդը խնայում էր նրան, բայց նա ամենևին չէր մտածում խնայել Զամշուդին: Նրա մանկահասակ կինը, ամուսնի մոտից չբաժանվելով, կռվում էր զարմանալի քաջությամբ: Հանկարծ Զամշուդը, իր նժույգը սաստիկ արագությամբ դարձնելու միջոցին, ասպանդակները կտրվեցան, և ինքը գլխիվայր թավալ գետնի վրա: Հուսեինը շտապեց օգուտ քաղել այդ դեպքից և պատրաստվում էր իր մահաբեր սուրը իջեցնել ոսոխի գլխին: Բայց Զամշուդի պահապան հրեշտակը այնտեղ կանգնած էր: Մանկահասակ Սոֆիան մի անթարթում դուրս է կորզում թուրը Հուսեինի ձեռքից և իր երկրորդ հարվածով նրան գլորում է գետին: Տեսնելով իրենց հրամանատարին ընկած, թալիշեցիները նույն րոպեում ցրիվ եկան, և արշալույսի առաջին ճառագայթները ողջունեցին վարանդացիների հաղթությունը: Ջանախչի բերդը ազատվեցավ թշնամու պաշարումից:

Պաշարվածները ամբողջ գիշերը անցկացրին բերդի պարիսպների վրա, չկարողանալով հասկանալ, թե արդյոք ովքեր պետք է լինեին նոր հարձակում գործողները, կամ բերդի շրջակայքում ինչեր էին կատարվում: Քամու շվշվոցը, անձրևի աղմուկը, որոտի սաստիկ գոռգյունը թույլ չէին տալիս նրանց մի բան լսել: Եվ վախենալով, միգուցե իրանց սխալմունքով Ջանախչին մատնեն թշնամու ձեռքը, նրանք չվստահացան բերդից դուրս գալ և մինչև առավոտ մնացին փակված նրա մեջ:

## III

## ԳԱՂՏՆԻՔԸ ԲԱՑՎՈՒՄ Է: ՓԱՆԱՀ ԽԱՆԻ ԳԱԼՈՒՍՏԸ

Մեծ ուրախությամբ Վարանդայի իշխանը իր ամրոցի պա-

բիսպներից տեսավ Ջումշուդին, որը հաղթական փառքով, իր խումբի հետ մտնում էր շարժական կամուրջին։ Հորեղբայրը և եղբորորդին ցնծության բացականչություններով վազեցին և միմյանց գիրկը ընկան։ Երբ անցավ հոգեզմայլության առաջին րոպեն, մելիքը ասաց.

—Հազար անգամ գոհություն կմատուցանեմ Ամենաբարձրյալին, որ քեզ, իմ սիրելի Ջումշուդ, և ոչ մի ուրիշին պարտական եմ ես թշնամիների պաշարումից ազատվելս։ Դու շահեցիր մի նոր իրավունք իմ երախտագիտությունը գրավելու համար։ Բայց ո՞վ է այդ գեղեցկադեմ երիտասարդը, որ կանգնած է քո մոտ։

—Դա իմ փրկիչն է, հորեղբայր, եթե դա չլիներ, դուք այլևս ինձ չէիք տեսնի։

—Ինչպե՞ս։

Ջումշուդը պատմեց մեզ արդեն հայտնի անցքը։ Վարանդայի մելիքը հիացմամբ գրկեց Սալիհային, համբուրեց, ասելով.

—Սիրելի երիտասարդ, քո մատուցած ծառայությունը այնքան անգնահատելի է, որ բարձր է ամեն տեսակ վարձատրությունից։ Պահանջիր ինձանից ինչ որ կամենում ես։ Եթե քո պահանջածը լինի միայն իմ իշխանության ներքո, երդվում եմ քեզ իմ սրով, որ դու անպատճառ կստանաս։

Այդ խոսքերի միջոցին Ջումշուդը բռնեց Սալիհայի ձեռքից, երկուսն էլ ծունկ իջան մելիքի առջև։

—Մենք խնդրում ենք ձեր ներումը, հորեղբայր, դա մեզ համար ավելի թանկագին է, քան ամեն տեսակ պարգևներ։

—Ներո՞ւմ... ձեր երկուսից... այդ ի՞նչ է նշանակում... ես չեմ հասկանում...

—Այդ երիտասարդը, հորեղբայր, այդ երիտասարդը...

—Ասա, շուտով, մի տանջիր ինձ։

—Այդ երիտասարդը... իմ կինն է։

—Քո կի՞նն է, և նա...

—Մահմեդականուհի է...

—Ինչպե՞ս, դու ամուսնացա՞ր մահմեդական աղջկա հետ և հրաժարվեցա՞ր մեր կրոնի սուրբ ծեսերից... Տեր Աստված, այդ ինչպե՞ս կարելի է։

Սալիհան գվարթ կերպով մեջ մտավ.

—Ես արդեն համարյա թե քրիստոնյա եմ. իմ ամուսինը պատ-



23—9

մեղ է ինձ բոլորը, ինչ որ վերաբերում է ձեր կրոնին։ Ես սիրում եմ քրիստոնյաներին և պատրաստ եմ քրիստոնյա լինել։ Ես կցանկանայի և մկրտություն ընդունել. դուք այնքան բարի եք և ներողամիտ, որ կօգնեք ինձ կատարելու իմ բաղձանքը։

Սալիհայի խոստովանության մեջ այնքան անկեղծություն և բարեհոգություն կար, որ Վարանդայի իշխանը բոլորովին հիացած մնաց նրա խոսքերից։ Նա վեր բարձրացրեց Ջումշուդին ու նրա կնոջը, գրկեց երկուսին, ասելով.

—Բախտավոր եղեք, իմ զավակներ, և միշտ բախտավոր, իսկ ինձ մնում է այսուհետև ուրախանալ ձեր երջանկությանը տեսնելով։

Ուրախ հրճվանքով Ջումշուդը և Սալիհան լսեցին այդ խոսքերը, որոնց մեջ բովանդակվում էր նրանց ապագա բարեբախտությունը և հույսը ավելի լավ ապագայի։

Մյուս օրը հրավիրվեցավ մի քահանա, որը կատարեց Սալիհայի մկրտության սուրբ խորհուրդը. իսկ երրորդ օրը նա ամուսնացավ Ջումշուդի հետ օրինավոր պսակով, քրիստոնեական սուրբ կրոնի ծեսերի համեմատ։

Սալիհայի ամուսնության մյուս օրը Փանահ խանը, իր քաջասիրտ ջիվանշիրցիների հետ, հայտնվեցավ Ջանախչի ամրոցի պարիսպների մոտ։ Վարանդայի մելիքը ուրախությամբ շտապեց դիմավորելու նրան։ Բարեկամական խոստումները երկու կողմից ևս թափվում էին գետի նման։ Փանահ խանը խորամանկ կերպով հրապուրում էր մելիքի խելքը, հայտնելով այն միտքը, թե իր ապագա բարձրանալու անկախությունը պետք է հիմնված լինի իր և նրա հետ կապվելիք դաշնակցության վրա։ Մելիքը, անհրաժեշտությունից ստիպված, փաղաքշում էր ջիվանշիրցիների գլխավորին, որովհետև առանց նրա աջակցությանը չէր կարող Խամսայի բոլոր մելիքների միացյալ ուժերին դեմ դնել։

Խանի գալուց հետո Ջանախչին դարձավ խնջույքների մի մեծ դահլիճ. բոլոր դեմքերի վրա կարելի էր տեսնել ուրախություն և բավականություն։ Բայց այդ զվարճությունների միջոցում Փանահ խանը չէր մոռանում իր ներքին խորհուրդները։ Նա միայն մի հարմար առիթ էր որոնում խոսակցելու մելիքի հետ, և այդ առիթը շատով տեղի ունեցավ։ Վարանդայի մելիքը տեղեկություն ստացավ, որ Թալիշի մելիքը, վշտանալով և զայրանալով իր կրած կո-

րուստների պատճառով, բանակցություններ սկսեց Խամամայի մյուս մելիքների հետ և արդեն կապեց նրանց հետ դաշնակցություն հակառակ Վարանդայի իշխանի: Նա իմացավ, որ պատերազմի պատրաստությունները կատարվում են խիստ եռանդով և շուտով պետք էր սպասել թշնամու մի նոր և ավելի զորավոր հարձակմանը: Այդ բոլորը ի նկատի առնելով, Վարանդայի մելիքը անհրաժեշտ համարեց խորհրդակցել Փանահ խանի հետ, մտածել այն նախապատրաստությունների մասին, որոնք պետք էր ձեռք առնել թշնամուց պաշտպանվելու համար: Իսկ Փանահ խանը մտածում էր օգուտ քաղել այդ հանգամանքներից և իրագործել իր վաղեմի բաղձանքները: Նա ասաց.

—Մելիք, թշնամիները սաստիկ զորավոր են, և որպես երևում է, դիտավորություն ունեն գործելու բոլորովին վճռական կերպով: Հարկավոր է սկզբից ապահովացնել իրան և պատրաստ լինել նրանց հարձակումների դեմ: Երբ դուք ապահովված կլինեք, այն ժամանակ ինքներդ կարող եք դուրս գալ կռվի դաշտը, առանց սպասելու, որ նրանք ձեզ մոտ շնորհ բերեն: Ձեր Ջանախչի բերդը պաշտպանվելու համար խիստ անհուսալի դիրք ունի: Պետք է ընտրել մի ավելի ամուր դիրք, և ես մի այդպիսի տեղ ի նկատի ունեմ, որի վրա բերդ հիմնելով, կլինենք այնտեղ բոլորովին ապահովված: Բացի դրանից, մելիք, ես դիտավորություն ունեմ ձեզանից բավականություն պահանջել այն սաստիկ վիրավորանքի համար, որ հասցրել է ինձ ձեր եղբորորդին:

—Ինչպե՞ս, նա համարձակվեցավ վիրավորե՞լ ձեզ:

--Խիստ ծանր կերպով,— ասաց Փանահ խանը ծիծաղելով.— նա փախցրեց իմ կնոջը:

—Ձեր կնո՞ջը: Բայց...

—Նրա այժմվան կինը իմ կինն էր...

—Այդ ես չեմ հասկանում...

--Շատ դժվարին չէ,—պատասխանեց խանը և սկսեց մանրամասնաբար պատմել բոլոր անցքը:

Հետո ավելացրեց.

—Դուք, կարծեմ, կհամաձայնվեք ինձ հետ, մելիք, որ ձեր եղբորորդին մեղանչել է հյուրասիրության սրբության դեմ: Նա եկավ ինձ մոտ իբրև դեսպան ձեր կողմից, բայց հափշտակեց իմ հարեմից իմ կնոջը, գործ դնելով իր ձեռնարկության համար նեն-

դավոր աստղագետի խորամանկությունները... Ի՞նչ կասեք մի այդպիսի վարմունքի մասին:

Մելիքը մնաց շվարած:

Փանահ խանը, նկատելով իր խոսքերի հաջող ազդեցությունը, շարունակեց.

—Մի բարկացեք, մելիք, թող մոռացության տանք անցյալը, և որպես ճշմարիտ բարեկամներ, աշխատենք որոնել հնարներ, որոնցմով կարելի լիներ համաձայնեցնել մեր փոխադարձ շահերը այն վարձատրության հետ, որ դուք ինձ պարտավոր եք: Այն տեղը, որի վրա ես առաջարկեցի բերդ հիմնել, պատկանում է ձեզ[5]: Տվեցեք ինձ այդ տեղը: Ես նրա վրա կկառուցանեմ մի բերդ, և այդ բերդը կծառայե իբրև պաշտպանողական ապահով ամրություն մեր երկուսի համար: Որովհետև ես հույս ունեմ, գոնե իմ կողմից, որ մեր բարեկամությունը մշտապես կշարունակվի, և վարանդացիները ջվանշիրցիների հետ կկազմեն մի ժողովուրդ:

Մելիքը, չհասկանալով Փանահ խանի խորամանկ նպատակները, որ թաքնված էին այդ փաղաքշական խոսքերի մեջ, ուրախությամբ ընդունեց նրա առաջարկությունը: Նա ուրիշ ճար չուներ. գտնվելով այնպիսի կրիտիկական հանգամանքների մեջ, կարոտություն ուներ նրա օգնությանը: Նա հայտնեց իր կատարյալ համաձայնությունը, վճռեցին մյուս օրը գնալ այն տեղը տեսնելու, որը նշանակված էր բերդի կառուցանելու համար:

## IV

## ՍԱԼԻՀԱՆ ԿՐԿԻՆ ՀԱՓՇՏԱԿՎՈՒՄ Է

Մթին գիշերը տարածել էր խավարը Ղարաբաղի վրա: Ոչ մի աստղ չէր փայլում երկնքից. օդը թանձր էր ու ծանր. ամեն ինչ նախազգուշակում էր փոթորկի մերձավորությունը, որը ամառային եղանակների ժամանակ ոչ սակավ անգամ պատահում է Ղարաբաղի հովիտներում:

Սալիհան միայնակ էր իր սենյակում, որը գտնվում էր Ջանախչի ամրոցի հյուսիսային աշտարակի ամենաբարձր հարկում: Այդ միջոցին Ջումշուդը գտնվում էր իր հորեղբոր մոտ, այն խորհրդի մեջ, որին մասնակցում էր և Փանահ խանը: Նրա մանկահասակ ամուսինը անհամբերությամբ սպասում էր երիտասարդին: Հան-

կարծ լսեց նա խիստ պարզ կերպով այս խոսքերը. «Ցած թողեցեք մի պարան ձեր աշտարակի լուսամուտից, ձեզ կտան տեղեկություններ, որոնք ձեզ համար խիստ կարևոր են»: Նա վախեցավ: Միևնույն ձայնը երկրորդ և երրորդ անգամ արտասանեց միևնույն խոսքերը: Հետո ավելացրեց. «Ոչնչից մի վախեցեք և շտապեցեք: Եթե դուք կատարելու չլինեք ձեր բարեկամի պահանջածը, հետո ինքներդ պիտի զղջաք... Բայց այդ շատ ուշ կլինի... գործը վերաբերում է Ջումշուդի կյանքի ապահովությանը»:

—Ջումշո՞ւդ... Աստված իմ,—բացականչեց Սալիհան,—այս րոպեիս, այս րոպեիս,—և վեր առնելով առաջին պատահած պարանը, ցած թողեց լուսամուտից: Երբ որ իմացավ, որ նրա ծայրին կապվեցավ մի ինչ-որ ծանր բան, վեր քաշեց պարանը դեպի ինքը: Նա տեսավ մի թուղթ, որ կապած էր քարի հետ, սկսեց շտապով կարդալ հետևյալը. «Մի մարդ, որ ջերմ կարեկցություն ունի ձեր բախտավորության համար, հայտնում է, որ մի նշանավոր դժբախտություն սպառնում է Ջումշուդին, որից նա ոչինչով չէ կարող ազատվել, եթե դուք չշտապեք փրկելու նրան: Հենց այս րոպեիս պետք է գաղտնի կերպով գաք այն ծառի մոտ, որը գտնվում է ճանապարհի մոտ, ձախ կողմում: Այնտեղ դուք կտեսնեք մի թիլիսման[8], որը կարող է վտանգից պահպանել ձեր ամուսնին: Բայց այդ մասին պետք է գաղտնիք պահել: Շտապեցեք, եթե ձեզ համար թանկ է Ջումշուդի կյանքը: Ձեզ շատ չեն ուշացնի. ոչ ոքի ցույց մի տվեք այդ թուղթը. ոչնչացրեք նրան և գաղտնիքը ծածուկ պահեցեք, որովհետև դրանից է կախված բոլորը»:

Սալիհան շփոթված երկյուղի մեջ ընկավ:

—Աստված իմ,—դարձյալ բացականչեց նա,—իմ սիրելի Ջումշուդը վտանգի մեջ է, կվազեմ ազատելու նրան: Բայց ինչպե՞ս: Առանց մելիքի հրամանի պահապանը ինձ թույլ չի տա դուրս գալ ամրոցից: Իսկ ինձանից պահանջում են գաղտնիք պահել... Շուտով հագուստս կփոխեմ, կասեմ, որ ես ուղարկված եմ մելիքի կողմից: Երբ որ գործը վերաբերում է իմ Ջումշուդի ազատությանը, այլևս ոչինչ չէ կարող ինձ վախեցնել...

Մեր հերոսուհին շտապով փոխեց հագուստը, վազեց դեպի շարժական կամուրջը:

—Թող տուր, շուտով,—գոչեց նա պահապանին,—մելիքը ուղարկեց ինձ գետից ջուր բերելու:

Պահապանք ցած թողեց շարժական կամուրջը։ Նա նետի նման սլացավ դեպի նշանակած ծառը։ Բայց հենց որ հասավ այնտեղ, խսկույն մի քանի հոգի շրջապատեցին նրան, բերանը կապեցին թաշկինակով, թևերը կաշկանդեցին պարանով և, հափշտակելով նրան, տարան արագությամբ անհետացան։

Խեղճ Սալիհա, և այսպես, դու զոհ եղար քո ջերմեռանդությանը, որ ունեիր դեպի Ջումշուդը, զոհ հրապուրքը սիրո և նենգավոր դավաճանության։ Ո՞ր երկիրը կտանեն քեզ քո հափշտակողները, ի՞նչ են կամենում նրանք, կամ ովքե՞ր են նրանք, այդ բոլորը գուցե մի ժամանակ կիմանանք մենք, բայց այժմ դառնանք դեպի Ջումշուդը։

Վերջացնելով բոլոր կարգադրությունները, որ վերաբերում էին մտադրված պատերազմական գործողությունների սկսելուն, մելիքը, Փանահ խանը և Ջումշուդը բաժանվեցան միմյանցից։ Այդ վերջինը վազեց ամրոցի այն կողմը, որտեղ հույս ուներ գտնել իր նազելի կենակցին։ Որպիսի սարսափ տիրեց նրա սրտին, երբ մըտնելով իր ննջարանը, այնտեղ չգտավ իր կնոջը։ Տղամարդի հագուստը, որը ինքը հագնում էր ճանապարհորդության ժամանակ, նույնպես անհետացած էր։ Արդեն հասկացավ... ուրեմն նա գընաց...թողեց նրան... նրան, որին այնքան սիրում էր... Այդ անկարելի բան է... այստեղ մի գաղտնիք պետք է լինի... դրա մեջ ծածկված է մի նշանավոր, կարևոր գաղտնիք... Այդպես էր մտածում Ջումշուդը և խելագարի նման վազում էր դեպի շարժական կամուրջը։

Պահապանից ստացած տեղեկություններից ստուգեց նա իրան հասած դժբախտությունը, ստուգեց, որ Սալիհան, առանց ոչ ոքից հարկադրված լինելու, ինքնակամ դուրս է եկել ամրոցից։ Նրա սիրտը կոտտավում էր. նա կամենում էր վազել նրա ետևից, իմանալ նրա մի այդպիսի անսովոր վարմունքի պատճառը։ Նա ավելի բարվոք էր համարում մեռնել, քան թե մնալ անգիտակցության մեջ։ Նա վազեց իր հորեղբոր մոտ։ Մելիքը, տեսնելով նրան, անհանգիստ կերպով ոտքի ելավ։ Երիտասարդի մռայլված, այլայլված՝դեմքը, վրդովված աչքերը ցույց էին տալիս, որ մի որևէ սարսափելի դեպք պետք է պատահած լինի։

—Ի՞նչ է պատահել, ի՞նչ է պատահել,—գոչեց մելիքը ամբողջ մարմնով դողալով,—ի սեր Աստուծո, ասա, ի՞նչ է պատահել քեզ։

—Հորեղբայր, շտապեցեք... գնանք... գնանք...

—Ո՞ւր, ինչո՞ւ համար...

—Ես կորած եմ, ես կմեռնեմ... ախ, մի՛ տանջեք ինձ, գնանք... Կարելի է, դեռ ժամանակ կունենանք նրա ետևից հասնելու...

Այսպես խոսելով, նա քաշ էր տալիս կիսահագնված մելիքին։

—Ուշքի եկ, Ջումշուդ, ի՞նչ ես կամենում դու, ո՞ւր գնանք, ո՞ւմ որոնենք, ի՞նչը քեզ այդ դրության մեջ դրեց։

—Իմ Սալիհան... իմ Սալիհան տղամարդի հագուստով հեռացավ ամրոցից. նա գնաց Աստված գիտե, թե որտեղ և ինչու համար։ Նա ինձ թողեց։ Ինչո՞վ ես առիթ տվի նրա մի այդպիսի վարմունքին, ես, որ այնքան սիրում էի նրան, որի համար մոռացա ամեն ինչ աշխարհում, որի համար զոհեցի ամեն ինչ։ Այդ ի՞նչ է նշանակում։ Նա փախավ և ինքնահոժար կերպով... իր կամքով։ Կարելի՞ էր մի այդպիսի բան սպասել։ Ախ, հորեղբայր, խղճացեք ձեր անբախտ, լքված, խաբված եղբորորդու վրա։ Կյանքը անտանելի կլինի ինձ այսուհետև. ես չեմ կամենում այլևս ապրել, և պետք չէ ապրել... Ամեն ինչ հակառակում է ինձ... և ես կգնամ բնության հակառակ, որը պատրաստել է ինձ մշտական տանջանքի...

Արտասանելով այդ խոսքերը՝ նա խլեց խենջարը և շտապեց այդ մահացու զենքը դարձնել դեպի ինքը, բայց մելիքը բռնեց նրա ձեռքը, որ պատրաստ էր անձնասպանություն գործելու։

—Այդ ի՞նչ ես անում, անխելք,—աղաղակեց մելիքը,— եթե Սալիհան թողեց քեզ, ուրեմն նա այլևս չարժե դրան, որ դու նրա համար անձնատուր լինես այս աստիճան հուսահատության։ Իսկ եթե որևիցե մեկը հափշտակել է նրան, այժմ շատ ուշ է որոնելու նրանց։ Գիտե՞ս արդյոք, թե դեպի ո՞ր կողմը փախել են նրանք։ Կասկածո՞ւմ ես արդյոք որևիցե մեկին այդ հափշտակության մեջ։ Դու չես պատասխանում։ Մի՞թե քո լռությունը ցույց չէ տալիս, որ քեզ հայտնի չեն իմ հարցերը։ Հիմա դեպի ո՞ւր գնանք մի այսպիսի մթին գիշերում։ Կարելի՞ է արդյոք չմտածել, որ մեր թշնամիները գիշերվա գայլերի նման չեն մռնչում մեր չորս կողմում, և թե մենք չենք դառնա զոհ նրանց կատաղության և մեր անխոհեմության։ Խելքի եկ, Ջումշուդ, արիացիր և համբերող եղիր։ Մենք հետո կաշխատենք ամեն միջոցներ ձեռք առնել քո Սալիհայի ազատության համար, եթե նա հափշտակված է միայն...

—Ախ, եթե նա հափշտակված լիներ միայն,—բացականչեց Ջումշուդը,—այն ժամանակ ես կհետևեի նրա ետևից մինչև աշխարհի վերջին ծայրը, մինչև Մեծ ծովի հատակը: Բայց ավաղ, նա հափշտակված չէ, նա ինքնահոժար կերպով թողեց ինձ: Ինչպես անբախտ եմ ես... բայց չլինի՞ թե Փանահ խանը հանդգնեցավ հրապուրել նրան: Ոչ, ոչ, այդ անկարելի է, այդ աներևակայելի է... Տեր Աստված, նա իր հոժարությամբ թողեց ինձ, նա արհամարհեց իմ սերը... Հորեղբայր, խղճացեք խաբված, անբախտ Ջումշուդի վրա: Ես ամաչում եմ նայելու ձեր երեսին, ես, որ Սալիհայի սիրո համար մինչև անգամ մեղանչեցի մեր սուրբ կրոնի օրենքների դեմ, իսկ նա այսպես անխիղճ կերպով խաբեց ինձ: Բայց ես կըգտնեմ նրան և այդ խենջարը կցցեմ այն անհավատարիմ սրտում և... բայց ես, որ այնքան սիրում էի նրան, մի՞թե կարող եմ... ոչ, ոչ... Տեր Աստված, Տեր Աստված, որքան անբախտ եմ ես...

Իզուր մելիքը գործ էր դնում ամեն միջոցներ Ջումշուդին հանգստացնելու համար, իզուր վատնում էր իր բոլոր պերճախոսությունը նրան համոզելու համար, թե նա իզուր է տանջում իրան մի այնպիսի կնոջ համար, որը ինքը իրան անարժան դարձրեց նրա ամուսին լինելու համար: Հուսահատված երիտասարդը փետում էր իր գլխի մազերը և ցույց էր տալիս խելագարության բոլոր նշանները: Ամրոցի մեջ բոլորը հուզված էին այդ անցքի պատճառով: Մելիքը, որպեսզի փոքր-ինչ հանգստացնե իր եղբորորդուն, դիտմամբ ուղարկեց զանազան կողմեր զինված մարդիկ, եթե կարելի էր, գտնեին փախստականների հետքերը, բայց նրանց բոլոր խուզարկությունները ապարդյուն անցան: Գիշերային խավարը անթափանցիկ քողով ծածկել էր այդ անցքը: Ամբողջ գիշերը ոչ մի մարդ ամրոցի մեջ չպառկեց քնելու, բոլորը վրդովված էին, բոլորը ափսոսում էին, որ Ջումշուդին վիճակվեցավ մի այնպիսի դժբախտություն: Մինչև անգամ ինքը՝ Փանահ խանը մոռացավ այն վիրավորանքը, որ նրան պատճառել էր Սալիհայի ամուսինը: Նա ևս մյուսների նման ցավակցում էր երիտասարդի վիճակին և տարուբերվում էր զանազան կարծիքների մեջ, թե ի՞նչ պատճառներ պետք է դրդած լինեին Սալիհային փախչել մի այնպիսի ամուսնուց, որին այնքան պաշտում էր նա, որին միշտ ցույց էր տված իր անկեղծ սիրո հավաստիքը: Այսպես տխրությամբ և խռովության մեջ անցավ Ջանախչի բերդում այն գիշերը, որի առավոտը պետք է սկիզբը դրվեր անմատչելի Շուշիի հիմնարկությանը:

## V

## ՇՈՒՇԻ ԲԵՐԴԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ։ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՂԻՀԱՅԻ ՄԱՍԻՆ

*Արեգակը փայլում էր իր կատարյալ լուսավորության մեջ։ Բնությունը գիշերային փոթորկից հետո, կարծես թե, կրկին զարթնեց նոր փառքով և պայծառությամբ։ Լեռներից հոսում էին հազարավոր առվակներ և իրանց բարեբար հեղանյութով ողողում էին կանաչազարդ հովիտների բուսականությունը։ Անտառապատ լեռները երևում էին ավելի կենդանացած, թարմ զեփյուռը տարածում էր հովիտների մեջ խիստ ախորժելի զովություն։*

*Այդ միջոցին Փանահ խանը, Վարանդայի մելիքը և Ջումշուդը դուրս եկան Ջանախչի ամրոցից և գնում էին դեպի հյուսիսային կողմը։ Մի ահագին զինված խումբ առաջնորդում էր նրանց։ Անցնելով լեռնային շղթաները՝ նրանք սկսեցին վեր ելանել ավելի ու ավելի բարձր։ Նրանց առջև կանգնած էին հսկայական ժայռեր, ծածկված անտառի և մամուռի մեջ։ Յոթ վերստաչափ բարձրանալով լեռան վրա, վերջապես հասան նրանք մի ընդարձակ տափարակի, որը գտնվում էր սարի բարձրավանդակի վրա։ Այդ տափարակից կարելի էր նշմարել ամենահեռավոր տեսարանները, կարելի էր տեսնել բազմաթիվ գյուղեր, որ սփռված էին հովիտների վրա, կարելի էր հիանալ խաղողաբեր այգիների շքեղությամբ և գեղեցիկ լեռների պատկերներով, որ ծածկված էին խիտ անտառներով։ Իսկ այդ բոլորը այնքան անորոշ կերպով էին երևում, որ կարելի էր մտածել, թե նրանք շատ փոքրիկ առարկաներ են։ Այդ տափարակը երեք կողմից բոլորովին անմատչելի էր, որովհետև շրջապատված էր պարսպի նման սեպացած ժայռերով։ Միայն հյուսիսային կողմից կարելի էր բարձրանալ դեպի հիշյալ տափարակը։*

*—Ահա,—ասաց Փանահ խանը բոլոր շրջակայքը ուշադրությամբ հետազոտելուց հետո,—ահա այդ տափարակը ամենահարմար տեղն է բերդ շինելու համար։ Համաձա՞յն եք, մելիք, ինձ տալ այդ տեղը։*

*—Բայց,—ասաց մելիքը,—նա որքան ընդարձակ է…*

*—Երեք կողմերը ամրացնելու պետք չունենք, իսկ չորրորդ կողմից կկառուցանենք պարիսպներ և աշտարակներ, որոնց բարձ-*

թյունից կարելի կլինի սարսափեցնել բոլոր սատահակներին, ա-րանք կհանդգնեն մոտենալ մեզ:

—Լավ: Ես համաձայն եմ: Եգուցվա օրից մենք կսկսենք բեր-դի հիմնարկությունը:

—Իհարկե. և մինչև աշնան վերջը կարելի կլինի տեղավորվել այդ նոր քաղաքում:

—Բայց ի՞նչ անուն տանք մենք այդ քաղաքին:

—Այստեղ անտառները այնքան գեղեցիկ են, և բոլոր շըր-ջակայքը այնքան պարզ տեսնվում են, կարծես թե Թափանցիկ ա-պակու միջից երևալիս լինեն, ավելի հարմար կլիներ կոչել բերդը Շուշա[7]:

—Շուշա, շատ գեղեցիկ անուն է,—կրկնեց մելիքը,—շնորհա-վորում եմ ձեզ, որպես Շուշայի տիրոջը:

Բոլորը ցած իջան ձիաներից, և յուրաքանչյուրը վեր առնելով մի-մի քար, կիտեցին միմյանց վրա և կազմեցին փոքրիկ բլրակ: Փանահ խանը, կանգնելով նրա վրա, հանդիսավոր կերպով արտա-սանեց.

—Եվ թող տարածի Ալլահը իր օրհնությունը նորակառույց բեր-դի վրա, և թող ծաղկի նա, որպես Գյուլիստանի չքնաղ վարդերը[8] և որպես մարգարեի տան դրախտի ծառը: Եվ թող լինի նա մի ժամանակ ամբողջ Ղարաբաղի մայրաքաղաքը և թող փառավորվի նա հրաշալի անցքերով: Եվ թող խոնարհվեն նորակառույց բերդի զորության առջև բոլոր շրջակա իշխանությունները, և թշնամինե-րը թող չքանան, որպես մոխիր...

Այդ խոսքերը վերջացնելուց հետո նա իր աջը նախ տարավ դեպի ճակատը, հետո նույն ձևով շոշափեց գետինը, վեր առեց մի բուռ հող և ցրվեց կիտած քարերի վրա: Նրա օրինակին հետևե-ցին բոլորը:

Թե ճանապարհորդության ամբողջ ընթացքում և թե բերդի հիմնարկության ժամանակ Ջամշուդը պահպանում էր խորին լռություն: Բոլորովին ընկղմված իր սրտի ցավերով, համարյա մե-քենաբար հետևում էր նա Փանահ խանին և իր հորեղբորը, մեքե-նաբար հետևում էր նրանց օրինակին և բերդի հիմնարկության գործողությունների ժամանակ, իսկ նրա մտածությունները սլացել էին խիստ հեռու, նրանք թափառում էին զանազան ենթադրու-թյունների մառայլի մեջ և հուսահատության քաոսի մեջ...

Երբ որ մելիքը իր խմբի հետ սկսեց ցած իջնել սարից և ուղևորվեց դեպի Ձանախչի, այդ միջոցին Ջումշուդը խորասուզված դառն մտածությունների մեջ, իր ձին քշում էր այնքան դանդաղ կերպով, որ բավական տարածությամբ նրանցից հետ մնաց: Հանկարծ նրա ձին խրտնելով, նետվեցավ դեպի մի կողմ: Երիտասարդը բարձրացրեց աչքերը, տեսավ սևազգեստին, որ մոտենում էր իրան:

—Ողջույն, մելիք Ջումշուդ,—ասաց նա,—վաղուց է, շատ վաղուց է, որ ես չեմ տեսնվել ձեզ հետ, բայց միշտ ձեր վրա էի մտածում:

—Ինչպե՞ս, այդ դո՞ւ ես, ես քեզ բոլորովին կորած էի համարում: Ինչո՞ւ համար մինչև այժմ դու չեկար ստանալու այն պարգևը, որ ես խոստացել էի քո կատարած ծառայությունների համար: Բայց, ախ, անօգուտ, բոլորովին անօգուտ ծառայություն...

—Մի ասացեք իմ ծառայությունը, մելիք, ես բոլորը գիտեմ: Զանազան կարևոր պատճառներ ստիպում են ինձ դեռևս ծածկված մնալ: Ես չեմ կարող գնալ Ձանախչի, չեմ կարող հայտնվել ձեր հորեղբոր մոտ: Բայց ես գիտեմ, թե որտեղ է ձեր ամուսինը...

—Դու գիտե՞ս, ով բարերար ոգի կամ մարդ, չգիտեմ ինչպես կոչեմ քեզ, ասա, որտե՞ղ կարող եմ գտնել նրան, ի՞նչ պատճառով նա թողեց ինձ:

—Նա ստիպված էր թողնել ձեզ. նրան խիստ խորամանկ կերպով խաբեցին: Մտածելով ազատել ձեզ դժբախտությունից՝ նա ինքը զոհ դարձավ ձեր անգութ թշնամիների նենգությանը:

—Ուրեմն նրան հափշտակեցին, ուրեմն նա իր հոժարությամբ չէ թողել ինձ: Երկնային առեղծված, գոհություն եմ մատուցանում քեզ: Սևազգեստ, դու վերադարձրիր իմ կյանքը: Հիմա ասա, այժմ որտե՞ղ է նա:

—Թալիշի մելիքի իշխանության ներքո: Նրա որդին՝ սա-հակ Հուսեինը, որը առաջնորդում էր Ձանախչին պաշարող զորքերին, որպես ձեզ հայտնի է, հաղթվեցավ ձեզանից և փոքր էր մնում, որ ինքը պիտի կյանքից զրկվեր ձեր քաջասիրտ ամուսնու ձեռքով: Նա հեռացավ՝ լի կատաղությամբ, երդվելով վրեժխնդիր լինել ձեզանից: Բայց Փանահ խանի գալուստը, որը ունեցավ ծանրակշիռ նշանակություն և ուժեղացրեց ձեր հորեղբոր կողմը, միևնույն ժամանակ արգելեց Հուսեինին կատարելու իր

դիտավորությունը, այն է՝ հարձակվել ձեզ վրա զինված ուժերով։ Այդ ժամանակ նա դիմեց խորամանկությունների։ Մի քանի օր ծածուկ կերպով թափառելով Զանախչի մերձակայքում՝ նրան հաջողվեց մուրացկանի կերպարանքով մտնել ձեր ամրոցը։ Այստեղ նա տեղեկացավ բոլորը, ինչ որ նրան պետք էր. իմացավ սույզ պատճառը, որով դուք հրաժարվեցաք ամուսնանալ նրա քրոջ հետ, իմացավ, որ իրան հարվածող պատանին էր ձեր Սալիհան։ Նրա սիրտը բորբոքված էր բարկությամբ. նա վճռել էր ինչ միջոցով և լիներ, անպատճառ հափշտակել ձեր ամուսնին[9]։ Երկար մտածում էր նա զանազան հնարների վրա, վերջապես գտավ մեկը, որ հաջողացրեց նրա դիտավորությունը...

Այստեղ աստղագետը պատմեց այն անցքը, որ մեզ արդեն հայտնի է նախընթաց գլխից։

—Ես,—շարունակեց նա,—չէի կարող արգելել նրան կամ խափանել նրա դիտավորության կատարումը։ Բայց աննկատելի կերպով հետևում էի նրան և իմացա, որ նրանք կամենում են ձեզ մշտապես զրկել Սալիհայից, պահելով ձեր կնոջը որպես գերի Ջեյլա բերդում, և չի պիտի ազատեն նրան, մինչև դուք չամուսնանաք ձեր առաջին նշանածի հետ։ Այդ պահանջում է նրանց վիրավորված հպարտությունը։ Ես իմացա, որ Փանահ խանը դիտավորություն ունի շուտով կառուցանելու մի բերդ այդ լեռների վրա և ձեր հորեղբոր և ձեզ հետ պիտի գնա հետազոտելու բերդի տեղը։ Այդ առիթից օգուտ քաղելով՝ սպասում էի միջոց գտնել ձեզ հետ տեսնվելու։ Եթե մենք այժմ չհանդիպեինք միմյանց, ես ստիպված կլինեի գնալ Զանախչի, այնտեղ ձեզ որոնելու համար, չնայելով այն վտանգին, որ սպառնում է ինձ...

—Հա՛, երբ որ այդպես է,—գոչեց Ջամշուդը,—ես դուրս կկորզեմ նրան իմ թշնամու ձեռքից։ Ես կամ մոխիր կդարձնեմ նրանց Ջեյլան, կամ ինքս կոչնչանամ...

—Մելիք, չափավորեցեք ձեր բարկությունը, նա ոչ միայն օգտավետ լինել կարող չէ, այլ մինչև անգամ կարող է վնասակար լինել ձեր Սալիհայի համար։ Առժամանակ պետք է համբերել, հետո գործել որպես հարկն է։

—Բայց մի՞թե ես այժմ չեմ կարող...

—Կարող եք, բայց ավելի լավ կլինի, որ գործը թողնեք ինձ, որ ես աշխատեմ գաղտնի կերպով և զգուշությամբ...

—Ոչ, ոչ,—պատասխանեց Ջամշուդը,—մի՞թե ես կարող եմ թույլ տալ չարագործներին, որ անպատվեն իմ Սալիհային: Երբեք, երբեք: Իմ սուրը մեր մեջ դատավոր կլինի: Ջեյվան շրջապատված չէ անմատչելի ժայռերով, ինչպես մեր նոր կառուցվող Շուշին: Եկ ինձ հետ, ես քեզ համար ներողություն կխնդրեմ հորեղբորից...

—Ոչ, մելիք, չեմ կարող:

—Ինչո՞ւ:

—Կան պատճառներ, որ դուք հետո կիմանաք. իսկ եթե դուք բռնությամբ վճռել եք գնալ Ջեյվա...

—Կգնամ, անպատճառ կգնամ...

—Ցանկանում եմ ձեզ հաջողություն, մնաք բարյավ, մելիք. ես կաշխատեմ մյուս անգամ ես ձեզ առիթ տալ համոզվելու, որ ես ձեր ամենահավատարիմ ծառան եմ...

Բաժանվելով ամրոցից՝ Ջամշուդը արագությամբ քշեց իր ձին և համարյա Ջանախչիի մոտ հասավ իր հորեղբորը, որը սաստիկ անհանգիստ էր նրա բացակայության պատճառով: Երբ որ պատմեց նրան իր հանդիպելը ամրոցապետի հետ, մելիքը ասաց.

—Այդ անիրավը կարող է պիտանի լինել շատ գործերում: Դու հիմա ի՞նչ ես կամենում անել, Ջամշուդ:

—Գնալ Ջեյվայի վրա, հիմքից կործանել նրան, մոխիր դարձնել ավազակների բնակարանները, կամ ազատել իմ Սալիհային, կամ թողնել այնտեղ իմ գլուխը:

—Գրկիր ինձ, սիրելի Ջամշուդ,—ասաց մելիքը,—ես տեսնում եմ քո մեջ հերոսական հատկություններ, դրա համար պարծենում եմ քեզանով: Ափսոս, որ ես Ռուստեմ[10] անունը չդրեցի քեզ, պարսից այդ մեծ հերոսի անունը կրում էր Ղարակասանի հռչակավոր իշխաններից մեկը[11]: Ե՞րբ պետք է դուրս գալ...

—Էգուց, լուսանալուն պես...

—Իմ բարեկամ Փանահ խան, դու կտա՞ս Ջամշուդին մի մասը քո քաջ ջիվանշիրցիներից:

—Հազար հոգի իմ ամենաընտիր քաջերից, սիրելի Ջամ-

շուդ,— ասաց Փանահ խանը։— Հավատա, որ ես հարգել գիտեմ ամեն մի հերոսական գործողություն։

—Իսկ ես տալիս եմ հինգ հարյուր հոգի իմ վարանդացիներից, —պատասխանեց մելիքը։— Եվ թող օրհնե աստված Ջումշուդի ձեռնարկությունը, որովհետև արդարությունը բոլորովին նրա կողմն է։

## VI

## ՋՈՒՄՇՈՒԴԸ ԴՈՒՐՍ Է ԳԱԼԻՍ ԹԱԼԻՇԻ ՄԵԼԻՔԻ ԴԵՄ

Նոր ծագող արեգակը արդեն ճանապարհի վրա ողջունեց Ջումշուդին իր զորախմբի հետ, որը բաղկացած էր հազար և հինգ հարյուր զինվորներից։ Ամենալավ ցեղին պատկանող Ղարաբաղի նժույգները[12], որոնք ոչ առանց պատճառի հռչակված են իրանց գեղեցկությամբ և թեթևաշարժությամբ, թռչում էին նրանց տակին։ Զինվորներից շատերը հագած ունեին թեթև զրահներ, ոմանք կրում էին վահաններ, ոմանք՝ սաղավարտներ, իսկ մնացածները՝ փափախներ։ Համարյա բոլորի թրերը և խենջարները Շամի[13] գործ էին։ Նրանց ուսերից քարշ էին ընկած պարսկական երկայնափող հրացաններ, որոնց կոնդակները շեղ կերպով զարդարված էին սադաֆով, ոսկյա և արծաթյա գրվագներով և զանազան օտարոտի նկարներով։ Ուրախ ու զվարթ սպասում էր այդ աներկյուղ զորախումբը մի հանդուգն ասպատակության համար։ Նրանք գիտեին, որ կործանելով Զեյվան, կարելի է շահվել հարուստ ավարով։ Այդ զինվորները ամեն ինչ, որ ստացվում էր զինված ձեռքով, համարում էին օրինավոր կողոպուտ։

Ջումշուդը, վառված սաստիկ անհամբերությամբ, հանգստություն չէր տալիս իր զորախմբին։ Նրանք, որպեսզի կարճացնեն ուղին, գնում էին Վերին Ղարաբաղի ճանապարհով, լեռնային բարձրավանդակների վրայով, ցած էին իջնում երկարատև զառիվայրերից և դիմում էին գետի հին կամուրջը, որ շինված էր մրրկածուփ Թարթառի[14] վրա։ Օրը հասած էր իր վախճանին, նրանք իրենց ձիաները ջրում էին այդ աղմկալի գետի ափերում, որը վազում էր նեղ փապարների միջով։ Ջումշուդը բորբոքված էր այն ցանկությամբ, որքան կարելի է շուտով կատարել իր նպատակը, այդ պատճառով խիստ դժվարությամբ համաձայնվեցավ

գիշերը անցկացնել Թարթարի մերձակայքում: Այստեղ հարավային կողմի դաշտը, որ տարածվում էր լեռների ստորոտում, ծածկված էր դալար խոտերով: Մի այսպիսի տեղ անհրաժեշտ էր հոգնած ձիանները հանգստացնելու համար, որ կարելի լինի գիշերը Ճելվայի վրա հանկարծակի հարձակում գործել:

Բարձի փոխարեն իր փափախը դնելով քարի վրա և գլուխը խոնարհեցնելով նրա վրա, ծածկված թանձր յափունջիով, պառկած էր Ջումշուդը Թարթարի ափի մոտ: Աղմուկը, որ առաջ էր գալիս այդ լեռնային գետի հոսանքից, միայն այդ աղմուկը խանգարում էր խորին լռությունը, որ թագավորում էր նրա ափերի մոտ: Երկինքը պարզ էր. միլիոնավոր աստղեր փայլում էին նրա գլխի վրա, թափելով իրանց դողդոջուն լույսը: Աջ և ձախ կողմերից ձգվում էին լեռների հսկայական գագաթներ, որոնք շատ տեղերում դեռ ծածկված էին մշտական ձյունով: Գիշերը ցուրտ էր և խոնավ: Չնայելով իր սաստիկ հոգնածությանը, Ջումշուդը դարձյալ չկարողացավ քնել: Զանազան մտածություններ, մինը մյուսից ավելի մռայլ, նկարվում էին նրա երևակայության մեջ: Նա ներկայացնում էր իր մտքում Սալիհային որպես մի գերի, կաշկանդված շղթաներով, որը ծառայում էր իր թշնամիների հաղթանակի ուրախությունը ավելացնելու համար: Նրան այնպես էր թվում, իբր թե տեսնում է իր սիրելին ենթարկված ամեն տեսակ տանջանքների, տեսնում է, թե որպես Հասանը և նրա քույրը հայհոյանքներ էին թափում անպաշտպան գահի վրա... Նա վեր թռավ պառկած տեղից, սառն քրտինքը պատեց նրա ճակատը: Նա ձեռքը տարավ դեպի սուրը, կռվում էր իր երևակայության ստեղծած ցնորքների հետ: Հետո հուշի գալով՝ զայրանում էր գիշերվա վրա, որ այնքան երկար շարունակվում էր, հրավեր էր կարդում վաղորդյան լույսին, որը դեռ շատ հեռու էր, և կրկին ընկնում էր քարի վրա, հուսահատ դրության մեջ բողոքելով, թե ինչու քնությունը նրան չէր հնազանդվում:

Քունը կարճ ժամանակով փակեց նրա աչքերը: Բայց այդ կարճատև հանգստության րոպեներում հրեշավոր ցնորքները հալածում էին նրան: Նրան երևում էր, թե ինքը լողում է արյան մեջ և շղթաներում կապկապած, արգելված է մի մթին ներքնատան մեջ: Ինչ-որ ձայն կոչում է նրան իր մոտ, արտասանում է նրա անունը: Այդ արտասանության մեջ ճանաչում է նա իր նազելի Սալիհայի ձայնը: Աչքերը բարձրացնում է, տեսնում է նրան տարածված գետ-

նի վրա, շաղախված արյան մեջ։ Աշխատում է վազել նրա մոտ, բայց իզուր, շղթաները բռնում են նրան։ Նա ջանք է անում խորտակել իր կապանքները։ Վերջապես նրանք կտրվեցան, և նա զարթնեցավ։

Արևելքում արդեն նշմարվում էր առավոտյան թույլ, գորշագույն լույսը։ Բացվող արշալույսի նշույլը սաստիկ ուրախացրեց Ջումշուդին։ Նա արագությամբ վեր թռավ իր բացօթյա անկողնից, սկսեց զարթնեցնել զինվորներին, որոնք սաստիկ հոգնածության պատճառով գտնվում էին խորին քնի մեջ։ Քաջասիրտ ղարաբաղցիները շուտով պատրաստվելով, ճանապարհ ընկան։ Նոր ծագող արեգակը իր ճառագայթները տարածեց նրանց վրա այն ժամանակ, երբ նրանք արդեն գտնվում էին հովտի մեջ, լեռների մյուս կողմում։ Նրանք կարող էին մինչև կեսօր հասնել Զեյվայի մոտ։ Բայց որովհետև վճռված էր գիշերային հարձակում գործել, այդ պատճառով նրանք մեղմացրին իրանց ձիաների արագ ընթացքը, գնում էին ավելի հանդարտ քայլերով։

Փոքր-ինչ առաջ Ջումշուդը հրավերք էր կարդում արեգակին, ցանկանում էր, որ նա շուտ ծագե, իսկ այժմ դժգոհ էր, թե ինչու նա այնպես դանդաղ կերպով էր հոլովվում երկնքի կապույտ կամարի վրայով։ Եթե նրանից կախված լիներ, նա նույն րոպեում կխորասուզեր ամենջյան պայծառ լուսատուին օվկիանոսի ջրերի մեջ և նրա փոխարեն կկանչեր մթին գիշերը։ Վերջապես ցերեկվա լուսատուն մոտեցավ իր մուտքին։ Արևմտյան կողմում երեկոյան վերջալույսը արյունի գույն ստացավ։ Կարծես թե, դա նախագուշակում էր այն արյունոտ տեսարանը, որ շուտով պիտի հանդիսանար։ Ջումշուդը ուրախությամբ նայում էր, թե որպես գիշերը տիրում էր տիեզերքին, և երկնային կամարը հետզհետե ծածկվում էր մթին խավարով։ Նա փափագում էր մթության, փափագում էր այն րոպեին, երբ կարող կլիներ սուր և հուր մտցնել Զեյվա բերդի մեջ, կորզելով իր Սալիհային Թալիշի մելիքի ձեռքից և իր թշնամիների արյունով շաղախելով նրանց կործանված բնակարանների մոխիրը։

Վերջապես երեկոյան վերջալույսը բոլորովին հանգավ։ Լուսինը առժամանակ իր թույլ լույսով դեռ լուսավորում էր արևմուտքը, վերջը նա ևս մայր մտավ։ Ամպերը սկսեցին ծածկել երկնքի երեսը. աստղերը թաքնվեցան, հասավ այն րոպեն, որին վաղուց սպասում էր Ջումշուդը։

## ԳԻՇԵՐԱՅԻՆ ՀԱՐՁԱԿՈՒՄ ՋԵՅՎԱՅԻ ՎՐԱ։ ՋՈՒՄՇՈՒԴԻ ԳԵՐՎԻԼԸ

Օգուտ քաղելով գիշերային խավարից, Ջումշուդի ձիավորները, առանց շշուկ բարձրացնելու, մոտենում էին Ջեյվային։ Բերդի մեջ ոչ ոք հարձակում չէր սպասում։ Բոլոր բնակիչները հանգիստ էին, և անհոգությունը մինչև այն աստիճան էր հասած, որ ոչինչ նախազգուշություններ գործ դրած չէին։ Երբ որ բոլորովին մոտեցան բերդին, Ջումշուդը հրամայեց ձիավորներին շտապել։ Նրանցից հինգ հարյուր հոգի թողնելով ձիաների մոտ՝ մնացածների հետ նա հարձակվեցավ Ջեյվայի վրա, որ էր Թալիշի մելիքի աթոռանիստ բերդը։ Իր ձիավորներին բաժանել էր նա չորս մասի, որոնց յուրաքանչյուրը բաղկացած էր 250 հոգուց։ Հանկարծ բերդի բոլոր չորեքկողմից լսելի եղան Ջումշուդի ձիավորների սոսկալի աղաղակները, որոնք բռնությամբ ներս մղվեցան ամրոցի մեջ։ Շատ տեղերում հրդեհի լույսը սկսեց առաջ ընթանալ հրեղեն գետի նման։ Սարսափած բնակիչները վազվզում էին հետ ու առաջ, առանց հասկանալու, թե ինչ է կատարվում իրանց հետ։ Թե վարանդացիները և թե ջվանշիրցիները զանազանություն չէին դնում ոչ հասակի և ոչ սեռի։ Ամեն հանդիպողները կոտորվում էին նրանց սրերի հարվածներից։ Գնդակների ֆշֆշոցը, հրացանների որոտը, կործանվող շինությունների դղրդոցը, կնիկների հառաչանքը, երեխաների լացը, տղամարդերի աղաղակները, Ջումշուդի ձիավորների կատաղի գոռում-գոչումները, նրանց թրերի և խենջարների շառաչյունը, վիրավորների հեծությունը, մեռնողների խռխռոցը, արյան ճապաղիքը, որ միախառնվում էին ամեն տեղ ճարակող կրակի բոցերի հետ,—այդ բոլորը ներկայացնում էին այն գիշերվա սարսափելի պատկերը։

Թալիշի մելիքը և որդին հենց որ իմացան հարձակման առաջին նշանները, շտապեցին հավաքել իրանց զորքերը թշնամուն ընդդիմադրելու համար։ Բայց նրանք այն աստիճան շփոթված էին, որ չգիտեին,թե դեպի որ կողմը դիմեն։ Մի տեղում նրանք հանդիպեցին վարանդացիներին. սկսվեցավ կռիվը ամենայն կատաղությամբ։ Կռիվը կատարվում էր դիակների կույտերի և կիսավառ խրճիթների ավերակների վրա, իսկ նրանց ետևից լսելի էին լինում

խեղճ թալիշեցիների հուսահատ աղաղակները: Նրանք վազեցին գետի այն կողմը: Հանկարծ մի այլ կողմում լսելի էին լինում չվանշիրցիների հաղթական աղաղակները, և կրակը տարածվում էր Ջեյվալի մեջ: Ջումշուդը, որ սկզբից առանձին պատվեր էր տված իր զինվորներին, որ չմտնեն ամրոցը առանց իր կարգադրության, վերջապես հենց նրա պարիսպների մոտ միացրեց իր բոլոր զինվորներին: Այդ միջոցին Թալիշի մելիքը իր որդի Հուսեինի հետ թափառում էր կիսակործան Ջեյվալի մեջ: Այստեղ կրկին նորոգվեցավ կռիվը ավելի սաստկությամբ: Թվի մեջ գերազանցությունը Ջումշուդի կողմն էր, և նա հույս ուներ կատարյալ հաղթության վրա: Հանկարծ Ջեյվալի հյուսիսային կողմից լսվեցան աղաղակներ, և մի քանի րոպեի մեջ Ջումշուդի զորախումբը ամեն կողմից պաշարվեցավ Խաչենի մելիքի[15] զորքերով: Այդ զորքերը եկած էին մի քանի օր առաջ և պահված էին Ջեյմա գետի մյուս ափի վրա, որպեսզի միանալով թալիշեցիների հետ, միահամու կերպով գործեին թշնամու դեմ: Ջումշուդը, նկատելով սպառնացող վտանգը, մտածեց պատառելով անցնել թշնամիների միջով, բայց իզուր: Երկու կողմից էլ կռիվը ամենայն համառությամբ շարունակվեցավ մինչև առավոտ: Այդ միջոցին Ջումշուդի հինգ հարյուր զինվորները, որ թողված էին ձիաների մոտ, տեսնելով այնքան երկարատև կռիվը և անհանգստանալով, թե որպիսի վտանգ է սպառնում Ջումշուդին, վճռեցին թողնել միայն հարյուր հոգի ձիաների մոտ, իսկ մնացածները նետվեցան իրանց զորապետին օգնելու: Իրավ է, որ նրանց գալուստը, գտնելով խաչենցիներին և թալիշեցիներին երկու կրակների մեջ, բավական փոխեց պատերազմի կերպարանքը, բայց այդ երկար չևեց: Որովհետև այդ միջոցին Ջեյվալի սարսափած և փախստական բնակիչները, ժամանակ գտնելով խելքի գալու, նույնպես զինվորվեցին և շտապեցին օգնելու իրանց մելիքին, որը պաշտպանվում էր խաչենցիների օգնությամբ միայն: Իզուր Ջումշուդը գործ էր դնում բոլորը, ինչ հրաշքներ որ կարող է կատարել հուսահատ քաջությունը և անհրաժեշտությունը: Նրա զորքերը ջարդվեցան, և արեգակի առաջին ճառագայթները ծագեցին նրա վրա այն ժամանակ, երբ նա արդեն ենթարկված էր ծանր գերության:

—Բարով, իմ փեսացու,—ասաց Թալիշի մելիքը գազանային ժպիտով, երբ շղթաներով կապկապած Ջումշուդին բերեցին նրա

մահ—Դու քաջ պատերազմող ես, բայց ոչ բոլորովին հաջողակ։ Ինչո՞ւ համար շնորհ բերեցիր ինձ մահ, երևի քո կնոջը տանելու համար։ Ինչո՞ւ չէ, ես կկատարեմ քո փափագը, դու նրան կտեսնես, նա բոլորովին ողջ և առողջ է։ Տես, ինչ սատանա է, մտածեց ծածուկ մտնել իմ Ջեյմս բերդը, այրել նրան և իմ հպատակներից շատերին կոտորել։ Բայց ինչո՞ւ համար, մի կնոջ պատճառով, որին ես վեր առի ինձ մոտ կրթելու համար և փայփայում եմ իմ հարազատ զավակի պես։ Հա, նա էլ շատ բարի պտուղ է, փոքր էր մնում, որ իմ սիրելի Հուսեինին պիտի ուղարկեր մյուս աշխարհը։ Դու և նա լավ զույգ եք, ինչ ասել կուզե։ Պետք է ձեզ միջոց տալ տեսնվելու միմյանց հետ։ Տեսնենք կհավանե՞ս դու իմ հյուրասիրությունը. ես կաշխատեմ ամեն կերպ բավականություն տալ իմ թանկագին հյուրին, որ նա ոչ մի բանի մեջ կարոտություն չունենա։ Ընդունո՞ւմ ես իմ առաջարկությունը, մելիք Ջամշուդ։

—Զարպարծին միայն վայելուչ է հայհոյանքներ կարդալ անզեն գերիի վրա,—պատասխանեց Ջամշուդը։

—Ի՞նչ հարկ կա այդքան խոսքերի,—մեջ մտավ հանդուգն Հուսեինը,—վաղուց պետք էր դրան կախաղան բարձրացնել։ Շնորհեցեք այդ զվարճությունը մեր թալիշեցիներին։

—Պետք չէ տաքանալ, որդի,—շարունակեց Թալիշի մելիքը։ —Մի այդպիսի մահը դեռ շատ վաղ է. պետք է մեր հյուրին նախ և առաջ ծանոթացնել երկարատև զվարճությունների հետ։ Մենք պարտավոր ենք մեր շնորհակալությունը հայտնելու նրան մեզ մոտ այցելություն գործելու համար և կտանք նրան մի վայելուչ սենյակ։ Բերեցեք դրան իմ ետևից,—ասաց նա դառնալով դեպի պահապանները, որ շրջապատել էին Ջամշուդին։

Նրանք մտեցան մի աշտարակի, որի միջից լսելի էին լինում ծանր հառաչանքներ։ Ջամշուդի սիրտը կտրատվում էր, նրան թվում էր, որ լսում է իր նազելի Սալիհայի ձայնը։ Դուռը բացվեցավ, և ինչ սարսափելի տեսարան հանդիպեցավ նրա առջև. Սալիհան՝ նրա սիրելի, անգին կենակիցը, կաշկանդված երկաթյա կապանքներով, ամրացրած պատի հետ, պատառոտած հագուստներով նստած էր քարի վրա։ Լույսի թույլ շառավիղը, որ հազիվ թափանցում էր այդ մթին զնդանի մեջ, թույլ էր տալիս որոշել նրա դեմքի գծերը, որ այլանդակված էին սաստիկ դառնությունից.

Ջումշուդը, տեսնելով այդ սոսկալի տեսարանը, քարացածի նման մնաց անշարժ։ Նա պատրաստ էր իր խենջարը ցցել նրան այդ դրության մեջ պառկող եղեռնագործի սրտի մեջ, բայց չէր կարող. որովհետև այժմ ինքն էլ մի անզեն գերի էր։ Նա գոչեց սրտաշարժ ձայնով, և Սալիհն ճանաչեց նրան։

—Այդ իմ Ջումշուդն է,—աղաղակեց նա,—Աստված իմ, ուրեմն ես ազատված եմ։

—Հա, իշխան,—վրա բերեց Թալիշի մելիքը,—դու գտանեց. Տեսա՞ր ամեն բան, նրան կախանեն. նա կմնա այստեղ քեզ մոտ. ես չեմ կամենում ձեզ բաժանել միմյանցից. դուք բոլորովին արժան եք միմյանց։

Նա հրամայեց Ջումշուդին և շղթաներով ամրացնել բանտի հանդիպահայաց պատի վրա, իսկ ինքը հեռացավ՝ ցանկանալով նրանց ամեն տեսակ բարեհաջողություններ։

Երկար, շատ երկար գերիները նայում էին միմյանց վրա և խոսել չէին կարողանում։ Արտասուքը խեղդում էր նրանց։ Վերջապես Սալիհն ասաց.

—Լաց մի լինիր, սիրելի Ջումշուդ, մենք թեև անբախտ ենք, բայց միասին ենք, այդ էլ բավական է։ Որքան ես տանջվեցա առանց քեզ, այդ միայն Աստված գիտե։ Դու կամենում էիր ազատել ինձ և ինքդ գերության մեջ ընկար։ Մոռանանք մեր դրությունը, արհամարհենք մեր թշնամիներին և մխիթարվենք միմյանցով։ Ես քեզ տեսնում եմ և ես բախտավոր եմ. տանջվում եմ քեզ հետ միասին և չեմ զգում իմ տանջանքները։

—Տեր Աստված, գոհություն եմ մատուցանում քեզ,—բացականչեց Ջումշուդը,—որ իմ դառնությունների հետ անգամ տալիս ես ինձ մխիթարություն։ Ես պարծենում եմ քեզանով, իմ անգին Սալիհ, ես ուրախանում եմ իմ սիրով և ցավում եմ միայն, որ չեմ կարող սեղմել քեզ իմ հրաբորբոք սրտի վրա։ Այսպես, թող ուրեմն չարագործները մտածեն, թե դրանով բազմապատկում են մեր չարչարանքները, ստիպելով մեզ նայել սիրած և պաշտած առարկաների տանջանքների վրա։ Նրանք սխալվում են։ Մեր սրտերը արհամարհում են մարմնի չարչարանքը և միշտ միացած կլինեն միմյանց հետ։ Մենք ապրում ենք միմյանց հանդեպ, շնչում ենք միևնույն օդով, այդ էլ բավական է...

Այսպես անբախտները մխիթարում էին միմյանց։

Այդ միջոցին Թալիշի մելիքը, ցանկանալով, որ Ջումշուդի վիճակը ծածկված լինի անհայտության խավարի մեջ, կանչել տվեց Վարանդայի գերիներից մեկին և, հանձնելով նրան մի գլուխ, որը բոլորովին այլանդակված էր թրերի հարվածներով, ասաց.

— Դա ձեր հրամանատար Ջումշուդի գլուխն է, գնա Վարանդայի մելիքի մոտ, հանձնիր նրան այդ գլուխը և ասա, թե ա՛յ. այդպես կոչնչանան այն անձինք, որոնք կհամարձակվեն հարձակում գործել իմ դեմ:

Այդ խոսքերով նա ճանապարհ դրեց գերյալին դեպի Չանախչի:

## VIII

## ԱՍՏՂԱԳԵՏԸ ԳՆՈՒՄ Է ՉԵՅՎԱ

Վարանդայի իշխանը, ստանալով Թալիշի մելիքի ուղարկած բոթաբեր ընծան, սաստիկ հուսահատության մեջ ընկավ: Նա մեծ սուգ կատարեց իր եղբորորդու սպանման պատճառով և, ցանկանալով պահպանել նրա հիշատակը, խնդրեց Փանահ խանից, որ թույլ տա բերելու Չանախչի Ջումշուդի դահիճներին, և դատապարտում էր նրանց որպես իր սիրելի թոռնիկներին:

Պատերազմը նրա և Խամսայի մյուս չորս մելիքների մեջ դեռ շարունակվում էր ավելի սաստկությամբ և փոփոխակի բախտով: Բայց հաղթությունը երկու կողմից ևս տակավին մի որևիցե վճռական վախճանի չէր հասած: Վարանդայի իշխանին օգնում էր Փանահ-խանը, իսկ Խամսայի չորս մելիքները գործում էին միացյալ ուժերով Վարանդայի իշխանի դեմ:

Հայոց մելիքների այդ ներքին կռիվների ժամանակ կարծես թե մի կախարդական ձեռքով կառուցվում էր Շուշին: Արդեն Գանձակի ճանապարհի կողմից կանգնած էին բարձր պարիսպները, ամրացրած սպառնալից մարտկոցներով և ահեղի աշտարակներով: Բերդի մեջ շինված էին ոչ այնքան մեծ ամրոցներ բազմանկյունի ձևով, որոնց մեջ բնակություն հաստատեց Փանահ խանը իր կուսակիցների հետ: Մինը մյուսի ետևից կառուցվում էին բազմաթիվ շինվածքներ, որոնց մեջ բնակեցնում էին ընտիր պատերազմող մարդիկներին, որոնց հավաքել էին ամբողջ Ղարաբաղից: Եվ 1752 թվականի աշնանը Շուշին բոլորովին շինված, ամրացրած և բնակիչներով լցված էր:

Երբ որ Փանահ խանը տեսավ, որ արդեն հասավ այն բաղձալի ժամանակը, որ կարող է հաջողությամբ պաշտպանվել իր բերդի մեջ և մինչև անգամ գործել բացարձակ կերպով, նա ձգեց իր դիմակը և այնուհետև սկսեց վարվել իբրև ամբողջ Ղարաբաղի իշխան։ Մինը մյուսի ետևից զանազան թափառական ցեղերին խոնարհեցնում էր նա իր իշխանության ներքո։ Շուտով Խաչենի և Գյուլիստանի[16] մելիքները հպատակվեցան նրան, և նա իշխում էր այն բոլոր երկրների վրա, որ սկսվում էին Թարթար գետից և տարածվում էին մինչև Երասխ[17] գետը։ Մնում էին միայն երկու մելիքներ՝ Վարանդայի և Թալիշի մելիքները։ Դրանցից առաջինին՝ Վարանդայի մելիքին նա խնայում էր իր քաղաքական զանազան նպատակների պատճառով, որովհետև նա շատ նպաստել էր խանի բարձրանալուն և, դեռ առաջվա խաբված դրության մեջ գտնվելով, իր ձեռքում եղած բոլոր միջոցներով անդադար գործում էր խանի իշխանության մեծանալու և ընդարձակվելու համար, համարելով նրան իր ճշմարիտ բարեկամը։ Իսկ Թալիշի մելիքի երկրի հեռավորությունը արգելք էր դնում խանին տիրապետելու նրան, և այդ պատճառով մտածում էր նա՝ դեռ առաջ իր իշխանությունը ամուր կերպով հաստատել Ղարաբաղի վրա, հետո դառնալ դեպի Թալիշի մելիքությունը։ Բայց այդ բանին արագությամբ մոտենում է։ Եվ Փանահ խանը դիտավորություն ուներ, Թալիշի մելիքին իր վերջին հարվածը տալուց հետո, դառնալ դեպի իր բարեկամ Վարանդայի իշխանը և պահանջել նրանից հպատակություն։

Մեր աստղագետը, որը առաջինը եղավ և Փանահ խանին ցույց տվեց բոլոր այն հնարները, որոնցմով նա կարող կլիներ Ղարաբաղին տիրելու, այդ բանսարկուն այժմ վայելում էր խանի մոտ մեծ հավատարմություն և շնորհ։ Խանը, հետևելով իր ժամանակի սնահավատություններին, հավատում էր նրա գուշակություններին և աստղաբաշխական գիտությանը։ Այդ էր պատճառը, որ աստղաբաշխը օրըստօրե ավելի գրավում էր Ղարաբաղի խանի հավատարմությունը։

Մի անգամ խանը նստած էր իր նորակառույց, փառավոր կերպով զարդարված ապարանքում, Շուշի բերդի մեջ, և խոսում էր աստղագետի հետ։ Հանկարծ անսովորական կերպով հիշեց նա Ջամշուդին, ասելով.

—Գիտե՞ս, աստղագետ, որ ես ամենևին չեմ հավատում այն

հանելուկին, որը հնարված էր Ջամշուդի մահվան մասին։ Այդ Թալիշի մելիքը շատ խորամանկ է։ Իմ զինվորներից շատերը, որոնք վերադարձան նույն կողմից, հաստատում են, որ Ջամշուդը գերի ընկավ։ Ինձ շատ ափսոսելի է այդ երիտասարդի կորուստը, ես նրան սրտով հարգում էի։ Նա քաջ է և արի։ Փորձիր, աստղագետ, իմ կասկածները փարատելու և աստղերի ընթացքից տեղեկացիր, արդյոք իրա՞վ է, որ Ջամշուդը սպանվեցավ կռվի մեջ, թե Թալիշի մելիքը պահում է նրան որպես գերի և մեզ խաբում է։

Հարցը խիստ դժվարին էր. աստղագետը շատ լավ իմանում էր, որ բավական էր մի անհաջող գուշակություն անել, և դա պատճառ կլինի իրան բոլորովին զրկվելու խանի հավատարմությունից։ Իսկ Ջամշուդի մասին ստույգ ոչինչ հայտնի չէր նրան։ Եթե նա գիտենար, որ խանն այսպիսի հարց կառաջարկեր, այն ժամանակ առաջուց կաշխատեր գոնե մասնավորապես ծանոթանալ այն հանգամանքների հետ, որոնց մասին պետք էր փոքրիշատե տեղեկություն ունենալ։ Իսկ այժմ հարկավոր էր չափազանց նուրբ մտություն, նախագուշակությունների մեջ չխճճվելու համար, որոնք սաստիկ անորոշ էին։ Այդ պատճառով նա հույս դրեց իր ամբողջ ճարպկության ու խորամանկության վրա, ձևացրեց իրան իբր խորասուզված մտածությունների մեջ, սկսեց երկարացնել իր հետազոտությունները ու համարումները և վերջապես ձայն տվեց.

—Ջամշուդի աստղը ծածկված է թանձր մառախուղի մեջ... պետք է կարծել, որ նա կենդանի է... Բայց այդ չէ կարելի հաստատապես ասել... Ամեն նշաններից երևում է, որ նա պետք է որպես գերի պահված լինի Թալիշի մելիքի մոտ, եթե սպանված չէ կռվի մեջ... Այդ աստղը արյունի գույն ունի և խիստ խավարած կերպով է փայլում, և նրա ընթացքը այնքան սխալական է, որ դժվար է հասկանալ Ջամշուդի աստղի ճշմարիտ դրությունը... Այո, ես հավատացնում եմ, որ կարելի է, եթե Ջամշուդը սպանված չէ կռվի դաշտում, ուրեմն որպես գերի գտնվում է Ջեյվայի մեջ...

—Շատ լավ,—պատասխանեց Փանահ խանը,—եթե չկա մի ստույգ տեղեկություն Ջամշուդի մահվան մասին, ուրեմն ամենից հավանական կլինի կարծել, որ նա գերի է Թալիշի մելիքի մոտ։ Այդ պատճառով ես դիտավորություն ունեմ պահանջել նրան

Կասկածեմ, թե ինչպես կընդունեն մելիքը իմ հրամանը, որը կուղարկեմ նրան քո ձեռքով, որովհետև դու կարող ես այդ բանը ավելի լավ գիտենալ, թե երբ պետք է ընտրել մի բարեհաջող րոպե, իմ նամակը նրան հանձնելու համար։ Ես կամենում եմ Ջամշուդին վերադարձնելով ուրախացնել նրա հորեղբորը և, իբրև հատուցում իր երախտագիտության, ստիպել նրան ճանաչելու իրան իմ հպատակ։ Որովհետև ցանկալի չէ ինձ ուժով հարկադրել նրան, ինչպես մյուս մելիքներին։ Ես չեմ կարող մոռանալ, որ նա նախապես իմ բարձրանալուն, թեև, իհարկե, անգիտակցաբար, առանց ցանկության և կամքի, բայց այդ միևնույն է։ Իսկ եթե, չնայելով այդ նշանավոր ծառայությանը, որ ես պետք կատարեմ նրա համար. նա կրկին հակառակել ինձ և չի ընդունի ինձ որպես իր թագավոր. այն ժամանակ ես ստիպված կլինեմ մոռանալ մեր բոլոր բարեկամական հարաբերությունները, որոնք եղել են մեր մեջ և մինչև այսօր շարունակվում են, և կհարկադրեմ նրան ընդունելու իմ կամքը։ Բայց ես ավելի բարվոք եմ համարում գործ դնել նրա դեմ մեղմ միջոցներ, իսկ Ջամշուդին վերադարձնելը, որին նա այդքան սպանված է համարում, է ամենալավ միջոցներից մեկը։ Գնա, աստղագետ, և պատրաստվիր էգուց ճանապարհ ընկնելու դեպի Ջեյվ։

Աստղագետը խորին հոժարությամբ կցանկանար, որ մի ուրիշին հանձնված լիներ այդ դեսպանությունը։ Նա գիտեր, որ Թալիշի մելիքը ամենակամակոր և սաստիկ համառ մարդկանցից մեկն էր ամբողջ աշխարհում։ Մի այդպիսի մարդու հետ խոսելու համար նրան չէին կարող օգնել ոչ մի հանճարեղություն, ոչ մի նախազգուշություն և ոչ ամբողջ աստղաբանությունը։ Բայց ճար չկար։ Նա պատրաստվեցավ ճանապարհի համար՝ տանելով իր հետ Փանահ խանից մի նամակ հետևյալ բովանդակությամբ. «Շուշի բերդի տեր և ամբողջ Ղարաբաղի հրամանատար Փանահ խանից իր հպատակ Թալիշի մելիքին.

Ամենակարողի կամքով, որի ձեռքումն են ամբողջ աշխարհի բոլոր թագավորները և թագավորությունները, ես կոչված լինելով ստանձնելու ամբողջ Ղարաբաղի հրամանատարության իշխանությունը, ես ինձ առաջին պարտք եմ համարում հայտնել, որ իմ իշխանության ներքո գտնված բոլոր երկրներում չլինեին ոչ մի նեղություն և ոչ անիրավություններ։ Իսկ դու, մելիք, կատարեցիր

ամենամեծ անարդարություն, գերի վեր առնելով Վարանդայի մելիքի եղբորորդի Ջումշուդին և նրա կնոջը՝ Սալիհային։ Դրանց դու պահում ես քեզ մոտ, առանց այդ մասին ինձ տեղեկություն տալու կամ ինձանից հրամաններ խնդրելու։ Այդ պատճառով ես, որպես քո թագավորը[18], հրամայում եմ՝ հիշյալ Ջումշուդին և նրա կնոջը անհապաղ արձակելով, ուղարկել ինձ մոտ այդ նամակաբերի՝ աստղագետներից իմաստնագույն Հասանի ձեռքով (որի հետ թող լինի խաղաղություն)։ Իսկ եթե դու ունես որևիցե մեղադրանք այդ երիտասարդների դեմ, ինքդ անձամբ հայտնվիր ինձ մոտ և ներկայացրու քո գանգատները։ Այն ժամանակ ես ողորմածաբար կքննեմ գործը, և, եթե դու արդար լինես, քեզ բավականություն կտամ, իսկ եթե ոչ՝ կմերժեմ։ Այսուամենայնիվ, հույս ունեցիր իմ գթասրտության վրա և այսուհետև մի համարձակվիր ինքնակամ կերպով կատարելու քո հաճույքները, որովհետև Ղարաբաղը այժմ ունի իր բարձրագույն հրամանատարը»։

## IX

## ԱՍՏՂԱԳԵՏԻ ԿՐԱԾ ՎԻՐԱՎՈՐԱՆՔԸ ՁԵՅՎԱՅՈՒՄ

Ձեյվայի ամրոցի սենյակներից մեկի մեջ մտախոհ կերպով նստած էր Թալիշի մելիքը։ Սենյակը զարդարած էր պարսից ճաշակով[19]. պատերի վրա երևում էին գույնզգույն նկարներ, որոնք պատկերում էին ծաղիկներ, թռչուններ, որոնց նմանները բնության մեջ գոյություն չունեին, պատկերում էին մարդիկներ, որոնց յուրաքանչյուրի գլուխը իրանի կեսի չափ կլիներ։ Բայց չնայելով այդ նկարների այլանդակությանը, նրանք խիստ հրաշալի կերպով նախշած էին ոսկով։ Հոր հանդեպ միևնույն դրության մեջ նստած էր նրա որդին՝ Հուսեինը։ Այդ վերջինը ծխում էր պարսկական թամբաքուից պատրաստված ղելյանը և ահաճությամբ անդադար դուրս էր թողնում բերանից թամբաքուի թանձր ծուխը։

Վերջապես մելիքը ընդհատեց տիրող լռությունը, առաջ վրդովված ձայնով.

—Ահա, ինչ ժամանակների հասանք... Մի օտարական, մի հասարակ ջվանշիրցի, որը Նադիր շահի մոտ ծառայում էր նրա համար միայն, որ իր բողալը պատառ բռնելով, թե խանը այ-

հրամայեց, այն հրամայեց և այն[20], այժմ իր լայն կոկորդի շնորհիվ և մեր Վարանդայի մելիքի հիմարության պատճառով (որը ինձ հետ կռվելու համար կանչեց նրան իրան օգնելու), այժմ մի այսպիսի բախտախնդիրը, որպես մի ինքնակալ իշխան, սկսել է հրամաններ կարդալ Ղարաբաղի վրա... Ամո՞թ մեզ։ Խամսայի բոլոր մելիքները, բացի ինձանից միայն, հպատակում են նրան, որպես մի թագավորի։ Ի՞նչ ես մտածում դու մի այսպիսի ամոթալի խայտառակության վրա, սիրելի Հուսեին։

—Ես մտածում եմ,—պատասխանեց բարկացած երիտասարդը,—որ եթե ինձանից կախված լիներ, ես բոլոր այդ մելիքներին, որոնք խոնարհվում են մի աննշան օտարականի առջև, կարգով կախ կտայի մի ծառի վրայից։ Մի՞թե նրանք մոռացել են, որ մելիքները Հայաստանի վաղեմի թագավորաց տան շառավիղն են։

—Ո՞վ է տվել նրանց այդքան խելք, որ մտաբերեն իրանց անցյալը։ Նրանք այժմ սողում են մի որևիցե ջլանշիրցու առջև, որը իր խորամանկությամբ խաբելով մեր Վարանդացուն[21], բարձրացավ այն անմատչելի ժայռի վրա, այնտեղ բերդ հիմնեց և այնտեղից ինչպես որ կամենում է, մեր քթին է խփում...[22]։

—Այո, և մենք ամենքս որքան հիմար էինք, որ չմտածեցինք արգելել այդ անմատչելի բերդի կառուցումը, որը նրան նպաստում է Ղարաբաղին տիրելու[23]։

—Այդ բոլորի պատճառը մեր ներքին երկպառակություններն են։ Եթե մենք միշտ միմյանց հետ կապված լինեինք, ինչպես մեր նախնիքը հին ժամանակներում կամ Շահ Աբասի օրերում, այն ժամանակ այդ ջլանշիրցին մտածել անգամ չէր համարձակվի՝ լինել Ղարաբաղի իշխողը։ Բայց մենք բոլորս, Խամսայի հինգ փոքրիկ իշխանությունները, որոնք հայոց հռչակավոր թագավորության վերջին մնացորդն են, սկսեցինք անդադար միմյանց հետ վիճել, միմյանց հետ կռվել, և ամեն մի հիմար բանի վրա, ամեն մի չնչին հարցի պատճառով սկսեցինք միմյանց հետ պատերազմել։ Եվ ի՞նչ եղավ մեր ներքին կռիվների արդյունքը, այն, որ շահեցինք մեզ վրա մի օտար հրամայող...

Այդ միջոցին ներս մտավ մի նոքար, հայտնեց, թե Փանահ խանի կողմից եկել է մի դեսպան, կամենում է ներկայանալ։

—Լսո՞ւմ ես, Հուսեին,—ասաց Թալիշի իշխանը,—այդ դեսպա-

նությունը լավ բան չէ նախապաշարում։ Ես պատրաստ եմ մարդ բանել[24], որ Փանահ խանը պահանջում է, որ մենք ճանաչենք նրան որպես մեր թագավոր։

—Ավելի հեշտ է, որ արևգակը մայր մտնի կեսգիշերին, իսկ լուսինը՝ կեսօրին, քան թե մենք այս աստիճանի կստորացնենք մեզ,—ասաց Հուսեինը տհաճությամբ։— Բայց մի՞թե նա թույլ կտա իրան մի այդպիսի լրբություն. դա արդեն չափը անցնում է և մինչև անգամ աներևակայելի է։

—Հիմա կտեսնես,—ասաց մելիքը և հրամայեց ներս թողնել դեսպանին։

—Թող Աստված օրհնե, պսակազարդե և երկարացնե Թալիշի մեծափառ իշխանի օրերը և թող սփռե նրա վրա բախտավորության պարգևները և թող բազմացնե նրա փառքի և բարօրության շնորհները։ Աղերսում եմ ներողամիտ գտնվել դեպի մեծն Փանահ խանի ստրուկը, որը հանդգնում է ներկայացնել ձեզ իր տիրոջ նամակը։

Այդ խոսքերով մոտեցավ սուրհանդակը և տվեց մելիքին Ղարաբաղի նոր տիրապետողի թուղթը։

Մելիքը ոչինչ չպատասխանեց սուրհանդակի ճառախոսությանը, լռությամբ ընդունեց նամակը, որը ծրարած էր մետաքսյա թանկագին կերպասի մեջ։ Նամակի ընթերցանության միջոցին մելիքի դեմքի վրա կարելի էր նկատել բարկություն, կատաղություն և զզվանք։ Բայց մտածելով, որ Փանահ խանի իշխանությունը արդեն բավական հաստատված է, և թե միայն Թալիշի մելիքությունը չէ կարող ընդդիմանալ ամբողջ Ղարաբաղին, նա չափավորեց իր վրդովմունքը, պատասխանելով սուրհանդակին.

—Դու կարող ես ասել Փանահ խանին, որ ես հաճությամբ կկատարեի նրա ցանկությունը (և ոչ թե հրամանը), բայց չեմ կարող, որովհետև նա ինքը գիտե, որ Ջումշուդը սպանված է կռվի մեջ։ Իսկ թե որտե՞ղ է գտնվում Սալիհան, ես չգիտեմ։ Ուրեմն ինձանից կախված չէ նրան բավականություն տալ...

—Ի՞նչ բան է,—ընդմիջեց Հուսեինը տաքացած կերպով,—նա համարձակվո՞ւմ է պահանջել, որ մենք տանք Ջումշուդին ու Սալիհային և ի՞նչ իրավունքով։ Եվ ի՞նչ մի աղա է դարձել մեր գլխին այդ Փանահ խանը...

—Հուսեին...—ասաց մելիքը՝ խորհրդավոր կերպով նայելով նրա վրա։

—Ես չեմ կարող լինել ստրուկ մի օտարականի,—շարունակեց դյուրաբորբոք երիտասարդը,—ցույց տվեցեք, ի՞նչ է գրել նա։

—Եթե դու քեզ հանգիստ կպահես, ես կտամ քեզ նամակը...

—Ես այսպես էլ հանգիստ եմ, հայրիկ։

Նա վերցրեց նամակը, սկսեց կարդալ։ Ամեն մի տողից նրա բարկությունը ավելի ու ավելի սկսում էր նկարվել երիտասարդ դեմքի գծերի վրա։ Վերջը զայրացած կերպով տրորեց նամակը իր ձեռքի մեջ և կատաղությունից խեղդվող ձայնով ասաց տասնապետին.

—Թշվառակա՞ն, դու իմանո՞ւմ ես այստեղ ի՞նչ է գրած։

—Ոչ, մելիք։

—Ճշմարի՞տ ես ասում, երդվիր...

—Երդվում եմ իմ նախնյաց ոսկորներով, երդվում եմ իմ մորուքով, որ չունեմ ամենափոքր տեղեկություն անգամ, թե ինչ է գրած այդ նամակի մեջ։

—Լավ։ Վեր առ, կուլ տուր այդ ցնդաբան նամակը և ասա քո Փանահ խանին, որ նա այդ աշխարհի խելագարներից ամենամեծ խելագարն է և, մինչև անգամ ավելի մեծ, քան թե խենթության հայրը։

—Այդ ի՞նչ ես անում, Հուսեին, մտածիր...

—Մի՞թե, հայրիկ, դուք թույլ եք տալիս մի օտարականի հայհոյել մեզ։ Ոչ, քանի դեռ կենդանի եմ ես, թույլ չեմ տա մինչ այդ աստիճան...

—Դե, մելիք...—ասաց տասնապետը։

—Լավ կաց և կատարիր, ինչ որ քեզ հրամայում եմ,—աղաղակեց Հուսեինը և տեսնելով, որ տասնապետը ուշանում է, բռնեց նրա օձիքից, սեղմեց պատի վրա և մի ձեռքով բռնելով խենջարը, մյուսով՝ Փանահ խանի նամակը, որոտաց կատաղությամբ.

—Ընտրիր որը կամենում ես. կամ պիտի կուլ տաս այդ ժանտ նամակը և պիտի տանես իմ կողմից Փանահ խանին, որ նա ամենամեծ խելագարն է, կամ այս րոպեիս քեզ կուղարկեմ մյուս աշխարհը...

Այդ խոսքերը ասելով՝ նա կոխեց նամակը տասնապետի կոկորդի մեջ, որը, խեղդվելով, աղաղակում էր խնայել իրան։

—Լավ,—ասաց ծաղրով Հուսեինը,—այդ անպիտան նամակը այնքան լի է հիմարություններով, որ միանգամից ամբողջությամբ նրան կուլ տալը անկարելի է։

Նա պատառոտեց նամակը և մի քանի կտորներ դարձնելով` ասաց.

—Դե, հիմա կուլ տուր, թե չէ կսպանվես...

Սուրհանդակը, երկյուղից դողդողալով, հնազանդվեցավ։ Հուսեինը չհեռացավ նրանից, մինչև խեղճ դեսպանը կուլ չտվեց թղթի վերջին պատառը[25]։

—Հիմա գնա,— ասաց Հուսեինը ժպտալով,— և պատասխանը տար քո Փանահ խանին։

Մելիքը ցավելով տեսնում էր, որ որդու վրդովմունքը դարձրեց պատերազմը իր և Փանահ խանի մեջ անխուսափելի։ Բայց ինչ պետք էր արած, նա չէր կարող իրան ստորացնել թշնամու դեսպանի մոտ. մի այդպիսի վարմունք կհրավիրեր հոր վրա որդու զզվանքը, մի որդու, որը այնքան թանկագին էր հոր համար։

Սուրհանդակը հեռացավ սաստիկ վշտացած իր կրած վիրավորանքի համար։ Վրեժխնդրության զգացմունքը բորբոքվում էր նրա սրտում։ Հենց նույն օրվա գիշերային պահուն, նա վստահեցավ մուրացկանի հագուստով մտնել Ջեյվա և կարողացավ խոսակցության մեջ գտնվել Թալիշի մելիքի նոքարներին և նրանցից տեղեկացավ ոչ միայն Ջոմշուդի ու Սալիհայի բանտարկության մասին, այլև այն տեղի մասին, որ նրանք կալանավորված էին։ Նա անցավ այն աշտարակի մոտից, որտեղ բանտարկված էին նրանք. աչքերով չափեց բարձրությունը, քննեց պարիսպների ամրությունը և ցավելով համոզվեցավ, որ մի մարդու ջանքը բավական չէր լինելու նրանց ազատելու համար։ Բայց կամենալով մխիթարել նրանց, նա բարձր ձայնով ասաց. «Շուտով կհասնի ձեր ազատության բաղեն. հույս դրեցեք սուրհանդակ Հասանի խոսքերի վրա»։ Այդ խոսքերը առողջարար բալասանի ազդեցություն ունեցան անբախտ գերիների սրտերի վրա։ Այդ անելուց հետո սուրհանդակը սլացավ ամենայն արագությամբ վերադառնալ դեպի Շուշի։

## X

## ՋԵՅՎԱՅԻ ԳՐԱՎՈՒՄԸ: ՀՈՒՍԵԻՆԻ ՄԱՀԸ

Փանահ խանը, տեղեկություն ստանալով այն վիրավորանքի մասին, որով անպատվել էին նրա դեսպանին, վճռեց շուտով խոնարհեցնել Թալիշի մելիքի հպարտությունը։ Դրանով կամենում էր նա և ուրիշներին օրինակ ցույց տալ, թե անկարելի է վշտացնել

Ղարաբաղի նոր իշխողին և անպատիժ մնալ։ Նա հրամայեց իր իշխանության ներքո գտնվող ցեղերին և մելիքներին, որ զենքի կոչեն բավականաչափ զինվորներ։ Վարանդայի իշխանը սաստիկ ուրախացավ, երբ իմացավ, որ նրա սիրելի եղբորորդին կենդանի է։ Նա համոզված էր, որ Փանահ խանի պատերազմելու գլխավոր նպատակն այն էր, որ ազատի Ջումշուդին գերությունից։ Եվ այդ պատճառով նա առաջինը եկավ, որ իր զորքերով հայտնվեցավ Շուշի բերդում։ Եվ այսպես, գումարվելով ավելի քան տասն հազար հոգի, Փանահ խանը արշավեց դեպի Ջեյվար։

Թշնամին խիստ զորավոր էր։ Այսուամենայնիվ, Թալիշի մելիքը, որքան իրանից կախված էր, գործ էր դնում բոլոր հնարները, որպեսզի հաջողությամբ կարողանա ընդդիմադրել թշնամուն։ Թեև նա հաղթության վրա մեծ հույս չուներ, որովհետև երկու կողմերի ուժերի չափազանց անհավասարությունը արդեն նախագուշակում էր նրա պարտությունը։ Նա, որքան կարելի էր, ամրացրեց իր բերդը Ջեյվարի մեջ, բայց փոքր-ինչ առաջ Ջումշուդի ձեռքով ավերակ դարձած քաղաքը կրկին նորոգելու ժամանակ չունեցավ։ Բնակիչների մի մասը ամրացավ բերդի մեջ, իսկ մնացած բոլորը, որոնք զենք կրելու վարժ էին, պետք է դուրս գային կռվի դաշտը։ Իր չորս հազար հոգուց բաղկացած զորքից հազարը նա թողեց ամրոցը պահպանելու համար, իր որդի Հուսեինի առաջնորդությամբ։ Իսկ ինքը մնացած երեք հազարով դուրս եկավ թշնամու հանդեպ, որը թվով եռապատիկ ավելի էր։ Երկու կողմերի զորքերն ևս հանդիպեցին միմյանց Թարթառ գետի ափերի մոտ։ Սկսվեց արյունահեղ կռիվը։ Երկար երկու կողմերն էլ պատերազմում էին միանման կատաղությամբ։ Փրփրադեզ Թարթառի սրընթաց ջրերը ներկվեցան արյունով, և երկրի ամեն մի քայլը նշանավոր դարձավ քաջության և արիության հրաշալի անցքերով։ Վերջապես գիշերային խավարը բաժանեց պատերազմողներին։

Ավելի մեծ էր կորուստը Փանահ խանի զորքերի մեջ, բայց դա այնքան զգալի չէր, որքան Թալիշեցի զորքերի կորուստը։ Շուշիի խանի զորքերից դեռ մնացել էին վեց հազար հոգի, որ կարող էին շարունակել կռիվը, բայց մելիքի զորքերից մնացել էին միայն ութ հարյուր հոգի։ Զանազանությունը սարսափելի էր։

Մելիքը օգուտ քաղելով գիշերային խավարից, թողեց իր բռնած դիրքը և շտապով հետ քաշվեցավ դեպի Ջեյվար։ Նա պարզ

տեսնում էր, որ եթե սկսելու լինի երկրորդ ճակատամարտը, իզուր կկորցնե իր զորքերի մնացորդը։ Իսկ եթե նրանց միացնելու լինի Հուսեյնի զորախմբի հետ և պատսպարվի ամրոցի պարիսպների մեջ, այն ժամանակ ավելի հեշտ կարող կլինի պաշտպանվել Փանահ խանի հարձակումներից։

Ղարաբաղի նոր խանը մյուս օրվա առավոտյան պահուն նկատեց իր թշնամիների տեղի տալը և առանց ժամանակ կորցնելու մոտեցավ Ձեյվա ամրոցին և ամեն կողմից խիստ անձուկ կերպով պաշարեց նրան։

Սկզբում պաշարվածները իրանց ամրոցի պարիսպների բարձրությունից ծիծաղում էին Փանահ խանի զորության վրա, որը միայն իր լռությամբն էր պատասխանում նրանց հարձակումներին և վճռել էր սովով ստիպել նրանց անձնատուր լինելու։ Շուտով մարդկության այդ անողորմ պատուհասը տարածվեց Թալիշեցիների մեջ։ Նրանք զգացին իրանց դրության բոլոր զարհուրանքը և սկսեցին ստիպել մելիքին, որ անձնատուր լինի։ Հուսեյնը լսելով ժողովրդի տրտունջը և հասկանալով, թե որպիսի դժբախտություն էր սպառնում իրանց, ցանկացավ գնալ Փանահ խանի մոտ՝ հաշտության պայմանների վրա խոսելու համար։

—Ես եմ եղել այդ պատերազմի պատճառը,—ասաց աներկյուղ երիտասարդը,—նույնպես ես պետք է աշխատեմ վերջ տալու նրան։

Ամրոցի պարիսպների վրայից թույլտվություն խնդրեցին Փանահ խանից, թե ուղարկվում է նրա մոտ մի պատվիրակ խոսակցելու համար։ Մելիքը դառնացած սրտով իրավունք ավեց Հուսեյնին գնալ թշնամու բանակը։ Մի առանձին նախազգացություն, կարծես, ազդում էր հորը, թե այլևս չի տեսնի սիրելի որդուն։

Հուսեյնը ներկայացավ Ղարաբաղի իշխողի առաջ մի այնպիսի հանդուգն վստահությամբ, որը ցույց էր տալիս, որ նա արդեն կանխապես վճռել էր կատարելու մի նշանավոր դիտավորություն։ Հպարտ կերպով գլուխ տալով՝ ասաց նա.

—Փանահ խան, ի՞նչ իրավունքով դու եկել ես վրդովեցնելու հանգստությունը մի իշխանի, որը երբեք վիրավորած չէ քեզ, որին դու, դեռ չճանաչած ինքդ վիրավորեցիր, պահանջելով նրանից հպատակություն։ Անհայտ չէ նույնպես, թե ես ինչ իրավունքով վիրավորեցի քո դեսպանին, որովհետև չկարողացա համբերել քո անարգարությանը։ Խոսիր, այժմ ի՞նչ հատուցում ես պահանջում դու։

Ես կանգնած եմ քո առջև, բայց հանգիստ թող իմ հողը և ձեռնամուխ մի լինիր նրա գործերի մեջ: Մեր նախնիքը արդեն մի քանի դարեր մելիքներ էին և այդ կողմերի տիրապետողներն էին, ուրեմըն դու պատճառներ չունես տարածելու քո պահանջները մեր երկրի վրա: Դու կարող ես լինել մեր դաշնակիցը, իսկ մեր հրամանատարը՝ երբեք:

—Հուսեին,—պատասխանեց Փանահ խանը,—հարգելով քո հաստատամտությունը և քո քաջությունը, ես ներում եմ քո վարմունքը իմ դեսպանի վիրավորությամբ, ներում եմ քո հանդուգն խոսքերին: Բայց իմացիր, որ Խամսայի մյուս մելիքները, որոնք իրանց ուժասպառություններով ձեզանից պակաս չեն, վաղուց արդեն ընդունել են իմ հպատակությունը: Այժմ Ղարաբաղը ունի իմ անձնավորության մեջ մի տեր, որը աշխատում է ոչնչացնել բոլոր երկպառակությունները, որը ցանկանում է իր իշխանության ներքո գտնվող ժողովրդին տալ բարօրություն: Հպատակեցեք և դուք: Ձեր իշխողը ցույց կտա ձեզ իր մեծահոգությունը:

—Մի որևիցե օտարական մեծահոգություն պիտի ցույց տա այն ամենահին տոհմերին, որ եղել են այդ երկրների տիրապետողները: Դա արդեն խիստ ծիծաղելի է, Փանահ խան: Միթե դու չե՞ս հասկանում, թե ինչ ես խոսում:

—Հուսեին,—պատասխանեց Փանահ խանը,—դու պահանջեցիր խոսակցել ինձ հետ գործի վրա: Ինչ պետք է իզուր խոսքեր վատնել: Ես գիտեմ արհամարհել վիրավորանքը:

—Իմ առաջարկությունը հայտնեցի հենց մեր խոսակցության սկզբից: Ես մեղավոր չեմ, որ դու չհասկացար: Բայց դու, որպես ես տեսնում եմ, դիտմամբ չես ցանկանում հասկանալ ինձ և ձըգտում ես դառնալ իշխող նրանց, որոնք ամենևին չեն ցանկանում քեզ հնազանդվել:

—Ես կհարկադրեմ նրանց: Կտեսնենք, կարո՞ղ են արդյոք դիմանալ նրանք դեռևս երկար ժամանակ առանց սնունդի: Իսկ ես վճռել եմ ամենևին չհեռանալ այստեղից, մինչև դուք չհնազանդվեք ինձ:

—Ուրեմն դու ոչնչի տե՞ղ ես դնում սովի մահով կորցնել մի քանի հազար զոհեր նրա համար միայն, որ նրանք չեն համաձայնվում ընդունել քեզ այնպես, ինչ որ դու երբեք չես եղել, այսինքն՝ իրանց վրա իշխող:

—Դա կլինի քո վերջին խոսքը: Ես չեմ կամենում երկար լսել քեզ: Գնա, ես կարող եմ հնար գտնել, որ ստիպեմ քեզ և բոլոր թալիշեցիներին հպատակվելու ինձ:

—Ի՞նչ,—գոչեց Հուսեինը լի վրդովմունքով:—Կրկնիր այդ խոսքը:

—Այո, քեզ, դրանում ի՞նչ մի զարմանալի բան կա: Այդ խոսքերի միջոցին Հուսեինը մերկացրեց իր խենջարը և կայծակի արագությամբ հարձակվելով Փանահ խանի վրա, աղաղակեց.

—Մեռիր, չարագործ...

Փանահ խանը, որպես սառնասիրտ մարդ ամեն դեպքերում, կանխապես նկատելով աներկյուղ երիտասարդի հանդուգն դիտավորությունը, խույս ավեց նրա հարվածից և պաշտպանվեցավ: Հեռու հրամայեց նա իր թիկնապահներին բռնել Հուսեինին: Բայց նա, չկամենալով կենդանի մնալ և ականատես լինել իր փառքի և հայրենական ազատության ոչնչանալուն, ինքն իր խենջարը ցցեց իր կուրծքի մեջ և ընկավ Փանահ խանի մոտ: Խանը ապշած մնաց՝ տեսնելով այդ հերոսական վարմունքը:

—Հիմա բոլորը քեզ է պատկանում, Փանահ խան, և տացե Աստված, որ ղարաբաղցիք մի ժամանակ չզղջային իրանց սխալների համար...

Արտասանելով այդ խոսքերը՝ նա ավանդեց հոգին: Երբ որ նրա մահվան բոթը տարածվեցավ Ջեյվայի մեջ, հենց նույն րոպեում բացվեցան ամրոցի դռները Փանահ խանի առջև:

## XI

## ՓԱՆԱՀ ԽԱՆԸ ԴԱՌՆՈՒՄ Է ՂԱՐԱԲԱՂԻ ԽԱՆ

Թալիշի մելիքը հանդիպեց Փանահ խանին խոնարհությամբ և, ընդունելով իր վրա նրա բարձր իշխանությունը, միևնույն ժամանակ մնաց հաստատ թե իր մելիքության սահմանի մեջ և թե իր երկրի ինքնապետության մեջ, որպես էր առաջ: Չկամենալով, որ հաղթողը տեսնի, թե որպիսի բանտում կամ որպիսի տաժանական դրության մեջ տանջվում էին Ջումշուդը և Սալիհան, մելիքը շնորհեց նրանց ազատություն նախքան ամրոցի դռների բացվիլը Փանահ խանի առջև: Անբախտ երիտասարդները իսկույն հրճվանքով միմյանց գիրկը նետվեցան և նույն րոպեին քաղցրության մեջ մոռա-

ցան բոլոր նեղությունները, որ կրել էին։ Նրանք ներեցին իրանց թշնամիներին և, մանելով մի նոր և ավելի երջանիկ կյանքի մեջ, արդեն երկրի վրա զգում էին երկնային ամենաբարձր երանությունը։

Երբ որ բացվեցան ամրոցի դռները, նրանք ընկան իրանց հորեղբոր գիրկը, որը նրանց տեսնելով, ուրախության սաստկությունից չկարողացավ զսպել իր արտասուքը։ Բայց որպիսի պաղ զգացմունք միացավ նրա բերկրության զգացմունքի հետ, երբ տեսավ նրանց կրած տանջանքների հետքերը, որոնց տպավորությունը խիստ որոշ գծերով նկարված էր երկու մանկահասակ ամուսինների դեմքի վրա։ Փանահ խանը վախենալով, միգուցե Թալիշի մելիքի բարբարոսական վարմունքը իր երկու պատվավոր դերիների վերաբերությամբ կրկին նորոգեր նրա և Վարանդայի մելիքի մեջ արդեն-դադարած երկպառակությունը, ամեն միջոցներով աշխատում էր, որ հանդստացնե Վարանդայի մելիքին, մոռանալ տալով նրան հին անախորժությունների հիշատակները։

—Մոռանանք, մելիք, բոլոր անցյալը,—ասում էր նա,— և գոհ լինելով ներկայից, դադարեցնենք այն երկպառակությունները, որոնք այնքան երկար ժամանակ խռովության մեջ էին պահել Ղարաբաղը։ Ձեր եղբորորդին, որ ձեր գիրկը վերադառնալով, այժմ վայելում է ձեր սերը, փառքի արժանի կերպով համբերեց բոլոր փորձանքներին, որոնց ճակատագիրը կամեցել էր առաքել նրան։ Բայց ավելի ես զարմանում եմ ես նրա մանկահասակ ամուսնի վրա։ Այդ Սալիհան մի կենդանի օրինակ է հաստատամտության, տոկունության և արիության, որի նմանը շատ դժվար է գտնել։ Ես կաշխատեմ, որ դրանից հետո այդ երկու սիրարժան երիտասարդները այլևս դառնություններ չկրեին։

Մելիքը շնորհակալություն հայտնեց Փանահ խանին, որը շուտով վերադարձավ Շուշի բերդը, հրավիրելով այնտեղ Վարանդայի իշխանին և Ջումշուդին իր կնոջ հետ։

Շքեղ խնջույքներով զվարճանում էին նրանք Ղարաբաղի իշխողի նոր տան մեջ, որ կանգնած էր սեպացած ժայռի եզրի վրա. իսկ նրա ստորոտը քերելով և ահագին քարերին զարկվելով, արագությամբ վազում էր լեռնային գետը։ Բայց նրա որոտալից ձայնը միայն թույլ կերպով հասնում էր Փանահ խանի հյուրերի ականջին, որովհետև նրանք գտնվում էին ահագին բարձրության վրա։

Մի օր Փանահ խանը, կամենալով իմանալ Վարանդայի իշխանի կարծիքը գործերի նոր դրության վերաբերությամբ, ասաց.

—Խոստովանեցեք, մելիք, որ սկսյալ այն ժամանակից, քանի որ ես տիրում եմ Շուշի բերդին, Ղարաբաղը հանգստացավ անդադար խռովություններից: Տեսնո՞ւմ եք, թե որքան օգուտներ են բովանդակվում միապետության մեջ:

—Միապետության մե՞ջ: Ուրեմն դուք ցանկանում եք լինել Ղարաբաղի ընդհանուր կառավարիչ:

—Անկասկած, մի՞թե դուք չեք տեսնում, մելիք, որ այդ արդեն կատարված իրողություն է: Եվ դուք ձեր կողմից նույնպես կարող եք պարծենալ մի այսպիսի անցքի համար, որովհետև, ինչպես դուք եղաք իմ բարձրանալու գլխավոր պատճառը և հասցրիք ինձ Ղարաբաղի խանի աստիճանի: Եվ ես հավատացած եմ, մելիք, որ դուք, հարգելով Ղարաբաղի խաղաղությունը, չեք հրաժարվի ճանաչել ինձ այդ կոչման մեջ:

—Դուք, երևի, կատակ եք անում, Փանահ խան, մի՞թե դուք մոռացե՞լ եք, որ խոստացաք կառուցանել Շուշի բերդը մեր երկրի ապահովության համար:

—Այո, ես հիշում եմ այդ: Բայց հանգամանքները փոխվեցան, մելիք: Այն ժամանակ ես մտածում էի միայն նրա վրա, թե ինչպես պետք է ապահովացնել ինձ և ձեզ մեր թշնամիների հանկարծակի հարձակումներից, իսկ այժմ ներկայացավ խիստ ընդարձակ ասպարեզ, այն է՝ հնազանդեցնել և խաղաղացնել ամբողջ Ղարաբաղը: Ես ճանաչում եմ, մելիք, ձեր խոհեմությունը և հավատացած եմ, որ դուք չեք ցանկանա նորոգել այդ գեղեցիկ երկրների դժբախտությունը, որոնք հազիվ թե դեռ նոր սկսել են շունչ առնել յոթնամյա ծանր պատերազմներից[26]:

—Լսեցեք, Փանահ խան, ինձ երևում է, որ դուք պահանջում եք, որ ես ճանաչեմ ինձ ձեր հպատակ:

—Ոչ, մելիք, դուք սխալ եք հասկանում, ես կամենում եմ, որ դուք միայն առերես ցույց տաք ուրիշների աչքին, թե հնազանդվում եք իմ հրամաններին, որովհետև այն ժամանակ մյուսները ձեզանից օրինակ կառնեն: Բացի դրանից, ես կասեմ ձեզ, մելիք, ով որ չի ցանկանա հնազանդվել ինձ, ես վճռել եմ ուժով ստիպել, հենց իրենց սեփական շահերի համար:

—Հասկանում եմ... դուք կդարձնեք և իմ դեմ ձեր զենքը, երբ որ ես ձեզ լսելու չլինեմ:

—Ոչ, մելիք, ես գիտեմ, որ դուք ձեզ չեք հասցնի մինչև այդ աստիճան ծայրահեղության:

—Իսկ եթե կհասցնե՞մ։ Բայց էլ ի՞նչ խոսել կուզեք։ Ձեր նպատակն այն է, որ լինեք Ղարաբաղի լիազոր խանը և մեզ՝ այդ երկրի վաղեմի տիրակալներիս, ստիպեք, որ պար գանք ձեր դուդուկի համեմատ... Հիմա մեզ պետք է հնազանդվել ձեր կամքին, որովհետև մենք ինքներս պատճառ դարձանք մեր անկմանը, բայց կարելի է մի ժամանակ...

Փանահ խանը, կամենալով ուրիշ ուղղություն տալ իրանց խոսակցությանը, որ արդեն սկսել էր թշնամական ձև ստանալ, հարցրեց.

—Դուք հավատո՞ւմ եք աստղաբաշխությանը, մելիք։

—Հավատում եմ, ինչպե՞ս կարելի է չհավատալ։

—Դուք այլևս բարկացած չե՞ք այն աստղագետի վրա, որը առաջ ծառայում էր ձեզ մոտ, իսկ այժմ ծառայում է ինձ մոտ։

—Ոչ, բարկացած չեմ. նա մեզ համար շատ օգտակար է եղել։

—Ուրեմն մենք կկանչենք նրան և կհրամայենք, որ գուշակություններ անե Ղարաբաղի ապագա վիճակի մասին։

—Մեծ ուրախությամբ։

Փանահ խանը հրամայեց իր ներքիններին, որ կանչեն աստղագետին։ Նա ներս մտավ՝ ողջունելով արևելյան չափազանց պերճախոսությամբ։ Լսելով Փանահ խանի հրամանը՝ նա մի առանձին ջանքով սկսեց կատարել իր աստղաբաշխական գործողությունները։ Նրա դեմքի վրա այնքան կենդանի կերպով արտահայտվում էին նրա ներքին բոլոր զգացումները, որ մելիքը անհամբերությամբ և միևնույն ժամանակ մի առանձին սարսափով սպասում էր աստղաբաշխի մարգարեական ձայնին։ Փանահ խանը խորին զվարճությամբ նկատում էր մելիքի սրտի մի այսպիսի տրամադրությունը, որի հետ դեռևս չէր կամենում թշնամանալ և սպասում էր աստղագետի պատասխանին։

Այդ վերջինը նստած տեղից կանգնելով և աչքերը դեպի երկինք դարձնելով, խոսեց հանդիսավոր կերպով.

—Ղարաբաղի հրամանատարի աստղը գտնվում է իր լիակատար ծագման մեջ... Նա փայլում է պայծառ կերպով և նրա բարերար ազդեցության ներքո բախտավորություն է վայելում ամբողջ երկիրը, սկսյալ Երասխից մինչև Գանձակի սահմանը... Նրա ապագա սերունդը տիրապետում է, այդ երկրին, և վայ նրանց, որոնք կհանդգնեն չհնազանդվել նրա

իշխանության և չեն ընդունի նրա ապագա ժառանգներին... Ինչ եմ տեսնում ես... ինչ-որ խելագարներ ապստամբվում են երկնքի սիրելիի դեմ... գնում են, գնում են, հպարտացած իրենց ոչնչությամբ... բայց երկա՞ր կտևեն նրանց հաղթանակը, այդ խաբուսիկ հաղթանակը... Անմատչելի Շուշի վրա հավաքվեցան սպառնալից, մթին ամպեր... Որոտման սարսափելի հարվածը ահագին բոմբյուններով դղրդեց լեռների հիմքը... Կայծակը գալարվեցավ ստահակների շուրջը, և նրանք շառաչմամբ գլորվեցան անհատակ անդունդի մեջ... Պայծառ ճաճանչներով փայլում է պսակը Ղարաբաղի հրամանատարի գլխի վրա... բոլոր հակառակորդները ոչնչանում են նրա առջև...

Վարանդայի իշխանը մտածությունների մեջ ընկավ... Մի քանի րոպե տիրեց լռություն։ Վերջը ասաց նա.

—Ես չեմ կամենում հակառակել ճակատագրի կամքի դեմ։ Ընդունում եմ Ղարաբաղի հրամանատարին իբրև իմ հրամանատար, և թող չքանան երկպառակությունները, որոնք ավերծում էին Ղարաբաղը այնքան երկար ժամանակ...

—Իսկ ես իմ կողմից խոստանում եմ,—ասաց Փանահ խանը,—միշտ համարել Վարանդայի իշխանին իմ բարեկամ, իսկ նրա թշնամիներին՝ իմ թշնամիներ։

Երկու բարեկամներն էլ գրկախառնվեցան։

—Փա՜ռք լինի Ալլահին,—ասաց աստղագետը խորին բերկրությամբ։—Վերջին մելիքը ևս հնազանդվեցավ։ Եվ Ղարաբաղը, այժմ ունենալով իր ինքնակալ խանին, խաղաղությունը նրա մեջ հաստատվեցավ ավելի ամուր հիմքերի վրա։ Իմ հոգին լի է ցնծությամբ, որ իմ կարողության չափով նպաստեցի երկու նշանավոր անցքերի կատարմանը. նախ, անմատչելի Շուշիի կառուցմանը, հետո՝ խանության իշխանության հիմնվելուն ամբողջ Ղարաբաղի վրա...

# ՎԵՐՋԱԲԱՆ

Ջումշուդը և Սալիհան բնակվեցին Զանախչի ամրոցի մեջ։ Նրանց հրճվանքին և ուրախությանը չափ չկար, երբ առաջին անգամ գրկեցին իրանց զավակներին։ Բայց երկար չվայելեցին նրանք ամուսնական երանավետ սերը և բարեկամության երջանկությունը։ Սատանի ժանտախտը, որ դրացի պարսկական երկրներից ներս մտավ Ղարաբաղ, մի քանի օրվա մեջ գերեզման տարավ նազելի Սալիհային և նրա երկու զավակներին։ Ջումշուդը չկարողացավ տանել այդ եռակի կորստյան դառնությունը և միացավ իր սիրելիների հետ մյուս ավելի լավ աշխարհում։ Ասողաբեկը, հրապուրվելով պարսից շահի խոստումներից, աշխատում էր խռովություն հարուցանել Ղարաբաղի մեջ և տապալել խանին, դրա համար էլ մահվան դատապարտվեցավ։

Փանահ խանը իր բարեկամությամբ երկար չփայփայեց Վարանդայի մելիքին, այլ շուտով սկսեց վարվել նրա հետ գոռոզ հրամանատարի ձևով, որը և առիթ ավեց շատ անախորժությունների երկուսի մեջ։ Փանահ խանի որդին և ժառանգը՝ Իբրահիմ խանը, ավելի բռնակալությամբ սկսեց կառավարել Ղարաբաղը՝ չհամբերելով ամենափոքր հակառակության։ Բայց երբ սկսվեց XIX դարը, երբ Ռուսաստանը տարածեց իր տիրապետությունը Անդրկովկասում, այդ ժամանակ Իբրահիմ խանը սկզբում ընդունեց իր վրա Ռուսաստանի բարձր գերիշխանությունը, բայց շուտով կրկին խռովությունները բարձրացնելով, զրկվեցավ կյանքից նույն կռվի մեջ, որ տեղի ունեցավ այդ դեպքի առիթով[27]։ Իբրահիմ խանին հաջորդ նշանակվեցավ ռուսաց կառավարությունից նրա որդի Մեհտի Ղուլի խանը, որը հետո հոր նման նույնպես դավաճանեց ռուսներին և հեռացավ, գնաց Պարսկաստան[28]։ Այն ժամանակից Ղարաբաղը դարձավ ռուսաց նահանգ և կառավարվում է զինվորական առանձին կոմենդանտի (բերդապահի) ձեռքով։ Շուշի բեր-

*որ և այժմ համարվում է Ղարաբաղի խանության գլխավոր տեղը: Բացի կոմենդանտից, այդ բերդում հատկապես նշանակված է մի գեներալ, որ կրում է այսպիսի տիտղոս՝ զինվորական-նահանգային գլխավոր մուսուլմանների գավառների* (Военно-окружной начальник мусульманских провинций)*: Այդ գավառներն էին՝ Ղարաբաղի, Շաքիի և Շիրվանի խանությունները: Շուշի բերդը առավելապես հռչակվեցավ ռուսների համառ պաշտպանությամբ 1826 թվին, երբ 1500 զինվորներ 42-րդ եգերյան գնդից, քաջ պոլկովնիկ (այժմ գեներալ-մայոր) Ի. Ա. Ռեուտի հրամանատարության ներքո, փակվելով հիշյալ բերդում, ընդդիմացան 48 օրվա պաշարման, պարսից բոլոր զորքերի դեմ, որ բաղկացած էր 80.000 հոգուց, որոնց անձամբ առաջնորդում էր ինքը՝ պարսից գահի թագաժառանգ Աբաս Միրզան, որի բոլոր ջանքերը այդ բերդը գրավելու համար իզուր անցան*[29]*:*

## ՎԱԽՃԱՆ II ԵՎ ՎԵՐՋԻՆ ՄԱՍԻ

## *ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

### *Առաջին մաս*

*1. Աստղագետը պարսիկների մոտ համարվում է իսկապես մի կարևոր անձնավորություն, որի ցուցմունքների համեմատ իբր թե շատ բաներ են կատարվում: Ամեն մի ազնվական, որը ծանոթ էր աստղագիտության առաջին կանոնների հետ միայն, համարում է իրան աստղաբաշխ սնահավատներին խաբելու համար: Ծանոթ. հեղ.:*

*Ղարաբաղի մելիքները, հետևելով պարսից ավագների սովորություններին, իրանց դրանիկների թվում անհրաժեշտ էին համարում պահել, բացի տան բժշկից, և մի աստղագետ: Վարանդայի իշխան մելիք Շահնազար II-ը ուներ և իր դռան ծաղրածուն, որը հայտնի էր անունով Պըլը Պուղի (գիժ Պողոս): Պըլը Պուղին Ղարաբաղի Բալակիրևն է. նրա առածները, արածները մինչև այսօր չեն մոռացվել ժողովրդի մեջ: Պարոն Գ. Շերմազանյանցի անեկդոտների հավաքածուի մեջ կարելի է գտնել բավական առակներ Պըլը Պուղիի առածներից: Ծանոթ. թարգմ.:*

*2. Վարանդա կոչվում է մեկը Ղարաբաղի հինգ մահալներից, որ կազմում են Խամսայի մելիքությունները: Վարանդան Մելիք-Շահնազարյանների տիրապետության երկիրն է: Ծանոթ. թարգմ.:*

3. Հեղինակը, խոսելով Վարանդայի իշխանի մասին, չի հիշում նրա անունը, այլ գործ է ածում նրա տոհմանունը միայն այդ խոսքերով՝ Владелец Варандинский Мелик-Шахназаров (Վարանդայի տիրապետող Մելիք-Շահնազարով), բայց թե ո՞ր Մելիք-Շահնազարովը, այդ մասին լռում է։ Պատմությունից հայտնի է, որ Փանահ խանի ժամանակակիցը, նրա հետ բարեկամական կապեր հաստատող և Խամսայի մյուս մելիքներին հակառակ գործող Վարանդայի տիրապետողը Մելիք-Շահնազար II-ն էր։ Դա հիմնեց Փանահ խանի համար Շուշի բերդը և բարձրացնելով նրան մինչև ամբողջ Ղարաբաղի իշխողի աստիճանը, հայոց մելիքությունների քայքայման պատճառը դարձավ։ Տե՛ս մեր «Խամսայի մելիքությունները» (Նյութեր հայոց նոր պատմության համար) գրքի XI և հետևյալ գլուխները։ Ծանոթ. թարգմ.։

4. Ջանախչի բերդ, հայոց գյուղ է, որը առաջ Վարանդայի տիրապետողի աթոռանիստն էր, գտնվում է 12 վերստ հեռավորության վրա Շուշի բերդից, որը Ղարաբաղի նահանգի այժմյան գլխավոր տեղն է։ Ծանոթ. հեղ.։

Ջանախչի կոչում են այդ բերդին թուրքերը, որ նշանակում է անոթներ շինող. այդ անունը առնված է բնակիչների արհեստից։ Բերդը անտառի մեջ գտնվելով, բնակիչների արհեստն է եղել կերտել իրանց անտառների փայտերից զանազան տեսակ ամաններ և անոթներ։ Իսկ հայերը կոչում են այդ բերդը Ավետարանոց։ Մինչև այսօր պահպանվել է ժողովրդի մեջ հին ավանդությունը, իբր թե Աղվանից Վաչական թագավորը, քրիստոնեություն ընդունելով և սուրբ Ավետարանը գիրկն առած, եկավ, առանձնացավ այդ բերդում ապաշխարելու համար, և այն օրից այդ բերդը կոչվեց Ավետարանոց։ Եվ այսօր կարելի է տեսնել այնտեղ Մելիք-Շահնազարյանների ամրոցների ավերակները և բերդի աշտարակներն ու ահագին պարիսպները, շատ տեղերում ամբողջությամբ մնացած։ Ծանոթ. թարգմ.։

5. Դվիթ-ղալամ՝ երկայնաձև արկղիկ, որը պատած է ջնարակով և զանազան նկարներով, որի մեջ պահվում է կաղամար և եղեգնյա գրիչներ, և կրում են գոտիից քարշ տված։ Ծան. հեղ.։

6. Հանիֆա էր առաջինը տասներկու սուրբ իմամներից, որ ապրում էր հիջրեթի* առաջին դարում, նույնպես և Մալիքը։ Այդ

* Հիջրեթ—հիջրա՝ արաբ. գաղթ։ 622 թ.՝ Մուհամմեդի Մեքքայից Մեդինա

երկուսին ևս ատում են Ալիի հետևորդները: Ծանոթ. հեղ.:

Հանիֆա 12 իմամներից չէ. նա կոչվում է և Աբու Հանիֆա, իսկական անունը է Նեյման, Սաբիթի որդին, բնիկ քուֆեցի: Դա էր սուննիների չորս նշանավոր աղանդներից մեկի հեղինակը, որի հետևողները նրա անունով կոչվում են հանաֆի: Ապրում էր հիջրեթի առաջին դարում:

Մալիքը էր Անասի որդին, մեդինացի, հիմնող սուննիների մի այլ աղանդի, որ հետևողները վարդապետի անունով կոչվում են Մալիքի: Ապրում էր հիջրեթի առաջին դարում: Մալիքը նույնպես 12 իմամներից չէ եղել: Ծանոթ. թարգմ.:

7. Աբու Բաքր և Օմար, թե առաջինը և թե երկրորդը իսլամի խալիֆաներ (Մուհամմեդի փոխանորդներ) էին, որոնց նզովում են Ալիի հետևողները (շիաները) նրա համար, իբր թե դրանք բռնությամբ հափշտակեցին Մուհամմեդի աթոռը, որը իրավունքով պատկանում էր Ալիին: Աբու Բաքրն էր Աբու Ղահաֆայի որդին, Մուհամմեդից հետո առաջին խալիֆան եղավ. նրա դուստրը՝ Այիշան, մարգարեի ամուսինն էր: Իսկ Օմարը էր Խաթթաբի որդին, Մուհամմեդից հետո երկրորդ խալիֆան դարձավ: Դրա Հաֆսա անունով աղջիկը նույնպես մարգարեի կինն էր: Ծան. թարգմ.:

8. Մորուքով երդվելը հայոց սովորություն չէ, այլ միայն մահմեդականների սովորություն է, որոնց մոտ մորուք կրելը առանձին հոգևոր վարձատրություն ունի, բացի դրանից, համարվում է պատվի և հասունության նշան: Պարսկերեն ռիշ սֆիդ և թուրքերեն աղ սախկալլը բառերը (որոնց իսկական նշանակությունն է սպիտակ մորուքավոր) գործ են ածվում որպես տիտղոսներ, որ տրվում են ժողովրդի ավագներին միայն: Պարսից կառավարության ամենաանարգական պատիժներից մեկը այն է, երբ կտրել է տալիս հանցավորի ոչ ձեռքը, քիթը, ականջը, այլ նրա մորուքը: Այդ նշանակում է զրկել նրան պատվից և ամեն իրավունքներից: Ծան. թարգմ.: Ալին էր Աբու Թալեբի որդին և Մուհամմեդի սիրելին: Մարգարեի Ֆաթիմա անունով դուստրը Ալիի կինն էր: (Ծան. թարգմ.): Իսկ Հուսեինը էր Մուհամմեդի փեսա Ալիի որդին, որը մեռավ նահատակությամբ: Ծան. հեղ.:

---

փախչելու (գաղթի) թվականը դարձել է մուսուլմանական թվականության առաջին տարին (ծանոթ. կազմողի):

Հուսեինը նահատակվեցավ Քարբալայում, Բաղդադ քաղաքի մոտ, Յազիդի հրամանով. Նիմրը կատարեց դահճի պաշտոնը: Այդ դեպքը առիթ տվեց սուննիների և շիաների մեջ մշտական ատելության, որը շարունակվում է մինչև այսօր: Ծան. թարգմ.:

10. Դերվիշ, այդպես կոչվում են թուրքաց հայանի աբեղաները, որ ապրում են մուրացկանությամբ, որոնք զանազան ծամածություններ են գործում ողորմություն ստանալու համար: Ծան. հեղ.:

Դերվիշներ ունեն բոլոր մահմեդական ցեղերը, դրանք մի տեսակ ճգնավորներ են, որոնք իրանց անձը նվիրում են ամենախիստ փորձությունների. տարբերվում են իրանց սովորություններով և վարդապետություններով: Սեփականություն չունեն, թափառական կյանք են վարում. ոմանք կատարում են հրապարակախոս քարոզիչների պաշտոն, ոմանք երգում են փողոցներում: Ընդհանրապես, դերվիշները մտքի մարդիկ են, դրանցից են ծագում զանազան աղանդներ, վարդապետություններ, փիլիսոփայություններ արևելքում. ապրում են մուրացկանությամբ: Ծան. թարգմ.:

11. Ալիի հետևողներ կոչվում են շիաները և սաստիկ ատելություն ունեն դեպի սուննիները, որոնք ընդունում են Օմարին, Աբու Բաքրին և մյուս խալիֆաներին: Տե՛ս ծան. 7 և 9-ը: Ծան. թարգմ.:

12. Մահմեդականները հավատում են, որ յուրաքանչյուր մարդ ունի իր առանձին աստղը երկնքում, կամ ծնված է այս և այն համաստեղության ներքո, որոնցից կախված է նրա թե բախտավորությունը և թե դժբախտությունը: Ծան. թարգմ.:

13. Թալիշի գավառը Ղարաբաղի հինգ գավառներից մեկն է. այդպես կոչվում է նա Թալիշ կամ Թարիչ անունով, որը գտնվում է Հաքկի (երևի Հախիսիմեի) վանքի մոտ: Թալիշի գավառը կոչվում է և Գյուլիստանի գավառ՝ Գյուլիստանի բերդի անունով: Այդ գավառը Մելիք-Բեգլարյանների տիրապետության երկիրն էր: Ծան. թարգմ.:

Թալիշի իշխան կոչում է հեղինակը վերահիշյալ գավառի տիրապետողին, որը վեպի գլխավոր գործող անձինքներից մեկն է, բայց ամբողջ վեպի ընթացքում չէ հիշում նրա անունը: Պատմությունից հայտնի է, որ Մելիք-Շահնազար II-ի հետ թշնամական հարաբերություն ունեցող Թալիշի այն ժամանակների իշխանը Մելիք-Բեգլարյան Մելիք—Հովսեփն էր, որին թուրքերը Մելիք-Յու-

*սուր էին կոչում: Տե՛ս մեր «Խամսայի մելիքությունները» գրքի IX, XI, XII և հետևյալ գլուխները: Ծան. Թարգմ.:*

*14. Նոքար նշ. ծառա կամ սպասավոր: Ծան. Հեղ.:*

*15. Ջումշուդը Մելիք—Շահնազար II-ի որդին էր: Եթե ընդունենք, որպես ցույց տվեցինք մեր 3-րդ ծանոթության մեջ, որ հեղինակի հիշած Մելիք-Շահնազարյանը Մելիք-Շահնազար II-ն էր, այն ժամանակ Ջումշուդը կլինի նրա հարազատ որդին և ոչ թե եղբոր որդին: Բայց թե Փանահ խանի հետ բարեկամական հարաբերությունները ունեցող Վարանդայի իշխանը Մելիք-Շահնազար II-ն էր, դրանում տարակույս չկա: Հեղինակը, ընտրելով այդ իսկ Մելիք-Շահնազարյանին իր վեպի գլխավոր գործող անձինքներից մեկը, Ջումշուդին կոչում է նրա եղբոր որդի. դրանում պատմության դեմ մեղանչում է: Տե՛ս մեր «Խամսայի մելիքությունները» գրքի XXVI, XXVII և հետևյալ գլուխները: Ծան. Թարգմ.:*

*16 Խամսայի մելիքներ* (Хамсинские мелики): *Դեռ հայոց թագավորության գոյության ունեցած ժամանակներում Ղարաբաղը կազմում էր Արցախի նահանգը: Իսկ երբ Հայաստանը ընկավ, հայոց հինգ տիրապետող իշխաններ, ամրանալով Ղարաբաղի լեռների մեջ, պահպանեցին իրանց անկախությունը, այդ պատճառով կոչվեցան խամսայանները* (хамсинские): *Իսկ «մելիք» տիտղոսը, որ արաբերեն նշանակում է թագավոր, տված է նրանց Շահ Աբաս Մեծից: Ծան. Հեղ.:*

*Հեղինակի «խամսայի մելիքներ» բառերի բացատրությունը պետք է փոքր-ինչ պարզել: Խամսա արաբերեն նշանակում է հինգ: Ղարաբաղը որպես այժմ, նույնպես և առաջ բաղկացած էր հինգ փոքրիկ գավառներից, որոնք կոչվում էին՝ Գյուլիստան կամ Թալիշ, Ջրաբերդ, Խաչեն, Վարանդա, Տիզակ կամ Դուզախ: Յուրաքանչյուր գավառ ուներ մի-մի տիրապետող հայ իշխան, որ կրում էր «մելիք» տիտղոսը: Մելիքների իշխանությունը ժառանգական էր, անցնում էր սերունդից սերունդ: Եվ որովհետև այդ հինգ գավառների հինգ մելիքները պահպանում էին իրանց մեջ մի տեսակ դաշնակցական միություն, այդ պատճառով կոչվում էին հնգեկան կամ խամսայի* (хамсинские) *մելիքներ: Տե՛ս մեր «Խամսայի մելիքությունները» գրքի I և II գլուխները: Ծան. Թարգմ.:*

*17. Շահ Աբաս Մեծը պարսից թագավոր էր, ապրում էր XVI դարու վերջում և XVII դարու սկզբում: Ծան. Հեղ.:*

18. Հեղինակը այստեղ մի աշխարհագրական սխալ է անում, կարծելով, թե Գյուլիստանը և Թալիշը առանձին-առանձին գավառներ են: Տե՛ս ծանոթություն 13-րդ: Ծան. թարգմ.:

19. Մելիք կամ մալիք թե պարսկերեն և թե արաբերեն նշանակում է, իշխող, տիրապետող, այլև արքա: Մելիք տիտղոսը կրում էին հայոց իշխանները Շահ Աբաս Մեծից էլ առաջ, միայն այդ թագավորը ավելի ընդարձակեց մելիքների իրավունքները: Տե՛ս մեր «Խամսայի մելիքությունները»-գրքի I գլուխը: Ծան. թարգմ.:

20. Օրորոցի մեջ նշանադրություն: Մինչև այսօր էլ մնացել է հայոց մեջ հին սովորությունը, որ ծնողները շատ անգամ նշանադրում են ապագա ամուսնացուներին այն հասակում, երբ նրանք դեռ գտնվում են օրորոցի մեջ, կերակրվում են մոր ստինքով և բնավ գաղափար անգամ ունենալ չեն կարող ամուսնության վրա: Այդ դեռևս հասկանալի է: Բայց երբեմն նշանադրվում են, երբ ամուսնացող զույգը դեռ լույս աշխարհ չէ եկած, գտնվում է մոր արգանդում: Ծնողները ուխտ են դնում, եթե մեկի ծնունդը տղա լինի, իսկ մյուսինը՝ աղջիկ, նրանք պետք է ամուսնանան միմյանց հետ: Ծան. թարգմ.:

21. Ջվանշիրցիներ, տե՛ս ծան. 27-րդ:

22. Ձեյվա, մի ավան է նույն անունով գետի մոտ, Գանձակի խանության սահմանի վրա: Այժմ Թալիշի մահալի գլխավոր տեղն է, իսկ առաջ Թալիշի մելիքի բնակության տեղն էր: Ծան. հեղ.:

23. Տաս և երկու սուրբ իմամներ կոչվում են այն աստվածաբանները, որ ապրում էին հիջրեթի առաջին դարում, որոնց մուսուլմանները սրբի տեղ են ընդունում: Ծան. հեղ.:

24. Մարգարեի սան դրախտի ծառը կոչվում է Թուբա կամ ծառ բախտավորության: Այդ ծառը մուսուլմանների ավանդության համեմատ գտնվում է Մուհամմեդի բնակարանի մեջ: Նրա ճյուղերը, զարդարած նռներով և զանազան տեսակ գեղեցիկ պտուղներով, հասնում են մինչև ամեն մի ուղղափառ մահմեդականի բնակարանը: Այդ ծառի ստվերը տարածվում է այնքան հեռու, որ ամենաարագընթաց ձին էլ երբեք չէ կարող հասնել մինչև նրա վերջը: Նրա արմատներից բխում են կաթի, գինու և մեղրի վտակներ: Ծան. հեղ.:

Թուբան մի առասպելական ծառ է Մուհամմեդի դրախտի մեջ, որի լայնատարած ստվերի ներքո զվարճանում են իսլամի արդար-

ներք։ Նրա ճյուղերից կարելի է ստանալ ամեն տեսակ պտուղներ՝ արմավ, նուռ, նարինջ, անանաս, թուզ և այլն։ Բավական է ցանկանալ միայն, և ահա ծառը խոնարհեցնում է իր բարձր ճյուղերը, և ցանկացողը կարող է քաղել իր խնդրած պտուղը։ Իսկ Մուհամմեդի բնակարանի ծառը մի հասարակ ծերացած արմավենի է, որը իբր թե մնացել է մարգարեի ժամանակներից, և այդ պատճառով նվիրական է դարձել։

Մեքքայի ուխտավորները այցելում են այդ ծառին, իբր մի հիշատակ այն սրբությունների թվում, որ մնացել են իսլամի մարգարեից։ Տան. Թարգմ.։

25. Դոնկուզ նշանակում է խոզ, որը համարվում է ամենապիղծ անասուն մուսուլմանների կրոնքով։ Տան. Հեղ.։

26. Գաբր կոչվում են այն պարսիկները, որ դեռ պահպանել են հին կրակապաշտական կրոնը։ Գաբրները հալածվում են մահմեդական պարսիկներից և պիղծ են համարվում։ Տան. Թարգմ.։

27. Ջվանշիրցիները Ղարաբաղի լեռնաբնակներ են, որոնք նշանավոր են որպես լավ ձիավորներ։ Տան. Հեղ.։

Ղարաբաղի լեռնային մասը, միշտ բնակեցրած լինելով հայերով և հայոց մելիքների տիրապետության ներքո գտնվելով. երբեք ջվանշիրցիների բնակության տեղ չէ եղել։ Ջվանշիրցիք իրանց անունը առել են Ջվանշիրի տափարակ անապատներից, որ գտնվում են Կուր գետի աջ ափերի վրա, Ղարաբաղի սահմանի մոտ։ Միայն մելիքների իշխանությունը ընկնելուց հետո ջվանշիրցիք համարձակվեցան իրանց անասունների հետ ամառը անցկացնել Ղարաբաղի լեռների վրա, իսկ ձմեռը դարձյալ վերադառնում էին դեպի Կուր գետի եզերքի տափարակները։ Այդ կյանքը շարունակվում է մինչև այսօր։ Տան. Թարգմ.։

28. Օբա կամ Օվա նշանակում է իջևան։ Այսպես կոչվում է թափառաշրջիկ խաշնարածների ժամանակավոր բնակության տեղը։ Տան. Թարգմ.։

29. Ինչպես արևելյան բոլոր հովիվ ցեղերի մեջ, այնպես էլ ջվանշիրցիների մոտ, տնտեսական բոլոր աշխատությունները բարձված են կնիկների վրա։ Տղամարդիկ վայելում են կատարյալ հանգստություն, զբաղվում են իրանց զենքերով, ձիաներով, պարապում են ավազակությամբ։ Տան. Թարգմ.։

30. Սալամուն ալեյքում նշանակում է՝ խաղաղություն քեզ։

Ալեյքում ըս սալամ նշանակում է՝ քեզ ևս լինի խաղաղություն։

31. Քերիմ խանը էր հիմնողը զանդիների տոհմի թագավորության պարսից գահի վրա, տիրում էր XVIII դարու երկրորդ կիսաբաժնի սկզբում։ Ծան. հեղ.։

Քերիմ խան, տե՛ս մեր «Խամսայի մելիքությունները» գրքի 98, 99, 176 երեսներում։ Ծան. թարգմ.։

32. Փանահ խան։ Իր վեպի մեջ հեղինակը պատմական կետից բավական ճիշտ կերպով նկարագրում է Փանահ խանի ծագումը և նրա զորանալու պատճառները։ Իսկ ավելի ընդարձակ մանրամասները ընթերցողը կարող է գտնել մեր «Խամսայի մելիքությունները» գրքի IX—XV գլուխներում։ Ծան. թարգմ.։

33. Նամազ նշ. աղոթք։ Ծան. հեղ.։

34. Շեյխ՝ մահմեդական կրոնավոր։ Ծան. թարգմ.։

35. Չադրա կամ չադր-չար՝ մահմեդական կնոջ սփածանելիք։ Ծան. թարգմ.։

36. Խաշնարած ցեղերի մեջ տղամարդի և կնոջ աշխատությունները տե՛ս ծան. 29-րդ։

37. Մահմեդական խաշնարած ցեղերը, որոնք դեռ ապրում են նահապետական պարզության մեջ, իրանց կնիկներին փակված դրության մեջ չեն պահում. նրանք կանանոց կամ հարեմ չունեն։ Ծան. թարգմ.։

38. Փիշնամազ կոչվում է նա, որ մինարեթներից կոչում է մուսուլմաններին աղոթելու։ Ծան. հեղ.։

Մեչիդների մինարեթների բարձրությունից աղոթելու հրավերք կարդացողը (ազան տվողը) կոչվում է մուազին և ոչ թե փիշնամազ։ Իսկ փիշնամազ ասում են այն մահմեդական հոգևորականներին, որոնք առանձին արտոնություն ունեն մեչիդներում հրապարակական աղոթքը սկսելու և ժողովուրդը հետևում է նրանց աղոթելու օրինակին։ Փիշնամազ բառի բուն նշանակությունն է առաջին աղոթող կամ աղոթքը սկսող։ Ծան. թարգմ.։

39. Ազան՝ձայնավոր ազդարարություն աղոթելու ժամը որոշելու համար։ Ծան. թարգմ.։

40. Ջիրիդ ասում են այն խաղին, երբ ձիարշավի ժամանակ մրցողները աշխատում են միմյանց հարվածել այդ խաղի համար հատկապես պատրաստված գավազաններով։ Այդ խաղը հին ժա-

*ժամանակներում Հայոց մեջ կատարվում էր փոքր-ինչ այլ ձևով և կոչվում էր մականախաղ: Ծան. թարգմ.:*

*41. Չնայելով, որ Հեղինակի նկարագրած ժամանակներից անցել է մեկ և կես դար, չվանշիրցիք դեռևս չեն փոխել իրենց կենցաղավարության եղանակները: Նրանք և մինչև այսօր բնակվում են գետնափոր խրճիթներում, այն էլ ձմեռը միայն, իսկ տարվա տաք եղանակներում թափառում են զանազան տեղեր, բնակվելով շարժական տաղավարների մեջ, որ պատրաստում են եղեգներից և ծածկում են բանձը թաղիքներով: Ծան. թարգմ.:*

*42. Քարիբլուցիները մի առանձին խաշնարած ցեղ են Ղարաբաղում: Ծան. թարգմ.:*

*43. Խինան առանձին բույս է, որով տաք կլիմաներում բնակվողները ներկում են իրենց ձեռները և ոտները: Ծան. Հեղ.:*

*Խինան մի առանձին բույս է, որը չորացնելով և փոշի դարձնելով, շաղախում են ջրով և գործ են ածում մազեր և մարմնի այլ մասերը ներկելու համար, գլխավորապես՝ ձեռները և ոտները: Ներկած տեղը մուգ ծիրանի գույն է ստանում: Ծան. թարգմ.:*

*44. Սաղդաստ և սոլդաստ նշ. աջ և ձախ կողմի մարդ: Ծան. Հեղ.:*

*Սաղ—դաստ նշ. աջ ձեռք, իսկ սոլ—դաստ նշ. ձախ ձեռք. այսպես կոչվում են այն երիտասարդները, որոնք հարսանիքի հանդեսը կատարելու ժամանակ աջ և ձախ կողմերից շրջապատում են փեսային: Դրանք փոխարինում են մեր մակարներին: Ծան. թարգմ.:*

*45. Քամանչա՝ մուզիկայի գործիք է: Ծան. Հեղ.:*

*46. Հուսեին: Մեր 13-րդ ծանոթության մեջ ցույց տվեցինք, որ Մելիք-Շահնազար II-ի ժամանակակիցը և նրա հետ թշնամական հարաբերություններ ունեցող Թալիշի կամ Գյուլիստանի իշխանը էր Մելիք-Բեգլարյան Մելիք-Հովսեփը: Իսկ արդյոք այդ Մելիք-Հովսեփը ունե՞ր Հուսեին անունով որդի, որին որպես հերոս հիշում է Հեղինակը իր վեպի մեջ, մեզ հայտնի չէ: Մեզ հայտնի է այսքանը միայն, որ Մելիք-Հովսեփը ուներ Մելիք-Բեգլար անունով մի որդի, որը դեռևս հոր կենդանության ժամանակ հայտնի էր իր քաջագործություններով և չափազանց անվեհեր բնավորությամբ: Տե՛ս մեր «Խամսայի մելիքությունները» գրքի 82, 105, 106, 107, 108, 229, 257 երեսները: Ծան. թարգմ.:*

47. Փեշքեշ՝ ընծա: Ծան. Հեղ.

48. Թումանը պարսից դրամ է, որը համապատասխանում է 4 արծաթե ռուբլու: Ծան. Հեղ.

49. Աջ և ձախ ձեռքերի կամ ոտների խորհրդավոր նշանակությունից ստեղծվեցան մեզանում հաջողակ և հաջողություն, ձախողակ և ձախորդություն բառերը: Ոչ միայն պարսիկների մեջ, այլև հայերի մեջ աջ ոտքով առաջին քայլը անելը կամ մեկի շեմքից ներս մտնելը բարեհաջող խորհուրդ ունի, որի ընդհակառակը ձախ ոտքի առաջին քայլը անհաջողություն կարող է բերել: Այդ հասկացողություններից առաջ են եկել ժողովրդի մեջ զանազան ասացվածքներ, օրինակ՝ «Նրա ոտքը խերով էր», «Նրա ոտից վնասվեցավ գործը» և այլն: Ծան. Թարգմ.:

50. Մեկ անգամ փռշտալը հայերի մեջ չար է գուշակում, և այդ պատճառով, եթե պատահում է այդ որևիցե գործի սկսելու միջոցում, իսկույն դադարեցնում են գործը: Երկու անգամ փռշտալը բարի է գուշակում, իսկ երեք անգամը՝ ավելի բարի: Երեքից ավելը ոչինչ նշանակություն չունի: Այստեղից մնել է մեր ժողովրդի մեջ այն սովորությունը, երբ մեկը փռշտում է, իսկույն ամեն կողմից բարեմաղթում են նրան, ասելով՝ առողջություն, որովհետև մի բան պակասեց: Բայց փռշտալու նշանակությունները փոխվում են, նայելով, թե օրվա որ ժամանակումն են պատահում: Օրինակ՝ ժողովրդի մեջ մինչև անգամ առած է դարձել, թե՝ գիշերվա սուրբը (մի անգամ փռշտալը) խեր է: Ծան. Թարգմ.:

51. Ճանապարհ գնալու կամ ճանապարհորդություն սկսելու լավ և վատ, չար և բարի բոպեները, ժամերը ու օրերը որոշելու համար մեր հին աստղագիտության մեջ առանձին կանոններ կան: Մեր «Էֆեմերիդին» ևս այդ մասին որոշումներ է անում: Իսկ ու մինը շատ անգամ շաբաթներով հետաձգում է իր ճանապարհորդությունը, երբ գուշակողները նրան ասում են. «Ձեր բարի սհաթը չէ»: Ծան. Թարգմ.:

52. Մահմեդականների ամուսնական օրենքներով ամուսինը այրը մոլլայի ձեռքով վավերացրած թղթով իր կնոջը գրավական է տալիս կամ անշարժ կալվածքով և կամ մի պայմանավորյալ գումարով, եթե կնոջը հետո արձակելու լինի, նշանակած գրավականը կլինի վերջինի սեփականությունը: Դա մի ապահովություն է կնոջ ապագայի համար և զսպում է ամուսինների ինքնահաճո-

ճյուղը, որոնք իրանց կնիկներին դուրս վռնդելով, թողնում են նրանց քաղցած: Ծան. թարգմ.:

53. Ղազվին, պարսից նշանավոր քաղաք է, որը գտնվում է Թեհրանի և Թավրիզի միջանկյալում: Ծան. հեղ.:

54. Քսան սուրբ իմամներ: Շիաները միայն 12 իմամներ ունեն և ոչ թե քսան: Տե՛ս ծանոթություն 23-րդ: Ծան. թարգմ.:

55. Բալի նշ. լավ: Ծան. հեղ.:

56. Ջանիկ, ջան բառից, որ նշանակում է հոգի: Ծան. թարգմ.:

57. Հաքիմ բառը մի քանի նշանակություններ ունի, որոնք փոխվում են արտասանելու և գրվելու ձևից: Նշանակում է հրամանատար կամ կառավարիչ, իմաստուն, այլև բժիշկ: Ծան. թարգմ.:

58. Խանում նշ. տիրուհի: Ծան. հեղ.:

59. Ծննդյան աստղ: Աստղագետները հաստատում են, թե յուրաքանչյուր մարդ ծնվում է մի առանձին աստղի ազդեցության ներքո: Ծան. հեղ.:

60. Հավթա՝ շաբաթ: Ծան. հեղ.:

Հավթա ավելի ճիշտ կլինի թարգմանել յոթնյակ, այսինքն՝ յոթն օր, մի շաբաթ: Ծան. թարգմ.:

61. Բոլոր մահմեդականները աղոթելու ժամանակ երեսները դարձնում են դեպի Մեքքայի կողմը, ուր գտնվում է ընդհանուր մահմեդականության սրբավայրը: Ծան. թարգմ.:

## ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

1. Խորասանում պատրաստված սաղավարտները, որոնք շատ հարգի են Պարսկաստանում։ Ծան. հեղ.։

2. Այս տեսակ պատիժները խիստ սովորական են արևելքում։ Ծան. հեղ.։

3. Երդվելու մի առանձին ձև է պարսիկների մեջ։ Ծան. հեղ.։

4. Մեծ ծով՝ օվկիանոս։ Ծան. հեղ.։

5. Շուշի բերդը շինված է մի այնպիսի բարձրավանդակի վրա, որ այնտեղ սեպտեմբեր ամսից սկսվում է ձմեռը։ Ծան. հեղ.։

6. Թիլիսման կամ մեր ժողովրդական բարբառով թլըսում կոչվում են զանազան տեսակ կախարդական բժժանքները, որ սնահավատները կրում են իրանց վրա այլևայլ դյութական նպատակներով։ Ծան. թարգմ.։

7. Շուշա թուրքերեն նշ. ապակի։ Ծան. հեղ.։

Հեղինակը կարծում է, որ Շուշի բերդը իր անունը առել է շուշա բառից, դա սխալ ենթադրություն է։ Պատմությունից հայտնի է, երբ Մելիք-Շահնազար II-ը Փանահ խանի հետ կառուցին Շուշի բերդը, այնտեղ տեղափոխեցին այդ բերդին մերձակա մի հայաբնակ գյուղի բնակիչներին։ Այդ գյուղը մինչև այսօր գոյություն ունի և կոչվում է Շոշի կամ Շոշ գյուղ։ Եվ որովհետև բերդի սկզբնական բնակիչները եղան Շոշի գյուղացիները, այդ պատճառով էլ բերդը նրանց նախկին բնակության տեղի անունով կոչվեցավ Շոշի կամ Շուշի։ Տե՛ս մեր «Խամսայի մելիքությունները» գրքի XI գլ. 73 եր.։ Ծան. թարգմ.։

8. Գյուլիստան պարսկերեն նշանակում է վարդանոց կամ վարդարան. այսպես կոչվում է Ղարաբաղի հինգ գավառներից մեկը իր գեղեցիկ վարդերի պատճառով։ Գյուլիստանը գտնվում է Գանձակի գավառի սահմանի մոտ. նրա այն մասը, որ մոտենում է Կուր գետի ափերին, այն աստիճան տոթային է, որ նուռը, թուզը աճում

են և հասունանում են բոլորովին վայրենի դրության մեջ. լեռները, ձորերը ծածկված են այդ պտուղների թփերով: Զարմանալի չէ, երբ կարդում ենք Աղվանից պատմության մեջ, որ այդ կողմերում մի ժամանակ մշակվում էր մինչև անգամ ձիթենի, որի համար հարկավոր է բավական տաք կլիմա: Ծան. Թարգմ.:

Ռուստեմ կամ որպես հայերը արտասանում են՝ Ռոստոմ, պարսից նշանավոր բանաստեղծ Ֆիրդովսու հերոսի անունն է, որին նա երգեց իր «Շահնամե» կոչված անմահ գրքի մեջ: Խորենացին կոչում է նրան Ռոստոմ Սագճիկ, որ պետք է հասկանալ սագաստանցի Ռոստոմ, որովհետև հերոսը այնտեղից էր: Մեր ծերունի պատմաբանը ծաղրում է պարսկական առասպելը Ռոստոմի վերաբերությամբ, որի համար երգում էին, թե հարյուր քսան փղի ուժ է ունեցել, և նրանից գերազանցում է մեր Հայկ Տորքին: Ծան. Թարգմ.:

9. Տղամարդերի համար իր ոսոխի կնոջը հափշտակելը կամ նրան բռնաբարելը համարվում է այն վրեժխնդրություններից մեկը, որ մինչև այսօր բավական սովորական է հայերի մեջ: Վրեժխնդիրը եթե հնար չէ գտնում այդ անելու, պղծում է իր հակառակորդի կնոջ վարտիքը և իր մոտ պահում. դա ևս համարվում է մեծ անպատվություն: Այն երկրներում, ուր օրենքը պատժում է այդ տեսակ չարագործությունները, իհարկե, հիշյալ սովորությունը մասամբ պակասած է, իսկ Պարսկաստանում և Թուրքիայում խիստ հաճախ է պատահում: Ծան. Թարգմ.:

10. Ռուստեմ, պարսից առասպելաբանական Հերքուլեսի անունն է: Ծան. Հեղ.:

11. Ջամշուդ էր չորրորդ թագավորը պարսից Փիշդադյան կոչված առասպելաբանական տոհմից: Ծան. Հեղ.:

Ջամշուդ կամ ըստ պարսկական արտասանության՝ Ջամշիդ, իրավ է, Փիշդադյաններից չորրորդ թագավորն էր: Փիշդադյանների դարաշրջանը պարսից պատմության միֆական ժամանակներն է ներկայացնում: Նրանից հետո սկսում են տիրել Քեհյան կոչված տոհմի ներկայացուցիչները, որոնցից հետո սկսվում է պարսից Արշակունիների թագավորությունը:

Ջամշիդի իսկական անունը Ջամ էր, բայց որովհետև նրա դեմքը լույսի ճառագայթների նման փայլում էր, այդ պատճառով կոչվեցավ Ջամ-շիդ: Նրան համարում են Թեյմուրասի եղբայրը

կամ եղբորորդին: Թեյմուրասի ժառանգ չթողնելու պատճառով պարսիկները ընտրեցին լուսավոր Ջամշիդին: Պարսից պատմագրների կարծիքով, նա թագավորեց յոթն հարյուր տարի, և այդ յոթն հարյուր տարվա ընթացքում Պարսկաստանում տիրում էր խաղաղություն, արդարություն և իրավունք: Ժողովուրդը ապրում էր երջանկության և գոհության մեջ: Ջամշիդի մասին պատմվում են անթիվ առասպելներ. իբր թե նա մի կախարդական թաս ուներ իր առջև և ջրի հստակության մեջ տեսնում էր իր ամբողջ պետությունը, տեսնում էր, թե մարդիկներից ով բարի էր գործում, ով չար, լավերին վարձատրում էր, իսկ վատերին խրատում էր:

Ջամշիդի համար ասում են, իր հպատակներից երդում էր առել, որ ամենևին մեղք չգործեն: Քանի որ ժողովուրդը պահպանում էր այդ ուխտը, նա ապրում էր կատարյալ բախտավորության մեջ: Իսկ երբ որ մարդիկ սկսեցին չար գործել, այն ժամանակ Յաղդանը (Որմիզդը, պարսիկների աստվածը) բարկացավ նրանց վրա, նրանց միջից վեր առեց բարի և լուսավոր Ջամշիդին և նրա փոխարեն թագավոր դրեց չար Զոհաքին, որը սկսեց երկաթի գավազանով կառավարել ժողովուրդը և տանջել նրան:

Ինչ որ ճշմարիտ է Ջամշիդի պատմության մեջ, այն է, որ այդ «բարի և «լուսավոր» թագավորի յոթն հարյուր տարվա տիրապետության մեջ անձնավորվում է պարսից քաղաքակրթության և կուլտուրայի թե սկզբնավորությունը և թե զարգացումը: Եվ պարսից պատմություններից ոմանք նրան ընդունում են Սողոմոն իմաստունի տեղ, ասում են, թե նա պարսիկներին վայրենի կյանքից վերածեց ընտանեկան կյանքի, ժողովուրդը զանազան դասակարգերի բաժանեց, սովորեցրեց տուն շինել, սովորեցրեց բամբակ ցանել, կտավ գործել և հագուստ հագնել, մի խոսքով, ծաղկեցրեց արհեստը և ճարտարությունը: Մինչև այսօր Պարսկաստանում մնացած մի պալատի հոյակապ ավերակները, որ կոչվում են Թախտ Ջամշիդ (Ջամշիդի գահ) համարվում են նրանից մնացած: Ծան. թարգմ.:

12. Ղարաբաղի նժույգները և այժմ համարվում են ամբողջ Անդրկովկասում որպես ձիերի ամենալավ ցեղ: Ծան. թարգմ.:

13. Շամ, Սիրիան է: Ծան. հեղ.:

Շամ կոչվում է Սիրիայի Դամասկոս քաղաքը: Հեղինակը սխալվում է, կարծելով, թե Ղարաբաղի հայոց մելիքների զորքերի

զենքերը Շամի կամ պարսից գործ էին։ Ղարաբաղի հայերը, կըղզիացած լինելով իրանց լեռների մեջ և անդադար պատերազմական կյանք վարելով, կարիքը ստիպել էր նրանց Դաղստանի լեռնականների նման զարգանալ զինագործության արհեստի մեջ։ Ղարաբաղցիք իրանք էին պատրաստում իրանց զենքերը։ Եվ այսօր մեր մեջ ամենալավ զինագործները ղարաբաղցիներ են։ Ծան. թարգմ.։

14. Տերտեր (Тертер), ամենաարինթաց լեռնային գետ է, որ գտնվում է Գանձակի և Ղարաբաղի սահմանի վրա, որի անունը նշանակում է пот (տերտեր)։ Ծան. հեղ.։

Հեղինակը սխալվում է այդ գետի թե անվան բացատրության և թե տեղի վերաբերությամբ։ Իհարկե, եթե Թարթարը ռուսաց ձևով Տերտեր արտասանենք, դուրս կգա տերտեր (տէրտէր, քահանա)։ Բայց թե հայ և թե մահմեդական ժողովրդի մեջ այդ գետը հայտնի է Թարթար անունով, որը մեր պատմական Տրտու գետն է։ Եվ Թարթարը չէ գտնվում Գանձակի և Ղարաբաղի սահմանի վրա, որպես ցույց է տալիս հեղինակը, այլ հոսում է Ղարաբաղի նահանգի մի մասի միջով և բաժանում է այդ նահանգի երկու գավառները (Թալիշը և Ջրաբերդը) միմյանցից։ Ծան. թարգմ.։

15. Խաչենը գտնվում է Ջրաբերդ և Վարանդա գավառների մեջտեղում։ Խաչենի տիրապետող մելիքներն էին Հասան-Ջալալյան իշխանների սերունդը։ Տե՛ս «Խամսայի մելիքությունները» գրքի I գլ. 4 եր. և II գլ. 19 եր.։ Ծան. թարգմ.։

16. Այստեղ հեղինակը մի աշխարհագրական սխալ է անում, կարծելով, որ Գյուլիստանը և Թալիշը առանձին-առանձին գավառներ են, մինչդեռ երկուսն էլ միևնույն գավառն են, միայն զանազան անուններով։ Նա հայտնում է, որ շուտով Գյուլիստանի մելիքը խոնարհվեցավ Փանահ խանին։ Իսկ մի քանի տողերից հետո ավելացնում է. «Մնում էին միայն երկու մելիքներ՝ Վարանդայի և Թալիշի մելիքը»։ Բայց Թալիշի մելիքը միևնույն Գյուլիստանի մելիքն էր, որը դեռ խոնարհված չէր, որին խանը աստղագետի ձևով նամակ է գրում, հրավիրում է հպատակվել իրան, բայց սաստիկ վիրավորական պատասխան է ընդունում, և այդ պատճառ է դառնում մի նոր կռվի խանի և մելիքի մեջ։ Ծան. թարգմ.։

17. Արաքս կամ Արազ, նշանավոր մեծ գետ է, որ բաժանում է

ռուսաց այժմյան անդրկովկասյան նահանգները Ազերբեյջանից (Ատրպատականից): Ծան. հեղ.:

Փանահ խանի տիրապետությունը երբեք չի տարածվել Թարթար գետից մինչև Երասխ գետը, և նա իր կենդանության ժամանակ թեև վարեց հայոց մելիքների հետ բազմամյա պատերազմ, բայց չկարողացավ տիրել Ղարաբաղի ամբողջ նահանգին: Միայն նրա որդի Իբրահիմ խանի ժամանակ, երբ զանազան հանգամանքների պատճառով հայոց մելիքների զորությունը թուլացավ, այդ խանը փոքր-ինչ ընդարձակեց իր իշխանությունը, այն ևս ոչ Թարթար գետից մինչև Երասխ գետը: Այդ կարելի է տեսնել մեր «Խամսայի մելիքությունները» գրքի IX—XXIX գլուխներում: Ծան. թարգմ.:

18. Փանահ խանը երբեք թագավոր լինելու ձգտումներ չի ունեցել և իրան թագավորական տիտղոս չի հատկացրել: Նա սկզբում մի հասարակ հովիվ էր, որ հանգամանքների շնորհիվ պարսից կառավարությունից խանության տիտղոս ստացավ, հետո նույն պարսից կառավարությունից իր անհավատարմության համար սպանվեցավ: Տե՛ս մեր «Խամսայի մելիքությունները» գրքի IX—XV գլուխները: Ծան. թարգմ.:

19. Պարսից նկարչությունը առհասարակ հայտնի է իր ոսկով և վառ գույներով, բայց կերպարանքները բնավ համաչափություն (пропорциональность) չունեն: Ծան. հեղ.:

Երևի հեղինակը տեսել է վերջին ժամանակների հայոց մելիքների ամրոցները և նրանց համեմատ է նկարագրում Թալիշի մելիքի պալատը: Այդ հոյակապ պալատը մինչև այսօր գոյություն ունի, գտնվում է Հին Թալիշ բերդի մոտ, Հոռեկի վանքի հանդեպ: Նրա մի մասը թեև ավերակ է, բայց մեծ մասը պահպանել է իր ամբողջությունը: Նրա մեջ բնավ չէ երևում պարսկական ճաշակ, այլ շինված է հայկական մի առանձին ճարտարապետության ոճով: Ծան. թարգմ.:

20. Փանահ խանը միաժամանակ մունետիկի (չաուշի) պաշտոն էր կատարում Նադիր շահի մոտ: Տե՛ս մեր «Խամսայի մելիքությունները» գրքի IX գլ. 58 եր.: Ծան. թարգմ.:

21. Թալիշի մելիքը «Վարանդացի» ասելով ակնարկում է Վարանդայի իշխան Մելիք-Շահնազարյանին, որը օգնեց Փանահ խանին հիմնելու Շուշի բերդը: Ծան. թարգմ.:

22. Շուշի բերդի կառուցումը մեծ հարված տվեց հայոց մելիքներին, և դրա հակառակ, ամրացրեց Փանահ խանի զորությունը: Թե որքան անառիկ էր այդ ասիական բերդը, բավական է հիշել այն, որ 1795 թվին պարսից Աղա Մամադ շահը իր ահագին զորությամբ երկար ժամանակ մնաց նրա պարիսպների մոտ և չկարողացավ առնել: (Տե՛ս «Խամսայի մելիքությունները, XXIX գլ., 182 և 183 եր.): Դարձյալ 1826 թվին, պարսից թագաժառանգ Աբաս Միրզան 80000 զորքով պաշարեց այդ բերդը և չկարողացավ գրավել, թեև բերդը պաշտպանվելու համար ունեին խիստ չնչին թվով զինվորներ: Տե՛ս մեր «Խամսայի մելիքությունները» գրքի XLIII գլ. 330, 331, 332, 333 և հետևյալ երեսները: Ծան. թարգմ.:

23. Քանի որ Խամսայի մելիքները միաբան էին, քանի որ նրանց մեջ տիրում էր սեր և սերտ դաշնակցություն, Փանահ խանը չհամարձակվեցավ Ղարաբաղում իր համար բերդ հիմնել: Թեև նա փորձ փորձեց հիմնել Բայաթ և Ասկարանի բերդերը, բայց հայոց մելիքները միանալով, երկուսն էլ ոչնչացրին: (Տե՛ս «Խամսայի մելիքությունները» գրքի IX գլ., 62 և 63 եր.: (Իսկ Շուշի բերդի կառուցանելը արգելել չկարողացան, որովհետև այդ ձեռնարկության մեջ խանի հետ միացած էր իրանցից մեկը՝ Մելիք-Շահնազարյանը: Ծան. թարգմ.:

24. Մարջ բանել նշ. գրավ գալ, пари держать: Ծան. թարգմ.:

25. Պատմական անցք է: Ծան. հեղ.:

Այդ պատմական անցքի մանրամասները տե՛ս մեր «Խամսայի մելիքությունները» գրքի XII գլ. 82 եր.: Ծան. թարգմ.:

26. Յոթնամյա պատերազմ: Հայոց մելիքները Փանահ խանի հետ իսկապես 16 տարի կռիվներ են ունեցել, այսինքն 1747 թվից մինչև 1763 թվականը, միայն երբեմն հաշտվել են, երբեմն կարճ ժամանակով զինադադար է եղել: Ծան. թարգմ.:

27. Փանահ խանի որդի Իբրահիմ խանը ընդունեց ռուսաց հպատակությունը: Բայց երբ 1806 թվին պարսից թագաժառանգ Աբաս Միրզան զորքերի ահագին բազմությամբ անցավ Երասխ գետը և մոտեցավ Շուշի բերդին, այն ժամանակ Իբրահիմ խանը, չնայելով, որ ռուսներին հավատարիմ մնալու երդում էր տվել, գաղտնի կերպով թողեց բերդը, գնաց դեպի պարսից բանակը: Մելիք-Շահնազարյան Մելիք-Ջումշուդը (Ջաքավի վերջի հերոսը) այդ իմանալով, իմացում տվեց բերդապահ գնդապետ Լիսանևիչին,

և երկուսը միասին հետամուտ լինելով փախստականին, կես ճանապարհի վրա բռնեցին Ղարաբաղի բնակչին և սպանեցին։ Տե՛ս մեր «Խամսայի մելիքությունները» գրքի XXXIX գլ. 264, 265, 266, 267, 268 եր.։ Ծան. թարգմ.։

28. Իբրահիմ խանի որդի Մեհտի Ղուլի խանը իր հոր նման նույնպես դավաճանեց ռուսներին, 1822 թվին փախավ Պարսկաստան և, առաջնորդելով պարսից թագաժառանգ Աբաս Միրզային, 1826 թվին զորքերի ահագին բազմությամբ հարձակում գործեցին Ղարաբաղի վրա։ Ղարաբաղը այն ժամանակ ռուսների ձեռքումն էր։ Աբաս Միրզան պաշարեց Շուշի բերդը և իր զորքերի մնացած մասը ուղարկեց դեպի Գանձակի գավառը։ Նրանք գրավեցին Գանձակ բերդը և անցան մինչև Շամքորի գետը։ Այդ ժամանակ ռուսաց զորքերով վրա հասավ հայազգի իշխան գեներալ Մադաթովը և Շամքոր գետի մոտ կատարած փառավոր հաղթությունից հետո պարսիկներին հետ մղեց և հալածեց նրանց մինչև Երասխի մյուս կողմը։ Շուշի բերդը գնդապետ Ռեուտի և հայերի ջանքերով դիմացավ 48 օրվա պաշարման։ Հայերի անձնազոհությունը այդ պաշարման ընթացքում ամենայն գովասանքի արժանի պետք է համարել։ Տե՛ս մեր «Խամսայի մելիքությունները» գրքի 327—341 երեսները։ Ծան. թարգմ.։

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Հատորը ընդգրկում է Րաֆֆու 1884—1888 թթ. հոդվածները, «Գաղտնիք Ղարաբաղի» պատմաքննական աշխատությունը, նամակները և Պլատոն Զուբովի «Ղարաբաղի աստղագետը» վեպի թարգմանությունը։ Բնագրերը համեմատվել և ճշգրտվել են սկզբնաղբյուրների, ինչպես նաև հետագա հրատարակությունների հետ։ Կատարվել են անհրաժեշտ ուղղագրական և կետադրական շտկումները։*

### ՀՈԴՎԱԾՆԵՐ

### 1884

*Զախեր-Մազոխի գրականական գործունեությունը։*

*Հոդվածը գրվել է իբրև առաջաբան Զախեր-Մազոխի «Կայենի կնիքը» ժողովածուի հայերեն հրատարակության համար։ Ժողովածուի երեք պատմվածքները ռուսերենից թարգմանել էր Րաֆֆին և 1883 թ. դրանք հրապարակել «Մշակ»-ում։ Առանձին գրքով «Կայենի կնիքը» տպագրվեց 1884 թ. Թիֆլիսում, սույն առաջաբանով։ Րաֆֆու մահվանից հետո հոդվածն առաջին անգամ հրապարակվել է Րաֆֆի, «Գրականության մասին» ժողովածուում, Երևան, 1958 թ.։*

*Առաջաբանը հրապարակվել է ՐԱՖՖԻ ստորագրությամբ։*

*Արտատպված է «Կայենի կնիքը» գրքից, Թիֆլիս, 1884 թ.։*

*1. Լեոպոլդ ֆոն Զախեր-Մազոխ—ավստրիացի գրող, ծնվել է Լվովում, 1836 թ., վախճանվել Հեսսենում (Ավստրիա), 1895 թ.։ Ստեղծագործության վաղ շրջանում կրել է Ի. Ս. Տուրգենևի ազդեցությունը։ Հայտնի են նրա «Գալիցիական պատմությունները», «Ռուսական պալատական պատմություններ», «Դաժան կանայք» ժողովածուները և 11 վեպերը։*

2. Profession de foi—*դավանանք, խոր համոզմունք, սեփական սկզբունքների անմնացորդ արտահայտումը մինչև վերջ։*

*3. Բրետ-Գարտ-Ֆրենսիս Բրեթ Հարթ, ամերիկյան գրող (1836—1902)։*

### 1885

### ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

*Րաֆֆին նամակը գրել է ի պատասխան Հայկունու հոդվածի, որը տպագրվել էր «Մեղու Հայաստանի» թերթի 1885 թ. թիվ 90-ում։ Նամակում Րաֆֆին ակնարկում է Կոստանյանցի կողմից իրեն տրամադրված երկու տետրակների թողնելու «այլ նպատակի» մասին։ Խոսքը վերաբերում է հավաքածուն «Խամսայի*

մելիքությունները» աշխատության հետ իբրև հավելված տպագրելու։ Այդ մասին Րաֆֆին հատուկ նշել է «Խամսայի մելիքությունների» վերջաբանում։

Հրատարակված է ՐԱՖՖԻ ուղղագրությամբ։ Արտատպված է «Արձագանք» շաբաթաթերթից, Թիֆլիս, 1885 թ., թիվ 21, էջ 302։

1. Սարգիս վարդապետ Կոստանյանց—Ղարաբաղի Տիզակ գավառի Գտիչ վանքի վանահայրը, որի մասին Րաֆֆին խոսում է «Խամսայի մելիքությունների» վերջաբանում։

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Նամակում Րաֆֆին կրկին ստիպված է տալու մանրամասն բացատրություն իր նախորդ նամակում հիշատակված Սարգիս Կոստանյանցի հավաքածուն իր մոտ պահելու պատճառի և նպատակի մասին՝ այս անգամ պատասխանելով Հայկունու երկրորդ հոդվածին՝ «Բաց նամակ պ. Րաֆֆուն» վերնագրով («Մեղու Հայաստանի», 1885, թիվ 93)։ Չնայած Րաֆֆու հանգամանալի բացատրությանը, Հայկունին երրորդ հոդվածն է հրապարակում նույն «Մեղու Հայաստանի» թերթում, որին Րաֆֆին այլևս հարկ չի համարում պատասխանել։

Նամակը հրապարակված է ՐԱՖՖԻ ուղղագրությամբ։

Արտատպված է «Արձագանք» շաբաթաթերթից, 1885 թ., թիվ 23, էջ 326։

## 1886

## «ԳԱՂՏՆԻՔ ՂԱՐԱԲԱՂԻ»

Րաֆֆու այս ուսումնասիրությունը գրվել է իբրև քննություն Ապրես Բեկնազարյանցին վերագրվող նույն վերնագիրը կրող գրքի, որը թարգմանել էր Մակար Բարխուդարյանը և տպագրել Ս. Պետերբուրգում, 1886 թ.։ Մինչև գրքի հրապարակ գալը «Մեղու Հայաստանին» սկսում է լայնորեն ազդարարել ու գովաբանել այն իբրև նորահայտ պատմագիտական արժեքավոր աշխատություն, իսկ Հայկունին իր «Ուղեգնացական ակնարկներ» շարքում հատվածաբար տալիս է հիշատակարանի շարադրանքը (տե՛ս «Մեղու Հայաստանի», 1885 թ., թիվ 62—68)։

Հիշատակարանի հավաստիության մասին առաջինն իր կասկածն է հայտնում Լեոն՝ ունենալով ակնհայտ նմանություն Րաֆֆու «Խամսայի մելիքությունները» աշխատության հետ։ Այդ առթիվ սկսվում է բանավեճ Լեոյի և Հայկունու միջև (տե՛ս «Արձագանք», 1885 թ., թիվ 14, 19 և «Մեղու Հայաստանի», 1885 թ., թիվ 79, 93)։ Հոդվածներ են տպվում նաև «Նոր դար» թերթում, 1886 թ., թիվ 50—53, 56, 58, 62, 65, 67, 69, 71, 74, 76, 78, 82,89։ Րաֆֆին անմիջապես չի արձագանքում բանավեճին։ Ինչպես տեղեկանում ենք «Գաղտնիք Ղարաբաղի» գրքի մեկենաս Սարգիս Ծատուրյանին ուղղված նրա նամակից, նա պատրաստվում էր գրել ընդարձակ գրախոսություն, ուր «փաստերով կապացուցանեմ, որ այդ գիրքը Աբրահամ կամ Ապրես Բեկնազարյանների գործը չէ, այլ Մակար վարդապետի կեղծ աշխատությունն է» (տե՛ս թիվ 76 նամակը հատորում)։ Եվ իրոք, «Արձագանք» շաբաթաթերթի 1886 թ. թիվ 35-ից սկսում է տպագրվել Րաֆֆու քննությունը նշված գրքի վերաբերյալ, որը դուրս է գալիս գրախոսա-

կանի տոհմաններից՝ պահելով պատմագիտական լուրջ հետազոտություն։ Անհերքելի փաստերով Րաֆֆին ապացուցում է ոչ միայն Սերեն Բեկնազարյանի հնարովի հեղինակ լինելը, այլև Մակար Բարխուդարյանի պատմագիտական սխալները, որոնք կարող էին մոլորության մեջ գցել անտեղյակ ընթերցողին։ Համեմատական քննությունը «Խամսայի մելիքությունները» գրքի հետ բերում են այն համոզման, որ ակնհայտ էր կատարված կեղծիքը, իսկ հեղինակի հավակնությունը՝ ներկայացնելու հիշատակարանն իբրև սուտյց պատմություն, Րաֆֆու կողմից գնահատված են վնասակար և հեռու պատմական ճշմարտությունից։ Մատենախոսությունը «Արձագանքում» տպագրվելուց հետո հրատարակվել է նաև 1906 թ. Վիեննայում։

Հրատարակված է Րաֆֆի ստորագրությամբ։ Արտատպված է «Արձագանք» շաբաթաթերթից, Թիֆլիս, 1886 թ., թիվ 35, էջ 433—436, թիվ 36, էջ 445—448, թիվ 37, էջ 462—467, թիվ 38, էջ 481—484, թիվ 39, 496—503, թիվ 40, 510—513, թիվ 41, էջ 523—530, թիվ 42, էջ 542—547, թիվ 44, էջ 570—576, թիվ 45, էջ 588—592, թիվ 46, էջ 605—607։

1. Մակար Բարխուդարյան—(1839—1906) պատմաբան, գրող, բանասեր, էջմիածնի միաբանության, ապա Սինոդի անդամ, եպիսկոպոս։ Հեղինակն է «Միրզա և Աննա», «Պոլը Պողի», «Աղվանից երկիր և դրացիք, միջին Դաղստան», «Արցախ», «Պատմություն Աղվանից» Ա և Բ հատորներ գրքերի։

## 1887

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

Րաֆֆու՝ «Դաղանիք Ղարաբաղի» գրքի քննադատության տպագրությունից («Արձագանք», 1886, թիվ 35—42, 44—46) հետո խմբագրությանն է դիմում Հարություն-Բեկ Սարգիս Բեկյան Հասան-Ջալալյան անունով մի անձնավորություն՝ Րաֆֆուն մեղադրելով Հասան-Ջալալյանների տոհմագրության մեջ թույլ տրված սխալների համար։ Ընթերցողներին պարզաբանում տալու և նամակագրին պատասխանելու նպատակով էլ վիպասանը գրում է իր այս նամակը։

Հրատարակված է Րաֆֆի ստորագրությամբ, «Արձագանքի» 1887 թ., թիվ 34-ում, որտեղից էլ արտատպվում է։

## ՊԱՐՈՆ Ղ. ԱՂԱՅԱՆՑԻ ՀԱՍՑԵԻՆ

«Կայծերի» երկրորդ հատորի լույս տեսնելուց հետո «Աղբյուր» ամսագրի 1887 թ. 8—9-րդ համարներում հրատարակվում է Ղ. Աղայանի «Իմ ստացած տպավորությունը պ. Րաֆֆու «Կայծերի» երկրորդ հատորից» հոդվածը։ Քանի որ այդտեղ արտահայտված էր խիստ բացասական կարծիք, ի պատասխան այդ հոդվածի Րաֆֆին գրում է «Պարոն Ղ. Աղայանի հասցեին» հոդվածը և «Բրուտի չունը» առակը (տե՛ս Րաֆֆի, Երկերի ժողովածու 12 հ., հ. 1, էջ 184)։

Կարդալով Րաֆֆու հոդվածն ու առակը, Աղայանը «Աղբյուրի» նույն տարվա 11-րդ համարում հրատարակում է «Առ պ. Րաֆֆի» ծանուցումը և մի առակ, ուղղված Րաֆֆու դեմ, որոնց նույնպես վիպասանը պատասխանել է։ Հոդվածը

հրապարակված է Րաֆֆի ստորագրությամբ, «Արձագանքի» 1887 թ. թիվ 39-ում, որտեղից էլ արտատպվում է։

## ՊԱՐՈՆ Ղ. ԱՂԱՅԱՆՑԻ ՀԱՍՑԵԻՆ

«Պարոն Ղ.Աղայանցի հասցեին» վերնագրով Րաֆֆու առաջին հոդվածին Ղ. Աղայանը պատասխանում է «Սուտ ընդ առակին» վերնագրով և «Ես ու Րաֆֆին» երկտողով («Աղբյուր», 1887, թիվ 11), որտեղ հեղինակը պահանջում էր Րաֆֆուց, որ վերջինս ուղղի իր սխալը։ Րաֆֆին գրում է «Պարոն Ղ. Աղայանցի հասցեին» վերնագրով իր երկրորդ հոդվածը և «Դիոս և էշեր» առակը (տե՛ս Րաֆֆի, ԵԺ 12 հ., հ. 1, էջ 185)։

Երկու գրողների միջև ծագած բանավեճը, ի վերջո, վերածվում է անձնական հակակրանքի և պատճառ դառնում, որ Րաֆֆին գրի իր «Պարկապզուկ ածողները գրականության մեջ» և «Վիպագրությունը ռուսահայերի մեջ» հոդվածները։

Հոդվածը հրապարակված է Րաֆֆի ստորագրությամբ։ Արտատպված է «Արձագանք» շաբաթաթերթից, 1887, թիվ 47։

## ՊԱՐԿԱՊԶՈՒԿ ԱԾՈՂՆԵՐԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հոդվածը առաջին անգամ հրապարակվել է Րաֆֆու մահից հետո, 1892 թ., այն էլ՝ կիսատ։ Քանի որ հոդվածի միայն սկիզբն է տպված, նրա գրության ճշգրիտ տարեթիվն ու ամիս-ամսաթիվը հայտնի չեն։ Պետք է ենթադրել, որ գրվել է 1887 թ. սկզբում, Աղայանի հետ ունեցած բանավեճից հետո։

«Արձագանքում» հոդվածը ուղեկցվում է խմբագրության ծանոթությամբ, որից հայտնի է դառնում, որ վիպասանի այրին՝ Աննա Րաֆֆին խմբագրությանն է տրամադրել հոդվածի միայն սկիզբը։ Ըստ երևույթին, որևէ գրողի (կամ գրողների) անձնական վիրավորանք հասցնելուց խուսափելու պատճառով այրին այդպես էլ հոդվածի մնացած մասը տպագրության չի հանձնել։ «Պարկապզուկ ածողներից մի քանիսի» մեջ, մասնավորապես, կարող էր լինել Ղ. Աղայանի անունը։

Հոդվածը հրապարակված է Րաֆֆի ստորագրությամբ, «Արձագանք» լրագրի 1892 թ. թիվ 150-ում, որտեղից էլ արտատպվում է։

## 1888

12 - 9

## ՎԻՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՀԱՅԵՐԻ ՄԵՋ

Այս հոդվածը Րաֆֆու անտիպ մնացած գործերից է և նույնպես հրապարակվել է հեղինակի մահից հետո, 1889 թ.։ Ամուսնու ձեռագրերի մեջ հայտնաբերելով հոդվածի ինքնագիրը՝ Աննա Րաֆֆին այն հանձնել է «Մշակի» խմբագրությանը։ Հոդվածի լույս տեսնելուց հետո սկսվում է մի մեծ բանավեճ «Մշակի» խմբագիր Արծրունու և «Արձագանքի» խմբագիր Աբգար Հովհաննիսյանի միջև, որին մասնակցել են նաև Աննա Րաֆֆին, Շիրվանզադեն և «Նոր դարի» խմբագիր Սպանդար Սպանդարյանը (տե՛ս «Մշակ» 1889, թիվ 12, 15, 19, «Արձագանք», 1889, թիվ 3, 4, 5, «Նոր դար», թիվ 13, 16, 18)։

*Գրիգոր Արծրունին մեղադրվում էր այն բանում, որ նա աղավաղել է Րաֆֆու հոդվածը, կրճատելով որոշ անձանց (Գ. Աղայան, Պ. Սիմոնյան) վերաբերվող տողերը։ Ստիպված է լինում բանավեճին մասնակցել Աննա Րաֆֆին և պարզաբանել, որ այդ անձանց վերաբերող հատվածները հանել է ինքը, իսկ մնացած ջնջումները կատարված են իր ամուսնու ձեռքով («Մշակ», թիվ 15)։ Բայց այս նյութից հետո էլ կրքերը չեն հանդարտվում։*

*Ինչպես և նախորդի, այս հոդվածի գրության ճշգրիտ ժամանակն էլ հայտնի չէ։ Այն չի նշել ոչ հեղինակը, ոչ էլ նրա այրին։ Ճշմարտությանը մոտ է Արշակ Հովհաննիսյանի կարծիքը, ըստ որի հոդվածը գրվել է 1888 թ. հունվարին։ Այն զգալի չափով (եթե ոչ ամբողջովին) հետևանք է Գ. Աղայանի հետ ունեցած բանավեճի։*

*Հոդվածը հրապարակվել է Րաֆֆի ստորագրությամբ։ Արտատպված է «Մշակից», 1889, թիվ 9։*

## ՆԱՄԱԿՆԵՐ

### 1857

### 1. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

*Հովհաննես Ավետիսյանը Րաֆֆու երիտասարդական շրջանի ընկերներից էր, որը հետագայում տեղափոխվել է Կ. Պոլիս, սովորել Բեբեքի ամերիկյան ուսումնարանում, հետո գնացել Արևմտյան Եվրոպա և սովորել բժշկություն։ Մահացել է 1920-ին, Էդինբուրգում։*

*Նամակի գրության ճշգրիտ ժամանակը նշված չէ։ Ժողովածուում, որտեղից արտատպված է նամակը, բերված են 2 ծանոթություն. 1. Նամակը թվական չունի, հավանական է, որ լինի 1857, 2. Այս նամակին հապավված են այն մասերը, որոնք Հովհ. Քալանթարի անձին հետ կապ ունին։*

*Ենթադրաբար, նամակը գրված է 1857 թ. հոկտեմբեր-դեկտեմբերին։*

*Արտատպված է «Րաֆֆի. Կյանքը, գրականությունը, հիշողություններ» ժողովածուից, Փարիզ, 1937, էջ 27։*

*1. Այս մտադրությունը իրականություն չի դարձել։*

### 1858

### 2. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

*Արտատպված է «Րաֆֆի. Կյանքը, գրականությունը, հիշողություններ» ժողովածուից, Փարիզ, 1937, էջ 29։*

*1. Ավետարան ըստ Մատթեոսի, գլ. ԻԱ։*

### 3. ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆԻՆ

*Ժամանակի հայտնի կրոնական և հասարակական գործիչ, հետագայում Ամենայն հայոց կաթողիկոս (1892-ից) Մկրտիչ Խրիմյանին (1820—1907) ուղղված*

այս նամակը առաջին անգամ տպագրվել է վերջինիս հրատարակած «Արծիվ Վասպուրականի» ամսագրի 1858 թ. 7-րդ համարում։

Արտատպված է նույն տեղից, էջ 188։

1. Այս և նախորդ 2 նախադասությունները Րաֆֆու երկերի ժողովածուների նախորդ հրատարակությունների (10 հատորով) մեջ բացակայում են։

1 8 6 0

## 4. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱԹԱՆՅԱՆԻՆ

Հովհաննես Քաթանյանը Ստավրոպոլի արքունական գիմնազիայի նկարչության դասատուն էր։ Նամակը գրվել է վիպասանի «Աղթամարա վանքը» աշխատությունը «Հյուսիսափայլին» ուղարկելու առիթով։ Քաթանյանը աշխատությունը ուղարկում է Ստ. Նազարյանին, և այն լույս է տեսնում «Հյուսիսափայլի» 1860 թ. 11-րդ համարում։

Նամակը արտատպված է նույն համարից, էջ 397։

1 8 6 8

## 5. ԱՎԱԳ ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆԻՆ

Նամակն ուղղված է Րաֆֆու հայրենակից և պատանեկության ընկեր Ավագ Ավթանդիլյանին (1838—1917)։

Արտատպված է ինքնագրից, Գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Րաֆֆու ֆոնդ, թիվ 15։

## 6. ԱՎԱԳ ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆԻՆ

Արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, Րաֆֆու ֆոնդ, թիվ 4։

1. Րաֆֆուն ոգեշնչություն պատճառած հոդվածը տպագրվել է «Ծաղիկ» կիսամսյա հանդեսի 1866 թ. թիվ 124-ում։

## 7. ԱՎԱԳ ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆԻՆ

1868 թ. օգոստոսին Րաֆֆին առևտրական գործերով մեկնում է Թիֆլիս։ Իր հետ նա վերցնում է և իր անդրանիկ վեպը՝ «Խլվլիկը» («Սալբի»), որը հետաքրքրում է տեղի ընթերցասեր հասարակայնությանը։

Նամակն արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, Րաֆֆու ֆոնդ, թիվ 5։

1. Ստ. Նազարյանի մտադրությունը՝ 1864-ին «Հյուսիսափայլի» դադարեցումից հետո 1868-ին լույս ընծայել «Հառաջեր Հայաստանի» հանդեսը, չի իրականացել։

1 8 6 9

## 8. ԱՎԱԳ ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆԻՆ

1868 թ. վերջերին Մելիք-Հակոբյան ընտանիքը կորցնում է երբեմնի հարստությունը և սնանկանում։ Ինչպես երևում է Րաֆֆու այս նամակից, նա այն-

րան նեղ ֆինանսական դրության մեջ է ընկել, որ ստիպված է եղել իր բարեկամից ետ խնդրել իր տված 20 թումանը։

Նամակն արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, Րաֆֆու ֆոնդ, թիվ 6։

## 1872

### 9. ԱՎԱԳ ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆԻՆ

Այս նամակի գրության ժամանակ Րաֆֆին արդեն աշխատակցում էր «Մշակին» և, ինչպես երևում է, ուզում էր Ավթանդիլյանին ևս դարձնել լրագրի ակտիվ թղթակիցներից մեկը։

Նամակն արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, Րաֆֆու ֆոնդ, թիվ 7։

## 1873

### 10. ԱՎԱԳ ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆԻՆ

Նամակն արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, Րաֆֆու ֆոնդ, թիվ 8։

1. Հայկոնը «Մշակի» պարսկահայ թղթակիցներից էր։

## 1874

### 11. ԱՎԱԳ ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆԻՆ

Նամակն արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, Րաֆֆու ֆոնդ, թիվ 9։

1. Աստվածատուր Ղարաբեկովը և Թավրիզեցին, ինչպես և Հայկոնը, «Մշակի» Թավրիզաբնակ թղթակիցներ էին։

### 12. ՌԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆԻՆ

Նամակն արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, Ռ. Պատկանյանի ֆոնդ, թիվ 1159։

1. Րաֆֆու այս նամակին ի պատասխան, Ռ. Պատկանյանը նույն թվի սեպտեմբերի 5-ի իր նամակում մասնավորապես գրում է. «...Ձեր արձակը յուր սերումը, թե արտաքին և թե ներքին հյուսովն, թե ասացվածքի կերպով և թե առարկայի ժամանակակցությամբ, միով բանիվ՝ ամեն կողմանե նոր երևույթ է մեր նորածին գրականության մեջ։ ...Դուք տիրապետեցիք բոլոր էությանս, որ կողմ կամեցաք, այն կողմ տարեցիք հոգիս... Ինչո՞ւ, նրա համար, որ դուք բանաստեղծ եք բառիս ծայրահեղ իմաստով...» (Րաֆֆի, «Սալբի», Վիեննա, 1911, Աննա Րաֆֆու առաջաբանը, էջ 16—17)։

2. Րաֆֆու՝ Գերմանիայում սովորելու բաղձանքը այդպես էլ մնում է անկատար դրամական միջոցների սղության պատճառով։

## 13. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Նամակն ուղղված է Րաֆֆու մտերիմ բարեկամներից մեկին՝ Թավրիզի Արամյան դպրոցի ուսուցիչ Համբարձում Կարապետյանին։

Արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, Րաֆֆու ֆոնդ, թիվ 24։

1. Մելիք-Ագարյանցը Թիֆլիսաբնակ մեծահարուստ էր, որը մոտ էր կանգնած գրական շրջաններին, մտերիմ էր Րաֆֆու հետ և հաճախ նյութական և բարոյական օգնություն էր ցույց տալիս նրան։ Րաֆֆու մահից հետո դարձել է նրա որդիներից մեկի խնամակալը։

Մահտեսի Սիմոնը Թավրիզաբնակ հարուստ էր, Րաֆֆու աշակերտ Վարդան Թումանյանի հորեղբայրը։

## 1 8 7 5

## 14. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Այս նամակում առաջին անգամ տեղեկություն ենք հանդիպում այն մասին, որ Թավրիզի դպրոցում աշխատելու վիպասանի մտադրությունը տեղի որոշ հայերի կողմից դիմադրության է արժանացել։

Արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, Րաֆֆու ֆոնդ, թիվ 19։

1. Արզումանը, ինչպես և մահտեսի Սիմոնը, Թավրիզի հարուստներից էր, Աբրին և Սարգիսը՝ հավանաբար Արամյան դպրոցի հոգաբարձուներից, իսկ Մուշեղյանը՝ նույն դպրոցի դասատուներից։

## 15. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

«Մշակի» 1875 թ. առաջին համարում տպագրված է Թավրիզից ուղարկված մի նամակ, որն ուղղված էր Ատրպատականի հոգևոր առաջնորդ Անդրեաս եպիսկոպոսի դեմ։ Ու թեև շուտով «Մշակում» տպագրվում է այդ հոդվածի հերքումը (թիվ 11), այնուամենայնիվ, հոգևոր առաջնորդը առաջին հոդվածի տպագրության համար մեղադրում է վիպասանին։ Իր բարեկամի կասկածները ցրելու նպատակով էլ Րաֆֆին գրել է այս նամակը։

Արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, Րաֆֆու ֆոնդ, թիվ 20։

## 16. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Նամակն արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, Րաֆֆու ֆոնդ, թիվ 21։

## 17. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Ինչպես երևում է Հ. Կարապետյանին գրած Րաֆֆու նախորդ նամակներից, նա մտադրություն ուներ գնալ Թավրիզ և աշխատել Արամյան դպրոցում։ 1875 թ. մայիսին նա Թիֆլիսից գնում է Թավրիզ, հաստատվում նոր պաշտոնում և ապա գնում Փայաջուկ՝ հարազատներին տեսնելու և կազդուրվելու։

Նամակն արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, Րաֆֆու ֆոնդ, թիվ 22։

### 18. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

*Արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, Րաֆֆու ֆոնդ, թիվ 23։*

### 19. ԱՐԱՄՅԱՆ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆԸ

*Ինչպես արդեն երևում է Րաֆֆու նախորդ նամակից, ոչ բոլոր թավրիզահայերին էր դուր գալիս այն բանը, որ վիպասանը պաշտոնավարում էր Թավրիզում։ Նման անբարյացակամության արտահայտություն պետք է համարել և նամակ-դիմումի մեջ հիշատակված անձնավորության (ըստ երևույթին, դպրոցի հետ կապ ունեցող մարդու) հանիրավի պահանջը։*

*Նամակը հրապարակվում է առաջին անգամ։ Արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, Րաֆֆու ֆոնդ, թիվ 43։*

## 1876

### 20. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

*Նամակն ուղղված է Րաֆֆու հայրենակից, լրագրող, հրապարակախոս և հասարակական գործիչ Համբարձում Առաքելյանին (1855—1918)։ 1913—1918 թթ. նա խմբագրել և հրատարակել է «Մշակը»։*

*Նամակն արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, Հ. Առաքելյանի ֆոնդ, թիվ 1528։*

*1. Խոսքը Խորեն Ստեփանեի վարդապետի և նրա «Հայկական աշխարհ» հանդեսի (1864—1871, 1874—1879) մասին է։*

*2. Խնդիրը վերաբերում է Րաֆֆու «Պարսկաստանի հայոց վիճակագրական գրությունը» հոդվածին («Մշակ», 1875, թիվ 38)։*

### 21. ԱՐԱՄՅԱՆ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆԸ

*Արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, Րաֆֆու ֆոնդ, թիվ 44։*

### 22. ՓԻԼԻՊՈՍ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

*Մանկավարժ, թարգմանիչ և հրատարակիչ Փիլիպոս Վարդանյանը (1842-1916) մտադրվել էր 1876-ին Պետերբուրգում հրատարակել «Լույս» անունով մի հանդես։ Րաֆֆու այս նամակը գրված է որպես պատասխան Փ. Վարդանյանի՝ հանդեսին աշխատակցելու հրավերին։*

*Արտատպված է «Արձագանք» լրագրից, 1892, թիվ 34։*

*1. Րաֆֆին նկատի ունի իր «Խաչագողի հիշատակարանը» վեպը։*

### 23. ՓԻԼԻՊՈՍ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

*Նամակն արտատպված է «Արձագանք» լրագրից, 1892, թիվ 34։*

*1. Փ. Վարդանյանին դժգոհություն պատճառած հոդվածը տպագրվել է «Մշակի» 1876 թ. թիվ 6-ում։*

12-11 186

## 24. ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

*Ինչպես և նախորդ երկուսը, Րաֆֆու այս-նամակն էլ տպագրվել է «Արձագանքում», 1892, թիվ 35։ Այս նամակներին նախորդող իր առաջաբանում Փ. Վարդանյանը հայտնում է, որ ինքը «Արձագանքի» խմբագրությանն է ուղարկել 4 նամակ, որոնցից, սակայն, տպագրվել են երեքը։*

*Նամակն արտատպված է «Արձագանքից»։ Նամակում հիշատակվող Սանասարյանցը հայտնի մեծահարուստ, բարեգործ Միքայել Սանասարյանն է, Աբգարը՝ «Փորձի», ապա «Արձագանքի» խմբագիր Աբգար Հովհաննիսյանը։*

## 25. ՍԱՎԱԴ ՍԱԹԱՆԴՈՎՅԱՆԻՆ

*1877 թ. սկզբներին Թավրիզում կղերական հալածանք է սկսվում Րաֆֆու դեմ։ Վիճակային հոգևորականները, որ ավելի վաղ էին սկսել թունավորել նրա կյանքը, օգտագործելով տեղացի հարուստներից մի քանիսին, հասնում են այն բանին, որ Րաֆֆին իր պաշտոնից հրաժարական է տալիս և մայիսին ուղևորվում Թիֆլիս (մանրամասները տե՛ս «Րաֆֆին ժամանակակիցների հուշերում» գրքում, Երևան, 1986, էջ 150—159, 255—257)։ Այստեղ մեկ ամիս մնալուց հետո նա ընդունում է Ագուլիսի երկսեռ դպրոցի հոգաբարձության հրավերը և նույն թվականի երկրորդ կեսին արդեն Ագուլիսում էր։*

*Նամակն արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, Րաֆֆու ֆոնդ, թիվ 10։*

*1. Ակնարկում է Քրիստոսի կողմից Ղազարոսին հարություն տալն ու հարազատներին վերադարձնելը, Ավետարան ըստ Հովհաննեսի, գլ. ԺԱ։*

## 1879

## 26. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

*Այս և հետագա մի շարք նամակներ ուղղված են Վերին Ագուլիսցի առևտրական Մելքոն Փանյանին (1825—1901), որը հաստատվել էր Մոսկվայում, ծանոթ էր ժամանակի հայ նշանավոր մտավորականներից շատերի (Նազարյանի, Նալբանդյանի, Շահազիզի, Պատկանյանի) հետ և անհրաժեշտության դեպքում նրանց ցույց էր տալիս նյութական և այլ օգնություն։*

*Փանյանին ուղղված այս առաջին նամակը Րաֆֆին գրել է «Կայծերի» հրատարակության առթիվ, և սկսված նամակագրությունը շարունակվել է մինչև վիպասանի մահը։*

*Փանյանին գրված Րաֆֆու նամակներից մեզ հասել են 34 հատ, որոնցից 33-ը (մի մասը՝ կրճատումներով) Հ. Տեր-Հակոբյանի (Իրազեկ) կողմից հրատարակվել են «Արարատ» ամսագրի 1913 թ. 2—3, 4, 6—7-րդ համարներում։ Հետագայում, 1920 թ., նույն Հ. Տեր-Հակոբյանը «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթում նորից է հրապարակել Փանյանին ուղղված նամակներից 11-ը, հատկապես նրանք, որ 1913-ին տպագրվել էին կրճատ։*

*Նամակը արտատպված է «Արարատ» ամսագրից, 1913, թիվ 2—3։*

## 27. ԳԵՎՈՐԳ ՎԵՀԱՊԵՏՅԱՆԻՆ

Աստրախանի հայկական թեմի առաջնորդ Գևորգ արքեպիսկոպոս Վեհապետյանին (1807—1882) ուղղված այս նամակը գրվել է «Կայծերի» բաժանորդագրությունը խրախուսելու նպատակով: Նամակի գրության ամսաթիվը նշված չէ, այն որոշված է նամակին կից շրջաբերականով, որը թվագրված է դեկտեմբերի 10-ով:

Արտատպված է ինքնագրից, ՀՀ Պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆոնդ թիվ 52, ցուցակ թիվ 5, գործ թիվ 7, թերթ 56:

## 28. ԱՎԱԳ ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆԻՆ

Նամակն արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, Րաֆֆու ֆոնդ, թիվ 11:

1. Խիզանյանը Թավրիզի Արամյան դպրոցի դասատուներից էր, որն իրեն էր վերագրում «Մշակում» տպագրված Րաֆֆու անստորագիր նամակները:

## 1 8 8 0

## 29. ԱՎԱԳ ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆԻՆ

Րաֆֆու՝ Թավրիզից հեռանալուց որոշ ժամանակ անց Արամյան դպրոցում սկսում է դասավանդել Ավագ Ավթանդիլյանը: Իր բարեկամին օգնելու նպատակով Րաֆֆին նրան խորհուրդներ է տալիս տեսուչի հրավիրման և այլ հարցերի վերաբերյալ:

Նամակը կիսատ է, չի պահպանվել նրա վերջը, որը գրված է եղել այլ թերթի վրա:

Արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, Րաֆֆու ֆոնդ, թիվ 12:

## 30. ՍԱՐԳԻՍ ՊԱՐԶՅԱՆԻՆ

Սարգիս եպիսկոպոս Պարզյանը (1837—1914) Էջմիածնի միաբաններից էր, Սինոդի անդամ, որին Րաֆֆին դիմել է «Կայծերի» տպագրության համար բաժանորդներ հավաքագրելու խնդրանքով:

Նամակը արտատպված է ինքնագրից, Մատենադարան, անհատական արխիվների ֆոնդ, Պղնձապանակ 185, վավերագիր 4:

## 31. ԱՎԱԳ ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆԻՆ

Նամակը արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, Րաֆֆու ֆոնդ, թիվ 13:

1. Արիստակեսը, Թոմասը և Գորոյանցը Րաֆֆու թավրիզյան բարեկամներից էին:

2. Գասպար Քաթիպա անունը առաջացել է 1854 թ. Մոսկվայում հիմնադրված գրական ընկերության անդամների (Ռ. Պատկանյան, Գ. Քանանյան, Մ. Թիմուր-

յան) անուն-ազգանունների սկզբնատառերից, Ընկերության բյուրոյումից հետո դարձել է Ռ. Պատկանյանի կեղծանուններից մեկը։

3. Խոսքը Գրիգոր Նիկողոսյանի մասին է, որը 1882 թ. գժտվելով Գ. Արծրունու հետ, դադարում է թղթակցել «Մշակին» և սկսում է նյութեր տրամադրել «Մեղու Հայաստանի» և «Порядок» լրագրերին։

4. Ինչպես երևում է այս նամակից, կառավարությունը չի թույլատրել Փ. Վարդանյանին հրատարակելու «Լումա» հանդեսը (տե՛ս 22—24 նամակները)։

5. Ըստ երևույթին, Րաֆֆու թավրիզաբնակ ծանոթներից էր. Հնարավոր է՝ նույնիսկ աշակերտներից։

6. Խոսքը «Մշակի» թղթակից, բողոքական քարոզիչ Աբրահամ Ամիրխանյանի մասին է։ Դավանանքի վերաբերյալ գրած նրա հոդվածները բանավեճի պատճառ դարձան «Մեղու Հայաստանի» և «Մշակ» լրագրերի միջև։

## 32. ԱՎԱԳ ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆԻՆ

Պահպանվել է այս նամակի միայն վերջին մասը՝ հետգրությունը, այդ պատճառով էլ գրության թվականն ու ամսաթիվը հայտնի չեն։ Նախորդ հրատարակություններում նամակը թվագրված է 1880 թ. ապրիլ-մայիսով (Րաֆֆի, «Գրականության մասին», էջ 350), կամ 1880 թ. ապրիլի 18—28-ով (Րաֆֆի, ԵԺ, հ. 10, էջ 680)։

Ինչպես նշում են ծանոթագրողները, Տպագրական ընկերությունը, որի մասին խոսք կա նամակում, հիմնվել է 1880 թ. մարտին։ Իսկ ամսաթիվը՝ ապրիլի 18—28-ը, ճշտվել է արևմտահայ սովատանջներին օգնելու նպատակով հավաքված գումարի մասին «Մշակում» տպագրված լուրերից։

Նամակն արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, Րաֆֆու ֆոնդ, թիվ 17։

## 33. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

Նամակն արտատպված է «Արարատ» ամսագրից, 1913, թիվ 2—3։

1. Գաբրիել Միրզոյանը (1857—1902) Րաֆֆու մտերիմներից էր, որն այդ ժամանակ սովորում էր Մոսկվայում։ Ավարտելով համալսարանը՝ տեղափոխվել է Թիֆլիս և զբաղվել մանկավարժությամբ ու հասարակական գործունեությամբ։ Եղել է «Աղբյուր» ամսագրի հիմնադիրներից մեկը և «Մշակի» երկար տարիների աշխատակիցը։

2. Տպագրական ընկերության խմբագրական մասնաժողովի բնիկ հանձնաժողովի մեջ մտնում էին Արշակ Նահապետյանը, Ստեփան Պալասանյանը, Սեդրակ Մանդինյանը, Նատալյա Տեր-Մարկոսյանը, Պողոս Ղամբարյանը, Ավետիս Բաբայանը և Հովհ. Ջիգինյանը («Մեղու Հայաստանի», 1880, թիվ 23)։

3. Տյուզյանները և Տատյանները Պոլսի հայտնի ամիրայական տոհմերի ներկայացուցիչներ էին, որոնք լինելով կաթոլիկ, սերտորեն կապված էին Վենետիկի Մխիթարյանների հետ, և նրանց դրամով տպագրվել են բազմաթիվ գրքեր։

## 1881

### 34. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

*Նամակն արտատպված է «Արարատ» ամսագրից, 1913, թիվ 4։*

*1. Խոսքը «Խենթի» 1881 թ. հրատարակության մասին է, որը իրագործվել Շուշիում Րաֆֆու աշակերտ Աբել Ապրեսյանի միջոցներով։*

### 35. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

*Նամակն արտատպված է «Արարատ» ամսագրից, 1913, թիվ 4։*

*Րաֆֆու մտադրությունը՝ ստանալ Գասպարյան անկելանոցի՝ բարեգործության համար նախատեսված գումարը և ճանապարհորդել Արևմտյան Հայաստանում, չի իրականացել։*

### 36. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

*Նամակն արտատպված է «Արարատ» ամսագրից, 1913, թիվ 4։*

*1. Խոսքը Սմբատ Շահազիզի «Հրապարակախոս ձայն» ժողովածուի մասին է (Մոսկվա, 1881)։*

*2. Ակնարկը այդ անկելանոցի կողմից վիպասանին դրամ տրամադրելու մասին է (տե՛ս նախորդ նամակը)։*

## 1882

### 37. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

*Նամակն արտատպված է «Արարատ» ամսագրից, 1913, թիվ 5։*

*1. Խոսքը 1881 թ. ամռանը և աշնանը Ղարաբաղում և Սյունիքում Րաֆֆու կատարած ճամփորդության մասին է։ Գրողի նպատակն էր նյութեր հավաքել «Դավիթ Բեկի» երկրորդ հատորի և «Խամսայի մելիքությունների» համար։*

### 38. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

*Նամակն արտատպված է «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթից, 1920, թիվ 14։*

### 39. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

*Նամակն արտատպված է «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթից, 1920, թիվ 5։*

*1. Այդ երիտասարդը արևմտահայ բանաստեղծ Թովմաս Թերզյանն էր։*

### 40. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

*Նամակն արտատպված է «Արարատ» ամսագրից, 1913, թիվ 4։*

*1. Րաֆֆին նկատի ունի «Բիբի Շարաբանի» պատմվածքի գերմաներեն հրա*

տարակությունը (Բեռլին, 1881), «Հարեմի», «Ջալալեդդինի» և «Դավիթ Բեկի» հատվածների առանձին հրատարակությունները Թիֆլիսում (1879—1881)։

## 41. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

Նամակն արտատպված է «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթից. 1920, թիվ 15։

1. Գնդապետ Ալեքսանդր Մելիք-Հայկազյանը (1811—1890) ցանկանում էր իր դրամով կրկին հրատարակել «Դավիթ Բեկը», բայց Րաֆֆին նրա նվիրած դրամն օգտագործեց «Կայծերի» տպագրության համար։

## 42. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

Նամակն արտատպված է «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթից. 1920, թիվ 16։

1. Րաֆֆին Շուշվիից տեղեկություններ է խնդրել իր թարգմանած «Ղարաբաղի աստղագետը» վեպի հեղինակի՝ Պլատոն Զուբովի մասին։

2. Խոսքը Ալ. Մելիք-Հայկազյանի մասին է։

3. Նկատի ունի Արեգ Սարգսյանին։

4. Ինչպես այս, այնպես էլ վիպասանի մյուս մտադրությունները ձեռնարկելու վերաբերյալ անկատար են մնացել նյութական միջոցների բացակայության պատճառով։

## 43. ԱՎԱԳ ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆԻՆ

Նամակը կիսատ է, մեզ է հասել միայն նրա երկրորդ մասը, սկիզբը չլինելու պատճառով գրության ճշգրիտ ամիս-ամսաթիվը հայտնի չէ։ Բայց այն տեղեկությունը, թե «Կայծերը» մամուլի տակ է, հիմք է տալիս ասելու, որ նամակը գրված է հոկտեմբերին։ Նախորդ նամակում (7 հոկտեմբերի) վիպասանը Ս. Փանյանին հայտնել էր. «Կայծերը» տպվում է. հույս ունեմ, որ մինչև ներկա ամսի վերջը հատորի տպագրությունը կվերջանա»։ «Գրականության մասին» ժողովածուում նամակը թվագրված է 1882 թ. նոյեմբեր-դեկտեմբերով։

Արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, Րաֆֆու ֆոնդ, թիվ 16։

1. Ա. Ավթանդիլյանի նախազգուշացումը վերաբերում էր շեյխ Իբադուլլահի նոր արշավանքին։ Նրա առաջին արշավանքը դեպի Պարսկաստան տեղի էր ունեցել 1880 թ.։ Երկրորդը տեղի չի ունեցել, թեև շեյխը պատրաստվել էր։

2. «Կայծերի» տպագրության գործում Ա. Ավթանդիլյանը օգնել էր Րաֆֆուն (տե՛ս թիվ 28 նամակը)։

## 44. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

Նամակն արտատպված է «Արարատ» ամսագրից, 1913, թիվ 4։

1. Խոսքը Ավետիք Արասխանյանի մասին է, որը 1889-ին սկսեց հրատարակել «Մուրճ» լրագիրը։

## 1 8 8 3

### 45. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

*Նամակն արտատպված է բնագրից, ԳԱԹ, Հ. Առաքելյանի ֆոնդ, թիվ 1922.*

### 46. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

*Նամակն արտատպված է «Արարատ» ամսագրից, 1913, թիվ 4։*

### 47. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

*Արտատպված է «Արարատ» ամսագրից, 1913, թիվ 4։*

*1. Մկրտիչ Էմինը (1815—1890) հայ բանասեր, պատմաբան, մանկավարժ, թարգմանիչ էր, Լազարյան ճեմարանի պրոֆեսոր։*

*2. Արեւյանը (Ներսես) «Մշակի» թղթակիցներից էր, Րաֆֆու բարեկամներից մեկը։*

### 48. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

*Նամակն արտատպված է «Արարատ» ամսագրից, 1913, թիվ 4։*

*1. «Մշակը» չի հրատարակվել մայիսի 1—9-ը։*

*2. «Պսակը» Երևանում լույս էր տեսնում 1880-ից, Վասակ Պապաջանյանի խմբագրությամբ։ Արգելվել է 1884 թ.։ Ինչպես և «Մշակը» խուզարկությունների և հետաքննության ընթացքում որոշ ժամանակ լույս չի տեսել։*

*Րաֆֆու, Արծրունու և «Մշակի» գործը, ըստ Խ. Սամվելյանի (Րաֆֆի, Երկ., հ. 10, Ե., 1959, էջ 687), ժանդարմական վարչությունը կապել է Երևանի «Արարատյան ընկերություն» և Էջմիածնի «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպությունների գործերի հետաքննության հետ։ Որևէ կապ ունեցե՞լ է մասնավորապես Րաֆֆին այդ կազմակերպությունների հետ, թե ոչ, դժվար է միանշանակ ասել։*

*3. Խոսքը Պոլսի պատրիարք Ներսես արքեպիսկոպոս Վարժապետյանի մասին է։*

### 49. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

*Արտատպված է «Արարատ» ամսագրից, 1913, թիվ 6—7։*

### 50. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

*Նամակը արտատպված է «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթից. 1920, թիվ 16։*

*1. Խոսքը «Մեղու Հայաստանի» լրագրի և նրա մատենախոս Հայկունու մասին է, որն այդ ժամանակ հրապարակում էր իր քննադատական հոդվածաշարը «Կայ-*

ծերի» և «Խաչագողի հիշատակարանի» վերաբերյալ («Մեղու Հայաստանի», 1883, թիվ 31—37, 39, 55, 57, 59 և այլն)։

## 51. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Նամակն արտատպված է բնագրից, ԳԱԹ, Հ. Առաքելյանի ֆոնդ, թիվ 1530։

1. Խոսքը «Կայծերի» և «Խաչագողի հիշատակարանի» վերաբերյալ Հայկունու գրած հոդվածների մասին է (տե՛ս նախորդ նամակի ծանոթագրությունը)։

## 52. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

Արտատպված է «Արարատ» ամսագրից, 1913, թիվ 6—7։

## 53. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Նամակն արտատպված է բնագրից, ԳԱԹ, Հ. Առաքելյանի ֆոնդ, թիվ 1531։

1. Գաբրիել Միրզոյանն է։

## 54. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

Նամակն արտատպված է «Արարատ» ամսագրից, 1913, թիվ 6—7։

1. Ըստ երևույթին, Րաֆֆին նկատի ունի Փանյանի նամակները։

2. Րաֆֆին նկատի ունի Հայկունու հոդվածները «Կայծերի» մասին, ուր վեպի հերոսները համեմատվում էին 1881-ին Ալեքսանդր II ցարին սպանած հեղափոխականների հետ։

## 55. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

Արտատպված է «Արարատ» ամսագրից, 1913, թիվ 6—7։

## 56. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Արտատպված է բնագրից, ԳԱԹ, Հ. Առաքելյանի ֆոնդ, թիվ 1532։

## 57. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

Նամակն արտատպված է «Արարատ» ամսագրից, 1913, թիվ 6—7։

1. Րաֆֆին նկատի ունի իր գրական գործունեության 25-ամյա հոբելյանի նշումը, որը նրա բարեկամները նախատեսել էին 1884 թ., բայց այն արգելվեց կառավարության կողմից։

## 1884

## 58. ՆԵՐՍԵՍ ԱԲԵԼՅԱՆԻՆ

Նամակն ուղղված է վիպասանի մտերիմ բարեկամներից մեկին՝ Ներսես

*Սրնկյանին (1855—1933), որն ուսուցիչ էր Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, 1876-ից աշխատակցում էր «Մշակին»:*

*Նամակն արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, Րաֆֆու ֆոնդ, թիվ 2:*

*1. 1883 թ. դեկտեմբերի 11-ի գիշերը (ըստ Շիրվանզադեի՝ 1884 թ. հունվարին, «Րաֆֆին ժամանակակիցների հուշերում», էջ 51, նաև՝ «Գրականության մասին», էջ 363) երկու անհայտ անձինք մտնում են Րաֆֆու բնակարանը: Նրանց առաջացրած խուլ աղմուկից վիպասանը արթնանում է և մի քանի անգամ կրակում բարձի տակ պահված ատրճանակից: Անկոչ հյուրերը փախչում են: Հետո պարզվում է, որ քաղաքական հակառակորդները այդ պատմությանը խորթ չեն, և հարձակվողները կինտոներ են եղել, իսկ նրանց նպատակը՝ Րաֆֆու թղթադրամների գոյություն չունեցած սնդուկի կողոպուտը («Րաֆֆին ժամանակակիցների հուշերում», էջ 53):*

*2. Խոսքը Գր. Արծրունու տիկնոջ՝ Մարիամ Աղամալյանի մասին է:*

*3. Րաֆֆին ակնարկում է Գևորգյան ճեմարանի աշակերտների խռովությունը 1883 թ. նոյեմբերի 12-ին և նրա մասնակիցներից 13 հոգու հեռացնելու միջադեպը:*

## 59. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

*Արտատպված է «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթից, 1920, թիվ 16:*

## 60. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

*Վարդան Թումանյանը Րաֆֆու աշակերտն է եղել, Մոսկվայում գրահրատարակիչ էր: Հայրը՝ Սարգիս Թումանյանը, վաճառական էր Թավրիզում:*

*Արտատպված է «Արարատ» ամսագրից, 1913, թիվ 6—7:*

## 61. ՆԵՐՍԵՍ ԱԲԵԼՅԱՆԻՆ

*Նամակը արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, Րաֆֆու ֆոնդ, թիվ 3:*

*1. Արել եպիսկոպոս Մխիթարյանը 60-ական թվականներին Ատրպատականի թեմի առաջնորդն էր և բարեկամական հարաբերությունների մեջ էր Մելիք-Հակոբյան ընտանիքի հետ:*

*2. Նկատի ունի Գևորգ Դ կաթողիկոսին (1866—1882):*

*3. «Վարժարանը» մանկավարժական ամսագիր էր, լույս է տեսել Թիֆլիսում 1882—1884 թթ.:*

*4. «Փորձը» 1881-ից հետո այլևս չի հրատարակվել: Նրա խմբագիր Աբգար Հովհաննիսյանը 1884-ին սկսեց հրատարակել «Արձագանքը»:*

*5. Նկատի ունի Արծրունու կնոջը՝ Մարիամ Աղամալյանին:*

## 62. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

*Արտատպված է «Արարատ» ամսագրից, 1913, թիվ 6—7:*

*1. Խոսքը մոսկվաբնակ ապարանատեր և հրատարակիչ Մկրտիչ Բարխուդարյանի մասին է:*

## 63. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

*Նամակը արտատպված է «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթից, 1920, թիվ 17։*

*1. Րաֆֆին նկատի ունի Գր. Արծրունու ամուսնությունը Մ. Աղամալյանի հետ։*

## 64. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

*Նամակն արտատպված է «Արարատ» ամսագրից, 1913, թիվ 6—7։*

*1. Արծրունու ժառանգական կալվածքները վրաց բանկի կողմից աճուրդի էին հանվել 400 հազար ռուբլի պարտքի դիմաց։*

*2. Րաֆֆին նկատի ունի Գ. Միրզոյանին, Ներսես Աբելյանին և իրեն։*

## 65. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

*Նամակն արտատպված է «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթից, 1920, թիվ 17։*

*1. «Մշակի» հրատարակությունը դադարել է 1884 թ. հունիսի 11-ից դրամական միջոցների բացակայության պատճառով։*

## 66. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

*Արտատպված է «Արարատ» ամսագրից, 1913, թիվ 6—7։*

*1. «Մշակի» վերահրատարակման իրավունք Րաֆֆու խումբը այդպես էլ չի ստանում։*

*2. Րաֆֆին նկատի ունի այն, որ Արծրունու սնանկացումից հետո Ալ. Արասխանյանը ուզում էր «Մշակի» հրատարակման իրավունքը իր ձեռքը վերցնել։*

## 67. ԱՎԱԳ ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆԻՆ

*Արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, Րաֆֆու ֆոնդ, թիվ 14։*

# 1885

## 68. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

*Նամակն արտատպված է «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթից, 1920, թիվ 17։*

*1. Խոսքը 1884 թ. փետրվարի 16-ի Բարձրագույն հրամանի մասին է, որով պահանջվում էր կամ երկու շաբաթվա ընթացքում ընդունել հայկական դպրոցների նոր կանոնադրությունը, կամ փակել դրանք։*

## 69. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

*Արտատպված է «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթից, 1920 թիվ 17։*

1. Զարմայր Սահրյանը 1879—81 թթ. Մոսկվայում հրատարակում էր «Փարոս-Հայաստանի» պատկերազարդ հանդեսը։

## 70. ԼԵՈՅԻՆ

*Նամակի այս հատվածը արտատպված է Լեոյի «Գրիգոր Արծրունի» աշխատությունից, հ. 3-րդ, Թիֆլիս, 1905, էջ 324։*

## 71. ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒՆ

*Նամակը արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, «Մշակի» ֆոնդ, թիվ 1129։*

## 72. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

*Արտատպված է «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթից, 1926 թիվ 17։*

1. 1885-ին լույս է տեսել «Մշակի» միայն մեկ համար, նոյեմբերի 27-ին, իսկ 1886 թ. հունվարից սկսվել է կանոնավոր հրատարակությունը, բայց առանց Րաֆֆու մասնակցության։

## 73. ԼԵՈՅԻՆ

*Նամակի այս պատառիկը արտատպված է Լեոյի «Գրիգոր Արծրունի» աշխատությունից, հ. 3-րդ, Թիֆլիս, 1905, էջ 328։*

## 74. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

*Նամակն արտատպված է «Արարատ» ամսագրից, 1913, թիվ 6—7, Հրապարակվում է առաջին անգամ։*

1. Խոսքը հայ հեղափոխական դաշնակցության կուսակցության հիմնադիրներից մեկի՝ Քրիստափոր Միքայելյանի (1859—1905) մասին է։ Քր. Միքայելյանը ծանոթ էր Րաֆֆու մտերիմ բարեկամներից մեկի՝ Գաբրիել Միրզոյանի հետ (տե՛ս Ավ. Ահարոնյան, Երկերի ժողովածու, հ. 5, Բոստոն, 1948, էջ 298—300), և վիպասանը կարող էր այս նամակը գրել Գ. Միրզոյանի «հանձնարարությամբ», թեև չի բացառվում, իհարկե, որ Րաֆֆին կարող էր անձամբ ծանոթ լինել Քր. Միքայելյանի հետ, քանի որ վերջինս մի քանի տարի սովորել է Թիֆլիսի ուսուցչական ճեմարանում (1876—1880), հետո 1884—85 թթ. ուսուցչություն արել մասնավոր ռեալական դպրոցում (տե՛ս նույնը, էջ 304)։

Մենք հաստատ տեղեկություններ չունենք այն մասին, թե ինչ է արել Փանյանը Րաֆֆու այս նամակն ստանալուց հետո։ Հայտնի է սակայն, որ նույն 1885 թ. Քր. Միքայելյանը ընդունվել է Մոսկվայի Պետրովսկի գյուղատնտեսական ճեմարանը որպես ազատ ունկնդիր։ Ու թեև նա Մոսկվայում մնացել է ընդամենը մեկ ուսումնական տարի, այնուամենայնիվ, այդ մեկ տարին վճռական նշանակություն է ունեցել նրա ողջ կյանքի համար։ Հենց այդ ժամանակ նա ծանոթացել

իր մտերիմ գաղափարակիցների և գործընկերների՝ Սիմոն Զավարյանի և Ստեփան (Ռոստոմ) Զորյանի հետ։

## 1886

### 75. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

Արտատպված է «Արարատ» ամսագրից, 1913, թիվ 6—7։

### 76. ԱՌԱՔԵԼ ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ

Նամակն ուղղված է բարեկամ մեծահարուստ Առաքել Ծատուրյանին (1828—1903), որի դրամական միջոցներով 1886 թ. Պետերբուրգում հրատարակվել է «Գաղտնիք Ղարաբաղի» գիրքը։

Արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, Մակար Բարխուդարյանի ֆոնդ, թիվ 4։

1. Րաֆֆին նկատի ունի Հայկական հոդվածները («Մեղու Հայաստանի», 1885, թիվ 62—68, 79 և այլն)։

2. Կատարելով իր խոսքը՝ Րաֆֆին նույն թվականին էլ գրում է գրախոսական «Գաղտնիք Ղարաբաղի» գրքի մասին և հրատարակում «Արձագանքում» (թիվ 35—42, 44—46, տե՛ս Ներկա հատորը)։

## 1887

### 77. ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐԵԼՅԱՆԻՆ

Նամակն ուղղված է դրամատուրգ, Րաֆֆու բարեկամ Ալեքսանդր Արելյանին (1858—1940)։ Արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, Ալեքսանդր Արելյանի ֆոնդ, թիվ 31 ա։

1. Խոսքը Ներսես Արելյանի մասին է։

### 78. ԽԱՉԱՏՈՒՐ ՏԵՐ-ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

Խ. Տեր-Զաքարյանը Թավրիզի Արամյան դպրոցի դասատուներից էր։ Նամակն արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, Րաֆֆու ֆոնդ, թիվ 29։

1. Րաֆֆին նկատի ունի «Մշակը», «Արձագանքը» և «Նոր դարը»։

### 79. ԽԱՉԱՏՈՒՐ ՏԵՐ-ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

Արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, Րաֆֆու ֆոնդ, թիվ 30։

### 80. ՎԱՍԻԼ ՆՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ

Վասիլ Նղիազարյանը Երևանի մտավորականության աչքի ընկնող ներկայացուցիչներից էր, 1883-ին ձերբակալված 3 երիտասարդներից մեկը (տե՛ս թիվ 48—53 նամակները)։

Նամակն արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, Րաֆֆու ֆոնդ, թիվ 18։

## 1888

### 81. ՄԵԼՔՈՆ ՓԱՆՅԱՆԻՆ

*Արտատպված է «Արարատ» ամսագրից, 1913, թիվ 6—7։*

### 82. ԽԱՉԱՏՈՒՐ ՏԵՐ-ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

*Արտատպված է ինքնագրից, ԳԱԹ, Րաֆֆու ֆոնդ, թիվ 31։*

**Թարգմանչից**

### ՂԱՐԱԲԱՂԻ ԱՍՏՂԱԳԵՏԸ

*1882-ին Րաֆֆին թարգմանում է Պլատոն Զուբովի «Ղարաբաղի աստղագետը» վեպը, որը լույս է տեսնում նախ «Մշակում» (թիվ 178—182, 185—187, 192—198, 200), իսկ հետո նաև՝ առանձին գրքով։ Գրքին որպես առաջաբան Րաֆֆին կցել է «Թարգմանչից» հոդվածը, ուր տեղեկություններ է հաղորդում ռուս հեղինակի և նրա վեպի մասին։ Զուբովի մասին տեղեկությունները Րաֆֆուն նամակով հաղորդել էր Սմբատ Շահազիզը (տե՛ս թիվ 42 նամակը)։ Վեպը «Մշակում» լույս է տեսել առանց ծանոթագրությունների. դրանք ավելացվել են առանձին գրքով հրատարակվելու ժամանակ։*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՀՈԴՎԱԾՆԵՐ

### 1884


*Զախեր-Մազոխի գրականական գործունեությունը* . . . . 7


### 1885


*Նամակ խմբագրին* . . . . . . . . 12
*Նամակ խմբագրին* . . . . . . . . 13


### 1886


*«Գաղտնիք Ղարաբաղի»* . . . . . . 17


### 1887


*Նամակ խմբագրության* . . . . . . . 134
*Պարոն Ղ. Աղայանցի հասցեին* . . . . . . . 135
*Պարոն Ղ. Աղայանցի հասցեին* . . . . . . . 136
*Պարկապզուկ ածողները գրականության մեջ* . . . . . 138
*Վիպագրությունը ռուսահայերի մեջ* . . . . . 139


## ՆԱՄԱԿՆԵՐ

### 1857


*Հովհաննես Ավետիսյանին* . . . . . . 149


### 1858


2. *Հովհաննես Ավետիսյանին* . . . . . . 151
3. *Մկրտիչ Խրիմյանին* . . . . . . 154


### 1860


4. *Հովհաննես Քաթանյանին* . . . . . . 157

**1868**

5. Ավագ Ավթանդիլյանին . . . . . . 158
6. Ավագ Ավթանդիլյանին . . . . . . 160
7. Ավագ Ավթանդիլյանին . . . . . . 161

**1869**

8. Ավագ Ավթանդիլյանին . . . . . . 162

**1872**

9. Ավագ Ավթանդիլյանին . . . . . . 163

**1873**

10. Ավագ Ավթանդիլյանին . . . . . . 166

**1874**

11. Ավագ Ավթանդիլյանին . . . . . . 167
12. Ռափայել Պատկանյանին . . . . . . 168
13. Համբարձում Կարապետյանին . . . . . . 169

**1875**

14. Համբարձում Կարապետյանին . . . . . . 170
15. Համբարձում Կարապետյանին . . . . . . 171
16. Համբարձում Կարապետյանին . . . . . . 174
17. Համբարձում Կարապետյանին . . . . . . 176
18. Համբարձում Կարապետյանին . . . . . . 177
19. Արամյան դպրոցի Հոգաբարձությանը . . . . . . 178

**1876**

20. Համբարձում Առաքելյանին . . . . . . 179
21. Արամյան դպրոցի Հոգաբարձությանը . . . . . . 181
22. Փիլիպոս Վարդանյանին . . . . . . 181
23. Փիլիպոս Վարդանյանին . . . . . . 182
24. Փիլիպոս Վարդանյանին . . . . . . 184
25. Ավագ Ավթանդիլյանին . . . . . . 190

**1879**

26. Մելքոն Փանյանին . . . . . . 193
27. Գևորգ Վեհապետյանին . . . . . . 193
28. Ավագ Ավթանդիլյանին . . . . . . 194

## 1880


29. Ավագ Ավթանդիլյանին . . . . . . . 196
30. Սուքիաս Պարզյանին . . . . . . . 197
31. Ավագ Ավթանդիլյանին . . . . . . . 198
32. Ավագ Ավթանդիլյանին . . . . . . . 201
33. Մելքոն Փանյանին . . . . . . . 202


## 1881


34. Մելքոն Փանյանին . . . . . . . 204
35. Մելքոն Փանյանին . . . . . . . 205
36. Մելքոն Փանյանին . . . . . . . 207


## 1882


37. Մելքոն Փանյանին . . . . . . . 208
38. Մելքոն Փանյանին . . . . . . . 209
39. Մելքոն Փանյանին . . . . . . . 211
40. Մելքոն Փանյանին . . . . . . . 215
41. Մելքոն Փանյանին . . . . . . . 216
42. Մելքոն Փանյանին . . . . . . . 218
43. Ավագ Ավթանդիլյանին . . . . . . . 220
44. Մելքոն Փանյանին . . . . . . . 221


## 1883


45. Համբարձում Առաքելյանին . . . . . . . 223
46. Մելքոն Փանյանին . . . . . . . 224
47. Մելքոն Փանյանին . . . . . . . 225
48. Մելքոն Փանյանին . . . . . . . 225
49. Մելքոն Փանյանին . . . . . . . 227
50. Մելքոն Փանյանին . . . . . . . 228
51. Համբարձում Առաքելյանին . . . . . . . 230
52. Մելքոն Փանյանին . . . . . . . 232
53. Համբարձում Առաքելյանին . . . . . . . 233
54. Մելքոն Փանյանին . . . . . . . 234
55. Մելքոն Փանյանին . . . . . . . 235
56. Համբարձում Առաքելյանին . . . . . . . 236
57. Մելքոն Փանյանին . . . . . . . 237


## 1884


58. Ներսես Արելյանին . . . . . . . 239
59. Մելքոն Փանյանին . . . . . . . 240
60. Մելքոն Փանյանին . . . . . . . 241
61. Ներսես Արելյանին . . . . . . . 243

62. Մելքոն Փանյանին . . . . . . . 245
63. Մելքոն Փանյանին . . . . . . . 247
64. Մելքոն Փանյանին . . . . . . . 249
65. Մելքոն Փանյանին . . . . . . . 250
66. Մելքոն Փանյանին . . . . . . . 251
67. Ավագ Ավթանդիլյանին . . . . . . . 252

1885

68. Մելքոն Փանյանին . . . . . . . 254
69. Մելքոն Փանյանին . . . . . . . 255
70. Լևոյին . . . . . . . 257
71. Գրիգոր Արծրունուն . . . . . . . 257
72. Մելքոն Փանյանին . . . . . . . 261
73. Լևոյին . . . . . . . 263
74. Մելքոն Փանյանին . . . . . . . 263

1886

75. Մելքոն Փանյանին . . . . . . . 265
76. Առաքել Ծատուրյանին . . . . . . . 266

1887

77. Ալեքսանդր Արելյանին . . . . . . . 267
78. Խաչատուր Տեր-Զաքարյանին . . . . . . . 269
79. Խաչատուր Տեր-Զաքարյանին . . . . . . . 271
80. Վասիլ Եղիազարյանին . . . . . . . 273

1888

81. Մելքոն Փանյանին . . . . . . . 274
82. Խաչատուր Տեր-Զաքարյանին . . . . . . . 275

ՂԱՐԱԲԱՂԻ ԱՍՏՂԱԳԵՏԸ

Թարգմանչից . . . . . . . 279
Ծանոթագրություններ . . . . . . . 409

Գրական-գեղարվեստական հրատարակություն

# ՐԱՖՖԻ

Երկերի ժողովածու 12 հատորով

Հատոր տասներկուերորդ

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ
ՀՈԴՎԱԾՆԵՐ, ՆԱՄԱԿՆԵՐ

Литературно-художественное издание

# РАФФИ

**Собрание сочинений в 12-ти томах**
**Том двенадцатый**

ПУБЛИЦИСТИЧЕСКИЕ И ЛИТЕРАТУРНО-КРИТИЧЕСКИЕ
СТАТЬИ, ПИСЬМА

На армянском языке

*Հրատ. խմբագիր* Ա. Լ. Սահակյան
*Տեխ. խմբագիր* Վ. Ջ. Ստեփանյան

*Հանձնված է շարվածքի 06.05.1999թ.։ Ստորագրված է տպագրության 20.10.1999թ.։*
*Չափսը 60×84¹/₁₆։ Թուղթ № 1։ Տառատեսակ «Գրքի սովորական»։*
*Բարձր տպագրության։ Պայմ. 25,3 մամ.։ Տպագր. 27,13 մամուլ։ Պատվեր № 9։*
*Գինը՝ պայմանագրային։*

*ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 375019, Երևան,*
*Մարշալ Բաղրամյան պող., 24գ։*
Издательство «Гитутюн» НАН РА, 375019, Ереван,
пр. Маршала Баграмяна, 24 г.
*ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,*
*378410, ք. Աշտարակ, Գիտավան, 2։*
Типография издательства «Гитутюн» НАН РА,
378410, г. Аштарак, Гитаван, 2.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0065815

A II
86643